

ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐՈՒԵԼ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԿՐԹՈՒԹԵԱՆ, ԳԻՏՈՒԹԵԱՆ, ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ:

«MATENADARAN» MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS  
ARMENIAN LIBRARY OF THE GALOUSTE GULBENKIAN FOUNDATION

# ARMENIAN CLASSICAL AUTHORS

VOLUME XXII

12<sup>th</sup> Century

**NERSES SHNORHALI**

**Book II**



CALOUSTE GULBENKIAN  
FOUNDATION

YEREVAN  
2022

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍ ՍԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

# ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ի.Բ. ՀԱՏՈՐ

Ժ.Բ. ԴԱՐ

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԳԻՐՔ Բ.



 CALOUSTE GULBENKIAN  
FOUNDATION

ԵՐԵՒԱՆ  
2022

Հատորը հրատարակութեան է պատրաստուել Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ Մատենադարանում

Մատենաշարը հիմնադրուել է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքի նախկին տնօրէն, դոկտոր Զաւէն Եկաւեանի նախաձեռնութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ի ջանքերի շնորհիւ:

### Ի Բ. ՀԱՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- ՎԱՅԱՆ ՏԵՐ-ՂԵՒՈՆՂԵԱՆ** – Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր, գիտական խորհրդի նախագահ
- ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ** – Մաշտոցի անուան Մատենադարանի փոխտնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր
- ԱՆՈՒՇԱԿԱՆ ԱՐՔ. ԴԱՆԻԷԼԵԱՆ** – Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան
- ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ** – Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրատան գլխաւոր աւանդապահ, պատմական գիտութիւնների դոկտոր
- ԺԱՆ ՊԻԵՌ ՄԱՐԷ**– Ֆրանսիայի ակադեմիայի հումանիտար գիտութիւնների ինստիտուտի անդամ, պրոֆեսոր
- ԳՈՐԱՐ ՄՈՒՐԱՂԵԱՆ** – Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, բանասիրական գիտութիւնների դոկտոր
- ԱԶԱՏ ԲՈԶՈՅԵԱՆ** – ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտութիւնների դոկտոր
- ՎԱՅԷ ԹՈՐՈՍԵԱՆ** – Մաշտոցի անուան Մատենադարանի գիտնական քարտուղար, պատմական գիտութիւնների թեկնածու
- ԲԵՈՆԱՐ ԿՈՒԼԻ** – Լուվէնի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր
- ՅԱԿՈԲ ՔԵՕՍԵԱՆ** – Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր
- ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆ** – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան
- ՅԱԿՈԲ ՄՈՒՐԱՂԵԱՆ** – ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի գիտնական քարտուղար, պատմական գիտութիւնների թեկնածու
- ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ** – Մատենադարանի տնօրէնի խորհրդական բարձր տեխնոլոգիաների եւ հրատարակչական հարցերով, մատենաշարի համակարգող

Հատորը կազմեց եւ խմբագրեց **ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ**  
Ցանկերը կազմեց **ՎԱՅԷ ԹՈՐՈՍԵԱՆԸ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԹՂԹԵՐ

ՆԵՐՄԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՂԹԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ – ԱԶԱՏ ԲՈՋՈՅԵԱՆ.....	11
<b>ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՄԵՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ</b>	
ԱՌ ՀԱՄԱԻՐԵՆ ՀԱՅԱՍԵՌ ԱԶԻՆԱ, ՈՐՈՑ ՏԵՄՉՈՒԹԻՒՆ ՀԱԲԱՏԱՅԱԻ ՆՄԱ Ի ՏԵԱՌՆԷ.....	39
<b>ՄԱՍՆԱԻՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՏՑԵԱԳՐՈՒԿԱԾ ԹՂԹԵՐ</b>	
Ա. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԳՐԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ	
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՍՈՐԻՈՑ ՏԵԱՌՆ ՄԻՆԱՅԵԼԻ.....	135
Բ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԱՌ ՈՄՆ ՊԱԻՂՈՍ ՔԱՅԱՆԱՅ ՀԱՅԿԱԶՆ Ի ՏԱՐՍՈՆԷ ԿԻԼԻԿԵՑԻՈՑ,	
ՈՐ ԳՆԱՑԵԱԼ ԷՐ ԱՆԴ ՀՈՌՈՄԱՑԵԱԼ, ԵՒ ԲԱՄԲԱՍԱՍԷՐ ՅԱԶԳՍ ՄԵՐ Ի ԺԱՄԱՆԱԿՍ	
ԿԻՒՌ ՄԱՆՈՒԵԼԻ ԹԱԳԱԻՈՐԻՆ ՅՈՐԺԱՄ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԷԻՆ ՄԻԱԲԱՆԵԼ ՀԱՅՔ ԵՒ ՅՈՅՆՔ,	
ԵՒ ՆԱ ԳՐԵԱՑ ԱՌ ՏԷՐ ՆԵՐՄԵՍ, ԵՒ Ի ՀՔՄԵՂՄ ԵՂԵՒ ԻՐՈՑ ՎՆԱՍՈՒՆ.....	137
Գ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՍ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՍ	
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՅՈՅՆՍ.....	140
Դ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԳՐՈՑ ՈՒՐՈՒՄՆ,	
ՈՐ ԳՐԵԱԼ ԷՐ ԱՌ ՆԱ ԲԱՆՍ ԶԿԾԱՆԱՑ ՅԱՆԴՈՒԳՆ ԼՐԲՈՒԹԵԱՄԲ.....	142
Ե. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՆՈՅՆ ԺՊԻՐՀ.....	146
Զ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՆՈՅՆ ՅԻՄԱՐՈՒԹԵԱՄԲ	
ԵՒ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԼՐԲԵԱԼ ՅԱՆԴՈՒԳՆ ԺՊԻՐՀ.....	148
Է. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԳԷՈՐԳ.....	151
Ը. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՆՈՅՆ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ.....	152
Թ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՆՈՅՆ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ.....	153
Ժ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ	
ԳԻՐ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԱԼ Ի ԿՈՂՄԱՆՍ ԱՐԵԲԵԼԻՑ Ի ԿԱՐՍ	
ԶԿՆԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՒՐՈՒՄՆ, ՅՈՐՈՅ ԳԻՐՍ ՑՈՒՑԱՆԷ ՅԱՆՈՒՆՆ,	
ՅՈՐՍ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ,	
ԵՒ ՔԱՐՈՋ ՈԳԵՇԱՀ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՅՆ Ի ՆՄԱՆԷ.....	154
ԺԱ. ՆՈՐԻՆ ՏԷՐ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹ	
Ի ՍԱՄՈՍՏԻԱ ՔԱՂԱՔ ՅԱՂԱԳՍ ԱՐԵՒՐԴԵԱՅՆ ԴԱՐՁԻ.....	160
ԺԲ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ	
ՅԱԿՈՎԲԱՅ ՈՒՐՈՒՄՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՈՐԻՈՅ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԵԼՏԻՆՈՅ ՀԱՅՈՑ.....	170

ժԳ. ՆՈՐԻՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹ ԳՐԵԱԼ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ  
 ԳՐԱՄԱՆԱԲ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՂԲԱԲ ԻՒՐՈՅ,  
 Ի ՄԻՋԱԳԵՏՍ ԱՍՈՐԻՈՑ ՅԱՄԱՅՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՆԱՅԱՆԳԻՆ, ՅԱՂԱԳՍ ՈՐ ԱՆԴ ՄԵՐՈՅ ԱԶԳԻ  
 ՔԱՅԱՆԱՅԻՑ ՀԱԿԱՌԱԿԱԲԱՆԵԼՈՅ ԱՆՄՏԱԲԱՐ ԸՆԴ ՄԻՄԵԱՆԱ,  
 ՈՄԱՆՑ ԱՍԵԼ ԱՍՏՈՒԾՈՒԹԵԱՆՆ ԲՆՈՒԹԻՒՆ ՉԱՐՉԱՐԵԱԼ ԵՒ ՄԵՌԵԱԼ  
 Ի ԽԱՉԻՆ ԸՆԴ ՄԱՐՄՆՈՅՆ, ԵՒ ՈՄԱՆՑ ՋՄԱՐՄԻՆՆ ՄԻԱՅՆ. ԵՒ ՅՈՄԱՆՑ  
 ԴԱՐՉԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԼԻՆԵԼ ՄԱՏԱԴ, ԵՒ ՅՈՄԱՆՑ ԱՐՅԱՄԱՐՅԵԼԻ.  
 ԵՒ ԱՅԼՔ ԵԹԵ ԴՐԱԽՏՆ ԻՄԱՆԱԼԻ Է ԵՒ ՄԻԱՅՆ ԱԻՐԻՆԱԿԱԲ ԱՍԱՑԵԱԼ,  
 ԱՅԼ ՈՉ ՃՇՄԱՐԻՑ ԷՈՒԹԻՒՆ, ԵՒ ԱՅԼ ԵՒՍ ՈՐ ՅԱՅՄՊԻՍԵԱՑ, Ի ԽՆԴՐՈՅ  
 ՈՒՐՈՒՄՆ ԱՍՏՈՒԾԱՍԻՐԻ ԱՌԻԺ ԱՆՈՒՆ ԻՇԽԱՆ Ի ԹԼԿՈՒՐԱՆՆ ԱԲԱՆԻ..... 183

ժԴ. ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԳՐԵԱԼ ԲԱՆ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ  
 ԱՌ ՎՏԱՆԳԵԱԼՄՆ ՄԱՐՄՆՈԿ, ՈՐՔ ՅԱՆԲԱՐԵԱՑ ՈՄԱՆՑ ՆԱԽԱՏԵԱԼՔ ԵՂԵՆ,  
 ԶՈՐ ԾԱՆՈՒՑԻՆ ՆՄԱ ԳՐՈԿ..... 248

ժԵ. ԲԱՆ ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՄՆ  
 ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԵՒ ՀԱՄԱԲՐԵՆ ԴԱՍՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՈՐՔ ՅԱՒՈՒՐ  
 ՏԱԽԻ ԱՐՄԱԲԵՆԵԱՑ ԺՈՂՈՎԵԱԼՔ Ի ԿՈՉՄԱՆԵ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
 ԵՂԲԱԲ ՆՈՐԻՆ, Ի ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԶՆԱ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ..... 255

**ՆԵՐՍԵՍ ԼԱՍԲՐՈՆԱՑՈՒ ԿԱԶՄԱԾ «ՊԱՏՃԱՌ ԽՆԴՐՈՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՅՈՒՄ  
 ԸՆԴԳՐԿՈՒԾ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՂԹԵՐԸ**

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՂԹԵՐԸ ՆԵՐՍԵՍ ԼԱՍԲՐՈՆԱՑՈՒ ԿԱԶՄԱԾ  
 «ՊԱՏՃԱՌ ԽՆԴՐՈՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՅՈՒՄ – ԱԶԱՑ ԲՈՁՈՅԵԱՆ..... 269

ԳԻՐ ՀԱԲԱՏՈՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ,  
 ԳՐԵԱԼ Ի ՆԵՐՍԻՍԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԵ, Ի ԽՆԴՐՈՅ ԳԵՐԱՊՈՍԻԲ ՓԵՍԱՅԻ  
 ԻՆՔՆԿԱԼ ԹԱԳԱԲՈՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ ԵՄԱՆՈՒԵԼԻ՝ ԱԼԵՔՍԻ ՄԵԾԻ ՊՈՏԱԲՍՏՈՍՈՐԻ,  
 ՅՈՐԺԱՄ ԵԼ ՅԱՐԵԲԵԼՍ ԵՒ ԷՐ Ի ՄԱՄԵՍԻԱ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԿԻԼԻԿԵՑԻՈՑ..... 279

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ ԹԱԳԱԲՈՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ ՄԱՆՈՒԵԼԻ,  
 ԳՐԵԱԼ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՑ..... 314

ԱԱՂՄԱՆՔ ՀԱԲԱՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ԳՐԵԱԼ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ, Ի ԽՆԴՐՈՅ ԱՍՏՈՒԾԱՄԵՐ  
 ԹԱԳԱԲՈՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ ՄԱՆՈՒԵԼԻ..... 326

ՆՈՐԻՆ ՅԱՂԱԳՍ ԱԲԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ..... 340

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄԵԾԻ ԹԱԳԱԲՈՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ ԿԻՐ ՄԱՆՈՒԵԼԻ,  
 ԳՐԵԱԼ ՄՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՎԱՍՆ ՃՇՄԱՐԻՑ  
 ԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԲԱՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ..... 357

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹԱԳԱԲՈՐԱԿԱՆ ԳՐՈՅՍ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ..... 366

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՊԱՏՐԻԱՐՔՆ ՀՈՌՈՄՈՑ..... 369

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱՑՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ – ՎԻԳԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ..... 375

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱՑՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ..... 403

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ – ԱՐՓԻՆԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ..... 423

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ..... 427

    ԳԼՈՒԽ Ա..... 437

    ԳԼՈՒԽ Բ..... 462

    ԳԼՈՒԽ Գ..... 484

    ԳԼՈՒԽ Դ..... 511

    ԳԼՈՒԽ Ե..... 537

«ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ»-Ի («ԱՄԵՆԱՅՆ ՉԱՐ ՏԱՆՁԵԼԻ»)

    ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ – ԱՐՄԻՆԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ..... 571

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ ԴԱԻԹ ՓԻԼԻՍՈՓՈՍՅԻ, ՈՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԵՆՈՐԻՆ ՏԱՌԻ,

    ՈՐ ՎԱՍՆ ՍԱՀՄԱՆԱՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ՝ ԱՍԱՑԵԱԼ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՄԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ

    Ի ԽՆԴՐՈՅ ՈՒՄԵՆ ԱՏԵՓԱՆՆՈՍԻ՝ ՍԻՐՈՂԻ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ..... 574

ԴԱԻԹ ԱՆՅԱԴԹԻ «ԲԱՐՁՐԱՑՈՒՑԵՔ»-Ի

    ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ – ԱՐՄԻՆԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ..... 595

ՊԱՏՃԱՌ ԲԱՐՁՐԱՑՈՒՑԵԱՑՆ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ..... 599

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՍԵԱՆԸ ԵՆՈՒՐՈՒԿԸ ԲԱՐՈՋԸ – ՅԱՍՄԻԿ ԻՐԻՑԵԱՆ..... 671

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ԿԼԱՅԵՑԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ[Ի] ԱՍԱՑԵԱԼ

    Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱԼՈՒՄՆ ԲՐԻՍՏՈՍԻ..... 674

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ

    Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱԼՈՒՄՆ ԲՐԻՍՏՈՍԻ (Տարբերակ)..... 685

**ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԱՈՒՄԱՅ ՄԻԱՅՆԱԿԵԱՑԻ ՎԱՐՔԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ

    ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ – ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ..... 689

ՎԱՐՔ ԵՒ ԲԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՃԳՆԱԶԳԵԱՑ ՎԿԱԻՆ ԲՐԻՍՏՈՍԻ

    ՍՐԲՈՅՆ ՊԱՐՍԱՍՈՒ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՄԻՋԱԳԵՏՍ ԱՍՈՐԻՈՑ

    ՅԱՄՆ ԱՄՊԱՐԻՇՏ ԹԱԳԱԲՈՐԻՆ ՄԱՐԿԻԱՆՈՍԻ..... 699

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐԱԾ «ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՆԵՐԲՈՂԵԱՆ

    Ի ՎԱՐՍ ԵՒ Ի ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

    ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ԼՈՒՍԱԲՈՐՁԻ» ԵՐԿԸ – ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ..... 761

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

    ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԱՐՍ ԵՒ Ի ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

    ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ԼՈՒՍԱԲՈՐՁԻ Ի ԿՈԿԻՍՈՆ ՀԱՅՈՑ ՄԻՆՉ

    ՅԱՔՍՈՐՍՆ ԵՐ Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՅԱԶԻՆ ՈՒՐՈՒՄՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

    ՀԱՍԱԶԳԻ ԵՆՈՐԻՆ ԴԵՆՍԿՈՐՈՍ ԱՆՈՒՆ ԿՈՉԵՑԵԱԼ ԵՒ ԱՅԼ ԵՒ ՅՈԳՆԱՆՈՒՄԲ

բազմութեանն, որք ժողովեալ էին Յաւորի Յիշատակի Մեծարձապ Տախի սոխրբ ԼՈՒՄԱԿՈՐԻՉԻՆ ԱՐԵՒԷԼԵԱՆ ԱՇԽԱՐԴԻՆ.....	768
ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹԻՆ ՆՈՒԻՐՈՒԹ ԶԱԿՈՒ ՍՐՃԵՑՈՒ ԾԱՌԻ՝ ՆԵՐՄԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ – ԳՈՒՐԳԷՆ ԳԱՄՊԱՐԵԱՆ.....	807
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՒԲ ՍՐՃԵՑՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍՍՅԵԱԼ Ի ԶԱՐԶԱՐԱՆՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՍՈՒ, ԱԻԱԶԱԿՆ, ՈՐ ՀՐԱԿԻՐԵՑԱՒ Ի ԴՐԱԽՏՆ ԵՒ ՔԵՐՈՒՔԵՆ ՈՐ ՊԱՀԵՐ ԶՃԱՆԱՊԱՐԴՆ.....	813
ՍՐԲՈՅ ՎԿԱՅԻՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՏԱՐԱԳՈՍԻ, ՊՐՈՒՔՈՍԻ ԵՒ ԱՆՏՐՈՆԻԿՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՄԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ – ԳՈՂԱՐ ՄՈՒՐԱՂԵԱՆ.....	851
ՇԱԲԱԹ ԱՌՈՐ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՎԿԱՅԻՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՏԱՐԱԳՈՍԻ, ՊՐՈՒՔՈՍԻ ԵՒ ԱՆՏՐՈՆԻԿՈՍԻ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԱՅՐԱՔԱՐԱՔԻՆ ԿԻԼԻԿԵՑՈՅ ՅԱՆԱՐԶԱԲԱՅ ՅԱՄՍԵԱՆՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԺԲ.....	854
ԱԶՂՄԻ Գ. ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԺԲ. ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՎԿԱՅԻՑՆ ՊՐՈՒՔՈՍԻ, ՏԱՐԱԳՈՍԻ ԵՒ ԱՆՏՐՈՆԻԿՈՍԻ.....	872
ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՄԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ – ԳՈՒՐԳԷՆ ԳԱՄՊԱՐԵԱՆ.....	877
ԱՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ԶԱՒՐԱՎԱՐԻ, ԹԵ ՈՐ ՎԿԱԵԱԼ ԿԱՍ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ԲԵՐԱՒ Ի ՄԵԶ.....	886
ԹՈՒՂԹ ՆԵՐՄԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՂԲԱՒՐ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏԱԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ԳԵՌՐԳԱ ԱՐԵՒԷԼԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍՐԲՈՅ ՈՒՄՏԻՆ ՀԱՂԲԱՏԱՅ ՅԱՂԱԳԱ ՀԵՏԱԶԱԲՏԵԼՈՅ ԱՌ Ի ԱՏՈՒԳՈՒԹԻՒՆ ԶՊԱՏՄՈՒԹԻՒՆՍ ԵՐԱՆԵԼՈՅ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ.....	886
ՎԿԱՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ԶԱՒՐԱՎԱՐԻ ԵՒ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԱ, ՈՐՈՅ ԱՆՈՒՆ ՍԱՐՏԻՐՈՍ, ՈՐ ԿՈՇԻ ՎԿԱՅ, ԵՒ ԱՅԼՈՑ ԶԻՆՈՒՈՐԱՑ, ՈՐՔ ԸՆԴ ՆՈՍԱ ՎԿԱՅԵՑԻՆ ՅԱՒՈՒՐՍ ԱՄՊԱՐԻՇՏ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՅՈՒՄԱՑ ԵՒ ՊԱՐՍԻՑ ՅՈՒԼԻԱՆՈՍԻ ԵՒ ՇԱՊՈՒՀՈՅ.....	889
Ա. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳԻՍ ԶԱՒՐԱՎԱՐԻ, ՈՐ ՎԿԱՅԵԱՑ Ի ՔՐԻՍՏՈՍ.....	916
Բ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ԶԱՒՐԱՎԱՐԻՆ.....	920
<b>ՑԱՆԿԵՐ</b>	
ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ.....	929
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ.....	941
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՂՄԱՆՈՒՆՆԵՐ.....	957



ԹՂԹԵՐ



## ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՂԹԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Հայկական պաշտօնական վաւերագրի, մասնաւորապէս կաթողիկոսական փաստաթղթերի հետազոտութեան կարեւորագոյն ժամանակաշրջաններից է ԺԱ-ԺԵ դարերի միջոցը, երբ Կիլիկիայում Հայկական իշխանութեան կայացման հետեւանքով Կիլիկիային հարեւան մօտակայ տարածքներում փորձեց հաստատուել Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը: Պիտի ենթադրել, որ կաթողիկոսական աթոռի հաստատման հետ միասին վեհափառների շուրջն էին հաւաքուում Հայոց եկեղեցու բարձրագոյն հոգեւորականութեան սերուցքի կարեւորագոյն ներկայացուցիչները, որոնք փորձում էին հնարաւորի սահմաններում վերականգնել կաթողիկոսարանի լիաշունչ մշակութային եւ եկեղեցավարչական գործունէութիւնը: Այդ ճանապարհին կարեւորութիւն պէտք է տրուէր կաթողիկոսական նօտարատան աշխատանքի վերականգնմանը: Բիւզանդացիների պարտադրանքով Անի մայրաքաղաքը լքած Պետրոս Գետաղարձը երկար տարիներ Կ. Պոլսում անցկացնելուց յետոյ իր կեանքի վերջին թոյլտուութիւն ստացաւ հաստատուել Սեբաստիայում: Արմենիա-կոն բանակաթեմի նախկին մայրաքաղաքը դեռեւս ԺԱ դարի 30-ական թթ. բիւզանդական կայսրութիւնը յանձնել էր իրենց հայրենի տարածքներից դուրս եկած Արժրունիներին: Ատոմ եւ Աբուսահլ Արժրունիների խնդրանքով Կոստանդին Թ՝ Մոնոմախոս կայսրը թոյլ տուեց Պետրոս Գետաղարձին բնակուել Սեբաստիայում՝ նստավայր ունենալով Ս. Նշան վանքը: Շուտով դահն անցաւ Պետրոս Գետաղարձի կողմից փոխանորդ-կաթողիկոս ձեռնադրուած Խաչիկ Բ-ին: Սա այն բացառիկ դէպքերից էր, երբ կաթողիկոսական իշխանութիւնը փոխանցուում էր արիւնակից-հարազատին՝ քրոջ որդուն<sup>1</sup>: Կաթողիկոսական նոր նստավայրը գտնուում էր Հայկական միջավայրում, Մեծ Հայքի տարածքներին մօտ, որտեղից աւելի դիւրին էր առնչուել Հայոց եկեղեցու հիմնական թեմերի եպիսկոպոսական աթոռների հետ: Այս հանգամանքը չէր կարող դուր գալ բիւզանդական կայսրութեանը: Նոր՝ Կոստանդին Ժ Գուկաս (1059-1067) կայսրը պարտադրեց Խաչիկ Բ-ին կրկին բռնել աքսորի ճանապարհը դէպի Կ. Պոլիս: Միայն կեանքի վերջին երեք տարիներին Խաչիկ Բ-ին յաջողուեց իր բնակավայրը կրկին մօտեցնել Հայաստանին եւ Բիւզանդիային հպատակ նորաստեղծ Հայկական իշխանութիւններին՝ Կոկիսոնի մօտակայքում գտնուող Թաւբլուր բնակավայր: Խաչիկ Բ-ի մահուանից մի քանի տարի անց, Պիզուի մօտ կալուածք ստացած Կարսի Գագիկ Աբասեան թագաւորի միջնորդութեամբ բիւզանդական կայսրութիւնը թոյլատրում է կաթողիկոս ձեռնադրել Գրիգոր Բ Վկայասէրին<sup>2</sup>, որը կաթողիկոսարանը հաստատեց Մամնդաւում, սակայն մի շարք հանգամանքների բերումով լքեց այն եւ աւելի քան 20 տարի շրջում էր Մերձաւոր Արեւելքի կարեւորագոյն Հայկական գաղթօջախներում: Դէպի Եգիպտոս ճանապարհորդած Գրիգոր Բ-ի աթոռապահ Գէորգ Լոռեցին կաթողիկոսական իշխանութիւնը մի քանի տարի փորձեց պահպանել Մամնդաւում<sup>3</sup>: 1171 թ. Մանազկերտի ճակատամարտում Ռոմանոս Դ Դիոգենէս կայսեր

1 Մեր ժողովրդի պատմութեան տարբեր շրջաններում կաթողիկոսական իշխանութեան պահպանման կամ ամրապնդման մտահոգութեամբ հոգեւոր իշխանութեան փոխանցումը դառնում էր ժառանգական: Դրա ամենացայտուն օրինակն է ԺԱ դարի վերջին կաթողիկոսական իշխանութեան անցումը Պահլաւունիներին:

2 Տե՛ս Մատթէոս 1898, էջ 155, հմմտ. Վարդան 1862, էջ 102:

3 Մատթէոսը ԾԻԱ. (=1072/3) բուականով է բուագրում Գեորգ Լոռեցու գահազրկումը Գրիգոր Բ Պահլաւունու հրամանով, որից յետոյ Գեորգը փախչում է Տարսնի, որտեղ էլ կնկում է իր մահկանացուն: Ըստ նույն պատմիչի՝

պարսուլթիւնից յետոյ Մերձեփրատեան տարածքներում եւ արեւելեան Կիլիկիայում սեփական իշխանութիւնը ստեղծեց բիւզանդական զօրահրամանատար Փիլարտոս Վարաժնունին: Վերջինս առաջարկեց կաթողիկոսարանը տեղափոխել Հոնի, սակայն բացասական պատասխան ստանալով Գրիգոր Վկայասէրից եւ Գէորգ Լոռեցի աթոռակալից, իրեն ենթակայ տարածքներում կաթողիկոս ձեռնադրեց Պետրոս Գետադարձի քրոջ որդի Սարգսին՝ Հոնիում<sup>4</sup>: Մէկ տարի անց, վերջինիս վախճանից յետոյ, Փիլարտոսի հրամանով Հոնի կաթողիկոս ձեռնադրուեց Սարգիս կաթողիկոսի դրան եպիսկոպոս, նշանաւոր երածիշտ Թէոդոսը: Պիտի շեշտել, որ Փիլարտոսի իշխանութեան ներքոյ հաստատուած կաթողիկոսարանը Սարգսի եւ ապա Թէոդոս կաթողիկոսների գլխաւորութեամբ, ճանաչուած էր միայն Փիլարտոսի իշխանութեան սահմաններում: Շուտով Փիլարտոսը կորցրեց Ջահանի գաւառը, եւ Թէոդոսը կաթողիկոսը յայտնուեց, ըստ Մատթէոսի, Պոլստաճի սելջուկ ամիրայի իշխանութեան տարածքում<sup>5</sup>: Մարաշ տեղափոխուած Փիլարտոսը չկարողանալով Թէոդոսոսին բերել իրեն ենթարկուող տարածք՝ կաթողիկոս է ձեռնադրել տալիս Վարագայ Ա. Նշան վանքի վանահայր Պօղոսին, որն էլ, ըստ Մատթէոսի, մի քանի օր անց հրաժարուած է աթոռից<sup>6</sup>: Այս Պօղոսի մասին 1092/3 թ. իրադարձութիւնների տակ Մատթէոս Ուռհայեցին պատմում է, որ Փիլարտոսի սպանութիւնից յետոյ, երբ Եդեսիային տիրում է սելջուկ զօրահրամանատար Պուզանը (Buzān, turk. Bozan), նա Ուռհա է բերել Վարագայ վանքի Ա. Նշանը. հետաքրքիր է նաեւ, որ այդ պահին քաղաքում է եղել Բարսեղ կաթողիկոսը, որը Մելիք Շահ սուլթանի սպանութիւնից (1092 թ.) անմիջապէս յետոյ Ուռհայից փախել է Անի մայրաքաղաք<sup>7</sup>: Հայկական քաղաքական միջավայրի մասնատուածութիւնը արտացոլուել է նաեւ Հայոց եկեղեցու նուիրապետական համակարգում: Մատթէոս Ուռհայեցին տեղեկացնում է Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի՝ միմեանցից անկախ չորս գահակալների մասին՝ համարելով Հայոց աշխարհի խառնակութեան նշան. «...Տէր Վահրամ Եգիպտոս, եւ Տէր Թէոդորոս ի Հոնին, եւ Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի, եւ Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն. եւ սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս եւ օճանէին եպիսկոպոսունս եւ տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն, եւ ի նոցանէ օրհնէին քահանայք»<sup>8</sup>:

ԺԱ դարի 80-ական թթ. սկզբին Գրիգոր Բ Վկայասէրը գալով Անի՝ հաւանաբար փորձում է աշխուժացնել Հայոց եկեղեցու նուիրապետական կենտրոնների եւ թեմերի միջեւ կապերը, Բագրատունիների վաղեմի մայրաքաղաքում եպիսկոպոս է ձեռնադրում իր ազգական Բարսեղին<sup>9</sup>, որին մի քանի տարի անց, Լոռէ մայրաքաղաքում Կիւրիկէ թագաւորի

1072/3 բուականին Գրիգոր Բ Վկայասէրը կաթողիկոսական արժանիքները հաստատել է Գուրգենի որդի Գագիկի իշխանութեան ներքոյ գտնուող Մուտառասուն բնակավայրում (տե՛ս Մատթէոս 1898, էջ 205-206): Ի. Օրմանեանը սխալմամբ այս Գագիկին նոյնացնում է Կարսի Գագիկի հետ (տե՛ս Ազգապատում, 1288, հմմտ. Ամստեան, Անձնանունների բառարան):

4 Օրմանեան, Ազգապատում, 1914, § 893: Ըստ Մատթէոսի, Գրիգոր Վկայասէրի հրամանով է ձեռնադրուել Սարգիսը կաթողիկոսական գահին՝ ստանալով կաթողիկոսական իշխանութեան հետեւեալ նշանները. «գփաղն եւ զգաւազանն եւ գուրբ նշանն Տէր Պետրոսի» (տե՛ս Մատթէոս 1898, էջ 210):

5 Մատթէոս 1898, էջ 228: Matthieu d'Édesse (962-1136) avec la constitution de Grégoire le Prêtre jusqu'en 1162, d'après trois manuscrits de la Bibliothèque Imperiale de Paris / trad. Ed. Dulaurier, Paris 1858, p. 191:

6 Մատթէոս 1973, էջ 150:

7 Նոյն տեղում, էջ 159:

8 Մատթէոս 1898, էջ 230:

9 Նոյն տեղում, էջ 221:

հրամանով կաթողիկոս է ձեռնադրում Աղուանից Ստեփաննոս կաթողիկոսը<sup>10</sup>: Բարսեղ կաթողիկոսը այնուհետև Մելիք Շահից արտօնագիր ստանալով<sup>11</sup>՝ դաճընկէց է անում Թէոդոսին, որից խլում է Պետրոս Գետադարձի քողը, գաւազանն ու սուրբ խաչը<sup>12</sup> իշխանութեանը ենթարկելով Ուռհա, Կապադոկիան Կեսարիա եւ Անտիոք տարածաշրջանի Հայոց եկեղեցու բոլոր թեմերը<sup>13</sup>: Այս գործողութիւնների աւարտը Մատթէոս Ուռհայեցին թուագրում է Հայոց Շն (1091/2) թուականով<sup>14</sup>: Յատկանշական է, որ յաջորդ տարի՝ Հայոց ՇՂԱ (1092/3) թուականին, վերելում յիշատակուած Պողոս վանահայրը Ուռհա է բերում Վարագայ վանքի Ս. Նշանը եւ Աստուածածնի պատկերը: Կարծես թէ Մելիք Շահի իշխանութեան տարիներին Ուռհայում էր փորձում հաստատել իր աթոռը նաեւ Բարսեղ կաթողիկոսը: Սակայն այդ տարի, ըստ Մատթէոսի, Սելջուկեան կայսրութիւնում տեղի են ունենում երկու աշխարհացունց իրադարձութիւններ. նախ՝ Եղեսիայի տիրակալ Պուզանը Անտիոքի եւ Հալէպի տէրեր Աղսիանի (Yagī Siyān, turk. Yagī Siġan) եւ Աղսնգուրի (Aq Sunqur, turk. Aq Sonqur) հետ շրջապատում են Նիկիան<sup>15</sup>՝ նպատակ ունենալով գրաւել Կ. Պոլիսը, ապա Բաղդադից հասնում է սուլթան Մելիք Շահի սպանութեան գոյժը<sup>16</sup>: Սելջուկների բանակները արագ վերադառնում են, Ուռհայից ստիպուած փախչում է նաեւ Բարսեղ Անեցին, ով ժամանակաւորապէս վերադառնում է Անի<sup>17</sup>, քանի որ Սելջուկեան կայսրութեան ներսում սկսում են դահակալական պատերազմներ<sup>18</sup>: Այդ պահին Անին դեռ պատրաստ չէր ընդունել կաթողիկոսական իշխանութիւնը: Կաթողիկոսարանի՝ Անի վերադառնալու խնդիրը դեռեւս մնալու էր հայկական եկեղեցաքաղաքական շրջանակների ապագայ ծրագրի մէջ, մինչեւ ԺԲ դարի 50-ական թուականները<sup>19</sup>:

Գրիգոր Բ Վկայասէրը եւ Բարսեղ Ա-ը մի քանի տարի եկեղեցին կառավարում են համատեղ՝ կաթողիկոսարանը տեղափոխելով Մերձեփրատեան գաւառ (նախկին Կոմմագենէ), յարակից Կարմիր վանք, որն, ըստ սկզբնաղբիւրների, գտնւում էր Սեւ լեռներում<sup>20</sup>: Այնուհետև, Բարսեղ Ա-ի հովանաւորութեամբ, Գրիգոր Գ Պահլաւունի կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ կաթողիկոսարանը տեղափոխուեց վերջինիս հայրենական կալուածք՝ Մով դղեակ, իսկ 1148/9 թ., երրորդ խաչակրութեան տարիներին կաթողիկոսարա-

10 Աղուանից կաթողիկոսարանի եւ Լոռէի Կիրիկեանցների Գանձակ տեղափոխման մասին տե՛ս Մատթէոս 1898, էջ 230-231:

11 Մատթէոս 1898, էջ 240:

12 Նոյն տեղում, էջ 240-241:

13 Նոյն տեղում, էջ 241:

14 Նոյն տեղում:

15 Հաւանաբար Մատթէոս Ուռհայեցին նկատի է ունեցել 1081 թ. գարնանը սելջուկների ձեռնարկած ռազմարշարդեպի Նիկիա, որը ղեկավարել է Մելիք Շահի գլխաւոր զորահրամանատար Քուլումիշը (Qutlumiş . turk. Qutlamiş): Տե՛ս TIB 15, 1, S. 225: Ըստ Մատթէոսի, Նիկիայի դէմ ձեռնարկուած ռազմարշարդի հաւանաբար մասնակցել են յիշատակուած ամիրաները (տե՛ս Մատթէոս 1898, էջ 242):

16 Մելիք Շահը սպանուել է 1092 թ. նոյեմբերի 9-ին, տե՛ս TBI 15, 1, S. 226, հմմտ. Մատթէոս 1898, էջ 243:

17 Մատթէոս 1898, էջ 242-243:

18 Նոյն տեղում, էջ 243-244:

19 Այդ մասին տե՛ս Կ. Մաթևոսեան, Անի. եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 59-63:

20 Սեւ լեռների հայկական վանքերը ենթադրաբար տեղադրոււմ են Մարաշի եւ Ռապանի միջև, Տլուր գաւառում, այդ մասին տե՛ս Ա. Բոզոյեան, Սեւ լեռների վանական համալիրներն ըստ Է. Ղ. Ալիշանի տեղադրութեան, Բագմավեպ, 2020 (1-2), էջ 294-303:

նը Եղեսիայի վերջին կոմսից գնեց Հռոմկլայ ամրոցը<sup>21</sup>, որը մինչև 1293 թ.՝ մամուլուքների կողմից գրաւուժը, Ամենայն Հայոց կաթողիկոսարանի նստավայրն էր: Հռոմկլան բաւական մեծ դեր է կատարել ժԲ-ԺԳ դարերում նուիրապետական համակարգում կաթողիկոսական իշխանութեան ամրապնդման գործում: Այստեղ է գրուել Ներսէս Շնորհալու երկերի մեծագոյն մասը: Այս շրջանում կաթողիկոսական իշխանութիւնն ընդլայնուել է, նոր եպիսկոպոսական աթոռներ են ստեղծուել Կիլիկիայում, Հիւսիսային Ասորիքում, Եգիպտոսում, ամրապնդուել է Հայոց եկեղեցու իշխանութիւնը Մեծ Հայքում, փորձեր են արուել սերտացնելու կաթողիկոսարանի փոխյարաբերութիւնները Աղուանից կաթողիկոսական աթոռի հետ: Ընդլայնուել են Հայոց կաթողիկոսարանի միջեկեղեցական կապերը: Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանը սերտ փոխյարաբերութիւններ է մշակել Բիւզանդիայի կայսերական եկեղեցու հետ, իսկ 1165-1178 թթ. միջեկեղեցական միութեան բանակցութիւններ է ձեռնարկել Բիւզանդական կայսեր եւ Կ. Պոլսի պատրիարքի հետ: ԺԲ-ԺԳ դարերում աննախագէտ սերտացել են փոխյարաբերութիւնները յակօբիկ ասորական եկեղեցու պատրիարքական աթոռի եւ հոգեւոր գործիչների հետ: ԺԲ դարի ընթացքում Հռոմկլայի կաթողիկոսարանը փոխյարաբերութիւններ սկսեց Հռոմի պապական աթոռի եւ Հիւսիսային Ասորիքում ու Պաղեստինում հաստատուած խաչակրաց պետութիւնների եկեղեցական գործիչների հետ: Գրիգոր Գ Պահլաւունի կաթողիկոսը եւ նրա եղբայր Ներսէս Դ Շնորհալին միջեկեղեցական կապերն ամրապնդելու ճանապարհին նոր շունչ են տուել Ամենայն Հայոց կաթողիկոսարանի նստարատանը, որն հաստատուել էր կաթողիկոսարանի հարեւանութեամբ եւ ծառայում էր նրա շահերին: Սկսած Գրիգոր Գ Պահլաւունու իշխանութեան ժամանակներից Ներսէս Շնորհալու մասնակցութեամբ կաթողիկոսարանում պատրասուում են նստարատան աշխատակիցներ:

Գրիգոր Գ կաթողիկոսը եւ նրա եղբայր Ներսէսը Քեսունի կամ Շուղրի Կարմիր վանքի դպրոցի սաներն էին: Այս վանքի առաջնորդն էր Ստեփանոս Մանուկ մեծավաստակ ուսուցիչը, որի մի շարք աշակերտներ այս դպրոցում ստացել են Շնորհալի մականունը: Նրանց մէջ յատկապէս յիշատակելի են Իգնատիոս եւ Սարգիս վարդապետները: Այդ դպրոցի սաների կողմից ստեղծուած երկերի մէջ առանձնանում են Աւետարանների եւ Կաթողիկեայց թղթերի մեկնութիւնները: Հաւանաբար հէնց այս դպրոցի սաների ջանքերի շնորհիւ է ձեւաւորուում հայ մատենագրութեան նոր վերելքը, որը գրականագիտութեան մէջ անուանւում է «Արծաթէ դար»: Մատենագրական այս շարժումը սկսուել էր դեռեւս Գրիգոր Բ Վկայասէր կաթողիկոսի ժամանակներից, որի մեծագոյն գործերից մէկը վկայաբանական երկերի թարգմանութիւնն էր եւ Տօնական ժողովածուի ստեղծումը: Կարմիր վանքի եւ Կիլիկիայի վանքերի սաները բազմաթիւ երկեր են թարգմանում յունարէնից, ասորերէնից եւ լատիներէնից:

Հայ միջնադարեան վաւերագրերի հետազոտման ասպարէզում ուրոյն տեղ ունեն Ներսէս Շնորհալու թղթերը եւ նամակների հաւաքածուները, որոնք աշխարհով մէկ ցրուած են տարբեր ձեռագիր ընդօրինակութիւններում: Այդ նամակների մի փոքր մասն է միայն գրուած մեր հեղինակի՝ մինչեւ կաթողիկոսական դահին բարձրանալը. նամակների գերակշիռ մասը ստեղծուած է Հռոմկլայի կաթողիկոսարանում: Այստեղ կգտնէք Շնորհա-

21 Ամրոցի գնման փաստաթուղթը մԳ դարում, Հռոմկլայի փաստաթղթերի պահոցում («յարկեղ սրբոյ արոողն») տեսել է Սմբատ Գուլիգոսարլ (Ապարապետ) պատմիչը (տե՛ս Սմբատ, 1965, էջ 169):

լու արձակ նամակները<sup>22</sup>: Այդ վաւերագրերն իրենց բանաձեւերով եւ կազմման սկզբունքներով ազդել են Հռոմկլայի նօտարական դպրոցի ձեւաւորման վրայ, որը գոյատեւել է մինչեւ 1293 թ., այնուհետեւ այդ վաւերագրերի կազմման բազմաթիւ բանաձեւային տարրեր փոխանցուել են Սսի եւ Վաղարշապատի կաթողիկոսական նօտարատուն-դիւաններին: Միեւնոյն ժամանակ պէտք է արձանագրել, որ Ներսէս Ծնորհային լիււրի օգտուել է նախորդ հայ կաթողիկոսարանների նամակ-վաւերագրի գրման փորձից եւ իրեն հասած էպիստոլեար (թղթագրական) ժանրի գոհարների թողօններից: Ներսէս Ծնորհայու այս անհատական թղթերից քչերն ունեն հնագոյն ընդօրինակութիւններ: Մեզ հասած ձեռագրերը հիմնականում ընդօրինակուել են ԺԷ-ԺԸ դարերում:

«Թուղթ ընդհանրական» – Այս վաւերագիրը Ներսէս Ծնորհայու գրչին պատկանող ամենայայտնի երկերից է: Վերնագիրը կազմուած է թղթառաջքի հիմքի վրայ: Վաւերագիրն ունի քառամասն թղթառաջք. 1) նամակագիրն իր տիտղոսներով, 2) հասցէատէրերը, ուր ներկայացուած է Հայոց եկեղեցու նուիրապետական համակարգը աշխարհագրութեամբ եւ տարաբնոյթ բնակավայրերի ու հասարակութեան շերտերի առանձին դասերի թուարկումով, 3) թղթառաջք ողջոյն՝ Հռոմկլայի կաթողիկոսարանի նշխարների թուարկումով, 4) իբրեւ կաթողիկոս աղօթում է բոլոր հասցէատէրերի հոգու փրկութեան համար եւ հայցում հօտին իրենց աղօթքներում չմոռանալ իրեն: Վաւերագրի մուտքում յիշեցնում է, որ իր եղբայր Գրիգոր կաթողիկոսը իր մահուանից առաջ հաւաքել է Սեւ Լեռան եպիսկոպոսներին եւ վարդապետներին եւ ձեռնադրել է իրեն Հայոց կաթողիկոս: Այդ իրադարձութիւնից երեք ամիս յետոյ հրաժեշտ է տուել կեանքին՝ թողնելով Հայոց եկեղեցու հոգսերը նամակագիր-կաթողիկոսին: Նշանակում է, այս նամակը կարելի է թուագրել 1166 թ. յուլիս ամսով: Թուարկելով բարձրագոյն հոգեւորականութեան աստիճանները, ըստ նրա, պարտականութիւնների հոգսը ծանրանում է, որքան բարձր է աստիճանը: Յորդորում է նրանց լինել հօտի համար ծնող, դայակ, վարդապետ, բժիշկ, դէտ, հովիվ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր եւ կատարել Քրիստոսի եկեղեցու օրէնքները, ապա համեմում է խօսքը աւետարանական ասոյթներով՝ մանրամասնելով իւրաքանչիւր թուարկուած փիճակի կարեւորութիւնը: Դիմում է նրանց հնարաւորինս լաւ միջնորդ լինել Աստուծոյ եւ մարդկանց միջեւ, Հայոց եկեղեցու նախկին հայրապետների եւ վարդապետների նման ուսուցանել աստուածային պատուիրանները: Կաթողիկոսարանի բնակիչներին նմանեցնում է որսորդներից եւ շներից փախած քարանձաւի բնակիչների, որոնք ունեցուածք չունեն, քանի որ իշխաններից եւ թագաւորներից ոչինչ չեն ստանում եւ իրենց աշխատանքով են հոգում հանապազօրեան: Մաղթում է հաւատարիմ մնալ Աստուածաշնչին եւ իրենց կոչմանը: Ներկայացնում է Հայոց եկեղեցու դաւանաբանութեան հիմնական բանաձեւերը երրորդութեան, մարդեղութեան վերաբերեալ: Այնուհետեւ առանձին-առանձին դիմում է վանականների, վանահայրերի, եպիսկոպոսների եւ քահանաների դասերին՝ կենցաղավարութեան ու հոգեւոր կեանքի խորհուրդներ տալով նրանց, յիշեցնելով առանձին դէպքերի վերաբերող բազմաթիւ կանոնական կարգաւորումներ: Այնուհետեւ առանձին անդրադառնում է իշխաններին եւ զինուորաց դասին՝ արժեւորելով նրանց դերը հասարակութեան եւ պետութեան համար: Յատկապէս կարեւորում է խորհուրդն այն

22 Ներսէս Ծնորհայու չափածոյ բոլորը կարող էք գտնել Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ, Ներսէս Ծնորհայի, գիրք Բ, երեսմ, էջ 459-469:

զինուորներին, որոնք ծառայում են այլազգիներին՝ պահանջելով նրանցից հաւատարմութիւն եւ արդարամտութիւն: Կաթողիկոսն իր խօսքն ուղղում է նաեւ բարիքներ ստեղծող վաճառականներին եւ երկրագործներին, պատուիրելով յարգել միմեանց, չտրուել զեխութեան: Կանանց դասին պատուիրում է պարկեշտութեամբ եւ աստուածապաշտութեամբ յաղթահարել կեանքի դժուարութիւնները: Վաւերագիրը յստակ պատկերացում է տալիս միջնադարեան հասարակութեան եւ նրա կառուցուածքային խնդիրների մասին:

**Ա.** «...Տեառն Ներսիսի գրեալ պատասխանի թղթոյն պատրիարքին Ասորոց Տեառն Միխայէլի» – Ամենայն հաւանականութեամբ վաւերագիրը գրուած է Հռոմկլայի կաթողիկոսական նստարատանը: Մասամբ են պահպանուել նամակի թղթառաջքն ու թղթավերջը: Այս նամակի թղթավերջում յիշատակուած Յովհաննէս եպիսկոպոսին, ամենայն հաւանականութեամբ, կարելի է նոյնացնել Քեսունի Ասորի եպիսկոպոսի հետ<sup>23</sup>: Նա մասնակցել է 1170 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Թէորիանոս մագիստրոսի առաջին դեսպանագնացութեան ժամանակ կազմակերպուած հայ-ասորա-բիւզանդական դաւանաբանական բանավեճերին<sup>24</sup>, իբրեւ յակոբիկ-ասորիների պատրիարք Միխայէլ Գ-ի բանագնաց<sup>25</sup>: Հետաքրքիր է նամակի հրաժեշտի բանաձեւից առաջ Ներսէս Շնորհալու յայտնած տեղեկութիւնը, ըստ որի Հայոց կաթողիկոսը համառօտաբար է անդրադառնում Հայոց եկեղեցու հաւատոյ խոստովանութեանը, քանի որ յոյս ունի, թէ բանագնաց Յովհաննէս եպիսկոպոսը աւելի ամբողջական կներկայացնի Ասորի պատրիարքին Հայոց դաւանանքի ողջ ուղղափառութիւնը: Յատկանշական է, որ Շնորհալին մերժում է յակոբիկ-ասորական եկեղեցու ներսում տարածուած այն թիւր կարծիքը, թէ իբր Հայոց եկեղեցին հետեւում է Յուլիանոս Հալիկառնացու դաւանաբանական սկզբունքներին: Ամենայն Հայոց կաթողիկոսը նման տեսակէտը համարում է Հայոց եկեղեցուն զրպարտողների ասածներին ականջ դնելու արդիւնք: Շնորհալին հաւաստիացնում է իր փոխադարձ սէրն ու յարգանքը յակոբիկ եկեղեցու առաջնորդի նկատմամբ՝ յուսալով, որ կհարողանան հանդիպել եւ համատեղ ուժերով ի կատար ածել իրենց ցանկութիւնները: Այս վաւերագիրը պատասխանն է Միխայէլ Գ Ասորի պատրիարքի՝ Յովհաննէս Քեսունցի եպիսկոպոսի ձեռքով Հռոմկլայ բերուած նամակի, ուր խօսուել է հայ-ասորական դաւանաբանական տարածայնութիւնների ու դրանց հարթման ճանապարհների մասին: Ներսէս Շնորհալին կատարում է առաջին քայլը. Յովհաննէս եպիսկոպոսից տեղեկանալով Միքայէլ պատրիարքի ղեկավարութեամբ տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովի եւ նրա որոշումների մասին՝ նման քայլը ճշմարտութեան հասնելու կարեւորագոյն միջոց է համարում, որն արձանագրուած է նաեւ եկեղեցական կանոններում: Նամակի թուագրման ժամանակը պարզելու համար կարելի է առաջարկել հետեւեալ լուծումները. Մաղաքիա արք. Օրմանեանի ենթադրութեամբ այս վաւերագիրը Միխայէլ Գ պատրիարքն ուղարկել է Ներսէս Գ Շնորհալուն՝ Հայոց եկեղեցու առաջնորդին, յայտնելու համար յակոբիկ ասորական եկեղեցու պատրիարքական դահին ընտրուելու լուրը<sup>26</sup>: Հետեւելով այս տրամաբանութեանը՝ կարելի է ենթադրել, որ

23 ՏԻՍՍԵՆ Է. Honogmann, Le couvent de Barsauma et le patriarcat Jacobite d'Antioche et de Sşrie, Louvain, 1967, p. 133 [CSCO, vol. 146, Subsidia, t. 7]:

24 ՏԻՍՍԵՆ Է. ԲՈՋՈՅԵԱՆ, 1995, էջ 148-149:

25 MS, t. III, p. 335, հմմտ. ԲՈՋՈՅԵԱՆ 1995, էջ 149:

26 ՏԻՍՍԵՆ Է. ՕՐՄԱՆԵԱՆ, 1912, սխմ 1429, § 981:



Ներսէս Ընորհալուսն ուղղուած Ասորի պատրիարքի նամակը գրուել է 1166 թ. հոկտեմբերի 18-ից յետոյ, քանի որ այդ ժամանակ է յակորիկ եկեղեցու պատրիարքական դահին բազմել Միխայէլ Գ-ը<sup>27</sup>: Ուրեմն, պէտք է կարծել, որ Ներսէս Գ Ընորհալու հրապարակուող նամակը գրուել է յիշատակուած իրադարձութիւնից որոշ ժամանակ յետոյ, Հռոմկլայի նօտարական գրասենեակում: Թղթավերջի բանաձեւից էլ տեղեկանում ենք, որ վաւերագիրը յանձնուել է բանազնաց Յովհաննէս եպիսկոպոսին, որին Ներսէս Ընորհալին վստահել է նաեւ բանաւոր փոխանցուելիք տեղեկութիւններ պատրիարք Միխայէլ Գ Ասորուն. «...այլ բովանդակն յիմաստուն եպիսկոպոսէդ ի տէր Յովհաննիսէ հասկանայք»: Կարելի է նաեւ առաջ քաշել եւս մէկ ենթադրելի վարկած, ըստ որի նամակը գրուել է Ներսէս Գ Ընորհալու կողմից 1170 թ. մայիսի 15 – հոկտեմբերի 5 ժամանակամիջոցին, ի պատասխան Միխայէլ Գ Ասորու ուղերձի, որը գրուել է Թէորիանոս մագիստրոսի կողմից Հռոմկլայում կազմակերպած ժողովի նախօրեակին: Յովհաննէս Քեսուցին, հաւանաբար, մինչեւ իր մահը՝ 1174 թ., չափազանց կարեւոր դեր է կատարել հայ-ասորական եկեղեցական փոխարարբութիւններում, քանի որ Յովհաննէսն էր յիշատակուած բանակցութիւնների ժամանակ Միխայէլ Գ Ասորի պատրիարքի բանազնացը: Հետազոտողի ուշադրութիւնից չպէտք է վրիպի նաեւ այն հանգամանքը, որ 1174 թ. մարտի 24-ին՝ նրա մահից յետոյ, Միխայէլ Գ Ասորին մէկ այլ Յովհաննէս (Ivannīs) եպիսկոպոսի է ձեռնադրել իբրեւ Քեսուցի թեմի առաջնորդ<sup>28</sup>:

Բ. «...առ Պաւղոս քահանայ ի Տարսոնէ» – Ամենայն հաւանականութեամբ ընդօրինակողները չեն բերել նամակի պաշտօնական բանաձեւերը՝ դեն նետելով դրանք: Նամակի վերնագիրը գրուած է դէպքերին տեղեակ ժամանակակցի կողմից: Ըստ վերնագրի տեղեկութիւնների, նամակը գրուել է Ներսէս Գ Ընորհալի (1165-1173) կաթողիկոսի գահակալման շրջանում, երբ բուն ընթանում էին հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւնները բիւզանդական Մանուէլ Ա Կոմնենոս կայսեր իշխանութեան տարիներին: Ըստ թղթի վերնագրի, նամակի հասցէատէքն է Կ. Պոլսում հաստատուած Պողոս Տարսոնացի հայազգի քահանան, որը քաղկեդոնական լինելով չարախօսում էր Հայոց եկեղեցուն Մանուէլ Ա Կոմնենոսի կառավարման շրջանում, երբ թէ՛ հայ եւ թէ՛ բիւզանդական կողմերը պատրաստ էին միաբանութեան: Չքմեղանալով իր գործած վնասների համար՝ Պողոս Տարսոնացին նամակ է գրում Ներսէս Ընորհալուն, որի պատասխանն է հրապարակուող վաւերագիրը: Նամակի բուն բովանդակութեան մէջ Ներսէս Ընորհալին հումորով յիշեցնում է հասցէատիրոջը, որ թէպէտ վերջինս կրում է իր հայրենակցի՝ Տարսոնից սերած յայտնի առաքեալ Պողոսի անունը, այնուամենայնիւ քրիստոնէութեան աւետման գործում նրան իր գործակիցը չի համարում, քանի որ Հայոց եկեղեցին լքած իր նախորդների նման, նա միայն բամբասանքներ է տարածել, իր գործունէութեամբ ատելութեան վիճ է փորել երկու եկեղեցիների եւ ազգերի միջեւ («...սերմանեաց աճեցեալ եւ պտղաբերեալ՝ որպէս թուի իմաստուն քննողաց, այսքան խաւարին ատելութիւն ի մէջ երկուց ազգաց»): Իր այս ժամանակակցի գործունէութեան մասին Ներսէս Ընորհալին ստացել է նրա ընդդիմախօսների զգուշացումները: Նամակից կարելի է դատել, որ Պողոս քահանան հակաճառա-

27 Տե՛ս Honigmann, 1967, p. 110:

28 MS, t. III, p. 355, հմմտ. E. Honigmann, Le couvent de Barsauma et le patriarcat jacobite d'Antioche et de Syrie, Louvain 1967, p. 111:

կան մի քանի նամակներ է գրել («...ընթերցաք զգիր յընդդիմադրութեան զքէն առ մեզ»): Պօղոս քահանայի եւ նրա համախոհների արարքը ներսէս Շնորհային նմանեցնում է պատերազմի ժամանակ խռովութիւն բարձրացրած եւ օտարի կողմն անցածների վարքագծին: Կաթողիկոսը մեղադրում է Պօղոսին եւ նրա գործընկեր Սամուէլ Սամոսացուն կայսերական ատեանին Հայոց եկեղեցու մասին ոչ ճշմարիտ բողոքագիր ներկայացնելու համար: Այս տեղեկութիւնները կարեւորում են հայ-բիւզանդական բանակցութիւնների ընթացքում քաղկեդոնականութիւն ընդունած հայերի եւ նրանց գործունէութեան մասին սուղ տուեալների պայմաններում: Ամենայն հաւանականութեամբ հրապարակուող նամակը մեզ է հասել ոչ ամբողջական բնագրով: Յատկապէս բացակայում է վերջնամասը, քանի որ նամակն անհարկի ընդհատուած է: Չի պահպանուել նամակի թղթավերջը: Ղեւոնդ Ալիշանն այս վաւերագրի ստեղծումը իրաւամբ կապում է ներսէս Շնորհայի կաթողիկոսի գահակալման վերջին տարիներին աշխուժացած հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւնների վերելքի ժամանակաշրջանի հետ<sup>29</sup>: Նամակի ստեղծումը Հռոմկլայի նօտարատանը կարելի է թուագրել ամենայն հաւանականութեամբ 1172-1173 թթ.:

**Գ. «...Տեառն Ներսիսի կաթողիկոսի. Առ եպիսկոպոսս եւ վարդապետս Հայաստանեայց՝ վասն սիրոյ եւ միաբանութեան ընդ Յոյնս»** – Պահպանուել են վաւերագրի սկզբի եւ վերջի բանաձեւային համակարգերը: Վաւերագիրն ուղղուած է Հայոց եկեղեցու նուիրապետական ողջ կառոյցին եւ ծանուցում է հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւնների բարեյաջող ընթացքի մասին: Յատկանշական է, որ հրաժեշտի բանաձեւից յետոյ է կաթողիկոսը հնչեցրել նամակի հիմնական կոչը՝ հրաւիրելով Հայոց եկեղեցու բոլոր թեմերի հոգեւորականութեանը եւ մանաւանդ եպիսկոպոսներին իրենց մասնակցութիւնը բերել հայ-բիւզանդական բանակցութիւնների արդիւնքները հաստատելու համար հրաւիրուող ժողովին: Ամենայն հաւանականութեամբ նամակը գրուել է կայսեր կողմից գրուած երրորդ պաշտօնական թղթից յետոյ, քանի որ մեր վաւերագրում թուարկուած են այդ փուլերը. «միանգամ եւ երկիցս եւ երիցս»: Ենթադրում եմ, որ այս նամակը գրուել է Թէորիանոս մագիստրոսի երկրորդ ղեսպանագնացութիւնից անմիջապէս յետոյ՝ 1172 թ. հունուար-մարտ ամիսներին, քանի որ Մանուէլ Ա Կոմնենոս կայսերը եւ Միքայէլ Գ Անքիալոս (1170-1178) Կ. Պոլսի պատրիարքին հէնց այդ ժամանակ գրած նամակներում տեղեկացնում է, որ ինքը ծիսադաւանական խնդիրները քննարկելու եւ միութիւն հաստատելու յոյսով Հայոց եկեղեցու եպիսկոպոսներին եւ վարդապետներին ժողովի է հրաւիրել<sup>30</sup>: Պահպանուել է պաշտօնական նամակի եռամասն թղթառաջը. 1. վաւերագրի հեղինակ ներսէսն իր տիտղոսով, 2. հասցէատէր-հոգեւորականների (եպիսկոպոս, վարդապետ, վանահայր եւն) յիշատակութիւնը, 3. թղթառաջ-ողջոյնի բանաձեւը Հռոմկլայի սուրբ մասունքների (Վանկոյ նշան, առաքելական նշխարներ, Լուսաւորչի աջ) թուարկմամբ: Նկատելի է, որ վաւերագիրը գրուած է Հռոմկլայի կաթողիկոսական նօտարատանը ստեղծուած ինքնատիպ բանաձեւային համակարգով, որն օգտագործուած է նաեւ նոյն հեղինակի այլ նամակներում: Ներսէս Դ Շնորհային վաւերագրի հասցէատէրերին համառօտակի տեղեկացնում է բիւզանդացիների հետ վարած բանակցութիւնների դրական արդիւնքների մասին: Բիւզանդական եկեղեցու հետ միութիւն կնքելու վերջնական որոշում կայաց-

29 Տե՛ս Ալիշան 1873, էջ 420-421:

30 Տե՛ս Բոգոյեան, 1995, էջ 67-70, № 15-16:

նելու համար կաթողիկոսն հրաւիրում է բոլորին համահայկական եկեղեցական ժողովի: Հրաժեշտի ողջոյնով մաղթում է եկեղեցական միութեան հաստատում: Ցաւօք, ինչպէս նաեւ միւս դէպքերում, չի պահպանուել նամակի գրման՝ Հոռմկլայի նօտարատանը գրուած թուականը:

Դ. «...Տեառն Ներսիսի կաթողիկոսի պատասխանի գրոյ ուրումն, որ գրեալ էր առ նա բանս զկժանաց յանդուզն լրբութեամբ» – Նամակն ունի անձնական բնոյթ եւ հաւանաբար հէնց այդ պատճառով էլ չունի պաշտօնական թղթառաջք: Հնարաւոր է նաեւ, որ ընդօրինակողը միտումնաւոր կերպով դեն է նետել հասցէատիրոջ անունը եւ թղթառաջքը: Պահպանուել է միայն հրաժեշտի «Ողջ լեր» բանաձեւը: Հասցէատիրոջ անունը ոչ պահպանուած վաւերագրի բնագրում, ոչ էլ վերնագրում չի հաղորդուած: Ներսէս Ծնորհալին ակնարկում է հասցէատիրոջ հետ ունեցած նամակագրական կապի մասին՝ հասցէատիրոջից ստացած իր նամակն անուանելով «գիր սիրոյ եւ յանդիմանութեան», նախընտրելով աստուածաշնչային «Լաւ են հարուածք բարեկամի, քան զկամաւոր համբոյրս թշնամւոյ» (Առակք, Ի՛ն 6) ասացուածքը: Ենթադրում եմ, որ նամակի հասցէատէրն է մէկը, որը ժամանակին Ներսէս Ծնորհալու բարեկամներից է եղել: Ամենայն հաւանականութեամբ նա Մերձեփրատեան տարածքի կամ Կիլիկիայի հայկական վանքերից մէկի վանահայրն է կամ վանականներից մէկը: Կաթողիկոսը չափազանց քաղաքավարութեամբ է պատասխանում նամակագրի հիմնական անձնական յանդիմանութիւններին. այդ մեղադրանքների թոււմ են կեղծաւորութիւնը, շահադիտութիւնը, հպարտութիւնը: Առաջին նամակից երեւում է, որ Ներսէս Ծնորհալու հետ հանդիպելու հրաւերներից նամակի հասցէատէրը խուսափել է: Վաւերագրի գրման ժամանակի վերաբերեալ նամակում որեւէ կոնկրետ վկայութիւն չկայ: Սակայն վերնագրից իսկ յայտնի է որ այն գրուած է Ներսէսի կաթողիկոս լինելու տարիներին:

Ե. «...Առ նոյն ժպիրհ» – Նամակը չունի թղթառաջք եւ թղթավերջ: Վաւերագիրը պատասխանն է նախորդ Անանուն հասցէատիրոջ գրած մէկ այլ նամակի: Այստեղ եւս Ծնորհալին բողոքում է, որ նամակագիրն իրեն անհարկի մեղադրում է չգործած յանցանքների մէջ: Երկրորդ նամակից երեւում է, որ նամակագիրը մեղադրել է Ներսէս Ծնորհալուն իրեն հակառակորդների ձեռքն յանձնելու մէջ: Կաթողիկոսը մերժում է նման ամբաստանութիւնը: Նամակից տեղեկանում ենք, որ անանուն հասցէատէրը փախել է «արեւմուտք» իր այդ քայլի դրդապատճառ համարելով Ներսէս Ծնորհալու կեցուածքը: Մեզ համար անհասկանալի է այս պարագայում օգտագործուած «արեւմուտք» տերմինի աշխարհագրական ուղղութիւնը. ո՞ւր է փախել նամակի հասցէատէրը: Կարելի է ենթադրել Իկոնիա, Անտիոք կամ Բիւզանդիա: Ներսէս Ծնորհալին այս պատասխանում չի ընդունում իրեն ուղղուած մեղադրանքը եւ խորհուրդ է տալիս նամակագրին իր փախուստի պատճառները գտնել սեփական անձի մէջ: Նամակի գրման թուականը յայտնի չէ, հաւանաբար գրուած է նախորդ նամակից որոշ ժամանակ անց:

Զ. «...Առ նոյն յիմարութեամբ եւ հպարտութեամբ լրբեալ յանդուզն ժպիրհ» – Նախորդի նման նամակը չունի թղթառաջք եւ թղթավերջ: Երրորդ նամակում Ներսէս կաթողիկոսը չի քննարկում հասցէատիրոջ կողմից իրեն ներկայացուած անհիմն մեղադրանքները եւ յոյս է յայտնում, որ իրենց վէճը կլուծուի արդարօրէն: Այնուամենայնիւ, նա թուարկում է իր ընդդիմախօսի որոշ տրամադրութիւններ: Անհարկի է համարում հասցէատիրոջ համեմատութիւնը, որն իրեն՝ Հայոց կաթողիկոսին, իբրեւ արդար դատաւորի,

Հաւասարեցնում է Պիղատոսի եւ Տրայանոսի հետ, եւ մեղադրում է բոլոր մարդկային մեղքերում: Շեշտում է, որ ինքն էլ բոլոր արարածների նման մեղսական է եւ գիտէ, որ կատարյալ չէ: Դրա համար էլ Աստուծոց գթութիւնն է աղերսում: Կաթողիկոսը գիտակցում է, որ դատուելու է արդար դատաստանի օրը: Նկարագրուած երեք նամակներից եւ ոչ մէկը չունի պաշտօնական նամակին յատուկ բանաձեւային լուծումներ, թէպէտ նամակները գրուած են, ամենայն հաւանականութեամբ, Ներսէս Շնորհալու կաթողիկոսութեան տարիներին, Հոռոմկլայում: Դրանք հաւանաբար հասցէատիրոջ անուան հետ դեն են նետուել ընդօրինակողի կողմից: Այդ մասին են վկայում միայն նամակների վերնագրերը: Անանուն նամակագրի անձի փնտրտուքը հետագոտութեան այս փուլում արդիւնք չտուեց: Երեւում է, որ Շնորհալին չի փորձում իր ընդգիմախօսին պատասխանել վերջինիս իսկ օգտագործած թշնամական տոնով եւ փորձում է գտնել հաշտութեան եզրեր: Այս նամակագրի հետ թղթակցութիւնից պահպանուել են միայն հրապարակուած երեք միաւորները: Յատկանշական է, որ երեք հատուածական նամակներից միայն առաջինում է պահպանուել նամակի կարեւորագոյն՝ թղթավերջի հրաժեշտի բանաձեւը, որն առկայ է վաղ շրջանի թղթագրական բնագրերում:

Է. «...Տեառն Ներսիսի կաթողիկոսի առ վարդապետն Գէորգ» – վերնագրերը վկայում են, որ Գէորգ վարդապետին ուղղուած երեք նամակներն էլ գրուած են Ներսէս Գ Շնորհալու կաթողիկոսութեան շրջանում (1166-1173): Չեն պահպանուել այդ վաւերագրերի թղթառաջքները: Միայն դրանց առաջին երկուսն ունեն թղթավերջի բանաձեւերը: Առաջին նամակում Ներսէս Շնորհալին վշտակցութիւն է յայտնում վարդապետին, հաւանաբար ինչ-որ ռազմարշաւից տուժելու համար: Յիշեցնում է Գէորգ վարդապետին վանդակի մէջ գտնուող ինչ-որ գազան-մարդու կարեկցելու եւ խաբէական խօսքերին հաւատալու պատմութիւնը: Արդարացնում է իրեն, որ ունեցուածքը ոչ թէ խնայել է, այլ անպէտք վատնումից է փրկել: Վերջում էլ խօսում է ինչ-որ գերիների մասին: Յամենայն դէպս նամակը գրուած է հաշտութեան տոնով եւ ունի վերջում «ողջ լեր» հրաժեշտի բանաձեւը: Արդեօք այստեղ խօսքը չի՞ վերաբերում Գէորգ վարդապետին, որն ըստ վարդանի «Հաւաքումն պատմութեան» երկի 594 (1145/6) տարուայ դէպքերի շարագրանքի, գրել է Զանգի ամիրայի կողմից Զոսլին իշխանի սպանութիւնից յետոյ, նրա Ողբը<sup>31</sup>:

Ը. «...Առ նոյն Գէորգ վարդապետ» – Ներսէս կաթողիկոսը ոգեւորութեամբ անդրադառնում է իր զգացումներին, որոնք կապուած են Գէորգ վարդապետի նամակը ստանալու հետ: Երկրորդ նամակն ունի աւելի մտերմիկ բնոյթ, ուր Ներսէսը շնորհակալութիւն է յայտնում իր նամակի հասցէատիրոջը խրատների համար: Նամակի վերջում խօսուում է ուղարկուած նուէրի՝ խնձորի մասին: Այս նամակի հրաժեշտի բանաձեւն աւելի մտերմիկ է, քան նախորդինը. «Ողջ լեր՝ անմոռաց որպէս հաւատամ աղաւթս լինել: Ողջունեալքս ի քէն ողջունեն սիրով»:

Թ. «...Առ նոյն Գէորգ վարդապետ» – Գէորգին հասցէագրուած երրորդ նամակը թէպէտ չունի նամակին յատուկ պաշտօնական բանաձեւային համակարգի որեւէ հատուած, սակայն Շնորհալին նամակագրին «սիրելի ըստ ոգւոյ» է անուանում, որը թոյլ է տալիս ենթադրել նամակագրութեան բարեկամական բնոյթի մասին:

31 Տե՛ս Հաւաքումն պատմութեան վարդանայ վարդապետի լուսարանեայ, Վեներիկ, ի Ս. Գազար 1862, էջ 125, հմմտ. Յաւել Ալիշան 1873, էջ 193:

Ժ. «...Գիր շրջաբերական առաքեալ ի կողմանս արեւելից ի Կարս՝ զկնի նորակերտ եպիսկոպոսի ուրումն...» – Նամակի վերնագրից կարելի է ենթադրել, որ վաւերագիրը շրջանառութեան մէջ դնողը խուսափել է յիշատակել Կարսի նոր ձեռնադրուած եպիսկոպոսի անունը՝ շեշտելով, որ նրա անունը կարելի է իմանալ նրա ուղարկած նամակներից<sup>32</sup> (յորոյ գիրս ցուցանէ յանունն): Այնուամենայնիւ, նամակի բուն բովանդակութիւնից իմանում ենք, որ ձեռնադրուած եպիսկոպոսի անունն է Խաչատուր: Վերնագրում նաեւ անդրադարձ կայ նամակի բովանդակութեանը՝ խրատներ թեմի առաջնորդին եւ նրան ենթարկուող հօտին: Պահպանուել է վաւերագրի ամբողջական պաշտօնական թղթառաջքը, որը յատուկ է Հռոմկլայի կաթողիկոսական նօտարատան վաւերագրերին: Այս նամակն ունի բաւական ընդարձակ, հնգամասն թղթառաջք. 1) Փառքի կամ շնորհի բանաձեւ («Շնորհաւք ամենակալին Աստուծոյ Հաւր, եւ գթութեամբ միածնի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, եւ պարզեաւք կենդանարար Սուրբ Հոգւոյն»), 2) վաւերագրի անուանումը («այս մեր գիր ւարձութեան հոգեւորական հրամանի»), 3) նամակագրի անունն ու տիտղոսը («Ներսիսի ծառայի Քրիստոսի, ողորմութեամբ նորին կաթողիկոսի ամենայն Հայոց»), 4) հասցէագրում («զոր գրեցաք յանմատոյց գղեակղ եւ ի հոյակապ քաղաքդ Կարս, եւ որ ընդ դովաւ նահանգք գեղարէից, վանաւրէից եւ ագարակաց: Որոց այդոցիկ ամենեցուն՝ սրբազան հարց, խաչակրաւն միանձանց, աստուածարեալ եւ շնորհազարդ քահանայից, մեծազարմ իշխանաց, քրիստոսասէր զինուորաց, արգասու վաճառականաց, պատուաւոր տանուտերաց, աշխատասէր երկրագործաց, ձեռահամուտ արուեստագիտաց, եւ ամենայն քրիստոսադաւան հայասեռ ժողովրդականացդ հոգեւոր որդւոց մերոց»), 5) թղթառաքողը («Ողջոյն սիրոյ եւ խաղաղութեան հասցէ յաստուածընկալ սուրբ նշանացս եւ յառաքելական նշխարացս եւ ի սուրբ Լուսաւորչին մերոյ աջէս եւ յԱթոռոյս եւ ի մէնջ»): Յատկանշական է, որ թղթառաջքում եւս չի նշուած նամակագրի անուն: Այս փաստը թույլ է տալիս ենթադրել, որ փաստաթուղթը գրուած է կոնդակի տեսքով եւ ուղղուած է Կարսի (Վանանդ գաւառի) թեմի ողջ հօտին՝ «Թուղթ ընդհանրական»-ի նմանողութեամբ յիշատակելով հասարակութեան բոլոր զասերին: Կոնդակի մուտքում բացատրուած են վաւերագրի գրման հանգամանքները. մահացել է Կարսի առաջնորդ Տէր Աբրահամը, թեմն ընտրել է նրա ազգական Խաչատուր քահանային, որն էլ թեմի կողմից գրուած վկայական-վստահագիր-նամակով ներկայացել է Հայոց կաթողիկոսին եւ նրա կողմից ըստ կարգի ձեռնադրուել է Կարսի թեմի առաջնորդ-եպիսկոպոս: Նորած եպիսկոպոսի պարտականութիւններից կոնդակում յիշատակուած է աստուածային երկիւղով քահանաների ընտրութիւնը եւ օրինաւոր պսակը չլուծելու պատգամը, այնուհետեւ՝ հոգեւոր-բարոյական խրատներ է ուղղում թեմի բնակիչների բոլոր խաւերին, պատուիրելով սատար լինել նորած եպիսկոպոսի բարի ձեռնարկումներին: Վերջաբան-ամփոփումում ներսէս Շնորհալին յոյս է յայտնում, որ նոր եպիսկոպոսի մուտքով Աստուծոյ ողորմութիւնը, բարգաւաճումը եւ խաղաղութիւնը անպակաս կլինեն թեմից: Կոնդակն աւարտուած է փառքի բանաձեւով: Վաւերագիրն ունի նաեւ ետգրութիւն, որով կաթողիկոսը տեղեկացնում է, որ եպիսկոպոսի հետ միւլուոն է ուղարկում

32 Կարելի է ենթադրել, որ Հռոմկլայի նօտարատանը պահպանուած է եղել այս եպիսկոպոսի կողմից գրուած մի քանի նամակ: Քիչ անց, վաւերագրի մուտքում տրուած է Կարսի նորած եպիսկոպոս Խաչատուրի անունը:

մկրտութեան եւ եկեղեցական կարգերը կատարելու համար<sup>33</sup>: Այս վաւերագիրը հայերէնով պահպանուածներէ մէջ առաջինն է, որով կարելի է ընդհանուր պատկերացում կազմել Հռոմկլայի կաթողիկոսարանում եպիսկոպոսական պատուի արժանացած հոգեւորականներին տրուող կոնդակ-վաւերագրերի բանաձեւային համակարգի մասին: Յաւօք, վաւերագրի գրման թուականը չի պահպանուել: Վանանդ զաւառի Կարս (Կարուց) քաղաքի Խաչատուր եպիսկոպոսը յիշատակում է նաեւ 1178 թ. Գրիգոր Դ Տղայի գրած թղթում՝ Հռոմկլայի ժողովը ստորագրած եպիսկոպոսների ցանկում:

**ԺԱ. «...Տէր Ներսիսի կաթողիկոսի. թուղթ ի Սամոստիա քաղաք յաղագս Արեւորդեացն դարձի»** – Ըստ թղթառաջի, վաւերագրի հասցէատէրերն են Եփրատեան մարզի Սամոստիա քաղաքի քահանաները, Թորոս քորեպիսկոպոսը, Գագան անունով եւ միւս տանուտէրերը: Այս նամակի թղթառաջը եռամասն է. 1) նամակագիրն իր տիտղոսով («Ներսէս ծառայ Աստուծոյ, եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս Հայոց»), 2) հասցէատէրեր («պատուական քահանայիցդ, որ ի Սամոստիա քաղաք, Թորոսի քորեպիսկոպոսի»<sup>34</sup> եւ այլ եւս քահանայակցաց քոց, եւ աստուածասէր քաղաքական արանցդ, Գագանիդ եւ համարէն տանուտէրացդ հոգեւոր որդւոց մեր»), 3) թղթառաջ ողջոյնը Մայր Աթոռի սրբավայրի մասունքների յիշատակութեամբ («ողջոյն սիրոյ եւ աւրհնութեան առաքեմք յաստուածընկալ սրբոյ նշանէս եւ ի սուրբ Լուսաւորչին աջէս եւ աթոռոյս, զոր եւս միշտ ողջ պահեսցէ տէր Աստուած յոգի եւ ի մարմին»): Ինչպէս նկատուեց նաեւ նախորդ մի քանի վաւերագրերի նկարագրութիւնից, Հռոմկլայի նօտարատանը գրուած վաւերագրերի թղթառաջի կարեւոր մաս է կազմում կաթողիկոսարանում պահուող մասունքների թուարկումը: Վաւերագրի մուտքում Ներսէս Դ Շնորհալի կաթողիկոսը հաւաստում է, որ թուարկուած հասցէատէրերից նամակ (գիր) է ստացել, ուր խնդրել են արեւորդիներին Հայոց եկեղեցու անդամ դարձնել: Կաթողիկոսին նոյն՝ Հայոց եկեղեցու շարքերում ընդգրկուելու խնդրանքով բանաւոր դիմել են նաեւ աղանդաւորները: Կաթողիկոսը հաւաստիացնում է, որ այդ աղանդի մասին բաւական գրականութիւն է ընթերցել, գիտէ, որ նրանք իրենց հաւատալիքներով բաւական մօտ են հռոմէական պաւլիկեաններին կամ բողոքականներին (Հռոմոց Պողոսելոսքն<sup>35</sup>) եւ իրենց հոգում տեղ չեն տուել Աւետարանի եւ Գրիգոր Լուսաւորչի տարածած լոյսին: Այժմ է միայն, որ բացուել են նրանց խաւարած աչքերը, հրաժարում են սատանայից՝ գոհութիւն մատուցելով Աստուծուն: Ներսէս Դ կաթողիկոսը, կատարելով տերունական հրամանը, պատրաստ է ընդունել նրանց իր եկեղեցու գիրկը, եթէ ճշմարտացիորէն հետեւեն Քրիստոսի եւ աւետարանների հրահանգներին: Ապա Շնորհալին նկարագրում է արարողութիւնը, որին պիտի հետեւեն աղանդաւորները. 1) բոլոր արեւորդի տղամարդիկ, կանայք եւ մանուկները պէտք է հաւաքուեն եկեղեցու բակում եւ քահանայական դասի միջնորդութեամբ երեք անգամ հրաժարուեն իրենց մոլորութիւնից եւ ընդունեն քրիստոնէութեան ճշմարիտ աստուածագիտութիւնը, 2) ապա

33 Այս վաւերագրի մասին տե՛ս նաեւ Ալիշան 1873, էջ 363-365, հմմտ. նաեւ Աճառեան, Աճճմամուսների քառարան, էջ 469:

34 Այստեղ չափազանց հետաքրքիր է Բորեպիսկոպոս եկեղեցական պաշտօնի գոյութեան արձանագրումը Սամոստում:

35 Հր. Բարբիկեանը «Բողոքի» տերմինով է բարգմանում այս եզրը. տե՛ս Գր. Բարտիկյան, Երեւանի Արեւորդի («Сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католика Нерсеса Благодатного. – "Эллинистический Ближний Восток, Византия и Иран". Сборник в честь семидесятилетия члена-корреспондента Академии наук СССР Н.В. Пигулевской. Москва 1967, с. 109, հմմտ. նաեւ Ալիշան 1873, էջ 401:

երեխայից մկրտութեան ծէսով քրիստոնեայ պէտք է դարձնել նրանց առանձին-առանձին: Այդ ընթացքում քահանաների առջեւ, երեսը դարձնելով դէպի արեւմուտք, պէտք է հրաժարուն սատանայից: Պէտք է ընդունեն, որ արեգակը, ինչպէս լուսինն ու աստղերը Աստուծոյ ստեղծածն են: Պիտի հրաժարուն բարդի ծառի նկատմամբ իրենց ունեցած հաւատալիք-պատկերացումներից, քանի որ սատանայական խաբէութիւն է, թէ Քրիստոսի խաչը պատրաստուած է եղել հէնց այդ ծառափայտից: 3) Ապա պիտի դառնան արեւելք եւ քահանաների ներկայութեամբ հաւաստեն, որ ընդունում են Հայոց եկեղեցու հաւատոյ հանգանակը (բերում է բնագիրը): 4) Այս ծէսերը կատարելուց յետոյ, եթէ ճշմարիտ խոստովանում են, նրանց պէտք է թոյլ տալ մտնել եկեղեցի եւ երախայաց կարգի մէջ ներգրաւուել: 5) Որոշ ժամանակ անցնելուց յետոյ, երբ նրանք կխոստովանեն եւ կապաշխարեն, նրանց կարելի է մկրտել եւ խառնել Քրիստոսի հօտին՝ ուսուցանելով բարոյակաւութեան նորմերը եւ պահպանելով բոլոր պատուիրանները: 6) Առանձին պատուիրում է քահանաներին՝ զգուշացնել աղանդաւոր կանանց այլեւս չզբաղուել կախարդութեամբ եւ հրաժարուել աղանդաւորական բոլոր սովորութիւններից, 7) Հրաժարուել պիղծ եւ աղտերի կերակուրներից, 8) ուժքեր կշեղուեն, չեն ստանայ հաղորդութիւն եւ քրիստոնէական թաղման չեն արժանանայ: 9) Տարուայ մէջ երկու-երեք անգամ նոր մկրտուածները պարտաւոր են խոստովանել իրենց յանցանքները քահանաներին, ապաշխարել պահքերով, աղօթքներով, ողորմութեամբ, գործած մեղքերի համար քաւութեան արժանանալ, 10) քահանաներին պատուիրում է սովորեցնել նրանց, որպէսզի ունկնդիր լինեն Աւետարանի եւ Աստուածաշնչի խօսքին, բացատրեն ծածուկ խօսքերը, 11) խորհուրդ է տալիս նրանց որդիներին կրթութեան վերցնել հոգեւոր դպրոցներում եւ նրանցից քահանաներ պատրաստել, ինչպէս Գրիգոր Լուսաւորիչն էր քահանաներ ձեռնադրում քրմերի որդիներին: Ներսէս Դ Շնորհալի կաթողիկոսը վաւերագրի վերջում յոյս է յայտնում, որ արեւորդիները կդառնան իսկական քրիստոնեաներ, աղաչում է Աստուծոյ, որ նրանց հաւատի վէմին ամբողջնի, իսկ սատանան ու դժոխքի դուները չկարողանան նրանց գայթակղել: Յոյս է յայտնում, որ քահանաները նրանց միշտ կուսուցանեն Աստուածաշնչով եւ կիրառեն, չեն գայթակղուի նրանցից մկրտութեան, խոստովանութեան, հաղորդութեան, բերքահաւաքի կամ թաղման համար դրամ շորթելով: Քահանաներին խրատում է ծառայութեան համար վերցնել այնքան, որքան նրանք կտան եւ աւելին չպահանջել, աւելորդ խստութիւն չցուցաբերել: Ամենայն հաւանականութեամբ վաւերագրի թղթավերջի հրամեշտի բանաձեւը չի ընդօրինակուել: Չի պահպանուել նաեւ նամակի գրման թուականը:

ԺԲ. «...Պատասխանի թղթոյն Յակովբայ ուրումն վարդապետի Ասորոյ ի մայրաքաղաքին Մելիտինոյ Հայոց» – Այս նամակի վերնագրով քիչ թէ շատ կարելի է վերականգնել կորած թղթառաջքը: Նամակն ուղղուած է յակոբիկ-ասորի եկեղեցու վարդապետ Յակոբին, որը բնակուած է Հայոց Մելիտենէ քաղաքում: Ղ. Ալիշանը հակուած է նրան նոյնացնել Բար Սալիբիի հետ<sup>36</sup>: Վաւերագրի մուտքում Ներսէս Շնորհալին անուանում է «սիրող իմաստութեան»: Երեւում է Յակոբն իր նամակը գրել է ասորերէն եւ կողքին թարգմանիչ չունենալու պատճառով Ներսէս Շնորհալին սկզբում այն չի կարողացել ընթերցել: Նամակն իր համար թարգմանել է Ստեփանոսը, որին իմաստուն է անուանում Ներսէս Շնոր-

36 Ալիշան 1873, էջ 405, հմմտ. Vanerian 2007, p. 245:

Հալին: Հ. Դ. Ալիշանը Ստեփանոսին կոչում է նաև այս վաւերագրի նամակաբեր<sup>37</sup>: Ասորի Յակովբ վարդապետը Ներսէս Դ Շնորհալի կաթողիկոսին ուղղուած իր նամակում հարցրել է Հայոց եկեղեցու վերաբերմունքի մասին Քրիստոսի մարմնի ապականացու կամ անապական լինելու խնդրի շուրջ («լինել կատարեալ մարդ, ապա թէ ոչ՝ թերի եւ անկատար»): Շնորհալին յարմար է նկատում բերել Հայոց եկեղեցու վերաբերմունքը այդ խնդրի վերաբերեալ՝ առատօրէն հիմնուելով Աստուածաշնչի, Ա. Աթանաս Աղեքսանդրացու եւ Գրիգոր Աքանջելագործի վկայութիւնների վրայ: Ներսէս Շնորհալին հակադրում է յակորիկ եկեղեցու տեսակէտին, որն, ըստ իրեն, անկատար է բնութագրում Քրիստոսի մարմինը: Քննում է խնդիրը մի շարք տեսանկիւններից եւ գալիս է այն եզրակացութեան, որ Ազամի մեղաւոր մարմինը Մարիամի միջոցով միաւորուելով աստուածութեանը, դարձել է անապական: Նամակից տեղեկանում ենք, որ ըստ Յակոբ Ասորի վարդապետի, Հայոց եկեղեցու դաւանաբանութիւնը այդ խնդրում հետեւել է Յուլիանոս Աղիկաոնացու (Հալիկաոնացի) եւ Հակիւղէի վարդապետութեանը: Շնորհալին խոստովանում է, որ չի ճանաչում Հակիւղէին, սակայն Յուլիանոսին Հայոց եկեղեցին համարում է չարափառ, քանի որ չարչարելի եւ մահկանացու է համարում Քրիստոսի մարմինը: Յիշեցնում է, որ իրենց եկեղեցիները համամիտ չեն բիւզանդական եկեղեցու տեսակէտի հետ: Իբրեւ Հայոց եկեղեցու ճշմարիտ դաւանաբանութեան փաստարկ բերում է պատարագի ժամանակ օգտագործուող բաղարջ հացը՝ համարելով այդ աւանդութիւնը նախնական: Ընդհանրացնելով հարցի նկատմամբ Հայոց եկեղեցու դաւանական պատկերացումները՝ Ներսէս Դ կաթողիկոսը գրում է. «...խոստովանել զմարմինն Տեառն անապական ի ծննդենէն մինչեւ ցյաւիտեանս»: Բաւական ընդարձակ է այս նամակի հրաժեշտ-թղթավերջի բանաձեւը:

ԺԳ. «...ի Միջագետս Ասորւոց Յամայք կոչեցեալ նահանգին...ի խնդրոյ ուրումն...Առիւծ անուն իշխան ի Թլկուրանն աւանի» — Վաւերագրում յիշատակուած են նաև Ամայք եւ Շպղթան գաւառները: Վաւերագրի թղթառաջքը կորած է, դրա մասին կարելի է ընդհանուր պատկերացում կազմել բաւական ընդարձակ վերնագրից, որն ամենայն հաւանականութեամբ ձեւուել է իսկազիր օրինակի թղթառաջքի վրայ: Նամակի մուտքում Ներսէսն անդրադառնում է Տիմոթէոսին ուղղուած Պօղոսի Բ թղթի կոչին. «...ի յիմար եւ յանիմաստ խնդրոց հրաժարեալ», քանի որ չպէտք է թոյլ տալ, որ կոյրը դառնայ կոյրերի առաջնորդ (հմմտ. Մատթ. ԺԵ 14): Յիշեալ զգուշացումներին, ըստ Ներսէս Շնորհալու, դէմ են գնում Ամայք եւ Շպղթան գաւառների քահանաները, որոնք բաժանուելով հակառակորդ բանակների, հակաճառում են միմեանց՝ թուլացնելով մեր նախնիների հաւատոյ դաւանութեան հիմքերը, չարիքի պատճառ են դառնում: Այդ չարիքի մասին Ներսէս Դ Շնորհալի կաթողիկոսին զգուշացրել է Առիւծ պատուական իշխանը, որի նամակին էլ պատասխանում է վեհափառը: Վէճի առարկան է արդեոք Բա՞նն է մահացել խաչի վրայ մարմնի հետ, թէ՞ մարդը: Նման հարցադրումը կատարող կողմերից եւ ոչ մէկն, ըստ Ներսէս Շնորհալու, չգիտէ Ս. Գիրքը եւ Աստուծոյ զօրութիւնը: Յիշեցնում է, որ նման հակառակաբանութիւններ ի յայտ են եկել սկսած Սիմէոն ձերունուց եւ շարունակուել են Սաբել Լիբիացու եւ Արիոսի ժամանակներում: Սակայն Աստուծոյ Բանի մարմնաւորութեան խնդիրը ուղղակիօրէն քննել են Նեստորը, Եւտիքէսը, Պօղոս Սամուսատցին, Ապողինարը,

37 Ալիշան 1873, էջ 406:



որոնք մոլորութեան մէջ են գցել իրենց հետեւորդներին: Այդ մոլորութիւնների դէմ գրել են սուրբ հայրերը: Արիոսի եւ Ապողինարի դէմ գրել են Գրիգոր Աստուածաբանն ու Աթանասը: Դասակարգում է նոր կտակարանի Աստուծոյ երեք դէմքերին տրուած կոչումները, քննարկում է մարդեղութեան խնդիրը՝ հակադրուելով Պողոս Սամուսատցուն, անդրադառնում է երկու բնութիւնների միաւորման խնդրին՝ օրինակներ բերելով Աստուածաշնչից: Յղելով Գրիգոր Աստուածաբանին եւ Աթանասին՝ քննարկման նիւթ է դարձնում Քրիստոսի չարչարանքի եւ խաչելութեան ընկալումները: Ինչպէս երեւում է, կողմերի միջեւ վէճի առարկայ է եղել նաեւ մատաղի խնդիրը: Կողմերից մէկն համարել է այդ հրէից սովորութիւն: Հին կտակարանից օրինակներ է բերում հրէից Զատիկի արու ոչխարի (ղոշ) մասին եւ գալիս է այն համոզման, որ մեզանում եղած աւանդութիւնը տարբերում է, քանի որ ընտրում են մէկամսեայ գառներ՝ առանց սեռի զանազանման: Ներսէս Ծնորհալին մատաղի արարողութեան մէջ տեսնում է Աստուծոյ մատուցուած նուէրի գաղափարը եւ վկայութիւն է բերում Պողոսի առ Կորնթացիս Ա թղթի ԺԱ. 23-25 տնից: Ներսէսը քննադատում է Ամայք եւ Շպղթան քահանաների կոյր թշնամութիւնը, որը անցել է նաեւ ասորիների հոգեւոր առաջնորդներին, որոնք զգուշանում են թէ՛ հայերի գառան մատաղից, թէ՛ պանրից՝ չտեսնելով իրենց աչքի գերանը՝ մեր աչքի մէջ ցոյց են տալիս իրենց տեսած շիւղը: Այստեղ Հայոց կաթողիկոսը նկատի ունի այն հանգամանքը, որ ասորիները չեն թափում մկնապիղծ կերակուրները ու ըմպելիքները եւ մեղադրում են ուրիշներին նմանատիպ զանցանքների մէջ: Այս խնդրում Ծնորհալին շեշտադրում է մատաղի աղի օրհնութեան գաղափարը, որը հակառակորդները համարել են սրբութեան պղծման միջոց: Ծնորհալին հարց է տալիս. եթէ մենք աղով պղծում ենք սրբութիւնը, ապա ինչո՞ւ են ասորիները իրենց նշխարին աղ խառնում եւ օգտագործում պատարագի ժամանակ: Ծնորհալին բացատրում է, որ մեր եկեղեցում ոչ թէ կրկնում ենք հրէից Զատիկի սովորոյթը, այլ հաւատում ենք, որ Տիրոջ յարութեան կիրակիին ճաշակում ենք Տիրոջ մարմինն ու արիւնը: Հայոց կաթողիկոսը Զատիկի գառան մատաղի ծէսը տեսնում է նաեւ Հռոմի եկեղեցում. փռանկաց եկեղեցում Զատիկի օրը պատարագի ընթացքում խորոված գառը դնում են խորանում եւ սուրբ հաղորդութիւնից յետոյ բաժանում են եկեղեցում հաւատացեալներին, որն ուտում են հետկէսօրեայ (հասարակաց) ճաշից առաջ: Աստուածաշնչից վկայութիւններ են բերում աղը եւ ձէթը նշխարի մէջ օգտագործուելու, Քրիստոսի եւ նրա առաքեալների կողմից ուտելուց առաջ լուացուելու, անսուրբ կենդանիներով ու գազաններով, մեռելոտիով սնուելուց հրաժարուելու մասին՝ մահու մեղք համարելով որովայնամոլութիւնը: Ծնորհալին մատաղն համարում է Զատիկը տօնախմբելու, Տիրոջը երկրպագելու եւ ննջեցեալների յիշատակն յարգելու սովորութեանը տուրք մատուցելու սովորոյթ, եւ իզուր չէ, որ քահանան սաղմոսի երգեցողութեամբ եւ աղօթքով դրոշմում է աղը խաչով՝ կերակրելով դրանով գառանը, քանի որ Աստուծոյ տրուող նուէրը պարտական ենք աւելի մաքրել: Կաթողիկոսն ընդդիմանում է այն սովորութեան դէմ, որով մատաղի արիւնը որոշ տգէտներ ուտում են՝ հակադրելով այդ սովորոյթին Ծննդոց գրքում Նոյին տրուած պատգամը. «Զմիս արեան շնչոյ մի՛ ուտիցէք» (Ծննդ. Թ 4): Ծնորհալին հրէական սովորոյթ է համարում եւ արգելում մատաղի արիւնով դռան շեմը օծելը: Ներսէսը խորհուրդ է տալիս խորոված գառան մսի մի մասը տալ քահանային իբրեւ նուէր Աստուծոյ, իսկ իւրաքանչիւրն իր բաժինը պէտք է ուտի ամենօրեայ կերակրից առաջ: Այսպէս պէտք է վարուել նաեւ տերունական եւ սրբերի տօներին արուած բոլոր մա-

տաղների դէպքում: Կաթողիկոսն անդրադառնում է նաեւ խոստացուած մատաղին, որը **Տեառնական է** կոչում՝ ապսպրելով քահանայի կողմից աղի օրհնութիւնից յետոյ այն կերակրել կենդանուն, ապա՝ մորթելուց յետոյ տալ քահանայի մասնաբաժինը, իսկ մնացածը բաժանել աղքատներին եւ կարօտեալներին: Արդելում է տգէտ քահանաներին կարմիր ծածկոցով ծածկել մատաղի կենդանու մարմինը եւ եղջիւրներին գոյնզգոյն թելեր կապել հին սովորոյթի համաձայն: Առանձին է նկարագրում մահացածների յիշատակին կատարուելիք մատաղը. քահանաները պէտք է հաւաքուեն եկեղեցու դռանը, պատարագի տիրոջ հետ սուրբ խաչով, սաղմոսերգութեամբ եւ ծէսով, ջերմեռանդութեամբ օրհնելու աղը, յիշեն մեռեալների անունները, մեղքերի թողութիւն խնդրեն Տիրոջից, մորթեն մատաղի կենդանուն, դրանից բաժին հանեն քահանաներին, կերակրեն աղքատներին եւ քաղցեալներին՝ շնչատարելով պատարագելու եւ ողորմութիւն տալու կարեւորութիւնը: Բացատրում է աղով օրհնութեան խորհուրդը եւ առաջարկում է այլախոհներին հալածել: Յաջորդ խնդիրը, որին անդրադառնում է կաթողիկոսը, Ամայք եւ Շպղթան գաւառների հայ հաւատացեալների շրջանում Աստուածաշնչում նկարագրուած դրախտի գոյութեան նկատմամբ թերահաւատութիւնն է, որն, ըստ նամակագրի, ասորական մոլորեալ հերձուածներէից է գալիս: Ներսէս Շնորհալին կարծում է, որ նման թերահաւատութիւնը բերում է Աստուծոյ գոյութեան եւ աստուածաշնչային կարեւորագոյն իրողութիւնների ժխտման: Հակադրուելով այդ մտայնութեանը՝ Շնորհալին հիմնում է եկեղեցու սուրբ հայրերի (Բարսեղ, Յովհան, Եփրեմ) բացատրութիւնների վրայ եւ եզրակացնում՝ նման կերպ մտածողները արժանի չեն լինի դրախտ մտնելու: Ներսէս Շնորհալին անդրադառնում է նաեւ այն քահանաներին, որոնք, հետեւելով աղանդաւոր Սմբատ Թոնդրակեցուն, չեն ճանաչում եկեղեցին եւ այնտեղ կատարուող արարողութիւնները: Շնորհալին բաւարարում է մատնացոյց անելով Անանիա Նարեկացու երկերը, ուր պատասխան է տրուած բոլոր մոլորութիւններին: Ներսէս կաթողիկոսը զուգահեռ է անցկացնում եկեղեցու եւ դրախտի խորհուրդների միջեւ՝ համարելով դրանք Աստուծոյ փառքի բնակարան: Անդրադառնալով խաչի օրհնութեան խորհրդին՝ զգուշացնում է, որ երկրպագութիւնը տրւում է ոչ թէ նիւթին, այլ Աստուծուն եւ աստուածային խորհրդին՝ զգուշացնելով հօտին չընկնել կոպաշտութեան գիրկը: Կաթողիկոսը նոյն տրամաբանութեամբ անդրադառնում է նաեւ միւսոսի օժման խորհրդին, բերում է Հայոց եկեղեցու կողմից «բնութեամբ մի աստուածութիւն» ընկալմանը եւ այդ լոյսի տակ օրհնուած խաչը դիտում է դէնք, որով պաշտպանում է աստուածութիւնը: Հաւատացեալներին խորհուրդ է տալիս հաւատալ եւ երկրպագել խաչի զօրութեանը: Նոյն մօտեցումն է պահանջում ունենալ նաեւ եկեղեցու վերաբերմամբ, որն առանց օրհնութեան եւ օժման, առանց նաւակատիքի չի կարող Աստուծոյ տուն լինել: Իրեւ օրինակ բերում է Երուսաղէմի եկեղեցիների կառուցման մասին Եւսեբիոս ժամանակագրի տեղեկութիւնը՝ փիւնիկեան Ծուր (Սո՞ւր կամ Տիւրոս) քաղաքի եպիսկոպոսի կողմից կատարուած նաւակատիքի արարողութեանը արտասանած ճառը<sup>38</sup>: Ըստ կաթողիկոսի, Ամայք եւ Շպղթան գաւառի հայոց եկեղեցու հակառակորդները մերժում են «Մաշտոց» ծիսագիրքը եւ սուտ լուրեր տարածում դրա մասին: Ներսէսը բացատ-

38 Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցոյ յղեալ յատուցն ի հայ ի հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր բարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի օնոն և Արրահամ վ. Ճարեան ի միսիբարեանց, Վենետիկ, ի վանս Սուրբ Ազգար, 1877, էջ 723:

րում է «Մաշտոց» ծիսագրքի կարեւորութիւնը Հայոց եկեղեցում կատարուող ծէսերի կանոնակարգման տեսանկիւնից: Կոչ է անում Հայոց եկեղեցու հաւատացեալների հօտին հեռու մնալ թաքնուած (ոչխարի կերպարանք առած) գայլերից, որոնք փորձում են մեզ հեռացնել մեր աւանդոյթներից եւ Քրիստոսի եկեղեցուց: Մեզ հասած վաւերագրից երեւում է, որ Ամայք եւ Շպղթան գաւառից Ներսէս Ծնորհալին ստացել է եւս մէկ թուղթ, որին պատասխանում է վաւերագրի շարունակութեան մէջ: Այս երկրորդ նամակը Ծնորհալին ստացել է մի խմբից, որն, ըստ կաթողիկոսի, կրկին բորբոքում է Եւտիքէս աղանդաւորի հանգած բոցը եւ չի ճանաչում Քրիստոսի մարդեղութիւնը: Նորկտակարանային յղումներով ցոյց է տալիս Եւտիքէսին հետեւողների քրիստոսաբանական սխալը՝ Քրիստոսի իրական մարմնի ժխտումը: Քննարկում է աստուածութեան եւ մարդեղութեան փոխյարաբերութեան եւ միաւորութեան խնդիրները՝ բերելով համապատասխան վկայութիւններ Ս. Գրքից եւ եկեղեցու սուրբ հայրերի երկերից: Նամակն աւարտւում է փառքի բանաձեւով:

**ԺԴ.** «...բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով...» — Այս նամակն էլ չունի թղթառաջք եւ թղթավերջ: Գրուած է Ներսէս Ծնորհալու կաթողիկոսութեան տարիներին: Մխիթարական նամակը պատասխանն է Եղեսիայի ուրուկ-բորոտ հիւանդների գրութեան, ուր փորձում է խօսքի ուժով մեղմացնել նրանց տոււայտանքները:

**ԺԵ.** «...Առ եպիսկոպոսունս եւ վարդապետս եւ համարէն դասս եկեղեցւոյ, որք յաւուր տաւնի Արմաւենեաց ժողովեալք ի կոչմանէ Տեառն Գրիգորիսի կաթողիկոսի եղբաւր նորին, ի ձեռնադրութիւն զնա կաթողիկոսութեանն Հայոց»: Այս վաւերագիրը պատկանում է ճառ-քարոզի ժանրին եւ գրուած ու ընթերցուած է Ներսէս Ծնորհալի եպիսկոպոսի կողմից, երբ իր եղբոր կողմից ձեռնադրուել է Հայոց կաթողիկոս: Սկսած Հ. Ղեւոնդ Ալիշանից այս վաւերագիրն անուանւում է «Ատենաբանութիւն», որը նմանատիպ վաւերագրի եղակի նմուշ է՝ ստեղծուած Հռոմկլայի նօտարատանը: Ըստ Ղ. Ալիշանի եւ նրան հետեւող Տ. Մաղաքիա արք. Օրմանեանի, այս վաւերագիրն ընթերցուել է 1166 թ. ապրիլի 17-ին, Արմաւենեաց տօնի օրը, երբ Գրիգոր Գ կաթողիկոսը Ներսէս Ծնորհալուն է յանձնել Հայոց կաթողիկոսական աթոռի փոխանորդութիւնը: Ատենաբանութիւնն ուղղուած է Հայոց եկեղեցու սրբազան քահանայապետերին, քահանաներին եւ վարդապետներին, որոնք կանչուել են Հայոց եկեղեցու տարբեր նուիրապետական աթոռներից, եկեղեցու վեհապետի հրամանով: Ծնորհալին, հրաւիրելով ունկնդիրների ուշադրութիւնը, յիշեցնում է, թէ Աստուծոյ խօսքը ինչպէս է դարերի ընթացքում մէկը միւսին փոխանցուելով հասել իրեն: Ուշագրաւ է Ներսէս Ծնորհալու գրական վարպետութիւնը, որով կապում է աստուածաշնչային նահապետներին, մարգարէներին, առաքեալներին, աւետարանիչներին, նրանց հետեւող հայրապետներին իւրաքանչիւր տոհմի եւ աթոռի, ինչպէս նաեւ եկեղեցու վարդապետներին Գրիգոր Լուսաւորչի հետ եւ գալիս հասնում է մինչեւ իր ժամանակները՝ շեշտելով վերջինիս արիւնակցութիւնը Գրիգոր Մազիստրոսի որդի Վահրամ-Գրիգորի եւ Բարսեղ կաթողիկոսի հետ ու ընդգծելով յիշատակուածների հոգեւոր կապը: Ծնորհալին չի մոռանում յիշատակուած գիծը շարունակող, իր եղբայր Գրիգոր Գ-ի բարեմասնութիւնները, ով ձերութեան հասակի հասնելով, ստիպում է իրեն հետեւել սերունդների աւանդոյթին, որից Ներսէսը մի քանի անգամ հրաժարուել է: Բայց այժմ չի կարող հրաժարուել, քանի որ տեսնում է եղբոր տկարանալը եւ ընդառաջում է նրա յորդորին՝ վախենալով հակառակվելու դէպքում մեղք կգործի Աստուծոյ առջեւ: Ներսէսը թուարկում է,

Թէ այդ պաշտօնն ստանձնելու դէպքում որքան առաքինութիւն եւ սրբութիւն է պահանջուում յանձնառուից: Ծնորհալին սրտացաւութեամբ եւ զգուշութեամբ ներկայացնում է Հայոց եկեղեցու ներկայ վիճակը, խնդրում է ողջ նուիրապետական համակարգին իր հետ աղօթել բոլորի հոգու մաքրութեան եւ զօրութեան համար: Խնդրում է Աստուծոյ շնորհքն ու իմաստութիւնը՝ իր բարձր պաշտօնը աղաւնու միամտութեամբ եւ օձի բարի խորագիտութեամբ արժանապէս կատարելու համար. «...ըստ աղաւնոյ միամիտ ի սէր պատուիրանացն Քրիստոսի, եւ ըստ աւճի բարեռք խորագիտութեամբ՝ ընդդէմ չար խորամանկութեանց սատանայի...»: Ատենաբանութիւնն աւարտուում է ընդհանրական եկեղեցու՝ Հայոց ազգին ուղղուած աղօթքով եւ փառքով:

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆԻ ԵՒ ՄԱՍՆԱԻՈՐ ՎԱԻԵՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ  
ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Ներսէս Ծնորհալու «Թուղթ ընդհանրականի» բնագիրը կազմելիս նախապէս հիմնուեցինք է. Բաղդասարեանի՝ 1995 թ. հրատարակած բնագրի վրայ եւ ընդօրինակեցինք այն: Սակայն աշխատանքի ընթացքում նկատեցինք, որ ձեռագրերի մի շարք կարելոր տարընթերցումներ չեն ընդգրկուել բնագիրում: Այդ իսկ պատճառով է. Բաղդասարեանի կազմած բնագիրը վերստին համեմատեցինք ՄՄ, 912, ՄՄ, 2496, ՄՄ, 500, ՄՄ, 581, ՄՄ, 2678, ՄՄ, 3906 մատեանների հետ: Այնուհետեւ համեմատեցինք նաեւ ՄՄ, 577, ՄՄ, 3140, ՄՄ, 3062 ձեռագրերը, ինչպէս նաեւ 1825 (Կ. Պոլիս) եւ 1871 (Երուսաղէմ) թթ. հրատարակութիւնները: Այս նախապատրաստութիւնից յետոյ ձեռնամուխ եղանք բնագրի խմբագրման աշխատանքներին:

«Թուղթ ընդհանրականի» բնագիրը կազմելիս օգտագործել ենք հետեւեալ ձեռագրերը եւ հրատարակութիւնները.

- A = ՄՄ, 912 (1779-1785 թթ.)
- B = ՄՄ, 2496 (1294 թ.)
- C = ՄՄ, 500 (1305 թ.)
- D = ՄՄ, 3651 (1315 թ.)
- E = ՄՄ, 581 (1371 թ.<sup>o</sup>)
- F = ՄՄ, 2678 (1426-1476 թթ.)
- G = ՄՄ, 582 (1443<sup>o</sup> թ.)
- H = ՄՄ, 3906 (Ժէ դ.)
- I = ՄՄ, 577 (Ժէ դ.)
- N = ՄՄ, 3140 (ԺԵ դ.)
- U = ՄՄ, 3062 (1765-1767 թթ.)
- j = ՄՄ, 227 (Ժէ դ.)
- m կամ m<sub>1</sub> = ՄՄ, 580 (1618 թ.)
- P = Երուսաղէմ, 1871 թ. հրատարակութիւնը
- Q = Կ. Պոլիս, 1825 թ. հրատարակութիւնը:

**A = ՄՄ, 912**<sup>39</sup> – (ձեռագրի ընդօրինակութիւնը սկսուել է 1779 թ. հոկտեմբերի 29-ին<sup>40</sup> եւ աւարտուել 1785 թթ. Կ. Պոլսում, կազմուել է 1790 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում)<sup>41</sup>: Գրչութիւնը՝ նոտրգիր, վերնագրերն ու բաժանումները՝ կարմիր մելանով: Ձեռագրի գրիչն է Ստեփաննոս Կոստանդնուպոլսեցին, ստացողն ու ժողովածոյի կազմողը՝ Իսահակ վրդ. (Հետագայում՝ եպս.) Իսահակ Գեղամացին: Ձեռագրի նախագաղափար օրինակն ընդօրինակուել է 1302 թ. (գրիչ՝ Թօմաս, Խորին անապատ)<sup>42</sup> գրուած մատեանից, որը 1240 թ. (գրիչ՝ Գրիգորիս) արտագրուել է Ներսէս Շնորհալու «Թուղթ Ընդհանրական»-ի նախագաղափար օրինակից, որը գրուած է եղել նրա իսկ ձեռագրից:

Մատեանում ընդօրինակուել են.

ա) Թուղթ Ընդհանրականը,

բ) ՊԽՄ ժողովածուն եւ Ներսէս Շնորհալու պաշտօնական եւ անհատական թղթերը,

գ) Ներսէս Լամբրոնացու դեսպանագնացութիւնը եւ թղթերը:

Ձեռագրի ուղղագրական հետեւեալ իւրաքայտկութիւնները չեն արձանագրուել իմ կազմած բնագրում. գրիչը աւ-ը աւելի յաճախ գրում է օ, իսկ ող-ով աւարտուող դերբայական ձեւը՝ ձեռագրում աւելի յաճախ դառնում է օղ, «է»-ի փոխարէն գրում է «ե»: Ձեռագիրն ամբողջապէս համեմատուել է հրատարակուած բնագրերի հետ:

**B = ՄՄ, 2496** (1294 թ.)<sup>43</sup> – Ունի երկու գրիչ՝ Կիրակոսն ու Կոստանդինը, ստացողը Թովմաս քահանան է: Վերնագրերը՝ կարմիր մելանով: Ընդօրինակուած ձեռագրում հագուողէպ են հանդիպում յապաւումներ: Տարընթերցումներում չեմ նշում բառավերջի յ-ի բացակայութիւնը կամ ներկայութիւնը, աւ ] ո տարընթերցումը, ե ] է տառաչփոթը: Յաճախ բաղաձայների կողքին, մանաւանդ զ նախդիրից առաջ դրուում է յաւելագիր «ը», որը չեմ ընդգրկել տարընթերցումների մէջ: Գրիչը յաճախ չի գրում ի/ւոյ հոլովման ւ-ը, երբեմն էլ անտեղի օգտագործում է այն բառերում, որոնք այս հոլովման չեն պատկանում: Նման շեղումները, որպէս կանոն, տարընթերցումներում չեմ բերում: Այս ձեռագիրը ՊԽՄ ժողովածոյի վաւերագրերի տողատակերում իմ իսկ կողմից բազմիցս օգտագործուած Ա խմբի C մատեանն է: Ձեռագիրն ամբողջապէս համեմատուել է հրատարակուած բնագրերի հետ:

**C = ՄՄ, 500** (1305 թթ. առաջ, վերանորոգուած՝ 1665 թ.)<sup>44</sup> – Ձեռագիրն ընդօրինակել է Վարդան գրիչը (142թ, 191թ, 360ա): Ստացողն է Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսը (218ա, 239բ): Նա էլ իր դեսպանագնաց (լիկատ) Կեսարիայի արքեպիսկոպոս Կոստանդին

39 Լուսանցիներում կամ քառի վերելում մէկ այլ գրիչ մատիտով սրբագրել է: Այդ լրացումները երբեմն բերել են մտողատակում A<sub>1</sub> նշանով:

40 Տե՛ս ՄՄ, 912, էջ 62 կամ բղ. 33բ:

41 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ, կազմեց Օ. եղանեան, խմբագրութեամբ Փ. Անթարեանի, Յ. Քէօսեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ Բոյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց Վ. Գեորգիեանը, Երեւան, «Մագաղաթ», 2007, սիւն 1205-1212 (այսուհետեւ՝ ՄՅՀՁՄՄ, հտ. Գ):

42 Տե՛ս Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, աշխատասիրութեամբ է. Մ. Բաղդասարեանի, Երեւան 1995, էջ 172-173. հմմտ. ԹԸ 1825, էջ 4, 229:

43 ՄՅՀՁՄՄ, հտ. Ը: Ձեռագիրը 2401-2700, խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեան, ցանկերը կազմեց Վ. Գեորգիեանը, Երեւան, «Նաիրի» հրատարակչութիւն, 2013, սիւն 249-256:

44 ՄՅՀՁՄՄ, հտ. Բ, կազմեցին Օ. եղանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթարեան, Ա. Քեօզկերեան, խմբագրութեամբ Ա. Մնացականեանի, Օ. եղանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Գեորգիեանի, Երեւան, «Նաիրի» հրատարակչութիւն, 2004, սիւն 1009-1018:

նի միջոցով 1305 թ. մատեանը նուիրել է Եսայի Նչեցի վարդապետին (320թ., 446ա)<sup>45</sup>: Պահպանուել է նախնական ձեռագրի իսկօրինակ թղթերի միայն մի մասը (թղ. 82-89, 92-115, 119-127, 129-271, 273-446), որոնք անենայն Հաւանականութեամբ գրուել են Սսի կաթողիկոսարանում: 1665 թ. ձեռագիրը նորոգել է Եղիար գրիչը (1-81, 90-91, 116, 118, 128, 272, 447-448) ամենայն Հաւանականութեամբ Ս. Սիոն անապատում (Արատեսի<sup>6</sup>, թէ՞ Շատինի) վերանորոգել է արգէն քայքայուած մատեանը եւ վերստին ընդօրինակել է մեզ Հասած ձեռագրի նշանակալի մասը: Գրչութիւնը՝ բոլորգիր, վերնագրերը կարմիր մելանով: Ըստ ձեռագրի հրատարակուած նկարագրութեան՝ Եղիար գրչի վերակազմած ձեռագրի մէջ տեղ են գտել.

- 1) Թուղթ Ընդհանրական, թղ. 4ա-51բ,
- 2) Թուղթ ի Սամուսիա քաղաք՝ Յաղաքս Արեւորդեաց դարձի, թղ. 52ա-56ա,
- 3) Պատասխանի թղթոյն պատրիարզին Ասորոց տեառն Միխայէլի, թղ. 56ա-57ա,
- 4) Թուղթ ի Կոստանդնուպալիս՝ առ ոմն Պաւղոս, թղ. 57ա-58բ,
- 5) Առ եպիսկոպոսս եւ վարդապետս Հայաստանեայց՝ վասն սիրոյ եւ միաբանութեան ընդ յոյնս, թղ. 58բ-59բ,
- 6) Պատասխանի գրոյ ուրումն, որ գրեալ է առ նա բանս կծանաց, թղ. 59բ-61ա,
- 7) Առ նոյն ժպիրհ, թղ. 61ա-բ,
- 8) Առ նոյն, թղ. 61բ-2բ,
- 9) Առ վարդապետն Գէորգ, թղ. 62բ-63ա,
- 10) Առ նոյն Գէորգ, թղ. 63ա-բ,
- 11) Առ նոյն Գէորգ, թղ. 63բ,
- 12) Գիր շրջաբերական ի Կարս, թղ. 63բ-66բ,
- 13) ՊԽՄ ժողովածու, թղ. 66բ-239բ եւ այլ նիւթեր:

Ինչպէս տեսնուած ենք, յիշատակուած նիւթերից պահպանուել են միայն Վարդան գրչի կողմից ընդօրինակուած ՊԽՄ ժողովածոյի մի նշանակալի Հատուածը եւ թղ. 273ա-ից յետոյ ընդօրինակուած տարբեր դարաշրջանների վերաբերող զանազան թղթերն ու երկերը<sup>46</sup>: Հնարաւոր է նաեւ, որ մեր կողմից մատեանի առաջին մասում յիշատակուած նիւթերի մեծ մասը, բացի ՊԽՄ-ի բնագրից, ընդօրինակուել է դեռեւս անյայտ՝ մէկ այլ ձեռագրից՝ 1665 թ. Եղիար գրչի կողմից Ս. Սիոն անապատում: Պէտք է նկատի ունենալ, որ այս ձեռագիրը ՊԽՄ ժողովածոյի իմ կազմած բնագրի A մատեանն է:

Ընդօրինակութիւնն ունի քերականական որոշ իւրայատկութիւններ, որոնք իմ կողմից չեն արձանագրուել կազմուած բնագրում. 1) Ի-ով աւարտուող գոյականները, ուր թեքուող Հոլովներում Ի-ն փոխուում է ւ-ի: Այս ձեռագրի գրիչը հիմնականում նկատի չի առնում ւ-ը: Օր. Հոգոյ ] Հոգւոյ, կամ գիւոյ ] գիււոյ: Չնայած գրիչը հիմնականում զանց է առնում ւ-ը, մենք բնագրում հետեւում են դասական ուղղագրութեանը, իսկ տողատակերում յաճախ չենք բերում այդ տարրնթերցումները. 2) գրիչը հետեւողական չէ եւ բառավերջում յ-ի գրութիւնը ա եւ ո ձայնաւորներից յետոյ պարտադիր չի համարում: Այս տարրնթերցումները եւս մեր կողմից չեն բերուած լիակատար ծաւալով. 3) ող վերջա-

45 ՄՅՀԶՄՄ, հտ. Բ, 2004, սիւն 1018-ում պէտք է սրբագրել ձեռագրի ընծայագրի էջահամարը, 320թ-ն պէտք է ուղղել 380թ-ով: Ճիշտ էջահամարը տե՛ս ՀԶԶ ԺԴ դ., մասն Ա, 2018, էջ 93:

46 Այդ նիւթերի Յկարագրութիւնը տե՛ս ՄՅՀԶՄՄ, հտ. Բ, 2004, սիւն 1013-1017:

ւորութիւն ունեցող դերբայական ձեւը գրիչ գրում է՝ աւղ-ով: Մենք վերականգնում ենք դասական ձեւը՝ յաճախ նկատի չառնելով ձեռագրերի աւղ տարրնթերցումը: 4) յաճախ է շփոթը է եւ ե տառերի: Այս ձեռագիրը ՊԽՄ ժողովածոյի վաւերագրերի տողատակերում իմ իսկ կողմից համեմատուած Բ խմբի A ձեռագիրն է: Ձեռագիրն ամբողջապէս համեմատուել է հրատարակուած բնագրերի հետ:

D = ՄՄ, 3651 (1315 թ., վերանորոգուած՝ 1615 թ.) – Մատեանն ընդօրինակուած է Ս. Կարապետի վանքում (Տարոնի<sup>47</sup>): Ձեռագրում տեղ են գտել Ներսէս Շնորհալու Թուղթ Ընդհանրական եւ մասնաւոր թղթերի բնագրերը, ինչպէս նաեւ Ներսէս Լամբրոնացու կազմած ՊԽՄ ժողովածուի ընդօրինակութիւնները<sup>47</sup>: Ձեռագրի տարրնթերցումները մեր կազմած բնագրում վերցուած են է. Բաղդասարեանի պատրաստած հրատարակութիւնից<sup>48</sup>:

E = ՄՄ, 581 (ըստ է. Բաղդասարեանի՝ 1371<sup>49</sup> թ.) – Գրիչն ու ընդօրինակութեան վայրը յայտնի չեն: Գրչութիւնը՝ բոլորգիր, վերնագրերը՝ կարմիր մելանով: Թուղթ Ընդհանրականն ընդօրինակուած է թղ. 336ա-389բ-ում: Ներսէս Շնորհալու միւս թղթերն ընդօրինակուած չեն<sup>50</sup>: Այս մատեանում Թուղթ Ընդհանրականի գլուխների տեղերը փոխուած են. «Առ կրօնաւորս որ ի վանորայս ... Յիսուս ի Տէր մեր» հատուածը ձեռագրում գրուած է «Առ իշխանս, որ ըստ աշխարհի» վերնագրից առաջ, իսկ «Առ առաջնորդս եկեղեցւոյ՝ որ են յաշխարհի, որ կոչին եպիսկոպոսունք» գլուխը ընդօրինակուած է «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց» գլխից առաջ: Բնագրի նշանակալի հատուածներ գեղչուած են: Ձեռագրի քերականական իւրայատկութիւններից շատերը նման են ՄՄ, 500-ին: Ձեռագիրն ամբողջապէս համեմատուել է հրատարակուած բնագրերի հետ:

F = ՄՄ, 2678 (1426-1476 թթ.) – Գրիչն է Մաթէոսը: Գրչութիւնը ուղիղ նոտրգիր, երկսիւն, վերնագիրը՝ կարմիր թանաքով: Ձեռագրի յիշատակարանում մատեանն անուանում է «գիրս ... Թխթոց»: Թուղթ Ընդհանրականը ընդօրինակուած է թղ. 39ա-54բ-ում: Ձեռագրից բացակայում են բնագրի մի շարք մեծ հատուածներ: Մատեանում առկայ են գրեթէ նոյն տարրնթերցումները եւ ուղղագրական շեղումները, ինչ մենք նկատել ենք C (ՄՄ, 500) եւ E (ՄՄ, 581) ձեռագրերում: Բնագրից անմիջապէս յետոյ արտագրուած է նոյն հեղինակի «...գիր շրջաբերական ... ի Կարս» (թղ. 54բ-55բ) վաւերագիրը: Մի քանի տասնեակ էջ յետոյ ընդօրինակուած է նաեւ Ներսէս Շնորհալու «...ի Միջագէտս Ասորոց ... Առեւծ կոչեցելոյ իշխանի Թլկուրանն աւանի» եւ «Բան Ներսիսի ... յաւուր տաւնի Արմաւենեացն» թղթերը (թղ. 61ա-73բ): Որոշ ընդմիջումից յետոյ ընդօրինակուած են Ներսէս Շնորհալու թղթերը ուղղուած Միքայէլ Ասորի պատրիարքին, Պօղոս քահանային եւ «...առ եպիսկոպոսս եւ վարդապետս Հայաստանեայց՝ վասն սիրոյ եւ միաբանութեան ընդ յոյնս» կոնդակը, ինչպէս նաեւ Ներսէս Լամբրոնացու ՊԽՄ ժողովածուն (թղ. 77ա-101ա)<sup>51</sup>: Սրանցից յետոյ ընդօրինակուած է Ներսէս Շնորհալու թուղթն ուղղուած Յակոբ

<sup>47</sup> Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին Օ. Եգանեան, Ա. Զէյրուհեան, Փ. Անթարեան, Գեորգիւմի Օ. Եգանեանի, խմբագրութեամբ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, 1965, սիւն 1057:

<sup>48</sup> Տե՛ս Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, աշխատասիրութեամբ է. Մ. Բաղդասարեանի, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 1995:

<sup>49</sup> Նոյն տեղում, էջ 49:

<sup>50</sup> Մատեանի նիւթերի նկարագրութիւնը տե՛ս ՄՅՀԶՄՄ, հտ. Բ, սիւն 1367-1374:

<sup>51</sup> Ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս ՄՅՀԶՄՄ, հտ. Ը, սիւն 1111-1121:

Ասորի վարդապետին (թղ. 101ա-103ա): Յիշատակուած բոլոր բնագրերը համեմատել ենք այս ձեռագրի հետ:

**G = ՄՄ, 582** (ըստ է. Բաղդասարեանի՝ 1443 թ. առաջ եւ յետոյ): – Մատեանում ընդօրինակուած է միայն Ներսէս Շնորհալու Թուղթ Ընդհանրականը (թղ. 45ա-91բ)<sup>52</sup>: Ձեռագրի տարրնթերցումները մեր կազմած բնագրում վերցուած են է. Բաղդասարեանի պատրաստած հրատարակութիւնից<sup>53</sup>:

**H = ՄՄ, 3906** (ըստ է. Բաղդասարեանի՝ ԺԳ դ. վերջ – ԺԴ դ. սկիզբ, վերանորոգուել է ԺԷ դ.): – Համառօտ ձեռագրացուցակում սխալմամբ թուագրուած է 1169-1170 թթ.: Յակոբ Կլայեցի կաթողիկոսն է այս երկը երկրորդ անգամ շրջանառութեան մէջ դրել<sup>54</sup>: ԺԷ դարի գրիչը վերանորոգել է Յակոբ Կլայեցի (1268-1286) կաթողիկոսի հրամանով ընդօրինակուած Թուղթ Ընդհանրականի բնագրի վնասուած օրինակը եւ ընդօրինակել է պակասող հատուածները: Ձեռագրի տարրնթերցումները մեր կազմած բնագրում վերցուած են է. Բաղդասարեանի պատրաստած հրատարակութիւնից<sup>55</sup>:

**I = ՄՄ, 577** (ԺԷ դ.): – Ըստ ընդարձակ նկարագրութեան, ձեռագիրն ընդօրինակուած է երեք (ա. թղ. 213-260, 1-75, 306-327, բ. 261-305, 76-212, գ. 328-351) գրիչների կողմից<sup>56</sup>: Նկարագրութեան մէջ արուել են մի շարք՝ Ա ձեռագրի ցանկին հակասող տեղափոխութիւններ: Օրինակ. Թուղթ Ընդհանրականից յետոյ Ա ձեռագրի ցանկում դրուած է Պետր ժողովածուն, սակայն այդ բնագիրը նկարագրողը գրել է Բ ձեռագրի մէջ, սակայն ակնյայտ է, որ գոնէ դրա առաջին էջը ընդօրինակուած է երեք տարբեր գրիչների կողմից (թղ. 77բ, 198բ<sup>57</sup> եւ 305բ) եւ հաւանաբար տարբեր ձեռագրերի մնացորդներ են: Մատեանի տարբեր գրչութիւնները մէկ կազմի մէջ են դրել հաւանաբար 1696 թ.՝ փորձելով փրկել քայքայուող ձեռագրերի մնացորդները: Մատեանի առաջին եւ երկրորդ ձեռագրերում է նկարագրողը տեղադրել Ներսէս Շնորհալու նամակների հիմնական մասը, քանի որ դրանք ընդօրինակուել են զանազան գրիչների կողմից: Ձեռագիրը սկսուած է նիւթերի ցանկով<sup>58</sup>: Ըստ այդ ցանկի եւ նիւթերի հերթականութեան յաջորդում է «Թուղթ Ընդհանրական»-ը (թղ. 4ա-63բ)<sup>59</sup> եւ ապա՝ «Վասն ճշմարիտ եւ անապական կուսութեան» (թղ. 63բ-69բ) բնագիրը միեւնոյն ձեռագրով: Սրանց յաջորդում է Ներսէս Շնորհալու «...ի

52 Տե՛ս ՄՅՀԱՄՄ, հտ. Բ, սիւն 1376:

53 Տե՛ս Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, աշխատասիրութեամբ է. Մ. Բաղդասարեանի, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 1995:

54 Նոյն տեղում, էջ 171, ծան. 82:

55 Տե՛ս Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, աշխատասիրութեամբ է. Մ. Բաղդասարեանի, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 1995:

56 Հմմտ. ՄՅՀԱՄՄ, հտ. Բ, սիւն 1347-1354:

57 Այս ընդօրինակութեան ՊՄՄ առաջարանի վերջում գտնուող յիշատակարանը վրիպել է ձեռագիրը նկարագրողների ուշադրութիւնից. «Ջգրծող որ զանաթման զմեղածաւալ յիշատակի զփծուն սարգաւա՛ Բունիաթս, վատնող բանի դատապարտեալ ծառայ. սուրբ եկեղեցոյս որ կոչի սուրբ հոգի յիշեցէ՛ Ի Քրիստոս համծիղերծ ծնող՛ կրկնակի թուին :ճնխե: մայիսի :ա: Ի վայելումն Խոջայ Կարապետի, որդի պարոն Աւետին եւ որդին իւր Արուրիւնին, եւ որդին իւր փոքրը՛ Պետրոսն. ամէն» (թղ. 200ա): Այս յիշատակագրութիւնը թոյլ է տալիս պնդել, որ Բ ձեռագրում տեղ գտած Ներսէս Շնորհալու թղթերի գրիչն է Բունիաթը: Այս նոտրգիր յիշատակագրութիւնը ամենայն հաւանականութեամբ կապ ունի թէ՛ ձեռագրի բոլորգիր յիշատակարանի եւ թէ՛ սկզբում ընդօրինակուած ցանկի հետ, որոնք կապուած են գրբի վերջնական կազմման աշխատանքների հետ:

58 Այն սկսուած է բոլորգրով, իսկ վերջին էջը այլ գրչի կողմից գրուած է նոտրգրով (թղ 1ա-3ա): Պիտի շշտել, որ ցանկը յանախ չի համապատասխանում ընդօրինակուած նիւթերի հերթականութեանը:

59 Այն գրուած է մէկ այլ տիպի նոտրգրով, այլ գրչի կողմից:



Մամեստեայ քաղաքն, առ արեւորդիս» թուղթը (70ա-75ա), որը վրիպել է նկարագրողների ուշադրութիւնից: Այս թուղթը եւ դրանից յետոյ ընդօրինակուած Ներսէս Շնորհալու յաջորդ՝ ասորոց Միխայէլ պատրիարքին գրած թուղթը (թղ. 75ա-բ) գրուած են միմեանցից տարբեր ձեռագրերով: Երեք մաքուր էջ թողնելուց յետոյ մեզ հասած ձեռագրում արտագրուած է ՊԽՄ բնագիրը (թղ.77բ-164բ)՝ բաւական անխնամ եւ շուրջ հինգ տարբեր նոտրգիր գրչութիւններով: Շնորհալու յաջորդ թղթերը (թղ. 164բ-205բ) եւ Ներսէս Լամբրոնացու «Առ Յուսկան» թուղթը (թղ. 205բ-213ա) գրուած են նոյն նոտրգրով, ինչ վերելում յիշատակուած ՊԽՄ ընդօրինակութեան վերջին հատուածը<sup>60</sup>: Ընդօրինակուած մատենագրական միւս երկերը (թղ. 213ա-351բ) եւս գրուած են առնուազն հինգ տարբեր նոտրգիր ձեռագրերով<sup>61</sup>: Պիտի նկատի ունենալ, որ հետագայում եւս, նոտրգիր եւ բոլորգիր տարբեր գրչութիւններով ձեռագրում գրուել են յիշատակագրութիւններ, կատարուել են միջամտութիւններ, լուսանցքներում յաւելուել են տարբեր հատուածների վերնագրեր եւ այլն: Այդ իսկ պատճառով հիմնաւորուած չենք համարում ներկայ նկարագրութեան մէջ այս մատենի բաժանումը երեք ձեռագրերի, ինչպէս նաեւ տարբեր գրչութիւններով գրուած նիւթերի համախմբումը տարբեր ձեռագրերում: Ձեռագրերի բաժանումները կատարուել են՝ առանց հաշուի առնելու նիւթերի դասակարգութիւնը. եթէ առաջին ձեռագրում թղ. 213-260 եւ 1-75 թերթերը կարելի է համարել հնում պրակակալուած մամուլների շարունակութիւն, ապա թղ. 306-327-ը ունեն այլ՝ նախորդը չշարունակող մամուլահամարներ: Թղ. 261-305-ի առաջին մամուլահամարներն էլ կարծես շարունակում են թղ. 75-ին յաջորդող մամուլահամարները, եւ չեն կարող դատուել եւ մաս կազմել Բ ձեռագրի: Նոյնը կարելի է ասել «Բ» անուանուած ձեռագրի երկրորդ հատուածի՝ թղ. 76-212 թերթերի մասին: «Գ» անուանուած ձեռագիրն էլ իր գրչութեամբ թէպէտ աւելի կոմպակտ է, այնուամենայնիւ՝ թղ. 346-ից կարծես ձեռագիրը փոխուում է եւ դառնում աւելի անփոյթ: Նկատի ունենալով այս եւ նմանատիպ այլ ձեռագրեր՝ լաւ կլինէր, որ ձեռագրացուցակում լուսանկարով աւելի յստակ արուէին գրչութեան գոնէ բոլոր հիմնական նմուշները, ինչպէս նաեւ բերուէին ձեռագրագիտական հիմնական կռուանները այս կամ այն եզրակացութեան համար:

Ձեռագրում աւ-ի փոխարէն յաճախ գրուում է օ: Տողադարձումներից զատ, յաճախ է հանդիպում յաւելեալ «ը» ձայնաւորը: Գրիչներն յաճախ գերադասում են բարբառային արտասանութեան ուղղագրութիւնը: Այս ձեռագիրն օգտագործել ենք Թուղթ Ընդհանրականի եւ Ներսէս Շնորհալու անհատական թղթերի գիտական բնագրերը կազմելիս:

N = ՄՄ, 3140 (ԺԵ դար): – Գրիչն է Սաղաթիէլ արեղան, ամենայն հաւանականութեամբ մեկենասն է Աղուանից Յովհաննէս է կաթողիկոսը (շուրջ 1426-1428 թթ.)<sup>62</sup>: Այս մատենում ընդօրինակուել են Ներսէս Շնորհալու գործունէութեանն առնչուող հետեւեալ բնագրերը.

- 1) Առ եպիսկոպոսունս եւ վարդապետս ... յաւուր տաւնի Արմաւենեաց, թղ. 1ա-8ա,
- 2) Թուղթ Ընդհանրական, թղ. 8ա-62ա,

60 Պիտի նկատի ունենալ, որ այստեղ՝ թղ. 198բ-200ա-ում, գրիչը կրկին ընդօրինակել է ՊԽՄ-ի առաջաբանը:

61 Այս հատուածում եւս ընդօրինակուել է ՊԽՄ ժողովածոյի ներածութիւնից մէկ էջ (թղ. 305բ):

62 Տե՛ս ՄՅՀԶՄՄ, հտ. Ժ, սիւՑ 671-678:

3) Ներսէս Լամբրոնացու «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուն, թղ. 62բ-142բ,

4) Թուղթ ... Ներսէսի եպիսկոպոսի ... ի խնդրոյ ումեմն աստուածասիրի Առիւծ կոչեցելոյ իշխանի Թլկուրանն աւանի, թղ. 147բ-183բ,

5) Պատասխանի թղթոյն Յակովբայ ուրումն վարդապետի ասորի, ի մայրաքաղաքի Միելիտինոյ, թղ. 183բ-191բ:

Ժողովածոյում տեղ են գտել նաեւ Ներսէս Շնորհալու մի քանի չափածոյ երկեր, Ներսէս Լամբրոնացու, Վանական վարդապետի եւ Վարդան Արեւելցու գրութիւններ: Ձեռագիրն համեմատուել է յիշատակուած բնագրերի հետ:

Մ = ՄՄ, 3062 (1765-1767 թթ.): – Ձեռագրի գրիչն է Խաչատուր Կոստանդնուպոլսեցին, ստացողը՝ Աբրահամ Աստապատցին<sup>63</sup>: Մատեանի անուանաթերթում (1ա) ժողովածուն անուանուած է «Գիրք, այսինքն Մատեան, որ եւ կոչի Թուղթ Ընդհանրական»: Այստեղ տեղ են գտել Ներսէս Շնորհալու գրչին պատկանող հետեւեալ վաւերագրերը.

- 1) Թուղթ Ընդհանրական, թղ. 9ա-30բ,
- 2) Երկու հատուած «Առ Առիւծ իշխան» վաւերագրի վերջից, 31ա-34բ,
- 3) Նոյն վաւերագրի սկզբի հատուածը, թղ. 38ա-46ա,
- 4) Առ եպիսկոպոսս եւ վարդապետս ... յաւուրս տօնն Արմաւենեաց, թղ. 46բ-49բ,
- 5) Պատասխանի թղթոյ ուրումն Յակովբայ Ասորոց վարդապետի՝ ի մայրաքաղաքն Մելիտինոյ, թղ. 49բ-52ա,
- 6) Պատասխանի թղթոյն եւ պատրիարգին Ասորոց Տեառն Միխայիլի, թղ. 136ա,
- 7) Գիր շրջաբերական՝ առաքեալ ի կողմանս Արեւելից ի Կարս, թղ. 136բ-137բ,
- 8) Թուղթ ի Կոստանդնուպոլիս, առ ոմն Պաւղոս քահանայ Հայկազն ի Տարսոն Կիլիկեցոց, թղ. 137բ-138ա,
- 9) Պատասխանի գրոյ ուրումն, որ գրեալ էր առ նա բանս զկճանաց յանդուզն լրբութեամբ, թղ. 138բ-139ա,
- 10) Առ նոյն ժպիրհ, 139ա,
- 11) Առ նոյն յիմարութեամբ եւ Հպարտութեամբ լրբեալ ոմն, թղ. 139բ,
- 12) Երեք վաւերագիր՝ առաքուած «Առ վարդապետն Գէորգ», թղ. 140ա,
- 13) Թուղթ ի Մամուկեստիայ քաղաքն, առ արեւորդիսն, թղ. 140բ-142ա:

Ձեռագրում ընդօրինակուած են նաեւ վաւերագրեր, որոնք վերաբերում են հայ մատենագրութեան տարբեր դարաշրջանների գործիչներին: Յիշատակուած վաւերագրերը համեմատուել են հրատարակուած բնագրերի հետ:

Շ = Փարիզ, 179 (1231 թ.): – Ընդօրինակուել է Հռոմկլայում, Թորոս գրչի կողմից, պատուիրատուն է Դաւիթ եպիսկոպոսը<sup>64</sup>: Մատեանում ընդօրինակուած է Ներսէս Լամբրոնացու կաղմած «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուն, ուր ընդօրինակուած են Ներսէս Շնորհալու՝ Մանուէլ կայսրին եւ պատրիարքներին ուղղուած նամակները, ինչպէս նաեւ «...ի Միջագէտս Ասորոյ՝ Յամայք կոչեցեալ նահանգին ... ի խնդրոյ որումն

63 Տե՛ս ՄՅՅՁՄՄ, հտ. ժ, սիւն 291-300:

64 R.H. Kévorkian, A. Ter-Stépanian, Manuscrits arméniens de la Bibliothèque national de France. Catalogue, Paris, Bibliothèque nationale de France, 1998, p. 604-609:

... Առիժ կոչեցեալ, իշխան Թղկուրան աւանի» Թուղթը, Թղ. 93բ-125բ: Այս ձեռագիրը եւս օգտագործուած է յիշատակուած վաւերագրերի բնագիրը կազմելիս:

j = ՄՄ, 227 (Ժէ դ.): – Գրիչն ու գրչութեան վայրն անյայտ են<sup>65</sup>: Ժողովածոյում ընդօրինակուել է Ներսէս Շնորհալու գրչին պատկանող հետեւեալ վաւերագրերը.

- 1) Թուղթ Ընդհանրական, Թղ. 1բ-64ա,
- 2) «...ի Սամուտիա քաղաք, յաղագս արեւորդաց դարձի», Թղ. 64բ-70ա,
- 3) Պատասխանի Թղթոյն պատրիարգին ասորոց Տեառն Միխայէլի, Թղ. 70ա-71ա,
- 4) «...ի Միջագետս ասորոց ... ի խնդրոյ որումն աստուածասիրի Առեւծ անուն իշխանի Թղկուրանն աւանի» վաւերագրի առաջին մասը, Թղ. 73բ-92ա,
- 5) Առ ոմն Պողոս քահանայ Հայկազնի, ի Տարսոնէ Կիլիկեցոց, Թղ. 143ա-144ա,
- 6) «...Պատասխանի գրոյ որումն. որ գրեալ էր նա բանս զկծանաց յանդուգն լրբութեամբ», Թղ. 144ա-146ա,
- 7) Առ նոյն ժպիրհ, Թղ. 146ա-147ա,
- 8) Առ նոյն յիմարութեամբ եւ պարտութեամբ լրբեալ ոմն, Թղ. 147ա-148ա,
- 9) «Առ վարդապետն Գէորգ» երեք Թղթերը, Թղ. 148ա-149ա,
- 10) Ներսէս Լամբրոնացու ՊԽՄ ժողովածոյի նշանակալի մասը, Թղ. 149ա-205բ, 207բ-229ա,

11) Առ եպիսկոպոսս եւ վարդապետս Հայաստանեայց, վասն սիրոյ եւ միաբանութեան ընդ յոյնսն, Թ. 205բ-207բ:

Յաճախ բառավերջի վերջաւորութեան «ա» եւ «ո» տառերից յետոյ կիսաձայն «յ»-ն չի գրւում: Գրիչը յաճախ բաց է թողնում հոլովման ժամանակ «ի»-ին փոխարինած «ւ»-ը (օր. եկեղեցոյ, ալգոյն, հոգոյ եւն): Ենթակայական դերբայի «ող» վերջաւորութիւնը յաճախ փոխարինուած է «աւղ»-ով: «ե» եւ «է» գրութիւնը յաճախ անհնար է տարբերակել: Գրիչը յաճախ է յաւելագիր «ը» օգտագործում: Ժողովածուն պարունակում է նաեւ Հայ մատենագրութեան մի շարք այլ յուշարձանների ընդօրինակութիւնը: Յիշատակուած վաւերագրերի բնագրերը համեմատուել են այս ձեռագրի տուեալների հետ:

m կամ m<sub>1</sub> = ՄՄ, 580 (1618 Թ.): – Ձեռագրի գրիչն է Անդրէաս քահանան<sup>66</sup>: Վերնագրերի նշանակալի մասը գրուած են կանաչ թանաքով, գլխատառերը՝ կարմիրով: Մատենանում ընդօրինակուած են Ներսէս Շնորհալու հեղինակած հետեւեալ վաւերագրերը.

- 1) Թուղթ Ընդհանրական, Թղ. 3ա-76բ,
- 2) «...ի Սամուտիա քաղաք. յաղագս արեւորդեաց դարձի», Թղ. 76բ-83ա (նոյն բնագիրն ընդօրինակուած է նաեւ Թղ. 276ա-283ա),
- 3) «...պատասխանի Թղթոյն պատրիարգին ասորոց տեառն Միխայէլի», Թղ. 83ա-84բ,
- 4) «...Թուղթ ի Կոստանդինուպուղիս. առ ոմն Պաւղոս քահանայ Հայկազնի ի Տարսոնէ կիլիկեցոց...», Թղ. 84բ-86բ,
- 5) «...առ եպիսկոպոսս եւ վարդապետս Հայաստանեաց. վասն սիրոյ եւ միաբանութեան ընդ յոյնսն», Թղ. 86բ-88բ (նոյն բնագիրն ընդօրինակուած է նաեւ Թղ. 268ա-269բ),
- 6) «...Պատասխանի ... որումն. որ գրեալ է առ նա բանս զկծանաց յանդուգն լրբութեամբ», Թղ. 88բ-91ա,

65 Տե՛ս ԱՅԶԳՄՄ, հտ. Ա, սիւճ 1009-1012:

66 Տե՛ս ԱՅԶԳՄՄ, հտ. Բ, սիւճ 1363-1366:

- 7) «...առ նոյն ժպիրհ», թղ. 91ա-92ա,  
 8) «...Առ նոյն յիմարութեամբ եւ հպարտութեամբ լրբեալ ոմն», թ. 92ա-94ա,  
 9) «...առ վարդապետն Գէորգ» երեք թղթերը, թղ. 94ա-95բ (նոյն բնագիրն ընդօրինակուած է նաեւ թղ. 270ա-271բ),  
 10) «...Գիր շրջաբերական առաքեալ ի կողմանս յարեւելից ի Կարս...», թղ. 95բ-99բ (նոյն բնագիրն ընդօրինակուած է նաեւ թղ. 271բ-276ա),  
 11) ՊԽՄ ժողովածու, թղ. 99բ-209ա,  
 12) «...ի Միջագետս Ասորոց ... ի խնդրոյ ... Առեւծ անուն իշխանի թլկուրանն աւանի», թղ. 209ա-254ա,  
 13) Պատասխանի թղթոյն Յակոբա վարդապետի ասորոյ ի մայրաքաղաքէն Մելետինոյ Հայոց, թղ. 254ա-264բ,  
 14) «...առ ոմն իշխան արեւելեան, վասն որդւոյ իւրոյ տարածամ վախճանելոյ», թղ. 264բ-266բ<sup>67</sup>,  
 15) Պատասխանի թղթոյն պատրիարգին ասորոց տեառն Միխայէլի, թ. 266բ-268բ,  
 16) «...բան մխիթարութեան առ վտասնգեալսն մարմնով...», թղ. 283ա-289ա:  
 Զեռագրում երկրորդ անգամ ընդօրինակուած բնագրերի համեմատութիւնը տե՛ս m, նշանի ներքոյ: Մատեանում ընդօրինակուած են նաեւ Եփրեմ Ասորուն, Գրիգոր Լուսաւորչին, Մովսէս եւ Դաւիթ փիլիսոփաներին վերագրուած երկեր:

#### ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, աշխատասիրութեամբ է. Մ. Բաղդասարեանի:

P = Ընդհանրական թուղթը սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, Երուսաղէմ, 1871 (բնագիրը շարուել է ըստ այս հրատարակութեան):

P<sub>1</sub> = Երուսաղէմ, 1871 հրատարակութեան տողատակի տարընթերցումներն են:

R = Թուղթ Ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, Էջմիածին, 1865:

Q = Գիրք որ կոչի Ընդհանրական. արարեալ Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ՝ Տեառն Ներսէսի Շնորհալւոյ, Սանկտպետերբուրգ, տպարան Խալդարեանց Խոջամալի, 1788:

S = Տեառն Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Թուղթը, Վենետիկ, Ս. Ղազար, 1873:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԵԱՆ

67 Այս չափածոյ բուրբը հրապարակուած է Ներսէս Շնորհալու երկերի առաջին հատորում, տե՛ս ՄԶ, հտ. ԽԱ, ժԲ դար, Ներսէս Շնորհալի, գիրք Ա, էջ 466-469:

**ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ  
ՆԵՐՍԷՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ  
ԱՌ ՀԱՄԱԲՐԷՆ ՀԱՅԱՍԵՌ ԱԶԻՆՍ,  
ՈՐՈՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀԱԲԱՏԱՅԱԲ ՆՄԱ  
Ի ՏԵԱՌՆԷ**



**ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ՆԵՐՍԵՍԻ<sup>1</sup> ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ<sup>2</sup> ՀԱՅՈՑ<sup>3</sup>  
ԱՌ ՀԱՄԱԻՐԵՆ ՀԱՅԱՍԵՌ ԱԶԻՆՍ, ՈՐՈՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ<sup>4</sup> ՀԱՄԱՏԱՑԱՒ  
ՆՄԱ Ի ՏԵԱՌՆԵ<sup>5</sup>**

1 Ներսէս ծառայ Քրիստոսի<sup>6</sup>, եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս<sup>7</sup> Հայոց<sup>8</sup>. ընդհանուր<sup>9</sup> հաւատացելոց<sup>10</sup> հայկականացող սեռից, որք յարեւելս՝ ի սեպհական<sup>11</sup> աշխարհ<sup>12</sup> Հայաստանեայց<sup>13</sup> բնակեալք, եւ որք յարեւմտեան<sup>14</sup> կողմանսդ<sup>15</sup> սահեալք<sup>16</sup> նժդեհութեամբ<sup>17</sup>, եւ<sup>18</sup> որք<sup>19</sup> ի միջերկրայս<sup>20</sup> ի մէջ այլալեզու ազանց տարբերեալք<sup>21</sup>, եւ որք<sup>22</sup> յիւրաքանչիւր<sup>23</sup> յե-

զերս<sup>24</sup> աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս<sup>25</sup> եւ ի դղեակս<sup>26</sup>, ի գիւղս<sup>27</sup> եւ յագարակս, որոց այդոցիկ ամենեցունց<sup>28</sup> քահանայապետաց<sup>29</sup> եւ քահանայից, վանականաց եւ քաղաքայնոց<sup>30</sup>, իշխանաց եւ իշխեցելոց<sup>31</sup>, զինուորաց<sup>32</sup> դասուց՝ ձիավարժից եւ հետեւակաց, զաւառապետաց եւ գործակալաց, տանուտէրաց<sup>33</sup> եւ երկրագործաց,<sup>34</sup> վաճառականաց եւ արուեստագիտաց<sup>35</sup>: 2 Եւ որոց միանգամ<sup>36</sup> ի զանազան ճանապարհս ընթանան կենցաղոյս<sup>37</sup> ըստ ընտրութեան<sup>38</sup> կամաց եւ<sup>39</sup> յաւժարութեան, արանց եւ կանանց<sup>40</sup>, մանկանց<sup>41</sup> եւ երիտասարդաց, կատարելոց եւ ծերոց, որք ըստ աւրինաց<sup>42</sup> աշխարհի քաղաքավարեալք, եւ որք գերաշխարհիկք<sup>43</sup> են վարուք: 3 Ողջոյն սիրոյ<sup>44</sup> եւ խաղաղութեան հասցէ յաստուածընկալ եւ փրկական Սրբոյ<sup>45</sup> նշանէս եւ ի հրեղէն լե-

**\* Աղբիւրներ.**

- A = ՄՄ, 912 (1779-1785 թթ.)
- B = ՄՄ, 2496 (1294 թ.)
- C = ՄՄ, 500 (1305 թ.)
- D = ՄՄ, 3651 (1315 թ.)
- E = ՄՄ, 581 (1371 թ.)
- F = ՄՄ, 2678 (1426-1476 թթ.)
- G = ՄՄ, 582 (1443<sup>o</sup> թ.)
- H = ՄՄ, 3906 (Ժէ դ.)
- I = ՄՄ, 577 (Ժէ դ.)
- N = ՄՄ, 3140 (Ժե դ.)
- U = ՄՄ, 3062 (1765-1767 թթ.)
- j = ՄՄ, 227 (Ժէ դ.)
- m կամ ու = ՄՄ, 580 (1618 թ.)
- P = Երուսաղէմ, 1871 թ.
- Q = Կ. Պոլիս, 1825 թ.:
- 1 + տեառն + ճերսէսի BNP, ճերսիսի AEF
- 2 կաթողիկոսի E
- 3 տ. հայոց կաթողիկոսի B, հայոց + զիրմ առաջին + Q
- 4 տեսչութեամբ B, տեսչութիւնս E
- 5 ի բուղբ ... տեսողն IU
- 6 այլ ի քրիստոսի B, + յիսուսի + քրիստոսի EFQ
- 7 կաթողիկոս EI
- 8 + ամենայն + հայոց B
- 9 ընթանուր I, ընդհանուր + ամ + U
- 10 հաւատացելոց + աստուծոյ + BEUJQ
- 11 սեփական BDGHINjP, սեպհական U, սեփական Q
- 12 աշխարհս EP
- 13 հայաստանեաց CEUj
- 14 յարեւմտական G
- 15 կողմանս E
- 16 կողմանս յասեալք E, հասեալ Q
- 17 նժդեհութեամբ BEFQ, նշդեհութեամբ I
- 18 ի I
- 19 ոյք j
- 20 մէջ երկրեայս BI, միջերկրայս Q
- 21 տարբերեալք ACEP

- 22 ոյք D
- 23 իւրաքանչիւր EU
- 24 եզերս CFUJQ
- 25 քաղաք EFU
- 26 դղեակ U
- 27 գեաղս B, գեղս CFj, գեղս EIQ
- 28 ամենեցուն BI
- 29 քահանայապետից U
- 30 քաղաքայնոց F
- 31 իշխելոց FGHINU
- 32 զինուորաց I
- 33 տանուտերաց CIQ, տանուտերանց E
- 34 ի տանուտէրաց եւ երկրագործաց BF
- 35 արուեստագիտաց Q
- 36 միանգամայն UQ
- 37 կենցաղոյս I
- 38 ըտրութեան C
- 39 ի եւ BE
- 40 կանաց E
- 41 մանկաց E, մանգանց B
- 42 օրինացն I
- 43 գերաշխարհիկ BCEIUJQ
- 44 սիրոյս U
- 45 ի սրբոյ Cj

զուաց Հոգւոյն ընդունողաց առաքելական<sup>1</sup> նշխարացս<sup>2</sup>, եւ ի Սուրբ Լուսաւորչին մերոյ աջէս<sup>3</sup> եւ աթոռոյս<sup>4</sup>: 4 Որոց առաջի պաղատիմք յաղաչանս, որ առ Աստուած, յաղագս ոգւոց<sup>5</sup> ձերոց փրկութեան, բանալ զականջս մտաց ձերոց յունկնդրութիւն աստուածայնոց<sup>6</sup> բանիցս<sup>7</sup> այսոցիկ, զոր Հանդերձեալ եմք ի պատուիրանաց<sup>8</sup> Աստուծոյ դնել առաջի ձեր, որպէս զի առաջնորդեալք<sup>9</sup> մեաւք<sup>10</sup> ի շաւիղս արգարութեան, արժանի եղիցի<sup>11</sup> իւրաքանչիւր ոք ի ձէնջ՝ միոյ աւթեւանաց<sup>12</sup> տան Հաւրն<sup>13</sup> երկնաւորի<sup>14</sup> լինել ժառանգաւոր<sup>15</sup>: 5 Հայցեմ եւ ես յամենեցունց՝ աղաթս<sup>15</sup> առնել եւ վասն մեր՝ բարւոք<sup>16</sup> տալ Աստուծոյ զհամար տնտեսութեանն<sup>17</sup>, որ վասն ձեր, յորժամ կոչեցեալ<sup>18</sup> պահանջիցէ ի մէնջ<sup>19</sup>:

6 Գիտութիւն լիցի ամենեցուն ձեզ, զի Հայրն մեր Հոգեւոր եւ եղբայրն ըստ<sup>20</sup> մարմնոյ՝ սրբազան կաթուղիկոսն<sup>21</sup> Գրիգորիոս<sup>22</sup>, աթոռակալն եւ արեանառուն մեծի

Լուսաւորչին Հայաստանեայց<sup>23</sup> եւ Համամանն<sup>24</sup> նմին մաքրութեամբ<sup>25</sup> անձին եւ<sup>26</sup> իմաստութեամբ: 7 Ա՛յն, որ բարւոք<sup>27</sup> հովուեաց<sup>28</sup> երկայն<sup>29</sup> ժամանակաւ զհաւտղ<sup>30</sup> բանաւոր, զոր ետ ցնա Քրիստոս ըստ Պետրոսի՝ թէ «Արածեա՛ զոչխարս<sup>31</sup> իմ»<sup>32</sup>: 8 Որոյ հասեալ ի կատարումն Հասակի, ըստ նահապետացն կարգի, նախ քան զվախճանն<sup>32</sup> ազդումն եղեալ նմա ի Հոգւոյն<sup>33</sup>, կոչեաց զեպիսկոպոսունս<sup>34</sup> եւ զվարդապետս եւ զհարս Սրբոյ լերինն եւ զորս ի յայլ կողմանց: 9 Եւ թէպէտ եւ մեք ի բազում անգամ կոչմանէ նորին յայտոսիկ՝ հրաժարէաք<sup>35</sup> յառաջին ժամանակն, անարժան<sup>36</sup> զանձն վարկանելով: 10 Սակայն յայժմուս<sup>37</sup> ակամայ<sup>38</sup> բռնազբաւսելով զմեզ՝ ինքն ու<sup>39</sup> ժողովք հպիսկոպոսացն, ձեռնադրեաց<sup>40</sup> զմերս անարժանութիւն յաթոռ կաթուղիկոսութեան<sup>41</sup> ազգիս<sup>42</sup> Հայկայ<sup>43</sup> եւ տանն<sup>44</sup> Թորգոմայ<sup>45</sup>:

11 Եւ իրրեւ կատարեաց զգործ հրամանին, որ ազդեցաւ նմա ի վերուստ, յետ ե-

1 յառաքելական BI  
 2 նշխարաց DHNP  
 3 աջոյս H  
 4 յաթոռոյս BI, ի եւ ի սուրբ լուսաւորչին մերոյ աջէս եւ յաթոռոյս UQ  
 5 անձանց I ոգւոց F, ոգոց Cj  
 6 աստուածային CDEFHQ, յանայնոց A, անախն j, յաստուածայնոց U  
 7 բանից AI  
 8 պատուիրանացն ACEFIUJQ  
 9 առաջնորդեալ Q  
 10 յ մեաւք AB, միով E, միով j, մեաւ Q  
 11 լիցի B  
 12 օրեկանաց I  
 13 հօր DGHNP  
 14 երկնաւորին DGHNP  
 = ԳՅ՝ՎԸ՝ ԴԻ՛Ի՛ 2  
 15 յաղօթս I  
 16 բարիոք B  
 17 տնտեսութեան BI  
 ք ԳԼ՝ՆԻ՛ ԴԻ՛ 2  
 18 կոչեալ BFIQ  
 19 ձէնջ U  
 20 + մեր + ըստ U  
 21 կաթուղիկոսն E, կաթողիկոսն I  
 22 գրիգորիս U

23 հայաստանեաց CEFJj  
 24 համամանն BCFE, համանն ման j  
 25 մաքրութեան B  
 26 ի եւ j  
 27 բարւոք Cj, բարիոք B  
 28 հովուեաց Cj  
 29 երկար BE  
 30 զհաւտղ I զհաւտղ C, զհաւտ BEU  
 31 զոչխարս E  
 ք ԳՅ՝ՎԸ՝ ԴԻ՛ 16-17  
 32 վախճանն Cj  
 33 հոգոյն + սրբոյն + Q, հոգոյն Ij, հոգւոյն + սրբոյ + U  
 34 զեպիսկոպոսունսն F  
 35 հրաժարեցաք B  
 36 յանարժան A  
 37 յայժմոյս AU, այժմուս B  
 38 յակամայ B  
 39 եւ յ ու ABCEFUJQ  
 40 ձեռնադրեցին BQ  
 41 կաթուղիկոսն E, կաթողիկոսութեան I  
 42 ազգի AEFJj, արդ յ U  
 43 հայկայ Cj, հայկեա B  
 44 տանս B, տան I  
 45 թորգոմայ B, թորգոմայ j



ըից ամսոց<sup>1</sup> փոխեցաւ իբր<sup>2</sup> կոչմամբ<sup>3</sup> առ Քրիստոս<sup>4</sup>, դասաւորելով ընդ հարսն՝ հայրապետն<sup>5</sup> ընդ առաքեալսն՝ երկոտասանիցն<sup>6</sup> լրումն. ընդ հալածեալսն վասն արդարութեան՝ համբերողն<sup>7</sup> ի հալածանս<sup>8</sup>, եւ ի զանազան փորձութիւնս ի հակառակացն ճշմարտութեան, ընդ փառաւորեալսն՝ պատուեալն յԱստուծոյ եւ ի մարդկանէ ի կեանս: 12 Որոյ<sup>9</sup> եւ մահ<sup>10</sup> պատուական եղեւ առաջի Տեառն<sup>11</sup>, ըստ գերագունից<sup>12</sup> սրբոցն<sup>13</sup>, զորոց ասէ մարգարէն՝: 13 Ինքն նաւու<sup>14</sup> հաւատոյ ընդ ծով<sup>15</sup> աշխարհիս՝ հոգմով<sup>16</sup> Հոգւոյն<sup>17</sup> ուղղակի նաւապետեալ ճշմարտութեամբ եւ առաքինութեամբ, եհաս<sup>18</sup> անվնաս յանբոյթ եւ յառանց ալեաց<sup>19</sup> նաւահանգիստն եւ զմեզ եթող ի տաժանելի<sup>20</sup> եւ յողջաւոր<sup>21</sup> կեանս՝ ի մէջ աւձից եւ կարճաց<sup>22</sup> եւ զանազան խածանող<sup>23</sup> դազանաց՝ երեւելեաց եւ աներեւութից<sup>24</sup>: 14 Եւ ոչ այս<sup>25</sup> միայն. այլեւ ծանրութեան<sup>26</sup> բեռանց

ի ներքոյ<sup>27</sup> Հոգեւորաց եւ մարմնաւորաց, յորոց կրից թեթեւացեալ, ինքն թռաւ<sup>28</sup> յիմանալեացն<sup>29</sup> կայանս: 15 Մերումս<sup>30</sup> տկար եւ անզաւր անձին<sup>31</sup> յանձնարարեալ բառնալ թիկանց<sup>32</sup> զծանրութիւն Հոգւոց ամենայն եկեղեցեաց:

16 Եւ իմ յայտոսիկ<sup>33</sup> եղեալ<sup>34</sup> զարհուրիմ սարսեալ, զահ եւ զերկիւղ<sup>35</sup> դատաստանին Աստուծոյ զմտաւ ածելով, որ վասն հովուաց եւ առաջնորդաց ի Հին եւ ի Նոր Կտակարանս<sup>36</sup> ասացեալ: 17 Մինչ զի՝ ոչ «տալ քուն աչաց կամ նինջ արտեւանաց»<sup>37</sup>, յերկիւղէ<sup>37</sup> այսոցիկ՝ չարչարեալ ոգւոյ<sup>38</sup> իմոյ: 18 Քանզի ի բազումս<sup>39</sup> եւ ի<sup>40</sup> զանազանս<sup>41</sup> բաժանին<sup>42</sup> անուանս<sup>43</sup> եւ իրս<sup>44</sup> մի գործ տեսչութեանս<sup>45</sup> ոգւոց<sup>46</sup>, որ կոչի կաթուղիկոսութիւն<sup>47</sup> եւ հայրապետութիւն, եպիսկոպոսութիւն եւ քահանայութիւն, եւ մի քան զմի առաւելեալ եւ նուազեալ: 19 Քանզի որ մեծն է ի սոսա<sup>48</sup>, ծանրագունի<sup>49</sup> բեռանց է ի ներքոյ, որպէս պարունակող զամենայնս<sup>50</sup>: 20 Սակայն,

1 ամաց U  
 2 իբրեւ E, լ փոխեցաւ իբր U  
 3 կոչեցաւ U  
 4 ամսոց փոխեցաւ իբր կոչմամբ առ Քրիստոս լ ամաց կոչեցաւ առ Քրիստոս Q  
 5 հայրապետ Cj, հայրապետսն DGHNP  
 6 երկոյտասանիցն Cj, երկոտասանիցն E  
 7 համբերողն AjQ  
 8 հալածանսն BI  
 9 որս I  
 10 մահն BIUQ  
 11 առաջի տեառն լ E  
 12 գերագունի B, գերագունիցն U  
 13 սրբոց U  
 \* Հմտ. Սող. ՏժԵ 15  
 14 նաւոյ AI  
 15 լ ծով EFU  
 16 հողմո B, հողմոց I  
 17 հողոյն CI  
 18 + եւ + հաս CFj, + եւ + եհաս U  
 19 յալեաց A, ալեացն I, տ. յառանց ալեաց եւ յանբաւոյց U  
 20 դաժանելի U  
 21 յողջաւոր AI, յանցաւոր U, անցաւոր Q  
 22 կարճեաց E  
 23 խածանող AQ, խածանաւղաց E, խածանողաց FU  
 24 յաներեւութից AI  
 25 լ այս CDEFHUj

26 + ի + ծանրութեան B, ծանրութիւն U  
 27 ներքոյ j  
 28 բոեալ ABCEFIUjQ  
 29 իմանալեացն AU, յիմանալեաց B  
 30 մերում BI  
 31 լ անձին CEIUjQ  
 32 բինկանց j  
 33 այտոսիկ AI  
 34 լ եղեալ E  
 35 գերկիւղ BCj, գերկեղ EF  
 36 կտարանս U  
 37 Սող. ՏժԵ 3-4  
 37 յերկեղէ CEFj, յերկիւղէ B  
 38 ոգոյ Cj, հոգոյ BIU  
 39 բազում CEFUjQ  
 40 լ ի B  
 41 զանազան CEFUjQ  
 42 լ բաժանին B + I  
 43 յանուանս Q, անուանին B  
 44 իրս Q  
 45 տեսչութիւն C, տեսչութիւնս EFUj  
 46 ոգոց Cj  
 47 կաթուղիկոսի E, կաթողիկոսութիւն FI  
 48 սոցա Cj  
 49 ծանրագոյն + ի + C  
 50 զամենայն CE

ըստ գործոյն՝ անուանադրութիւնքն<sup>1</sup> մի<sup>2</sup> եւ նոյն են իւրաքանչիւրոցն՝ քահանայութեանն<sup>3</sup> եւ քահանայապետութեանն<sup>4</sup>:  
 21 Քանզի վերակոչին<sup>5</sup> ծնող<sup>6</sup>, դայեակ<sup>7</sup>, վարդապետ, բժիշկ<sup>8</sup>, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, գատաւոր եւ այլ եւս յոլովագոյն անուանս, որով<sup>9</sup> խորհուրդ<sup>10</sup> աստուածապաշտութեանն<sup>11</sup> կատարի, եւ արէնք եկեղեցոյ<sup>12</sup> Քրիստոսի ամբողջ մնայ<sup>13</sup>:

22 Եւ արդ՝ զիա՞րդ ւատար եղելոց<sup>14</sup> ի մաւրէ, կարիցէ լինել ոք ծնող<sup>15</sup> կամ դայեակ<sup>16</sup> ըստ Պաւղոսի, զի ասէ. «Որդեակք իմ, զորս երկնեմ վերստին մինչեւ նկարեցի Քրիստոս ի ձեզ»<sup>17</sup> եւ դարձեալ<sup>17</sup>. «Որպէս դայեակ<sup>18</sup> մի որ սնուցանիցէ<sup>19</sup> զմանկունս<sup>20</sup>, այնպէս զթացաք<sup>21</sup> ի ձեզ»<sup>2</sup>: 23 Զի ծնեալքն բնութեամբ սիրեն զծնողսն<sup>22</sup>, եւ սնեալքն<sup>23</sup> զդայեակսն<sup>24</sup>: 24 Իսկ առ որս փոխանակ սիրոյ՝ ատելութիւն եւ ւատարութիւն, զի՞նչ յոյս գոյ<sup>25</sup> ծնանելոյ յայն-

պիսիսն<sup>26</sup> վերստին՝ աստուածեղէն<sup>27</sup> բանիւն յապաշխարութիւն, կամ սնուցանելոյ<sup>28</sup> հայրաւրէն՝ ուսմամբ եւ երկիւղիւ<sup>29</sup> Տեառն գնոսա:

25 Որպէ՞ս Հնար է լինել վարդապետ եւ ուսուցիչ<sup>30</sup>, եւ քարոզ<sup>31</sup> ելանել ըստ<sup>32</sup> հրամանին<sup>33</sup> Աստուծոյ<sup>34</sup> ի վերայ բարձու<sup>35</sup> լեբին Սիւանի<sup>36</sup>, որ է եկեղեցի սուրբ, եւ բարձրացուցանել զբարբառ Աւետարանին<sup>37</sup> եւ ո՛չ երկնչել: 26 Կամ ըստ Պաւղոսի, որ առ Տիմոթէոս<sup>38</sup> քարոզել զբանն. «Ի ժամու եւ ի<sup>39</sup> տարածամու. յանդիմանել, սաստել եւ մխիթարել»<sup>40</sup>, ուր աշակերտեալքն<sup>40</sup> ցրուեալք են, եւ ոչ ժողովեալք ի վարժարանի<sup>41</sup>: 27 Եւ ո՛չ սիրողք<sup>42</sup> վարժից ճշմարիտ<sup>43</sup> իմաստութեանն<sup>44</sup>, այլ ստութեան եւ նանրութեան, եւ առ չարութիւնն<sup>45</sup> կատարեալք<sup>46</sup>, եւ ի բարեաց տղայացեալք<sup>47</sup>:

28 Զիա՞րդ բժշկական գործոյն<sup>48</sup> կարեմք լինել նմանող<sup>49</sup> առ Հիւանդացեալ ոգիսն<sup>50</sup> ի խայթմանէ կամակոր<sup>51</sup> վիշապին,

1 արիւնադրութիւնքն | անուանադրութիւնքն BI, անուանագրութիւնքն E  
 2 ընդ Եմի | մի B  
 3 Բահանայութեան Bj  
 4 Բահանայապետութեան BU  
 5 + ի + վերակոչողին U  
 6 ծնաւոյ ACIYQ, ծնաւոյ B  
 7 դայակ I  
 8 բժիշկ I, բժիշկ + եւ + U  
 9 որով BDGHINP  
 10 խորհուրդ ABI  
 11 անպաշտութեան BU  
 12 եկեղեցոյ CEIj, եկեղեցւոյ U  
 13 մնա CEj, մնան I  
 14 օտարեցելոց U  
 15 ծնող ACIYQ  
 16 դայակ I  
 17 Գ. 2. Գ. 19  
 18 + զորս + դարձեալ G, | դարձեալ U  
 19 դայակ I  
 20 սնուցանել Cj  
 21 մանկունս CUj, մանուկս F  
 22 զբայաք AJQ  
 23 Ը թ. 7-8  
 24 զծնողսն ACIYQ, զծնաւոյն BI  
 25 սնեալսն E  
 26 զդայեակն B  
 27 գո + եւ + I

26 զայնպիսիսն CEjQ  
 27 աստուածային CDEFUjQ  
 28 սնուցանելոյ B  
 29 երկեղիւ F, երկեղիւ j  
 30 տ. ուսուցիչ եւ վարդապետ U  
 31 քարոզող U  
 32 ընդ A  
 33 հրամանի CEFUjQ  
 34 տեառն | աստուծոյ CDEFUjQ  
 35 վերաբարձու ACEj  
 36 սիւանի BCEIj, սիւանի F  
 37 ւաւետարանին C  
 38 տիմաւթէոս BCE, տիմ.թէոս U  
 39 ի BEFIQ  
 40 ԻՏՏԻՏ. Գ. 3-4  
 41 աշակերտն B  
 42 վարժ բանի | վարժարանի G  
 43 սիրող U  
 44 նշմարտի B  
 45 իմաստութեան B, տ. իմաստութեանն նշմարտի E  
 46 չարութիւն B  
 47 չարքի նկատեալք | առ չարութիւնն կատարեալք E, կատարեալ U  
 48 տղացեալք E  
 49 գործոյն I  
 50 նմանաւ ACIYQ  
 51 հոգիսն C հոգիս U  
 52 կամակոր U

ի բնաւորականաց կամ յանբնականացն<sup>1</sup> ախտից<sup>2</sup> բժշկել ջանալով<sup>3</sup>, ուր ախտացեալքն<sup>4</sup> ոչ միայն ոչ են ի խնդիր առողջարար արուեստի հոգեւոր բժշկաց<sup>5</sup>, այլեւ դժկամակ<sup>6</sup> լինին<sup>7</sup> յարբումն<sup>8</sup> դեղոցն<sup>9</sup> աւգտակարութեան<sup>10</sup>: 29 Եթէ ոք մատուցանէ<sup>11</sup> նոցա յանդիմանութիւն կամ խրատ, ըստ ստամոքսացւոցն<sup>12</sup> նմանութեան<sup>13</sup>, որոց դառն մաղձիւք<sup>14</sup> ապականեալք<sup>15</sup> իցեն: 30 Եւ ո՛չ միայն<sup>16</sup>, այլեւ ընդիմաբանեն<sup>17</sup> եւս<sup>18</sup> նոցին, թէ<sup>19</sup> բժիշկ<sup>20</sup> նախ գանձն քո բժշկեայ՝ այդպիսի<sup>21</sup> ցաւոց, եւ ապա առ իս<sup>22</sup> մատիցես յանդիմանող քո բանիւ:

31 Կամ զիա՞րդ այնքան հեռացելոց ի մէնջ<sup>23</sup> տեղեալ եւ սիրով՝ հնար է լինել դէտ, ըստ հրամանին Աստուծոյ, որ առ Եգեկիէլ, թէ<sup>24</sup>. «Որդի՛ մարդոյ<sup>25</sup>, դէտ<sup>26</sup> կացուցի զքեզ տանդ Իսրայէլի<sup>27</sup>»<sup>25</sup>: 32 Զի

անմահ՝ աստուածային<sup>1</sup> իւրով բնութեամբ: 46 Վասն այնորիկ եւ արիւն Աստուծոյ աւսի եւ չարչարանք եւ մահ եւ Աստուած խաչեալ, եւ որ այսպիսիք<sup>2</sup>, զորս ոչ առանձին<sup>3</sup> բնութեանն<sup>4</sup> Աստուծոյ տամք, այլ անճառ միաւորութեան<sup>5</sup>: 47. Եւ զոր աւրինակ՝ յատուկ Աստուծոյ<sup>6</sup> բնութեանն անհնարին է չարչարանս ընդունել եւ մեռանել, նոյնպէս եւ մարդոյ<sup>7</sup> բնութեան<sup>8</sup> առանձին անկարելի է մահուամբ կեանս տալ մարդկան, սակայն միաւորելովն Բանին Աստուծոյ ընդ<sup>9</sup> մարդոյ<sup>10</sup> բանականի բնութեան<sup>11</sup> անհնարելին<sup>12</sup> հնարաւոր եղել եւ անկարելին՝ կարելի: 48 Քանզի չարչարեցաւ<sup>13</sup> անչարչարելին չարչարելեալն եւ մեռաւ անմահն մահկանացուաւն<sup>14</sup>, որով կենդանացաք<sup>15</sup> մարմին նորա եւ անդամքս, յաւդեալք ի կենդանի եւ կենդանարար գլուխն մեր<sup>16</sup> Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն<sup>17</sup>:

49 Արդ, այս ինչ յայժմուս<sup>18</sup> տուաւ փոքր ի շատէ յաղքատիմաց եւ տկար իմաստից մեր՝ ձերու՞մդ գերակատար իմաստութեան, առ ի գիտելոյ զբովանդակ եկեղեցւոյ<sup>19</sup> Հայաստանեայց<sup>20</sup> զանփոփոխելի դաւանութիւն հավատոյ, որ ի սուրբ Երրորդութիւնն եւ ի տնաւրէնութիւնն Քրիստոսի, որով ի մասնէդ կարող<sup>21</sup> էք զբոլորն ճանաչել, որպէս որք դոյզն ճաշակաւ զբովանդակն ի կերակրոց եւ յըմպելեաց<sup>22</sup> իմանան զախորժելին եւ<sup>23</sup> կամ զոչն<sup>24</sup> ախորժելի<sup>25</sup>: 50 Իսկ զկատարեալն<sup>26</sup> բան յաղագս ամենայն խնդրոյ<sup>27</sup> որքան է ի միջի մերում անհաւասարութիւն ինչ, ի հաւաքումն ժողովոյն ըստ վերագրելոցդ<sup>28</sup> գրեալ տացուք առաջի սուրբ Թագաւորութեան ձերոյ: 51 Գրեցաւ ի թուականութեանս<sup>29</sup> Հայոց վեց հարիւր ինն եւ տասն<sup>30</sup>, յամսեանն<sup>31</sup> Հայոց<sup>32</sup> արեգ<sup>33</sup>, եւ Հոռոմոց<sup>34</sup> հօկտեմբեր<sup>35</sup>:

1 աստուածային T  
 2 Լ եւ որ այսպիսիք Q;  
 3 առանձինն MQ<sub>3</sub>  
 4 բնութեան ET  
 5 միաւորութեանն ABCEMNPTW  
 6 աստուծու T  
 7 մարդու P  
 8 Լ բնութեան T  
 9 ըստ Լ ընդ BDQ<sub>2</sub>  
 10 մարդու P  
 11 բնութեանն M  
 12 անհնարին M  
 13 չարչարեցան B  
 14 Լ անչարչարելին ... մահկանացուան B  
 15 կենդանու N  
 16 Լ M  
 17 Լ մեր M

18 այժմուս E  
 19 եկեղեցոյ CNP  
 20 հայաստանեայց BPW  
 21 կարող Q;  
 22 յըմպելեաց BNPWZ  
 23 Լ BWZ  
 24 գոչ DEQ;  
 25 ախորժելին DEQ;  
 26 զկատարեալ CN  
 27 խնդրոց Q;  
 28 վերոյգրելոց EQ;  
 29 բովանդակութեան B, բուականութեան CN  
 30 տ. տասն եւ ինն Q<sub>2</sub>, մեծք: Լ վեց հարիւր ինն եւ տասն W  
 31 յամսեանն ABD, յամսեան E  
 32 հայ Լ Հայոց C  
 33 արեգի EZ  
 34 հոռոմն CN  
 35 ոգոմբերի Z, ոգտեմբերի ADE, հոգտեմբերի B, ոգտեմբերի CN, ոկտեմբի W

## ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹԱԳԱԻՈՐԱԿԱՆ ԳՐՈՅՄ<sup>1</sup> ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ<sup>2</sup> ԵՐՐՈՐԳ<sup>3</sup> ԱՆԳԱՄ<sup>4</sup>

1 Քրիստոսապսակեալ բարձր եւ յաղթող<sup>5</sup> ինքնակալին հոռոմոց՝ ծիրանածին սուրբ թագաւորին Կիր<sup>6</sup> Մանուէլի<sup>7</sup> խնդալ միշտ. ի ներսիսէ<sup>8</sup> նուաստէ<sup>9</sup> ծառայից<sup>10</sup> Աստուծոյ եւ շնորհիւ եւ ողորմութեամբ նորին<sup>11</sup> կաթողիկոսէ<sup>12</sup> Հայոց:

2 Երկրորդ յետ աստուածեղէն մատանցն գրաւորութեան<sup>13</sup>, զոր ընկալաւ Իսրայէլ<sup>14</sup> ի ձեռն Մովսէսի<sup>15</sup>, ընկալաք եւ մեք զառ ի յԱստուծոյ հաստատեալ թագաւորութեանդ<sup>16</sup> գրաւորական հրաման արժանաւոր պատուոյ<sup>17</sup>, ով քրիստոսապսակեալ ծիրանածին բարձր եւ յաղթող<sup>18</sup> միշտ<sup>19</sup> աւգոստոս<sup>20</sup> եւ ինքնակալ<sup>21</sup> հոռոմոց Կոմնինոս<sup>22</sup> տէր Մանուէլ<sup>22</sup>, պարունակող<sup>23</sup> գերապատուութեամբ<sup>24</sup> ընդհանուր<sup>25</sup> թագաւորութեանց, որ ի ներքոյ երկնից. որոյ հասու եղեւ մեր նուաստութիւնս զաւրութեան մտաց եւ բանի պարագրելոց

ընդ թագաւորական<sup>26</sup> գրոյ, եւ զոր բերանով<sup>27</sup> պատմեցաւ<sup>28</sup> ի բանաւորաց սուրբ թագաւորութեանդ թղթաբերաց<sup>29</sup>: 3 Եւ այն, որ յաղագս Տեառն<sup>30</sup> մերոյ տնաւրինական խորհրդոյ, զոր նշան հակառակութեան մարգարէացաւ լինել<sup>31</sup> ձերունին սուրբ, ոմանց կանգնելոյ եւ ոմանց գլորելոյ, որով եւ ի<sup>32</sup> գրելոցն մեր զխոստովանութիւն<sup>33</sup> հաւատոյ մեր՝ \*էր ինչ բան, զի ընկալեալ եղեւ ի հաճոյս իմաստութեան մտաց ձեր եւ էր ինչ, զի առ ի թերութիւն կարծեցաւ լինել. այսինքն՝ միոյ ընտրութեան<sup>34</sup> յիշատակ. զոր ի սրբոյն Կիւրղէ գրեալ<sup>35</sup> էաք<sup>36</sup> ունել. եւ թուի ոչ այլ ինչ լինել այսմ<sup>37</sup> կարծեաց պատճառ, բայց թարգմանութեան<sup>38</sup> այլայլութիւն, ի ոչ<sup>39</sup> ուղիղ տեսանելոյ<sup>40</sup> զմիտս բանին. այլ այս՝ մի ինչ գայթակղեցուցէ<sup>41</sup> զծայրագոյն ձեր իմաստութիւն. զի թէ մարդկութեանն եւ աստուածութեանն մի ընտրութիւն ասեմք<sup>42</sup> յետ միաւորութեանն<sup>43</sup> յեղմամբ եւ շփոթմամբ ըստ չարափառացն, որպէս զի լինել երկաքանչիւրոցն կամ մարդ

1 գրոյն Q3, գրոյ N  
 2 ներսէսի CN, ներսեսի W, ներսիսէ E  
 3 երկրորդ I երրորդ ABCDEWZ  
 4 անկամ Z  
 5 յաղթող Q23  
 6 կիր B  
 7 մանուիկի N, մանիկ B  
 8 ներսեսէ CN  
 9 I նուաստէ B  
 10 ծառայէ B, ծառայի NCZ  
 11 I նորին Z  
 12 կաթողիկոսէ A, կաթողիկոսէ BW  
 13 գրաւորութեանն CN, գրութեան W  
 14 իսրայէլ A, էլ W  
 15 մոսիսի Q3  
 16 թագաւորութեանդ Q3  
 17 պատուոյ ACW  
 18 յաղթող Q23  
 19 միշտ A  
 20 ոգոստոս N  
 21 ընկալալ ANZ  
 22 մանուիլ ACDENQ3ZW  
 23 պարունակող Q23  
 24 գերապատուութեամբ WZ  
 25 ընտրութեան Z

26 թագաւորական ANZ  
 27 բերանով + ասացաւ եւ + A  
 28 պատմեցաւ I պատմեցաւ CN  
 29 թխաբերաց CN  
 30 տեառնն Z  
 31 լինիլ Q3  
 32 I A  
 33 զխոստովանութիւնն Z  
 \* Ղ.՝.՝. Բ՝ 34  
 34 ընտրեան b  
 35 գրելի b  
 36 եւք A  
 37 այլով I այսմ b  
 38 թարգմանութեանն I  
 39 յոչ Wb  
 40 տեսանելոյս b  
 41 գայթակղեցուցէ b, կայթակղեցուցէ I  
 42 ասեմք Wbt  
 43 միաւորութեան b

միայն եւ կամ Աստուած միայն եւ կամ այլ ինչ բնութիւն. եւ ոչ Աստուած եւ մարդ կատարեալ անշփոթելի եւ անբաժանելի<sup>1</sup>, յիրաւի էր գայթազղելի<sup>2</sup> եւ խոտելի. զոր եւ նզովեմք, եւ ի բաց կամք ի շփոթմամբ մի բնութիւն ասողացն: 4 Իսկ մերս լեզուոյ մի բնութիւն ասել բանիւ, զանճառ միաւորութիւնն նշանակէ առ միտս, փոխանակ ասելոյ թէ յերկուց բնութեանց միաւորեալ ի մի անճնաւորութիւն եւ զինչ գայթազղութեան<sup>3</sup> պատճառ յայսցանէ, որք ողջամտութեամբ<sup>4</sup> նայիցին<sup>5</sup> ի միտս բանին. թուի թէ առ ձերդ գերակատար իմաստութիւն ոչ բնաւ իսկ եթէ յոմանց տկար մտածութեանց<sup>6</sup> յուսամք ի տէր, զի ի գումարել ժողովոյն Հանուրց Հայաստանից, յորոց միջի լինի Քրիստոս ըստ խոստացելումն յանուն իւր ժողովոցն<sup>7</sup>. ուղղի<sup>8</sup> եւ այդ եւս շնաւրհաւքն Աստուծոյ ի պատճառս խաղաղութեան եւ սիրոյ, ոչ որպէս թէ ի խոտորնակի կարծեաց նորաձեւս ինչ ուղղելով ի մեզ Հաւատոյն բան. այլ զոր ունէաք<sup>9</sup> ի սկզբանէ առ ի միտս եւ ի սուրբ գիրս ընթերցեալ՝ զնոյն<sup>10</sup> բացայայտելով բանիւ առ ի բառնալոյ<sup>11</sup> գայթակղութեան<sup>12</sup> ի բանս յայս<sup>13</sup> գայթակղելոցն<sup>14</sup> ի մեզ: 5 Ծանուցաւ բանիւ եւ որ յաղագս տաւնից եւ կարգաւորութեանց եկեղեցւոյ, որով զանազանիմք ի միմեանց, եւ վասն ժողովոց

ոմանց<sup>15</sup> ընդունելութեան. եւ տուան իւրաքանչիւրքն<sup>16</sup> գրով ի Թէոփանէ<sup>17</sup> իմաստասիրէ, որոց առ ի մէնջ միայնոյ տալ պատասխանի ոչ Համարեցաք ի դէպ, այլ ի լինել Հանդերձեալ Հանդիսական ժողովոյն<sup>18</sup> դիցուք առաջի զխնդրելիս. եւ զոր Հնար լինի բռնադատել զերկրորդ բնութիւն զՀնացեալ աւանդ սովորութիւն<sup>19</sup> ազգիս, ընկալցուք յայժմուս, եւ այն յաղագս աստուածային<sup>20</sup> սիրոյն Հաղորդութեան եւ ո՛չ իբր ի մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւնն: 6 Քանզի աւանդութիւնն<sup>21</sup> եկեղեցւոյ մեր, զոր ունիմք, ի վկայութենէ Աստուածաշունչ զրոց Հաստատեալ են, եւ մնացեալն՝ կամ ներելի ի ձէնջ որպէս ո՛չ ինչ յաստուածայինսն<sup>22</sup> բերելով պակասութիւն, եւ կամ փոքր փոքր աճմամբ սիրոյն<sup>23</sup> ուղղեացի եւ այն ըստ ժամանակի. եւ զամենայնսն, զորս առ դաւանութիւնն<sup>24</sup> Հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ ի պատճառս միաբանութեան Հաստատեացի ի մէջ<sup>25</sup> ժողովոյն բանի, ծանուցուք գրով եւ բանիւ սուրբ թագաւորութեանդ ի ձեռն ոմանց յեպիսկոպոսաց<sup>26</sup> ժողովոյն եւ վարդապետաց առ ի մէնջ առաքելոց նաեւ զոր մերս ազգի իցեն գայթակղութեան<sup>27</sup> պատճառք<sup>28</sup> իւիք<sup>29</sup> իւիք ի ձերդ կողմանէ, բառնալ՝ եթէ Հաճոյ թուեացի, յորժամ դիցուք առաջի ի վկայութենէ սուրբ զրոց առ ի յողջացուցանե-

1 անբարժելի I A  
 2 գայթակղելի bt  
 3 գայթակղութեան b  
 4 ողջամտութեամբ W, ողջմիւրտութեամբ b  
 5 նայիցին Wb  
 6 մտացութեանց b  
 7 ժողովելոցն W  
 8 ուղիղի b  
 9 Աստղիկով նշուած այս հատուածը լրացուել է Թ խմբի AWbt ձեռագրերով:  
 10 զնոյն ACDENZ  
 11 բառնալ + որդայթութեան + N  
 12 գայթակղութեան ACDEQZ, I N  
 13 այս NQ  
 14 գայթակղելոցն ACDENQZW, գայթակղելոցն Z

15 ովմանց A  
 16 իւրաքանչիւրքն CN  
 17 Թափանէ ACDENWZ, Թուփանէ B, Թեփանէ Q  
 18 ժողոյն D  
 19 սովորութեան ABCDNQZ  
 20 աստուածային C  
 21 աւանդութիւն ABDEQZ, յաւանդութիւն N  
 22 յաստուածայինսն WZ  
 23 սիրոյն + գորս + CN  
 24 դաւանութիւն ABCDENWZ  
 25 մէնջ I մէջ N  
 26 եպիսկոպոսաց NQ, յեպիսկոպոսաց W  
 27 գայթակղութեան ABCDEQZ  
 28 պատճառ N  
 29 I իւիք CN

լոյ<sup>1</sup> զմիտս մեր հիւանդացեալս յայնոսիկ, նմանելով ձեր մեծին Պաւղոսի, զի զոր յաստուածայնոցն արինաց<sup>2</sup> ունէր հրամանաւ կերակուր՝ ի բաց լուծանէր ասելով. «Ո՛չ կերայց միս յաւիտեան, զի մի

զեղբայրն իմ գայթակղեցուցից<sup>3</sup>»<sup>7</sup>. Թող թէ զարգելեալսն յաւրինաց եւ ի կանոնաց:

<sup>7</sup> Ողջ լիւր աւծեալդ Աստուծոյ<sup>4</sup>, յաղթող<sup>5</sup> եղեալ հակառակամարտիցն՝ զաւրութեամբ ճշմարիտ աւծելոյն Յիսուսի<sup>6</sup>:

1 ողջացուցանելոյ N

2 արիմացն DE

3 գայթակղեցուցից ABCDENQ;Z

7 I: Կ: Դ: Զ: Ը: Թ: Կ: Լ: 13

4 յաստուծոյ Q<sub>3</sub>

5 յաղթող Q<sub>23</sub>

6 Իրիստոսի Լ յիսուսի Q<sub>3</sub>



### ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ<sup>1</sup> ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՊԱՏՐԻԱՐՔՆ<sup>2</sup> ՀՈՌՈՄՈՑ<sup>3</sup>

1 Սուրբ եւ ընդհանրական<sup>1</sup> կաթողիկէ<sup>5</sup> եկեղեցւոյ<sup>6</sup> թագաւորական քաղաքին Կոստանդինուպուլսի<sup>7</sup> պատրիարքի<sup>8</sup> տէր Միխայէլի<sup>9</sup> ողջ լինել<sup>10</sup> ի Քրիստոս. ի նուաստէ<sup>11</sup> ծառայից<sup>12</sup> Քրիստոսի եւ ողորմութեամբ եւ կամաւք նորին կաթողիկոսէ<sup>13</sup> Հայոց Ներսիսէ<sup>14</sup>, յաթոռակալէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

2 Ի<sup>15</sup> մաւրդ<sup>16</sup> իմաստութեան ստեանց ընկալաք զցաւղ կաթին տղայական մտաց մեր յարբումն, փոքր բանիւ եւ մեծագոյն իմաստութեամբ պարունակեալ ընդ գրով, զոր արբեալ զմայլեցաք<sup>17</sup> ուրախութեամբ, որպէս եւ<sup>18</sup> գինեաւ Հոգւոյն ի վերնատունն. եւ յիշելով զուզնաքեայ այսու ճաշակմամբ զերբեմն մայրենի գրկացդ զգուռումն<sup>19</sup> սիրոյ եւ զփափկութեան<sup>20</sup> կերակուրս իմաստից Հոգւոց<sup>21</sup> եղու<sup>22</sup> եւ մեղու, զոր բղխէր աւեանաց<sup>23</sup> երկիրդ վերին

աշխարհին տիպ, խանդաղատեցաւ<sup>24</sup>, որ ի մեզ տիրականիս մասն յիշողական զաւրութիւն, գնոյն առ ի յագումն դարձեալ փափաքելով<sup>25</sup> ստանալ<sup>26</sup> ճաշակ զուարթութեան եւ քաղցրութեան. որպէս երբեմն յայտոսիկ իրս<sup>27</sup> լինելով Դաւիթ ասէր առ Աստուած. «Յիշեցի ես զաւուրսն<sup>28</sup> զաւաջինս<sup>29</sup>»<sup>30</sup>. յայտ է՝ զի գաստուածատունկ<sup>30</sup> դրախտին զվայելս<sup>31</sup> եւ զան ուտիրական ոգւոյ<sup>32</sup> փափկութիւնսն: 3 Եւ մեր ըստ նմին յիշելով զտուեալն<sup>33</sup> յԱստուծոյ<sup>34</sup> խաղաղութիւն եկեղեցւոյ<sup>35</sup> յաւուրս<sup>36</sup> Հարցն մերոց սրբոց, ըղձանամք<sup>37</sup> գնոյն վերստին տեսանել եւ կրել, մինչ մի Հոգի Հեղեալ էր<sup>38</sup> յամենեսին<sup>39</sup> ի վերուստ, եւ ո՛չ յայլ եւ յայլս բաժանեալ յաւտարտին Հոգւոց մոլորութեանց<sup>40</sup>, ոմն ասելով Պաւղոսի, եւ ոմն Ապաւղոսի, կամ Կեփայի, կամ այլ ուրուք ի պաշտաւնէից, այլ Քրիստոսի ամենեքեան:

4 Զայտոսիկ ողջախոհութեան բոց, որ ի մեզ փոքու նշուլիւք<sup>41</sup> վառումն, բորբոքեաց աստուածային բանից ձեր Հոգեւո-

1 մերսւսի W;  
2 պր՛գն W;  
3 ի թուղթ ... հոռոմոց ABCDENZ, կոստանդինուպուլսոյ ի հոռոմոց W;  
4 ընթիանրական BW  
5 կաթողիկէ BDEWZ  
6 եկեղեցոյ N  
7 կոստանդինուպուլսի A, կոստանդինուպուլսու CN, կոստանդինուպուլսի Q;  
8 պատրիարքի AQ; W  
9 միխայելի C, միխայիլի Q;  
10 լ լեր B, լինիլ Q;  
11 նուաստ BCDEQ; Z  
12 + մերսիսէ + ծառայի CN, ծառայէ Q;  
13 կաթողիկոսէ Q;  
14 Ներսիսէ, ABCDENWZ  
15 լ E  
16 եկեղեցոյ լ մաւրդ N  
17 զմայլեցաք Z  
18 որք լ եւ WZ, լ C  
19 զբզվումն AW  
20 զփափկութեանն W  
21 հոգոց CN  
22 եղոյ Q, իւղոյ լ Q;  
23 աւետեաց W

24 խանդաղատեցաւ W  
25 փափագելով ABCN  
26 ըստանալ Q;  
27 կիրս լ իրս A, գիրս W;  
28 զաւուրս N  
29 գառաջիսն B, գառաջիս CN  
- Ուղչ. ճիւղ 5  
30 գաստուածատունկ Z  
31 վայելս B  
32 ոգոց CN  
33 զտուեալն B  
34 աստուծոյ N  
35 եկեղեցոյ N  
36 յաւուր W  
37 ըղձամք Q;  
38 լ հեղեալ էր B  
39 յամենեսին BW, յամենեսան CNQ;  
40 լ մոլորութեանց BC  
41 մշուղիւք Q, մշուղիւք CN

բական հողմն<sup>1</sup>, որպէս դարբնական բքովք<sup>2</sup> զկայծակունս արծարծանելով<sup>3</sup>, ի գործ պատրաստեն<sup>4</sup> ենթակային<sup>5</sup> իրի լինել պիտանացու<sup>6</sup>. որում եւ մերս կամք եւ յաւժարութիւն ոչ խիստ եւ անգործ եւ ոչ առ ի յոյժ տաժանումն հնարագիտաց արհեստին, այլ դիւրալուր եւ հաւանական ճշմարտութեանն բանի<sup>7</sup> ի<sup>8</sup> ճշմարտասիրաց<sup>9</sup>, ըստ կուսին երկրորդի ունկնդրութեան<sup>10</sup> բարւոյն<sup>11</sup>, յորմէ կեանք, եւ ո՛չ ըստ կուսին առաջնոյ հաւանութեան<sup>12</sup> չարին, որով մահ: 5 Քանզի սիրելի էր մեր այս խաղաղութիւն ի մանկութենէ<sup>13</sup>, որոյ եւ հասանել ըղձանայաք. մանաւանդ յորժամ տեսանէք ի պատահել միմեանց ձեր եւ մերս իմաստնոց՝ ո՛չ արտաքոյ ուղղափառաց վարդապետացն խաւսելով երկաքանչիւր կողմանցն զբանսն<sup>14</sup>, որոց պիտանացու էր միայն զաւղ կատարմանն սէրն՝ մայրն խաղաղութեան, այլ ոչ ճարտարութիւն բանից ունայնացուցիչ խաչին Քրիստոսի ըստ առաքելոյ: 6 Այլ զայս մեծագոյն իր եւ աստուածային<sup>15</sup> գործ ամբարեալ պահէր յառաջատեսութիւն<sup>16</sup> Աստուծոյ ձերում արժանաւոր սրբութեանդ, զոր եւ ծանոյց իսկ զբաւորականս ձեր բան՝ բազմապատիկս ունելով գովեստ խաղաղութեան<sup>17</sup> յաստուածայնոցն բանից, ո-

րոց եւ բացեալ առ լսողութիւն<sup>18</sup> թովչիդ<sup>19</sup> ճարտարի զականջս սրտից՝ ընկալաք<sup>20</sup> յոգիս, ի նոյն իսկ գործարանի թաքուցեալ<sup>21</sup> զբանս ձեր յոր եւ Դաւիթ յաստուածայինն<sup>22</sup>: 7 Քանզի գիտելի է իմաստնոց, զի ճշմարիտ խաղաղութեանն<sup>23</sup> ոչինչ է զուգահաւասար յէիցս բարեաց. վասն որոյ եւ աւանդեալն եկեղեցւոյ պատուիրան զվերինն քարոզէ միշտ հայցել յԱստուծոյ տալ զխաղաղութիւն երկնային. զսոյն<sup>24</sup> յայտ առնէ եւ տէրունականն, որ յաղագս աղաւթից<sup>25</sup> բան, զալ արքայութեանն Աստուծոյ ի մեզ, որ է տիրապէս խաղաղութիւն, եւ լինել հաճութեան<sup>26</sup> կամաց նորա յերկնաւորքս՝ որպէս եւ յերկնայինսն, յորս է բնաւորեալ ընդ բիւրուց<sup>27</sup> բարեացն ունակութեանց եւ սիրոյ եւ խաղաղութեան պտուղ, որ է յաւէտ եւ անփոփոխելի: 8 Նախ առ երրորդութիւնն սուրբ հրաշափառապէս երից անձանցն<sup>28</sup> մի գոլով կամք մշտենջնաւորարար, որ եւ միով իշխանութեամբ եւ միով տէրութեամբ թագաւորեալ յաւիտեանս. եւ յանեղական երրորդութեանն լուսոյ<sup>29</sup> յեղականացս իջանէ վայր՝ աղբիւրաբար<sup>30</sup> հեղեալ ի նմանէ խաղաղութեանն նշոյլ. առաջին առ անմարմնականաց<sup>31</sup> իննուցն<sup>32</sup> զասուց յերից<sup>33</sup> քահանայապետութեանցն<sup>34</sup> երկնայ-

1 հողմ ABCDENZ  
 2 փոփվ | բոփվ ABCDENWZ  
 3 արծարծելով Q2W  
 \* Է•••յ. ն՛՛Կ 16  
 4 պատրաստէ N  
 5 նիւթակային | ենթակային CN  
 6 պիտանացոյ N  
 7 բանիւ W  
 8 | W  
 9 նշմարտասիրացն Z  
 10 ունկնդրութեանն Z  
 11 բարոյն CN  
 12 հաւանութեանն W  
 13 մանգութեանն CZ  
 14 զբանն Z  
 15 անձայն W  
 16 յառաջատեսութիւնն ABCDENQ25Z  
 17 խաղաղութեանն A

18 լսաւդ C  
 19 թովչիտ Q2  
 20 ընկալաք B  
 21 թագուցեալ BCN  
 22 զանձայինն W  
 23 զխաղաղութիւնն A  
 24 զսոյն W  
 25 յաղթից Q3  
 26 հանութիւն Q3  
 27 բիրոց Q3  
 28 անձանց CN  
 29 լուսոյ + ի + CN  
 30 աղբերաբար Q3  
 31 անմարմնականացն Q3  
 32 իննուցն A, իննուցն Z, իննուցն Q234, իննուց CN  
 33 երից Q3  
 34 քահանայապետութեանցն CN

նոց զանազանութիւնս, եւ ապա ըստ մաւրուացն՝ Ահարովնի<sup>2</sup> իւզոյն իջման աւծութեան՝ յորմէ եւ ի զրապանակս եւ ի զգեստն<sup>3</sup>, որք նիւթականաւ<sup>4</sup> եկեղեցեաւ<sup>5</sup> աննիւթականին<sup>6</sup> հոգւոց ստուգապէս տաճարի Աստուծոյ ընկալան զքահանայապետութիւն. որպէս նախ աւետարանիչքն խաղաղութեան առին յայնմանէ, որ զոգւոց<sup>7</sup> խաղաղութիւնն արկ յերկիր եւ զսուրն հատանող<sup>8</sup> զառ ի չարն միաբանելոց<sup>9</sup>: 9 Նաեւ<sup>10</sup> ինքն իսկ աւծեալն եղեւ խաղաղութիւն մեր ըստ առաքելոյ եւ անուանեցաւ<sup>11</sup>, զմիջնորմն<sup>12</sup> ցանկոյն քակելով եւ ի միութիւն զերկուս բաժանեալս խառնելով<sup>13</sup> զերկնաւորսն եւ զերկրաւորս եւ զորս ի հրէից եւ ի հեթանոսաց եկեղեցի<sup>13</sup>. նման նմին եւ փոքր ինչ նուազ՝ հաւասար յայտոսիկ խաղաղութեան կապակցութիւն տեսանեմք զանուանակրի<sup>14</sup> նորին եւ զաթոռակալի<sup>15</sup> զքրիստոսապսակեալ սուրբ թագաւորիդ զյաւժարութիւն կամաց եւ զփոյթ լինելով զլուխ անկեան<sup>16</sup> ըստ զլիսոյն եկեղեցւոյ<sup>17</sup> երկուց զատուցեալ որմոց միացուցիչ:

10 Հանգոյն մեծի արքայիդ եւ համեմատ նախայաւժար բարեսէր<sup>18</sup> սրտի նորին<sup>19</sup>

եւ զհաւրդ հասարակաց ծանեաք զկամակցութիւն յայս պատճառ հոգեւոր խաղաղութեան, յորմէ առաւել եւս պահանջի. զի նմա մարմնոյ եւ նիւթականաց հաւատացաւ տնտեսութիւն յԱստուծոյ<sup>20</sup>, իսկ ձեզ հոգւոց<sup>21</sup> եւ հոգեւորականաց ոչ միայն տնտեսութիւն՝ այլ եւ դաստիարակութիւն եւ բժշկութիւն. եւ որքան յայտոսիկ ըստ<sup>22</sup> բազմադիմի գործոցն եւ անուանցն գոյ զանազանութիւնք, որ ի<sup>23</sup> քարոզքն խաղաղութեան աշխարհի, զընկալեալ խաղաղութիւնն նախ ձեզ աւանդեցին եւ ձեւք<sup>24</sup> ամենայն եկեղեցեաց Քրիստոսի, որպէս եւ միոյ լուսոյ բազում վառեալ լապտերք: 11 եւ այս մինչեւ արքայութեանն Աստուծոյ ամենեցուն տիրել, զի համարձակ լիցիք ասել յաղագս լուսաւորելոցն<sup>25</sup> ի ձէնջ. «Ահա<sup>26</sup> ես եւ մանկունք<sup>27</sup> իմ զոր ետուր ինձ»<sup>28</sup>:

12 Վասն որոյ ոչ զարմանք վասն աս մեզ սերմանելոյ զբանն խաղաղութեան. նախ՝ յաղագս հարկաւորաբար յանձն եղեալ ձեզ յԱստուծոյ տնտեսութեանդ<sup>28</sup>, որոյ աղագաւ Պաւղոս անվարձ ասէր լինել. երկրորդ՝ վասն արքինաւք հայրաւրէն սիրոյդ ըստ երկնաւորի Հաւրն զթութեանց, զոր եւ մեր ի<sup>29</sup> բարի սերմանողէդ<sup>30</sup> տեսուն Միխայէլի<sup>31</sup> աստուածամերձ պատրիարքէ<sup>32</sup> թագաւորական<sup>33</sup> քաղաքիդ<sup>34</sup> ընկա-

1 մորուացն N  
 2 ահարոնի ABCDEN, ահարոնի Q;  
 3 զգեստն B  
 \* II-ըմ. ճԼ.Գ. 2  
 4 նիւթականին B  
 5 ի եկեղեցեաւ B  
 6 ի աննիւթականին B  
 7 զոգոց N  
 8 հատանող Q;  
 9 միաբանելո B  
 10 նայել C  
 11 տաւանդեալ ի B, անուանեցաւ CQ;  
 12 զմիջնորմ A  
 \* I-ըմ. Բ. 14  
 13 յեկեղեցի Q;  
 14 զանուանակրի ABC  
 15 զյաթոռակալի N  
 16 անգիտն D  
 17 եկեղեցոյ N  
 18 բարիսէր ABWZ

19 նորա C  
 20 աստուծոյ B  
 21 հոգոց Q;  
 22 ի ըստ CN  
 23 եւ անուանցն ... որ ի ի N  
 24 ձեով ի ձեով Q;  
 25 լուսաւորելոյն BCDENQ;  
 26 ահա ապիկ Q;  
 27 մանկունք Z  
 \* I-ըմ. Բ. 18  
 28 տնտեսութեանց Q;  
 29 եւ ի ի N  
 30 սերմանողէդ AB  
 31 միխայիլ ABCDENQ;  
 32 պատրիարքէ BDE  
 33 թագաւորականց Q;  
 34 քաղաքիդ B

լեալ<sup>1</sup> զբան խաղաղութեան, փութասցուք ոչ լինել ճանապարհ կամ ապառաժ եւ փուչ<sup>2</sup> ի կորուսանողաց<sup>3</sup> զսերմն բարւոյն<sup>4</sup>, այլ երկիր բարի եւ պարարտ<sup>5</sup> աւգնութեամբ<sup>6</sup> այնմ, որ տայ սերմն<sup>7</sup> սերմանողաց եւ զհաց բանին կերակուր հոգւոց<sup>8</sup>, եւ տալ պտուղ Աստուծոյ զմի յերիցն գովելեաց: 13 Եւ այս լինի արժանաւոր ձեր եւ որոց ընդ ձեզ սրբոց առ Աստուած պաշտանաւք, որպէս զի ի հանդերձեալ<sup>9</sup> լինել ժողովոյն մերոյ, որ ի Մեծն<sup>10</sup> Հայոց եւ յընդհանուր<sup>11</sup> կողմանց եպիսկոպոսաց<sup>12</sup> եւ վարդապետաց, ինքնին Տէր ըստ խոստացելումն եղիցի ի մէջ<sup>13</sup> զբանն խաղաղու-

թեան տալով ի միտս եւ ի լեզուս ամենեցուն: 14 Զի ոչ մարդկային<sup>14</sup> ախտիւ անազուտ<sup>15</sup> բանակոուութեամբ<sup>16</sup> եւ սնտի յաղթասիրութեամբ, յորմէ ոչ ինչ աւգտեցաւ<sup>17</sup> եկեղեցի այսքան<sup>18</sup> յերկար<sup>19</sup> ժամանակաւ, այլ Հոգւոյն Աստուծոյ խորհրդակցութեամբ խաւսեցին ամենեքեան վասն շինութեան ոգւոց<sup>20</sup>: 15 Եւ որպէս առ մեզ՝ նոյնպէս<sup>21</sup> եղիցի եւ<sup>22</sup> ձերդ հանդիսական ժողով, զի սուրբ սկսեալ խորհրդոյս՝ նովաւ լիցի կատարումն, որով եւ Աստուած փառաւորեսցի յամենայն լեզուս ազգաց յեկեղեցիս արդարոց ի մի միաբանութիւն հաւատոց<sup>23</sup>: 16 Ողջ լեր<sup>24</sup>:

1 ընգալեալ B

2 փուչ I փուչ W

3 կորուսանողացն CN

4 բարոյն CNW, բերոյն I E

5 տ. պարարտ եւ բարի Z

6 օգնականութեամբ Q<sub>5</sub>

7 սերմ CEN

8 հոգոց C,

9 հանդերձ N

10 մեծ ABDENZ

11 յմթիանուր CN, յընդանուր W

12 եպիսկոպոսաց W

13 մէջ I մէջ B, միջի մերում I Q<sub>5</sub>

14 մարդկային W

15 անուզուտ W

16 բանակովութեամբ AW, բանակութեամբ Z

17 աւգտեցաւ CNZ

18 զայսքան CN,

19 երկար Q<sub>5</sub>

20 ոգոց CN, սրբոց I Q<sub>5</sub>

21 սոյնպէս BCDENQ<sub>2</sub>

22 առ I եւ BQ<sub>12</sub>W

23 հաւատոյ N

24 լեր + գլուխ յետ գլխոյն եկեղեցի(ւ ACDENQ<sub>1235</sub>ZW)ոյ + B

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ**

**ԽՈՐԱՆԱՅՆ ԱՔԵՏԱՐԱՆԻՆ**



## ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱԳՆ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

### ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Խորանների մեկնություններից ծաւայով ամենամեծը եւ բովանդակութեամբ ամենահարուստը Ներսէս Շնորհալու մեկնությունն է («Մեկնութիւն խորանացն աւետարանին»), որի բնագիրը կազմելու համար ընտրել ենք 26 ձեռագիր (այդ թւում նաեւ W տպագրուած օրինակը, որը հետագայում իր յօդուածի հետ նոյնութեամբ դրել է Յ. Քիւրդեանը)<sup>1</sup>: Եղած նիւթն էլ թոյլ է տալիս հետեւելու «Մեկնութեան ողիսականին» տարբեր տիպի ձեռագրերում:

Առաջին տիպը պէտք է համարել «ժողովածուները»: Դրանք հիմնականում ԺԳ դարի ձեռագրեր են, գրուած Մեծ Հայքի հիւսիս-արեւելեան գաւառներում: Զարմանալի է, որ մեր իմացած կրկիկեան ոչ մի ձեռագիր չունի սրա ընդօրինակութիւնը: Առաջին ձեռագրում (ա, 1255 թ., Խորանաշատ վանք) մեր բնագիրը յաջորդում է «Հարցմունք եւ պատասխանիք Վանական Վարդապետի» գրուածքին եւ նախորդում «Երանելոյն Աթանասի արհեստագործի հարցմունք եւ պատասխանիք»-ին: Երկրորդում (A, 1274-1280 թթ., Գետիկ, Մահկանաբերդ) մեկնութիւնը յաջորդում է «Սկիզբն Եսայեայ մարգարէին» գրուածքին: Նրան յաջորդում են «Պատճառ թելադրութեան Դ աւետարանացն, թէ որպէս գրեցան եւ յորքան ժամանակս...», որին հետեւում է հատուած Ներսէս Շնորհալու «Մատթէոսի աւետարանի մեկնութիւնից» («Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի...»): Երրորդ ձեռագրում եւս (B, 1280 թ., Դեղձուտ, Մահկանաբերդի գաւառ) մեկնութիւնը գրուած է Ներսէս Շնորհալու Մատթէոսի աւետարանի մեկնութեան հարեւանութեամբ (20բ-31ա, «Ի Մատթէի մեկնութենէն Ներսիսի հայոց վերադիտողի ի խնդրոյն նորին եղբարն Գրիգորիսի՝ առաջին վերադիտողի»), որին յաջորդում են աւետարանիչների այլաբանական մեկնութիւնները, ինչպէս A ձեռագրում: Չնայած դրան, այստեղ մեկնութեան համար որոշակի հեղինակ է նշուած. «Երանելոյն Վարդանի ասացեալ յաղագս խորանաց աւետարանին»: Փ. Անթապեանի կարծիքով, յիշեալ Վարդանը Ներսէս Շնորհալու աշակերտ եւ մեկնիչ Վարդան Հաղբատացի է: Միանգամայն հնարաւոր է, որ Վարդանը իր մեկնութեամբ լրացրած լինէր իր բազմաշխատ ուսուցչի գրած ու կիսատ թողած գործը: Բայց արդեօք նա աւելի մեծ հեղինակութիւն էր, քան Ներսէս Շնորհալին, որ խորանների պատկերման արուեստի այսպիսի համապարփակ տեսութիւն տար: Բոլոր դէպքերում դա մնում է Վարդանի անունը յիշատակող մեզ յայտնի միակ ձեռագիրը: Ոչ ա, ոչ A, ոչ C ձեռագրերը, որոնք ընդօրինակուած են նոյն գաւառում կամ շրջակայքում, որեւէ հեղինակի անուն չեն յիշատակում խորանների մեկնութեան խորագրում:

Փ. Անթապեանը ԺԳ դարի առաջին կէսի չորս նշանաւոր Վարդաններից (Վարդան Արեւելցի, Վարդան Այգեկցի, Վարդան Բարձրաբերդցի, Վարդան Հաղբատացի) կանգ է առնում վերջինի վրայ, քանի որ B ձեռագրում (1280 թ.) «երանելի» մականունը պիտի տրուէր Հաղբատացուն (նա աւելի վաղ էր վախճանուել, քան Արեւելցին): Միւս կողման

1 Յ. Քիւրդեան, Մեկնութիւն խորանաց աւետարանին ասացեալ տետն Ներսէսի Շնորհալոյ («Քաղմակեայ», 3-4, 1973):

այն է, որ Վարդան Արեւելցու լեզուն մատչելի, խօսակցական էր, չնայած նրա շոշափած ամենարագմազան աստուածաբանական հարցերին եւ չնայած նրա վիթխարի համբաւին ու մեծ վարկին Կիլիկիայում եւ Մեծ Հայքում, Կոստանդին կաթողիկոսից եւ Հերթում Ա թագաւորից ստացած արտօնութիւններին: Մինչդեռ Վարդան Հաղբատացին Կիլիկիայում եղած ժամանակ «սերտօրէն համագործակցել է Ներսէս Շնորհալու հետ, վերջինիս խնդրանքով մատենագրական աշխատանքներ էլ է կատարել: Թերեւս եւ յիշեալ մեկնութիւնը նման խնդրանքի արգասիք է»<sup>2</sup>:

Սա արդէն որոշ չափով օգնում է պարզելուն, թէ որ Վարդանն է B ձեռագրում համարուել «երանելի» եւ մեկնութեան հեղինակ: Սակայն որպէսզի կասկած չունենայինք Վարդան Հաղբատացու հեղինակութեան վրայ, նրա մեկնութիւններից առնուազն մի քանիսը պէտք է դիտարկուէր ոճական առումով: Առայժմ այդ հնարաւորութիւնը չունենք<sup>3</sup>, քանի որ նախ պէտք է պարզել, թէ Շնորհալու պատուէրով ինչ մեկնութիւն է գրել Վարդան Հաղբատացին: Գիտենք, որ խորանների սոյն մեկնութիւնը հանդիպում է գրեթէ միշտ Շնորհալու Մատթէոսի աւետարանի մեկնութեան հետ, որը հետագայում շարունակուել է երկու տարբերակով. ա) Արիստակէս գրչի (Շնորհալու աշակերտի)՝ քաղուած լինելով տարբեր հեղինակներից (ինչպէս ասուած է D ձեռագրի մէջ առկայ յիշատակարանում. «Նա աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչաց ի մի յետ տեառն Ներսիսի»): բ) Յովհաննէս Ծործորեցու (W, X)<sup>4</sup>, երբ տնահամարները մեկնուում են հերթականութեամբ, ինչպէս Շնորհալու մօտ:

Իսկ հիմա դիմենք բուն բնագրին: Համեմատաբար միասնական բնագիր ունեն ժԳ դարի ձեռագրերը (aAB): Երբեմն սրանց միանում է նաեւ նոյն դարում բնագործակուած C ձեռագիրը (Հաղբատ)<sup>5</sup>: Իսկ առհասարակ ոչ օրինաչափ շեղումներ տալիս է ամեն մի ձեռագիր, որ կարելի է համարել գրչական շեղում (գիտակցական թէ՛ ակամայ):

Այսպէս. CDEIKLMNOPQRSTVXYZ խումբը սկզբում տալիս է չորս տարբերութիւն (ախորժակաւք փխ կամաւք, բանիս փխ բանիւ, դիմեալ փխ դիմեաց, կամակորութեան փխ կամակորութեամբն), որոնցից մէկը կարելի է համարել իմաստային, միւսները քերականական:

2 Փ. Անթապեան, «Ժ խորանաց» երկու մեկնութիւնների շուրջ («Էջմիածին», Բ-Գ, 1987, էջ 86):

3 Վարդան Հաղբատացին յարգուած անուն է շնորհիւ իր մերձաւորութեան Ներսէս Շնորհալու հետ, որը նրա խնդրանքով մեկնութիւններ է կազմել, շնորհիւ նաեւ իր աշակերտների (Դաւիթ Քորայրեցի, Խաչատուր, որը իր 1195 թ. յիշատակարանում գրում է Վարդան եւ այլն): Վարդան Հաղբատացուն առայժմ վերագրում է մէկ մեկնութիւն. «Դանիէլի գրոց» (տե՛ս Է. Ն. Ակիմեան, Վարդան վրդ. Հաղբատացի, «Հանդէս ամսօրեայ», 1908, թիւ 8, էջ 232-235):

4 W նիշով օգտագործուած է տպագիր օրինակը: X-ը (№ 1279, 1655-ից յետոյ) մեր ձեռագրերից միակն է, որտեղ Շնորհալու՝ Մատթէոսի աւետարանի մեկնութիւնը աւարտել է Յովհաննէս Ծործորեցին: Հետաքրքիր է, որ Ծործորեցու աւարտած՝ Մատթէոսի մեկնութեան ձեռագրեր աւելի շատ են երուսաղէմի Արքայ Յակոբեանց մատենադարանում (№ 719, անթուակիր, № 967, ԺԸ դար եւ այլն) (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Արքայ Յակոբեանց». հտ. երրորդ, երուսաղէմ, 1968, հտ. չորրորդ, 1969, հտ. հինգերորդ, 1979, կազմեց Ն. Եպս. Պողոբեան):

5 Յիշատակարաններից մէկում խնդրում է ներել անյաջող գրչութեան համար. «Ընդ նմին (ստացող եւ գրիչ Բարսեղի – Վ. Դ.) յիշեսցիք եւ գմեղապարտ գրիչս եւ մի մեղադիր լինիք, զի ծեր եմ եւ տկար եւ պակասել ի լուսոյ...» (96թ): Ըստ երեսօթի նախագաղափար օրինակն էլ մի բան չի եղել. «Ողորմեսցի Քրիստոս Աստուած սպասուորի բանիս Բարսեղի եւ մեղաւոր եւ յետին գրչիս Յոհաննիսի. ամեն: Զի եւ յոյժ նեղիմ յարիմակէս, եւ այն զի պակասել ի լուսոյ եւ տկար մարմնով եւ անցեալ գաւուրբի» (202թ, տե՛ս նաեւ «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, կազմեց Ա. Մարտիրոսեան, երեւան, 1984, էջ 522):



Նոյն խումբը այնուհետև հաճախ C-ի բացակայությամբ (առնուազն 18 եւ աւելի ձեռագրեր) չորս-հինգ տարբերութիւն է տալիս (Տեառն փխ Աստուծոյ, չափ փխ ի չափ, գերազանցութեամբ փխ գերազանց բնութեամբ, ձեւացեալ փխ ձեւացելոց): Այստեղ իմաստային տարբերութիւններ չկան:

Ապա նոյն խումբը մի տեղ A ձեռագրի մասնակցութեամբ ունի բացթողումներ. չիք եւ հանդերձ, չիք այսու. նկարեալ փխ նկարեալք. չիք ի սկիզբն աւետարանին. աւետարանացն փխ աւետարանչացն, ընդ որում, երեք տեղ պակասում են բառերը, մի տեղ տարբերութեցուած է, մնացածները քերականական-իմաստային տարբերութիւններ են:

Այնուհետև հանդիպում են իմաստային եւ քերականական շեղումներ, փոփոխակներ. չիք ի վերոյ, մոլորութեանց փխ մոլորութեան, առաքելոյ(ն) փխ առաքելոցն. սարբիանոսացն կամ ընդդիմաբանողացն փխ (ընդդեմ) արիանոսացն, խորանն փխ տաճարն:

Այս մեծ խմբի մէջ (C-ից կամ D-ից սկսած) կայ ձեռագրերի մի կայուն ենթախումբ (MPRUWY), որի մէջ մտնում է տպագրուած տարբերակը (W): Դրանք հիմնականում ժէզարի ձեռագրեր են, որոնց կարող է յարել մնացած ձեռագրերից մէկը կամ մի քանիսը: Ահա այդ խմբի տարբերութեանները. չիք եւ անուշահոտութիւնք, FH-ի հետ՝ յաւետան փխ յաւետիսն, զընչասէրն փխ զընչասէրսն, զոր փխ զոր եւ, սպասաւորութեամբ(ք) փխ տպաւորութեամբ, խաւսեցին (խօսեցին) փխ խաւսին, այնոցիկ փխ այսոցիկ, ի տասն բանս փխ ի բանս, բազմեալ փխ բնակեալ, եթերորդն եւ ութերորդն փխ եաւթ եւ ութերորդ, չիք սեամբք, յայտնեաց փխ յայտնեցի, չիք զոր եւ մարգարէիցն ուսուցանէին, նշանակէ փխ ակնարկէ, թուլութեամբ փխ յուլութեամբ, E-ի մասնակցութեամբ՝ Իսկ երեւալ եւթներորդ խորանն որ փխ Իսկ եւթն եւ ութերորդ խորանն, կապոյտն փխ սեաւն, եւ կարմրին նուաղ[ղ]ութիւն փխ եւ նուաղ կարմիրն, որով եւ Մովսէս փխ յորում Մովսէսն, շինելոյ փխ շինուածոյ, ընդհովանագրեն փխ հովանագրեն, աշակերտս փխ շնորհս, Թամարա, Թախարու եւ Հոութայ փխ Բահարու եւ Թամարայ եւ Հոութայ, որդիք մարգարէիցն փխ դասք մարգարէիցն, Քրիստոսի փխ Տեառն, հոգիս փխ ոգիս, արեցան փխ սրեցան, անձանց փխ շրթանց, կազմեալք փխ պարզեալք, զմիւտորութիւն փխ զմիաբանութիւն, ի կատարման(ն) փխ ի կատար աւարտմանն, չիք եւ զպետութիւնս, զպսակն եկեղեցւոյ փխ զարեգակն եկեղեցւոյ, սակս փխ սակաւ, երեւելեօքս փխ երեւելի արարածովքս:

Այս փոքրիկ խմբի ձեռագրերը (բացի W-ից եւ Y-ից) ընդօրինակուած են Նոր Զուղայում, Բաղէչում, Վանում եւ ունեն հետեւեալ առանձնայատկութիւնները. ա) ոճական-քերականական կանոնարկում եւ յղում. բ) որոշ դէպքերում իմաստի պարզեցում. գ) բացթողումներ. դ) աստուածաշնչեան յղումների բաց թողած հատուածների վերականգնում: Առհասարակ այս (եւ ոչ միայն այս) ձեռագրերում նկատում ենք բնագրի նկատմամբ (նկատի ունենք հնագոյն ձեռագրերը) բանասիրական մօտեցում, քերականական յստակումներ եւ ոճական յղումներ: Բառերի եւ բառակապակցութիւնների մի մասն էլ կարելի է համարել պատահական ակամայ բացթողում: Սակայն, ըստ երեւոյթին, գիտակցաբար է հանուել «զոր եւ մարգարէիցն ուսուցանէին» արտայայտութիւնը, քանի որ նրանից վեր նշուած է, թէ երկրորդ եւ երրորդ խորանները նուիրուած են «զմիջին եւ զվերջին քահանայապետութեանցն», երեք կամարով է, քանի որ «անձնաւորութիւն Երրորդութեան գիտելի էր նոցա, ուսեալք ի սերովբէիցն յերեքսրբեանն», իսկ երբ այս հատուածին աւելացնում է «զոր եւ մարգարէիցն ուսուցանէին», չի հասկացուում, թէ «զոր»-ը ո՞ւմ է վերաբե-

րում միջին եւ վերջին քահանայապետութիւններին<sup>6</sup>, թէ՞ «սերովբեներին» (ըստ Դիոնիսիոս Արիսպագացու ուսմունքի, մարգարէները կարող էին հաղորդակցուել վերջին քահանայապետութեան դասի հետ), թէ՞ բոլորին, որոնց մասին մեզ ուսուցանել են մարգարէները:

Մի այլ տեղ «զընչասէրսն» ձեւի փոխարէն գրուած է «զընչասէրն» եզակի ձեւը, որ յետոյ համապատասխանում է բայական եզակի կոչական ձեւերին (երթ, վաճառեա), «բնակեալ ի լոյսն» հասարակ ձեւի փոխարէն ընտրուած է «բազմեալ ի լոյսն» վսեմ, հանդիսաւոր ձեւը: Երկու հոմանիշներից երբեմն վերցուած է մէկը (օրինակ, «իշխանութիւնս եւ գպետութիւնս» հոմանիշներից վերցուած է «իշխանութիւնս»), այլ դէպքերում ընդունուած է պարզ ձեւը աւելի բարդից («հանելոյ պատարագ» փխ «հանել պատարագ»): Երբեմն վաղակատար բայերը փոխարինուում են ներկայով: Այդ խմբի գրիչները տեղ-տեղ բառերի կամ նախադասութիւնների տեղափոխում են կատարում աւելի գեղեցիկ հնչեղութեան համար: Այս խմբին յարում են Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի № 1250 (1638 թ. առաջ), № 1252 (1635 թ., Զէյթուն), № 6573 (1715 թ., Կ. Պոլիս), № 6492 եւ այլ ձեռագրեր: Կան նաեւ ուշ ձեռագրեր (№№ 4007, 1837, 6575, 5880), որոնք մօտ են մեր կազմած բնագրին:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի Մատենադարանի հաւաքածոյում եւս կան խորանների՝ Ներսէս Ծնորհայու մեկնութիւնը բովանդակող ձեռագրեր: Մենք աչքի ենք անցրել Ն. Պողարեանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» աշխատութեան հատորները: 1620 թ. Կաֆայում ընդօրինակուած Մատթէոսի աւետարանի մեկնութեան (ձեռ. 258) վերնագրում ուղղակի իբրեւ հեղինակ նշուած է Ներսէս Ծնորհային. «Մեկնութիւն խորանաց աւետարանին ասացեալ տեառն Ներսէսի»<sup>6</sup>: 1486 թ. Աւագ վանքում ընդօրինակուած նոյնպիսի ձեռագրում (ձեռ. 283) կարդում ենք «Սակա տասն խորանաց» վերնագիրը, որ յատուկ է այն մեկնութիւններին, որոնք աւարտել է Յովհաննէս Ծործորեցին<sup>7</sup>:

Կա նաեւ 1278 թ. առաջ ընդօրինակուած մի Մատթէոսի մեկնութիւն («ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէի, ի բանից նախաշար վարդապետաց եկեղեցոյ, կարգեալ եւ յաւրինեալ դիւրահաս ընթերցողաց Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի խնդրոյն նորուն եղբար Գրիգորիսի առաջին վերադիտողի հայոց»), որը եւս ունի խորանների մեկնութիւնը (ձեռ. 332): Սրա արժէքը ձեռագրի հնութեան մէջ է, բայց ամսոս որ վայրը յայտնի չէ (1278 թ. հետին ստացողը Բագնայրից է)<sup>8</sup>:

Ձեռագրերում, անկախ նրանց ընդօրինակման ժամանակից, գրութեան այս կարգի զուգահեռ ձեւեր են հանդիպում, հոգեբուխ-հոգեբուղխ-հոգէբուղխ, ցանկեսցես-ցանգեսցես, բոլորից-բոլորիցս, թաքոյց-թագոյց, էհաս-եհաս, հաւատն-հաւատսն, կարօտութեան-կարօտութեանս, փափագեաք-փափաքեաքն, սերովբէական-սրովբէական-սրորբէական, զխրայէլ-զխրայէղ, կաթողիկէ-կաթողիկէ, Կուռնելիոս-Կոռնելիոս, Բահարու-Ռախարու-Ռահարու-Ռախարու, կանաց-կանանց(ն), զՄովսէսի եւ զԱհարոնէ - զՄովսէսի եւ զԱհարո-

6 «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. երկրորդ, կազմեց Ն. եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 43 (ձեռ. 258, էջ 5):

7 Բայց սա, ինչպէս երևում է, աւարտել է Արիստակէսը (էջ 103-104):

8 Նոյն տեղում, էջ 208:

նի, Եմմանուէլին-Էմմանուիլի, զնոցա-զնոցայն, Յովհաննէս-Յովանէս, Թեւաւք-Թեւովք, վերոյ-վերնոյ եւ այլն:

**ՁԵՌԱԳՐԵՐ**

1. a – № 6106: Ժողովածու, 1255 թ.: Խորանշատ վանք: Գրիչ՝ Գրիգորիս: Ստացող Թաղէ, Հայրապետ կրօնաւորք: Գիրը՝ արեւելեան բոլորգիր: Ուշագրաւ են Հ, ձ, պ, չ տառերի գրութիւնները, որոնք տարբեր են կիրիկեան բոլորգրի տառաձեւերից: Այս փոքրագիրը ձեռագիրը (12x8) կրում է «Հարցմունք եւ պատասխանիք Վանական վարդապետի» խորագիրը, ինչպէս եւ նշուած է 219բ էջի յիշատակարանում. «Գրեցաւ Հարց եւ պատասխանիք սուրբ վարդապետին Վանական Խորանշատի, ի թվին ՁԴ (1255), Հրամանաւ բերեմիտ (գուցէ բարեմիտ. – Վ. Ղ.) եւ ընտրեալ երկու եղբարց Թաղէի եւ Հայրապետի, ձեռամբ մեղապարտ[ի]ս Գրիգորիսի, ի վանս Խորանշատի, առ դրան Աստուածամաւր...» («Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, էջ 281):

«Հարց եւ պատասխանիք»-ին յաջորդում է մեկնութիւնը «Յուսով խնամոցն Աստուծոյ մեկնութիւն խորանացն աւետարանին, աւգնեա Հոգի Սուրբ» խորագրով (էջ 220ա-233ա):

233ա էջում «Երանելոյն Աթանասի արհեստակողոսի ասացեալ Հարցմունք եւ պատասխանիք վայելուչ» գրուածքն է բազմաթիւ վկայութիւններով (օրինակ, Եփեսացոց, Բարսեղ, Փիլոն, Դիոնեսիոս, Հիպոդիտոս եւ այլն):

Ուղղագրական իւրայատկութիւններ. սկզբում գրւում է բարոյն, իսկ մի այլ տեղ բարւոյն, զիշատակս փիւ գիշատակս, զարդաւք, զիսրայէղ, գունագուն, զգործքն փիւ զգործսն, բաւընդակեալ, մարտմունք, անվաղճան, Հանճարո, գոանա, ձիթնո, զըտըտպատեսակք, մի տեղ՝ եաթներորդ, մի այլ տեղ՝ յեթներորդ եւ այլն:

2. A – № 5197: Ժողովածու: 1274-1280 թթ.: Գետիկ (Սահկանաբերդ): Գրիչներ՝ Գրիգոր, Ծմաւոն: Ստացողներ՝ Թամթի Խաթուն, Սարգիս վարդապետ: Ձեռագրի բովանդակած մի շարք երկերից յիշատակարանում նշուած է Տօնապատճառը: Սարգիս վարդապետը մատենան ընդօրինակել է տուել ի ժամանակի «նետողաց, ձիակթաց կաթնակերաց» (Արաղախանի ժամանակ), ընդ որում «զկարգ ասացուածոցն յիմ (Սարգիսի – Վ. Ղ.) սնեալ միայնարանին, ի Գետիկ, ի թուին Հայոց ՁԻԳ (1274) եւ զՊատճառ տօնից ի Թառակին, ձեռամբ կուսակրօն Գրիգոր քահանայի, թուին ՁԻԹ (1280)...» (էջ 211 բ) («Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, էջ 496):

«Մեկնութիւն խորանաց աւետարանին» գրուածքին (էջ 288բ-298բ) նախորդում է «Ակիզբն Եսայեայ մարգարէի» (էջ 277ա), յաջորդում է «Պատճառ թելադրութեան Դ աւետարանացն, թէ որպէս գրեացն եւ յորքան ժամանակ եւ թէ որպիսի աւրինակաւք յառաջինսն խորհուրդ սոցա երկնէր եւ գայր...» (էջ 298բ): Ակիզբը «Յարեւելեայս ասի տնկեալ զգրախտն ուստի եւ աղբիւր ելանէր գետահետեալ յորդիւք, յորմէ եւ Դ չորս առաջս բաժանին...», էջ 302ա – «Մարկոս եգիպտացոցն քարոզեաց զիւր աւետարանն, քանզի անդ ընկալաւ ի սրբոյն Պետրոսէ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան եւ ի նմին եղեւ կատարումն կենաց նորայ, ուր եւ գետն էր երկրորդ, գոչէ Գեհոն ունի իշխանութիւն ի վերայ վաստակոց...»: էջ 303բ – «Ղուկաս աւետարանս երրորդն է ըստ կարգի աւետարանչացն եւ Հաւաստի գետոյն որ ի չորիցն բաժանի, որոյ անունն կոչի Տիգրիս, որ գնա դէմ Հան-

դիման Ասորեստանեայց...»: էջ 306ա – «Յաղագս աւետարանին Յովհաննու»: Այստեղ խօսուում է եփրատ գետի խորհուրդի մասին: էջ 315բ – «Բնութիւնք արարածոց իմանալեաց եւ զգալեաց...»:

Կան եւ բազմաթիւ նիւթեր, որոնցից 321ա էջում հատուած Շնորհալու Մատթէոսի աւետարանի մեկնութիւնից. սկիզբը «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդոյ Դաւթի...»:

Գրութեան իւրայատկութիւններ. ազգաց փխ յազգաց, Իսրայէղն, ընչողի, դեղովք, գունազուն, բաւանդակն, մրտմունս, նկարել փխ նկարեալ, եղջերք, սկայական, Սինեայ փխ Սինայ:

3. B – № 5254: Ժողովածու: 1280 թ.: Դեղձուտի վանք (Մահկանաբերդ): Գրիչներ՝ Աւետիս, Գէորգ քահանայ: Ստացող՝ Գէորգ քահանայ: Արեւելեան բոլորգիր:

էջ 1ա-6բ «Սրբոյն Ներսիսի Լամբրաւնեցոյ Տարսոնի եպիսկոպոսի յԱռակաց մեկնութենէ...», էջ 6բ-17բ՝ «Մեկնութիւն Եսայայ մարգարէի», էջ 17բ-20բ՝ «Նախերգան երկոտասան մարգարէիցն», էջ 20բ-31ա՝ «Ի Մատթէի մեկնութենէն Ներսիսի հայոց վերադիտողի ի խնդրոյն նորին եղբաւրն Գրիգորիսի առաջին վերադիտողի», էջ 31բ-44բ՝ «Պատճառ աւետարանին Յովհաննու», էջ 45ա-46բ՝ «Ղուկասու աւետարանս երրորդ է ըստ կարգի աւետարանչաց եւ հաւաստէ գետոյն, որ ի չորիցն բաց անի, որոյ անուն կոչի Տիգրիս, որ գնայ ի դէմ յանդիման Ասորեստանի, քանզի անդ առ սկիզբն քարոզութեան աւետարանին, ի ձեռս Պաղոսի առաքելոյ...», էջ 46բ-54բ՝ «Երանելոյն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապտի ասացեալ յաղագս խորանաց աւետարանին», որից յետոյ զալիս է յիշատակարան եւ խորագիր այլ թանաքով եւ այլ ձեռագրով. «Վասն Յակոբա հաւրն Յովսէփու, որ կոչեցաւ այր Մարիամու...» (էջ 54բ...) եւ այլն:

Սա խորանների սոյն մեկնութեան միակ օրինակն է, որտեղ առանց երկմտութեան այն վերագրուած է Վարդանին (հաւանաբար Հաղբատեցուն, որ Շնորհալու աշակերտն էր եւ մեկնիչ, ինչպէս ենթադրում է Փ. Անթարեանը):

54բ էջի յիշատակարանում յիշատակում են Գէորգ գրիչը եւ ստացողի «Հոգեւոր» եղբայրներ Վահրամը եւ Ստեփանոսը, որոնք տուել էին օրինակ գրչին ընդօրինակելու համար («Քանզի մինչ ցայսր վայր զաւրինակն սոքայ շնորհեցին...»), այսինքն՝ ներառեալ խորանների սոյն մեկնութիւնը: Թերեւս ձեռագիրը Այրարատ գաւառից ընդօրինակման է բերուել Մահկանաբերդի Դեղձուտ վանքը: 54բ էջից իրօք փոխուում է գրչութիւնը: Յիշատակարանը բերում ենք լրիւ իր շահեկանութեան պատճառով. «Որք աւգտիք ի սմանէ, զՀոգեւոր եղբարքս իմ զՎահրամ եւ զՍտեփանոս յաղաւթս յիշեցէք, քանզի մինչ ցայսր վայր զաւրինակն սոքայ շնորհեցին, եւ ոչ միայն այս, այլեւ պանդխտութեանս իմոյ մխիթարիչք էին Հոգեւոր եւ մարմնաւոր, քանզի ի միում խցի պանդխտանեաք, որ եւ Քրիստոս հատուցէ զվարձս: Եւ յայսմ աւուր գնալով սոցա յերկիրն իւրեանց, յԱյրարատեան գաւառն, տրտմութիւն հասուցին ինձ զիս միայն թողլով: ... Եւ զիս, Գէորգ որդի Պաքուտաթոռին, հզա[ւ]րայ յերկրէն Խաչինոյ, ի մեծահոգակ քաւարանէն Գանձասարայ, որ մակացու էի յերկիրս Մահկանաբերդոյ, ի վանս Դեղձուտի, առ ոտս Առաքել վարդապետի, յաղաւթս յիշեսջիք: Ի թիվս Ձիթ (1280) աւգոստոսի Ժ (10) գրեցաւ» («ԺԳ դարի յիշատակարաններ», էջ 509):

Այս ձեռագրում Ներսէս Շնորհալու Մատթէոսի աւետարանի մեկնութիւնը գրուած է «Խորանների մեկնութեան» հարեւանութեամբ, կարծես նրանից անկախ մի գործ: Աւետարանի մեկնութեան ձեռագրում բերուած հատուածը (հաւանաբար մեկնութեան հնագոյն

օրինակներից) գրուած է մինչեւ Մատթէոսի աւետարանի գլուխ Ա, 18 հատուածի մեկնութիւնը եւ միայն ուղղագրական ու քերականական տարբերութիւններ ունի տպագիր օրինակից (տե՛ս «Մեկնութիւն սուրբ աւետարանին որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալուոյ...», Կ. Պօլիս, 1825, էջ 26-27):

Գրութեան իւրայատկութիւններ. ո-ով աւարտուող բառերից յետոյ չկայ յ կիսաձայնը: Յաճախ անցեալ կատարեալի եաց մասնիկի փոխարէն եց (պտղաբերեց, աւետեց), մի այլ տեղ խաչելն փխ խաչեալն: Այլ իւրայատկութիւններ՝ ըմբէ, զանվաղջան, զոյգք զոյգք փխ զոյգ զոյգ, Մեկքիսեղի, Մովսիսիքն եւ այլն:

4. C – № 1324: Ժողովածու: 1281 թ.: Հաղպատ: Գրիչ՝ Յոհան, Բարսէղ, Աբրահամ: «Նորանների մեկնութեանը» նախորդում է «Յառակաց Սողոմոնի»: էջ 289բ՝ «Մեկն. աւետարանին խորանացն»: 294ա էջում մեկնութեան աւարտն ունի հետեւեալ տեսքը. «...Հոգին ձերաւք եւ մերաւք երախտաւորաւք, կենդանաւք եւ մեռելաւք մասին արդարոցն արժանաւորեալք, վասն որո սասցաւ մեկնութիւն ժ խորանացն, զոր կարգեալ են առաջին հարքն...», որի շարունակութիւնը արդէն մեկնութեան հետ կապ չունի («...ժամ է արդ մտանել ի բնարանութիւն աւետարանին մթութեան, որոյ անուն թարգմանի երգ կենաց, եւ, յիրաւի, վասնզի ընկալեալ զՀոգին Սուրբ ի վերնատանն ընդ առա(յ)քեալսն, կենդանացաւ Հոգով եւ զնոյն կենդանութեան աղբիւրն բխեաց ի հիւանդ եւ ի մեռեալ բնութիւնս մեր եւ զոր քարոզեաց զնոյն եւ գրով աւանդեաց...»: էջ 294բ՝ Սաղմոսաց մեկնութիւն («ի սաղմոսն որ ասէ ասաց Տէր ցՏէր իմ նիստ ընդ աջմէ...»):

Բարսեղը, որը գրիչներից մէկն է եւ ստացողը, իր տարբեր յիշատակարաններում խնդրում է ներող լինել անյաջող գրչութեան համար. «Աստանաւր յիշեսցի ի բարի ամենագով եղբայրս Բարսեղ, որ ետ գրել հալալ արդեամբք իւրով: Ընդ նմին յիշեսցիք եւ զմեղապարտ գրիչս եւ մի մեղադիր լինիք, զի ձեր եւ տկար եւ պակասել ի լուսոյ...» (էջ 96բ): Ըստ երեւոյթին օրինակն էլ մի բան չի եղել. «Ողորմեսցի Քրիստոս Աստուած սպասաւորի բանիս Բարսեղի եւ մեղաւոր եւ յետին գրչիս Յոհանիսի. ամեն, զի եւ յոյժ նեղիմ յաւրինակէս եւ այն զի պակասեալ ի լուսոյ եւ տկար մարմնով եւ անցեալ զաւուրբք» (էջ 202բ): «...Եւ է, որ գրեցաւ իմով ձեռամբ խոշոր եւ անյարմար, եւ է որ ի ձեռս այլոց ի հալալ արդեանց իմոց ի գերահռչակ ուխտս Հաղբատայ, յորում եղէ արժանի կոչիլ սպասաւոր բանի, յաղագս որոյ ծաղկաքաղ արարի սագս իմո պիտոյից, նայել զաւակ հոգեւոր զկնի ելից մեր ի կենաց անտի...» («Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դ., էջ 522-523):

5. D – № 2610: Ներսէս Շնորհալի, Մեկնութիւնք Մատթէոսի: 1363 թ.: Խիզան: Գրիչ՝ Յովհաննէս Կրօնաւոր, Պետրոս Կրօնաւոր: Ստացող՝ Յովհաննէս Բաբունապետ, կաղմող՝ Ստեփաննոս:

Ըստ յիշատակարանի, «զՊետրոս... յառաջոյ եւ յետոյ գրեաց եւ աւգնական եղել մեզ (Յովհաննէսին – Վ. Ղ.) վասն անկարգութեանն...» (էջ 259ա-259բ): Զեռագիրն ընդօրինակուել է «ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Գամաղիէլի, որ կայ առընթեր Խիզան քաղաքիս...»: Գրիչը յիշատակարանը աւարտում է հետեւեալ կենդանի տողերով. «Դարձեալ կրկին յերես անկեալ աղաչեմ խոշորութեանն եւ սխալանացն անմեղադիր լինել, զի յոյժ վշտալից էր տեղս ի մծեխից եւ ի ճանճից եւ յայլոց, որ սոցին նմանէ: ԹՎ. ՊԺԲ (1363)-երորդի»: Միւս կողմից էլ ձեռագիրը գրուել է «ի նուրբ եւ ի նեղ ժամանակի, յորում գերին եւ աւար լինեն ամենայն ազգք քրիստոնէից..., եւ ի տառապանս եւ ի տարակուսանս կայեաք ամենեքեան» (էջ 259բ) («ԺԴ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 459):

258բ էջում բնագրի աւարտից յետոյ կայ հետաքրքիր մի գրութիւն-յիշատակարան, ընդօրինակուած մայր օրինակից. «զԱրիստագէս վարդապետ եւ զգովեալ աշակերտ նորա զՆփրէմ յիշեալիք ի Քրիստոս, զի նա աշխատեալ ժողովեաց զբանսն մեկնչաց ի մի յետեանն Ներսէսի: Յաւրինակն այսչափ է յիշատակարան Արիստակէսի» (258բ)<sup>9</sup>:

1ա էջում բոլորովին տարբեր բոլորգրով կան հետեւեալ գրառումները. «ԶՎերգիլիոսի, որ ասէ. յերկից միութենէն ի մի տեսաւորք եւ յերկից աներեւութիցն ոչ պակասի: Եւ Սիբիղայ կին էր եւ գրեաց իւր ի շարս պատճէնի, վասն խաչին ասելով երկցս երանեալս ի այտ (ա՞յր – Վ. Ղ.), քանզի աւծեալն տարած է զբազուկս իւր ի վեր[ա] քո եւ նախ գուշակեաց զխորհուրդ Սուրբ Երրորդութեան եւ միւսն զչարչարանս Քրիստոսի»:

1բ-2բ էջերում տրուած են ԴԺ (410) կանոնների աղիւսակները:

3ա-10ա էջերում խորանների մեկնութիւնն է երկու սիւնակով, վերնագիրը «Մեկնութիւն Մատթէ[ոսի] աւետ», սկսելով «Մատեանք աստուածայինք եւ հոգեբուխ վարդապետութիւն իմաստից» բառերով:

10ա-12բ էջերում «Յեկեղեցական պատմութենէ» վերտառութեամբ գրուածքն է՝ սկսելով «Առաքեալքն էին ԲԺ եւ այլ աշակերտք երկոտասանից ՀԲ եւ այլք բազումք, բայց սակայն յամենայն առաքելոց անտի Տեառն մերոյ պատմութիւն գրեալ Մատթէոս եւ Յոհաննէս միայն թողին մեզ...»:

12բ էջում նոր վերնագիր է. «Ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէոսի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ կարգեալ եւ յաւրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբայր Գրիգորիսի վերադիտողի Հայոց»: Այն սկսում է. «Սիրոյ զաւրութիւն գերագանց է, քան զբնութիւն...» բառերով եւ աւարտում «եւ որ իցեն առաջին դուռն» բառերով<sup>10</sup>: 17բ էջում միանգամից սկսում է «Գիրք լինելո որդո Դաւթի, որդո Աբրահամու» փխ տպագրուածի «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու»: Այնուհետեւ շարունակում է մեկնութիւնը մինչեւ Ե գլուխը (ինչպէս նշուած է տպագրուած Մատթէոսի մեկնութեան մէջ):

Մատթ. Ե 18-ից յետոյ հրատարակուած մեկնութեան մէջ սկսում է Յովհաննէս Երզնկացու (Ծործորեցի) մեկնութիւնը<sup>11</sup>, որի որոշ նախադասութիւններ կարող են համընկնել Արիստակէսի մեկնութեան հետ (այն էլ սկզբում). «Իսկ յովտ ըստ յունականին է ձայն եւ առ մերս զիր թարգմանի եւ որ փոքր գրախեցի պարտ է կատարել, զոր ինքն իսկ ամենայն հաւաստեալ արար եւ կատարեաց» (էջ 8ա, տող 23): Այնուհետեւ Երզնկացու եւ Արիստակէսի բնագրերը շեղում են:

Գրութեան իւրայատկութիւններ. բարոյն, փառսն, սեփհականս, բոցեղինեաւ, նկարիւք, սգայութեանց, ցանգեսցես, երանկ, սգալի, աշտիճանս, ծաղկի, ծաղկէ, զնոցայն եւ այլն:

6. Ե – № 2523: Ժողովածու: ԺԴ-ԺԵ դդ. (1425 թ. առաջ): Գրիչ՝ Գրիգորիս: Կազմող՝ Սարգիս քահանայ:

9 Նման ձեռագրերի մասին (օր. Մատ. – 1253, 1590թ., Մալաթիա) տեղեկութիւններ բերուած են Յ. Ամասեանի մօտ (Ամասեան, Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԷ դդ., հ. Բ, էջ 773-775): Մեր ձեռագիրը Շնորհալու աշակերտ Արիստակէս մեկնիչի յիշատակարանով աւելի էին է:

10 Տե՛ս Ամասեան, Հայկական մատենագիտութիւն, հ. Բ, էջ 773-775:

11 Հրատարակուած բնագրում. «Իսկ յովտ ըստ յունականին է ձայն, եւ առ մեր զիր բարգմանի, քանզի որ փոքր գրախեցի է, ամենարն է, քէ անկատար մնացէ մինչ յամեցանկն երկնի եւ երկրի...» («Մեկնութիւն սուրբ աւետարանին, որ ըստ Մատթէոսի...», էջ 108):

Ձեռագիրը բաւական խունացած է ու դժուարընթեռնելի: 157ա էջում աւարտում է վանական վարդապետի «Հարցմունքը» եւ սկսում «Տեառն Յոհաննու Ոսկերերանոյ Կոստանդինու եպիսկոպոսի պատճառ հռոմայեցոց թղթոյն Պօղոսի առաքելոյն»: էջ 164ա՝ «Պատճառ հռոմայեցոց թղթոյն Պօղոսի առաքելոյն», էջ 172ա՝ «Յոհաննու Ոսկերերանի Պատճառ թղթին զաղատացւոց», էջ 176բ՝ «Պատճառ թղթոյն Պ[օղոսի] առ Հերբայեցիսն», էջ 184ա՝ «Թեսաղովնիկ: Ա թուղթ», էջ 190ա-197բ՝ «Մեկնութիւն խորանաց աւետարանին», 197բ էջում սկսում է «Պատճառ եւ թելադրութիւն չորից աւետարանացն...», ապա թերթերը կտրուած են եւ 198ա էջից ձեռագիրը փոխւում է եւ սկսում «Ղուկասի աւետարանի մեկնութիւնը», իսկ 222ա էջում գրչի յիշատակարանն է. «Թողութիւն մեղաց խնդրեա ի Քրիստոսէ սակաւ գծաւղիս Գրիգորիսի մեղապարտի...», 222բ էջում կազմելու տարեթիւր. «Ի Հիզան քաղաք ի թուական ՊՀԴ»<sup>12</sup>. 223ա էջում մի այլ ձեռագրով եղիչ էի «Ի յարութիւնն Ղազարու»:

Գրութեան իւրայատկութիւններ. վայելչութեան, սեփականս, սերմանեալն, ըմբէ, բաւանդակն, աշտիճանս, Կուռնելիոս, ամենեքումբք, մահուն, Սինեա եւ այլն:

7. F – № 9432: Աւետարան: 1437 թ.: Խղաթ (Խլաթ): Գրիչ, ծաղկող, կազմող՝ Աստուածատուր: Ստացող՝ Եւատ ճգնաւոր: Ձեռագիրն ընդօրինակուած է «ընդ խորանեալ ԺԱ խորանացս եւ սուրբ Գէորգ զաւրափարի, ի Խղաթ մայրաքաղաքի, ի հայրապետութեան տեառն Կոստանդինեա ընդհանուր կաթողիկոսի...»<sup>13</sup>: Շնորհալու բնագիրն ընդգրկում է 1ա-3ա էջերը, վերնագիր չունի, սկսում է «Արդ առաջին խորանն...» բառերից մինչեւ «Եւ այսմ տասներորդ խորանն...», որին հետեւում են տերունական նկարաշարը եւ խորանապատկերները:

Գրութեան իւրայատկութիւններ. սգալի, հոյիւն փխ խոյիւն, նախապետքն, հնկակս եւ այլն:

8. G – № 4419: Ժողովածու: 1449 թ.: Գրիչ, ստացող՝ Ալեքսանոս արեղայ: Յիշատակարանը հոչակում է. «...Արդ գրեցաւ սուրբ աւետարանի քաղուածոյս Մատթէոս զլիսին յերկիրս Եղեգե[ա]յց, ի վանս Հերմոնի, ընդ հովանեալ սուրբ Լուսաւորչիս եւ սուրբ նշանացս, ձեռամբ... փցուն եւ անյարմար գրչի Ալեքսանոս սուտանուն արեղայի... ի թուականութեան հայոց ՊՂԸ (1449)», երբ «ազգ անաւրինաց զրկեն զազգս հայոց եւ քահանայից ի յընչից իւրոց եւ դատեն անողորմ... Այլ եւ է (7) տետրն գրած էր առաջ, ի զատ ի առաջին մին տետրէն, որ խորանաց մեկնութիւն է...»<sup>14</sup> (էջ 288բ-289ա): Խորանների մեկնութիւնից անմիջապէս յետոյ գրչի յիշատակարանն է, որ չկայ ակադ. Խաչիկեանի «յիշատակարաններում», իբրեւ աւելորդ. «Ձտառապեալ եւ զմեղապարտ գրիչս զԱլեքսանոս արեղա անուամբ եւ ոչ զործով, ազաչեմ յիչել ի տէր եւ զծնաւդսն իմ զհայրն Մկրտիչ Մուղտասի եւ զմայրն Խոնդիկ...» (էջ 7ա): Ձեռագիրը քայքայուած տեսք ունի, յատկապէս խունացած են կարմիր գրերը:

Ձեռագիրը յատկապէս քայքայուած է խորանների մեկնութեան (էջ 2ա-7ա) հատուածում, ասես մկնակեր եւ խոնաւակեր. մինչեւ 5-րդ թերթի վերին մասերը պլոկուած ու ծակծկուած են, վերնագիրն հազիւ է ընթերցւում «Մեկնութիւն խորանոց»:

12 «Փն դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն առաջին, էջ 340: Նոյն էջի ծանօթութեան մէջ նշում է, որ ձեռագիրն ընդօրինակուած է ԺԴ դ. կէսերին, պահպանուել է գրչի անունը «Գրիգորիս մեղապարտ»:

13 Նոյն տեղում, էջ 472: Ձեռագրի մանրանկարչական արուեստի մասին տե՛ս Յակոբեան, Վասպուրականի մանրանկարչութիւնը, գիրք Բ, էջ 163, էջ 81-82:

14 Նոյն տեղում, էջ 638:

Սովորաբար գրուում է բարոյն, հոգոյն, եկեղեցոյ եւ այլն: Այլ իւրայատկութիւններ սեփհական, խորանքս, չորս, կեա փխ կայ, զսգալի եւ այլն: Կան որոշ ուղղումներ նոտր-գիրով 5ա էջում՝ լրացնելով բնագրի որոշ բացթողումները:

9. H – № 8268: Ժողովածու: ԺԳ, ԺԵ դդ.: Գրիչ՝ Չարուխ սարկաւազ (Ա), ստացող՝ Ամիր Զաքէ (Ա): Բոլորգիր: Յիշատակարաններից. «Սոցին բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեայ ստացողի սորայ Ամիրզաքէ եւ ծնողաց իւրոց պարոն Հեթումին... եւ անիմաստ գրչիս Չարուխիս եւ մղտեսի միայնակեցին, որ մեզ շատ իմաստութիւն խրատ երես...» (էջ 43ա): 72բ էջի յիշատակարանը յաջորդում է «Վարք սրբոյն Սրապիոնի» գրուածքին, եւ այն է աւելանում, որ թողութիւն տրուի նաեւ «զՄղտեսի միայնակեցն, որ աշխատեցաւ եւ աւրինակ եբեր...»: Ուրեմն մինչեւ 97 թերթը կարելի է համարել ԺԳ դ. գրչութիւն՝ արեւելեան բոլորգրով: Այնուհետեւ հանդիպում են տարբեր գրեր ու գրուածքներ: 144ա-149բ էջերում մեր բնագիրն է կանոնաւոր հաւասարաչափ բոլորգրով (կիրիկեանի հետեւողութեամբ), որ սկսւում է մեր քննական բնագրի «... թիւն եւ ի բանս աղաւթիցն...» տողից մինչեւ վերջ եւ ունի աւ ու օ տառածեւերը: 149բ էջում «եւ ի տագնապ անհաւատից» բառերից մինչեւ «եւ ծածկայտես լիցուք խորանօքս այսու լուս...» բառերը այլ գրչութեամբ է, բոլորգրի նմանողութեամբ:

10. I – № 1280: Ժողովածու: ԺԵ դ.: Գրիչ՝ Սարգիս արեղայ: Ստացող՝ Համամշինու վարդապետ: 70ա էջի յիշատակարան «Տէր Աստուած ողորմեայ դժողի սորայ անպիտան ծառաի Սարգիս արեղ(այ)ի...»: էջ 221բ. «...զստացաւ տառիս գքաջ բարունապետն զՀամամշինու, որ եա գրել զսայ...»:

էջ 1ա-6ա. «Մեկնութիւն խորանաց աւետարան[ին]: էջ 6ա-7ա. «Եկեղեցական պատմութենէ»: էջ 7ա-11ա. «Ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին որ ըստ Մատթէի բանից իմաստուն վարդապետաց եկեղ. կարգեալ եւ յօրինեալ զիւրահաս ընթերցողաց առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց. Աւգնեա Քրիստոս Աստուած եւ ուղղեա»: Սկսւում է «Սիրոյ զօրութիւն» խօսքերով, աւարտւում «...ո՞ր իցեն առաջին դրունք», ինչպէս տպագիր տեքստում (վերնագիրը տարբեր է, բնագիրը՝ նոյնական). էջ 11ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու»: Մինչեւ Ե գլխի 17-րդ նոտանաւորի մեկնութիւնը (ձեռագրում էջ 78բ) Շնորհալուծն է, ինչպէս եւ տպագրուածում, այնուհետեւ մեկնութեան բնագիրը կտրուկ փոխւում է (Արիստակէս գրիչ), ինչպէս - 2610 (D) ձեռագրում (1363 թ., Խիզան), ընդ որում այս ձեռագիրը եւս վասպուրականեան նկարագիր ունի: Այնուհետեւ գալիս են հատուածներ Ոսկերեանից, որոնցից առաջինն է «Տեառն Յովհաննու Ոսկերեանի Կապեռնաում բանին Տեառն մեկնութիւն» (էջ 98բ...), որոնք քաղել է Արիստակէսը:

Գրչութիւն. աւ ձեւի փոխարէն մեծ մասամբ գործածւում է օ. առանձին շեղումներ չկան գրաբարեան ձեւերից. սեփհականս, թագոյց, նախամարք եւ այլն:

11. K – № 6649: Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւն Մատթէոսի: ԺԵ դ.: Գրիչ՝ Եղիայ: Ձեռագիրը որոշ չափով վնասուած է խոնավութիւնից: Բայց ուշիմ գրչի ընդօրինակութիւն է, որը յատուկ ուշադրութիւն է դարձնում կարմիր գլխատառերով շեշտելուն տողամէջերում (օրինակ՝ խորանների թուահամարների), ապա ամեն մի խորանի նկարագրութիւն սկսում է կարմիր տառերով եւ նոր տողից:

էջ 273ա. «Ով սրբազանդ բարունի, որք հանդիպիք այսմ մարգարտի, ձեզ աղաչեմ աղերսալի եւ պաղատիմ արտասուալի, զԵղիայ մեղօք ի լի յիշել յաղօթս ձեր բարի»:



Էջ 1ա-4բ. «Մեկնութիւն խորանաց աւետարանի»: Էջ 5ա-6բ. «Յանկն է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս, զի դիւրաւ գտցես, զոր եւ կամեսցիս»: Էջ 7ա-9ա. «Յանգն է առաջին հատորի մեկնութեան»: Էջ 10ա. «Գրիգորի աշակերտի եռամեծի եւ տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ աւետարանին Մատթէոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եղեմաբուխ, չորից աւետարանացն հոգեբուղիս»: Ակտում է. «Արդ չորս գետն նմանի չորից աւետարանչացն...»:

10բ էջում կայ մի համառօտ մեկնութիւն «Վասն ականցն», որից բերում եմ քաղուածքներ, քանի որ ունի խորհրդապաշտական բովանդակութիւն. «Իսկ սուտակն, որ է կայծ եւ կարկեհան, նշանակէ գԲարթողիմէոս, որ քերթեալ իբր վկայ վառեցաւ արեամբ: Եւ դահանակ, որ է կանաչ զմրուխըտ, որ է դեղ աշաց, նշանակէ զԹօմայ, որ լուսաւորեց գաչս հոգոց նոցա, այլ զմարմնոյ կուրաց բազմաց: Դարձեալ նշանակէ զքահանայական եւ զթագաւորական իշխանութիւն, զի ասեն ակն ունի Դ յատկութիւն՝ ա. զգոյնն. բ. պայծառութիւն. գ. պարզութիւն. դ. ներգործութիւն եւ ազգումն: Նոյնպէս նոցա վիճակն. մի է քահանայապետական եւ մի է թագաւորական ի վերայ Ի (20) դիցն եւ պայծառացեալ հաւատոյ լուսովն եւ պարզ, զի ոչ ունին խմոր հերձուածողական եւ բարի գործովք առաւել քան զամենայն աշխարհս»:

Էջ 15բ-20ա. «Ի ցանգն աւետարանին տեսութիւն եւ վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»: Էջ 20ա-22բ. «Նորին սկիզբն եւ (բառ մեկնութեան) աւետարանին Մատթէոսի [...] ճառ հարցմամբ, աւգնեայ Սուրբ Հոգի...»: 269ա էջում կայ «վկայութիւնք պատմո[ղականք] ժողովոյն Քաղկէդոնի... Միխայէլի»:

12. Լ – № 1259: Մեկնութիւն խորանաց: Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւն Մատթէի: 1563 թ.: Իլով: Գրիչ՝ Պօղոս նոտար: Ստացող՝ Թումա քահանայ:

Հատուածներ յիշատակարաններից. «...Ձտարտամս եւ զտրուպս ի մէջ բազմամբոս եղբարց զՊօղոս կորեալ ի մէջ մեղաց, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր...» (նոյն բնագրի բոլորգրով) (253ա): «Ձանարժանս ամենայնի, զի յիշելոյ չեմ արժանի, արժանացոյ մտօք բարի, զի Տէր եւ քեզ ողորմեսցի, Պօղոս գրչի մեռեալովի: Ո՞ գիր որ մնաս: Ո՞ ձեռս որ յող դառնաս: Ո՞ եղբայր որ ընթեռնուս: Ո՞ որ զմեզ յիշէ» (գրուած է աւելի մանր բոլորգրով ցանկավերջում տողատակ) (էջ 256բ): «... Արդ յանգ եղեալ աւարտեցաւ ամենայից բուրաստանս եւ անգին մարգարիտս, որ է քաղուածոյ մեկնիչ Մատթէոսեան աւետարանչին, արարեալ ի հոգեկիր արանց, իբրեւ զփունճ մի մանուշակ..., վասն որոյ ցանկացող եղեալ բարեմիտ եւ հեզահոգի քահանայն տէր Թումայ կոչեցեալ այսմ բուրաստանիս, ի վայելումն անձին իւրոս եւ իւհայոցն ամեն: Եւ ես Պօղոս նոտարս գծագրեցի թերավարժ ձեռամբ եւ ապիկար անձամբս եւ հանի յաւարտ ի խնդրոյ հեզահոգի տէր Թումա քահանայի Իլովցւոյ, ի թուականութեանս յարեթական տուժարի Ի յորեկնի եւ բաժան թիւ աւելի, ի յամսեանն մարտի, Իլով քաղաքի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, թագաւորութեան Գոռելգիկմոնդ աւիստոսին եւ հայրապետութեան տէր Ստեփանոս Առնճեցւոյ եւ յեպիսկոպոսութեան այսմ նահանգի տեր Գրիգորի Վանեցւոյ... Արդ, աղաչեմ զձեզ, ով եղբայրք, անմեղադիր լերուք գրոյս եւ սղալանացս, զէրայ խարիպութեան տեղ էր եւ սիրտս տրտում էր եւ թուխտս խաշապի էր» (հաւանաբար փայտի, ի տարբերութիւն բամբակի թղթի) (էջ 324աբ):

Կազմի ետեւում փակցուած թղթի վրայ եւ պահպանակին նշուած է Մեսրոպ եպիսկոպոսի (Տեր-Մովսիսեանի) ձեռքով ՌԺԲ-1563:

էջ 2ա-Ցա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին»: Այս պրակը, սկսուելով գծային գլխազարդից, բուն շարադրանքից տարբեր բոլորգրով է, ճերմակ թղթի վրայ յստակ, կանոնաւոր, տառերի անկիւնները ցայտուն, կարմիր գրերը կամ տողերը մուգ եւ բաց մանուշակագոյն թանաքով:

էջ 11ա-12բ. սկսում է ուղղանկիւն գլխազարդով. «Ցանգն է գլխաւորագոյն բանից բոլոր գրոյս, զի դիւրաւ գտցես, զոր կամիս»: Ցանկի վերջում նշուած է. «Եւ վասն Մարկոսի. առանձին բանից սակաւ մեկնութիւն: Աստ գտցես: Եւ արտաքոյ սոցա ի Միխայէլ գրոց Հ վկայութեամբ ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի, այլեւ տուժար ժՁ ազգաց, նոր յարմարեալ եւ ի միասին հաւաքեալ, աշխատասիրեալ ումեմն աշակերտի, որոյ տէր ողորմեսցի: Ամէն»:

էջ 13ա-15ա. «Ցանկ է առաջին հատոր[ի]ն մեկնութեան»:

էջ 15բ – «Գրիգորի եռամեծի եւ տիեզերալոյս վարդապետի հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն Բ աւետարանին Մաթէոսի նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եղեմայրուխ, չորից աւետարանչացն հոգեբուղխ: Աւգնեա Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ»:

էջ 21ա-22բ. Այս պրակում է Տաթեւացու խորանների մեկնութիւնը նորոգուած եւ նոր գրչութեամբ սպիտակ ամուր թղթի վրայ գծագրական բոլորգրով, ընդ որում, խորագիրը սկսում է մանուշակագոյն բոլորգրով 22բ էջի ստորին մասից. «Ի ցանկն աւետարանին տեսութիւն եւ վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ...» եւ այլն: Այստեղ նոյն թղթէ թերթերն ու ձեռագիրն են, ինչ սկզբում Շնորհալուս վերագրուած մեկնութեան ընդօրինակութիւնը:

էջ 23ա-27բ. Մեկնութեան շարունակութիւնն է մինչեւ աւարտը, 31բ էջում նորոգ թղթի վրայ գրուած է. «...Յայլմէ ասացեալ...», մեր Ե բնագրից (արտագրուած է Հանդիպակաց էջի հին թղթից, որի վերնագիրն ու կարմիր գրերը խունացել են: Վերնագիրն է. «Արդ այս է պատճառ տասն խորանաց»):

13. Մ – № 1282: Մեկնութիւն Մատթէոսեան աւետարանին: 1604 թ., Մպատ անապատ (յերկիրն Մոկաց):

էջ 4ա-10բ. «Սակա տասն խորանացն»: էջ 11ա-15ա. «Ներսէս եպիսկոպոսի՝ եղբար Գրիգորի կաթողիկոսի սակա աւետարանին Մաթէոսի»: էջ 15բ-261ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի...»:

Փաստօրէն այս ձեռագրում բացակայում է «եկեղեցական պատմութենէ» հատուածը: Գրչութիւնը արեւելեան ազատ ոճով լաւ բոլորգիր է, երեք վերնագրերից իւրաքանչիւրը սկսում է գլխազարդերով (կիսախորանով) վասպուրականեան ոճի, բայց խիստ գծագրական: 83բ էջում աւարտում է Շնորհալու մեկնութեան հատուածը (վերջին բառերը «...եւ կատարեսցին գրեալքն գլխինէն»): Այնուհետեւ նոր հեղինակը մեկնութիւնը շարունակում է առանց ընդհատման, ուղղակի աւետարանական յաջորդ քաղուածքով: 169ա էջից սկսում է մեկնութիւն, որի վերնագիրը բոլորգրով, առաջին տողը կարմիր մելանով գրուած է 164բ էջում, երկրորդ սիւնակի յիշատակարանի տակ «Յոհաննու Ոսկիբերանի Կոստանդինուպաւզսի հայրապետի Գիրք երրորդ Կեսարացւոյ Փիլիպեա»<sup>15</sup>: Շնորհալու՝

15 Տե՛ս «Յովհաննու Ոսկիբերանի Կոստանդինուպոլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս, գիրք երրորդ քերի եւ ի բուղբսն Պաւղոսի»: Հատուածք, ի Վեներտիկ, 1826, էջ 12: Այնուհետեւ չեն համապատասխանում:

Մատթէոսի մեկնութեան հատուածի շարունակութիւնը չի համապատասխանում ոչ Յովհան Ոսկերեւանի, ոչ էլ Յովհաննէս Երզնկացու մեկնութիւններին:

Գլխաւոր յիշատակարանը (էջ 266բ-262ա) ունի պատմական հարուստ տեղեկութիւններ, բայց ոչ մի խօսք մեկնութեան հեղինակների մասին (տե՛ս «Հայերէն ձեռագրերի ժէզարի յիշատակարաններ», 1601-1620 թթ., հատոր Ա, էջ 129-130):

14. N – – 5781: Ժողովածու: 1621 թ., Ժէ դ.: Գրիչ՝ Ներսէս քահանայ (Ա), Զանդէմիր (Բ): Ստացող՝ Սարգիս վարդապետ Սպերցի (Ա): Նորագիր:

էջ 1ա-5ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին»:

էջ 5բ-8ա. «Յանկ է գլխաւորագոյն բոլոր գրոցս: Զի դիւրաւ գտցես, զոր եւ կամիս»:

էջ 8ա-12բ. «Գրիգորի աշակերտի եռամեծի եւ տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Ռրոտնեցոյ, հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սուրբ աւետարանին Մատթէոսի, նախերգաբար բաղգատութիւն չորս գետոց եղեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուխ, օգնեալ Հոգիդ Սուրբ»:

էջ 12բ-15բ. «Ի ցանկն աւետարանին տեսութիւն եւ վասն ժ խորանաց, զոր արարեալ է մեծին Եւսեբեա ի խնդրո Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»:

էջ 15բ-17ա. «Նորին սկիզբն եւ պատճառ մեկնութեան աւետարանին կարճառօտ հարցմամբ»:

էջ 17բ. «Սկիզբն աւետարանի հետեւեսցուք իմաստից քերթութեանց»:

էջ 141բ. «Նորին հինգերորդ հատոր վասն Հերովդէի եւ որդո նորա»:

էջ 239ա-246բ. «Գրիգորի եռամեծի լուծումն համառօտ, խրատ գրչութեան Գէորգա վարդապետի, զոր նախ խնդրեալ էր ի նմանէ Կոստանդեա գրչի եւ ապա Գոներիցանց Ստեփանոսի»:

էջ 247ա-252բ. «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու լուծումն համառօտ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեան Արիստակէսի հոետորէ» եւ այլն:

15. O – № 1278: Աւետարանների մեկնութիւններ: 1625թ., 1644 թ.: Խոստանան (Ա), էջմիածին (Բ): Գրիչ՝ Ղազար (Ա), Իսահակ (Բ): Կազմի ետեւում փակցուած թղթի վրայ ձեռագիր գրուած է. «Համար 1, Մեկնութիւն աւետարանին Մատթէոսի ի Ներսիսէ Շնորհալոյ մեծադիր, եւ ի Յովհան Մործորեցոյ բոլորագիր գրեալ ի թուղթ բամբակի, շարակարգութեամբ Արիստակէս վարդապետի, թիւ եւ տեղի գրչութեան անյայտ: Յաւելուած, բովանդակէ յինքեան զՄեկնութիւն Ղուկասու յիգնատիոս վարդապետէ գրեալ ի Ղազարայ ի խնդրոյ Մովսէսի Բաբունապետի... յամի աղգական ՌէԳ եւ փրկչ. 1625 եւ Մեկնութիւն Յովհաննու աւետարանին ի Նանայ վարդապետէ ասորոյ գրեալ ձեռամբ Իսահակ վարդապետի, հրամանաւ Մովսէս կաթողիկոսի, ի թուին հայոց ՌԼԳ եւ փրկչ. 1584 ի սուրբ էջմիածին: Ունի գլխատակարան»:

1ա էջում բոլորգրով գրուած է. «Մեկնութիւն աւետարանացն Մատթէոսի, Ղուկասու, Յովհաննու»: էջ 2ա-6ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին Մատթէոսի»: էջ 6ա-7ա. «Եկեղեցական պատմութենէ»: էջ 7բ. կիսախորան տիտղոսաթերթ նկարուած մանուշակագոյն եւ կապոյտ (լեզակ) թանաքներով. վերնագիրը կարմիր թանաքով. «Ի ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանի որ ըստ Մատթէոսի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբաւր Գրիգորիսի վերագիրտողի հայոց»: Սկսուած է. «Սիրո զաւրութիւն գերազանց է» բառերով մանուշակագոյն եւ կարմիր թանաքներով, առաջին ե-

րեք տողը՝ բոլորագրի՞ծ երկաթագիր: Էջ 10ա. աւարտում է «որ իցեն առաջին դուռն» (տպագրուածի «դրունքի»-ի փոխարէն) բառերով: Սկսում է բուն մեկնութիւնը. «Գիրք լինելոյ որդոյ Դաւթի» բառերով, որտեղ Գ-ն գլխատառ է, մնացածը նոյն բոլորգիրն է: Աւետարանական քաղուածքներն ունեն յատուկ լուսանցանշաններ:

Էջ 155ա. Մատթէոսի մեկնութեան աւարտը, որ սակայն Յովհաննէս Երզնկացունը չէ: Էջ 155բ. Ներսէս Շնորհալու աշակերտ Արիստակէսի յիշատակարանի ընդօրինակութիւն. «ԶԱրիստակէս վարդապետ եւ զգովեալ աշակերտ նորին զԵփրէմ յիշատիք ի Քրիստոս, զի նա աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչացն իմ ի յետ տեառն Ներսէսի: Յօրինակ էր այսչափ յիշատակարան Արիստակիսի, զայն որ կատարեալն էր չգտաք. անմեղադիր լեբուք»: Ուրեմն, այս մեկնութեան մէջ կարելի է շատ տեղերից ընտրուած հատուածներ բերել:

Էջ 156ա-բ. «Ցանկն է Ղուկասու աւետարան»: Էջ 156բ. «Մեկնութիւն Ղուկայ աւետարանին, զոր արարեալ է Իգնատիոսի եպիսկոպոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի» վերնագիրը, ապա մինչեւ 157բ էջը տրւում է Իգնատիոսի «Առաջարանութիւնը» ուղղուած «Գրիգորիս» կաթողիկոսին: Էջ 158ա. «Մեկնութիւն Ղուկասու աւետարանի, արարեալ Իգնատիոսէ վարդապետէ ի խնդրոյ Գրիգորի Հայոց կաթողիկոսի», որ սկսում է. «Քանզի բազումք յաւժարեցին» բառերով (Ղուկ. Ա. 1): Էջ 277բ. Վերջ Ղուկասի աւետարանի մեկնութեան եւ յիշատակարան ՌՀԴ (1625) թուի, որից բերում ենք հետեւեալ քաղուածքը. «Գրեցաւ զիրքս այս եւ աստուածային տառս... ի թուականութեանս Հայոց մեծաց ՌՀԴ, ի վիճակս Ստաթէի ի յերկիրս Աճանանու, ի գեաւդս Խոտանան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի խնդրոյ Մովսէս քաջ Բարունապետին...»: Էջ 279ա. Գլխագարդով եւ լուսանցազարդով, փոխուած գրչութեամբ. «Առաջարանութիւն մեկնութեան Յովհաննու աւետարանին»: Էջ 282ա. «Երանելոյն Նանայի Ասորոց վարդապետի մեկնութեան Յովհաննու սրբոյ աւետարանին»: Էջ 435ա. Մեկնութեան վերջը եւ գրիչ Իսահակի ՌԼԳ (1584) թ. յիշատակարաններ, որ գրել է «Հրամանաւ տեառն Մովսէս կաթողիկոսի, յաթոռն գերագահ սուրբ Էջմիածնի» եւ ՌՃԼԳ (1684) թ., որը վերաբերում է գերութիւնից Էջմիածին գրքի վերադարձմանը: «Արգ, գրեցաւ մեկնութիւն Գ գլխ[աւոր] աւետարանաց Հրամանաւ տեառն Մովսէս կաթողիկոսի, յաթոռն գերագահ սուրբ Էջմիածնի, որ եղեւ կրկին լուսաւորիչ ազգիս եւ հոգիս մերոյ եւ նորոգեց զսուրբ աթոռն Էջմիածնի: Եւ զայս գիրքս գրեալ ետ... ի թուականիս մերում ՌԼԳ ամին, ձեռամբ Իսահակայ վարդապետին»: ՌԼԳ-ն Վ. Յակոբեանի հրատարակած յիշատակարաններում տրուած է ՌԼԳ (1644 թ.), քանի որ ջնջման հետք կայ գրչագրում<sup>16</sup>:

16. P – № 1312: Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի: 1648 թ.: Նոր Զուղա: Գրիչ՝ Սահակ Զուղայեցի: Ստացող՝ Աւդլէ Ղարատանենց:

Էջ 2բ. Շնորհալու նկարն իր գրքով, նկարուած մանուշակագոյն եւ կապոյտ թանաքներով: Էջ 3ա. Մեկնութիւն խորանների առանց վերնագրի՝ «Մատեանք...»: Էջ 12ա. Մեկնութեան աւարտը եւ կարմիր գոյնով նոր վերնագիր. «Ներսէսի եպիսկոպոսի եղբոր Գրիգորի կաթողիկոսի սակաւ աւետարանին»: Էջ 12բ. Նորից անվերնագիր բնագիրն սկսում է. «Աստուածային բարերարութիւն գերագանց է քան զբնութիւն» բառերով (տպագրուածում եւ այլուր «Սիրոյ զօրութիւն գերագանց է քան զբնութիւն...»): Էջ 18ա.

16 «Հայերէն ձեռագրերի մէջ դարի յիշատակարաններ» (1641–1660 թթ.), հատոր Գ, էջ 139:

Երկրորդ սիւնակի ներքեւում սկսւում է Մատթէոսի մեկնութիւնը. «Գիրք լինելոյ Քրիստոսի որդո Դաւթի, որդո Աբրահամի», որ յաջորդում է նախորդ գլխի վերջին տողերին («Եւ որ իցեն առաջին գրունք»): Էջ 102բ. Առաջին սիւնակի 13-րդ տողում աւարտւում է Ծնորհալու գրած մեկնութեան հատուածը (Մատթ. Ե 17). «... եւ կատարեսցեն գրեալքն զինէն», ինչպէս տպագրուած մեկնութեան մէջ: Այնուհետեւ մեկնութիւնը շեղւում է Յովհաննէս Երզնկացու տպագրուած տարբերակից: Էջ 264բ. «Տեառն Յովհաննու Ոսկեբերանի արարեալ մեկնութիւն գրոց չորրորդի, որ կոչի Յոհան Փարիսեցի. յաւետարանին մեկնութիւն»:

17. Q – № 4032: Ժողովածու: 1659 թ.: Հրեշտակապետաց վանք (Սերաստիա): Գրիչ՝ Նորտունկ Հոռմկլացի:

Էջ 4ա-8ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին»:

Էջ 9ա. «Ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին որ ըստ Մատթէոսի, բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ, կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերագիտողի հայոց»: Առաջին երկու տողը. «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զընութիւն եւ այնքան մինչ...»:

Էջ 11բ. Վերոյիշեալ տեքստը աւարտւում է. «... քանզի ահաւասիկ տեսնեմք բացեալ մեզ զգրունս աստուածայնոց բանից ի տեսանել եւ որ իցեն առաջին դուռն»: Այնուհետեւ նոր վերնագիր. աւելի շուտ մեկնութեան բնագիրն սկսւում է հետեւեալ տողերով. «Գիրք լինելոյ որդոյ Դաւթի, որդոյ Աբրահամու. Զի՞նչ խօսի աւետարանիչս...»<sup>17</sup>: Ծնորհալու հատուածն աւարտւում է 54բ էջի առաջին սիւնակի 5-րդ տողով. «... Զի ելից զամենայնրն արդեամբք ի ծննդենէն մինչեւ յարութիւն, ըստ այնմ թէ ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ եւ կատարեսցին գրեալքն»: Միալմամբ 53ա էջում սեւ թանաքով նշուած է, թէ «մինչ աստ է Ծնորհալու, իսկ աստէն Ծործորեցւոյն պատմագրեայ. Գ. եր. 86. 274»: Մինչդեռ մի մեկնութիւն էլ (Մատթ. Ե 17) դեռ Ծնորհալունն է: Մատիտով ստորին լուսանցքում նշուած են աւետարանի գլխահամարները, իսկ թանաքով ժամանակակից ձեռագրով գլխահամարը իւրաքանչիւր աւետարանական գլխի սկզբում: Յիշատակարանից պարզուած է, որ Ծնորհալուն շարունակողը ոչ թէ Ծործորեցին է, այլ Արիստակէս վարդապետը: Դրա համար էլ Ծործորեցու շարունակութիւնը տեղ-տեղ է համապատասխանում: Արիստակէսին վերաբերող յիշատակարանը Վ. Յակոբեանը լրիւ չի բերում<sup>18</sup>, որ այս է. «զԱրիստակէս վարդապետ եւ զգովեալ աշակերտ նորին զԵփրէմ յիշեսջիք ի Քրիստոս. Զի նա աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչացն ի մի յետ տեսան ներսէսի: Յօրինակն այսչափ էր»: Ապա գրիչն աւելացնում է. «Յիշատակարան Արիստակիսի, զայն որ կատարեալն էր, չգտաք. անմեղադիր լերուք» (էջ 182բ):

18. R – № 5155: Մեկնութիւնք աւետարանաց: 1669 թ.: Բաղէշ: Գրիչ՝ Թումայ երէց, Դաւիթ վարդապետ Բաղիշեցի: Ստացող՝ Դաւիթ վարդապետ Բաղիշեցի:

Էջ 3ա – Կիսախորանով, լուսանցազարդով տիտղոսաթերթի տակ վերնագիրն է. «Սակստան խորանացն»: Երկու տող կարմիր նոտրագիրով ու թռչնագիր գլխատառով՝ «Մա-

17 Տպագրուածում. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու. Մեկնութիւն, զի՞նչ խօսի աւետարանիչս...»:

18 Վ. Յակոբեանի մօտ վերջին նախադասութիւնն է («Հայերէն ձեռագրերի ժէ: դարի յիշատակարաններ» (1641-1660 թթ.), հ. Գ, էջ 870):

տեանք»։ Բնագրասեան աջ անկիւնում սեւ գրուած է. «Մեկն. Ղուկասու. Իգնատիոս վարդապետ»։ Պակասում է ութերորդ խորանի մեկնութիւնը։

2ա էջում ստացողի յիշատակարանն է. «Յիշեցէք ի Քրիստոս Աստուած՝ զտրուպ մեղաւոր Դաւիթս, որ ետու գրել զաստուածախօս մատեանս եւ ըստ տկար մտաց իմոց տնատե[ա]լ սրբագրեցի»։ 1ա էջում (մագաղաթեայ պահպանակ) մանուշակագոյն մելանով Մեսրոպ Տեր-Մովսիսեանի ձեռքով գրուած է. «ՌՃԺԸ-1669, Մ. եպ.» եւ սեւ մատիտով «Մեկ. Ղուկ.»։

էջ 10բ. Լուսանցազարդ. կարմիր տառերով վերնագիր «Ներսէս եպիսկոպոսի եղբոր Գրիգորի կաթողիկոսի, սակս աւետարանին Մատթէոսի»։ Երկու տող մանուշակագոյն եւ կարմիր թանաքներով սկսւում է բնագիրը. «Սիրոյ զաւրութիւն գերագանց է քան զբնութիւն եւ այնքան մինչ զի մոռացումն առ...»։ 15ա էջում շարագրանքն աւարտւում է. «քանզի ահաւասիկ տեսանեմ մեզ բացեալ զգրուես։ Եւ ո՞ր իցեն առաջին գրուեք»։ Այս աւարտից յետոյ կայ յիշատակարան. «Բա՛ց եւ ստացողի սորին Դաւթի երանաշնորհ հոետորի եւ աստուածարան վարդապետի զքո աստուածային դուռն տեր իմ եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որում փա՛ռք ընդ Հաւր եւ Սուրբ Հոգոյդ, ամէն։ Եւ ինձ պարտաւոր եւ սեւերես գրչիս Թումայի. մա՛սն լիցի յաղաւթից ընթերցողաց Սուրբ Գրոցս...» եւ այլն։

էջ 15բ. Կիսախորան եւ լուսանցազարդ։ Մեկնութեան սկիզբը «Գիրք Ծննդեան լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Դաւթի, որդւոյ Արրահամու։ Զի՞նչ խաւսի աւետարանիչս...»։

էջ 89բ. Այստեղ վերելից Ե-րդ տողում աւարտւում է Ծնորհալու հատուածը. «...թէ ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ եւ կատարեսցին գրեալքն զինչն»։ Ամբողջ բնագրում լուսանցքներում ուրորուն նշաններ են գրուած աւետարանական քաղուածքների համար։ Սրան անմիջապէս շարունակում է յաջորդ քաղուածքը (Մատթ. Ե 18). «Մինչեւ անցեն երկինք եւ երկիր, յովտ մի որ նշանախեց մի է ոչ անցէ յօրինաց եւ ի մարգարէից»։ Այնուհետեւ շարունակուող մեկնութիւնը կտորներ ունի Ծործորեցուց, բայց նրա գրածը չէ։ Ըստ Անասեանի, «ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէոսի, ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց» խորագիրը Արիստակէսինն է (սոյն ձեռագրում այն չկայ, բայց կայ մեր միւս ձեռագրերում)՝ բաղկացած հետեւեալ մասերից (ըստ Մատ. - 1253 ձեռագրի). Ա. «...Ներսէսի հայոց կաթողիկոսի, ի խնդրոյ նորին եղբօրն Գրիգորիսի վերադիտողի հայոց» (էջ 15ա-134ա, «Սիրոյ զօրութիւն...»)։ Բ. «Նորին Յոհաննու (Ոսկերբեանի) ի Կապեռնաում։ Գիրք երկրորդ» (էջ 134ա-224ա. սկիզբը. «Իբրեւ եմուտ Կապեռնաում» եւ այլն)։

Շատ ձեռագրերում Արիստակէսի յիշատակարանը բացակայում է։ Ի դէպ, աղբիւրների նշումով հարուստ է համարւում սոյն ձեռագիրը։ Այս կարգի այլ ձեռագրեր են Մատ. №№ 1245, 1246, 1249, 1250, 1251, 1252, 1255, 1256, 1257, 1278, 1280, 1281, 1282, 1312, 4032, 5155, 6492 եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի №№ 258, 283, 332, 458, 707, 889, 932, 1031, 2017 եւ այլն։ № 1279 ձեռագրում արդէն Ծործորեցին է աւարտել մեկնութիւնը<sup>19</sup>։

19. Տե՛ս Բ. Ա. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Ե-ՓԸ դղ., Ե. Բ., Երեւան, 1976, էջ 772-775։

Էջ 110բ. «Մատոյ պատարագ ասի վասն սրբութեան քո ...»: Այս քաղուածքի մեկնութեան աւարտն է. «...Եթէ յինէն եղեւ ամենայն ինչ եւ կատարեցաւ, թէպէտ եւ չէիք ուղղելոց, այլ եւ գիմն արարի եւ կատարեցի»: Այս աւարտից յետոյ ուղղանկիւն գլխազարդ եւ վերնագիր (լուսանցազարդը՝ յուշկապարիկ). «Տեառն Յովհաննու Ոսկերերանին. Կապեռնաում բանին տեառն մեկնութիւն», որի առաջին կարմիր տողն է. «Իբրեւ եմուտ ի Կապեռնաում»:

Էջ 185բ. Ուղղանկիւն գլխազարդ եւ խորագիր. «Յովհաննու Ոսկերերանին Կոստանդնուպօլսի Հայրապետի գիրք երրորդ Կեսարացոյ Փիլիպպեա»: Առաջին տող. «Եւ ելեալ Յիսուսի ի կողմանս Փիլիպպեա Կեսարեայն...»:

Էջ 185ա. Յիշատակարան գրչի եւ ստացողի եւ ստացողի մահից յետոյ. Հետաքրքիր է վերջին յիշատակարանը. «Ես Բաղիշու քաղաքի վերատեսուչ տառապեալ տրուպ Մեսրոպ վարդապետս ի թուին ՌձԻԲ (1673) եկի ծովայշուրջ անապատն Լմայ, Հանդերձ Հոգեւոր որդուվք իմուվք Դաւիթ վարդապետաւն եւ Աւետիք բանասիրիւ: Դաւիթ վարդապետն վախճանեաց զկեանս իւր, գնաց առ Քրիստոս յոյսն ամենի, որդուց որոտմանց տօնին, մինչ չէր Ը (8) եղբարսն կարդային եւ մարմին եղեալ եղեւ ընդ Հովանեաւ սուրբ Գէորգեայ զօրավարին: Եւ այս աւետարանչացս մեկնիչս Ղուկասուն եւ Մատթէոսին, Դաւիթ վարդապետն էր իւր ձեռաց գրածն. եղաք յիշատակ բարի ի զուռն սրբոյն Գէորգեայ զօրավարին եւ ի վերա իւր գերեզմանին փակեալ...»:

Էջ 288բ. Աւարտում է քաղուածքով. «Յիշեցուք ասեն, զի մոլորացուցիչն այն ասէր. թէպէտ յերից աւուր յառնեմ: Եւ թէ մոլորեցուցիչ էր եւ սուտ պարծէր»:

Էջ 289ա. Ուղղանկիւն գլխազարդ, ճոխ լուսանցազարդ: Վերնագիր նոտրգիրով. «Մեկնութիւն աւետարանին, որ ըստ Ղուկա, ասացեալ Իգնատիոսի Աստուածաբանին եւ սրբոյ վարդապետի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի եւ լուսաւորչի. Աւգնեա տէր Յիսուս»: Առաջին տողը թռչնատառ. «Լնուլ զա[յս] իմաստ յաստուածային քո ըղձից...»: Ստորին լուսանցքում Դաւթի յիշատակարանն է. «Ես Դաւիթ բանասէր ծառայ խնդրակատար Սուրբ Աստուածածնին աջողութեամբն Քրիստոսի սկսա եւ կատարեցի ի թվին ՌձԺԸ (1669)»:

Էջ 494բ. Մեկնութեան աւարտ եւ ընծայական Իգնատիոսի առ Գրիգորիս, գրուած կարմիր մելանով. «Ընկա՛լ ով աստուածային Գրիգորիոս...»:

Էջ 495ա. Նախազրութիւն Ղուկասի, որ սկսում է այսպէս. «Սուրբ աւետարանիչն Ղուկաս անտիոքացի էր, ազգաւ ասորի, աշակերտ Գալիանոսի բժշկի...»:

Ձեռագրում «Սակս տասն խորանացն» գլխում որոշ տեղեր ընդգծուած են կարմիր մելանով (տե՛ս բնագիրը) երբեմն տառ, երբեմն նախադասութիւնն սկսող կիսատողը, որ ցոյց է տալիս ստացող Դաւթի բանասէր յորջորջման վաւերականութիւնը: Միւս գրքահատուածներում եւ գրքերում բաժանումներն արուած են կարմիր տողերով եւ լուսանցքներում առկայ են զանազան վկայութիւնների եւ Հասկացութիւնների նշումներ: Օր. «Ներսէսի եղբօր Գրիգորի կաթողիկոսի...» գլխում բացի կարմիր տողերից լուսանցքներում գտնում ենք Փիսոն, Գեհոն, Տիգր, առ(եւ)ծ, եզ, արծ(իւ) եւ այլ Հասկացութիւններ, «Գիրք ծննդեան լինելոյ...» գրքում կան միայն կարմիր տողեր եւ գլխատառեր: «Տեառն Յովհաննա Ոսկերերանին Կապեռնաում բանի տեառն մեկնութիւն» գլխի լուսանցքներում Հանդիպում են վկայութիւններ Եփ(րէմ), Կիր(ակոս), Գրի(գոր):

19. S – № 9240: Ժողովածու: 1671 թ.: Շօռթ: Գրիչ՝ Մարգարիտ: Ստացող՝ Արիստակէս վարդապետ (գրչուհու եղբայրը):

էջ 1ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին»: Ուղղանկիւն գլխագարդ առաջին սիւնակում եւ լուսանցազարդ եղջիւրից դուրս եկող բուսազարդերի տեսքով: Վերնագիրը կարմրատառ: Առաջին տողը («Մատեանք...») զարդարուն գլխատառով եւ մանուշակագոյն թանաքով բոլորգիր, երկրորդ տողը («աստուածագիծք եւ հոգեբուխ») կարմիր թանաքով: 1բ էջի լուսանցքում գրուած է «Բ թուղթ շրջէ. վայելչականն անդ կարգայ, յետո զխորանսդ»: Իւրաքանչիւր խորանի մեկնութեան առաջին տողը կարմիր թանաքով է եւ տողահամարներով լուսանցքում կարմիր մեկնով նշուած: Ընդ որում, արտաքին լուսանցքում եւ սիւնակների արանքում: Երկու թուղթ յետոյ ստացւում է, որ շարունակութիւնը գրուած է 3բ էջի երկրորդ եւ 4ա էջի առաջին սիւնակում: Ընդ որում, որտեղ չեն նշուած խորանների համարները, շարադրանքի մէջ կան կարմիր գլխատառերով ընդգծումներ:

էջ 4բ. «Ցանկն է գլխաւորագոյն բոլոր գրոցս: Զի դիւրաւ գտցես զոր եւ կամիս»: Այն Տաթեւացու մեկնութեան ցանկն է:

էջ 5բ. «Ցանգն է առաջին հատորին մեկնութեան»:

էջ 6բ. «Աւգնեա Հոգի Սուրբ Աստուած ճշմարիտ»: Դրախտի չորս գետերի եւ նրանց խորհրդով մեկնուող չորս աւետարանիչների մասին:

էջ 9բ. «Արդ չորս կենդանիք, զոր ետես Եզեկիէլ»: Միայն այս գրուածքն է սկսւում կարմիր տողերով:

էջ 10ա. «Ի ցանգն աւետարանին տեսութիւն: Եւ վասն Ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ. տե՛ս գեղբայրութեան յեղանակն ի լուծմունս պարապմանց»: Փաստորէն սա Տաթեւացու գրած խորանների մեկնութիւնն է, որ կապուած է իր իսկ կազմած Մատթէոսի աւետարանի մեկնութեան հետ:

էջ 13ա. «Նորին սկիզբն եւ պատճառ մեկնութեան աւետարանին կարճառոտ հարցմամբ»: Վերնագիրն առանց գլխագարդի է:

էջ 36ա. «Ցանգն է երկրորդ հատորին»:

էջ 38ա. «Նորին երկրորդ հատոր մեկնութեան քաղուածոյս»:

էջ 76ա. «Ցանգն է երրորդ հատորին»:

էջ 77ա. «Նորին երրորդ հատոր մեկնութեան քաղուածոյս»:

էջ 95ա. «Ցանգն է չորրորդ հատորին»:

էջ 96ա. «Նորին չորրորդ հատոր ի բանն յայնմ ժամանակի»:

Այնուհետեւ գալիս են հինգերորդ եւ վեցերորդ հատորները:

Հանդիպակաց էջերի վերին լուսանցքում գրուած է հատորը. օր. «Ա հատոր», «Զ հատոր» եւ այլն:

էջ 186ա. «Գրիգորի Եռամեծի եւ քաջ Հռետորի եւ իմաստասիրի աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ մականունն Կախելոյն եւ սէրն Յիսուսի: Ի յիդ՝ բաղձանաց բանասէր անձանց նորին աշակերտաց արարեալ լուծումն համառօտ յառաջարան աւետարանին Յովհաննու լուծումն»:

էջ 190ա. Ուղղանկիւն գլխագարդ եւ աքաղաղով լուսանցազարդ:

14բ էջի առաջին սիւնակի յիշատակարանում բոլորգրով նշուած է, որ ստացողը Արիստակէս վարդապետն է, իսկ երկրորդ սիւնակում Արիստակէսը յայտնում է, որ ինքը է «աշխարհաւ Բզնունեաց, ի նահանգէն Ղլաթայ» եւ պանդուխտ է «ի յերկիրն Նախիջեւանու»: Քոյրը, «գծող տառիս», կուսակրօն է, անունը Մարգարիտ, որ երբ «յարբունս հասեալ սկիզբն արարեալ գրչութեան արուեստի մինչեւ ի ծերութեան ժամանակի»:



184ա-185ա էջերի յիշատակարանում իրեն Արիստակէսը համարում է «վտարանդիս ի հայրենեաց» (184ա): Նա ցանկանում է «սուրբ գրոյս, որ է աւետարներ քաղուածոյ սուրբ աւետարանին գլխոյն Մատթէոսի եւ Յոհաննոս»: Նա ասում է. «... Ետու գրել զայս հարագատ քեռն իմոյ Մարգարտի ի յերկիրս յԵրնջակայ ի կուսաստանն Շոռոթու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի թվահաշիւթեան ազինս արամեան ՌՃ եւ Ի ամին, յիշխանութեան մեծի արքային պարսից Շահ Իսմայիլի երկրորդի եւ ի հայրապետութեան սրբազանին Յակոբայ Զուղայեցոյ» (184բ):

185ա էջում գրչուհու յիշատակարանն է, որ շատ յուզիչ ներկայացնում է ծեր կնոջ տառապանքները («...ղերիս հասակս անցուցի ի վերայ երկրի ամենեւիմբ անմասն ի բարեաց գործոց, ոչ ի մտաց, ոչ ի բանից եւ ոչ ի գործոց հաճոյ ինչ մատուցի Աստուծոյ, այլ զանձն իմ մատնեցի գազանին յափշտակողի, եկէր զիս եւ եկուլ զիս եւ թոյնք մահաբեր վիշապին թափեցան ի վերայ իմ եւ գանեցայ բազմավէր հարուածովք յամենայն դիմաց խղիւսայթեալ եւ խարանաւ լցեալ...», 185ա): Խնդրում է յիշել եւ իր ընկերուհի կոյսերին: Ծատ հետաքրքիր է վերջին ոտանաւոր յիշատակարանը, որ ասես դամբանական է քրոջ եւ եղբօր վրայ: Գրչութիւնը նման է արեւելեան բոլորգրի, յիշեցնում է Յովհաննավանքի եւ Սաղմոսավանքի ԺԲ դարի ճառքները (Զեռ. - 1522, 3777):

20. T - № 1281: Ժողովածու: Գրիչ՝ Աւետիս: Ստացող՝ Եփրէմ վարդապետ: Էջ 7ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին»: Լեզակագոյն եւ մանուշակագոյն գլխազարդ եւ լուսանցազարդ: Կարմիր նոտրգրով վերնագիր, առաջին տողը զարդարուն գլխատառեր, երկրորդ տողը կարմիր: Կարմիր տողերով ու լուսանցանիշերով օժտուած են կարեւոր տեղերը, ինչպէս նախորդ ձեռագրերում: Էջ 10ա. «Յեկեղեցական պատմութենէ»: Նոյն ձեւով: Առաջին տող. «Առաքեալք էին ԲԺ-ան եւ այլ աշակերտք ՀԲ եւ այլ բազումք...» (ինչպէս սպազրուածում): Էջ 11ա. «Ժողովումն մեկնութեան աւետարանին ըստ Մատթէոսի ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց օգնեա Յիսուսի Քրիստոս եւ ուղղեալ»: Առաջին տող. «Սիրոյ գօրութիւն գերագանց է քան զբնութիւն եւ այնքան...»: Վերջը «...քանզի ահաւասիկ տեսանեմք զգրուեսս աստուածայնոց բանից առ ի տեսանել: Եւ որ իցեն առաջին դուռն»: Տպագրի համեմատ ունի որոշ տարբերութիւններ: Էջ 13բ. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Դաւթի...»: Ծնորհալու մեկնութիւնը շարունակուում է մինչեւ 42ա էջը (երկրորդ սիւնակ, տող 34) եւ աւարտուում «... ըստ այնմ թէ ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ եւ կատարեսցին գրեալքն»: Այնուհետեւ նոյն տառերով շարունակուում է քաղուածքը աւետարանից. «Մինչեւ անցցէ երկինք եւ երկիր յովտ մի որ նշանախեց մի է ոչ անցցէ օրինաց եւ ի մարդարէից մինչեւ ամենայն եղիցի»: Հաստատութիւն աստուածային բանիցն նշանակէ, թէ չէ հնար անցնել մինչեւ յամենայն եղիցի, որպէս այլուր ասէ, թէ դիւրին է անցանել քան օրինացն նշանախեցի միոյ անկանել...»: Սա համապատասխանում է տպագրուածի Ծործորեցու հատուածին:

Էջ 50բ. Գլխազարդ չունի, լուսանցազարդ, ապա երկրորդ սիւնակում կարմիր տառերով. «Նորին Յոհաննոս ի Կապեոնաում գիրք երկրորդ»: Էջ 76բ. «Նորին Յոհաննոս Ոսկեբերանին. Գիրք երրորդ Կեսարացոյ»: Էջ 97բ. «Տեառն Յօհաննոս Ոսկեբերանին գիրս

չորրորդ փարիսեցուցն»։ Սա չկայ հրապարակուած բնագրում<sup>20</sup>։ Սկիզբը Մատթ. ԻԲ 34. «Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան թէ պապանձեցոյց զսագուկեցիսն, ժողովեցան ի միասին»։ զարձեալ պատճառ դնէ աւետարանիչն, վասն որոյ պարտ է լուել...»։ Էջ 118ա. Հատուածի վերջը. «...չնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում ընդ Հօր եւ Հոգոյն Սրբոյ փառք պատիւ յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից ամէն»։ Ապա Արիստակէսի յայտնի յիշատակարանն է։

Էջ 118բ. «Երեւեցաւ նշան յերկինս. եւ ահաւասիկ վիշապ հրեղէն մեծ, որոյ էին գլուխ է եւ եղջիւրք ժ, եւ ի վերայ գլխից նորա է խոյր, եւ տուտն նորա քարչէր զԳ մասն աստեղաց յերկնից, եւ ընկեաց գնոսս յերկիր ի տեսանել...», «Յոհաննու»։ Սա «Յայտնութեան» ԺԲ 3 հատուածն է, որի մեծ մեկնութիւն է տրուած։ Կազմի ետեւում փակցուած թղթի վրայ նշուած է. «Մեկնութիւն յայտնութեանց Յօհաննու»։ Այնուհետեւ գալիս են Առաքել Սրենեցու անունով մեկնութիւններ Դաւթի Սահմանքի, Պլատոնի, Արիստոտէլի ինչ-որ ասոյթներին։

21. Ս – № 4618: Ժողովածու։ 1569, 1693, 1695, 1696, 1706, 1714 թթ.։ Զեռագիրն ընդօրինակուել է տարբեր քաղաքներում, տարբեր գրիչների կողմից (երեք վայր եւ հինգ գրիչ)։ Վան, Երզրո՞ւմ, Մանձկերտ։

Էջ 1ա. «Այս է պատմութիւն Ադամայ եւ Եւայի վարուցն, նախաստեղծիցն Աստուծոյ...»։ Էջ 6ա. «Քարոզ ի բանս թագաւորութեանց, որ ասէ հրամայեաց Դաւիթ բռնել զժողովուրդն»։ Առաջին տողը «Եւ զի նահապետքն երկար ապրէին վասն ուսուցանելոյ զաստուածապաշտութիւն որդւոց իւրեանց...»։ Էջ 9բ. «Հարցումն Լուսաւորչին Գրիգորի ընդ հրեշտակապետին Գարրիէլի» (առաջին տող. «Ասէ սուրբն Գրիգոր ընդ հրեշտակին. Յորժամ առնուս զհոգի մարդոյն...»)։ Էջ 10բ. «Ի լուսաւոր սուրբ գրոցն սրբոյ վարդապետի Վարդանայ Մեծի»։ Բնագրից բերում եմ որոշ հատուածներ. «Եւ արդ, վասն անմարմնոց զասուց գրեմք, որք բնակեալք են ի վերին քաղաքն Աստուծոյ ի նորն Սիրն։ Ի գրոց է (7) զասս ստացաւ, եւ այլոց ոմանց Թ (9) զասս սահմանեցան նոքա, եւ ոմանց ասացաւ, թէ բոլորապատ քառակնածեւ շուրջ կան զաթոռօվն Աստուծոյ, մի յետ միոյ, եւ մի քան զմի հեռաւորագոյն։ Եւ այլ ասացաւ թէ իբրեւ զաստիճան սանդոց մի քան զմի բարձրագոյնք է եւ գլխ[աւոր] ամենայնի բարձրագոյն խորանն լուսոյ կայ, հաստատեալ յանարուեստ եւ ի սոսկալի յաթոռն Աստուծոյ։ Եւ զօրք անմարմնոց են բաժանեալ յերիս խորանս, եւ մի խորանն յերիս դասս։ Յառաջին խորանն կան սերորէքն եւ քերորէքն եւ աթոռքն բազմաչեայ, առ որս հանգուցեալ է զարմանագործն Աստուած թագաւորն բարձանց։ Եւ են նոքա մի քան զմի մերձակայ առ Աստուած։ Եւ ի միջի խորանն կան տերութիւնքն եւ զօրութիւնքն եւ իշխանութիւնքն։ Եւ մի քան զմի խոնարհագոյն։ Եւ ի վերջի խորանն կան պետութիւնքն եւ հրեշտակապետքն եւ հրեշտակքն։ Եւ ի ներքին դասս մերձ առ ազգի մարդկան են դասք հրեշտակացն, քան զայլ անմարմինս զուարթունս։ Եւ են յերկնային զօրսն մեծ եւ փոքր, որպէս եւ են ի լուսաւորքդ, որք կան յերկինս։ Եւ հրամանս Աստուծոյ հրեշտակքն բերեն առ ազգս մարդկան, որպէս եւ առնէին առ մարդարէսն եւ առ դասս առաքելոցն եւ առ ամենայն սուրբ...»։ Այնուհետեւ քարոզների եւ խրատների մի շարք։ Այս հատուածն արձագանքում է խորանների մեկնութեան որոշ հատուածի։

20 «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսպետի յաւետարանագիրն Մատթեոս», Գիրք կրկին, Վեներտիկ, 1826:

էջ 41բ. «Աւրհնութիւն յետ քարոզի տաճկի բառով: Թարգմանեալ Համթեցոյ Իգնատիոսէ, քարոզող քահանայէ, այժմ ի Վան բնակեցելոյն»: էջ 45ա-46բ. «Պատմութիւն փախստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յեգիպտոսի»: Հաւանաբար պարականոն պատմութիւն, որ պիտանի է պատկերագրութեան համար: Այնուհետեւ մինչեւ 57ա էջը զանազան քարոզներ:

էջ 55բ. «Վասն յորովայնամոլութեան ի գրոց Վարդանայ»:

էջ 57ա. «Սակս տասն խորանացն» (նոտրգիրն այստեղ այլ է): էջ 62ա. «Եկեղեցական պատմութիւն», առաջին տողը. «Առաքեալքն էին երկոտասան եւ այլ աշակերտք...»: Գրուած է բոլորգրով եւ համահնչուն է տպագրուածին (Մատթէոսի մեկնութեան): Մնացած նիւթերից պատկերագրութեան համար կարեւոր պէտք է համարել. «Արքայն Յոհաննու Մանգակունեցոյ արարեալ պատմութիւն յաղագս փոխման տիրամայր սուրբ Աստուածածնին, թէ ո՞րպէս եղեւ կամ ո՞րպէս շնորհեցաւ անարատ պատկերն ի փայտն կամ յո՞յր ձեռն կամ թէ ո՞վ եղեւ պատճառ խնդրոյն եւ կամ թէ ո՞վ եբեր ի Հայք: Զայս մեզ ստուգարանեաց մեծ իմաստասէր այրն Աստուծոյ Մովսէս...» (նկատի է առնուած Խորենացին) (79ա): Այս բոլորգիր է, Վանում գրուած Գրիգորի ձեռքով, ԹՃԽԲ թուին (1693):

22. V – № 1254: Ժողովածու: Ժէ դ.: Թուղթ: Երկսիւն:

էջ 1ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանին» (վերնագիրը կարմիր մելանով), էջ 5բ. Եկեղեցական պատմութիւնից, որի առաջին տողն է. «...եւ այլ բազումք, բայց սակայն [ամենայն առա]քելոց անտի Տեառն մերո պատմութիւն գրեալ Մատթէոս եւ Յոհաննէս...»: Վերնագրի տեղը եւ առաջին տողը բաց է թողած: Համահնչուն է տպագրուածին: էջ 7ա. «Ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին ըստ Մատթէոսի ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ. կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին ներսէսի Հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբոր Գրիգորիսի վերադիտողի Հայոց, աւգնեայ Քրիստոս Աստուած եւ ուղղեալ»: Առաջին տող. «Սիրոյ զօրութիւն գերազանց է...»:

էջ 9ա. «Հարցումն զանազան, զոր ասացեալ է սուրբ վարդապետին Վանական եւ պատասխանիք բարառնաբար...»:

23. W – «Մեկնութիւն սուրբ աւետարանի որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն ներսիս Ծնորհալուոյ մինչ ի համար 17. Հինգերորդ գլխոյն եւ անտի աւարտեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացոյ որ եւ կոչի Ծործորեցի», տպագրեալ ըստ ընտիր օրինակաց վեհափառ հրամանաւ տեառն Կարապետի ար[ճ]ի եպ[իսկոպո]սի եւ երանաշնորհ պատրիարքի մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսի, արգեամբ մ[ա]հ[տե]սի Աբրահամ ամիրայի Անկեցոյ յիւրում իսկ տպարանի: Յամի Տեառն 1825. մարտի 16:

Սա հէնց այն տպագրութիւնն է, որ մեզ ելակէտ է ծառայել ձեռագրերը նկարագրելիս: էջ 5-12. «Մեկնութիւն սակս տասն խորանացն»: էջ 13-15. «Եկեղեցական պատմութեան»: Առաջին տողը՝ «Առաքեալք էին երկոտասան եւ այլ աշակերտք յեթմնասուն երկու, եւ այլք բազումք...»: էջ 16-21. «Աստանօր խօսի Ծնորհալին ի դէմս եղբոր իւրոյ տեառն Գրիգորի կաթողիկոսի, որոյ հրամանաւն յանձն առեալ է զմեկնութիւն աւետարանին Մատթէոսի, վասն որոյ ասէ»: Առաջին տողը «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զբնութիւն...»: էջ 23. «Աւետարան ըստ Մատթէոսի», Գլուխ Ա, Բան 1. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի...: 106 էջում աւարտուած է Ծնորհալու մեկնութեան հատուածը: էջ 107.

«Գլուխ Ե. Լրուժն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ աւետարանին որ ըստ Մատթէոսի: Հաւաքեալ նուաստ վարդապետի Յօհաննու Երզնկացոյ որ եւ ասի Ծործորեցի»: Ակիզբը. «Գերապատիւ եւ բարեհռչակ հայրն մեր ըստ հոգւոյ, եւ երկրորդ լուսաւորիչն սուրբ եկեղեցւոյ... կորովամիտ եւ համեղաբան կաթողիկոսն հայոց Ներսէս Կլայեցի...»: Ուշագրաւ է, որ այս լրուժի մէջ ասուում է նաեւ, որ Շնորհալուց յետոյ. «Ռմանք նախքան զմեզ ձեռնարկեցին գրել ի վերայ շարագրութեան նորին, սակայն ոչ էր կարգաւոր որպէս սրբոյն, այլ հատակոտոր արարեալ զբանս առաջին մեկնչաց, նաեւ զբնարանութիւն աւետարանին արտաքս մերժեալ. ուստի ոչ գայր զիւրաւ յիմացումն ընթերցողացն: Յաղագս որոյ ես... ապիկար ողիս Յօհան Երզնկացի սպասաւոր բանի բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թաղէոսի՝ ի վանս Ծործորու կոչեցեալ... եղեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոց աւետարանին Մատթէի լնլով զթերի նորին ըստ կարողութեան իմում, շահեալ եւ օգտեալ յառաջին սրբոցն... Եւ արդ եղեւ գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի հազար երեք հայրուր տասն եւ վեց...»: Փաստօրէն սա յիշատակարան է, որ մեզ ոչ մի ձեռագրում չի հանդիպել առայժմ: Նա գրել է մեկնութիւնը «բանասէր անձանց» խնդրանքով եւ անտեսել Արիստակէս մեկնիչի բանաքաղութիւնը: Էջ 108. Ակուում է Յովհաննէս Երզնկացու մեկնութիւնը:

24. X – № 1279: Ժողովածու (1655-ից յետոյ): Սպահան: Գրիչ՝ Բարսեղ: Էջ 5ա. «Մեկնութիւն խորանացն աւետարանին»: Էջ 9բ. «Եկեղեցական պատմութեանէ»: Առաջին տողը՝ «Առաքեալք էին երկոտասանք...»: Վերնագիրը կարմիր մելանով: Էջ 12ա. «Ժողովումն մեծ մեկնութեան սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէոսի, բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ եւ յօրինեալ զիւրահաս ընթերձողաց: Առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերագրիտողի հայոց»: Վերնագիրը կարմիր թանաքով: Ակիզբը՝ «Սիրոյ զօրութիւն գերազանց է, քան զբնութիւն...»: Էջ 15ա. Բնագիրն աւարտուում է. «... Քանզի ահաւասիկ տեսանեմք բացեալ մեզ զգրուեսս աստուածայնոցն բանիցն առ ի տեսանել, եւ որ իցեն առաջին դուռն»: Էջ 15ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ Դաւթի...»: Մեկնութեան շարագրանքը սեւ թանաքով է, միայն գլխատառն է կարմիր: Էջ 62բ. Աւարտուում է Մատթէոսի աւետարանի մեկնութեան Շնորհալու հատուածը. «... ըստ այնմ թէ ահաւասիկ ելանեմ յերուսաղէմ եւ կատարեսցին գրեալքն»: Չիք տպագրուածի «գլխէն» բառը: Ապա նոյն էջում շարունակուում է. «Լրուժն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէոսի հաւաքեալ նուաստ վարդապետի Յօհաննու Երզնկացոյ որ եւ Ծործորեցի կոչեցեալ»: Նոյն բնագիրն է, ինչ որ Պ տպագիր օրինակում: Նոյնն են նաեւ աւետարանական հատուածների մեկնութիւնները: Էջ 339բ. Աւարտուում է բնագիրը նոյն ձեւով, ինչ Պ օրինակում: Նոյն էջում ձեռագրի յիշատակարանն է. «Արդ գրեցաւ եւ աւարտեցաւ զսուրբ աւետարանչի մեկնութիւնս Մատթէոս եւ Ղուկաս ի քաղաքին Շօշ, որ կոչի Իսպահան եւ ի սուրբ ուխտիս Ամենափրկչի վանից ի թագաւորութեան պարսից փոքր Շահարասին, ի հայրապետութեան հայգապան սեռիս տեառն Յակոբ կաթողիկոսի եւ մերոյ արհեսպիսկոպոսի Դաւիթ սրբազան վարդապետի...» եւ այլն:

Էջ 342ա. «Յանկ է Ղուկասու աւետարանին»: Էջ 342բ. Յանկն աւարտուում է, եւ սկսուում է վերնագիրը. «Մեկնութիւն Ղուկայ աւետարանին, զոր արարեալ է Իգնատիոսի եպիսկոպոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի հայոց կաթողիկոսի»: Ակիզբը նոյնն է, ինչ տպագրուածում. «Լնուլ զայս իմաստ աստուածային քոյ ըղձից պարտ համարեցայ ով

քահանայապետական գլուխ եւ սին...» (Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, ի խնդրոյ տեառն Գրիգորիսի հայոց կաթողիկոսի» ... Արդեամբք աստուածասէր մահտեսի Աբրահամ ամիրայի Ակնեցւոյ Մահտեսի Յօհաննան, յամի փրկչին 1824...):

25. Y – № 1247: ԺԳ դ.: Կազմի ետեւում սեւ թանաքով գրուած է. «Հմր. 6. Մեկնութիւն աւետարանին Մատթէոսի ի Ներսիսէ Շնորհալուոյ 16 համարն 5-րդ գլխոյն ութածալ բոլորագիր, գրեալ ի թուղթ բամբակի, անյայտ թուականու գրչութեան ու անուան գրողին...»: Վերջում նշուած է. «Չունի յիշատակարան»: Ընտիր մագաղաթեայ պահպանակից յետոյ թղթի վրայ նոսրգրով գրուած է. «Մեղա Տէր, մեղայ Տէր, մեղայ, վայ ինձ, վայ ինձ, վա՛յ»: Աւելի ներքեւ աւելի հաստ տառերով. «Գրքի կողի գիր գրելն մեղք է»:

Էջ 2ա-Տբ. Կոպիտ կիսախորանի լիւնեաների (կամարաղեղների) ներսում նոսրգիր վերնագիր է գրուած. «Մեկնութիւն Մատթէոսի աւետարանին եւ այլ բանք, ժողովածու»: Հաւանաբար ուշ է գրուած: Առաջին տողը ծաղկագիր գլխատառով եւ կարմիր երկաթագրով, երկրորդը մանուշակագոյն եւ երրորդը կարմիր բոլորգրով (այնուհետեւ խիստ երկրաչափական սեւ բոլորգրով) «Մատեանք աստուածագիծք եւ հոգեբուղիս...»: Իւրաքանչիւր խորանի մեկնութիւնը սկսւում է կարմիր տողով:

Էջ 9ա. Բարակ ուղղանկիւնածեւ գլխագարդ, վերնագիր կարմիր բոլորգրով, «Ներսէսի եպիսկոպոսի եղբօր Գրիգորի կաթողիկոսի, վասն աւետարանին Մատթէոսի»: Առաջին տող. «Աստուածային բարերարութիւն գերազանց է քան զբնութիւն, եւ այնքան մինչ զի մոռացումն առնէլ...»:

Էջ 13բ. Գլխագարդով սկսւում է. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդո Դաւթի, որդո Աբրահամու: Զինչ խօսի աւետարանիչս...»: Մինչեւ 28բ էջը նոյն բոլորգիրն է, ասես քանոնով գծած, իւրաքանչիւր քաղուածք ու մեկնութիւն սկսւում է կարմիր գլխատառերից: 28բ էջում գրչութիւնը փոխուում է, 29ա էջում թեք բոլորգիր է, բայց աւելի ազատ տառերի միջեւ եղած տարածութիւնները: Որոշ էջերում մեկնութեան ներսում աւետարանական քաղուածքները կարմիր տառերով են: Մինչեւ 98ա էջի կարմիր տողը գրեթէ համապատասխանում է Շնորհալու մեկնութեանը (կան որոշ շեղումներ եւ բառափոխութիւններ): Այստեղ աւարտուում է Մատթէոսի մեկնութեան հետեւեալ հատուածով. «Դարձեալ տուն մարմին եւ բնակիչ հոգին եւ լոյս քարոզութիւն առաքելոցն, որովք լուսաւորեցան ոգիք մարդկան գիտութեամբն Աստուծոյ»: Դա տպագրուած գրքում աւարտուում է 104 էջում, որին անմիջապէս յաջորդում է Մատթ. Ե 17 հատուածի մեկնութիւնը:

Էջ 98ա. «Իսկ ձգելն Մովսէսի գառանն ի վերա ծովուն...» հաւանաբար մեկնումն է Ե-գեկիէլի: Այնուհետեւ կան մեկնութիւններ սաղմոսների, մարգարէների, կիրակիների ու շաբաթների, երբեմն վերնագրերով, որ փոքր չափի կարմիր բոլորգրով են, առաջին տողը օխրայ եւ երրորդը կարմիր, քիչ հանդիպող է «Ներսէսի եպիսկոպոսի Տարսուսի ի Ղուկայ աւետարանէ» (165ա) մեկնութիւնը:

Բացի մեկնութիւններից կան եւ արտաքին գրուածքներ, ինչպէս էջ 337բ. «Գրիգորի Եմէսացոյ Սահմանք զանագանք արտորոշեալք ըստ սրբոց ի ծայրագոյն վարդապետաց. Յաղագս տարբերական այլեւայլ անուանց»: էջ 340ա. «Արիստոտէլի» (կարմիր թանաքով) վերնագրի տակ քաղուածք. «Արդ, գոյ զէական յորժամ է եւ զոչ էական ոչ գոյ յորժամ ոչ է...», ապա «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» (կարմիր թանաքով) մեկնութիւն. «աստանոր յայտնեսցէ»: էջ 344ա. «Սահմանք փիլիսոփայականք» եւ այլն:

Կան մանր գրուածքներ մարմնի մասերի, տունկերի, բժշկութեան, բնութեան երեւոյթներին մասին (Նիւսացի, Անանիա, Արիստոտէլ), օր՝ Յաղագս ծովու, Յաղագս երկնային զարդուց, Յաղագս Կաթինդ Ծրոյ, Յաղագս Հիւսիսային աստեղաց, Յաղագս լուսնի, Յաղագս կենդանատեսակացդ, Յաղագս աստեղաբաշխութեան եւ ապա մէկմէկ կենդանակերպերի մասին (օր՝ Յաղագս Առիւծուն, Յաղագս Խեցգետոյն, Յաղագս Կշռոց, Յաղագս Զկանց...):

Էջ 371 բ. «Հողմ արեւելեայ որ կոչի Ապիղիոտէս, ելանէ անծանօթ երկրէն սինէացոց...»:

Էջ 372բ. «Յուսով խնամոցն աստուծոյ մեկնութիւն խորանաց աւետարանին. Աւգնեա Յիսուս Քրիստոս Տէր եւ Աստուած»:

Էջ 376ա. «Վարդան վարդապետի արարեալ Հայր մեր որ յերկինս...»:

Էջ 379ա. «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցոյ գրեալ ի Ներսէսի կախկոպոսէ յեղբորէ կաթուղիկոսի հայոց տեառն Գրիգորիսի ի խնդրոյ գերայ[ւ]ատիւ փեսայի ինքնակալ թագաւորի Հոռոմոց»: Ձեռագիրը փոփոխուող գրչութիւն ունի: Օգտագործուած են օ, երբեմն ու փիւ ւ, կայ նաեւ յ նախդիրի անտեղի գործածութիւն:

26. Z – № 2041: Ժողովածու: Ժէ դար (1676 թ. առաջ): Գրիչ՝ Կարապետ երէց, Էրեմիայ: Ստացող՝ Աստուածատուր Վանեցի: Բովանդակում է Տօնապատճառ, Քարոզք եւ այլն: Ներկայացնում է միայն այն նիւթերը, որոնք ուշագրաւ են արուեստի տեսութեան եւ պատկերագրութեան տեսակէտից:

Էջ 4ա. «Ի տօնի Դաւթի մարգարէի եւ Յակոբու եղբօրն Տեառն, սրբոց վարդապետաց ասացեալ»: Էջ 11բ. «Ի յիշատակի Նախավկային»: Էջ 17ա. «Ի տօնի սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի» եւ այլն: Էջ 26ա. «Յաղագս յայտնութեան ճրագայուցին»: Գրուած է ծննդեան, Բեթղեհէմի, հովիւների այցի եւ առհասարակ ողջ ծննդեան շրջանի մասին: Էջ 63ա. «Շարական Եփրէմի Ասորոյ»: Էջ 72բ. «Գրիգորի Աստուածաբանի Ազգացելոյ ի յայտնութեան Տեառն» մինչեւ 76ա էջ: Էջ 111ա. «Կարգ եւ խորհուրդ յարութեան Ղազարու»: Էջ 115ա. «Խորհուրդ գալլստեան Տեառն յերուսաղէմ յաւուր Ողոզոմենին»: Էջ 164բ. «Յովհաննու Ոսկերեբանին ի Գ[որ]ծ[ո]ցն մեկնութենէ սկիզբն»: Էջ 171ա. «Յաղագս իջման Սուրբ Հոգոյն յառաքեալսն»: Էջ 181ա. «Յաղագս տօնի Վարդավառին»: Էջ 192բ. «Ի ննջու[մն] Աստուածամօր կուսին» եւ այլն:

Կան անտարեթիւ յիշատակարաններ: Բայց յուզիչ է 1676 թ. յիշատակարանը. «Յունիսի է (7), որ է պաւհք գիւտի նշխարաց սուրբ Լուսաւորչին յաւուր չորեքշաբթի, ոմն ժանդ եւ արեանարբու նզովեալ եւ երէք թշուառական այր յանկարծակի հարեալ դանակաւ զԱստուածատուր զանմեղ որդեակն ի տեառ ժամացն մահացաւ. Տէր Յիսուս Քրիստոս գասեցոյ զսա ըստ քոց սրբոց մարտիրոսացն, քանզի եւ սորայս հեղաւ վարդապոյն արիւն ի տարապարտուց: Թուին ՌձԻԵ (1676)» (176բ):

27. Ե – № 4139: Տօնապատճառ: 1267 թ.: Հաղբատ: Գրիչ՝ Յովսէփ, Տիրացու, Գրիգոր: Թերթ 489: 25×17: Յիշատակարան գրչի 51ա, 134ա, 252ա, 386ա, 438ա, 488բ եւ այլուր:

1ա – Հետնագոյն շրջանի յիշատակարաններ: Որպէս վերնագիր հազիւ ընթերցուած է. «Սկիզբն տաւնից եւ հոգեւոր ուրախութեանց ամենայն հաւատացելոց, է տաւն ծնընդեան եւ յայտնութեան Տեառն...»:

Տբ – «Սրբոյն Ստեփանոսի Նախավկայի»: Սկիզբ. «Աստուածազարդ շուք տաւնիս լուսակազմ երեւմամբն իւրով...»:

13բ – «Պետրոսի եւ Պաւղոսի»: Սկիզբ. «Աստուածարար սքանչելեացն բազումք են զոր իմանամք եւ ասել անգարանամք»: Գրիչը սխալուելով նորից կողքից ճիշտն է գրում ու շարունակում:

18ա – «Յոհաննու եւ Յակորա»: Սկիզբ. «Աստուածահրաման պատուեր ունէր Իսրայէլ, սկիզբն տաւնին եւս մեծարանաւք ընդունել եւ ահիւ եւ զկատարումն կրկին պատուով եւ մեծաշուք փառաւք, զի մի թուիցին յագեալ եւ ձանձրացեալ տաւնողքն...»:

28ա – «Յաղագս յայտնութեան ճրագալուցին»: Սկիզբ. «Ըստ արարչագործ նորոյ արարչութեանս սկիզբն հիմն եւ արմատ է աստուածայայտնութեան տաւն...»:

30ա – «Քրիստոս ծնեալ ճառին պատճառ»: Սկիզբ. «Աստուածայայտնութեան խորհուրդ, քարոզեալ ծանուցաւ ազգի մարդկան...»:

40ա – «Նախեգան: Յաղագս խորանաց Աւետ. Մաթէոսի»: Սկիզբ. «Մատեանք աստուածագիծք...»:

45բ – «Պատճառք եւ թելադրութիւն չորից աւետարանացն, թէ որպէս գրեցան եւ յորքան ժամանակս եւ թէ որպիսի աւրինաւք յառաջինսն խորհուրդ նոցայ երկնէր եւ գայր»: Սկիզբ. «Յարեւելս ասի տնկեալ զգրախտն, ուստի եւ ազրիւր ելանէր գետահետեալ հորդիւք, յորմէ եւ չորս առաջս բաժանին, որոց անւանքն այսինչ է. Փիսոն, Գիհոն, Տիգրիս, Եփրատէս, որով արբեալ պարարտանայ երկիր, այլաւքն հանդերձ...»:

51ա – «Ներսիսի կաթողիկոսի ժող[ովեալ] մեկնութիւն աւետ. Մաթ. ի խնդրոյ նորուն եղբար Գրիգորիսի վերադիտողի հայոց: Յովսէփ գրիչս յիշեայ ով եղբ. ազաչեմ»: Սկիզբ. «Սիրոյ զաւրութիւն գերազանց է...»: Վերջ. «... եւ որ իցեն առաջին գրունք» (54բ):

54բ – «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ Դաւթի, որոյ Աբրահամու: Զի՞նչ խաւսի աւետարանիչս, զՄիածնէ Որդոյ Աստուծոյ...»: Մեկնութիւնն աւարտուում է Գ զլիսի վերջով եւ այսպէս. «...եւ ոչ հրեշտակս կամ հրեշտակապետս պատրաստ է լինել մեզ մկրտութեամբն այլ Որդիս սիրելիս Աստուծոյ» (ինչպէս տպագրուածում W):

62բ – «Պատճառ սրբոյ Յովհաննու Կարապետին»: Սկիզբ. «Բազմադիմի են ճանապարհ իմաստութեան աստուածեղէն տաւնից...»: Կան եւ այլ տօների մեկնութիւններ, որ մեր նիւթին անմիջապէս չեն վերաբերում:

116ա – «Կարգ եւ խորհուրդ յարութեան Ղազարու»: Այնուհետեւ սկսւում են ճառեր:

119ա – «Էր ոմն հիւանդ Ղազար»: Սկիզբ. «Բազումք ի մարդկանէ յորժամ տեսանեն զի սրբութիւնք եւ հաճոյք Աստուծոյ չարչարեալ լինին»: Լուսանցքում զարդի մէջ. «Ոսկերերե-Ոսկերերան եւ ապա լուսանցքներում վկայութիւններ «Եփր», «Ոսկ», «Ստ», որոնք շարունակուում են:

130բ – «Խորհուրդ յաւանակաւ գալըստեան Տեառն յերուսաղէմ»: Սկիզբ. «Զսուրբ արմաւենեացս աւր, զոր եւ աւրհնեալ անւանեցին իմաստունք եկեղեցւոյ, աւրինակ իմանամք միւսանգամ գալըստեան Քրիստոսի...»:

134ա – «Յովսէփ գրիչ. Պատճառ գալըստեան Տեառն յերուսաղէմ Քերորի ումեմն ասացեալ ի բանն, որ ասէ. եւ գան յերիքով: Աւետարան ըստ Մարկոս»: Սկիզբ. «Զմեծասքանչ եւ զտիեզերածագ ծագումն իմանալի արեգական արդարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի զգալի եւ յիմանալի արարածս, նախանկար տեսութեամբ Հոգոյն Աստուծոյ...»:

Բացի եկեղեցու հայրերի ճառերից, կան նաեւ գրուածքներ այդ նոյն հայրերից բազմաթիւ վկայակոչումներով: Հետաքրքիր է գրուածքը զրախտի գետերի մասին, որոնց հետ կապուում է եւ անգին քարերի թուարկումը: Արժէ բերել քաղուածաբար.

«Եւ գետ ելանէր յԵղեմա՝ ոռոգանել զգրախոտն, եւ անտի բաժանի չորս առաջս: Անուն միունն Փիսոնն, նա է, որ պատէ զամենայն երկիրն Եւփրատա, անդ ուր ոսկին է. եւ ոսկի երկրին այնորիկ ազնիւ է. եւ անդ է սուտակն եւ ակն դահանակն: Եւ գետն երկրորդ Գեհոնն. նա է, որ պատէ զամենայն երկիրն Եթէոպիա: Եւ գետն երրորդ Տիգրիս. նա է, որ երթա յանդիման Ասորեստանեաց: Եւ գետն չորրորդ Եփրատէս: Փիսոն գետ ելանէ յարեւելից հեւտիսոյ ի Յեմաւոն լեռունէ եւ գա ի հարաւակողմն Հնդկաց եւ մտանէ ի ծովն Կարմիր: Հնդիկք Գանկէս կոչեն եւ պարսիկք Զեհնոտք, յոյնք՝ Ինդոս, եբբայեցիք՝ Փիսոն: Եպրիփան ասէ, թէ յոյնք Հնդիկէս կոչեն: Իսկ զԵւփրատ զներքին հնդիկսն ասեն, անդ է ոսկին ազնիւ, որ բուսմամբ է, որ պահեն մըջմունքն մեծամեծք... Մաւսէս կարկէհան ասէ զսուտակն եւ յԱկանց գիրն կայծ ասի եւ գտանի ի յԱփրիկէ...»: Այնուհետեւ խօսում է Փիսոնի եւ նրա մօտի անգին քարերի մասին, որ տեղ-տեղ դժուարընթեռնելի է, խօսւում է միւս գետերի, Հայաստանի հետ նրանց կապի (Տիգրիս, Եփրատ), դրանց տարբեր անունների մասին: Բաւականաչափ հետաքրքիր եւ մութ բնագիր է: Այնուհետեւ սկսում է գետերի համեմատութիւնը աւետարանիչների հետ, որ հետագայում օգտագործում է Գրիգոր Տաթևացին իր Մատթէոսի աւետարանի մեկնութեան մէջ:

277ա – «Մեկնութիւն սուրբ աւետարանին Յոհ. Ի սկզբանէ բանս»: Լուսանցքներում կան բազմաթիւ հղումներ Եփրեմ Ասորուց, Յովհան Ոսկեբերանից, Ատեփանոս Սիւնեցուց, Նանա Ասորուց եւ այլն:

223ա – «Յաղագս նաւակատեաց..., զոր արարեալ է սրբոյ Գրիգ. Աստուածարանի»:

305բ – «Ի Ննջումն Աստուածամարն»: Սկիզբ. «Ի գերազանց լուսոյն պայծառացան ամենայն արարածք...»:

Ձեռագիրը շատ հարուստ է իր բազմապիսի մեկնութիւններով: Յիշատակարաններից. «Ջոզնամեղ եւ զոչ արժան զրոց զրոցս զբուրթեան զՏիրացու գրիչ յիշեցէք ի Տէր» (252ա): «Մ՛վ պատուական եւ բարեփառ եղբայր, յիշեա ի Տէր զաշխատող գր[իչ] եւ զհոգոյեղբայրն ի Յուսէփ...» (այլ գրչութեամբ շարունակւում է. «...ըզՄկրտիչ անարժանս», որի սկիզբը չի ընթերցւում), 188բ էջում, որ նորոգուած է, յիշատակարանից կարելի է որսալ, որ այս «Տէրունական տաւնից պատճառն» կոչուող ձեռագիրը պատուիրել է Տիրացուն «յաթոռակալութեան Տէր Յով[անէս]ի, մեծ հոետորի եւ սուրբ վերադիտողի: Եւ ի մէջ համագումար եղբայրութեան ա[ռ]եալ մեր ի Վանանդ գաւառու ի Կարս քաղաքէ պանդխտանալ աստ եւ բազում ինչ աշխատել, վասն որոյ կրկին մաղթանաւք... հայցեմք» եւ այլն: Մինչգեռ էջի ստորին մասում սեւ մելանով նոր ձեռագրով գրուած է. «Թւ. ՉԺԶ (1267) ի վանս Հաղպատս, Յօհան հոետ.»:

Գրութեան իւրայատկութիւններ. բարոյն, թագոյց, փառսն փխ փառս, սեփհականս, թւել, գթութեանց փխ գթութեանցն, ըմբէ, սրորէական, ծաղկերանկ, գունովք, դիւրայէղ, գանձուքս, նկարել փխ նկարեալ, յաւրինուածովք, սպասաւորութեամբք, հաւատսն, սաղոմոնեան, Սեբեկայ, նախամարք, բերանովք, սղալեցաք, ընձաից, մերաւք, ձերաւք փխ մերովք ձերովք:

28. d – № 1245: Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի: 1613 թ.: Համիթ: Գրիչ՝ Յովանէս երէց: Ստացող՝ Մաղաքիա Թօխաթեցի: Յիշատակարան գրչի 269բ: Հետագայի 1ա (1631), 2բ (1671), 1ա (1672):

1ա – 1631 թ. այս յիշատակարանը ուշագրաւ է այնքանով, որ Կ. Պոլսի Իսկիւտարը արդէն նշում է իբրեւ ձեռագիր գրքի հաւաքման կենտրոն: Այնուհետեւ նոտրգիրով



սկսում է մի այլ յիշատակարան, որը երկու տարեթիվ է բովանդակում. մէկը 1672 թ. գրուած ինչ-որ աւետարանի, միւսը խորանների ոտանաւոր մեկնութիւն, որն ընդօրինակուել է հաւանաբար Տիվրիկում 1647 թ.: Քանի որ մեկնութիւնը գրուած է ուշ շրջանում, մենք այն տալիս ենք որպէս խորանների ժԲ մեկնութիւն: Այդ յիշատակարան-մեկնութիւնը ոտանաւոր շարադրանքն է Գրիգոր Տաթեւացու գրած խորանների մեկնութեան:

10ա – Կարմիր բոլորգրով վերնագիր Բ սիւնակի վերջին տողում «Յեկեղեցական պատմութիւն[նէ]»: 12բ – Կարմիր բոլորգրով վերնագիր՝ «Ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէոսի, ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ, կարգեալ եւ յաւրինեալ դիւրահաս ընթերցողաց, առաջինն Ներսէսի՝ Հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբոր Գրիգորիսի վերադիտողի Հայոց: Աւգնեա Քրիստոս Աստուած եւ ուղղեա»: Սկիզբ՝ «Սիրոյ զաւրութիւն գերազանց է...»:

Շնորհալու մեկնութիւնն աւարտում է 87ա էջի Բ սիւնակում «...ըստ այնմ, թէ ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ եւ կատարեսցին գրեալքն»: Այնուհետեւ («Մինչեւ անցցեն երկինք եւ երկիր յովա մի...») Արիստակէսի մեկնութիւնն է, որտեղ օգտագործուած են Յովհան Ոսկերեանի մեկնութեան հատուածներ: Դա հաստատում է 269ա էջում Արիստակէսի արգէն յայտնի յիշատակարանով:

Արիստակէսի ժԲ դարի յիշատակարանի ընդօրինակութեանը յաջորդում է գրչի յիշատակարանը. «Փառք եւ արհնութիւն եւ գոհութիւն ամենասուրբ Երրորդութեան, եռանձնեա անեղ էութեան, մի բնութեան, մի աստուածութեան եւ անմահ եւ անվախճան թագաւորութեան, յամենայն գոյից եւ գոյեղինացս, ի սեռից եւ ի մասանց արարածոց, յանտարից եւ տարրեղինացս եւ ի մեր յանպիտան նուաստութեանց, վերառաքեցի փառարանութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ արժանաւորեաց զանարժանութիւնս մեր հասանել յաւարտումն աստուածախաւս մեկնութեանս սուրբ Մատթէոսեան աւետարանիս տկար եւ տարտամ ձեռամբ, անարհեստ եւ փձուն գրչի մեղապարտ Յովանիսի, լոկ աւուամբ իրիցու, յամի ՌԿԲ (1062) թուի, ի Համիթ մայրաքաղաքի, ի դռան սուրբ Սարգսի զաւրավարին սուրբ Կիրակոսի եւ այլ սրբոցս, որ ընդ հովանեաւ սոցին պարփակիմք ի յբստացումն եւ ի վայելս գերապանծ բաբունւոյն, խրթին եւ աննիրհական հսկողի, տէր Մաղաքիա աստուածաբան Թօխաթցոյ, յիշատակ իւրն եւ բարի ծնաւդաց իւր...» (269աբ): Այնուհետեւ ստացող Մաղաքիա վարդապետ Թօխաթեցու յիշատակարանն է:

29. e – № 1253: Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի: 1590: Մալաթիա: Գրիչ՝ Մարտիրոս եպիսկոպոս: Կազմող՝ Յովհաննէս: Յիշատակարան գրչի՝ 353բ, կազմողի՝ 353բ (1598):

1ա – Դեղին, մանուշակագոյն եւ կապոյտ գծանկար կիսախորանով եւ լուսանցազարդով տիտղոսաթերթ: Վերնագիրը կարմիր բոլորգիրով գլխազարդի մէջ. «Մեկնութիւն խորանացն աւետարանին»: Առաջին տողը գլխատառերով է, 25 տողերը կարմիր բոլորգիր: Յաջորդ էջերը բոլորգիրին մոտիկ նոտրգիր են: 11ա – «Յեկեղեցական պատմութիւն»: 15ա – «Յեկեղեցական պատմութեան» աւարտից յետոյ կարմիր գրով՝ լուսանցքի խաչանշանի կողքին. «Ժողովումն մեկնութեան սրբո աւետարանին, որ ըստ Մատթէոսի, բանից իմաստուն վարդապետաց եկեղեցու կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց առաջինն»: 15բ էջում վերնագիրը շարունակուած է. «Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբորն Գրիգորիսի վերադիտողի Հայոց. Աւգնեայ Քրիստոս Աստուած իմ»: Մնացած ամեն ինչ համապատասխանում է Շնորհալու մեկնութեանը եւ Արիստակէսի կազմած քա-

դուածոյ շարունակութեանը ընդհուպ համառօտ յիշատակարանը իր իւրայատուկ աւարտով. «Յաւրինակս այսչափ էր յիշատակարանն Արիստագիսի. զայն որ կատարեալն էր, զայն չգտաք. անմեղադիր լերուք» (350ա): Այնուհետեւ գրչի յիշատակարանն է, որ սկսուած է «փառք»-ով եւ ապա տալիս կոնկրետ տուեալներ. «Ի շրջագայութեան թուականիս հայ տուժարիս Ռ եւ ԼԹ երորդի, քառասներորդի ի Մելտենի գաւառիս, որ կոչի տաճիկ բառով Մալաթիեայ, ի մենաստանիս, որ կոչի յանապատ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ընդ հովանեաւ սրբոյ Յովանիսի եւ սրբոց անարծաթ բժշկացն Կողմայի եւ Դամիանոսի եւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի եւ սրբոյն Սոփիայի ի յառաջնորդութեան եւ ի հայրապետութեան հայոց ազգի տեառն Ազարիայի հայոց կաթողիկոսի, աթոռակալ եւ պատրիարկ սրբոյ աթոռոց Երուսաղէմի եւ ի սպասաւորութեան եւ ի վերակացութեան սուրբ ուխտիս, մեղաւոր Մարտիրոս եպիսկոպոսի, որ չեմ արժանի կոչել ի կարգ առաջնորդութեան» (353բ): Նոյն էջում կազմողի յիշատակարանն է. «ՌԽ եւ է կազմող Յոհանէս, Մասրվանց գիւղ»:

30. Բ – № 1300: Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւնք Մատթէի, Յովհաննու: 1456: Գրիչ՝ Մատթէոս: Ստացող Իգնատիոս արեղայ: 1ա – «Մեկնութիւն խորանաց աւետարանին»:

31. Ը – № 1301: Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւն Մատթէի, Քարոզք: Սեւան: 1451: Գրիչ՝ Դանիէլ արեղայ: 2ա – «Մեկնութիւն խորանաց աւետարանին»:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱՅՆ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

 12 BC հրեշտակաց  
 13 B հարցանէ  
 14 BC բարբառ  
 ք Հ-մ-դ. Լ-ս. Կ-Գ-1  
 ք Զ-է. ժ-Գ-6  
 ք Լ-ս. Խ-Բ-2  
 15 B սիրեցոյն  
 է Լ-ս. Ե-1  
 շ Հ-մ-դ. Գ-ս-է. Ի-Գ-36  
 16 C խոցեցինն  
 է Գ-վ-է. Ի-37  
 17 C փառոք  
 18 BC գվէրսն  
 19 BC կարծեսցեն

ցաւն փառաւք: 412 Այլ նոյն է Տէրն, որ խոնարհեալ ի մեր բնութիւն եւ դարձեալ փառաւքն երեւի: 413 Թէպէտ եւ<sup>1</sup> չեն արժանի տեսանելո[յ] զՏէրն որդիքն կրճատելոց պատմեսցեն<sup>2</sup>, սակայն ի յանդիմանութիւն խաչահանուացն ցուցանէ զխոցուածսն եւ զվէրս բեւեռացն:

414 «Եւ զի<sup>3</sup>նչ այլ այս է<sup>3</sup>, եթէ ոչ զմշտնջենաւորութիւն եւ զյարակա[յ]ութիւն<sup>4</sup> սուրբ զենմանս հաւատարմացուցանէ<sup>5</sup> [\*բանս]»: 415 «Հայեսցին, յոր խոցեցինն»: 416 Վասն այն ի մարգարէէն ասի, քանզի խաչեալ միշտ զաւրութեամբ ի սմա լինելով, հաւատարիմ լիցի հաւատացելոցն, որով եւ այժմէն սուրբ զենումն մարմնոյ եւ արեանն Տեառն զնոյն խորհուրդ զեկուցանէ:

417 «Վասն զի անմահ է<sup>6</sup> զենումն հաւաստի [\*եւ նոյն միշտ անմահ եւ կենդանի]»: 418 Ստուգապէս ըստ մարմնո[յ] մեռաւ ի վերա[յ] սորա, այլ անմահ աստուածութեամբն, զոր ցուցանէ բանին:

419 «Միշտ կենդանի եւ արդարեւ մեռեալ»: 420 Նաեւ կենդանի անմահ բնութիւն աստուածութեանն:

421 «Քանզի Աստուած առ Հաւր եւ առանց կարծեաց մարդո[յ]»<sup>7</sup>: 422 Ծճարտապէս ըստ տնտեսութեան մարդ եղեալ չըջէր ի վերա[յ] երկրի:

423 «Եւ նոյն միշտ [\*Աստուած] ընդ Հաւր»: 424 Արդարացուցանէ եւ զառաջին ասացեալն. մարդ տեսանիւր ստուգապէս, եւ ի ծոց Հաւր հանգչէր համագո[յ]ակից նմա:

425 «[\*Որպէս] ճշմարտիւ ասէ<sup>8</sup> եւ ոչ կեղակարծելի»: 426 Ըստ ոմանց անհաւատից, որ կարծիւք<sup>9</sup> ասէին զմարդեղութիւնն Քրիստոսի:

427 «Աստուած անպարագրելի եւ անբաւ [\*եւ յարգանդի Կուսին բառնիլ կրիւր ըստ մարմնոյ]»: 428 Թէպէտ եւ բովանդակեցաւ ի մարմնի անպարագրիժն Աստուած, սակայն անշփոթելի աստուածութեամբն եւ անփոփոխելի զաւրութեամբ կատարէր զըստ<sup>10</sup> մարմնոյն: 429 Զոր երկիրք եւ երկիր ոչ կարէին բառնալ, զանտանելին արարածոց խոնարհութեամբ անճառելեաւք յորովայն Կուսին պարագրեցաւ: 430 Եւ այսու բանիւ խնու զբերանս ն[ե]ստորականացն, որ ասեն Բանն մարմին ոչ եղեալ:

431 Վկա[յ] ածէ զարգանդ Կուսին, որ<sup>11</sup> զմարմինն էառ, ըստ որում ասէ. «[\*Եւ] մարդկապէս առ ծնունդս մերձեցեալ»: 432 Մնաւ ի Կուսէ անարատէ, որպէս ինքն կամեցաւ, ծնեալն ի Հաւրէ անմարմնապէս եւ անժամանակարար: 433 Ոչ<sup>12</sup> որպէս եւ մեք կամիմք, այլ առանց առն յղացաւ, եւ ծնաւ անապականաբար, զի ամենայն ինչ ապականացու ի բաց քեցեալ ի նմանէ:

434 «Ըստ որում Աստուածածին ծնաւդն»: 435 Յամաւթ լիցի ն[ե]ստորիոս եւ նմանք նոցա<sup>13</sup>, որք միանգամ մարդածին ասացին զՄարիամ, եւ ոչ Աստուածածին:

436 «Եւ նոյն ինքն ծնեալն Աստուած անպարագրելի եւ անբաւ»: 437 Եւ զայսուսիկ ունիմք իմանալ ի հրշտակէ<sup>14</sup> անտի<sup>15</sup> ասացեալ առ կոյսն, թէ. «Որ ի քէն ծնա-

1 B բէփիս բէպէտ եւ

2 BC չիբ

3 BC չիբ

4 B զարակաութիւնս

5 B հաւատարմացուցէ

6 C էր

7 BC մարդ

8 BC չիբ

9 BC կարծեալ

10 C ըստ

11 C ուր

12 C չիբ

13 B նոցիմ C նորիմ

14 BC հրեշտակէ

15 BC անտի

նելոց է՝ սուրբ է եւ Որդի Աստուծոյ կոչեացի»<sup>1</sup>: 438 Քանզի թէպէտ եւ մարդկապէս ծնաւ, ոչ<sup>2</sup> իրրեւ<sup>2</sup> զմեր<sup>3</sup> ծնունդն, այլ անճառելի եւ անքննելի, աստուածապէս ծնընդեամբ՝ առանց ցաւոց եւ երկանց, եւ արտաքո[յ] ամենայն անգոսնելի<sup>4</sup> կրից:

439 «Այսպէս եւ ի սմանէ Հաղորդեալ Համբուրիւ, եւ մկրտեալ ի մահ մարմնով եւ ըստ մարմնո[յ]»: 440 Ի ծնունդն մերձեցեալ ասէ, զի ըստ աւետեաց Հրշտակին<sup>5</sup>, որով ընդ լսելիսն մտանէր անբովանդակելին, յարենէ Կուսին յինքն ձգելով՝ մարմին արար կենդանական<sup>6</sup>, եւ Աստուծոյ մարմին: 441 Եւ այսպէս, իննամսեալ[յ] ժամանակաւք չափեալ, ըստ աւրինի մանկանց<sup>7</sup> ծնելո[յ]<sup>8</sup>, ծնաւ անմահացուցիչն: 442 Իսկ առ խաչս «Համբուրիւ» ասէ մերձեցեալ, զի Համբուր սիրո[յ] է նշանակ, եւ խաչս սիրո[յ] է զաւրութիւն, որով Հաղորդեալ բեւեռմամբն ըստ երից ժամուն<sup>9</sup> ի վերա[յ] սորա սիրով միացոյց զամենխսեան<sup>10</sup> առ իւր աստուածութիւնն: 443 Իսկ մկրտութիւն զչարչարանսն կոչէ, որ մկրտեցաւ արեամբն իւրով, ըստ որում ինքն աւանդէր աշակերտաց<sup>11</sup> իւրոց ընդունել զբաժակ չարչարանացն եւ մկրտութեան: 444 Զի որպէս մկրտութիւն մաքրիչ է մեղաց, այսպէս եւ արեամբ նահատակութիւնն մաքրէ յամենայն մեղաց եւ Որդի Աստուծոյ առնէ:

445 «Ըստ որում խաչս Աստուծոյ խաչ»: 446 Ամաչեացեն, որք միանգամ<sup>12</sup> յանդգնին մարդ ասել եւ ոչ Աստուած զխաչեալն<sup>13</sup>:

447 «Եւ նոյն ինքն խաչեալն Աստուած<sup>14</sup> անպարագրելի եւ անբաւ»: 448 Թէպէտ եւ անհաւան<sup>15</sup> Հրեայքն ոչ հաւատան յարուցելոյն ի մեռելոց, այլ մեք՝ հաւատացեալք եւ փրկեալք նովաւ, հաւատամք զանմահն եւ զանբովանդակելին Աստուած ընդ չարչարանաւք մահու անգեալ<sup>16</sup> վասն փրկութեան աշխարհի:

449 «Եւ ոչ ինչ երկրա[յ]եսցի»: 450 Եւ այսոքիկ առանց երկրա[յ]ութեան է հաւատալի:

451 «Զի թէ առ ժամայն [\*եւ ոչ անմահ զենումն զենեալն աստ, ապա եւ առ ժամայն] նմա եւ խաչանալն Հասցէ»: 452 Պարտիմք մշտջենաւորապէս իմանալ զենումն Աստուծոյ, ըստ որում եւ այսաւր եւ յապագայսն հանապազ կատարի սորին խորհուրդ: 453 Նոյնպէս եւ միշտ Աստուծոյ խաչ փրկական նշանս, եւ ոչ առժամայն ի Գողգոթա[յ] աւարտեալ եւ ապա դադարեալ:

454 «Բայց ապա ուրեմն [\*ճշմարտապէս] անմահի ելով սայ զենման եւ պատարագի զենարան [\*եւ սեղան]»: 455 Պատարագքն, որ ի Հինն մատուցան, ի զենանելն մեռանէին, եւ այսոքիկ քաջայայտ է ամենեցուն: 456 Իսկ ճշմարիտ պատարագն մեր՝ Քրիստոս, որ զենաւ ի վերա[յ] այսր սեղանոյս, միշտ զենանի՝ անմահ գոյով աւարատ գառն Աստուծոյ, որ<sup>17</sup> բառնա[յ] զմեղս աշխարհի:

«Ղո՛ւն՛. Լ՛ 35  
1 C չիբ  
2 BC որպէս  
3 C մեր  
4 BC անկոսնելի  
5 BC հրեշտակից  
6 BC կենդանի  
7 C մանկանցն  
8 BC ծնանելոյ  
9 BC ժամուցն  
10 BC չիբ  
11 BC աշակերտացն

12 B միանկամ  
13 BC մարդ ասել զխաչեալն եւ ոչ աստուած փո մարդ ասել եւ ոչ աստուած զխաչեալն  
14 C անմահ փո աստուած  
15 B անհաւատ  
16 BC անկեալ  
17 B չիբ

457 «Ըստ նմին [<sup>1</sup>\*նոյնպէս] զխաչանալն եւ զսեղանանալն կալցի»: 458 *Զի որպէս պատարագեալ՝ անմահ եւ միշտ՝ զենեալ, նոյնպէս եւ խաչն՝ սեղան յարակայ, եւ պատարագեալն միշտ տեսանի հոգիոյ*<sup>2</sup> աչաց՝ բեւեռեալ ի սմա:

459 «Եւ ի՞բր արդիւք<sup>3</sup>, եթէ ոչ ի սմա, յորոյ] ահէ ամենայն դողացեալ տարր<sup>4</sup> եւ անտարր, եւ փախստեալ] սարսէին, սաքրէին դեւք, [<sup>5</sup>\*եւ ամենայն խաւարային իշխանութիւնք]»: 460 *Աստուածալա]ելչաբար ուսուցանէ, Հաւատարմացուցանել<sup>5</sup>, զի սմա միացեալն:* 461 *Որով Հարցական դնէ, յասկն, եթէ ոչ էր ի սմա զաւրուութիւնն Աստուծոյ, ապա զիս<sup>6</sup>րդ յահէ սորա զարհուրին եւ դողան երկնա]ինք<sup>6</sup> եւ երկրա]ինք, այսինքն՝ մարդիկ<sup>7</sup> եւ հրշտակք<sup>8</sup>:* 462 «Տարր» կոչէ, որ ի չորից ունին զգոյ]ութիւնս<sup>9</sup>, եւ «անտարր» նախ զլուսաւորսն<sup>10</sup>, որք զխաւարումն ընկալան յաւուր խաչելութեանն, զի ոչ են յայտոցիկ չորից տարերց: 463 *Եւ դարձեալ՝ «անտարր» ասէ զդեւս<sup>11</sup>, որք անմարմինք են, որով փախստեալ] լինին<sup>12</sup> սարսելով ի սորին զաւրութենէ, մանաւանդ եւ սաքրէին, որ է առաւել զարհուրելի իբր թաքստեամբ:* 464 «Եւ ամենայն խաւարա]ին իշխանութիւնք»: 465 *Զպատճառ անկանելոյն<sup>13</sup> նոցա ցուցանէ, որ փոխանակ լուսեղէն կարգաց նոցա եւ պատուոյն ի խաւար դատապարտեցան:*

466 «Այտոցիկ Հաւատ յարդեանցն փորձէ»: 467 *Հաւատարմութիւն բանիցս, ասէ, յարդեանցն ցուցանի:* 468 *Զի յամենայն ժամանակի եւ առ ամենայն ազգս զաւրութիւն սորա բժշկութիւն առնէ<sup>14</sup>, որք Հաւատով<sup>15</sup> խնդրեն:* 469 *Իսկ որք արհամարհեն զպատիւ սորայ՝ զհակառակն Հատուցանէ:*

470 «Վասն որոյ ոչ դոք կարծեմ այլազգաբար զմտաւ ածել [<sup>16</sup>\*եւ խորհել յաղագս այտոցիկ]»: 471 *Հաւատացելոց Քրիստոսի, ասէ<sup>16</sup>, ոչ կարծեմ անհաւատ լինել յաղագս զաւրութեանն աստուածա]ին անջատիլ ի սմանէ<sup>17</sup>, այլ միշտ սովաւ կատարեալ զաւրութիւնն սքանչելի:*

472 «Այսուհետեւ հոգոյ] ակամբ իբր աչաք մարմնոյ] յայտնապէս նկատելով Հաւատասցի [<sup>18</sup>\*իբր թէ այժմ]»: 473 *Յետ այսր ամենայն բարեաց, որպէս ծանուցաք վերագոյն, յորմէ սարսեն<sup>18</sup> երկինք եւ երկիր ի զաւրութենէ սորա, պարտ է մեզ ի բաց մերկանալ զմարմնական հեշտութիւնս, իբրու զի կարողանամք հոգոյն<sup>19</sup> աչաք եւ հաւատով սրտիւ, որպէս առաջի աչաց, նկատել զչարչարանաց խորհուրդն<sup>20</sup>:*

474 «Նաեւ զմիածինն Հաւր<sup>21</sup> բազկատարած տեսանելով ի սմա բեւեռեալ»: 475 *Միածին է Բանն Աստուած եւ եղբայր ոչ գոյ] նորա:* 476 *Զի որպէս միշտ Հայր ասի Հայր<sup>22</sup>, այսպէս միշտ Որդի կոչի Որդի եւ Աստուծոյ Որդի, բան եւ լոյս, իմաստութիւն եւ զաւրութիւն:* 477 *Զանքակ սիրոյն միաւորութիւն նշանակէ որդիութեանն անուն ի նորին բնութենէ, վասն ո-*

1 BC չի՛

2 BC հոգոյ

3 BC արդեալ

4 B տարտարր

5 BC հաւատարմացուցանէ.

6 B երկնայինքն

7 C մարդիկ

8 BC հրեշտակք

9 BC զգոյութիւնն

10 B լուսաւորսն

11 BC զդեւսն

12 BC լինին

13 C անկելոյն

14 C դեւ

15 C հավատով

16 BC չի՛

17 C նմանէ

18 BC սարսէին

19 C հոգոյն

20 C խորհուրդ

21 B չի՛

22 B հայր ասի միշտ հայր փիս միշտ հայր ասի հայր

ըոյ ասէ՛ արժան է մտաց աչաւք ի սա՛ տեսանել զխաչելութեանն՝<sup>2</sup> բան:

478 «Եւ տակաւին իրր ցնցուղ փրկական [\*աղբեր սուրբ] արեանն [\*ի կենարար տնաւրինեցելոյն կողէ, այժմիկ իսկ առաջի աչաց մերոց, կայլականացեալ հրաշիւք յաներեւոյթս զբանաւոր երկիրս ոռոգելով փրկագործէ]»: 479 Որպէս այն աւր ի Գողգոթա[յ] տեսեալ հաւատացին եւ վկա[յ]եցին տեսեանն, այսպէս եւ ի սմա իմանի՝<sup>3</sup> հաւատո[յ]՝<sup>4</sup> աչաւք զփրկական արիւնն, որ ասէ ցնցուղ: 480 «Իբր ընդ փող կայլակացեալ հրաշիւք»: 481 Այսինքն յորդառատ հրաշագործութեամբ ելանէր ի տնաւրինեցելոյն կողէ՝<sup>5</sup>: 482 Եւ աներեւութաբար հաւատամբ զբանաւոր երկիրս, որ է հողի եւ միտք մեր՝ ոռոգելով ըստ աւրինի ջրո[յ], որ եւ ոռոգելով զաւրանան ամենայն տունկք սաղարթիւք եւ պտղաւք՝<sup>6</sup>: 483 Ըստ նմին բանի՛ եւ՛<sup>7</sup> մերս երկիր առեալ ի զաւրութենէ արեանն Տեառն եւ միշտ փրկագործի՛ աւրըստաւրէ բաշխելով ի թողութիւն մեղաց:

484 «Քանզի չեւ եւս տեսանեմք հնազանդեալ՝<sup>8</sup> նմայ՝<sup>9</sup> զամենայն»:<sup>7</sup> 485 Զպատճառ հրաշալի գեներմանն եւ պատարագի նշանակէ, զոր ասաց, հաւատո[յ] աչաւք տեսանել ի խաչն զելուծն՝<sup>10</sup> փրկական արեանն եւ զմեր փրկագործելն: 486 «Զի չեւ եւս տեսանեմք հնազանդեալ»:<sup>8</sup> 487 Քանզի յանհնազանդութենէ մտին մեղք յաշխարհ, եւ ի մեղաց անտի՛<sup>11</sup> մահ: 488 Իսկ

Տէրն մեր եւ արարիչ բժշկաբար վարեցաւ՝<sup>12</sup> տնաւրինականաւքն, սկիզբն արար ի հնազանդութենէն՝<sup>13</sup> մահու չափ եւ մահու խաչի, որպէս զի նորին աղագաւուսուսցէ զհնազանդութիւն հաւատացելոց: 489 Զի թէպէտ եւ նա յիւր կողմանէ կատարեաց զփրկութեանն խորհուրդ, սակայն մերովն անհաւանութեամբ, որքան ի մարմնի եմք, կոչի եւ նա անհնազանդ ըստ մարմնոյ: 490 Յայն սակս միշտ զենամամբն կենագործէ զփրկեալսն:

491 «Եւ որ հնազանդեցոյցն ասի, թէ զամենայն»:<sup>9</sup> 492 Ի մարգարէէն ասացաւ նախագոյն հոգովն՝<sup>14</sup>, եթէ. «Հայր զամենիսեան՝<sup>15</sup> հնազանդ արար ի ներքո[յ] ոսից նորա»<sup>5</sup>, զոր եւ առաքեալ զնոյն բան յաւելու զմերո[յ] անհնազանդութեանն եւ զՏէրն մարդասիրաբար տնաւրինեցելո[յ] զփրկութիւն եալսն՝<sup>16</sup>:

493 «Իսկ գործով ապաքէն մինչ ամենայն զկատարումն առնու զհնազանդելն իմանալ, ուրեմն եւ զփրկեալն՝<sup>17</sup>»: 494 Քանզի բանիւ եւ զաւրութեամբ արար Տէրն զփրկութիւնն, այլ որքան ունիմք մեղանչել ամենայն զսգա[յ]արանաւք՝<sup>18</sup> եւ շնչով, առանց փրկութեան եմք յարդի ժամանակիս: 495 Իսկ յորժամ վախճան՝<sup>19</sup> առնու ամենայն, եւ զաղարեմք ի մեղաց, ապա կատարեալ փրկութեանն հասանեմք: 496 Զի թէ Պաւղոս ի մարմնի տակաւին ականկալութիւն ասէր որդեգրութեանն եւ փրկութեան՝<sup>20</sup> մարմնոյն, զի՛նչ ունիմք եւ մեք ասել, որ կարաւտ եմք յամենայնի:

1 BC սմա  
2 C զխաչելութեանս  
3 B տեսանի  
4 B հոգոյ C հոգւոյ  
5 B չի՛  
6 B պտղովք  
7 B + ի  
8 BC հնազանդել  
9 C չի՛  
- Է:Քր. Բ՝ 8  
10 C գեներման  
11 BC անդի

12 B վերացաւ  
13 B հնազանդութեան  
14 C հոգւովն  
15 BC զամենիսեան  
5 Ս-ը. Լ՝ 5  
16 BC չի՛  
17 C զհնազանդելն ուրեմն իմանալ եւ զփրկելն փիզից հնազանդելն իմանալ, ուրեմն եւ զփրկեալն  
18 BC զգայարանաւք  
19 C վաղան  
20 C փրկութիւն

497 «Եւ փրկուեթիւն այս, որ եւ ամենայնի փրկագործութիւն»: 498 *Փրկութեան յեղանակն ցուցանէ, իբրու ասել «զամենայն», ոչ միո[յ] ազգի եւ միո[յ] սեռի, այլ հասարակ ամենայն բանականաց, որով ընդ աջեացն<sup>1</sup> եւ ընդ ահեկեացն<sup>2</sup> ասի բացորոշութիւն:*

499 «Որպէս [\*եւ] այն, որ ի Գաղատիայն մեղադրելով գիրն ազդէ. [\*«Ձեր, ասէ, գրեթէ առաջի աչաց Յիսուս Քրիստոս գրեցաւ ի խաչ ելեալ<sup>3</sup>», որ ոչ կամելով հետեւել խաչեցելոյն, այլազգաբար խորհիք»]: 500 *Գաղատացիք ազգ<sup>4</sup> են բացազոյն եւ հեռի յերուսաղէմէ յայնկոյս ովկիանոսի:* 501 *Իսկ յորմէ հետէ լուան ի Պաւղոսէ զբարոզութիւն աւետարանին, այնքան դիւրընկալ եղեն բանին, որպէս թէ առաջի աչաց տեսանելով զՔրիստոս:* 502 *Ապա շրջեցին զնոսա յայնց բարուց ոմանք ի հրէից անտի<sup>5</sup> հաւատացելոց:* 503 *Վասն որո[յ] Պաւղոս զայրացեալ զրէր մեղադրելով. «Ո՛ր անմիտ գաղատացիք»<sup>6</sup>, եւ որ զկնի:* 504 *Արդ, աստանաւր աւերինակաւն<sup>6</sup> ծանուցանէ զծածկեալ խորհուրդ խաչիս, ասելով, թէ բանիւ լսեցեալն ականատես ասի առ ի հաւատալ, որչա՛փ եւս առաւել, ուր խաչն ականատեսի գլխովին պարտ է հաւատալ:* 505 *Ձի թէ նոքա, որք ոչ տեսին զխաչեալն Աստուած, եւ ի նմանէ եղեալ զայնպիսի հրաշագործութիւն, հաւատացին իբր<sup>7</sup> մաւտակաց, քանի՛ իրաւ<sup>8</sup> մեզ՝ հաւատացելոցս, իրաւացի է հաւատալ, որով տեսանի տեղի չարչարանացն Տեառն:*

- 1 B աջմեայցն
- 2 B ահեկեայցն
- 3 C ելանել
- 4 Գ-ա-Գ-1
- 4 B ազգի
- 5 BC չիբ
- 6 Գ-ա-Գ-1
- 6 BC աւրիմակտ
- 7 BC իբրեւ
- 8 BC +է

506 «Ձի<sup>9</sup> ուր խաչ՝ անդ եւ խաչեալն, եւ ուր խաչ եւ խաչեցեալն<sup>10</sup> անտ<sup>11</sup> եւ խաչելութիւնն<sup>12</sup>»: 507 *Բաւանդակապէս<sup>13</sup> հրամա[յ]է հաւատարմանալ ի տեսանել զխաչն, զամենայն բոլորովիմբ<sup>14</sup> հաւատոյ<sup>15</sup> աչաւք նկատել զտեղին, որ է Գողգոթա[յ], եւ զի նմա կատարեալ խորհուրդն<sup>16</sup> չարչարանացն Տեառն:*

508 «[\*Արդ, եթէ բանիւ լսեցեալն՝ ականատես ասի խաչելութիւնն<sup>17</sup> առ հաւատ, իսկ ուր խաչն ականատեսի գլխովին, զիա՞րդ ոչ յանդիմանակալ[յ] անդ խաչելութիւնն հաւատացի առ ի նոյն հաւատոս]: 509 Արդ, ուրեմն աստ ելով խաչն՝ աստ [\*իմացի] Գողգոթա[յ], ընդ նմին եւ խաչելութիւնն<sup>18</sup>»: 510 *Կրկին ասացելաւքն<sup>19</sup> հաստատէ զառաջինն, զի մի՛ վարկպարագի դիտացեալ ախմարագունից<sup>20</sup> անհաւատ մնացեան ի սքանչելի կատարմանէն<sup>21</sup>:*

511 «Աստ զենուամն, եւ ի սմին փրկագործութիւն<sup>22</sup>»: 512 *Ուստի ճշմարտեալ խորհուրդ գառինն պատարագելոյ, որ բառնա[յ] զմեղս աշխարհի, զեկուցանէ ի սմին:*

513 «Ձի գագաթն Գողգոթա[յ] տեղի կառապելոյ [\*եւ շիրիմ առաջին մարդոյն՝ յեբրայ[յ]եցոցն<sup>23</sup> ասացեալ: 514 Եւ ամե-

- 9 C Բանգի
- 10 C խաչեցեալ
- 11 BC անդ
- 12 B խաչելութիւն
- 13 BC քովանդակապէս
- 14 BC բոլորովիմբ
- 15 B հոգոյ C հոգոյ
- 16 C խորհուրդ
- 17 C խաչելութիւն
- 18 C աստէն խաչելութիւն փ/ս ընդ նմին եւ խաչելութիւնն
- 19 B ասացելովքս
- 20 B ախմարագունիցն
- 21 C չիբ կրկին ասացելաւքն ... սքանչելի կատարմանէն
- 22 B փրկութիւն
- 23 C յեբրայեցոցն



նայն աստ է, քանզի բերէ զգագաթն բարձրութիւն սորա եւ զկառափետողն ձեւ սորա»: 515 *Գողգոթայն, որ է գագաթն*], բարձրութեան է նշանակ<sup>1</sup> որպէս սովորաբար ունիմք ասել ի վերա[յ] գլխոյն գագաթն, եւ<sup>2</sup> կառափետող, որ տեղին, յորում զՏէրն չարչարեցին: 516 «Եւ շիրիմ առաջին մարդոյն<sup>3</sup>, յերա[յ]եցոցն ասացեալ, ամենայն աստ է<sup>4</sup>»: 517 *Երբա[յ]եցոցն<sup>5</sup> պատմագիրք, յաւանդութենէ ծանուցեալք<sup>6</sup>, գրեցին յաստուածեղէն մատեանս, թէ<sup>7</sup> յեւրանելն Նո[յ]ի ի տապանէն բաժանեաց զաշխարհս յերիս մասունս ի վերայ երից որդոցն: 518 Իսկ անդրանկանն՝ Սեմա[յ] հասեալ վիճակաւ յարեւելից ընդ սահմանաւքն հարաւոյ, եւ ի Հրէաստան, զոր եւ ասորիքն յետո[յ] Պաղեստինէ կոչեցին, այսինքն՝ Աւետեաց երկիր: 519 Ասի եւ ի նոյն գիրսն, եթէ<sup>8</sup> ունէին արկեղբ զնշխարս նախաստեղծիցն ի տապանակին<sup>9</sup>, զի մի՛ ապականեցին մարմինք նախաստեղծիցն յԱստուծոյ: 520 Վասն որոյ յեւրանելն ի տապանէն՝ տայր զպարգեւս մեծամեծս Նոյ<sup>10</sup> անդրանկանն իւրոյ: 521 Իսկ խորհուրդն աստուածեղէն տնաւրինէր, զի անդ թաղեցի, ուր փրկութիւնն էր կատարելոց: 522 Արգ, ասէ, թէ՛ «յերբա[յ]եցոցն<sup>11</sup> ասացեալ», պարտ է իմանալ խորհրդաբար ի սմին զամենայն: 523 «Քանզի բերէ զգագաթն<sup>12</sup> բարձրութիւն<sup>13</sup> սորա<sup>14</sup>»: 524 Յայտ-*

նի առնէ այսու բանիւ, թէ որպէս բովանդակի հրաշալի գործքն Աստուծոյ ի սմա: 525 Ասէ, եթէ<sup>15</sup> զբարձրութիւնն նկատես, իմա<sup>16</sup> իմաստութեամբ զծայրագագաթանն<sup>17</sup>: 526 Իսկ ձեւն խոտորնակի ցուցանէ տեղի չարչարանաց եւ կառափելո[յ] գոյ:

527 «Իսկ թաղումն, քանզի փայտիւ Աղամա[յ] վիրաւորեցելոյ ատ նմին [\*իսկ այնուհետեւ] անկեալ ի մեռելո[յ] համարի էր<sup>18</sup>»: 528 *Երկարեաց զթաղմանն<sup>19</sup> խորհուրդ զառաջինն՝ յիշելով նախաստեղծին, որ թէպէտ եւ յետ եւրանելոյն ի դրախտէն կենդանի էր զայնքան ժամանակս, սակայն յաղագս վճռին, որ եհատ Արարիչն ի վերա[յ] նորա՝ յասելն. «Հող էիր եւ ի հող դարձցիս»<sup>20</sup>, ի մեռելո[յ] համարի էր:*

529 «Յորո[յ] վերա[յ] հասանելով յերկրի երկնա[յ]ինն Աղամ, զթածարար փրկութիւն գործեաց աստ թաղեցելո[յ] ծառա[յ]ին եւ Հաւր, [\*զյաւիտենականն բարձեալ բերէ զարդարութիւնն]: 530 *Զմեծ գթութիւն բարերարին պատմէ ասացելովքս: 531 Քանզի առաջինն Աղամ, յերկիր անկեալ, ի բարձրագոյն փառացն խոնարհի յախտս<sup>20</sup> եւ հաւասարի անասնոց: 532 Իսկ տնաւրինաբար կոչեցեալ երկնա[յ]ինն Աղամ արարիչն, ոչ եթէ յերկնից էր մարմինն՝ որպէս ոմանք յանդնեցան ասել, այլ զի Տէրն երկնի եւ երկրի առնելով մարմին՝ երկնա[յ]ին<sup>21</sup> կոչի<sup>22</sup> Աղամ: 533 Իբր ի վայր անկեալ անասնոյ, ըստ աւրինացն ի խորս հասեալ փրկիչն նորագործեաց զփրկութիւն աստ թաղեցելո[յ] ծառա[յ]ին*

1 C նշան  
 2 BC իսկ  
 3 BC չի՛ որ տեղին ... առաջին մարդոյն  
 4 B ասէ փիս աստ է  
 5 C երբայեցուցն  
 6 C ծանուցեալ  
 7 BC եթէ  
 8 BC բէ  
 9 BC տապանին  
 10 BC մոյ տայր զպարգեւս մեծամեծս փիս տայր զպարգեւս մեծամեծս մոյ  
 11 C յերբայեցուցն  
 12 C գագաթն  
 13 C գրարձրութիւն  
 14 C նորա

15 BC բէ  
 16 B չի՛  
 17 BC զծայրս գագաթանն փիս զծայրագագաթանն  
 18 C ի մեռելոյ է համարի փիս ի մեռելոյ] համարի էր  
 19 C զթաղման  
 20 Նո՛ւնք. Գ. 19  
 20 B յախտսն C յաղթսն  
 21 B երկնա[յ]ինն  
 22 B չի՛

եւ հաւր: 534 «Մառայ» կոչէ զառաջինն Ազամ յաղագս ստեղծմանն, եւ «Հայր»՝ ըստ մարմնոյն<sup>1</sup>, որ էառ ի զանգուածո[յ]<sup>2</sup> տանն Ազամա[յ]՝ ըստ այնմ, եթէ<sup>3</sup>, «Մարմին իմ ի նոցանէ<sup>4</sup>»<sup>5</sup>: 535 «Զյաւիտենական բարձեալ<sup>6</sup> բերէ զարդարութիւն»: 536 Ոչ ժամանակաւ եւ մասամբ առնելով զփրկութիւն, այլ յաւիտենական եւ մշտնջենաւորաբար արդարացուցանելով զփրկեալսն:

537 «Նմանասէր մարմնովն<sup>7</sup> լուծանել<sup>8</sup> աստ զնորա հաճեցեալ<sup>9</sup> մեղս<sup>9</sup>»: 538 Յանգիմանէ զայնոսիկ, որք ոչ խոստովանին զմարմինն<sup>10</sup> Տեառն ի Կուսէն առեալ, վասն որո[յ] «Նմանասէր» ասէ: 539 Այսինքն՝ մերով մարմնով անտեսաբար ի խաչին եբարձ<sup>11</sup> զմեղսն<sup>12</sup> Ազամայ, զոր հաճութեամբ եւ կամաւք ստունգանեաց<sup>13</sup> պատուիրանին, ըստ մարգարէին. «Ահաւասիկ<sup>14</sup> գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի»<sup>15</sup>:

540 «Եւ ճաշակելով իբր նա[յ]ապէս զմահ»: 541 Անպարտականն մահու Աստուած ըստ մարմնո[յ] ճաշակեաց զմահ ի խաչին, աստուածաբար առաքելով զբանական հոգին առ Հայր, ըստ այնմ. «Հայր, ի ձեռս<sup>15</sup> քո աւանդեմ զհոգի իմ»<sup>16</sup>, ըստ աւրինակի առաջնոյն Ազամա[յ]:

542 «Սպանանելով զնորա<sup>16</sup> մահ»: 543 Իբրու զի սպանցէ զորջացեալ բռնութիւն մահու, որ թագաւորեաց յԱզամա[յ] մինչեւ ի գալուստն Քրիստոսի:

544 «Բարձրացուցանէ զանուանեալն գագաթն գերագոյն երկնից»: 545 Անհասանելի տնաւրինութեամբ<sup>17</sup> զտեղի չարչարանացն, որ եւ գագաթն անուանի, իւրով բարձրանալով գերագոյն երկնից համարի, զի ուր արարիչն եւ Տէրն<sup>18</sup> Հանգչի, ի վեր է քան գերկինս երկնից:

546 «Եւ զանսուրբ փայտն զպատճառս մեղացն ի փրկութեան պատճառս»: 547 «Անսուրբ փայտ» կոչէ զառաջին փայտն գիտութեան, վասն զի առ ի թեզելո[յ] նախաստեղծիցն մահու եւ մեղաց, անկանելո[յ]<sup>19</sup> ի դժոխս եւ զրկելո[յ] ի դրախտէն՝ ոչ բնաւորապէս, այլ պատուիրանին ստունգանելովն<sup>20</sup>, անժամանակաբար մերձենալովն<sup>21</sup>: 548 Իսկ նորս Ազամ, որ եւ Տէր յերկնից, բեւեռելով ի խաչին, կազմեաց մեզ փրկութեան պատճառս, զի նովաւ փրկեցան արարածք:

549 «Ի սրբութիւն սրբոց»: 550 Զգերազանցութիւն փառաց խաչին կոչէ: 551 Զորաւրինակ ի տաճարին Աստուծոյ զաբիրայն է անուանեալն<sup>22</sup> այլոցն սրբոց<sup>23</sup> տիրական եւ բովանդակիչ ասիւր, այսպէս եւ կենարար խաչս հասարակ<sup>24</sup> ամենայն սրբոց, որ յեկեղեցի յիշատակի, գերագոյն է պատուականութեամբ:

552 «Եւ զկառափետոյն ի կենաց դործ[ի]տող»: 553 Կառափետոյ՝ զձեւ խոտորնակին, որ է նշանակ զատապարտութեան

1 BC մարմնոյ

2 C գանկուածոյ

3 BC քէ

4 C + է

5 Ո՛ւ. Թ. 12

6 C դարձեալ

7 BC մարմնով

8 C լուծանելով

9 BC հանեալ

9 B մեղսն C զմեղսն

10 BC զմարմին

11 BC էբարձ

12 BC զմեղս

13 B ստունգանեաց

14 B ահաւաղիկ

15 Յ.Վ.Ը. Ը. 29

15 B ձեռ

16 Ղ.Ն.Վ. ԻԳ. 46

16 C զնորայն

17 BC տնորէնութեամբ

18 C սուրբն

19 C անկելո

20 B ստունգանելովն

21 B մերձենովն

22 BC անուանեալ

23 C սրբոցն

24 B հասարակաց

անչարչարելոյն Աստուծոյ, այժմ տնտեսաբար եւ վա[յ]ելչապէս կենաց գործի առնելով, որ եւ ճշմարիտ կենացն մերձանալով<sup>1</sup>, եղեւ մեզ առիթ կենաց եւ անմահութեան:

554 «Իսկ զթաղումն ի սքանչելի<sup>2</sup> յարութիւն ամեալ փոխարկէ մարդոյն»: 555 Ամենայն սքանչելիք<sup>3</sup>, կատարելոցն ի Տեառնէ խաչիւն, լուծումն էր հակառակացն<sup>4</sup> առաջնոց, որով եւ խորհրդաբար տնաւրինէր Փրկիչն: 556 Զի որպէս զայլսն եղեալս<sup>5</sup> ի նմանէ հրաշագործութիւն, սոյն աւրինակ եւ զթաղումն, որ եղաւ ի գերեզմանի անտանելին արարածոց, փոխարկէ ի յարութիւն՝ առհաւատչեալ[յ] շնորհելով մահացելոցս իւրովն յարութեամբ:

557 «Եւ ամենեւին իսկ<sup>6</sup> պատճառաւ փրկութեանն<sup>7</sup> զայն, որ մեղացն էր պատճառ<sup>8</sup> ի բաց բարձեալ»: 558 Հրածարէ ի յերկարութենէ բանից<sup>9</sup> զամենայն մի ըստ միոջէ յիշատակելով, այլ համառաւտաբար ի մի ածէ՝ ասելով «պատճառաւ փրկութեանն»: 559 Սկիզբն առեալ ի ծնընդենէ Փրկչին մինչ ի լրումն խորհրդական յարութեանն<sup>10</sup>, բառնալով զներհակսն<sup>11</sup>, հաստատէ զճշմարտութիւնն. փոխանակ կնոջն՝ կոյսն եւ փոխանակ փայտին առաջնո[յ]՝ կենաց փայտն: 560 Ըստ նմին աւրինակի եւ այլաւքն ամենայնիւ լուծա-

նելով զպատճառս մեղացն՝ ներգործէ զփրկութիւնն<sup>12</sup>:

561 «Երկին իսկ միանգամայն<sup>13</sup> եւ կամ եւս վեհագոյն<sup>14</sup> [\*ասացեալ] երկնից երկին<sup>15</sup> եւ փառաց աթոռ զսա գործեալ, [\*յաւրտենական աստ բնակեցաւ]: 562 Զոր վերագոյն «սրբութիւն սրբոց» եւ «բարձր քան զերկինս» ասաց, նմանապէս եւ աստ՝ «փառաց աստուածութեանն աթոռ», այսինքն՝ տեղի հանգրստեան կոչէ Արարիչն<sup>16</sup>: 563 Թէպէտ եւ անկարաւտ է աթոռոյ անմարմին աստուածութիւնն, սակայն հեղյով սուրբ արեանն Քրիստոսի ի վերա[յ] սորա, աթոռ անուանի փառաց, այսինքն՝ չարչարանաւք<sup>17</sup> խաչելոյն, զոր եւ ինքն Տէրն, հա[յ]ելով ի փրկութիւն մեր, փառս կոչեաց: 564 «Յաւրտենական աստ բնակեցաւ»: 565 Զգաւրութիւնն<sup>18</sup> Աստուծոյ, որ միացաւ ի սմա, նշանակէ անբառնալի գոյ: 566 Յայն սակս փառացն Աստուծոյ աթոռ կոչի, զի յարակա[յ] եւ մշտնջենաւորապէս բնակէ:

567 «Ըստ որում եւ զարդարապէս զպատիւ<sup>19</sup>, հաւատ<sup>20</sup> առ հանդերձեալսն<sup>21</sup> է իմանալ»: 568 Իմանի այսու սքանչելիք<sup>22</sup> ճանաչել զպատիւ սորա: 569 Զի ոչ յայժմուս<sup>23</sup> միայն է<sup>24</sup> գաւրութիւն սորա, որ եւ կատարի<sup>25</sup> բժշկութիւն հաւատացելոց, այլեւ ստուգապէս ի հանդերձեալսն հաւատամբ տեսանել զալըստեամբ Միածնին,

1 B մերձեմալով  
2 B գլանչելի  
3 BC սքանչելիք  
4 C հակառակորդացն  
5 C եղեալսն  
6 B չիք  
7 C փրկութեան  
8 B պատճառ մեղացն էր փիս մեղացն էր պատճառ  
9 C բանի  
10 BC խորհրդական յարութեանն լրումն փիս լրումն խորհրդական յարութեանն  
11 C գներկայսն

12 B զփրկութիւն  
13 B միանկամայն  
14 BC վերագոյն  
15 BC երկինք  
16 BC արարչին  
17 B չարչարանք  
18 BC զգործութիւն  
19 BC պատիւ  
20 BC հաւատով  
21 BC հանդերձեալսն  
22 BC սքանչելիքով  
23 B այժմուս C այժմ  
24 BC չիք  
25 BC + ի

յորժամ եկեսցէ աստուածեղէն փառաւքն  
աՀեղ եւ զարմանալի, եւ սուրբ խաչն ա-  
ռաջի նորա՝ պայծառացեալ փայլակնա-  
բորբոք ճառագայթիւք:

570 «Յաղագս որո[յ] թէպէտ եւ զբարե-  
պաշտութիւն ցուցանելով յերկրէքս  
[\*այնք], որք զԱստուած սիրելն խորհե-  
ցան՝ թագաւորք եւ որք<sup>1</sup> [\*միանգամ]<sup>2</sup> ըստ  
երկրի<sup>3</sup> մասանց [\*ընչաւէտք]»: 571 Յա-  
ղագս այսպիսի մեծի բարեացս, որ ի սմա-  
նէ կատարի, նախ եւ<sup>4</sup> առաջին առ երկրա-  
ւորսս եւ ապա առ Հանդերձեալսն, իմա-  
նալով զպատիւ փառացն, կամեցան բարե-  
բաշտիկ թագաւորք եւ այլ<sup>5</sup> ըստ քաղաքի  
ընչաւէտք վասն սիրոյն<sup>6</sup> առ Աստուած:

572 «Զսորայս պատիւ»: 573 Յաւժարե-  
ցան զարմացուցանել զտեսաւղսն պա-  
տուական ախամբք եւ պայծառ մարգար-  
տով, զոր յերկրէ եւ ի ծովէ ելաննն, ստա-  
ցուածք զարդարեցին գեղեցկապէս զսա:

574 «Իբր զտղա[յ]արարո[յ] մարդիկ<sup>7</sup>  
ձգելով ի փափագ տեսութեան<sup>8</sup> զսոսկալի  
միանգամայն<sup>9</sup> եւ զքստմնելի զսորայս ցու-  
ցանելով զպատիւ»: 575 Վասն որո[յ] ասէ,  
թէ. «Գերագոյն աստուածայնովն<sup>10</sup> զարդա-  
րեալ փառաւք»: 576 Չէ կարաւտ մարմնա-  
կան պաճուճանաց եւ զարդարելոյ, այլ  
աստուածա[յ]ին փառաւքն պայծառա-  
ցեալ, որ Հաւատո[յ] աչաց<sup>11</sup> տեսանի:

577 «Եւթնպարեան [\*դասիւք] Հրշտա-  
կաց<sup>12</sup> սպասաւորեալ եւ պաշտեցեալ զՏէրն  
իւրեանց ի սմա տեսանելով»: 578 Հրշտա-

կաց ինն գոլով դասապետութեան<sup>13</sup> որպէս  
ուսուցանէ աստուածա[յ]ինն Դիոնէ-  
սիոս<sup>14</sup>: 579 Բայց սքանչելիս այս վարդա-  
պետ եւթնպարեան ասէ՝ ըստ առաքելո[յ],  
վասն զի. «Ուր թագաւոր անդ եւ ամենայն  
պաշտաւնեայքն առ ի սպասաւորութիւն»:  
580 Այսպէս եւ երկնաւոր թագաւորն,  
Հանգուցեալ ի վերա[յ] սորա՝ իբր ի վերայ  
աթոռո[յ] բազմականին, պար առեալ ամե-  
նայն զուարթնոցն Հրշտակաց<sup>15</sup>, պաշտեն  
եւ փառաւորեն զբազմապատիկ իմաստու-  
թիւնն Աստուծոյ:

581 «Տինա եւ բազմակամբք քերո-  
բէիւք<sup>16</sup> եւ վեցթեւեան սերորէիւք<sup>17</sup> զեռա-  
Հիւսակ սրբասացութիւնն իմանալի ձայնիւ  
[\*ի սմա վերերելոյն Աստուծոյ յարաձայ-  
նելով]»: 582 Բարիոք<sup>18</sup> եւ գեղեցկապէս  
յաւել զկնի եւթնիցն զսերորէս<sup>19</sup> եւ զքե-  
րովքէս<sup>20</sup>, զի եւ թիւ իննունցն քահանա-  
պետութեանց<sup>21</sup> առցէ զաւարտումն: 583  
Քերորէք<sup>22</sup> կոչին բազմաչեայք, ըստ տե-  
սանողին, որ է յաճախ գիտութիւն, իսկ  
սերորէս<sup>23</sup> Հրկիզութիւն: 584 Եւ զայս եւս  
տեսանէր Եսայի վեցթեւեանս, որով զերիս  
սրբասացութիւնն ոչ յաւաւորական<sup>24</sup>  
ձայնիւ, այլ անճառելի եւ իմանալի ձայ-  
նիւ Որդոյն<sup>25</sup> Աստուծոյ, որ բարձրացաւ ի  
սմա յարամիշտ<sup>26</sup> վերաձայնելով: 585 Զի

1 BC որք  
2 B միանկամ  
3 BC երկրիս  
4 BC չիք  
5 BC այլք  
6 BC + որ  
7 C մարդիկք  
8 C տեսութեանն  
9 B միանկամայն  
10 BC աստուածայնով  
11 C աչոք  
12 BC հրեշտակայ

13 BC դասապետութիւն

14 Տե՛ս Դիոնիսիոս Արիոպագացի, Յաղագս երկնա-  
յին Բահանայապետութեան, գլ. VI-IX, by Robert W.  
Thomson, Lovanii, 1987.

- ՀՄԳ. ԳՅՎԸ. ԺԻՒ 26

15 BC հրեշտակաց C սպասաւորեն

16 C քերովքիւք

17 C սերովքիւք

18 C բարեոք

19 C զսերովքէս

20 C զքերովքէս

21 BC չիք

22 C քերովքիւք

23 C սերովք

24 BC յօղապատ

25 C որդւոյն

26 B յարամիշտ

որոց այլոց իմաստնոց հաճոյ[յ] եղեւ առնուլ զձայնս զայս<sup>1</sup> յերիս<sup>2</sup> անձնաւորութիւն աստուածութեանն, նոյնպէս եւ սա պատշաճ համարի առ Որդի խոստովանելով, ըստ աւետարանչին<sup>3</sup> Յոհաննու<sup>4</sup>, որ ասէ. «Ձայս ասաց Եսա[յ]ի, որ ետես զփառս խաչին»<sup>5</sup>:

586 «Քանզի ամենայն աներեւութից առ ի Հաստատուն նշանակ<sup>5</sup> Հաւատոյ[յ]»: 587 Յայսմ վայրի ուսուցանէ աներեւոյթ<sup>6</sup> գոլ զհանդերձեալ ժամանակացս ցոյց, որով տնաւրինաբար կատարելոց էր ի Տեսողնէ, զոր հաւատամք ճշմարտապէս նշանակաբար տպաւորեալ ըստ Հնոյ աւանդութեանն<sup>7</sup>:

588 «Յուցական յարացոյց յառաջագոյն ամենիմաստն առաջնորդն Աստուծոյ Հոգացեալ [\*մարդկան, առ ի դիւրընկալ զհաւատս գործոյն եւ իրին ի տեսողան գործելոյ]»: 589 Այնոքիկ կանխաւ աւերինակեալքն յաւրէնան եւ գրեալ ի մարգարէս, զոր յառաջագոյն արարիչն եւ ամենիմաստն առաջնորդն ամենայն բարեաց Հոգացեալ խնամարկութեամբ վասն մարդկան բանականաց, իբրու զի յետ ժամանակիս լրման զիւրընկալ լինիցի առ ի հաւատալ, մանաւանդ ի գործս եւ յիրս, որ եղեն ի խորանին եւ ի տաճարին, որք տեսանէին ակամբ: 590 Յաղագս այնորիկ զամենայն ստուերն աւրինակ արար Տէր<sup>8</sup> ապագայ[յ]իս, զի յորժամ կատարումն առցէ ամենայն, ապա արագապէս եւ աներկբայ[յ] հաւատասցեն Քրիստոսի գալըստեանն:

591 «Որպէս այն, որ յաւրինական խորանին սեղանն, որ քառութիւն<sup>9</sup> կոչէր»:

592 Զի թէպէտ եւ ոչ ունիմք զամենայն մի ըստ միողէ ի կիր առնուլ ի ստուերացն, սակայն մի կամ երկուս յիշատակելով ի նոցանէ<sup>10</sup> բաւական են եւ զայլսն ածել եւ ցուցանել ի ճշմարտութիւն: 593 Արդ, քառութիւն կոչէ զայն, որ ի վերայ[յ] կտակարանացն տախտակ ոսկեղէն, որ նշանակ էր տէրունական խաչիս, զի սովաւ յաւրինեցաւ քառութիւն մեղաց<sup>11</sup> ամենայն պարտաւորելոցս:

594 «Յոր անբանիցն մտեալ արիւն ողջակիզացն յեղջերսն<sup>12</sup> տրամադրիւր»:

595 Սովորաբար ունէին աւրէնքն առեալ զարիւն ցլուցն եւ նոխազացն՝ քահանայ[յ]ապետն տանէր ի ներքս, տպաւորէր ի վերայ[յ] եղջերաց սեղանոյն: 596 Այսոքիկ անբանից արիւն զպատուական արեանն Քրիստոսի ցուցանէր զնմանութիւն, եւ եղջիւրք սեղանոյն զձեւ քառութեւ խաչիս յարացուցիւ գուշակէր, որ Քրիստոսի արեամբն ներկեալ ի փորուածէ բեւեռացն:

597 «Քերոբէք<sup>13</sup> նմանեալք ձեռակերտք մարդկան՝ գործով ի պատիւ ի վերայ[յ] Հովանոցանայ[յ]ին»: 598 Այսպիսի<sup>14</sup> քերոբէք<sup>15</sup> ճախարակեագործեալ եւ պատեալ ոսկով, զոր ի վերայ[յ] քառութեանն կառուցեալ հա[յ]ելով ի միմեանս, նշանակ էր զաւրութեանցն Աստուծոյ, որով նախախնամին իմաստութեամբ բնաւ արարածս<sup>16</sup>, նաեւ քառութեան խաչիս, զի ի սմանէ կնքեալ պահպանին արարածք:

1 B զայս ձայնիւ C զայս ձայնիս փիս զձայնս զայս  
2 BC չի՞  
3 C աւետարչիւն  
4 BC յովհաննու  
5 Հմմտ. Յովհ. ԺՊ. 41  
6 C նշանակ հաստատուն փիս հաստատուն նշանակ  
7 B ամերեւոյթս  
8 BC օրինացն  
9 BC տէրն

9 B որ սեղանն բաւութեան C սեղանն արեւոյթիւն փիս սեղանն, որ բաւութիւն  
10 BC սոցանէ  
11 BC չի՞  
12 BC յեղջիւրսն  
13 B քերոբէք C քերոբէք  
14 BC այնպիսի  
15 B քերոբէ C քերոբէ  
16 BC արարածս

599 «Իսկ զի՞նչ այնպիսի աւրէնն ազդիցէ, եթէ ոչ հաստատուն նշանակ վերասացեալդ բանի»: 600 Յայտոսիկ տարացուցի հարցական դնէ զբանն, եթէ քննողաց իմաստութեան յայտնի են աւրինակքն:

601 Զի հաստատ եւ ստոյգ իմացաւոց ծանուցանէ՞ զնորոյ] ճշմարտութեան աւանդիս, ուստի եւ Տէրն կենարար վարդապետութեամբն լնուլ ասէր զթերութիւն աւրինացն:

602 «Յառաջագոյն դորա պատիւ ականերեւ յաւրինակի անտ՞ ցուցաւ»: 603 Պատիւ կենարար խաչին ասէ ի հեռուստ, ուրեմն որ եւ մտաց աչաց տեսանի՞ ցուցաւ, ոչ ամենեցուն իմանալ, այլ իմաստնոց եւ մակացողաց, որք յայտոսիկ՞ վարժեցան հոգևովն՞:

604 «Իսկ եթէ առ աւրէնն՞ քերթէիլ՞ արարաւ պատիւ, յոյց միջոց ազդեցութեամբք՞ բառբառեալք՞ լսելի խաւսից՞ [\*աստուածա[յ]ին հաւատա[յ]ին ձայնարձակութիւնք]»: 605 Առ ստուերականին այսպիսի ասէ, էր գեղեցկապէս յաւրինեալ՞ պատուասիրութիւն, որ եւ յերկուց միջոց քերթէիցն լինէր ազդեցութիւնք, յորում հաւատացին յԱստուծոյ խաւսեալ՞ առ քահանայեանն՞ եւ առ ժողովուրդն:

606 «Իսկ որչա՞փ առ երկնա[յ]ինս այս սեղան եւ խաչ, որ եւ յերկնայնոցս՞ 13 [\*եւ յերկրայնոցս] խոստովանեսցի ճշմարիտ

քաւարան»: 607 Զի եթէ առ աւրինակն այնքան պատուեալ, որով խաւսէր Աստուած եւ նոքայ՞ լսէին, առ ճշմարիտս այս սեղան զի՞նչ ունիմք ասել, որ ի հրշտակաց՞ եւ ի մարդկանէ խոստովանեալ է ճշմարիտ քաւարան: 608 Կատարելապէս եւ դէմ յանդիման ի վերա[յ] այսր սեղանոյ] խաւսիմք խորհրդաբար առ Փրկիչն մեր եւ Տէր:

609 «Որ եւ արեամբ՞ նորին սուրբ [\*եւ ճշմարիտ] գառինն Որդոյն Աստուծոյ՞ ի՞ փորուածէ՞ բեւեռ[\*ացն դաստակետդք ձեռացն եղջիւրք սեղանոյս խաչիս՞ կարմրացեալ ներկան]»: 610 Ոչ անբան անասնոց, այլ նոյն ինքն պատուական արեամբն Քրիստոսի ի տեղոյ բեւեռացն, որով հարին ի ձեռս կենարարին, զոր «դաստակետդ» կոչէ: 611 Անտի՞ ելեալ արիւնն՞ ներկէ զեղջիւր քառանգիւնի՞ խաչիս, ուստի եւ մերս խոստովանեալ եկեղեցի ունիմք իմանալ փրկական եւ սուրբ անարատ գառինն խորհրդոյ, զորոյ] մարգարէն նովաւ գոչէր բառնալ զմեղս աշխարհի:

612 «Յաղագս որոյ] եւ յերկրէքս ամենայն վասն այսպիսի փրկութեան կցորդութիւն բերելով երջանկաց եւ մաքրագունից [\*ոգևոցն՞]»: 613 Վասն այսր ամենայնի անճառելի եւ անպատմելի բարեաց, զոր ընկալաք սովաւ ի Քրիստոսէ, պարտ է մեզ հաղորդ լինել երջանկացն, այսինքն՞ բարեբախտիկ՞ զաւրացն, որ եւ հոգիք ա-

1 BC ծանուցողաց իմացուցանել փխ իմացաւոցաց ծանուցանել

2 BC անդ

3 BC տեսանելի

4 C յայնոսիկ

5 C հոգևովն

6 B օրէնն C օրէնս

7 C կերովրէիս

8 BC ազդեցութիւնք

9 BC բարբառեալք

10 BC յօրինել

11 BC խոսել

12 B Բահանապետն

13 B յերկնայնոց

14 BC նոքա

15 BC հրեշտակաց

16 B + իսկ

17 C չիք

18 C փորուածոյ

19 C այս փխ խաչիս

20 BC անդի

21 C արիւն

22 BC Բառանկիւնի

23 B ոգևոցն

24 BC բարեբախտիկ

սին յաղագս անմարմնութեանն, եւ մեք՝  
երկրայինք եւ տրուպք:

614 «Փանաքիմա[ց] բա[յ]իւք<sup>1</sup>»: 615 Որ  
է սակաւ եւ նուաստ առ նոցա համեմա-  
տութեանն:

616 «Յաղագս մերո[յ] փրկութեան  
պատճառի նշանիս գովասանութիւն մա-  
տուցանեմք»: 617 Աստուածազարդ խա-  
չիս, որ եւ պայծառացեալ չարչարանաւք  
եւ փառաւորութեամբ Տեառն, ըստ կարի  
մերում հատուցուք մատենագրու-  
թեամբս, եւ զայլս յորդորեսցուք բանիւ եւ  
իմաստութեամբ:

618 «Աւրհնեալ՝ ես, աստուածազարդ,  
քրիստոսապսակեալ փայտ սուրբ»: 619 Աւրհ-  
նութիւն<sup>2</sup> սեփական Աստուծոյ վա[յ]ել է,  
վասն զի նա է գովութեան արժանի՝ ըստ  
բնական ամենառատ բարեբարութեանն,  
որով եւ իմանալիքն անլուելի ձայնիւ եւ  
հանապազ աւրհնեն փառաբանութեամբ՝  
զպաշտաւնն մատուցանելով: 620 Որպէս ի  
կառանջան տեսիլն ասէին քերթէքն<sup>3</sup>.  
«Աւրհնեալ են փառք Տեառն ի տեղոջ»:  
621 Նմանապէս եւ Եսա[յ]ի գերիս սրբա-  
սացութիւնն փառաբանութեամբ Երրորդու-  
թեանն համալսէր ի սերտէիցն<sup>4</sup>: 622 Այս-  
պէս եւ մարգարէքն սովոր էին ի վերա[յ]  
մեծի յաղթութեանն կատարել, զոր աւրի-  
նակ Մուսիս<sup>5</sup>, ի յանցանելն ընդ ծովն Կար-  
միր եւ յընկղմելն փարաւոնի, յորդորէր  
զժողովուրդն զյաղթութեան<sup>6</sup> նուագս երգել  
փրկչին եւ բարեբարի, վասն որո[յ] ասէին.  
«Աւրհնեսցուք [՝ՊՏԷՐ]»<sup>7</sup>: 623 Նմանապէս  
եւ Բարակ հանդերձ Դերորա[յ]իւ<sup>7</sup>, ի կոր-

ծանմանն Սիսարա[յ], բազում զրուատիս  
յաւրինէին<sup>8</sup>: 624 Զնոյն եւ մարգարէն Դա-  
ւիթ ի բազում տեղիս աւրհնէ զԱստուած  
եւ ուսուցանէ որդոց եկեղեցո[յ]<sup>8</sup> սաղմո-  
սերգութեամբ զնոյն նկատել<sup>9</sup>, ըստ որում  
ասէ. «Աւրհնեցի՛ց զՏէր յամենայն  
[՝ժամ]»<sup>7</sup> եւ «Աւրհնեցէ՛ք զԱստուած յաւրհ-  
ն[ութիւն ի նոր]»<sup>7</sup> եւ յայլսն: 625 Նոյն-  
պէս եւ Եսա[յ]ի. «Աւրհնեցէ՛ք զԱստուած  
յաւրհնութիւն նոր»<sup>7</sup>: 626 Զայսպիսի զաւրհ-  
նութիւնս<sup>10</sup> տեսեալ երանելի սուրբ հայրն  
Դաւիթ եւ ի վերա[յ] մեծի յաղթութեանն,  
որ սովաւ կործանեցաւ սատանա[յ] եւ  
զաւրք իւր, աստուածարեալ ձայնիւ աւրհ-  
նութիւն մատուցանէ փրկական խաչիս,  
զոր յառաջն խոստացաւ ասել: 627 Իսկ  
աւրհնութիւնն թարգմանի<sup>11</sup> շնորհակալու-  
թիւն աստուածային բարեացն, որ տուաւ  
ազգի մարդկան, վասն որոյ ասէ. «Աւրհ-  
նեալ՝ ես, աստուածազարդ, քրիստոսապսա-  
կեալ [՝փայտ սուրբ]»: 628 Զարդարեալ  
փառաւքն Աստուծոյ Հաւր<sup>12</sup>, որ կամաւք  
եւ հաճութեամբ իւրով առաքեաց զՄիա-  
ծին Բանն Աստուած: 629 Իսկ «քրիստո-  
սապսակ», զի ամենայն թագաւորաց  
պսակք<sup>13</sup> ակամբք պատուականաւք եւ ոս-  
կով ընդելուզեալ յարմարին: 630 Իսկ  
նշան փրկութեան մերո[յ] զՔրիստոս ունի  
պսակ, զարարիչն ամենայն գո[յ]ութեանց,  
որով ներկեալ արեամբն Տեառն պայծա-  
ռանա[յ] ի մէջ եկեղեցո[յ]: 631 Նոյնպէս  
եւ պսակ ետ զսա եկեղեցո[յ] իւրո[յ], որ

1 B բանիւք  
2 B այստեղից բնագիրը պակասաւոր, 4 թերթ ըն-  
կած:  
3 C չիք  
4 Է. Գ. Գ. 12  
5 C Քերթէիցն  
6 BC մովսէս  
7 C յաղթութեան  
8 Է. Գ. Ժ. 1-21

7 C դերորվայիս  
8 Հ. Գ. Գ. 1-3  
8 C եկեղեցւոյ  
9 C կատարել  
7 II-դ. 1. Գ. 2  
7 II-դ. 1. Գ. 9  
7 Է. Գ. Ժ. 10  
10 C օրհնութիւն  
11 C բարմամի  
12 C չիք  
13 C պսակ

ունի ի վերա[յ] գլխո[յ] իբրեւ զթագ արքա[յ]ական՝ խաչակցեալ ընդ Քրիստոսի:

632 «Որ միայն յանշունչս եւ ի շնչաւորս, ի կենդանս եւ յանկենդանս»: 633 Համեմատէ ընդ ամենայն լինելութիւն արարածոց եւ գերագոյն ցուցանէ զպատիւ սորա: 634 Բայց պարտ է իմանալ, թէ ոյք շնչաւորք եւ անշունչք: 635 Շնչաւորք կոչին մարդիկ<sup>1</sup> եւ անասունք, գազանք եւ թռչունք, եւ դարձեալ՝ տունկք շնչաբոյսք անուանին սնրնդականաւն եւ աճեցմամբն: 636 Իսկ անշունչք՝ նախ եւ առաջին<sup>2</sup> լուսաւորք, որ թէպէտ եւ գնա[յ]ունք են ըստ հրամանի Տեառն, սակայն անշունչք են, զի ամենայն, որ թոք ունի, եւ տուր եւ առ աւդո[յ], նա կոչի շնչաւոր: 637 Են եւ այլ կենդանիք ի ծովու, նաեւ ի ցամաքի, որք անշունչք են, նոյնպէս եւ քարինք, ոսկի, արծաթ<sup>3</sup>, պղինձ<sup>4</sup>, երկաթ եւ որ սոցին նման, եւ երկիր: 638 Իսկ կենդանիք՝ բանականք հրշտակք<sup>5</sup> եւ մարդիկ<sup>6</sup> եւ այլ բազում կենդանիք: 639 Անկենդանիք<sup>7</sup> են քարինք եւ այլ նմանք նոցին: 640 Յամենայն արարածս Համեմատելով՝ զսա<sup>8</sup> միայն գերագոյն Համարի:

641 «Անճառելիո[յ]»<sup>9</sup> Հասեալ շնորհի փառաւորեցար»: 642 Զի ամենայն էութիւն առանձնապէս, զոր<sup>10</sup> ինչ բնաւորեալ ունի յարարչէն՝ երկնա[յ]ինք եւ երկրա[յ]ինք, ճառելիք են եւ պատմելիք, քանզի մեկին է զաւրութիւն նոցա: 643 Իսկ դու միայն եղեր անճառելի եւ անպատմելի, ոչ բնութեամբ ունելով, այլ աստուածա[յ]ին

շնորհին Հասեալ<sup>11</sup> փառաւորեցար, անճառելի գոլով, որով ճրի պարգեւեաց զաւրութիւն ամենակեցոյց Տէրն: 644 Ըստ այնմ բանի՝ փառաւորեցար յիմանալեաց եւ ի զգալեաց<sup>12</sup>:

645 «Վասն որո[յ] ի մտաւորաց եւ ի բանաւորաց կենդանեաց զկամաւորն պահանջես զերկրպագութիւն»: 646 Յաղագս մեծի պարգեւի եւ անպատմելի փառաւորութեան, որում արժանի եղեր ի Քրիստոսէ: 647 «Ի մտաւորաց եւ ի բանաւորաց»: 648 Մտաւոր եւ բանաւոր կոչին հրշտակք<sup>13</sup>, այսպէս եւ մարդիկ<sup>14</sup>: 649 Յերկուցունց<sup>15</sup> սեռից՝ հրշտակք<sup>16</sup>, որ անմարմին են, եւ մարդիկ<sup>17</sup> մարմնաւորք «զկամաւորն<sup>18</sup> պահանջես<sup>19</sup> [\*երկրպագութիւն]»: 650 Վասն զի են ոմանք, որք<sup>20</sup> ակամա[յ] եւ ի հարկէ երկրպագեն, իսկ «կամաւ»՝ զնախայաւժարութիւն փափագանացն<sup>21</sup> ունի ասել: 651 Խորհուրդ քո եւ զաւրութիւն, որ միացաւ զայնպիսի բաղձացելոցն<sup>22</sup> պահանջէ զարժանաւորութիւն: 652 Թէպէտ եւ ծանուցաք վասն հրշտակաց<sup>23</sup>, թէ մտաւորք են եւ կամաւ երկրպագեն, սակայն արդ եւ<sup>24</sup> ի մարդկանէ պահանջէ զերկրպագութիւն, որ մարմին ունին երկրպագելի եւ ոմանց ակամայն ներհակա[յ]ի: 653 Իսկ հրշտակաց<sup>25</sup> թէ եւ պարտ է ասել, այլ անմարմինք են եւ ակամա[յ] ոչ ունին սպասաւորել խաչելոյն Աստուծոյ: 654 Այլ այս

1 C մարդիկ  
2 C եւ առաջին չի՛ր  
3 C + եւ  
4 C պղինձ  
5 C հրեշտակք  
6 C մարդիկ  
7 C անկենդանք  
8 C սա  
9 BC անճառելի  
10 C գամենայն

11 C հասեալ շնորհի փխ շնորհին հասեալ  
12 C սգալեաց  
13 C հրեշտակք  
14 C մարդիկ  
15 C յերկուցունց  
16 C հրեշտակք  
17 C մարդիկ  
18 C զկամաւոր  
19 C պահանջելով  
20 C որ  
21 C փափաբանացն  
22 C բաղձացելոյն  
23 C հրեշտակաց  
24 C արդարեւ փխ արդ եւ  
25 C հրեշտակաց



է ճշմարիտն. մարդիկ<sup>1</sup>, որ առնեն արժանի զինքեանս<sup>2</sup> մաքրութեան, սրտի մտաւք երկրպագեն, եւ ոչ որպէս Իսրայէլ ի հնումն: 655 Ձի մարգարէիւն հրաժարեցուցանէր սոյն բեւեռեալն Աստուծ ի խաչին. «Կոխել զգաւիթս իմ մի՛ յաճախէք» եւ «Ի դուր են ինձ խունկք ձեր», այլ «Պատարագ Աստուծոյ կամաւ<sup>3</sup> հոգի խոնարհ մատչի»<sup>4</sup>:

656 «Աւրհնեալ ես, քրիստոսապակեալ փա[\*յտ սուրբ]»: 657 Յառաջին բանին կրկնապատիկ յաւել զպատուասիրութիւն խաչին, իսկ այսու բանիւ զմինն բաւական համարի՝ «քրիստոսապակեալ» ասելով: 658 Ձի թէ՛ Քրիստոսիւ պակի, զարդարեալ է<sup>4</sup> ամենայն փառաւորութեամբ, եւ փայտ է<sup>5</sup> սրբարար<sup>6</sup> ամենեցուն եւ տեղի սրբութեանն Քրիստոսի:

659 «Որ յերկրի բուսանելով զերագոյն երկնից կամարացն ծայր արձ[\*ակեցար]»: 660 Ամենայն ծառք անտառի եւ փայտ պտղաբեր յերկրէ բուսանին, այլ ոչ ունին զաւրութիւն յերկինս հասանել: 661 Եւ չափաւորեաց արարիչն բնաւորապէս ըստ սահմանի ունել զերկայնութիւն ամենայն ծառոց: 662 Իսկ նշանս տէրունական յեկեղեցոջ արմատացեալ եւ ի Գողգոթա[յ] ի վեր բուսեալ, զաւրութիւն եւ խորհուրդ սորա զերագանց եղեւ քան զկամարն երկնից, նա եւս բարձրագոյն, քան զերկինս:

663 «Ձանտանելին ի քեզ բերելով պտուղ»: 664 Պտուղք զգալիք, որ տանին ձեռաւք մարդկան, ունին զգեղեցկութիւնն եւ անուշահամութիւն<sup>7</sup>, միանգա-

մայն եւ հոտ արձակելն: 665 Արդ, այս պտուղ՝ Քրիստոս, անտանելի երկնաւորաց եւ երկրաւորաց, «զեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան»<sup>8</sup>, ըստ մարգարէին, անուշահոտ ի մէջ փրկելոցն եւ կորուսելոցն՝ ոմանց ի մահ եւ ոմանց ի կեանս, զոր Պաւղոս քարոզէ<sup>9</sup>, է եւ ճաշակաւն քաղցր եւ համեղ՝ արժանաւոր կերաւդացն զնա:

666 «Ձերկին իսկ միանգամայն եւ զմիջոցս լցեր զերկնի եւ զերկրի»: 667 Արեգակն եւ այլ լուսաւորք, զոր մոլորականք անուանեն, յորժամ ի վերին կիսագնդին լինի, ի ներքինն ոչ են: 668 Իսկ զաւրութիւն Աստուծոյ, որ միացաւ ի սմա, ոչ է այնպիսի, վասն զի անբովանդակելի է յարարածոց, ըստ այնմ, եթէ<sup>8</sup>. «Ձերկին<sup>9</sup> եւ զերկիր ես [\*ո՞չ] լն[ուց]ում,— ասէ Տէր»: 669 Յաղագս որոյ եւ զմիջոցս լցեր զերկնի եւ զերկրի զաւրութեամբ եւ սքանչելիւք<sup>10</sup>:

670 «Որ յԻսրայէլի<sup>11</sup> ազին ծաղկեցար եւ քո[յ]ով պտղովդ ամենայն լցան տիեզերք»: 671 Ջաշխարհին<sup>12</sup> Պաղեստինացոց<sup>13</sup> ասէ, քանզի ծնաւ ի Բեղզահէմ<sup>14</sup> եւ սնաւ ի Նազարէթ, որ թարգմանի ծաղիկ կամ գաւազան ծաղկեալ: 672 Յուցանէ գտեղին, եթէ յԻսրայէլի ազգէն<sup>15</sup> երկիր, որ վիճակաւ սեփականեցաւ<sup>16</sup> նոցա: 673 Ծաղկեցար՝ ըստ նմանութեան ծառոց, որ ոռոգին ջրով եւ ապա դալարանան: 674 Այսպէս եւ դու, արեամբ<sup>17</sup> Տեառն ոռոգեալ, զաւրութեամբ

1 C մարդիկ  
2 C զինքեանս արժանի փխ արժանի զինքեանս  
= Է•. Ը. 12. 13  
3 C կամաւոր  
4 Ս•. Ը. 19  
5 C զարդարի փխ զարդարեալ է  
6 C + որ  
7 C բարերար է  
8 C անուշահոտութիւնն

8 Ս•. Ը. 13  
9 Ն•. Ը. Կ•. 16  
8 C թէ  
9 C զերկինք  
է Է•. Ը. Ի•. 24  
10 C սխանչելիւք  
11 C յԻսրայէլի  
12 C զաշխարհիս  
13 C պաղեստինացոց  
14 C բեթղէմ  
15 C ազգին  
16 C սեփականեցաւ  
17 C արեամբն

ծաղկեցար զեղեցկապէս: 675 Եւ կամ զմարմնոյն ասէ, որ յԻսրայէղէ՝ ազգէն էառ եւ ծաղկեցաւ արեամբ: 676 Զոր եւ Եսա[յ]ի տեսեալ հոգոյն աչաւք ասէր. «Մնացեալն Յակոբա[յ]՝ նորատունկ սիրելի: Ծաղկեցի Իսրայէղ եւ լցցի պտղով նորա ամենայն երկիր»<sup>1</sup>: 677 Իսկ պտուղ խաչիս առաջին կենարար վարդապետութիւն Փրկչին, որ ելից զամենայն տիեզերս: 678 «Լցաւ երկիր գիտութեամբ Տեառն՝ իբրեւ զՉուրս բազումս, [\*որ ծածկեն զծովս]»<sup>2</sup>: 679 Եւ դարձեալ՝ պտուղ են մարգարէք<sup>3</sup> եւ առաքեալք, մարտիրոսք, եւ միանձունք եւ ամենայն ծնունդք աւազանին: 680 է եւ այլ պտուղ բարի եւ աստուածավա[յ]ելուէ՝ մարմին եւ արիւնն Քրիստոսի, որ ընդ ամենայն Հաւատացեալս բաշխի ի փրկութիւն:

681 «Աւրհնեալ՝ ես, աստուածազարդեալ փայտ սուրբ»: 682 Յերրորդ գլխիս՝ զարդարեալ կոչէ զխաչս, որ եւ նոյն պսակեալ անուանի:

683 «Գերագոյն յԱզին ի մէջ խորացեալ<sup>4</sup> փայտին»: 684 Բարձրագոյն քան զղրախտն եղեմական է խորհուրդ սորա, որ խորացեալ էր ի մէջ ծառոց դրախտին: 685 Արդ, սկիզբն արարեալ ի դրախտէն եւ ծառոցն, որ ի նմա՝ առնու ի խորհուրդ իմանալեալք: 686 Զի յորժամ եղ Աստուած զմարդն ի դրախտին եւ Հրամայեաց քրորէիցն<sup>5</sup> պահել զճանապարհս: 687 Վասն որո[յ] ասէ զայն ահեղ տեսիլ սրո[յ] եւ չրջապատեալ սերորէին<sup>6</sup>, զաւրութիւն խաչիս բաց բարձեալ՝ ետ Համարձակութիւն աւազակին մտանել ի ներքս:

688 «Որ գիւրահուպ առ ի մէնջ բուսանելով [\*յերկրի]»: 689 Այն փայտ հեռի եղեւ ի մէնջ՝ անհպելի գոլով, իսկ փայտ խաչիս տնկեցաւ յեկեղեցոջ, որ է փոխանակ դրախտին, եւ ծաղկեալ ետ պտուղ ճշմարիտ<sup>8</sup> կենդանութեան<sup>9</sup> հոգո[յ]<sup>10</sup> եւ մարմնո[յ]: 690 «Ընդ մահուամբ անկելոցս ձրի զկենդանութիւն ծաղկեցուցանելով»: 691 Յայտ առնէ, եթէ փոխանակ անմահական պատուոյն<sup>11</sup>, զոր խոստմամբն ընկալաք, ստունգանելովն մահու վիճակեցաք: 692 Իսկ նշանս տէրունեանն ի մեզ զկեանքն ծաղկեաց զՔրիստոս, որով կենդանացաք ի մեռելութենէ մեղաց:

693 «Ստուգապէս փայտ բնաւորեցար կենաց»: 694 Այն փայտ<sup>12</sup> բնաւորապէս ունէր տալ զկենդանութիւն, բայց<sup>13</sup> յոր ըմբռնէր ի բարի կամ ի չար անտ<sup>14</sup> կենդանացուցանէր: 695 Իսկ խաչս թէպէտ եւ բնութեամբ ոչ ունէր, այլ ճշմարիտ կենացն ի սա մերձեանալով, ստուգապէս է փայտ կենաց, որ կեցուցանէ զմերձեցեալսն ի նա Հաւատալով<sup>15</sup>:

696 «Աւրհնեալ՝ ես, փայտ սուրբ, քանզի իբրու առաջին փայտն գեղեցիկ եւ քաղցր պտղովն մահու եղեւ առիթ [\*պատիր եղեալ ադամածին կուսին]»: 697 Գրեալ է, եթէ. «Ետես կիրնն, եթէ<sup>16</sup> բարի էր պտուղն եւ Հաճո[յ] աչաց Հա[յ]ելո[յ], էառ ի պտղո[յ] նորա եւ եկեր<sup>17</sup>»<sup>17</sup>: 698 Այն պտուղ Հրամարեցեալ, զոր ասէ քաղցր, մահու պատճառ եղեւ կնոջն, որ յԱդամա[յ] կողէն՝ իբր ի կուսէ ծնեալ:

1 C յիսրայէլի  
2 C յակովբայ  
= Է•• ԻԷ 6  
3 Է•• ԺԷ 9  
3 C մարգարէք  
4 C գլուխս  
5 C խորացելոյ  
6 C կերովէիցն  
7 C սերովրէիցն

8 C զնշմարիտ  
9 C կենդանութիւնն  
10 C հոգւոյ  
11 C պտղոյն  
12 C այնչափ փիս այն փայտ  
13 C բաց  
14 C անդ  
15 C հաւատով  
16 C թէ  
17 C եկեր  
18 Կ••• Գ 6

699 [\*«Կուսածինն Ադամ, դառնճաշակ  
ի քեզ լինելով, զկեանս ի մարդիկ աղբե-  
րացոյց»]: 700 <sup>1</sup>Այժմ երկրորդս Ադամ, որ  
ծնաւ ի Կուսէն՝ դառնճաշակ<sup>2</sup> ի քեզ ե-  
ղեալ, քացախ արբեալ եւ գինի զմոսեալ,  
փոխանակ Ադամա[յ] մարգեղեալն Յիսուս  
Քրիստոս: 701 Նա քաղցր պտղովն մաճու-  
պատճառ, իսկ Քրիստոս լեղեաւն<sup>3</sup> զկեանս  
ի մարդիկ աղբիւրացոյց առատաճոս վտա-  
կաւք<sup>4</sup> ի սուրբ կողէն:

702 «Աւրհնեալ՛ ես, փայտ սուրբ, որ  
զլորեցելումն Հաւր ցուպ եղեր յարուցիչ  
եւ գաւազան [\*Հաստատութեան]»: 703 *Ի  
կարգի բերէ զպատմութիւնն*: 704 *Քանզի  
յորժամ առ զպտուղն ի կնոջէն, որ ընձե-  
ռեաց հաւանական բանիւք եւ եկեր, վաղ-  
վաղակի մերկացաւ ի փառացն ընդ նմին  
եւ ի բաց անկաւ ի բարձրութենէն<sup>5</sup> դրախ-  
տին, զլորեցաւ յերկիր անասնական՝ ան-  
կանելով<sup>6</sup> ընդ<sup>7</sup> մաճու իշխանութեամբ*:  
705 *Իսկ Տէր մեր զնշան խաչիս, չարչարա-  
նաւք իւրաւք<sup>8</sup>, իբր զցուպ ետ ի ձեռս Ա-  
դամա[յ] եւ կանգնեաց<sup>9</sup> զնա, նաեւ գաւա-  
զան Հաստատութեան, զի այլ մի՛ անկցի*:  
706 *Որ նշանակէ ցուպն Հաւատո[յ], որով  
կանգնին<sup>10</sup> զլորեալքն յանհաւատութենէ,  
եւ գաւազանն՝ իրատական բանից իմաս-  
տութեան<sup>11</sup>, զի մի՛ անկցին կանգնեալքն<sup>12</sup>  
հաւատաւք<sup>13</sup> եւ վարիւք<sup>14</sup> յանհաւատու-  
թիւն եւ ի մեղս*:

707 «Ընդ որոյ մարգարէն փոխանոր-  
դարար բերան առեալ»: 708 *Աստուա-  
ծա[յ]ինն Դաւիթ իբրու բերանաւ<sup>15</sup> նա-  
խաստեղծին յաղագս խաչիս փրկութեան  
երգէ՛ ստելով*. «Քո ցուպ եւ գաւազան  
մխիթարեցէ զիս»: 709 *Գոհացողական  
ձայնիւ շնորհակալ լինի երախտեացն Աս-  
տուծոյ*: 710 «Յուպ» զխաչս կոչէ, վասն  
զի սովաւ կանգնեաց<sup>16</sup> զանկեալ բնու-  
թիւնս, եւ գաւազանաւ իմաստութեան  
մխիթարեաց զսգաւորս յանբժշկական ցա-  
ւոցն:

711 «Յոր [\*եւ] իմաստունն Հոգո[յ]<sup>17</sup> ա-  
կամր յառաջեալ<sup>18</sup> ասէր<sup>19</sup> Փայտ կենաց [\*է]  
պատասպար[\*ողաց եւ յեցողաց ի նա իբրեւ  
ի Տէր Հաստատութեամբ]»: 712 *Ոչ միայն  
զի Դաւթէ ասացեալն մարգարէութեամբ  
առնու վկա[յ]ութիւն, այլեւ զիմաստնոյն  
Սողոմոնի ի խորհուրդս աստուածայնոյ  
յառեալ, այսինքն՝ Հա[յ]եցեալ ի խորս աս-  
տուածայնոցն<sup>20</sup>*: 713 «Փայտ կենաց» զսա  
կոչէ, բայց այնոցիկ, որ<sup>21</sup> Հաւատով  
պատասպարին եւ յենուն ի սա աներկբայե-  
լի մտաւք, որ առ Աստուած եւ Տէրն ամե-  
նայնի:

714 «Աւրհն[\*եալ՛ ես], փայտ կենաց, ի-  
մանալի տապան, որ զի Հեղձական ծովէս ի  
քեզ աւժանդակեալ ոգիս<sup>22</sup> [\*գերագոյն  
ծփական ալեաց մերձ առ երկին թիթեւ  
թուցեալ վերաբերես]»: 715 *Այսոցիկ  
պատմութիւն քաջայայտ եւ ծանաւթ<sup>23</sup> է  
ամենեցուն ի գրոցն Մուսիսի<sup>24</sup>, եթէ որ-  
պէս հրամայեաց Աստուած Նոյի ի կա-*

1 C + այս է  
2 C դառնճաշակ  
3 C յեղեալ  
4 C վտակովն  
5 C բարձրութենէ  
6 C անկանելովն  
7 C չի՛  
8 C իւրով  
9 C կանկնեաց  
10 C կանկնիմ  
11 C բանից իրատական իմաստ փիս իրատական  
բանից իմաստութեան  
12 C կանկնեալն  
13 C հաւատով  
14 C վարով

15 C բերանով  
= Ս=դ. Ի՛ 4  
16 C կանկնեաց  
17 C հոգոյ  
18 C յառեալ  
19 C ասէ  
20 C աստուածայնոյն  
21 C որ  
22 C հոգիս  
23 C չի՛ եւ ծանաւթ  
24 C մովսիսի

րաձմեռն ժամանակին առնել տապան ի փրկութիւն տան իւրոյ եւ ամենայն կենդանեացն, որ ի նմա, զի հանդերձեալ էր Աստուած ապականել զայնց ժամանակի ծնեալս մեղաւք եւ գարշ ցանկութեամբ: 716 Բայց արժան է քննել, եթէ<sup>1</sup> ընդէ՞ր յայսմ բանի «կենաց փայտ» կոչէ եւ յայլն՝ «սուրբ»: 717 Քանզի Նո[յ]եան տապանն փրկութեան առիթ եղեւ բնակելոցն ի նմա միանգամայն եւ կենաց: 718 Նոյնպէս եւ սա իմանալի տապան, որ Քրիստոսիւ ի փրկութիւն աշխարհի, զի փոխանակ Նոյի երկրորդ սկզբնահայր կոչեցաւ Քրիստոս նորո[յ] ծնընդեան եկեղեցո[յ]: 719 Նահապետն մտանէր ի տապանն իւրաւքն<sup>2</sup>, եւ բարձրանայր տապանն իբր ի վերա[յ] ալեաց ծփալով, քան զամենայն լերինս: 720 Իսկ Փրկիչն, բեւեռեալ ի սմա, բարձրացոյց զհաւատացեալսն զայնոսիկ, որ<sup>3</sup> միանգամ ի նա ապաւինեցան հաւատով եւ վարուք, քան զծփական ալիս մեղաց, որ նմանի ծովու աշխարհի, ըստ մարգարէին. «Այս ծով մեծ<sup>4</sup>»: 721 «Մերձ առ երկինս թռուցեալ վերաբերիս<sup>5</sup> քո[յ]ով աւժանդակութեամբ»: 722 Թեթեւ թռուցեալ վերաբերես՝ մտանելով<sup>6</sup> յերկինս հաւատացելոց, ուր կարապետն մեր եմուտ Քրիստոս:

723 «Դուռն ի կողմանէ քո[յ]ոյս<sup>7</sup> վերնատան սուրբ եւ<sup>8</sup> տէրունեան<sup>9</sup> բաց ունելով զկող»: 724 Այնմ տապանի հրամա[յ]եցաւ կազմել պատուհան, զի մի՛ վերուստ ի վայր գալստեան անձրեւին մտցէ

ի ներքս ի տապանն, եւ կամ պատուհան կազմեալ յաղագս աղաւնոյն արձակելոյ: 725 Իսկ որ ի քոյղ վերա[յ] տէրունեան մարմին, որ նշանակաւ կոչի տապան իմանալի, տիգաւ խոցեալ ի զինաւորէն<sup>10</sup>, բացաւ կողն իբրեւ զպատուհան, յորում ել վաղվաղակի արիւն եւ ջուր:

726 «Յորում փոխանակ աղաւնոյ շղաբեր հրեշտակի արձակեցելո[յ] սուրբ մտաւոր մարդկեղէն հոգի<sup>11</sup>, [\*ըստ իմանալի բացելոյ ձեղուանն], ի ձեռն բառբառո[յ]<sup>12</sup> Հաւր աւանդեալ»: 727 Նոյ զաղաւնին հրեշտակ առաքէր տեսանել, թէ ցածուցեալ է ջուրն: 728 Իսկ Տէրն մեր Յիսուս զմարդկեղէն մտաւոր ոգին արձակեաց առ Հայր՝ ասելով. «Հայր, ի ձեռս քո յանձն առնեմ զոգի<sup>13</sup> իմ»<sup>է</sup>: 729 Ամաչեսցէ Ապողինար յայսմ վայրի, որ ոչ խոստովանի զՏէրն առնուլ<sup>14</sup> հոգի եւ միտս մարդկա[յ]ին:

730 «Յորո[յ] ձեռաց<sup>15</sup> զորդեգրութեան<sup>16</sup> պայման ընկալեալ, [\*որ առակի ձիթենի սաղարթառեալ բերէ ազգի մարդկան]»: 731 Աւրինակի աղաւնին մարդկեղէն ոգո[յ]<sup>17</sup>: 732 Զի որպէս եւ նա ընդ պատուհանն ձեղուանն<sup>18</sup> ելեալ դառնայր՝ ունելով տերեւ ձիթենո[յ] ի բերան<sup>19</sup>, աւետիս տալով Նո[յ]ի, թէ ցածուցեալ է ջուրն, նոյնպէս մարդկեղէն ոգին<sup>20</sup> Քրիստոսի ըստ իմանալի ձեղուանն բառբառո[յ]<sup>21</sup> շրթանց աւանդեալ, բերէր զորդեգ-

1 C թէ  
2 C իւրովն  
3 C որբ  
4 C չիբ  
է II-չէ. ճԳ-25  
5 C վերաբերիւր  
6 C մտանել + ի  
7 C հողոյ  
8 C չիբ սուրբ եւ  
9 C տէրունեանն

10 C զինուորեմ

11 C ոգի

12 C բարբառոյ

13 C զհոգի

է Ղ.-չ. ԻԳ-46

14 C առնուլ տեսան ի/ս գտէրն առնուլ

15 C ձեռն

16 C զորդեգրութեանն

17 C հոգոյ

18 C չիբ

19 C բերանն

20 C հոգին

21 C բարբառոյ

րութիւնն Քրիստոսի զնոյն<sup>1</sup> եւ ժառանգաւորս<sup>2</sup> երկնից արքա[յ]ութեանն:

733 «Աւրհնեա՛լ ես, աստուազարդ[\*եալ փայտ սուրբ] կամ ճշմարտապէս տունկ, որ զքէն կախեցելո[յ] Սաբեկա[յ] դառինն»:  
734 Նկատեալ էր մարդեղութիւնն Քրիստոսի ի ստեղծմանն Աղամա[յ], եւ պատարազիւն Յարէլ եւ Իսահակ<sup>3</sup>: 735 Վասն որո[յ] զպատարազին Աբրահամու յիշատակէ, կոչէ զարդարեալ աստուածա[յ]ին փառաք, եւ անուանէ «տունկ ճշմարտապէս» փոխանակ տնկոյն Սաբեկա[յ]: 736 Յայսմ վայրի երկայնագոյն ունի պատմութիւնն<sup>4</sup>, ցուցանել զԱբրահամու ելանելն յերկրէն Քաղդէացոց<sup>5</sup> եւ զալ<sup>6</sup> ի Պաղեստէնէ<sup>7</sup>, եւ տասն փորձութիւնն<sup>8</sup>, որ եկին ի վերա[յ] նորա, յորոց մի մեծագոյն եւ անըմբռնելի<sup>9</sup> ի<sup>10</sup> փորձութեանցն երեւի<sup>11</sup> այս: Ասէ. «Ա՛ռ զօրդիտ քո սիրելի՛ զԻսահակ եւ մատո՛ ինձ պատարազ»:<sup>12</sup> 737 եւ առեալ տանէր ի լեառն յԱմորիա[յ]<sup>13</sup>: 738 Արգ, ամենայնիւ աւրինակ էր Իսահակ Տեառն մերո[յ]<sup>14</sup>, քանզի ի ծնընդեանն, որ յամուլ<sup>15</sup> եւ ի քարացեալ արգանդէ<sup>15</sup> յառաջեկն միամաւր<sup>16</sup>, ուրախութիւն եղեւ տանն Աբրահամու<sup>17</sup>: 739 Այսպէս ծնընդեամբն Քրիստոսի միածին ի Կուսէ անարատէ, որ

ի վեր է, քան զբան, խնդութիւն եղեւ տանն Աղամա[յ]: 740 Աբրահամ<sup>18</sup> կամաւ մատուցանէր<sup>19</sup>, առանց հարկի<sup>20</sup> եւ<sup>21</sup> բռնադատելոյ: 741 Եւ Հայրն երկնաւոր կամաւ<sup>22</sup> հաճութեամբ առաքեաց պատարազիլ գառինն անարատի, որ բառնա[յ] զմեղս աշխարհի: 742 Հնազանդութիւնն Իսահակա[յ] եւ ի տալ զձեռս յետս կապել, նշանակէր Փրկչին կամաւոր զալ ի չարչարանս: 743 Երեքաւրեա[յ] ճանապարհն՝ գեռաւրեա[յ] յարութիւնն Քրիստոսի գուշակէր: 744 Իսահակ բառնայր զփայտն ի վերա[յ] ուսոյն, եւ Տէր<sup>23</sup> մեր ինքնին բարձեալ ունէր զխաչափայտն եւ զայր ի Գողգոթա[յ]: 745 Զի յորժամ եղ Աբրահամ<sup>24</sup> զփայտն ի վերա[յ] Իսահակա[յ]<sup>25</sup>, անդ ետես<sup>26</sup> մարգարէութեամբ զգալուստն Քրիստոսի եւ զփրկութիւն արարածոց, եւ ցնծացաւ յոյժ՝ ըստ տէրունական բանին, եթէ. «Աբրահամ<sup>27</sup> ետես զաւր իմ եւ ուրախ եղեւ»<sup>28</sup>: 746 Յաղագս որո[յ]ասէ. «Զքէն կախեցելո[յ] դառամբն ոչ միանձն Իսահակ, այլ համաւրէն ամ[\*եանայն ծնունդք Աղամայ]»:<sup>29</sup> 747 Սաբեկն ոստ մի ծառո[յ] թարգմանի<sup>28</sup> կամ երկճղի ծառ, իսկ առ ի միտս թողութիւն կոչի: 748 Յառաջեաց Աբրահամ<sup>29</sup> պարտական արար զԱստուած, եւ արարիչն փոխանակեաց<sup>30</sup> սիրո[յ] նորա զմիածինն: 749 Խոյն փոխանակ Իսահակա[յ], որով փրկեցաւ, եւ Տէր մեր ետ սի-

1 C եոյն  
2 C ժառանգաւոր  
3 B այստեղից շարունակում է  
4 BC զպատմութիւնն  
5 C Բաղդադացոց  
6 BC զգալն  
7 BC պաղեստինէ  
8 BC փորձութիւնն  
9 B անըմբռնելի C անըմբերի  
10 BC չի՛ր  
11 B + եւ  
- Կրօնք. Ի՛՛: 2  
12 C յամորիայի  
13 BC չի՛ր  
14 C ամուլ  
15 C արգանդէն  
16 BC միամորն  
17 BC արբամով

18 BC արբամ  
19 B + եւ  
20 BC եւ ոչ ի հարկէ փխ առանց հարկի  
21 C չի՛ր  
22 BC չի՛ր  
23 C տէրն  
24 C արբամ  
25 B սահակայ  
26 C Էտես  
27 BC արբամ  
28 Բ՝Վ՛Ը՛ Լ՛ 56  
28 C Բարբամի  
29 BC արբամ  
30 BC փոխանակ

րով զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց, փրկութիւնն համանայնից<sup>1</sup> հոգոց<sup>2</sup> եւ մարմնոց:

750 «Աւրհն[\*եա՛լ ես], փայտ կենաց, իմանալի սանդուխք [\*յերկին ի վեր ճանապարհորդութիւնն, որով զուարթնոցն դասուց յերկիր յար էջ եւ ելք արարան<sup>3</sup>]:»:

751 Յորժամ ասաց զպատարագիլն Իսահակա[յ] յաւրինակն<sup>4</sup> ճշմարիտ պատարագեցելոյն Քրիստոսի, ապա այնուհետեւ ըստ կարգի բերէ եւ գէջսն Յակոբա[յ]<sup>5</sup>

յԱսորիս: 752 Յաւրհնելն Իսահակա[յ] զՅակոբ<sup>6</sup> եւ տալ զանդրանկութիւնն կրսբրոյն, քինացեալ Եսաւա[յ] մտաբերէր սպանանել զնա, վասն որո[յ] փախստական զնայր ի Խառան առ ազգականս իւր:

753 Եւ ի ճանապարհին, ի լերինն Գողգոթա[յ] ննջէր եւ տեսանէր տեսիլ ահեղ եւ զարմանալի, եւ զարթուցեալ աւժանէր զվէմն, որ ընդ սնարաւքն, եւ անուանէր զտեղին «տուն Աստուծոյ»:

754 Այսոքիկ զեղեցկագոյն եւ բարձրագոյն ցոյցք էին աւրինակի հանդերձելոցս: 755 Վասն զի ետես հոգովն զիջանելն յԱսորիս եւ զելանելն առ հայր իւր, նաեւ՝ զպանտրխտութիւն<sup>7</sup> որդոց<sup>8</sup> իւրոց յԵգիպտոս, եւ զելանելն հզաւր ձեռամբ եւ գալ յերկիրն Աւետեաց:

756 Այլեւ՝ զմարմնանալ<sup>9</sup> Որդոյն Աստուծոյ<sup>10</sup> եւ զգառնալն ի հայրենական<sup>11</sup> ի փառան նովին մարմնով:

757 Այսոքիկ են տեսիլք սանդղոցն, վասն զի հանդերձեալ էին մարդիկ<sup>12</sup> աշտիճանաւք, առաքինու-

թեամբ Քրիստոսիւ, ելանել առ Աստուած, եւ հրշտակաց<sup>13</sup> իջանել եւ միաւորել ընդ մարդկան սիրով:

758 «Եւ Տէր ի քեզ հաստատեալ, զոր ի բացուստ [\*տեսեալ սրբոյն Յակոբայ<sup>14</sup>]:»:

759 Զայսոսիկ զվերասացեալդ<sup>15</sup> իմանալիւք<sup>16</sup> տեսեալ ի հեռուստ ժամանակաց, վասն զի Տէր ի վերա[յ] կենարար խաչին հաստատելոց էր, եւ սա լինէր սանդուխք յերկրէ ի<sup>17</sup> յերկինս, որով մարդիկ յերկինս ելանէին:

760 «Եւ յահէն ըմբռնեալ հրաշիցն յինքն սոսկացեալ»: 761 Զմեծ եւ զհրաշալի տեսիլն իմացեալ հաւատով սոսկացաւ ի մարմնի զարհուրեալ:

762 «Ստուգապէս դուռն երկնից զքո<sup>18</sup> վայր եւ տուն Աստուծոյ զԲէթէլ [\*անուանէր]:» 763 Իբրու<sup>19</sup> դէմ յանդիման զվայրքո, որ է Գողգոթայ, «տուն Աստուծոյ» անուանէ, զի «բէթ»-ն տուն ասի եւ «էլ»-ն՝ Աստուծոյ՝ «տուն Աստուծոյ»:

764 «Աւրհնեա՛լ ես, փայտ սուրբ, որ ի խորհուրդ նախանկար<sup>20</sup> նեղիչ ախտին, որ յԵգիպտոս սաստիկ տանջեցելոյ, գառնագեն արիւնաշաղախ դրաւքն՝ որպէս երկնի մտից<sup>21</sup>, յորմէ յաւրինակ տիեզերաց անդրանկան<sup>22</sup> Ազամա[յ], անդրանիկքն փրկիւր Իսրայէլի: 765 Յորմէ զոգիս, քան եթէ մարմնով ի բաց բարձեալ ողորմեցելոյ ի բարիսն յայնս, յոր միշտ աչք Աստուծոյ ի վերա[յ] ժառանկութեանն ասի, փոխադրէ,

1 BC համայնից

2 C հոգւոց

3 C արարից

4 C յօրինակ

5 C յակովբա

6 C զյակովբ

7 BC զպանդխտութիւն

8 C որդւոց

9 BC զմարմնանալն

10 BC չի՛

11 B հայրական

12 C մարդիկ

13 BC հրշտակաց

14 C յակովբա

15 B զվերասացեալս

16 BC իմանալիւք

17 BC չի՛

18 BC զքոյ

19 B իբրեւ

20 C նախանկար ի Բոյդ խորհուրդ փ/ս ի խորհուրդ նախանկար

21 C մտիւ

22 C անդրանկան

որ ըստ հեշտ եւ կամակ՝ կենաց ոգոցն կաթին եւ մեղու ասի բխիչ»<sup>1</sup>:

766 «Աւրհնեալ ես, փա[\*յտ] սուրբ, որ ի քեզ եւ ի քոյդ [\*խորհուրդ, ի ջուրց առեալն գաւազանաւ զջուրսն հարկանելով, վիճատառէ իբրեւ գլոյժ միտս]»: 767 *ՋՄուսիսէ*<sup>2</sup> նշանակէ, որ ընկեցին առ ասին գետոյն, եւ առեալ դուստրն փարաւոնի՝ սնոյց: 768 Արդ<sup>3</sup>, աւրինակս՝ ծանուցանէ զնորոյս խորհրդո[յ], որով ի քեզ կատարեցան ամենայն ստուերական աւրինակքն եւ ի քո խորհուրդն կատարեալ եղեն առաջին<sup>4</sup> տպագրեալքն<sup>5</sup>: 769 *ՋՄուսէս*<sup>7</sup> էառ դուստրն փարաւոնի ի ջուրցն, եւ զՏէր մեր էառ եկեղեցի Աստուծոյ Յորդանանէ: 770 Նա սնաւ յորդեգրութիւն, եւ Տէր<sup>8</sup> սնաւ եւ անկեաց զարգացմամբ, զի արասցէ զմեզ որդեգիրս<sup>9</sup> Հաւրն երկնաւորի: 771 Եւ դարձեալ՝ ի քեզ աւրինակէր գաւազանաւն, եւ ի քոյդ խորհուրդ Յիսուս կատարէր զամենայն: 772 Գաւազանաւ զջուրն հարկանելով Մուսէս<sup>10</sup> վիճատառէ, եւ Տէր մեր խաչին հարկանելով ի բնութիւնս, որ լուծեալ էին մարդկան միտք իբրեւ զջուր, յաւրինակ փարաւոնի կարծրացոյց զհաստացելոց անձինս՝ պնդակազմ եւ հաստատուն ունելով զպատուիրանս Տեառն:

773 «Եւ զվէմ հարեալ հոսանուտս<sup>11</sup> գործէ որպէս<sup>12</sup> զկարծր ապառաժն սրտիւ»:

774 *Այսոքիկ յանապատին գործեցան, որ եւ գաւազանաւն ի կատարատաշ վիճէն ջուր բխեաց հարկանելովն*: 775 *Նոյնպէս եւ Տէր մեր զկարծրացեալ եւ զքարացեալ որովայնս<sup>13</sup> հեթանոսաց, ըստ նմանութեան փարաւոնի, որ ոչ կակղացաւ արձակել զժողովուրդն, հարեալ ի բնութիւնս իբր գաւազանաւ խաչին՝ կակղացոյց, որով եւ գետք առատապէս գիտութեամբ յորովայնէ մարդկան բխեցին կենդանական ջրո[յ] ի կեանսն<sup>14</sup> յաւիտենականս*:

776 «Եւ զբազուկսն ի քեզ ձեւացուցանելով ի մարտի պարտէ զԲելիար, [\*որ նշանակաւ կոչի Ամաղէկ]»: 777 *Յորժամ ել Իսրայէլ յԵգիպտոսէ, մեծաւ ամբոխիւ զոխսն ի մտի ունելով զԵսաւա[յ] ամաղեկացիք<sup>15</sup> թոռունք եւ հարճորդիք նորուն, ետուն պատերազմ ընդ նոսա, եւ Մուսիսի<sup>16</sup> տարածեալ զձեռսն մղէր զպատերազմն*: 778 *Այսպէս եւ սատանա[յ] յիս մթերեալ ունէր ընդ մարդկա[յ]ինս բնութեան, վասն որոյ յելանել գերեացն ի զժոխոց՝ տայր պատերազմ սաստիկ*: 779 *Իսկ Տէր մեր, տարածեալ զձեռս ի խաչին փոխանակ Մուսիսի<sup>17</sup>, պարտէր զթշնամին եւ զգաւրս, որ եւ Բելիար անուանի*: 780 *Որպէս ասաց Փրկիչն ի խաչին. «Քաջալերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի»<sup>18</sup>, եւ մեզ ուսոյց՝ տալով «Իշխանութիւն կոխել զաւձս եւ զկարիճս եւ զամենայն զաւրուութիւնս [\*թշնամոյն]»:*

1 Ա յի՛ր աւրինեալ ես փայտ սուրբ, որ ի խորհուրդ ... կարին եւ մեղու ասի բխիչ C 40ա ունի հետեւեալ ծնր. «Այս տունս ի յաջորդ տանդ յետոյ է եղած եւ մեկնած, ապա ի բնարանն յայտ տեղս է, վասն այն գրեցի» C «փրկիւր իսրայէլի ... ասի բխիչ»՝ եղծուած:

2 BC գմովսէս  
3 BC չի՛ր  
4 C աւրինակաւս  
5 BC ամենայն  
6 BC տպագրութիւնն  
7 BC գմովսէս  
8 BC ամեր  
9 B որդեգիր C որդեգիրս  
10 BC + մովսէս գջուրն հարկանելով փիս գջուրն հարկանելով մուսէս

11 BC հոսանուտ  
12 B իբրեւ  
13 B որովայն  
14 BC կեանս  
15 BC ամաղեկացիք զի յեսաւա(յ)ի/իս գեսաւա(յ) ամաղեկացիք  
16 BC մովսէսի  
17 BC մովսէսի  
18 ՅՅ՝ՎԸ՝ԺՊ 33

781 «Աւրհնեալ [\*ես, փայտ սուրբ], որ նախ[\*անկար ի քո խորհուրդ] նեղիչ ակտին [\*տանջեցելոյ], որ յեգիպտոս [\*սաստիւ]»: 782 Յառաջատեսութիւն Աստուծոյ, որ յապա լինելոց էր, նախանկար էր տպաւորութեամբ: 783 Ջոր աւրինակ պատկեր թագաւորական յառաջ կապարեալ յնկարագրի<sup>1</sup> եւ ապա բազմերանդ<sup>2</sup> դեղոցն ի վերալ] արկանելով ցուցանէ զճշմարտութիւնն: 784 Նոյնպէս եւ առաջինքն ամենայն ստուերագիր նկարագրութիւն էր մինչ ի դալ ճշմարտութեանն: 785 «Ի քո խորհուրդ»: 786 Յուցանէ յեգիպտոս զնշանսն, որ լինէին<sup>3</sup> ի ձեռն գաւազանին Մուսիսի<sup>4</sup>, որով եւ կենարար խաչիւս բազում<sup>5</sup> զաւրութիւնք<sup>6</sup> հանդերձեալ էին լինել յաշխարհի: 787 «Նեղիչ ակտին, որ յեգիպտոս»: 788 Յորմէ նեղէին զժողովուրդն ի ձեռն կաւոյն եւ աղիւսարկութեանն, այսպէս եւ ախտք<sup>7</sup> յովազոյնք հոգոյ] եւ մարմնոյ], որ նեղէին զընութիւնս՝ ի ձեռն սղխալող<sup>8</sup> մեղացն եւ չարութեան դիւին:

789 «Գառնազին արիւնն»: 790 Յորժամ պատճեցան հարուածաւք<sup>9</sup> եգիպտացիքն եւ ոչ սզաստացան<sup>10</sup>, հրամալ]եաց Մուսէս<sup>11</sup> առնուլ ոչխար եւ զենցեն յերեկորեան<sup>12</sup>, եւ արեամբն նկարեցեն զսեամսն: 791 Եւ այսոքիկ նշանակք<sup>13</sup> են այլոց իմաստութեան: 792 Քանզի տան-

ջեալ սատանալ] իւրալ]աւքն<sup>14</sup> խոստովանէին առ Տէրն. «Եկիր յառաջ, քան զժամանակն տանջել զմեզ», եւ ոչ սզաստացան<sup>15</sup> թոյլ տալով բնութեանս: 793 Վասն որոյ] զառնն<sup>16</sup> անմեղ վարեալ<sup>17</sup> ի սպանդ, յերեկոյ]ացեալ ժամուս<sup>18</sup> զենանի: 794 Զի ի վախճան յաւիտենիս Քրիստոսի չարչարանքն, ուստի արեամբն նորա շաղախեցան սեամք մտաց<sup>19</sup> մերոց, գործ եւ իմաստութիւն:

795 «Որպէս երկնի մտիւ»: 796 Նոքա բնկալեալ հրաման մտին յերկիրն Աւետեաց, իսկ հաւատացեալք՝ ազատեալք արեամբն Քրիստոսի եւ կոչեցեալք յորդեգրութիւն, ունին մտանել յերկնից արքալ]ութիւնն առաքինի վարուք: 797 Անդրանիկքն<sup>20</sup> Իսրայէլի ի ձեռն Մուսիսի<sup>21</sup> եւ արեամք գառինն փրկիր: 798 Նշանակ էր նախաստեղծին<sup>22</sup>, որ էր անդրանիկ քան զբնաւս, զի Քրիստոսիւ փրկելոց էր ի մահու<sup>23</sup> եւ ի դժոխոց:

799 «Յորմէ զոգիս<sup>24</sup>, քան եթէ մարմնոյ]»: 800 Յեգիպտոսէ մարմինք ազատեցան, իսկ Քրիստոս զոգիս<sup>25</sup> հանդերձ մարմնով ազատեաց ի սատանալ]ի ծառալ]ութենէն:

801 «Ողորմեցելոյ] ի բարիսն յայնս»: 802 Երկիր ասէ, զոր զարմանէ Տէր Աստուած քո զնա ի սկզբանէ տարոյն մինչեւ ցկատարումն տարոյն: 803 Եւ այսոքիկ զերկնալ]ին բարիսն զեկուցանէ, ողոր-

1 B նկարի C նկարագրին

2 BC բազմերանկ

3 BC ցուցանէ զնշանսն, որ յեգիպտոս լինէին փխջուցանէ յեգիպտոս զնշանսն, որ լինէին

4 B մովսէսի C մովսէսի

5 BC բազմութիւնք

6 BC չիք

7 C ախտ

8 BC սխալող

9 BC հարուածովք

10 BC զզաստացան

11 BC մովսէս

12 B յերկորեան

13 BC նշանակ

14 BC իւրովքն

« II-րդ. Լ՛ 29

15 BC զզաստացան

16 BC գառն

17 BC վարեցաւ

18 BC ժամու

19 BC մտից

20 C անտրանիքն

21 BC մովսէսի

22 C նախաստեղծիցն

23 BC մահուանի

24 B զոգիս C զոգիւց

25 C զոգի



մութեամբ եւ գթութեամբ Հաւրն երկնա-  
ւորի շնորհեցաւ հաւատացելոց: 804 Անդ  
երկիր, որ բխէ զկաթն եւ<sup>1</sup> զմեղր, իսկ մեզ  
երկիր<sup>2</sup> կենդանեաց, որ զմեղաւք մե-  
ռեալսն ոչ ընդունի, այլ բխէ զանճառելի  
գիտութիւն կերողացն<sup>3</sup> իմաստութեան:

805 «Աւրհն[\*եա՛լ ես, փայտ սուրբ],  
ամբատեսիլ սիւն», [\*որ զանտանելի լոյսն  
եւ զհուրն ի քեզ բարձեալ ունելով]: 806 Աւ-  
րինակ է զլուսեղէն ամբն<sup>4</sup>, որ առաջնոր-  
դէր Իսրայէլի յանապատն առաջնորդու-  
թեան<sup>5</sup>, աստուածային նշանից<sup>6</sup>, որ<sup>7</sup> առաջ-  
նորդէ մեզ յիմանալի աշխարհն, զի ան-  
տանելի լուսոյն Աստուծոյ միանգամայն  
եւ<sup>8</sup> հրոյն բարձող եղեր:

807 «Յարակա[յ] ի կեանս առաջնորդես  
եւ լուսաւորեալ պահես»: 808 Պարզեւա-  
կան երկիրն չէր յարակա[յ], որ եւ առաջ-  
նորդէր ամբն<sup>9</sup> ի տուէ եւ հուրն ի գիշերի  
լուսաւորէր: 809 Իսկ երկնից երկիրն, ա-  
ռաջնորդութեամբ խաչիս սեփհականեալ  
հաւատացելոց, որով լուսաւորին եւ պահ-  
պանին ընդ ամբաժածուկ աջովն Աստու-  
ծոյ:

810 «Աւրհն[\*եա՛լ ես, փայտ սուրբ, որ  
ի հոսանուտ կենացս] ի<sup>10</sup> դառնաբեր  
վիժանս [\*պարտաւորեցելոյն Ադամայ]:»  
811 Յարմարագոյն եւ պատշաճ վարկա-  
նիմք իմանալ եւ դայս եւս աւրինակ:  
812 Քանզի ի գալն Իսրայէլի յանապատն՝  
ձարաւեալ եղեն ի ջրո[յ], աղաղակեցին  
առ Մուսէս<sup>11</sup>, եւ նա առեալ հրամանաւն Աս-  
տուծոյ փայտ, ընկեց յակն աղբերն, որ հո-

սէր դառնագոյն ի լեռնէ անտի<sup>12</sup>, եւ արա-  
գապէս ընկալաւ զքաղցրութիւն: 813 Արդ<sup>13</sup>,  
ունիմք իմանալ հոսանուտ զկենցաղս  
զաւրէն ջրոյ, մանաւանդ դառնաբեր մե-  
ղաւք, զոր եւ ոմն<sup>14</sup> յիմաստնոցն ասաց, ե-  
թէ. «Էակքս<sup>15</sup> ի հոսման եւ ի ծորման են  
յաղագս միշտ կրելո[յ] զապականու-  
թիւն»<sup>16</sup>: 814 Ուստի եւ արարիչն բնու-  
թեանս, զդառնաբեր յանցանս մարդկան  
տեսեալ պարտաւորեցելոյն Ադամայ], որ  
յաղթեցաւ ցանկութեամբն եւ արժանի  
գտաւ պարտաւորիլ քննութեամբ: 815 Ա-  
ռեալ զնշանս տէրունեան իսկապէս Տէրն,  
եւ խառնեալ մարմնովն իւրով ի խորհուրդ  
խաչին յինքնարուն մերս մարմին, քաղց-  
րացոյց ախորժելի առաքինութեամբ եւ  
արբամբ ի կեանս յաւիտենից:

816 «Զոր մեռա[յ]իւն գիտէ ազդել  
զաւրէնս<sup>17</sup>»: 817 «Մեռայն» դառնութիւն  
ասի: 818 Ըստ նմանութեան՝ մեռա[յ]ին  
բնութիւնս մեր քաղցրացաւ<sup>18</sup> Քրիստոսիւ  
եւ կենարար խաչիւս: 819 Իսկ այլք ո-  
մանք զինքնարունն այլագոյն մեկնեն, ե-  
թէ Ադամ ինքեան կամաւք մեղաւ՝ եւ ոչ  
յուժէքէ բռնադատեալ: 820 Այլ մեք զա-  
ռաջին միտսն<sup>19</sup> գեղեցկապէս եւ բարիոք<sup>20</sup>  
իմացաք, զոր եւ կամի ոք, ընտրեսցէ<sup>21</sup>:

821 «Աւրհն[\*եա՛լ ես], փա[\*յտ] սուրբ,  
իմանալի տապանակ, [\*ոսկի սափոր երկնայ-  
նով լցեալ մանանայիւ եւ գաւաղան հրաշա-

1 C չի՞  
2 BC երկիր մեզ փխ մեզ երկիր  
3 B կերողաց  
4 C ամպն  
5 B առաջնորդութեամբ  
6 C Եշանիս  
7 C չի՞  
8 C չի՞  
9 C ամպն  
10 BC չի՞  
11 BC մոզսէս

12 B անդի  
13 B ամդ  
14 C յումն  
15 C էակս  
16 Հմմտ. Դաւիթ Անյաղբ, Երկասիրութիւն՝ փիլիսո-  
փայական, համահաւաք ՌՆՆական բնագրերը եւ  
առաջարանը Ա. Արեւշատեանի, Երեւան, 1980, էջ  
33:  
17 C գորէն  
18 BC քաղցրացաւ բնութիւնս մեր փխ բնութիւնս մեր  
քաղցրացաւ  
19 BC միտմն  
20 C բարւոք  
21 B բնորեսցէ

բեր պայծառացեալ ծաղկաւ]»: 822 Յորժամ ասաց զգաւազանէն, որ եհերձ զծովն եւ զամբատեսիլ<sup>1</sup> սիւնն, որ առաջնորդէր Իսրայէլի, եւ զփայտն՝ հարեալ ի ջուրն<sup>2</sup>, որ քաղցրացոյց, ապա աւրինակ է տապանակին, յորում եւ սափորն ոսկի լի մանանայիւ: 823 Արդ, ասէ զսա իմանալի տապանակ եւ իմանալի սափոր: 824 Ջի այն տապանակ յանփուտ փայտից պատեալ ներքո[յ] եւ արտաքոյ ոսկով, իսկ իմանալիս այս տապանակ անփուտ եւ անապական է, յորմէ հետէ մերձեցաւ Տէրն մեր ի սմա՝ պատատեալ<sup>3</sup> փոխանակ ոսկո[յ] աստուածա[յ]ին զաւրութեամբն միացելով: 825 Իսկ «սափոր» անուանեալ, զի զերկնա[յ]ին հացն յինքն բարձեալ այն, որ կեանս տա[յ] աշխարհի: 826 «Եւ գաւազան հրաշաբեր պայծառացեալ ծաղկով»: 827 Դադան եւ Աբիրոն հակառակ կացին Մուսիսի<sup>4</sup>, որպէս եւ Կորիս Ահարոնի: 828 Վասն որո[յ] խնդրեաց Մուսէս<sup>5</sup> Բժ.ան գաւազան, եւ ծաղկեցաւ գաւազանն Ահարոնի, որ նշանակ էր քահանայութեանն հաստատութեան, եւ յանդիմանութիւն հակառակորդացն: 829 Արդ, կոչէ զսա իմանալի գաւազան՝ ծաղկեալ արեամբն Քրիստոսի չարչարանաւքն, որ եւ պտուղ ունելով զամենեցուն թագաւորն:

830 «Միանգամայն եւ երկու տախտակս ընդ [\*միմեանս յարմարեալս զհոգի եւ զմարմին հինկեկին<sup>6</sup> զգայութեամբք, յորում կատարելապէս Աստուածն Բան անճառելի տպաւորեալ, զմի եւ զնոյն ինքն զտէրունեան սուրբ մարմինն Աստուած<sup>7</sup> միացելով ի քեզ բարձեալ կրեցեր]: 831 Անդ ի տապանակին երկու էին տախտակք՝ յար-

մարեալք ընդ միմեանս: 832 Իսկ տապանակի նմանեցուցանէ զհոգի եւ զմարմին մեր, զոր առեալ Քրիստոսի՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն: 833 Մանաւանդ փոխանակ հինգ պատգամացն, որ ի տախտակսն երկաքանչիւրսն զատուցեալ գրով, նշանակ է հինգ սգայութեանս՝ բոլոր եւ կատարեալ զսգեցեալ<sup>8</sup> Բանին Աստուծոյ: 834 «Յորում կատարելապէս Աստուածն Բան անճառելի տպաւորեալ»: 835 Յուցանէ տիրապէս, փոխանակ առաջին գրոյն, մատամբն Աստուծոյ գրոշմեցաւ ի տախտակին, զնոյն ինքն զԱստուածութիւնն հանդերձ միաւորութեամբն<sup>9</sup> տնաւրինութեանն<sup>10</sup> ի քեզ բարձեալ կրեցեր:

836 «Աւհն[\*եալ ես], փա[\*յտ սուրբ], իմանալի վիմարդեան<sup>12</sup> [\*եւ քառանկիւն տախտակ]»: 837 Ջառաջինն, զոր միանգամ<sup>13</sup> աւրինակեաց զտախտակսն նմանապէս վերստին յիշատակէ: 838 «Իմանալի» կոչէ վիմարդեան<sup>14</sup>, զի այն տախտակաց արդիւնք<sup>15</sup> ի վիմէ քարանց ձեւացեալ<sup>16</sup>, յորում եւ քառանկիւնի: 839 Իսկ կենարարս այս խաչ, որ եւ մտաւք իմանի, կարծր եւ հաստատուն, մանաւանդ իբրեւ զվէճ անվանելի եւ անխորտակելի, նաեւ քառաթեւեան ունելով կերպարան:

840 «Յորում<sup>17</sup> ճշմարիտ աստուածածանութիւնն ոչ տասնբանեան [\*մատամբ գրոշմեցեալ Աստուծոյ, այլ միեւնոյն ինքն անպարագիծն Աստուած բանիւ ձեւացեալ]»: 841 Ի նախկի տախտակսն

1 C գամպատեսիլ

2 C ջուր

3 C պատեալ

4 BC մոլվսէսի

5 BC մոլվսէս

6 C հնգեկին

7 C աստուածութեամբ

8 B գգայութեանս

9 B սգեցեալ C գգեցեալ

10 B միաւորութեամբ

11 BC տնորէնութեանն

12 C վէմարդեան

13 B միանկամ

14 BC վէմարդեան

15 C արդեոփ

16 BC ձեւացեալ բարանց փո բարանց ձեւացեալ

17 B + եւ

տպաւորեալ աւրինակաւ ծանաւթի ա-  
նուանն Աստուծոյ տանբանեան պա-  
տուիրանաւքն<sup>1</sup>: 842 Իսկ այսմ<sup>2</sup> ահաւոր  
եւ իմանալի տապանակէս ճշմարիտ ծա-  
նուցաւ աստուածութիւնն ամենայն աշ-  
խարհի: 843 Ոչ մատամբն Աստուծոյ դրոշ-  
մեալ, այլ Միածին Բանն Աստուած եւ  
նոյն ինքն Տէր, որ եւ անպարագրելի եւ  
անիմանալի, ըստ նմանութեան տառի ձե-  
ւացեալ, որ է ի մերս տեսութիւն: 844 Ձի  
որպէս եւ բան մեր աներեւոյթ ի միտս ձե-  
ւանա[յ], գրով եւ քարտիսիւ առնու<sup>3</sup>  
տպաւորութիւն<sup>4</sup>, նոյնպէս եւ<sup>5</sup> անմարմին  
եւ աներեւոյթ ի մէնջ Որդին Աստուծոյ  
ձեւացաւ ի մարմնի իսկապէս եւ երեւեցաւ  
ազգի մարդկան: 845 Ըստ որում ասէ.  
«Փոխանակ ի Սինա[յ]է [\*աստուածատուր  
ի Սիրովնէ] ամենայն երկրի [\*շնորհեցաւ]»:  
846 Սինա[յ] կոչի անմատոյց, յորմէ  
տուաւ պատգամքն<sup>6</sup> Աստուծոյ Իսրայէլի  
ի ձեռն Մուսիսի<sup>7</sup>: 847 Իսկ սովաւ թելա-  
դրութեամբ ի Սիրոնէ<sup>8</sup> աւանդեցաւ ամե-  
նայն աշխարհի ծածկութիւն Աստուծոյ ա-  
ւետարանաւ, զոր քարոզեցին առաքեալքն  
բանիւ եւ իմաստութեամբ:

848 «Աւրհն[\*եա՛լ ես], փա[\*յտ] սուրբ,  
իմանալի գաւազան, որ իբր[\*ու<sup>9</sup>] ցամաք  
գոլով՝ նոյն ժամայն իսկ դալարաբերեաց ոչ  
կաղին արքայական, այլ գամենեցուն<sup>10</sup> թա-  
գաւորն, դանթառամն եւ գերկնայինն  
ծաղկեցար ծաղիկ]»:  
849 <sup>11</sup>Չայտոսիկ պատ-  
մութիւն եւ աւրինակ կանխաւ ծանուցաք,  
եթէ վասն որո[յ] պատճառի ծաղկեցաւ

գաւազանն Ահարոնի<sup>12</sup>: 850 Յայժմու բա-  
նիս կրկին անգամ յիշատակէ<sup>13</sup>: 851 Իմա-  
նալի գաւազան կոչէ կենարարին զճշմա-  
րիտ քահանայապետութիւնն<sup>14</sup> Տեառն<sup>15</sup>  
գեկուցանելով: 852 Այն գաւազան ցամաք  
գոլով՝ նոյն ժամայն դալարաբերեաց կա-  
ղին արքա[յ]ական: 853 Եւ գաւազան  
Տեառն նշան<sup>10</sup> տէրունական՝ հատեալ յար-  
մատո[յ] դալարութենէ եւ կառուցեալ ի  
Գողգոթա[յ], առժամայն դալարացեալ ո-  
ւոգմամբ արեանն Տեառն, բերելով պտուղ  
գամենեցունց թագաւորն՝ անթառամ եւ  
երկնա[յ]ին ունելով ծաղիկ գՔրիստոս:  
854 Որ ոչ նուաստանա[յ] ի գաւազանէ  
եւ ի փառաց, այլ միշտ պայծառացեալ  
մարմնով եւ աստուածութեամբ, իբրեւ  
զկաղին արքա[յ]ական, պատճառ լուսո[յ],  
լուսաւորելով զհեթանոսս ի գիտութիւն  
ճշմարտութեան:

855 «[\*Եւ ոչ այսչափ միայն], այլեւ  
կենդանի աղբիւր<sup>17</sup> փրկական ջրո[յ] եւ ա-  
րեան ի ծայրի քում<sup>18</sup> երեւեցաւ բխեալ,  
[\*որով առհասարակ ամենայն լցան տիե-  
զերք]»:  
856 Չառաւելութիւն աստուա-  
ծայնո[յ] նշանիս ծանուցանէ: 857 Ձի  
յայն գաւազանէ ոչ ջուր եւ ոչ արիւն  
բխեալ, իսկ ի կողէ<sup>19</sup> կենարարին արիւն եւ  
ջուր ել վաղվաղակի. արիւնն ի փրկու-  
թիւն ազգի մարդկան եւ ջուրն՝ յաւրինակ  
աւազանին ի լուացումն մեղաց: 858 Որով  
հասարակ ամենայն տիեզերք լիապէս ըն-  
կալան զպարգեւս աստուածատուր շնորհի  
Հոգոյն<sup>20</sup> Սրբոյն:

1 C օրինօքն  
2 BC յայսմ  
3 BC առնույ  
4 BC գտպաւորութիւն  
5 BC չի՛ր  
6 C պատգամն  
7 BC մովսէսի  
8 C սիրովնէ  
9 C իբրեւ  
10 C գամենեցունց  
11 BC + որ իբր

12 C ահարովնի  
13 B չի՛ր  
14 BC Բահանայապետութիւն  
15 C + մերոյ  
16 C նշանն  
17 B աղբիւր  
18 B չի՛ր  
19 B կողէն  
20 C հոգւոյն

859 «Աւերհն[\*եա՛լ ես], փա[\*յտ սուրբ], զոր Յիսուս փոխանակ Յեսուսա[յ] [\*ինքն ինքեան զքեզ բարձեալ, գայխոնաբար նշանակ յաղթութեան պարտեցելոյ թշնամոյն եւ պարտեցելոյն ի վերայ կանգնէ]»:  
 860 *Եւ այս եւս պատմութիւն վա[յ]ելչապէս ցուցանէ զմերո[յ] փրկութեանս խորհուրդ:* 861 *Յորժամ առին զԵրիքով, յանցանել՝ որդոցն Իսրայէլի ընդ Յորդանան, Աքար՝ որդի Քարմեա[յ] գողացաւ ի նզովից անտի՞, զոր եդ Յեսու՞:* 862 *Վասն որոյ ի միւսում վաղիւ պարտեալ՝ եղեն խրայէղացիք առաջի քանանացոցն՞:* 863 *Արդ, այսու աւրինակաւ ցուցանէ իսկապէս զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, վասն զի Յեսու, անուանակիր եղեալ Յիսուսի, ընու զճշմարտութիւն աւրինակին:* 864 *Զի որպէս Յեսու բարձեալ ունէր զգայխոնն, որ է՞ նիզակն ի ձեռինն, եւ կանգնէ՞ ի դրանն Գա[յ]եա[յ] նշան յաղթութեան ի վեր պարտեցելոյ թշնամոյն թագաւորին Գա[յ]եա[յ], նոյնպէս եւ Տէր մեր Յիսուս, ի կատարել զամենայն տնաւրինականսն եւ ի մերձենալ կամաւոր խաչելութեանն, բարձեալ ինքնին զխաչափայտն գա[յ] ի Գողգոթա[յ] եւ կանգնէ նշան յաղթութեան ի վերա[յ] պարտեցելո[յ] թշնամոյն, այսինքն՞ սատանա[յ]ի:* 865 *Ըստ առաքելոյ. «Որ կայր մեզ հակառակ եբարձ գայն ի միջո[յ]»՞:* 866 *«Եւ պարտեցելոյն ի վերա[յ] կանգնէ՞»:* 867 *Ջնախաստեղծէն զեկուցանէ, վասն զի անդ սասցին եբրա[յ]եցոցն պատմագիրք զչիրիմ*

*առաջին մարդոյն:* 868 *Ուստի եւ երկրորդն Ադամ՝ Տէր մեր գնչանն փրկական կանգնէ՞ ի վերա[յ] գլխո[յ] նորա՝ ի փրկութիւն ստեղծուածոյն իւրո[յ] եւ յազատութիւն ծնընդոց նորա:*

869 «Զի զթագաւորեալ զմեզսն մինչ ի կատար ընթացից արեգականն ի սպաս սպանցէ»:  
 870 *Արդ, պատմութեամբն յայտնի առնէ, եթէ ի մտանել արեգականն կախեաց զթագաւորն Գայեա[յ] զերկճղի փայտէ՞:* 871 *Իսկ առ ի միտս Տէր մեր Յիսուս Քրիստոս եկեալ ի վախճան ժամանակի բեւեռեաց զզաւրութիւն մահու ընդ խաչափայտին, այն, որ թագաւորեաց յԱդամա[յ] մինչեւ ի գալուստն Քրիստոսի:* 872 *Եւ՞ զարձեալ ունիմ ասել մինչ՞ ի կատարումն արարածոց, ուր ընթացք արեգականն դադարեն՞, ի սպաս եբարձ զիշխանութիւն՞ մահու, մանաւանդ յորժամ խափանի թագաւորութիւն մահու յետին թշնամին մեր:*

873 «[\*Եւ] զթեւաւորէ զքէն, զոր նշանակաւ զիրն երկճղի կոչէ, կախէ»:  
 874 *Գիր դատաւորացն երկճղի ասէ զփայտն, յորմէ՞ զթագաւորն Գա[յ]եա[յ] կախեցին:* 875 *Սոյնպէս եւ երկթեւեան նշանս տէրուական, զոր կախեաց Յիսուս զթշնամին՝ յանդիման խայտառակելով զտկարութիւն նորայ՞:*

876 «Աւերհն[\*եա՛լ ես], փա[\*յտ] սուրբ, որ փոխանակ Յա[յ]ելի որդի կուսին ցից [\*զքեզ ընդ ծամելիսն, ձիախորիստ մահու վարելով, ի դառնութիւն եւ ի մահ զճաշակսն նմա՞ գործէ, եւ ընդ ոտիւք զգետ-

1 C յանցանելն

2 BC անդի

3 BC + որդի մաւեա

4 BC պարտեալի

5 Հմմտ. Յէսու. 9, 26-1: 26

6 C էր

7 B կանկնէր

8 B + գաւրուրեանն

9 Կողմ. Ի՞ 14

10 BC կանկնէ

9 BC կանկնէ

10 Հմմտ. Յէսու. Ի՞ 29

11 C չիմ

12 BC միեջեւ

13 BC զաղարիմ

14 C զգորուրիւն

15 B գորմէ

16 BC նորա

17 C չիմ

նեալ մեռուցանէ]»<sup>1</sup>: 877 Անցանէ պտտմութեամբ ի կարգ առաջադրութեանն: 878 Քանզի Դերովրա մարգարէութեան առաջեաց առ Բարակ դատաւոր գնալ ի վերա[յ] Սիսարա[յ]<sup>2</sup>՝ գաւրավարին Յարինա[յ]: 879 Եւ յորժամ մղեաց զպատերազմն, փախըստական եղեւ Սիսարա[յ]: 880 Եւ ի գնալն փախստեա[յ] անկանէր առ Յա[յ]ել, որ էր կին աներին Մուսիսի<sup>3</sup>, եւ նա առեալ զցից խորանին՝ հարկանէր ընդ ծամելիսն: 881 Յայսմ խորհրդեան ունիմք իմանալ<sup>4</sup> զհրաշալի գաւրութիւն<sup>4</sup> կենարար խաչիս: 882 Քանզի որդի կուսին Մարիամու՝ Յիսուս, այն, որ յառաջ քան զյաւիտեանս ծնեալ ի Հաւրէ, արդէն իսկ տնաւրինական խորհրդովն ի գլուխ եկեալ աստուածեղէն գրոց, առեալ զսա գէն յաղթութեան՝ վարեաց իբրեւ ցգիգ ընդ մահու ծամելիսն, որ խորխտայր իշխանաբար ի վերա[յ] բնութեանս, վասն զի Սիսարայն<sup>5</sup> թարգմանի<sup>6</sup> խորխտումն: 883 Նմանապէս եւ սատանա[յ] գրաւեալ ունէր զծնունդս Ադամա[յ], տէրունական խաչիւս կործանեցաւ գաւրութիւն նորա: 884 Ըստ որում ասէ. «Ի դառնութիւն եւ ի մահ զճաշակսն նմա գործեալ<sup>7</sup> եւ ընդ ոտիւք զգետնեալ՝ մեռուցանէ»<sup>8</sup>: 885 Յա[յ]ել արբուցանէր<sup>8</sup> Սիսարա[յ]՝ կաթն ըմպելո[յ]<sup>9</sup>, եւ թմբբեալ անաւրինին, ընդ ոտիւք արկեալ, մեռուցանէր ուռամբն<sup>10</sup> վարսաւորեալ, փոխանակ քաղցր կաթինն զառնացուցանէր նմա

զճաշակն<sup>11</sup>: 886 Այսպէս եւ Տէր մեր փոխանակ խաչի աւարտեալ մահու դառնացուցանէր նմա զճաշակն<sup>12</sup>, որով միշտ ըմբէր զմեղս չարութեան<sup>13</sup> եւ հեշտանայր ընդ մարդկա[յ]ին կորուստ<sup>14</sup>: 887 Վասն որոյ ընդ ոտիւք արկեալ աստուածաբար մեռուցանէր եւ բառնայր զկարծեցեալ տէրութիւն նորա: 888 Եւ ոչ այս միայն, այլ<sup>15</sup> մանկանց եկեղեցո[յ] համաւրէն<sup>16</sup> հրամ[այ]էր «կոխել զաւճս եւ զկարիճս եւ զամենայն զաւ[\*]րութիւնք նոցա»<sup>17</sup>:

889 «Աւրհն[\*]եալ ես], փա[\*]յտ] սուրբ, որ ի<sup>17</sup> շրջանգոյց<sup>18</sup> պտոյտս [\*]յորժանուտ կենացս, իբր կարթ ի ներս<sup>19</sup> արկար եւ ի մահուանէ ի կեանս զմարդիկ ձգեցեր»<sup>18</sup>: 890 Զայսոսիկ պատմութիւնք ոմանք յեղիսէի տապարն վերածեն, որ անկաւ ի պտոյտս<sup>20</sup> Յորդանանու, եւ այլք՝ ի Դանիէլի վիշապն, որով իբրեւ կարթիւ մարգարէին արկեալ ի բերանն, զմազն եւ զճարպն<sup>21</sup> վաղվաղակի հերձաւ: 891 Թէպէտ եւ երկաքանչիւր ասացեալքս բաւականապէս ունին զեկուցանել զճարտութիւն աւրինակացն<sup>22</sup>, բայց ես ունիմ ասել արդարապէս, եթէ յորժամ ասաց զբազում աւրինակսն, ապա այնուհետեւ ծովու նմանեցուցանէ զաշխարհ, ըստ մարգարէին, եւ յորժանաց զկենցաղավարութիւն սորա, ըստ որում ասէ. «Ի շրջանասոյց պտոյտս<sup>23</sup> յորժանաց»<sup>23</sup>: 892 Զի զոր աւրի-

« Հմմտ. Գ. Կ. Գ. 2-24

1 C սիսարայի  
2 BC մոպսէսի  
3 BC իմանալ ունիմք փխ ունիմք իմանալ  
4 BC զգորութիւն հրաշալի փխ գերաշալի գաւրութիւն  
5 B սիսարա  
6 C թարմանի  
7 BC գործէ  
8 C արբեցուցանէր  
9 C ըմպելոյ  
10 BC ուռամբ

11 B գնաշակսն  
12 BC չի՛ր այսպէս եւ տէր մեր ... նմա գնաշակն  
13 BC զչարութեանն մեղս փխ զմեղս չարութեան  
14 BC կորուստ մարդոյն փխ մարդկային կորուստ  
15 BC այլեւ  
16 BC համօրէն մանկանց եկեղեցոյ փխ մանկանց եկեղեցոյ համաւրէն  
17 C չի՛ր  
18 BC շրջանասոյց  
19 C ներս  
20 BC պտոյտն  
21 C գնարպն եւ գմազն  
22 C օրինացն  
23 BC պտոյտ

նակ բնաւորեալ է ծովու երբեմն շրջան առնուլ արէկոծութեամբ եւ զներքին աւազն յերեսս<sup>1</sup> տալ, այնպէս եւ աշխարհս սովորաբար պտուտեալ<sup>2</sup> ունի զմարդիկ<sup>3</sup> յորձանաւք մեղաց՝ մանաւանդ տարբերութեամբ կենացս, ազահութեամբ եւ զրկանաւք, նախանձու եւ փառասիրութեամբ, մինչ արտաքոյ կամ<sup>4</sup> անձին գործէ զհակառակս ամբարտաւանութեամբ: 893 Իսկ Տէր մեր, ըստ նմանութեան մարգարէին, որ եւ փայտիւ վերածեաց գտապարն ի հոսանացն Յորգանանու, իջեալ կենարար խաչիւ ի խորս երկրի, վերաբերէր զբնութիւնս մարդկան ի դժոխոց եւ յանհաւատութենէ<sup>5</sup>: 894 Եւ ոչ այսչափ միայն, այլեւ<sup>6</sup> ի մեղաց մահու ի կեանս ձգելով իբրեւ կարթիւ, նշանիւս ազատեաց<sup>7</sup> ի խորասոյզ մրրկեալ դառնութենէ պատրողին:

895 «Իսկ իմանալի վիշապին առ ի կորուստն<sup>8</sup> նմա կարթ ի քիմս եղեր, իբր ձագ մի քիւ կապեցաւ»: 896 Կրկին ունելով զզաւրութիւն՝ աստուածագաւր խաչս զմարդիկ վերածեաց ի խորութենէ, եւ թշնամոյն կարթ ի քիմս եղեւ առ ի կորուստ նմա գործեալ: 897 Զոր համբերողն Յոր<sup>9</sup>, Հոգովն տեսեալ<sup>10</sup>, մարգարէանայր զկործանումն իմանալի վիշապին՝ սատանա[յ]ի. «Եւ եղից շրուշակ ի քիթս նորա» եւ «Խաղացից նովաւ իբրեւ<sup>11</sup> ձագու»<sup>12</sup>: 898 Որպէս ունին մանկունք սովորաբար կարթիւ ընբռնել<sup>12</sup> զձկունս ծովու, եւ կամ

ձագուց ոմանց<sup>13</sup> խաղան նոքաւք՝ այսին առնելով զտկարութիւն նոցա: 899 Ըստ նմին բանի եւ մանկունք եկեղեցո[յ], աւժանդակութեամբ սորա<sup>14</sup>, կարթեալ զվիշապն խաղան իբր ձագու, ըստ Դաւթի<sup>15</sup>, եթէ. «Զվիշապն, զոր ստեղծեր խաղալ նովաւ»<sup>15</sup>:

900 «Զոր աւրինակ անդ բարեւացի կարթիւն յերուսաղէմէ առ ի վախճան կորեալ»: 901 Եւ<sup>16</sup> այսոքիկ մարգարէական է բառբառս<sup>17</sup> Ամբակումս[յ]<sup>18</sup>, զոր նշանակէ նախ վասն կործանման<sup>18</sup> Երուսաղէմի, եւ իւրոցն կարթ եղեալ բռնաւորն Նաբուգոթանասոր<sup>19</sup>, եւ զամենեսեան յերուսաղէմէ մինչ ի սպառ կորգեալ ի գերութիւն ի Բաբելոն: 902 Եւ կամ յետս դարձին, որք յերուսաղէմէ մինչ ի վախճանէին՝ կորգեալ ի գերութենէ: 903 Եղեն ի<sup>20</sup> Բաբելոն<sup>21</sup> կարթ մարգարէքն, որ անդ էին եւ աղաւթիւք ի սպառ կործանեալ<sup>22</sup> զԲաբելոն եւ զԻւրսն: 904 Յայսմ աւրինակէ եւ զմերս. որք ի դրախտէն իջեալ գերութեամբ չարին<sup>23</sup> ի չար խառնակութիւնն<sup>24</sup> կենացս, փրկական խաչս, ըստ նմանութեան կարթի, բոլորապէս կորգեալ զբնութիւնս՝ արժանացոյց կենաց եւ անմահութեան:

905 «Աւրհ[՝\*նեա՛լ ես], վի[\*այտ] սուրբ, իմանալի աշտանակ, [\*պատուական, քան զամենայն ոսկի]»: 906 Արար աշտանակ ոսկի յոսկիո[յ]<sup>25</sup> սրբո[յ] ի տաճարին

1 BC յերեսն  
2 C պտուտկեալ  
3 C զմարդիկ  
4 BC չի՛ք  
5 BC յապակամուրեմնէ  
6 C չի՛ք  
7 C ապրեցոյց  
8 BC կորուստ  
9 BC չի՛ք  
10 BC տեսեալ հոգովն  
11 C իբր  
12 Թ՝ՎՋԻ Խ 21, 24  
13 C ըմբռնել

13 BC + նման  
14 B սոցա  
15 C դարբա  
Ք Ո՞ղ՛՛, Ն՛Կ՝ 26  
16 BC չի՛ք  
17 B քարբառս  
Ք Տ՛է՛՛ Ը՛՛՛՛՛՛՛ 15  
18 BC կործանմանն  
19 BC նաբուգոդոնոսոր  
20 BC չի՛ք  
21 BC քարեկոնի  
22 BC կործանել  
23 BC ի չարէն փ/ս չարին  
24 BC խառնակութիւն  
25 BC յոսկոյ

Մոզոմոն<sup>1</sup>, նոյնպէս եւ տեսանէ Զաքարիա յետ դարձին աշտանակ ոսկի: 907 Արգ, իմանալի կոչէ զայս աշտանակ եւ ասէ: «պատուական, քան զամենայն ոսկի»: 908 Քանզի զանազան են ոսկիք, որք միանգամ<sup>2</sup> ելանեն յերկրէ, այն որ ի Սպանիա[յ] բովքն<sup>3</sup>, ուր մահապարտքն վաստակին, եւ Հնդկա[յ]ինն ծլածեւ, զոր ասեն մրջիւն առիւծիցն ժողովեալ, քան զոր ոչ է ոսկի շատ: 909 Իսկ դու՝ իմանալիւք<sup>4</sup> պատուական եւ գեղեցիկ աստուածեղէն զաւրութեամբն ոսկիացեալ, եւ ի վեր, քան զնիւթական եւ զերեւելի պայծառութիւնս:

910 «Որ զիմանալի լոյսն ի քեզ ունելով զեւթն<sup>5</sup> [\*ճառագայթեան փայլմամբ լոյս յաշխարհս] ջահ[\*աւորեցեր]:» 911 Եւթն<sup>6</sup> էին բերանք ճրագացն, որ ի վերա[յ] աշտանակին, նաեւ գունդ ի միջի ճրագարանացն տեղի ձիթո[յ], որ արկանի ի ներքս եւ անտի<sup>7</sup> բաշխէր յամենիսեան<sup>8</sup> բերանս ճրագացն: 912 Նոյնպէս եւ աշտանակ կանգնեալ<sup>9</sup> ի մէջ տիեզերաց խաչս, եւ գունդ վառեալ ի վերա[յ] նորա Քրիստոս՝ բոլոր մարդկութեամբ եւ կատարեալ աստուածութեամբ, եւ ի նմանէ բաշխի եւթնարփի<sup>10</sup> շնորհքն<sup>11</sup> Հոգիոյն<sup>12</sup> Սրբո[յ] ընդ ամենայն տիեզերս, որով լուսաւորին հաւատացեալք գիտութեամբն<sup>13</sup> Տեսան:

913 «Աւրհն[\*եալ ես, փայտ] սուրբ, որ Հրեղէն Հացին եղեր սեղան, որ[\*ու՛մ սերո-

բէն<sup>14</sup> ունելեաց կարաւտանայր առ ի բառնալ]:» 914 Յետ մահուն<sup>15</sup> Ողիա[յ]<sup>16</sup> ետես ետա[յ]ի ի տաճարին սեղան Հրեղէն եւ հուր ի վերա[յ] նորա, յորմէ եւ սերորէն<sup>17</sup> զարհուրէր մերձենալ, ունելեաց կարաւտանայր առ ի բառնալ եւ մերձեցուցանել ի շրթունս մարգարէին<sup>18</sup>: 915 Վասն որոյ եւ սեղան քառանկիւնի կանգնեալ<sup>18</sup> նշանս տէրունական ի սուրբ Գողգոթա[յ]: 916 Եւ այժմ ի մէջ եկեղեցոյ եւ հացն Հրեղէն, որ կեանս տա[յ] ամենայն<sup>19</sup> աշխարհի, բազմեալ ի վերա[յ] սորա: 917 Իսկ հաւատացեալք Քրիստոսի՝ ծածկեալք ընդ հովանեաւ սորա ոչ կարաւտանան ունելեաց, այլ մեծաւ համարձակութեամբ եւ աշարժութեամբ արժանապէս բաշխեն ի փրկութիւն անձանց եւ ամենայն<sup>20</sup> աշխարհի:

918 «Աւրհն[\*եալ ես], փ[\*այտ] սուրբ, որ վերագոյն մորենոյն առ Կոյսն բնաւոր[\*եցար սքանչելեալք]:» 919 Թէպէտ եւ յետսկոյս<sup>21</sup> ձգելով զպատմութիւն յիշէ զմորենին եւ որ ի նմա սքանչելիք<sup>22</sup>, սակայն ոչ հարեւանցի բանիւք ունի ասել եւ զայս խորհուրդ: 920 Ոչ միայն քան զմորենին գերագոյն եւ սքանչելի գտար, այլեւ քան զկոյսն Մարիամ: 921 Զի մորենին վառեալ հրովն<sup>23</sup> արինակ էր Կուսին: 922 Մորենին սակաւ ժամ եղեւ տեղի աստուածեղէն<sup>24</sup> հրոյն, եւ Կոյսն իննամսեայ ժամանակաւ յորովայնի կրեաց: 923 Իսկ դու եւ քան զԿոյսն գտար սքանչելի, քանզի յաւիտեան եղեր սեղան եւ բնակա-

1 BC սաղոմոն  
2 B միանկամ  
3 BC + են  
4 BC իմանալիով  
5 B է.  
6 BC եւաթն  
7 BC անդի  
8 BC յամենեսեան  
9 B կանկնեալ  
10 B է. արփի C եւաթնարփի  
11 BC շնորիբ  
12 BC հոգոյն  
13 BC գիտութեամբ

14 C սերովբէն  
15 B մահուանն C մահուան  
16 C ողիայի  
17 C սերովբէն  
18 « Հմբ. Ե. . . 9, 1-7  
18 BC կանկնեալ  
19 BC չիբ  
20 C չիբ  
21 C կոյսն  
22 B գրանչելիբ C սքանչելիբն  
23 C հրովս  
24 C աստուածային

րան աստուածա[յ]ին հրոյն: 924 Ի Կուսէն ծնանիլն ի բարձրութենէ ի նուաստութիւն էած, յահաւորութենէ յանշքութիւն: 925 Իսկ<sup>1</sup> ի վերա[յ] քո չարչարեալ ել յերկինս եւ նստաւ ընդ աջմէ մեծութեան<sup>2</sup> ի բարձունս: 926 Վասն այսորիկ բարձրագոյն ես, քան զմորենին եւ զԿոյսն, զի թէպէտ եւ ընակեցաւ առ Կոյսն կատարեալ աստուածութեամբ, սակայն առ քոյդ է ահաւոր եւ զարմանալի, որով ասէ: 927 «Այն, որ զկենդանական եւ զգա[յ]ական<sup>3</sup> նորայն բերէ<sup>4</sup> տեւակութիւն առ հուրն [\*հրաշս ցամաքութիւն եւ դիւրածափութիւն մանաւանդ բերելով, քանզի հիւթն<sup>5</sup> այն եւ դալարագոյն<sup>6</sup> գաւրութիւն թփոյն առ հուրն աննիւթ տեւականութիւն, թերեւս խորշի եւ տեղի տայ զարմանց]»: 928 Ոմանք կենդանական գտունկն ասեն եւ զսգա[յ]ական<sup>7</sup> զԿոյսն: 929 Եւ յիրաւի, զի տունգք<sup>8</sup> ածեցմամբն եւ սնընդականաւն կենդանական կոչին, եւ շնչարոյս՝ արտաքո[յ] զսգա[յ]ութեան<sup>9</sup>: 930 Քանզի մարդիկ<sup>10</sup> միայն ունին սգա[յ]ութիւն<sup>11</sup> եւ աւնասունք, որով շարժին եւ արձակին<sup>12</sup> ի կերակուրս եւ ի ցանկութիւնս: 931 Բայց աստ յիշատակ առնէ վասն տնկոյն՝ աւրինակելով, եթէ յազագս կենդանական գոլոյն եւ զգալի դալարութեամբն տեւեաց առ հուրն<sup>13</sup> եւ տեղի ետ զարմանց, է հիանալի: 932 Բայց քոյդ է հրաշալի, որ յարմատո[յ] հատած ցամաք փայտ, դիւրա-

ծախ եւ այրելի հրո[յ]՝ իբրեւ զխոիւ, որ արկեալ ի հուր առ ժամայն ապականի:

933 «Յոյժ դիւրակէզ ցամաք փայտ իբրու ելո[յ] գաւրութիւն [\*եւ նովին հրովն անշիջաւ՝ իբրեւ եռանդնուտ յիմանալի քրայէ, արտաշիկագոյն առու հրախառն սուրբ արեանն հոսմամբ ի վերա[յ] իջեալ պահեցար անկէզ, առաւել բարձրագոյն գոս հրաշից]»: 934 Յայտ է այսու եթէ անգաւր գոլով ի դալարութենէ եւ նովին աստուածա[յ]ին հրովն, որ անշիջանի<sup>14</sup>, որպէս ի քուրա[յ]է<sup>15</sup> դարբնաց ելանէ հուր յերկաթո[յ]՝ առուաբար յառաջ գալ: 935 Այսպէս ունիմք իմանալ քուրա[յ] իմանալի զմարմինն Տեառն<sup>16</sup> եւ առու հրախառն դարիւնն<sup>17</sup>, որ ել ի կողէն արտաշիկագոյն<sup>18</sup>, այսինքն՝ յոյժ հրացեալ իջանելով ի վերայ քո, պահեցար անկիզանելի: 936 Վասն որո[յ] առաւել պարտ է զարմանալ հրաշիւք ընդ եղեալ սքանչելիսն, որ ի քեզ բնաւորեցաւ:

937 «Յաղագս որո[յ] եւ այն, որ զայտ<sup>19</sup> հուր կրեաց յորովայնի<sup>20</sup>, կամաւոր քեզ երկրպագեաց [\*Կոյսն]»: 938 Յուցանէ, եթէ<sup>21</sup> վասն այսպիսի սքանչելեաց, որ ի քէն կատարեցաւ, Մարիամ Աստուածածին, որ զհուր աստուածութեանն, որ ի վերա[յ] քո տեսանի, բովանդակապէս կրեաց յորովայնի, կամաւ եւ առանց հարկի երկրպագեաց քեզ<sup>22</sup>: 939 Թէպէտ եւ ոչ է գրեալ յԱւետարանի անդ երկրպագութիւն Կուսին, սակայն յետ յարութեանն Տեառն

1 BC չի՛

2 B մեծութեանն

3 B գագայականն

4 BC էքեր

5 C հիւթիւն

6 B դալարագոյ

7 BC գգայական

8 BC տունկ

9 BC գգայութեան

10 C մարդիկ

11 BC գգայութիւն

12 BC յարձակին

13 C չի՛ առ հուրն

14 BC ոչ շիջանի փխ անշիջանի

15 BC քրայէ

16 BC զմարմինն տեսուն իմանալի փխ իմանալի զմարմինն տեսուն

17 BC առու գարիւնն հրախառն փխ առու հրախառն գարիւնն

18 B արտաշիկագոյն C արտաշիկացեալ գոյն

19 BC գայդ

20 C յորովայնի գայդ հուր կրեաց փխ գայտ հուր կրեաց յորովայնի

21 C թէ

22 BC քեզ երկրպագեաց փխ երկրպագեաց քեզ



ի սուրբն Գողգոթա[յ] եւ առաջի աստուածընկալ խաչին բազում աղաւթս մատուցանէր Կոյսն Հանդերձ երկրպագութեամբ՝ խնդրելով զփրկութիւնն աշխարհի:

940 «Քանզի յանտանելի այգը արիւնուտ հրոյդ ահաւորութեանն՝ [\*ամենայն տարերք յայնժամ, երկիր իսկ միանգամայն ի սմայլւքս, երկին եւ այն որ յերկնի հրեղէնքն՝ սասանեալ առհասարակ առ լուծանել ամենայն իրաւք, եթէ ոչ նորին հրոյ ամենակրողի հայէին]»: 941 «Անտանելի» *ասէ զհուր աստուածութեանն, զոր ոչ իմանալիք եւ ոչ սգալիք<sup>2</sup> արարածք կարող են բառնալ:* 942 Յայնժամ յորում խաչեցին զՏէր մեր Յիսուս որդիքն անաւրինացն<sup>3</sup>, տեսանելով արարածոցս զահաւոր հուր աստուածութեանն՝ Հանդերձ արեամբն ելեալ ի կողիցն, ահաբեկեալ սասանէին ոչ միայն երկիր տարերաւքս, այլև երկին եւ որ ի նմա հրեղէնքն: 943 Հրեղէն զարեգակն եւ զլուսին ասէ:

944 «Առ լուծանել ամենայն իրաւք, եթէ ոչ նորին հրո[յ] ամենակրողի կրեալ հա[յ]էին»: 945 Նշանակէ այսու, եթէ լուսաւորացն, որ յերկինս, որք միանգամ<sup>4</sup> հրեղէնք կոչին, յորժամ տեսին զՏէրն իւրեանց ի խաչին ձաղեալ<sup>5</sup> բասրանաւք, զարհուրեցան յոյժ, եւ լուծանել<sup>6</sup> անկանէին յերկնից, եթէ ոչ կրողն<sup>7</sup> զաւրութեանց Քրիստոս պահէր զնոսա առանց լուծանելոյ, որով հա[յ]էին համարձակապէս:

946 «Զի ստորակա[յ]ութեամբ լուսինն<sup>8</sup>, թէպէտ եւ առ ներքինս ազգակցաբար, [\*լստ երեւութեանն զարիւնն երեր]»: 947 Զառ

ստորն խոնարհ ասէ, զի ի վայր է լուսինն<sup>9</sup>, քան զայլ լուսաւորսն՝ սկսեալ յանմոլար գնդիցն, նաեւ ի մոլորակացն յերեւակէն եւ յայլոցն, առ մեզ ունի ազգակցութիւն խոնարհութեամբն եւ ի գոյն արեան փոխարկելով: 948 Եւ դարձեալ՝ ըստ մաշմանն եւ աճելո[յ] է ազգակից մարդկան: 949 Զի ոչ միայն ի Քրիստոս մեղան հրեայքն թշնամանելովն, այլ ի Հայր եւ ի Հոգին Սուրբ, եւ մեղան հոգով եւ մարմնով եւ մտաւք:

950 «Իսկ անուանակիր եղեալ անորակին՝ [\*լստ իմացագունին ծայրագոյն պատուով, զհուր եւ զլոյս եւ ոչ միով հնարեցաւ բերել արեւակն<sup>10</sup>]: 951 Անորակ է Աստուած, զի ոչ գոյն երեւի եւ ոչ ձեւ: 952 Եւ անուանակիր Աստուծոյ արեգակն, զի երբեմն լոյս կոչի աստուածութեամբն եւ երբեմն՝ հուր, եւ մերթ՝ արեգակն արդարութեան: 953 Այսու անուանակիր ասի, զի զայս իմանամք ծայրագոյն պատիւ Աստուծոյ՝ հուր եւ լոյս եւ արեգակն ասել: 954 «Զհուր եւ զլոյս եւ ոչ միով հնարեցաւ բերել»: 955 Ուսուցանէ արդարեւ, եթէ ոչ միայն լուսինն<sup>11</sup>, որ ազգակից է մեզ ի գոյն արեան դարձաւ, այլև արեգակն, որ Աստուծոյ անուանակիր ասի<sup>12</sup>, վաղվաղակի մերկացաւ ի լուսոյն եւ ի բաց եզ զջերմութիւնն՝ ցրտութիւն զգենլով: 956 Քանզի ասէ աւետարանագիրն, եթէ. «Երիս ժամս խաւար եղեւ ի վերա[յ] ամենայն երկրի», զի ցայնժամ չորեքտասաներորդ էր<sup>13</sup> լուսինն<sup>14</sup>, յարեւելից կուսէ ունէր զնիստ կառուցման բոլորակութեան: 957 Յայնժամ թողեալ զտեղի իւր՝ գայր անցանէր ներ-

1 C ահաւորութեմէ  
2 BC գգալիք  
3 BC ամօրինաց  
4 B միանգամ  
5 BC ձաղեալ ի խաչին փխ ի խաչին ձաղեալ  
6 C լուծեալ  
7 B կարողն C կարող  
8 B լուսինն

9 B լուսինն  
10 C երեւակն  
11 BC լուսինն  
12 B աստուծոյ անուանակիր ասի փխ անուանակիր ասի աստուծոյ  
- Մատթ. Ի. 45  
13 C չիք  
14 B լուսինն

քո[յ] արեգականն, եւ արգելեալ զլոյսն, խաւարումն գործէր երիս ժամուն: 958 Եւ ոչ ըստ սովորութեան անցանէր յարեւմուտս շեղելով, այլ յետսկոյս դարձեալ՝ կատարէր զընթացս գնացիցն, զոր ուսուցանէ սուրբն Դիոնէսիոս: 959 Ուստի ասէ. «Քող գստուերն արկաւ պատկառանացն»: 960 Ըստ նմանութեան նոր հարսին՝ անեալ յառագաստ, յորժամ տեսանէ զփեսայն բասրեալ այգանաւք ի թշնամեաց<sup>1</sup>, պատկառէ ի տեսնէն եւ սքողեալ<sup>2</sup> ծածկէ զերեսս: 961 Այսպէս եւ տեսեալ արեգակն զարարիչն ի վերա[յ] խաչին մերկացեալ՝ պատկառեալ տեսանել, վաղվաղակի խաւարեցոյց զլոյսն ի մէջաւրէի՝ անեալ սքող<sup>3</sup> գստուեր երկրիս ի վերա[յ] երեսաց իւրոց:

962 «Վասն զի ի թագաւորեալ<sup>4</sup> ճշմարտութեանն լուսեցէ ամենայն [\*կարծեցուցանող] զաւրութիւն գերահնչեալ յաշխարհս»: 963 Յայտնի կացուցանէ զպատճառ խաւարմանն, զի գերահնչեալ էր կուպաշտութիւն<sup>5</sup> յաշխարհս, եւ մարդիկ փոխանակ Աստուծոյ հրաշից արարածոց երկիր պագանէին, մանաւանդ լուսաւորաց երկնից: 964 Վասն որո[յ] խաւարեցոյց զնոսա, զի մի՛ կարծիցեն, թէ աստուածք իցեն, այլ արարածք Աստուծոյ: 965 Եւ թագաւորեաց ճշմարիտ արեգակն արդարութեան, եւ լոյսն ստուգութեան ծանուցաւ մարդկան<sup>6</sup>, թէ Աստուած է, արդարեւ պարտ է նմա պաշտաւն մատուցանել<sup>7</sup>:

966 «Որպէս եւ այլոց աղաւտագունից, [\*որ ինչ միանգամ] ըստ փայլածման

[\*երեւոյթ, նորին] արեւակդ<sup>8</sup> գործէ»: 967 Աւրինակաւս յայտնէ, եթէ այլ աղաւտագոյն լոյսք լուսնի եւ աստեղաց, ճրագի եւ լապտերաց, յորժամ երեւի արեգակն, նսեմացուցանէ զնոսա զտեղի առնուլ: 968 Ձի ոչ ունին զբնաւորականն լոյս փայլեցուցանել յերեւման արեւակին<sup>9</sup>, այսինքն՝ լուսո[յ] ակին: 969 Նոյնպէս երեւեալ<sup>10</sup> արեգակն արդարութեան Քրիստոս, բարձան ամենայն գայթակղութիւնք, որք միանգամ<sup>11</sup> մոլորեցուցիչ<sup>12</sup> էին մարդկան, եւ ի ներքս եմուտ ճշմարիտ աստուածածանաւթութիւն:

970 «Ո՛վ հրաշիցս չնչին փայտիս, իսկ դու ձակղ մի [\*ի Լիրանանէ ցամաք փայտ]»: 971 Ջարմանա[յ] ընդ մեծ զաւրութիւն<sup>13</sup> աստուածունակ խաչիս, վասն զի չնչին, այսինքն՝ փանաքի եւ նուաստ<sup>14</sup> համեմատեալ ընդ ծառոց եւ տնկոց: 972 Իսկ «ձաղկ»՝ յաղագս ուղղակի<sup>15</sup> բարձրութեանն, զի ոչ ունելով ոստ տերեւալից եւ ոչ ուռս սաղարթապատս, այլ ցամաք ի դալարութենէ եւ հատեալ յարմատո[յ]:

973 «Եւ զամենայն [\*բեր]ելով<sup>16</sup> դարիւն, եւ զհուր, եւ զլոյս, եւ նոյնութեամբ<sup>17</sup> ողջ<sup>18</sup> պահելով [\*գելի փայտ ոչ ի բաց եղիւ<sup>19</sup>]»: 974 Լուսաւորացդ եւ ոչ միո[յ]<sup>20</sup> նուագի կարող եղեն պահել զբնական լուսաւորութիւնն, խաւարումն ընկալան: 975 Իսկ դու՛ չնչին եւ դուզնա-

1 BC չի՛ ըստ նմանութեան ... բասրեալ այգանաւք ի բշնամեաց

2 B գողեալ C գող արկեալ

3 BC բող

4 BC բագատրել

5 B կուպաշտութիւն

6 BC չի՛

7 B պաշտոն տանիլ նմա C պաշտոն մատուցանել նմա փխ նմա պաշտաւն մատուցանել

8 B երեւակ C երեւակդ

9 BC երեւակին

10 C չի՛

11 B միանկամ

12 BC մոլորեցուցիչ

13 BC զմեծագորութիւն փխ զմեծ դարութիւն

14 BC նուագ

15 B ուղղակի C ուղղական

16 B պահելով

17 BC ի նոյնութեան փխ նոյնութեամբ

18 B ամբողջ

19 C եղիւ

20 BC միում

քեա[յ], զամենայն<sup>1</sup> բերելով զլոյս աստուածութեանն, եւ զհուրն ծախիչ, միանգամայն<sup>2</sup> եւ զարիւն<sup>3</sup> Աստուծոյ, որ է սոսկալի եւ այնքան զաւրացեալ դիմակցութեամբ, մինչ զի եւ ոչ զէութիւնն<sup>4</sup> բնաւորական փայտի<sup>5</sup> մերկանալով, այլ հաստատուն եւ անշարժ պահեցար:

976 «Ո՛վ հրաշիցս, անմարմնասէր լուսաւորն յերկնի արիւն, [\*որ եւ երկրայնոց]»: 977 *Զլուսինն կոչէ անմարմնասէր, քանզի անմարմնոց է ազգակից լուսովն եւ յերկինս կառուցմամբն:* 978 *Թէպէտ եւ մարմնաւոր ասի, ոչ իբրեւ զմեզ, այլ տեսակաւքն<sup>6</sup> եւ բոլորակութեամբն ցուցանէ արիւնագոյն լիեալ<sup>7</sup>, վասն զի արիւն շնչաւորացս է եւ սգայնոցս<sup>8</sup> եւ մարմնաւորաց<sup>9</sup> ազգակցի արիւնդ, որ ի վերա[յ] քո հեղաւ:*

979 «Եւ մարմնասէր արեանդ, որ ի վերա[յ] քո հուր եւ լուսաւոր<sup>10</sup>, [\*որ եւ երկնայնոց]»: 980 *Այսոքիկ հուր եւ լոյս երկնայնոցն են<sup>11</sup> ազգակից, քանզի<sup>12</sup> ասին հուր կիզելով[յ] եւ լոյս գերագանց, ըստ որում արիւն երկրաւորաց նմանի, եւ զինչ են այսոքիկ՝ ցուցանէ:*

981 «[\*Աստանաւր յայտնապէս թարգմանեսցի] զաստուածութիւնն<sup>13</sup> յերկրի եւ զմարդիկ<sup>14</sup> յերկինս բարձրացեալ»: 982 *Գեղեցկապէս այլաբանեաց՝ զմարմնաւորացս*

*անմարմնոցն հաղորդիլ բարեպաշտութեամբ եւ առաքինասէր վարիւք<sup>15</sup>:*

983 «Զոր [\*եւ] յառաջ[\*ագոյն իսկ] ազդեալ մարգարէին<sup>16</sup> զայս ահաւոր նշանացս [\*հրաշս] հրո[յ] եւ արեան [\*ըստ երկնի եւ երկրի փոխանորդութեան]»: 984 *Նախ ծանուցաւ մարգարէին Յովելեա[յ] Հոգովն<sup>17</sup>, եթէ որպէս լինելոց էր ի ժամանակի խաչելութեանն, որով երկիր երկնայնոցն լծորդէր, ասաց. «Արեգակն դարձցի<sup>18</sup> ի խաւար եւ լուսին յարիւն»:*

985 «Զոր եւ մրրիկ ծխո[յ] նմանեցուցանէ<sup>19</sup> յաւրս ծառացելո[յ]<sup>20</sup> եւ զվիմափուլն<sup>21</sup> ի շարժմանէ: 986 Փոշին իբրեւ զծուխ ելանէր ի վիմացն շարժմանէ: 987 «[\*Թեթեւ առ ի խոնաւուտ ժամանակի փոշոյ՝ ըստ աւրինակի ծխոյ յամբս<sup>22</sup> ծառացելոյ, զոր<sup>23</sup> հոգմոյ իսկ]»: 988 *Որպէս խոնաւուտ ժամանակաւ զոլորշիք<sup>24</sup> ելանեն յերկրէ, այնպէս ծառանայր յերկինս մրրկեալ:*

989 «[\*Կամ որպէս աւրէն է գարնանաբեր սքոյ առեալ, ընդ անաւսր աւրս սփռեալ շամանդաղածեւ՝ հանդերձ խաւարային ժամուն մղտագոյն ի վերա[յ] նսեմացուցանէ մարդկան զստուերն]»: 990 *Զոր աւրինակ գարնանաբեր սիք կամ հողմ, առեալ ընդ անաւսր աւրս եւ սփռեալ տարածանէ՝ փոխարկելով ի թանձրութիւն, զոր շամանդաղ կոչէ, եւ ապա զպայծառութիւն աւրոյն թխացուցանելով՝ մարդկան տարացոյց տա[յ] նմանիլ<sup>25</sup> գիշերո[յ]:*

1 BC զամենայն  
2 B միանկամ  
3 BC զարիւնն  
4 BC զէութիւնն  
5 B փայտին  
6 BC տեսակաւն  
7 BC լիալ  
8 BC զգայնոցս  
9 C + է  
10 BC լոյս  
11 BC չի՞  
12 BC զի  
13 BC աստուածութիւնն  
14 BC մարդիկ

15 BC վարուք  
16 B մարգարէին ազդեալ փխ ազդեալ մարգարէին  
17 C հոգովն  
18 B դարձի  
= Գ-Վէ՛՛ 31  
19 C նմանեցուցանելով  
20 C չի՞ յաւրս ծառացելո[յ]  
21 C + առ  
22 C յամբս  
23 B գոր  
24 BC զոլորշիքն  
25 C նմանիլ

991 Այսպէս եւ յաւուրն<sup>1</sup> Տեառն չարչարանաց յատակութիւն աւդոյտ<sup>2</sup> ընկալաւ՝ զնսեմութիւն լուսաւորացտ<sup>3</sup> խաւարելով:

992 «Սակայն [\*մեք անդէն] սովիմբ զբանս ամեալ ի սորայս Հա[յ]եսցուք զարմանս»: 993 Թէպէտ եւ սակաւուք ի կարգէ ներբողենիս ելաք բանիս աշխատասիրելով, սակայն պարտ է վերստին ի նոյն ճանապարհ վարդապետութեանս<sup>4</sup> դառնալ եւ Հա[յ]ել զարմացմամբ ընդ հրաշալի գործս աստուածայնոցն:

994 «Ո՛վ Հրաշիցս, երկնա[յ]ին հուրն Հա[յ]ելով միայն ի վեր[\*ուստ զաւրութենէ ի քեզ ցայտելոյ<sup>5</sup> հրալից<sup>6</sup> արեանդ կիզեալ ի բաց շիջաւ]:» 995 «Ո՛վ», ասէ, մեծի զարմանալեացս, զոր ունիմք իմանալ ի վերա[յ] կենարար խաչիս: 996 Ձի արեգակն, որ կոչի հուր երկնա[յ]ին յաղագս ջերմութեանն, Հա[յ]եցեալ միայն ի վերուստ բարձրութենէ, ետես յաստուածային զաւրութենէն ի քեզ ցեթեալ<sup>7</sup> արեամբ եւ հրով, վաղվաղակի ի բաց եկաց<sup>8</sup> ի լուսո[յ] եւ ցրտացաւ ի ջերմութենէն:

997 «Իսկ դու փոզր<sup>9</sup> խոիւ ցամաք փայտ<sup>10</sup> [\*ի քեզ իսկ արդեամբք զնոյն հուր ընկալեալ պահեցար անկէզ]:» 998 Այս են զարմանալիք, քանզի զոր արեգակն եւ լուսին ի տեսլենէն<sup>11</sup> խաւարեցան, դու բոլոր արեամբք ընկալար զհուր աստուածութեանն, պահեցար անկիզբի<sup>12</sup>, որ դիւրածախ էիր յաղագս ցամաքութեան<sup>13</sup>:

999 «Ո՛վ Հրաշիցս, յայդր ահաւոր հրոյտ<sup>14</sup> ահաւորութենէ<sup>15</sup> երեւութից հաստատ [\*կառոյցի<sup>16</sup> հիմանէ դղրդեալ տատանիւր երկիր եւ արձագանք<sup>17</sup> յինքեանց հերձեալ պատառէին վէմք]:» 1000 Այսու իմաստութեամբ ուսուցանէ՝ զերկիր ունել հաստատութիւն հրամանաւն Աստուծոյ, Թէպէտ ի ջուրց կառուցեալ է: 1001 Նշանակէ, թէ ի ձայնէն, որ առ Հայր աղաղակեաց, հիմունք երկրի շարժեցան, եւ վէմք պատառեցան, եւ գերեզմանք բացան: 1002 Իսկ ասել<sup>18</sup> «արձագանք»<sup>19</sup>, որ թարգմանի<sup>20</sup> զկնի ձայնից, քանզի ձայնք վիմացն պատառելոյ ընդ միմեանս հարեալ սքանչելի իմն երեւեցուցանէր զգործն աստուածային:

1003 «Իսկ դու ուղէչ մի տնկո[յ] [\*ցամաք փայտ մանաւանդ, թէ<sup>21</sup> ծիղ մի խոտոյ], կամ ծղաւտ մի եղեգան, [\*եւ անջախջախ եւ անպախ պահեցար]:» 1004 Չամենեւին տկարութիւն փայտին նմանեցուցանէ այսոցիկ անուանց խոտո[յ], կամ եղեգան, կամ այլ ինչ յայսպիսեացս: 1005 Իջանելով ի վերա[յ] քո աստուածային արեանն հրախառն՝ անխորտակելի եւ անվնաս պահեցար:

1006 «Յոյժ բիւրապատիկ առաւել բարձրագոյն քան զամենայն հրաշիցն կատարումն<sup>22</sup>»: 1007 Այս է յոյժ բարձրագոյն քան զամենայն հրաշիցն կատարումն բիւրապատիկ<sup>23</sup>: 1008 Այսու բովանդակեաց, զի ի վեր քան զբան<sup>24</sup> եւ զմիտս ունիմք

1 BC յաւուր

2 C աւդոյդ

3 BC լուսաւորացդ

4 BC բանիս

5 C ցայտեցելոյ

6 C հրաշից

7 B ցայտեալ C ցայթեալ

8 C էկաց

9 BC փոքր

10 BC փայտ ցամաք փխ ցամաք փայտ

11 BC տեսլենէլ

12 B անկիզբեկի

13 C ցամաքութեան

14 C հրոյդ

15 B չի՛

16 BC հաստակառոյցի փխ հաստատ կառոյցի

17 B արձագանգ

18 C ասելմ

19 B արձագանգ

20 C բարձմանի

21 C եթէ

22 B առաւել բարձրագոյն զոս հրաշից փխ բան դամենայն հրաշից կատարումն

23 A չի՛ այս է յոյժ ... բիւրապատիկ

24 C գրանս

իմանալ զբարձրագոյն եւ զհրաշալի զաւրութիւն սորա, որով ցուցանի էապէս սովաւ կատարեալ փրկութիւն աշխարհի:

1009 «Աւրհն[\*եա՛լ ես], փա[\*յտ] սուրբ, իմանալի հնձան, [\*քանզի ի քեզ ի նոյնումդ վերա[յ] երկնայինն<sup>1</sup> ճմլեցաւ ողկոյզ<sup>2</sup> բաւական յուրախութիւն երկնաւորաց<sup>3</sup> եւ երկրաւորաց<sup>4</sup>»: 1010 Յետ բազում եւ յոլովագոյն հրաշիցն, որով բովանդակեաց ի միասին զաստուածեղէն զաւրութեանցն զգերազանցութիւն, դառնա[յ] այնուհետեւ<sup>5</sup> յաւրհնաբանութիւն պատուական խաչին եւ շնորհ մատուցանէ կենարար զաւրութեանն Աստուծոյ, որ ի սմա: 1011 Կոչէ զսա «հնձան իմանալի»: 1012 Թէպէտ եւ ոմանք առնուն<sup>6</sup> յեսա[յ]եա[յ] բանագործութիւնսն, զոր ասէ վասն յեղոմա[յ]<sup>7</sup>. «Հնձան հարի միայն, եւ ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս», այսու նմանագոյն է ասել, եթէ յինքենէ յաւելու ասել զբանս: 1013 Քանզի աւրէնք են մշակաց արկանել զողկոյզս խաղողոց ի հնձանս<sup>8</sup> եւ կոխել զգինին ուրախարար եւ զանապակն մատուակելով: 1014 Վասն որոյ ողկոյզն անմահութեան, մշակեալ ի Հաւրէ, ճմլեցաւ իբրեւ ի հնձանի ի վերա[յ] քո՝ եւ բաւականապէս յուրախութիւն հրշտակաց<sup>9</sup> եւ մարդկան: 1015 Որով արբեալ զանապակն երանելի առաքելոցն՝ զմայլեցան ի Հոգին Սուրբ եւ եղեն մատուակք ամենայն տիեզերաց:

1016 «Այն, որ ի ներքո[յ]<sup>10</sup> ի խոնարհ զկենաց մերոց թշնամին<sup>11</sup> կոխեաց իբր ի

հնձանի<sup>12</sup> [\*սրտմտութեամբ՝ զնորայն ի<sup>13</sup> յերկիր եհեզ զմաղձ]»: 1017 Կրկնակի դնէ զաւրութիւն<sup>14</sup> սորա: 1018 Զթշնամին կենաց մերոց կոխեաց Քրիստոս՝ ինքն հնձանահար եղեալ, յերկիր հեղլով զնորայն մաղձ, այսինքն՝ զկլեալսն<sup>15</sup> ի սկզբանէ աշխարհի չարութեամբ իւրով: 1019 Եւ ոչ այս չափ միայն, այլեւ զորթն ճշմարիտ, որ ի Հաւրէ տուաւ յուրախութիւն ամենայն տիեզերաց, յինքեան ընկալեալ: 1020 Ըստ նմանութեան ողկուզաց ճմլեցաւ ի վերա[յ] նորա՝ լինել բաժակ անապակ ի ձեռն Աստուծոյ կենդանո[յ], արբուցանել բովանդակ զմանկունս եկեղեցո[յ] սրբոյ:

1021 «Աւրհն[\*եա՛լ ես], փ[\*յտ] սուրբ, իմանալի կամուրջ, [\*քանզի ի մահուանէ ի կեանս զմարդիկ ածեալ անցուցեր]»: 1022 Հաճո[յ] թուեցաւ ոմանց առնուլ զաւրինակս զայս ի գաւազանն Մուսիսի<sup>16</sup>, որ եղև կամուրջ ժողովրդեանն անցանելով<sup>17</sup> ընդ ծովն Կարմիր: 1023 Բայց նմանագոյն է<sup>18</sup> ասել ըստ աւրինակի հնձանին՝ այսպէս կամրջի նմանեցուցանէ: 1024 Զի որպէս կամուրջ՝ արկեալ ի վերա[յ] յորձանաց գետո[յ], անցարան գոլ ամենայն ուղեւորաց, նմանապէս իմանալի կամուրջ կոչէ զնշանս տէրունական, արկեալ ի վերա[յ] յորձանաց աշխարհիս այսորիկ՝ կենարարին զաւրութեամբ<sup>19</sup> անցուցանել զմարդիկ<sup>20</sup> հաւատաւք<sup>21</sup> մկրտութեան եւ

1 C երկնային  
2 B աղկոյզ  
3 C երկնայնոցն  
4 C երկրայնոցս  
5 C այսուհետեւ  
6 B + գսա  
7 C յեղովմա  
8 Է.՝. ԳԳ. 3  
9 BC ի հնձան խաղողոց փ/ս խաղողոց ի հնձանս  
10 BC հրեշտակաց  
11 BC ներքն

11 B գրչնամին  
12 BC իբրեւ գինձան կոխեալ փ/ս կոխեաց իբր ի հնձանի  
13 C չի՛բ  
14 BC զգորտիբիւն  
15 C զկլեալսն  
16 BC մովսէսի  
17 BC անցուցանելով  
18 C չի՛բ  
19 BC զգորտեամբ կենարարին փ/ս կենարարին զաւրութեամբ  
20 C զմարդիկ  
21 BC հաւատովք



այսինքն՝ հաւատացեալք յանհաւատից: 1040 Նաեւ վարդապետական խրատու<sup>1</sup> եւ իմաստութեամբ յաւրինին սովաւ ամենայն կարգ<sup>2</sup> եկեղեցոյ: Ոմանց՝ գաւազան փրկութեան եւ մխիթարութեան եւ ոմանց ստահակաց՝ բարկութեան<sup>3</sup> եւ<sup>4</sup> հարկանելոյ:]:

1041 «Եւ<sup>5</sup> ամրացեալք<sup>6</sup> յապականող<sup>7</sup> գազանէն<sup>8</sup>, որ աւրինակաւ ի ճակատն<sup>9</sup> նշանակեալ յապագայցն աւրէ, [\*եւ ի սատակմանէ սրոյ աստուածային անուանեալն բարկութեան զերծան]»: 1042 Ընթանալ[յ] առ մարգարէական տեսիլն եզեկիչի, զոր ի<sup>10</sup> Հոգի իմաստութեան ի տաճարին տեսանէ զհրշտակսն<sup>11</sup> տապար ի ձեռին, եւ պճղնաւորին, հրամանաւ<sup>12</sup> դնել նշան ի ճակատ արանցն երկիւղածաց<sup>13</sup>, եւ զայլսն սատակել առանց խնա[յ]ելոյ՝ ի լսելիս մարգարէին: 1043 Արդ, այսոքիկ յառաջագոյն ծանուցաւ յաղագս հանդերձելոց ժամանակաց: 1044 Քանզի մկրտեալք աւագանաւն կնքին պատուական խաչիւն՝ ամրացեալք յաներեւոյթ գազանէն, միանգամայն<sup>14</sup> եւ ի սատակմանէ աստուածա[յ]ին սրոյ] բարկութեանն, զոր ունի տալ անհաւատիցն եւ մոլորեալ հրէիցն ի միւսանգամ գալըստեանն: 1045 Զի որք ոչ ունին զկնիքն ահաւոր եւ պատկառելի ծնընդեամբ աւագանին, նոքա սատակին յաստուածային սրոյն, որ անցանէ մինչեւ ցո-

րոշումն<sup>15</sup> շնչոյ: 1046 Իսկ զըրոշմեալքն սովաւ պահպանին յանմարմին Բելիարա[յ], զի, պատկառեալ յաստուածային նշանէս, մի՛ մերձենայցէ ի նոսա:

1047 «Աւրհ[\*նեալ ես], փայտ սուրբ, անբառ[\*բառ<sup>16</sup> բարեխաւս]»: 1048 Ի կատարումն ածեալ զաւրինակսն եւ որք ի նմին հաղորդին հասարակութեամբ, այժմ ձգէ զբանս ի բարառնութիւն<sup>17</sup>: 1049 Վասն զի ամենայն միջնորդ եւ բարեխաւս բանիւ ունի բարեխաւսել առ այնոսիկ, որք<sup>18</sup> կարիւք<sup>19</sup> հատուցանեն զխնդրուածս, իսկ սա անբառբառ<sup>20</sup> է բարեխաւս: 1050 Եւ ո՞րպէս իմանի առանց բանի եւ չրթանց խաւսել՝ աւրինակաւս յայտ առնէ: 1051 Զի մարդկան ծախիչք եւ մահապարտք, թագաւորաց եւ իշխանաց զսիրելի որդոցն<sup>21</sup> մահն<sup>22</sup> յուշ առնելով, ողորմութիւն գտանեն: 1052 Այլ եւ զոգիս ծնողաց<sup>23</sup> առ ծնունդան առանց բառբառելոյ]՝<sup>24</sup> միջնորդ առնուն եւ գտանեն զխնդրելին: 1053 Նա[եւ] մարտիրոսք<sup>25</sup> անբառբառ<sup>26</sup> բարեխաւսք են չարչարանաւքն եւ հեղմամբ արեամբն իւրեանց, որք խաչակից եղեն Քրիստոսի: 1054 Նոյնպէս եւ<sup>27</sup> առանց բառբառոյ]՝<sup>28</sup> զխորհուրդ խաչիս բարեխաւս ունիմք զչարչարանսն Տեառն, որ ի վերա[յ] սորա, եւ զապտակն, եւ զբեւեռումն<sup>29</sup> կողիցն: 1055 Եւ այսպէս առանց բանի է բարեխաւս նշան խաչիս:

1 C խրատուն  
2 BC կարգ  
3 BC բարկութիւն  
4 BC չի՞  
5 BC չի՞  
6 BC ամրացեալ  
7 BC չի՞  
8 B գաւազանին  
9 BC նակատն  
10 C չի՞  
11 BC գիրեշտակսն  
12 BC հրամայեցաւ  
13 B երկեղածաց  
14 B միանկամայն

15 BC յորոշումն  
16 BC անբարբառ  
17 BC բարեխաւսութիւն  
18 BC որ  
19 C կարեոք  
20 B անբարբառ  
21 C որդւոց  
22 BC մահ  
23 C ծնողացն  
24 B բարբառելոյ C բարբառոյ  
25 C մարտիրոսն  
26 BC անբարբառ  
27 BC չի՞  
28 BC բարբառոյ  
29 BC գրեւեռն + եւ գտիգումն

1056 «Հըշտակաց<sup>1</sup> ցուցական սրբութիւն, [\*անտեսականին իւրեանց Տեառն փառաց]»: 1057 Սերորէքն<sup>2</sup> ծածկէին զերեսս եւ զոտս իւրեանց եւ ոչ կարէին հա[յ]ել ի փառս աստուածութեանն<sup>3</sup>, որով լի էր ամենայն երկիր: 1058 Հրամա[յ]է, եթէ խաչիս խորհրդով ցուցանի հըշտակաց<sup>4</sup> իմանալով զսա պատճառ սրբութեան եւ փրկութեան աշխարհի: 1059 Եւ զոր ոչ կարէին տեսանել, այսու նշանիւ տեսին պիառս աստուածութեանն, ըստ այնմ, եթէ. «Յեկեղեցիոյ<sup>5</sup> ուսան զբազմապատիկ իմ[աստութիւնն]»: 1060 Որով աւէին ի համբարձմանն. «Սա՛ է թագաւոր փառաց»<sup>6</sup>:

1061 «Եկեղեցո[յ] փառք»: 1062 Սովաւ իննեակ դասապետութիւն եկեղեցո[յ] կարգաւորին սրբասացութիւնք<sup>7</sup> ի մանգանց<sup>8</sup> առագաստի: 1063 «Առաքելոց պարծանք»: 1064 Պաւղոս թէպէտեւ յերրորդ երկինս համբարձաւ եւ լուաւ բանս անճառս, սովաւ պարծէր առ զաղատացիսն. «Ինձ մի՛ լիցի պարծել յայլ ինչ, բայց [\*միայն ի խաչս]»<sup>9</sup>: 1065 Եւ Պետրոս, կալով առ խաչին. «Ո՛վ խորհուրդ խաչի եւ անուն ծածկեալ»<sup>10</sup>: 1066 Նոյնպէս եւ այլք յառաքելոցն պարծէին:

1067 «Մարգարէից հանդիսարան»: 1068 ՅԱզամա[յ] մինչեւ ցՅովաննէս<sup>11</sup> ամենայն մարգարէքն ժողովեցան յաղագս խաչիս խորհրդոյ: 1069 Եւ դարձեալ՝ յա-

ւուր Մեծի ուրբաթին<sup>12</sup> ընթերցեալ զմարգարէսն, որք մարգարէացան վասն չարչարանացն Տեառն, որ ի վերա[յ] խաչիս<sup>13</sup>:

1070 «Մարտիրոսաց պաակ»: 1071 Խաչակից լինելով Քրիստոսի՝ պսակին ի հանդերձեալսն: 1072 Այլեւ պսակեցան զանազան տանջանաւք եւ պսակին յաւուր մեծի ծագմանն լուսաւոր փառաւք:

1073 «Քահանա[յ]ից շնորհաբաշխութիւն»: 1074 Ի խորհուրդ սորա Մուսէս<sup>14</sup> եւ Ահարոն շնորհս բաշխէին ժողովրդեանն<sup>15</sup> Իսրայէլի: 1075 Նմանապէս եւ այսաւր բաշխի շնորհք Հոգոյն Սրբո[յ] քահանա[յ]իւք՝ մկրտութեամբ, եւ ձեռնադրութեամբ, եւ մարմնո[յ] եւ արեան<sup>16</sup> Տեառն բաշխելով, եւ այլ քահանայագործութիւնք<sup>17</sup> առ հաւատացեալս:

1076 «Վարդապետաց քանոն հաւատո[յ]»: 1077 Քանոն զուղեղ եւ զճմարիտ համառաւտելն կոչէ վարդապետութեամբ: 1078 Եւ դարձեալ՝ խաչակից լինելով չարչարանացն Քրիստոսի, սովաւ աւրինակ լինել բարո[յ] հաւատացելոց:

1079 «Թագաւորաց յաղթանակ»: 1080 Դաւիթ աղաւթիւք վանեաց<sup>18</sup> զԳողիադ, եւ Եզեկիա պաղատանաւք իջոյց զհըշտակն ի կործանումն<sup>19</sup> զաւրացն Սինիքերիմա[յ]<sup>20</sup>: 1081 Իսկ բարեպաշտն Կոստանդիանոս<sup>21</sup> այսու նշանիւ յաղթեաց թշնամեացն ի պատերազմի:

1082 «Իշխանաց յոյս քաջութեան»: 1083 Որպէս Վարդանանք եւ այլք ի բարեպաշտ իշխանաց սովաւ յուսով խաչա-

1 BC հրեշտակաց

2 C սերովրէֆն

3 C աստուածութեան

4 B հրեշտակաց C հրեշտաց

5 BC յեկեղեցոյ

6 Ի:Ք:Ե. Գ. 10

7 Ս. 2. Ի. 8. 10

8 BC սրբասացութեամբ

9 BC մանկանց

10 Գ. 2. Գ. 14

11 Տե՛ս Թանգարան հին եւ նոր դպրութեանց, Գ, Անկանոն գիրք առաքելական, Վեներտիկ, 1904, էջ 53:

12 B ցովանէս

10 B ուրբաթուն C ուրբաթու

11 C խաչիս

12 BC մովսէս

13 B ժողովրդեան

14 B արեան

15 BC փահանայագործութեամբ

16 BC չիք

17 BC կոտորումն

18 B սենեֆերիմա C սենիֆերիմա

19 C կոստանիանոս



կցեալ քաջացան ի մրցմունս կրթարանի՝  
ընդդէմ անաւրինաց:

1084 «Քրիստոսասէր զաւրաց առաջա-  
պահեստ»: 1085 Աստուածասիրացն<sup>1</sup> հրա-  
մա[յ]է, որք սիրել խորհէին զՏէրն՝ առ  
քեզ ապաստանեալ<sup>2</sup>, յառաջ քան զգալ  
փորձանացն պահես ի նեղութենէ:

1086 «Ախո[յ]անաց քաջալերութիւն»: 1087  
Ըմբշամարտիցն<sup>3</sup> եւ արիացելոցն  
ընդդէմ երեւելի եւ աներեւոյթ թշնամոյն  
զեկուցանէ սովաւ քաջալերիլ՝ ժուժկալու-  
թեամբ եւ համբերութեամբ աղաւթից եւ  
պահոց:

1088 «Նահատակաց զաւրաւիգն<sup>4</sup>»: 1089  
Նահատակութեան անուն բազմադի-  
մի է՝ կուսութեան եւ ողջախոհութեան եւ  
այլ արիութեան գործո[յ]՝ հոգո[յ]<sup>5</sup> եւ  
մարմնո[յ]: 1090 Այտոցիկ, եւ որ սոցին  
նմանի մարդկանէ լինին յուսալով ի քեզ,  
զաւրացուցես ի տկարութենէ:

1091 «Վտանգելոց<sup>6</sup> աւզնական»: 1092  
Վտանգութիւն է՝ որ հիւանդութեան,  
եւ է՝ որ մեղաց եւ կամ հաւատո[յ]: 1093 Որք  
միանգամ զղջացեալ ի քեզ դաւանին, ա-  
րագապէս աւզես<sup>7</sup> կանգնելով<sup>8</sup> զնոսա:

1094 «Պարտեցելոց<sup>9</sup> ապաւէն»: 1095 Ի  
պատերազմունս եւ կամ յըմբշամարտս<sup>10</sup>  
եւ կամ յայլ աներեւոյթ թշնամեաց տկա-  
րանան եւ յաղթին, առ քեզ դիմեն յուսով,  
պատրաստաբար ունիս տալ զապաւինու-  
թիւն խնդրողաց:

1096 «Նեղելոց բաւական»: 1097 Նե-  
ղեալք յախտից կամ յայսահարութենէ, եւ

կամ ի բռնաւորաց, եւ յայլոց չարեաց հա-  
ւատով զիմեցելոցն առանց կարծեաց զա-  
մենայն լցուցանես:

1098 «Հալածելոց ապաստան»: 1099 Ի  
թշնամեաց եւ կամ յանհաւատիցն, մանա-  
ւանդ ի բնաւորական կրից, հաւատով եկե-  
լոցն առաջի քո, լինիս ապաստան, այ-  
սինքն՝ տեղի ամբութեան:

1100 «Փախուցելոց պատսպարան»: 1101  
Եւ այս ի կամա[յ]իցն է վտանգու-  
թիւն փախչել<sup>11</sup>, <sup>12</sup> յանհաւատից եւ ի չա-  
րաց, յորում անգանին<sup>13</sup>, առ խաչն պատս-  
պարեալ, այսինքն՝ պահպանէ<sup>14</sup> ընդ ամ-  
բածածուկ զաւրութեամբն:

1102 «Հարթուցելոց խաղարար<sup>15</sup>»: 1103  
Հարթուցեալ<sup>16</sup> զկռուողսն կոչէ, որք  
պատերազմին ընդ միմեանս: 1104 Խոր-  
հուրդ խաչիս գտելոցն զսա պատճառ խա-  
ղաղութեան<sup>17</sup> խաղաղացան միջնորդելով:

1105 «Վշտացելոց մխիթարիչ»: 1106 Որք  
ունին վիշտս սգո[յ], եւ տագնապ անձին  
կամ ցաւոց՝ ակնկալեալ զաւրութեանն, որ  
ի քէն, մխիթարութիւն Քրիստոսի չարչա-  
րակից գոյ[ով]:

1107 «Յնծացելոց գոհութիւն»: 1108  
Յնծութիւն հոգոյ<sup>18</sup> եւ մարմնո[յ] ի  
սրտէ ուրախանալ՝ գոհանամբ եւ զտուո-  
ղէն բարեաց:

1109 «Մեծատանց զգուշութիւն<sup>19</sup>»: 1110  
Հա[յ]ելով մտաւոր իմաստութեամբ ի  
խորհուրդ չարչարանացն Տեառն՝ զգուշա-  
նան յագահութենէ եւ ի զրկանաց:

1 BC աստուածասիրաց  
2 BC ապաստանել  
3 B ըմբշամարտիցն  
4 B գաւրավիգն  
5 C հոգոյ  
6 B վտանգելոց  
7 B կանգնես  
8 B կանկնելով  
9 B պարտիցելոց  
10 B յըմբշամարտս

11 B փաղչել  
12 BC + ի  
13 B անկանին  
14 BC խաղաղարար  
15 C հարբեալ  
16 BC խաղաղութեան պատճառ փխ պատճառ խա-  
ղաղութեան  
17 C հոգոյ  
18 BC գգուշացուցիչ

1111 «Աղքատաց անկողնպտելի գանձ»:  
1112 Բնական սահմանին աղքատք Քրիստոսի, զքեզ ունելով ապաւէն, հաւատան անկողնպտելի գանձ ունել՝ առանց գողանալոյ եւ ական հատանելոյ:

1113 «Անդգամաց զսգաստութիւն<sup>1</sup>»:  
1114 Անդգամք կոչին ի սգա[յ]ութենէ<sup>2</sup> անբաժացեալք զաւրէն գազանի: 1115 Եկեալ ի զղջումն ժամանակաւ զսգաստանա[յ]<sup>3</sup> հոգեւոր արթնութեամբ:

1116 «Ստահակաց խրատք<sup>4</sup>»:  
1117 Ստահակ<sup>5</sup> ասին ընդդիմակայք ճշմարտութեանն<sup>6</sup> պատուիրանաց: 1118 Նշանակէ սովաւ խրատիլ պահաւք եւ աղաւթիւք:

1119 «Ընդ վայրագնաց<sup>7</sup> նահանջ»:  
1120 Որք արտաքոյ շրջին պատուիրանացն Տեառն՝ լծրնկէց եւ հակառակ խրատուց, հա[յ]ելով ի խորհուրդ մերո[յ] փրկութեան, որ ի քէն, սանձին ուղեղ<sup>8</sup> զնալ յաւրէնս Տեառն:

1121 «Կուսանաց զարդ»:  
1122 Կուսանաց կարգ համապատիւ է հրշտակաց<sup>9</sup>, զի ոչ միայն ի բնաւորական կրից պահելով, այլեւ խաչակցեալք զարդարին ի զարդ անկողնպտելի:

1123 «Ամուսնացելոց կնիք»:  
1124 Զի ողջախոհութեամբ եւ աւրինաւք հարսանեաց զուգին, արտաքո[յ] անասնական կրից, առ քոյդ հա[յ]ելով խորհուրդ:

1125 «Տղա[յ]ոց պահապան»:  
1126 Զոր ի մարց եւ ի դաստիարակաց ձեռաւք<sup>10</sup> կնքին յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց:

1127 «Մանկանց դաստիարակ»:  
1128 Քաջ սնուցանել նշանիւ<sup>11</sup> խաչիս, քան զամենայն մարմնական խնամածուս:

1129 «Ծերոց ժողովարան»:  
1130 Ի կատարումն եկեալ ժամանակաւք եւ<sup>12</sup> աւուրբք առ քեզ ապաւինեալ<sup>13</sup> ժողովես ի միաբանութիւն սիրոյն Աստուծոյ:

1131 «Ճանարհորդաց առաջնորդ»:  
1132 Որք ուղեւորին ի ծովու, եւ ի ցամաքի, եւ կամ հոգեւոր ճանապարհաւ առ Քրիստոս՝ յիշելով ի միտս եւ տպաւորելով ի դէմս, առաջնորդես զաւրութեամբ ի կեանսն յաւիտենից:

1133 «Աշխատելոց Հանգիստ»:  
1134 Թէպէտ եւ ըստ մարմնո[յ] աշխատութեան<sup>14</sup> պարտ է ասել<sup>15</sup>, սակայն ի մեղաց ազատիլ, եւ տքնութեամբ եւ չարչարանաւք խաչակցեալք ընդ քեզ հանգուցանես աստ պատուով եւ ի հանդերձեալսն պսակաւք:

1135 «Նաւելոց նաւահանգիստ»:  
1136 Որք միանգամ<sup>16</sup> ի վերա[յ] մկանացն<sup>17</sup> ովկիանոսի ալէկոծին կամ ի ծովու աշխարհիս ծփին պատրանաւք, առ քեզ ապաւինեալ յուսով, ապրեցուցանես յաշխատութենէ քո[յ]ով զաւրութեամբ:

1137 «Մոլորելոց դարձ<sup>18</sup>»:  
1138 Արտաքո[յ] հրամանաց Տեառն գտեալ եւ երթեալ զարտուղի յարքունի ճանապարհէն յուսացելոցս<sup>19</sup> ի քեզ դարձուցանես<sup>20</sup> առ Աստուած:

1139 «Տառապելոց յարկ ապաւինի»:  
1140 Տառապեալ ոչ միայն վասն աղքատութեան ցուցանէ, այլեւ ի ճոխութենէ

1 BC զգաստութիւն

2 BC զգայութենէ

3 BC զգաստանա

4 BC խրատ

5 BC ստահակք

6 BC նշմարտութեան

7 BC վայրապարաց

8 BC ուղիղ

9 BC հրեշտակաց

10 BC չիք

11 BC նշանաւ

12 B չիք

13 BC ապաւինել

14 BC աշխատութիւն

15 A ասէ

16 B միանկամ

17 C մկանաց

18 A գանձ

19 BC գլուսացեալսն

20 C դարձուցես

Հոգո[յ]<sup>1</sup> նուստացեալ, եւ կամ չարչարեալ ի մեղաց դիմեալ առ զաւրութիւնքս, իբր ընդ արկաւ<sup>2</sup> պահեսս գնոսա առանց սայթաքելո[յ]:

1141 «Այրեաց ակնածու»: 1142 Այրիք կոչին միայնացեալքն յառնէ եւ յաւգնականութենէ: 1143 Եւ ապաւինեալ ի քեզ տեղի պատկառանաց եւ հպատակութեան վերանուանիս:

1144 «Որբոց խնամածու»: 1145 Ի հաւրէ եւ ի մաւրէ վերջացեալ՝ քո[յ]ով զաւրութեամբ խնամին յամենայն պէտս մարմնո[յ] եւ հոգո[յ]<sup>3</sup>:

1146 «Միայնացելոց պարիսպ»: 1147 Միանձուք եւ ճգնաւորք յանապատի<sup>4</sup> քեւ պարսպեալ ամրանան յաներեւոյթ թշնամոյն:

1148 «Ճգնաւորաց ժուժկալութիւն»: 1149 Որք ի կրաւնս աստուածապաշտութեան ճգնին համբերութեամբ<sup>5</sup>, քեւ ողջախոհացեալք զաւրանան ի մրցմունս հանդիսի:

1150 «Ապաշաւելոց իղձք»: 1151 Ապաշխարողաց եւ դարձելոց ի մեղաց առ Աստուած մեծաւ փափագանաւք ունին պարծել եւ ցանկալ աստուածայնոց քոց զաւրութեանց:

1152 «Ախտացելոց բժշկութիւն»: 1153 Ի ցաւս մարմնո[յ] եւ ի տկարութիւնս հոգո[յ] ի քեզ յուսացելոց առանց ղեղոց բաւական ես բժշկել:

1154 «Դիւաց ահարկու»: 1155 Տեսանելով<sup>6</sup> զզաւրութիւնն Աստուծոյ, որ ի սմա, դեւք զարհուրին՝ ահարկեալ ի սմին զաւրութենէ:

1156 «Հաւատացելոց առ ձեռն պատրաստ դէն»: 1157 Քրիստոնէից հաւատացելոց ի քեզ, առանց աշխատութեան կնքեալ ձեռաւք եւ մտաւք, զանձինս դէն ունել զսա առ պատրաստի թշնամեացն:

1158 «Մեղուցելոց քաւարան»: 1159 Որք կամաւ եւ յաւժարութեամբ մեղապարտ գտան պատուիրանացն Տեառն, նաեւ գործաւք<sup>7</sup> կատարեցին զանարժանս, դարձեալ<sup>8</sup> ի մեղաց, եւ զղջացեալ խոստովանութեամբ առ զաւրութիւն սորա դիմեալ, տեղի քաւելո[յ] եւ սրբութեան գտանի:

1160 «Անմեղաց պահապան»: 1161 Զանարատիցն ասէ, որք ամբիժ<sup>9</sup> մնան ի պատուիրանս<sup>10</sup> Քրիստոսի, ի քեզ զաւրացեալ պահեսս յառաջիկա[յ] սխալանաց պատրուդին:

1162 «Կենդանեաց փրկարան»: 1163 Հասարակաց<sup>11</sup> բանաւորաց եւ յուսով ապաւինելոցն ցուցանէ միշտ փրկիչ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն:

1164 «Մեռելոց յոյս յիշատակի»: 1165 Դրունք դժոխոց կրկին ամրափակաւք ախեալ<sup>12</sup> լինէին, զոր ոչ ոք յարգելոցն կարողանայր ազատիլ: 1166 Յուցանէ յայսմ վայրի՝ սովաւ Տէրն խորտակեալ զդրունս դժոխոց եւ զդուռն զբախտին բացեալ աւազակին, զոր փակեաց Ադամ: 1167 Արդ, յոյս յիշատակի տեսանելով՝ յիշեն արժանապէս փրկեալքն եւ զոհութիւն Աստուծոյ մատուցանեն: 1168 Եւ դարձեալ՝ կանգնեալ<sup>13</sup> ի վերա[յ] զերեզմանաց մեռելոց, տեսանելով հաւատացելոց, երկրպագեն՝ թողութիւն մեղաց խնդրելով ննջեցելոցն: 1169 Վասն սորին տեսու-

1 C հոգոյ  
2 BC յարկաւ  
3 BC հոգոյ եւ մարմնոյ փ/ս մարմնոյ եւ հոգոյ C հոգւոյ  
4 BC ամապատի  
5 B +եւ  
6 BC տեսանել

7 BC գործովք  
8 BC դարձեալք  
9 B ամբիժ  
10 BC պատուիրանսն  
11 C հասարակ  
12 C աղիտեալ  
13 B կանկնեալ

թեան յիշատակին մեռեալք ի գերեզմանի<sup>1</sup>:

1170 «Արդ, ամենայնիւ յամենայնի<sup>2</sup> աւրհն[\*եա՛լ ես], փայտ սուրբ»: 1171 *Ի մի անձնով զամենայն աւրինակսն, նաեւ զբոլոր արարածոց գոհութիւնս, սկսանի<sup>3</sup> կատարումն անձն զգոհաբանութիւնսն*: 1172 Արդ, ասէ «ամենայնիւ», այսինքն՝ ամենայն արարածաւքս<sup>4</sup> յերկնէ, յերկրէ, ի հրշտակաց<sup>5</sup>, ի մարդկանէ, յառաքելոց, ի մարգարէից, ի թագաւորաց, յիշխանաց, ի քահանա[յ]ից, ի պաշտաւնա[յ]ից<sup>6</sup> եւ յամենայն չափոյ հասակէ: 1173 Իսկ «յամենայնի» ի պարծանս, ի պսակումն, ի յաղթութիւն, ի շնորհաբաշխութիւն, ի փրկութիւն փրկելոցն, ի կուսանաց եւ յողջախոհից եւ ի բնաւին զաւրացելոցն ի ճշմարտութիւն աւրհնեա՛լ ես:

1174 «Որ եւ յամենայնի վերտառութեանն»: 1175 *Զգէ զբան ներբողենիս<sup>7</sup> ի միւսանգամ<sup>8</sup> զալուստն, եւ յիշատակէ զանտ<sup>9</sup> լինել հրաշագործութիւնսն*: 1176 «Վերտառութիւն» կոչէ զյարութիւն մեռելոց: 1177 *Զի զորաւրինակ տառք յարմարեալք ի ձայնականաց եւ ի բաղաձայնից կերպարանեն զբանն, այսպէս եւ ի<sup>10</sup> յարութեանն յական թաւթափել տարերք մարմնոցն ժողովին հրամանաւն Աստուծոյ առնուլ զբանական ոգին, ո՛չ զայլո[յ], այլ զիւրն նշանաւ զաւրութեանն, որ ի նմա, եւ կերպարանին նորոգմամբ՝ իբրեւ զբոյս գարնանա[յ]ին կանաչացեալ:*

1178 «Յորժամ ի հուր ամենայն, որ ինչ եղեւ եկեալ փոխեսցի»: 1179 *Զժամանակն վերջնո[յ] աւուրն նշանակէ, եթէ ամենայն եղականքս ընդ հուր անցանեն, ըստ մարգարէին, եւ ամենիքեան<sup>11</sup> հրով յաղեսցին, որպէս ասէ առաքեալ<sup>12</sup>*. «Արդարքն զտին որպէս գոսկի ի հուր եւ մեղաւորքն տանջին հրովն անշիջաւ»: 1180 *Եւ զարձեալ՝ ամենայն եղականքս հրեղէն նորոգին, զոր փոխիլ ասէ*: 1181 *Զթանձրութիւն տարերցն<sup>13</sup> մերկանան՝ պահելով զանապակաւութիւն, եւ սեռն իմն յստակութեամբ<sup>14</sup> հրեղենաւն նորոգին իւրաքանչիւր մարմինք յարուցելոցն, ոչ ի բաց զնելով զսահման տարերցն, այլ աննաւսրացեալ ի թանձրութենէ հրեղէն նորոգին*:

1182 «Յահեղ աւուրն համառաւտի»: 1183 *Վերջին աւրն յարութեան<sup>15</sup> ննջեցելոցն եւ նորոգման կենդանեացն ահեղ է<sup>16</sup> եւ զարմանալի*: 1184 *Ահեղ<sup>17</sup>, զի թագաւորն երկնաւոր ի բարձանց նստի<sup>18</sup> յաթոս փառաց իւրոց<sup>19</sup> դատել արդարապէս զամենայն արարածս<sup>20</sup> բանականաց*: 1185 *Իսկ համառաւտ ասի, քանզի ոչ ըստ աւրինի մարմնաւոր<sup>21</sup> զատաւորաց<sup>22</sup> ի դատել յերկարի ժամանակն կամ քննութիւնն, այլ համառաւտ եւ կարճ բանիւ ունի լուծանել զսահման զատաստանին արդարոցն եւ մեղաւորաց*:

1 BC գերեզմանին  
2 B յամենայնի ամենայնի փխ ամենայնի յամենայնի  
3 BC + ի  
4 BC արարածովս  
5 BC հրեշտակաց  
6 BC պաշտօնէից  
7 BC ներբողիմիս  
8 B միւսանգամ  
9 BC զանդ  
10 BC չի՛՛

11 BC ամենեկեան  
12 C առաքեալից  
= Հմմտ. Մատթ. ԻԵ 46  
13 B տարերցս  
14 C յստակութիւն  
15 BC յարութիւն  
16 C չի՛՛  
17 BC + է  
18 B նստցի  
19 B չի՛՛  
20 BC ազգս  
21 BC մարմնաւորաց  
22 BC չի՛՛

1186 «Եւ աւրն է մեծ<sup>1</sup> եւ երեւելի»:  
1187 *Ջպատկեր աւուրն զեկուցանէ մեծ զոլ, վասն զի անկէտ եւ անվճար<sup>2</sup> է աւրն այն*: 1188 *Ոչ երեկոյնանայ<sup>3</sup> որպէս եւ այս աւուրք արեգական բերմամբ չափեալ, եւ ոչ զիշեր փոխանակէ զնա՝ ըստ աւրինակի այժմու փոփոխմանս<sup>3</sup>, այլ մշտենջենաւոր<sup>4</sup> եւ յարակայ<sup>5</sup> յերկարածոյն՝ ընդ եսս անվախճան ունել բնութիւն<sup>5</sup>*: 1189 Իսկ «երեւելի» ասի յազագս տիեզերական հրապարակին, ուր հրշտակք<sup>6</sup> եւ հրշտակապետք<sup>7</sup> ահիսարսափ կան առաջի սուկայի ատենին, տեսանէ<sup>8</sup> զծառայ<sup>9</sup> կիցսն՝ զոմն պսակեալ:

1190 «Յերեւել յամեցելոյն փեսային [\*ի վերջնումն գիշերին]»:  
1191 *Աւետարանական են այսոքիկ հրաման, ըստ այնմ, եթէ. «Յամել փեսային նիրհեցին ամենիքեան<sup>10</sup> եւ ի քուն մտին եւ յանկարծակի եկն բաբառ<sup>11</sup>. Աւա՛ զայն փեսայն, արի՛ք, ելէ՛ք ընդառաջ»*: 1192 *Փեսայն կոչի Բանն, եւ հարսն՝ մարմին եկեղեցոյն, որք միանան սիրով ընդ գլխոյն անխտ հաղորդութեամբ*: 1193 «Ի վերջնումն գիշերոյն»:  
1194 *Վերջին է, զայլ<sup>12</sup> աւր եւ կամ զիշեր ոչ փոխարկէ<sup>13</sup> նա<sup>14</sup> որպէս եւ առ մեզ այժմու կենացս, այլ անհատանելի եւ անեզրական ունի զյերկարածոյնութիւնն<sup>15</sup>*:

1195 «Դու կարապետ յառաջագոյն [\*երկնայնոյն ընթացեալ եւ հրաւիրակ, զաւետիս աւրերել գալըստեան երկնաւոր թագաւորին]»:  
1196 *Նախ ասաց զժամանակն<sup>16</sup> այցելութեանն<sup>17</sup> [Աստուծոյն]<sup>18</sup> եւ ապա զնէ զսպասաւորութիւն փրկական խաչիս*: 1197 *Կարապետ կոչէ զսա ըստ նմանութեան երկրաւոր թագաւորաց*: 1198 *Քանզի մտանել յարքունիսն յետ բազում ժամանակաց՝ սպասաւոր եւ հրաւիրակ առաքին<sup>19</sup> ի քաղաքս, առ սիրելիս եւ բարեկամս<sup>20</sup>*: 1199 Իսկ նոքա պատրաստին՝ զարդարելով<sup>21</sup> զանձինս եւ զարքունիս, մնան զգուշաբար գալըստեան թագաւորին: 1200 *Նոյն<sup>22</sup> եւ խաչն կարապետ է վերջնում գալըստեանն Քրիստոսի՝ որպէս Յովաննէս առաջնոյն*: 1201 *Ոմանք ասեն՝ եւթն աւուրք<sup>23</sup> յառաջ երեւել<sup>24</sup> խաչիս քան զգալուստն Տեառն, եւ այլք՝ յաւր ուրբաթուն, յորում զչարչարանսն ընկալաւ*: 1202 *Բերէ երկնաւոր թագաւորն ընդ իւր, զի յանդիմանեցէ զհրեայսն, որով խաչեցին զնա՝ ոչ զնիւթն լոկ, այլ սեռն լուսով եւ սքանչելի տեսեամբ*: 1203 *Վասն որոյ հրաւէր տայն<sup>25</sup> ամենայն աստուածասիրաց զարդարիլ այսու բարեզործութեամբ եւ պատրաստ լինել սրբութեամբ եւ մարդասիրութեամբ՝ ըստ իմաստուն կուսանացն մտանել յառազաստ փեսային*:

1 B որ օրն ածէ փխ եւ աւրն է մեծ  
2 C անվախճան  
3 BC փոխմանս  
4 BC մշտենջենաւոր  
5 C գրեութիւն  
6 BC հրեշտակք  
7 BC հրեշտակապետք  
8 C տեսանել  
9 BC ծառայակիցսն  
10 BC ամենեկեան  
11 BC բաբառ  
12 *Մատթ. Թ. 5-6*  
13 BC զի այլ փխ գայլ  
14 B փոխանակէ  
15 BC զնա  
16 BC զամենակ  
17 A այլելութեանն  
18 A եղծուած  
19 B առաքին  
20 BC սիրելիս եւ բարեկամս փխ բարեկամս եւ սիրելիս  
21 C պատրաստելով զարդարիմ փխ պատրաստիմ զարդարելով  
22 C նոյնպէս  
23 BC աւուրք  
24 B երեւել  
25 B չիք

1204 «Զաւետիս առեալ բերելով գալստեան երկնաւոր թագաւորին»<sup>1</sup>: 1205 Ծանուցաք նախագոյն զաւրինակն ի մարմնականս: 1206 Աւետաւոր ասէ<sup>2</sup> գալստեանն, զի որք միանգամ աշխատակիր անձամբ եւ ճգնազգեաց առաքինութեամբ քաղաքավարեցին, յայժմուս զուարճանան ցնծութեամբ ընդ գալուստն Քրիստոսի՝ ակն ունելով հատուցման փոխարինին:

1207 «Ոչ որպէս տեսանիսդ յայնժամ ի տեսիլ գոլ, այլ որպէս իմանիսդ [\*յայնժամ ի տեսիլ գոլով]»<sup>3</sup>: 1208 Այժմ տեսանելով փայտ լոկ խոտորնակի ձեւացեալ խաչ, իսկ յայնժամ ոչ այսպէս: 1209 Այլ զոր այժմ հոգոյ աշաւք տեսանեմք զաւրութիւն աստուածա[յ]ին, այնպէս աստուածեղէն լուսովն զարդարեալ երեւի ամենայն տիեզերաց՝ ըստ տէրունական հրամանին. «Եւ ապա երեւցի նշան Որդոյ[յ] մարդոյ[յ] յերկինս»<sup>4</sup>: 1210 Որպէս ասէ. «Անմատոյց լուսով փայլակնարորոք Չահաւորեալ ի չորս անկիւնս աշխարհիս»<sup>5</sup>: 1211 Ոչ այնպիսի լուսով՝ որպէս արեգակն եւ կամ այլոց լուսաւորաց, այլ անմատոյց լուսով, այսինքն՝ որ<sup>6</sup> ո՛չ զգալիւք<sup>4</sup> պարփակի եւ ո՛չ մտաց իմանի: 1212 «Փայլակնարորոք» ասէ ըստ նմանութեան արեգական փայլեալ, զի այլ մեծագոյն լոյս ոչ ունէր նմանեցուցանել այսու աւրինակեաց: 1213 «Ի չորս անգիւնս Չահաւորեալ»<sup>5</sup>: 1214 Աշխարհս չորեքեզերան ունելով ձեւ՝ յարեւելս եւ յարեւմուտս, ի հիւսուս<sup>5</sup> եւ ի հարաւ, ցուցանէ, եթէ լուսով խաչին առլցեալ<sup>6</sup> լինի ստորեւ ամենայն. թափանցելով ընդ ամենայն բնա-

կութիւնս եւ դիմահարս, հասարակ ընդ խորչս եւ ընդ ծածուկ վայրս անցանելով՝ լնու<sup>7</sup> ճառագայթիւք: 1215 Մեծահեղ եւ զարմանալի յարեւելից կուսէ ծագէ, ուստի թագաւորն է գալոց:

1216 «Ի սպառ զլուսաւորացն լուսուցանել զկարծեցուցանաւ ճաճանջ<sup>8</sup>»<sup>9</sup>: 1217 Այնքան սեռն եւ լի լուսով երեւի, մինչ յաղթահարէ լոյս նորա զամենայն լուսաւորս<sup>9</sup>, եւ լուսուցանէ ի գնացից, ըստ այնմ, եթէ. «Արեգակն եւ լուսին խաւարեացին»<sup>5</sup>: 1218 Իսկ «կարծեցեալ» ոչ ըստ արարչութեանն<sup>10</sup> սահմանի ասէ, որ եւ ճշմարիտ լուսաւորք են յաշխարհի կարգեալ<sup>11</sup> թագաւոր ժամուց, այլ համեմատեալ նշանի լուսոյն կարծեցեալ ասին այլքն լուսաւորք յաղագս սքանչելի երեւմանն<sup>12</sup>:

1219 «Զանտանիւրոյն<sup>13</sup> փառաց յայնժամ ի քեզ տեսանելով զլոյս<sup>14</sup>»<sup>14</sup>: 1220 Զյեղանակ լուսոյն ուսուցանէ ոչ բնաւորապէս ունելով, այլ շնորհելով արարչին, զի յերեւման մեծի ծագմանն զանտանելի լոյս աստուածութեանն ի մեծի փառաց նորա տեսանելով ի սմա, որով բնաւ<sup>15</sup> ամենայն լնու եւ լուսաւորի:

1221 «[\*Առ ի] յանդիմանութիւն անհաւատիցն եւ ի պարժանս [\*հաւատացելոց]»<sup>15</sup>: 1222 Զաւրինակ փրկութեան մարմնոց եւ զպարսաւանս անարժանիցն ի չորս յեղանակս բաժանէ: 1223 Վասն զի տեսանելով զխաչն սոսկալի տեսեամբ եւ զարհուրելի երեւմամբ՝ յանդիմանեալ կշտամ-

1 B երկնաւոր թագաւորին գալստեան փխ գալստեան երկնաւոր թագաւորին

2 BC ասի

3 Մատթ. ԻԳ՝ 30

4 BC չի՛ք

5 BC զգալեալք

6 B հիւսիս C հիւսս

7 BC լցեալ

7 BC զնա

8 BC նամանչս

9 B լոյսաւորս

բ նմանչ՝ 10

10 B արարչութեան

11 BC կարգեաց

12 B երեւման

13 BC զանտանելոյն

14 B զգալստեանն փխ զլոյս B այստեղից քերի է:

15 C րեւա

րին որք ոչ հաւատացին տնաւրինական խորհրդոյն ի միտ առնուլ զիմաստութիւնն Աստուծոյ: 1224 Իսկ հաւատացեալքն սովաւ պարծին ի միջի ալլասեռիցն եւ որք միանգամ ոչ ունին զծնունդ սուրբ աւագանին:

1225 «Ի դատապարտութիւն անսրբոց եւ բարեգործացն ի գովութիւն»: 1226 Որք բարի գործեցին յաշխարհի<sup>1</sup> եւ կեցին<sup>2</sup> առաքինի վարուք եւ ճշմարիտ բարեպաշտութեամբ, սովաւ գովին յամենայն բանականաց: 1227 Եւ գովեն զարարիչն ամենայն արարածոց, որ լի փառաւք եւ անպատմելի լուսով երեւեցոյց զնշանն սուրբ յաւուրն յետնում: 1228 Իսկ անսրբոցն եւ մեղաւորաց, որոց անզղջանալի եւ առանց խոստովանութեան ելին յաշխարհէ, սովաւ դատապարտին յանձինս իւրեանց եւ կործին հառաչմամբ եւ ոչ ինչ աւգտին:

1229 «Յորժամ երկնաթռիչ<sup>3</sup> զնախայարուց[\*եալսն զսուրբսն ի Քրիստոս] կենդանիւքս հ[\*անդերձ, զբարեկամս փեսա[յ-]ին լուսազգեստ, նմա զհարսանեացն մտին մանկունսն, յառաջագոյն ընդ առաջ հրաւիրեսցես»»: 1230 Առաքելական հրամանացն նմանին ալտոքիկ, ըստ որում ասէ. «Նախ Քրիստոս եւ ապա քրիստոսեանք ի գալըստեանս»<sup>4</sup>, քանզի գրեալ է, թէ. «Փող հարկանի եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն [\*յառաջագոյն] յառաջ յական»<sup>5</sup>: 1231 Թաւթափել վերանան ընդ առաջ<sup>6</sup> սուրբքն, յառնեն եւ թեւապարեալ<sup>7</sup> վերանան ընդ առաջ Քրիստոսի: 1232 Իսկ կենդանիք մնացեալք յայնմ ժամանակի ոչ մեռանին, ալ միանգամայն նորոգին անապականութեամբ: 1233 Վասն զի

զի<sup>8</sup>նչ հարկ է մեռանել<sup>6</sup> վասն<sup>7</sup> կենդանեացն, յորժամ յԱդամա[յ] մինչեւ զգալուստն Քրիստոսի յառնեն ի գերեզմանաց: 1234 Եւ զայսոսիկ վկա[յ]է առաքեալ<sup>8</sup> յասելն, եթէ. «Մեք, որ կենդանիքս մնացեալք ի գալստեան Տեառն, ոչ ժամանեմք ննջեցելոցն»<sup>9</sup>:

1235 «Զբարեկամս փեսա[յ]ին լուս[\*ազգեստ, նմա] զհարսան[\*եացն] մտին<sup>9</sup> մա[\*նկունսն յառաջագոյն] ընդ առաջ հրաւիրեսցես»: 1236 Բարեկամ<sup>10</sup> փեսա[յ]ին կոչին սուրբքն եւ արժանացեալքն ի Քրիստոս, որք արեամբ չափ նահատակեալք զանազան տանջանաւք եւ բարի կամաւք, հանդիսացեալք ընդդէմ հակառակաց<sup>11</sup>: 1237 Յուցանէ, եթէ զայնոսիկ<sup>12</sup>, որք միանգամ զլոյս զգեցեալ են իբրեւ զհանդերձ եւ զարդարեալ փառաւք աստուածայնաւք<sup>13</sup>, եւ արժանաւորք մտանել յերկնաւոր ուրախութիւնն, զոր հարսանիս անուանէ, զու յառաջագոյն երեւմամբ հրաւիրեսցես լինել պատրաստ զսգաստութեամբ՝ ընդ առաջ ելանել գալըստեան երկնաւոր թագաւորին:

1238 «Իսկ աներկրպագուացն քեզ մոր[\*իցն] եւ ծուկ[\*իցն] զառանց լուս[յ] եւ զյարակա[յ]<sup>14</sup> հնոցաց[\*ուցանելով]<sup>15</sup> զհուր»: 1239 Զանհաւատիցն ծանուցանէ<sup>16</sup>, որք ոչ ունին զծնունդ սուրբ աւագանին եւ ոչ երկրպագեն կենարար սուրբ խաչիս<sup>17</sup>, մանաւանդ մոլորեալք ի ճշմար-

1 C յաշխարհիս  
2 C կացին  
3 C երկնաթռիչս  
4 Ը Կ-ընչ. Ժ. 17: 23  
5 Ը Թ-է. Գ. 15  
6 C չի՛ր ընդ առաջ  
7 C թեւաորեալ

6 C մեռանելի  
7 C չի՛ր  
8 C առաքեալն  
9 Ը Թ-է. Գ. 14  
9 C մտիւմ  
10 BC բարեկամք  
11 C հակառակացն  
12 C զայսոսիկ  
13 C աստուածայնովք  
14 C զյարակեզն  
15 C հնոց ցուցանելով փ/ս հնոցացուցանելով  
16 C ցուցանէ  
17 C իսաչին

տութենենէն հրէից եւ հեթանոսաց, հեր-  
ձուածողաց, եւ որք ծուլութեամբ եւ հեղ-  
զութեամբ անցուցին զժամանակ գործե-  
լոյն: 1240 Զառանց լուսոյ<sup>1</sup> հրոյն<sup>2</sup> եւ  
զմշտնջենաւոր այրմանն պատրաստեցէ<sup>3</sup>  
զգեհեն<sup>4</sup>: 1241 Քանզի հրոյն զաւրութիւն  
յերկուս բաժանի. լուսոյն պայծառութիւն  
արդարոցն լինի զսգեստ<sup>5</sup> յարդարանաց,  
իսկ այրեցողականն առանց լուսոյ խա-  
ւարա[յ]ին աւդով մեղաւորացն կարգի  
տանջանարան<sup>6</sup>:

1242 «Որով ընդ աջմեացն<sup>7</sup> եւ<sup>8</sup> ահե-  
կեացն<sup>9</sup> ասի բացորոշութիւն»: 1243 Տէրու-  
նական են եւ այսոքիկ հրաման<sup>10</sup>, եթէ.  
«Կացուցանէ զաւդիս<sup>11</sup> ընդ աջմէ եւ այ-  
ծիսն<sup>12</sup> ընդ ձախմէ»: 1244 Աւդեաց նմա-  
նին արդարքն յաղագս անմեղութեանն եւ  
պիտանի գոլով ասերբն եւ կաթամբն եւ  
ծնընդեամբն, նոյնպէս եւ ուրքն՝ մեղաւո-  
րացն վասն անպտղութեանն եւ խեղական  
բարուցն: 1245 Որում երկաքանչիւր<sup>13</sup> կող-  
մանքն բաժանին ի միմեանց հովվական<sup>14</sup>  
զաւազանաւն՝ արդարքն ի կեանսն յաւի-  
տենից, եւ մեղաւորքն ի տանջանսն յաւի-  
տենից:

1246 «Յորժամ ամենայն, որ զինքն ար-  
դարացոյց<sup>15</sup> մ[\*աբրութեամբ], պսակեցի»: 1247 Ի նմին յանհատից եւ ի տիեզերական  
ժամանակին ցուցանէ, որում մաքրեցելոցն

եւ աստուածասիրացն, որք արժանաւորե-  
ցան սրբութեան լուսոյ ի կեանսն յայնո-  
սիկ, հոգով<sup>16</sup> եւ մարմնով եղեն բարեկամ<sup>17</sup>  
Քրիստոսի, սիրով պսակին թագաւորական  
պսակաւք՝ զլիսաւորեալ իշխանական պա-  
տուասիրութեամբ փառաւքն<sup>18</sup> ի փառս:

1248 «Եւ քում, ամենա[\*յն] որ ան-  
[\*ձին անփոյթ արարեալ] զփրկութենէ,  
աւգ[\*նականութեան] կարաւտ[\*ացի]»: 1249 Զանարժանիցն եւ զչաղախեալսն  
հեղզութեամբ կենացս զեկուցանէ: 1250 Մա-  
նաւանդ, որք արհամարհանաւք եւ աղտե-  
ղեալ մտաւք բերին առ զաւրութիւն աս-  
տուածական նշանիս, եւ ոչ յուսով ապա-  
ւինին փրկութեան հասանել<sup>19</sup>, զղջմամբ եւ  
ապաշխարութեամբ կարաւտանան յազ-  
նականութիւն յանկաշառ ատենին: 1251 Զի  
թէպէտ եւ բազում պաղատանաւք խնդրեն  
ողորմութիւն, ոչ հասանեն, վասն զի փա-  
կեալ լինի դուռն զթութեանն Աստուծոյ ի  
հանդերձեալսն<sup>20</sup>:

1252 «Յորժամ զհնազանդելն<sup>21</sup> համա-  
գոյակցին առ ամենահայրն հասցէ իմա-  
նալ Որդ[\*ւոյ մարդկութեանն] մինչ ի քեզ  
հնազ[\*անդեցելոյ]»: 1253 Զաստուածայ-  
նոյն զՊաւղոսի առեալ հրաման՝ խառնէ  
ընդ իւրոյն<sup>22</sup> վարդապետութեան<sup>23</sup>: 1254 Եւ  
այսոքիկ են զարմանալիք, զի եթէ համա-  
գոյակից է Հաւր Որդի, եւ հաւասար  
բնութեամբ եւ զաւրութեամբ, զիա՞րդ  
հնազանդել ասէ<sup>24</sup>: 1255 Այլ զի ունիմք  
իմանալ արդարապէս յաղագս մարդկու-  
թեանն ասացեալ, վասն զի ծանուցաք նա-

1 C լուսոյն  
2 C չի՛ր  
3 C պատրաստես  
4 C զգեհեանն  
5 BC զգեստ  
6 C տանջարանն  
7 C աջեայցն  
8 C + ընդ  
9 C ահեկեայցն  
10 C հրամանն  
11 C գոգիսն  
12 C գայծիսն  
= Մ•ԳԸ•ԻԷ 33  
13 C իւրաբանչիւր  
14 C հովուական  
15 C արժանացոյց

16 C հոգւով  
17 C բարեկամք  
18 C փառոք  
19 C հասանիլ փրկութեանն փիս փրկութեան հասա-  
նել  
20 C հանդերձայն  
21 C զհնազանդեալն  
22 C իւր  
23 C վարդապետութիւնն  
24 C ասէ հնազանդել



խաղոյն<sup>1</sup> աստուածութեամբն զուգապատիւ եւ հաւասարագոյ: 1256 Իսկ անհնազանդութիւնն ոչ ասի Որդոյ<sup>2</sup> առ Հայր, զի այսոքիկ ապրստամբիցն եւ ստահակացն<sup>3</sup> պատշաճին, այլ զմերն համարի անհնազանդութիւն եւ իւրոյն մարդկութեան: 1257 Եւ որպէս վասն մեր նզովքն<sup>4</sup> եւ մեղք կոչեցաւ, սոյնպէս եւ անհնազանդ, յաղազս մերոյ] անհպատակութեանն: 1258 Քանզի Քրիստոս գլուխ է եկեղեցոյ], եւ մարդիկ համարեալ կոչին անզամք նորա, ըստ առաքելական բանին<sup>5</sup>: 1259 Զի որչափ այսու կենաւք տարաբերեալ<sup>6</sup> եմք ի միմեանց զանազան կրիւք, անհնազանդ ասիմք գլխոյն Քրիստոսի. ոմանք՝ անհաւատութեամբ, եւ ոմանք՝ մեղաւք, եւ այլք՝ ախտիւք եւ ապականութեամբ: 1260 Իսկ յորժամ այսոքիկ բառնին ի միջոյ] ախտք եւ ապականութիւն, մեղք եւ անհաւատութիւն, եւ նորոգի մարմին խոնարհութեան մերոյ], դադարեմք ի մեղաց եւ հաւատամք ճշմարտութեանն Աստուծոյ<sup>6</sup>, եւ մահուն բռնութիւն բառնա]յ<sup>7</sup>, յայնժամ մեք զաւրէն անդամոց հնազանդութեամբ<sup>8</sup> յարմարիմք ի գլուխն: 1261 Եւ ինքն Տէրն, որ զգեցաւ խոնարհութեամբ զմարմինս, առաջի կացուցանէ զմարմին եկեղեցոյ] Հաւր՝ ասելով. «Ահա ահա իս եւ մանգունք<sup>9</sup> իմ, զոր ետ ինձ Աստուած»<sup>8</sup>: 1262 Այսոքիկ հնազանդութիւն կոչին Հաւր մարդկութեամբն: 1263 Եւ ոչ զայսոսիկ միայն ի-

մանամք ի գալլստեանն<sup>10</sup> Տեառն, այլ «մինչեւ ի քեզ հնազանդեցելոյ]»: 1264 Այսինքն՝ հնազանդ Աստուծոյ<sup>11</sup> Հաւր մահու չափ եւ մահու խաչի, եթէ որպէս կամաւ եւ յաւժարութեամբ վասն մարդկայ]ին սիրոյ] հնազանդեցաւ խաչի՝ յաղազս մեր անապականն<sup>12</sup> մահու: 1265 Իսկ ամենահայր ասելով զԱստուած յաղազս շնորհացն, զի Քրիստոսի Հայր է բնութեամբ. լոյս ի լուսոյ ծնեալ անժամանակաբար: 1266 Իսկ մեր՝ շնորհաւք աւազանին եւ ժամանակաւք հաւատոց, որք արժանաւորիմք մտանել ի կարգ որդեգրութեան<sup>13</sup>:

1267 «Որոյ հետին առ ծա[\*յրազոյն] անճառ[\*իցն] ընկալցի իմացուած»: 1268 Յետ ասացելոց բանից եւ եղելոյ հնազանդութեանն գլուխն հանդերձ անդամաւք<sup>14</sup> մարմնոյն եկեղեցոյ, ապա այնուհետեւ անճառելի եւ անպատմելի մնաց ի մարդկանէ, զոր ինչ լինելոց է յապագային: 1269 Դարձեալ ունիմք այլով աւրինակաւ իմանալ, զի կատարեալ անճառիցն<sup>15</sup>, այսինքն փառացն<sup>16</sup> արդարոցն<sup>17</sup>, զոր հատուցանէ արդար դատաւորն, յայնժամ իմանամք զփառաւորութիւն, զոր յայժմուս ծածկեալ է ի մարմնաւորացս: 1270 Կամ զխորհուրդ Երրորդութեանն զեկուցանէ իմանալ՝ երից անձնաւորութեանն, վասն զի այժմ զմին<sup>18</sup> յԵրրորդութենէն ծանէաք մարդկութեամբն, թէպէտ եւ ոչ կատարելապէս: 1271 Սակայն յայնմ աւուր տիրապէս տեսանեմք զՀայր եւ զՈրդի եւ զՀորդին<sup>19</sup> փառաւոր աստուածութեամբն եւ ի-

1 C յառաջագոյն  
 2 C չի՞  
 3 C ստահակիցն եւ ապստամբացն փխ ապստամբիցն եւ ստահակացն  
 4 C նզովք  
 5 Հմմտ. Կռչո. Լ 18. Լ:Վ:Ե. Լ: 30  
 6 C տարբերեալ  
 7 C չի՞  
 8 C բառնի  
 9 C չի՞  
 10 C մանկունք  
 11 Լ:Ք:Բ. Լ 13

10 B այստեղից շարունակուում է:  
 11 B + եւ  
 12 BC անպարտականն  
 13 BC երրորդութեանն  
 14 C անդամոսն  
 15 B աննատից  
 16 BC փառաց  
 17 BC արդարոց  
 18 BC զմի  
 19 BC զհորդի

մանամբ զանճառելեացն զիւրաւորութիւն, ըստ այնմ. «Տեսանելոց եմք զնա որպէս եւ էն»<sup>1</sup>: 1272 Թէպէտ եւ այսոքիկ պատշաճագոյնք են առ ի հաւատալ, բայց չորրորդս կարի գեղեցիկ եւ քաջավայելուչ է: 1273 Զի զտնաւրինականացն արարեալ յիշատակ եւ զմարդկութենէն Հնազանդութեան, զոր այժմ անճառելիք են եւ անգիտելիք ի մարդկանէ իսկապէս: 1274 Որպէս ուսուցանէ զորդիս եկեղեցոյ<sup>1</sup>, եթէ անճառ տնտեսութեանն խորհուրդ եւ կատարեալ Հնազանդութիւն համագոյլակցին առ ամենահայրն մարդկութեամբն<sup>2</sup> յայնժամ ունիմք իմանալ, յորում ի ծայրագոյն գիտութիւնն հասանմք եւ մերկանամք յաստեաց խոտակրութենէ՝ մտանելով առ Աստուած:

1275 «Զի եղիցի<sup>3</sup> Աստուած ամենայն<sup>4</sup> յամենայնում»:<sup>5</sup> 1276 Արարիչ է Աստուած Հասարակ բնութեանս, բայց որովհետեւ Հետեալ կան մարդիկ յաստուածակոյս կողմանէ, Հեռի են ի խնամոցն<sup>5</sup> նորա: 1277 Իսկ յորժամ այս ամենայն իրաւապէս աւարտումն առցէ, Որդի մարդկութեամբն եւ առհասարակ անդամաւքս զՀնազանդութիւնն կատարեսցէ, եւ ամենայն բանականքս հաւատան աստուածութեանն Որդոյ՝ եթէ կամա[յ] եւ եթէ ակամա[յ]: 1278 Յայնժամ խոստովանեսցի յամենեցունց Աստուած, եւ յամենայնի<sup>6</sup> տէրութիւն նորա թագաւորեսցէ Հնազանդելոցն, եւ բառնին<sup>7</sup> գայթակղութիւնքն եւ թագաւորէ ճշմարտութիւնն: 1279 Յայնժամ եղիցի Աստուածորդի ի մէջ աստուածացելոց եւ յամենայնի խոստովանեսցի Տէր եւ արարիչ:

— Ը Յ՝ Գ՝ 2

1 C եկեղեցւոյ

2 B մարդկութեամբ

3 BC առ ի լիցել փոս զի եղիցի

4 B ամենայնիմ

5 B խնամոց

6 BC յամենայն

7 C բառնի

1280 «Յորժամ ամենայն զկատարումն [\*Հատեալ] առցէ»:<sup>8</sup> 1281 Ամենայն գրեալք աւրինացն<sup>8</sup> եւ մարգարէիցն կատարեսցին ի հանդերձեալսն, զի յորովագոյնք են, անկատար յաստուածայնոց մարգարէից<sup>9</sup>, անտ<sup>10</sup> առնուն լրումն մարգարէութիւնքն: 1282 Նմանապէս եւ աւետարանական<sup>11</sup> վարդապետութիւն Տեսուն կատարեսցի՝ ի վկա[յ]ութիւն ամենայն Հեթանոսաց, եւ ապա եկեսցէ լրումն<sup>12</sup> տառից Հնոց եւ Նորոց կտակարանաց: 1283 Եւ գարձեալ՝ ժամանակք եւ յաւիտեանք, որք միանգամ արեգական բերմամբ չափին, շաբաթուց եւ ամսոց, տարեաց եւ յեղենակաց<sup>13</sup> կատարեսցին՝ մտանելով յութեբրորդն<sup>14</sup> յաւիտեան:

1284 «Յայնժամ յամենեցունց [\*յայտնապէս] խոստովանեսցի միմիայն անաւթ փրկութեան յերկնի երեւեալ [\*ի պարծանս քրիստոնէից եւ ի փառս Քրիստոսի]»:<sup>15</sup> 1285 Թէպէտ եւ յայժմու յաւիտենիս<sup>15</sup> յոմանց արհամարհի եւ ի կիտոց անհաւատարմաց<sup>16</sup>, ի<sup>17</sup> փրկութեան<sup>18</sup> պատճառ<sup>19</sup> գոլ: 1286 Մանաւանդ զի աստ բազում ինչ է ի նիւթականացս, որում ջատագով եւ աւզնական ունիմք կենաց եւ յետ մահու՝ որպէս մարտիրոսք, եւ սուրբ եկեղեցիք եւ աւետաբեր տառք աստուածեղէնք: 1287 Իսկ յայնժամ ամենայնքն<sup>20</sup> լոեալ դադարեն ի փրկութենէ, բայց միայն խաչն փրկութեան անաւթ յերկնից<sup>21</sup> երեւեսցի

8 BC օրինաց

9 B չի՞ կատարեսցին ի հանդերձեալսն ... մարգարէից

10 BC անդ

11 BC աւետարանականն

12 BC կատարումն

13 BC յեղանակաց

14 BC յութեբրորդն

15 B յաւիտենից

16 BC անհաւատացի

17 B չի՞

18 C փրկութիւն

19 B չի՞

20 BC ամենայն

21 C յերկնի

լուսեղէն փառաւք՝ մանաւանդ ճառագայթեալ ի չորս անկիւնս աշխարհի<sup>1</sup>: 1288 «Եւ յերկրի երեւելով ի պարծանս քրիստոնէից եւ ի փառս Քրիստոսի»: 1289 Քրիստոնեայք<sup>2</sup> զհաւատացեալսն ի նա ասէ, որք զանունն Քրիստոսի յինքեանս դրոշմեցին եւ կնքեցան աւաղանաւն: 1290 Նոքա պարծին մեծաւ համարձակութեամբ ի տիեզերական հրապարակին, որք խաչակից եւ կցորդ եղեն չարչարանացն Քրիստոսի: 1291 Եւ փառաւորի սովաւ հրշտակաց<sup>3</sup> եւ ի մարդկանէ, յորում տեսանի այնպիսի պայծառութեամբ, նաեւ փառաւոր զգի<sup>4</sup> նայ<sup>5</sup> հաւատացեալսն, որք պարծին նովաւ ի Քրիստոս Յիսուս:

1292 «Աստանաւր իրաւապէս առցէ բանս զկա[յ]»: 1293 Ակիզքն արար ի ծառոյն կենաց եւ ի կարգի զամենայն աւրինակսն յիշելով, զոր առ Նոյ եւ Աբրահամ<sup>6</sup>, եւ Մուսէս<sup>7</sup>, եւ տարեալ հասոյց մինչեւ ի զալուստն Քրիստոսի<sup>8</sup>: 1294 Եւ զի ոչ ունէր բանն ազատութիւն յառաջ անցանել, դիմահարեցաւ եւ զտեղի առ, վասն որո[յ] ասէ. «Իրաւապէս առցէ զկա[յ]»: 1295 Զի զուրաւրինակ սկիզբն եղելոցս անպարոյր եւ առանց ծայրից ըմբռնման<sup>9</sup>, սոյնպէս եւ յետ կատարածի աշխարհիս<sup>10</sup> անգիտելիք են մարդկան մտաց եւ անպատմելիք իմաստութեան մակացողաց: 1296 Եւ զարձեալ՝ Աստուած ի կարն հա[յ]ի եւ ըստ կարի<sup>11</sup> պահանջէ: 1297 Վասն որոյ այսօրիկ էին մեզ կարելի ասացուածոց, արժան է յանգուցա-

նել<sup>12</sup> զբանս եւ կատարումն ածել վարդապետութեանս եւ ներբողենի<sup>13</sup> ճառիս:

1298 «Պայծառացեալ եւ պատուական սուրբ նշանիւս»: 1299 Նախ զոր ինքն պայծառանա[յ] անտանելի փառաւորութեամբն, ընդ նմին<sup>14</sup> եւ պայծառացուցանէ զամենայն սուրբս եւ որ նովաւ զաւրացան վկայք:

1300 «Եւ պատուական սուրբ նշանիւս ի Քրիստոս<sup>15</sup> ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս»<sup>16</sup>: 1301 Ոչ միայն պայծառ եւ լի լուսով երեւի, այլ<sup>17</sup> պատուական եւ մեծարգո[յ] քան զամենայն անաւթս փրկականս, նաեւ՝ սուրբ, մաքրարար եւ զտիչ ամենայնի: 1302 Իսկ նշան կոչէ զփրկական զխաչս<sup>18</sup>: 1303 Զի որպէս թագաւորի դրաւչք նշանք են թագաւորական իշխանութեան, եւ ի հեռաստանէ ունի տարացոյց, եւ ահարկու տեսողաց դոյ, այսպէս եւ խաչն նշան է երկնաւոր թագաւորին, որ երեւի պահապան եւ զէն ամբողջեան հաւատացելոց: 1304 Նաեւ՝ ահարկու եւ տեղի պատկառանաց զաւրութեամբն այնոցիկ, որք ոչ հաւատով եւ ճշմարտութեամբ մերձենան ի նա: 1305 «Ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր»: 1306 Յուցանէ, թէ Քրիստոսի Յիսուսի Տեսան բոլորեցունց այսօրիկ փրկաւէտ զաւրութիւնք կատարեցան եւ աւարտումն առին: 1307 Այն, որ փառաւորեալ է յամենայն արարածոց՝ յիմանալեաց եւ ի զսգալեաց<sup>19</sup>, մշտնջենական եւ յաւիտեան փառաւորութեամբ<sup>20</sup>: 1308 Քրիստոսի փա՛ռք յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն<sup>21</sup>:

1 C աշխարհիս  
2 C քրիստոնեայք  
3 BC երեւելով  
4 BC զի + ի  
5 BC նա  
6 BC արրամ  
7 BC մովսէս  
8 B չի՞  
9 BC ըմբռնման ծայրից չի՞ ծայրից ըմբռնման  
10 BC +անընթացիկ եւ  
11 BC կարիք

12 BC յանկուցանել  
13 B ներբողելն C ներբողիցի  
14 B սմին  
15 BC + Յիսուս  
16 C չի՞  
17 BC այլեւ  
18 C խաչս  
19 BC զգալեաց  
20 C փառաւորութեամբն  
21 B փառք քրիստոսի եւ յիշատակ գրչիս. ամէն: C չի՞ Քրիստոսի փառք... ամէն



**ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ԿԼԱՅԵՑԻՈՅ  
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՒԻ ԱՍԱՑԵԱԼ  
Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱՎՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ**



## ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՉԱԼՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՍԵԱՆԸ ՆՈՒՐՈՒԿԱԾ ՔԱՐՈՁԸ

Ռուսաստանի Դաշնութեան Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Սանկտ-Պետերբուրգի մասնաճիւղի ձեռագրական հաւաքածուի թիւ B 11 ձեռագրի<sup>1</sup> բնագրերից մէկը՝ «Տեառն Ներսեսի Կլայեցոյ՝ Հայոց կաթողիկոս[ի] ասացեալ ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի» վերնագրով, ունի նոյն սկսուածքը, ինչ Մաշտոցեան Մատենադարանի թիւ 3839 ձեռագրում ընդօրինակուած «Տեառն Ներսեսի՝ Հայոց կաթողիկոսի ասացեալ ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի» վերնագրով հատուածը. «Մերձեցաւ ժամանակն, յորում լինելոց է ի կատարածի աշխարհի եւ քննութիւն, եւ հատուցումն իւրաքանչիւր գործոց...»: Այս համընկնումը վկայում է, որ Մատենադարանի թիւ 3839 ձեռագրում յիշեալ բնագիրը Պետերբուրգի ձեռագրական հաւաքածուի թիւ 249 ձեռագրում ընդօրինակուած բնագրի հատուածներից է: «Ցուցակ ձեռագրաց»-ում այս բնագիրը վերագրուած է Ներսէս Մեծին<sup>2</sup>: Ձեռագրի մայր քարտում նոյնպէս նշուած է Ներսէս Մեծ. «14աբ Ներսեսի Մեծի ասացեալ ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի», մինչդեռ բնագրի խորագրում չկայ «մեծ» բառը: «Ցուցակ ձեռագրաց»-ի անձնանունների ցանկում եւս սոյն բնագիրը վերագրուած է Ներսէս Մեծին<sup>3</sup>:

Պետերբուրգեան ընդօրինակութիւնում բնագրի առաջին 6 թերթերից յետոյ մէկ թերթ ընկած է, ինչը արձանագրուած է ձեռագրի նկարագրութեան մէջ<sup>4</sup>: Տուեալ էջի ստորին լուսանցքում առկայ պրակահամարը նշանակում է, որ գործ ունենք պրակի աւարտի հետ (159թ՝ «Ծ»), մինչդեռ հանդիպակաց էջը յաջորդող պրակահամար չունի: Ձեռագիրը ժողովածոյ է, եւ խնդրոյ առարկայ բնագիրն ունի ժՁ. համարակալումը, իսկ յաջորդող բնագրային միաւորն ունի ժէ. համարակալումը, ինչը ապացուցում է, որ ընկած էջում կամ էջերում չէր կարող նոր բնագիր սկսուել: Հետեւաբար, ընկած մասից յետոյ եղած թերթերին յաջորդող բնագիրը նոյնպէս ժՁ. կարգային համարով բնագրի մաս է կազմում: Միւս կողմից՝ ընկած թերթից (թերթերից) յետոյ նոյն՝ հանդերձեալ կեանքին առնչուող թեմաներ են արձարձուում, որոնք հաստատապէս շարունակութիւնն են նոյն քարոզի: Եւ վերջապէս՝ պրակների հաշուարկը ցոյց է տալիս, որ Ծ. պրակն ունի կանոնաւոր՝ 12 թերթ (թ. 148-159), իսկ յաջորդող Կ. պրակը՝ 15՝ 7+8 բաժանումով (թ. 160-174), եւ, ամենայն հաւանականութեամբ, բովանդակութեան ընդհատուած մասում ունենք ոչ թէ մի քանի, այլ ընդամենը ընկած 1 թերթ: Այսպիսով, կարող ենք վստահաբար ասել, որ յաջորդող թերթերի բնագիրը եւս Ներսէս Ծնորհալուին է եւ շարունակութիւնն է նոյն քարոզի:

1 Юзбашян К. Н., Армянские рукописи в петербургских собраниях. С. Петербург. 2005. с. 124 (руս. Իւզբաշեանի ցուցակի՝ № 249, ԻՄ. В 11. Сборник, с. 122-125. այսուհետ՝ ՊԱԻ В 11): Յետագայի յիշատակարաններում ձեռագիրն անուանուած է Քարոզգիրք (տե՛ս ՊԱԻ В 11, էջ 258ա, այդպէս նաեւ՝ Խա-ում՝ շղագրով): Ժողովածոյ, ժԴ. դար, ստացող՝ Ռուսակէս/Արիստակէս Բիչ (երկու ձեռով էլ յիշատակուած՝ տե՛ս ՊԱԻ В 11, էջ 21ա եւ էջ 40ա), բերք՝ 274, նիւթ՝ բուրձ, մեծութիւն՝ 21,5×14, գրութիւն՝ մրասիւն, գիր՝ բուրձգիր, տող՝ 20, կազմ՝ դրոշմագարդ մուգ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ. աստուրը՝ բուրձ: Գրիչը յայտնի չէ. գրչի յիշատակարաններն ամենուրեք անանում են: Ձեռագրին վերաբերող այլ տուեալներից են՝ յետագայի նորագող՝ Միմաւն (1631 թ.)՝ 258ա, յետագայի ստացող՝ տէր Առաքել (1773 թ.)՝ 95բ, 188բ, 192բ, 258ա, 273բ: Ձեռագրի սկզբում այլ թերթերի վրայ առկայ է Կարապետ Կոստանեանցի ձեռագրով բովանդակութեան համառոտ նկարագրութիւնը:

2 Ցուցակ ձեռագրաց, հտ. Ա., էջ 1094:

3 Ցուցակ ձեռագրաց, Ա. հտ., էջ 1582-1583:

4 Юзбашян К. Н., Армянские рукописи в петербургских собраниях, էջ 124:

Ըստ այդմ՝ ՊԱԻ B 11 ձեռագրում քննուելիք բնագրի սահմաններն են՝ 154ա-159բ, /// (1 թ. ընկած), 160ա-175բ: Փորձել ենք հաշուել նաև այդ ձեռագրի պրակները՝ յոյս ունենալով, որ այդ ընկած 1 թերթը կարող է գտնուել նոյն ձեռագրում՝ սխալ տեղադրուած, սակայն ապարդիւն՝:

Այսպիսով, ունենք ներսէս Շնորհալու՝ «Տեառն ներսեսի Կլայեցոյ՝ Հայոց կաթուղի-կոս[ի] ասացեալ ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի» երկի ոչ ամբողջական մի տարբերակ՝:

Ըստ ժանրային դասակարգման՝ տուեալ երկը քարոզ է՝ ուղղուած ունկնդրի վրայ ներազդելուն՝ վերջինիս մղելով ապրելու քրիստոնեային վայել կեանքով՝ հանդերձեալ կեանքում Տիրոջ կողմից տրուելիք բարիքները վայելելու յոյսով:

Ինչ վերաբերում է ՄՄ 3839 եւ ՊԱԻ B 11 ձեռագրերում բնագրերի ընդօրինակման ժամանակին, ապա, մեր կարծիքով, ՊԱԻ B 11-ի ընդօրինակութեան նախագաղափար օրինակն աւելի հին լեզուական ձեւեր եւ իմաստային տարբերութեամբներ է ունեցել: Օրինակ՝ ՄՄ 3839 ձեռագրի «գարշելի մեղացն» տարբերակի փոխարէն ՊԱԻ B 11-ում ունենք «քարշել ի մեղացն» ձեւը: Կարծում ենք՝ «գարշելի մեղացն» տարբերակը կարող էր առաջանալ «քարշել ի մեղացն» ձեւից՝ գրչի կողմից չհասկանալու եւ բառանշատումը սխալ կատարելու պատճառով: ՄՄ 3839 ձեռագրում առկայ է նաև յաւելեալ մէկ տող. «Զի՛ «Զոր ակն ո՛չ ետես, եւ ունկն ո՛չ լուա», եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զայն է պատրաստել Աստուած արդարոցն», որը բացակայում էր ՊԱԻ B 11 ձեռագրում: Կարծում ենք՝ դա աւելի ուշ շրջանում գրչի յաւելումներից է:

Ստորև ներկայացնում ենք ՊԱԻ B 11 եւ ՄՄ 3839 ձեռագրերի որոշ տարբերութիւններ՝ ներառեալ ուղղագրական ձեւերը.

ՊԱԻ B 11	ՄՄ 3839
1. Մերձեցաւ ժամանակն, յորում լինելոց է ի կատարածի աշխարհի...	1. Մերձեցաւ ժամանակն, յորում լինելոց է կատարած աշխարհի...
2. ...եւ քարշել ի մեղացն հեշտութեան՝ վրիպիցի յայնպիսի բարեաց պարգեւացն խոստացելոցն:	2. ... եւ գարշելի մեղացն հեշտութեան՝ վրիպիցի ի յայնպիսի բարեաց պարգեւացն խոստացելոց:
3. Կարծեմ թե՛ ոչ բան ամենայն բանականաց կարիցէ յանդիման կացուցանել ըզրկումն յայնպիսի երանութեանցն:	3. Կարծեմ թէ՛ եւ ոչ բան ամենայն բանականաց կարիցէ յանդիման կացուցանել զրկումն յայնպիսի երանութեան:
4. ... անբան կենդանիք եւ անշունչք արարածք իմաստս բանի ընդունելին:	4. ... անբան կենդանիք եւ շունչ արարածք իմաստս բանի ընդունելին:
5. Զի՛ «Որ ակն ո՛չ ետես, եւ ունկն ո՛չ լուա»:	5. Զի՛ «Զոր ակն ո՛չ ետես, եւ ունկն ո՛չ

5 Ձեռագրի նկարագրութեան հարցակարգում ՊՐԱԿ կէտը ներառուած չէ, բստ այդմ՝ պրակների պատկեր եւ չունեմք (տե՛ս Юзбашов К. Н., Армянские рукописи в петербургских собраниях, էջ 124):

6 ՊԱԻ B 11 ձեռագրում պրակահամարների յաջորդականությունը դրուած էր այրբեմական կարգով. առկայ պրակներն են՝ Ա-Ոx12 (Ա. 9, Գ, Ե, Զ, Է, Թ, Ն, Ծ 11, Կ 15, Ո 2)+1 (թ. 258)+2 (թ. 272-3): Ա. պրակը ներառում է նաև բ. 1-ից առաջ չթերթակալուած թերթը եւ 1-8 թերթերը, այսպիսով՝ ձեռագրի ընդհանուր թերթերի քանակը հետեւեալն է՝ 273+1: Պրակների մի մասը, ինչպէս տեսնում ենք, կանոնաւոր չէ. առկայ են մէջընդմէջ ընկած թերթեր (սա վերաբերում է ոչ յորոյին, քանի որ կան մաս պրակներ, որոնք չնայեա՞ծ կանոնաւոր՝ 12 թերթ չունեն, սակայն բովանդակութեան ընդհատում չկայ):

7 Նիւրբ գտնել այլ ձեռագրացուցակներում չյաջողուեց:



<p>6. ... եւ տանջանք յաւիտենից ընդ սատանայի ոչ էր սպառնացեալ...</p> <p>7. ... զբրկեալն ի դասակցութենէ սրբոցն եւ անկանիւն յերեսաց Աստուծոյ...</p>	<p>լաւ», եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զայն է պատրաստել Աստուած արդարոցն:</p> <p>6. ... եւ տանջեալն յաւիտենից ընդ սատանայի ոչ էր սպառնացեալ...</p> <p>7. ... զբրկեալն ի դասակցութենէ սրբոցն եւ անկանել յերեսացն Աստուծոյ:</p>
--	--

Վերոնշեալ տարբերութիւնները, կարծում ենք, հիմք են տալիս եզրակացնելու, որ թէեւ թէ՛ ՄՄ 3839 ձեռագիրը եւ թէ՛ ՊԱԻ B 11 ձեռագիրը թւագրուում են նոյն՝ ԺԴ դարով<sup>8</sup>, այդուամենայնիւ ՄՄ 3839 ձեռագրի նախագաղափարը եղել է ՊԱԻ B 11 ձեռագրին աւելի մօտ տարբերակ:

Բնագրերը պատրաստել ենք հետեւեալ սկզբունքներով.

1. Բաղաձայնական ուղղագրական երկձեւութիւնները պահել ենք՝ ընդգծելով զրչական ձեւերը: Օրինակ. մագաղաթ/մակաղաթ, անկիւն/անգիւն, ընկեր/ընգեր, վախճան/վաղճան:

2. Անտեսել ենք տողադարձի գաղտնավանկ ը-ն. պահրանել ենք միայն ուղղախօսական ը-ն:

3. Բնագիրն ունի եւ-ի գրութեան ե՛ւ միանիչ, ե՛ւ երկնիչ ձեւեր՝ **և**, **եւ**: Գրիչը բոլոր մեծատառերը գրել էր երկնիչ՝ **Եւ**, իսկ փոքրատառի համար կիրառել էր միայն միանիչ ձեւը՝ **և**, ընդ որում՝ փոքրատառ միանիչ **և**-ը յաճախ կիրառուած էր նաեւ վերջակէտից յետոյ: Բնագրում միայն 3 բառում է փոքրատառը եւ-ը գրուած երկնիչ՝ **բելը**, **հարելը**, **դեւ** (առկայ է նաեւ **դե բառաձեւը**): Մատենաշարի ընդունած կարգի համաձայն բոլորն ընդօրինակել ենք միայն երկնիչ **եւ**-ով: **Օ**-ն եւս ընդօրինակել ենք **աւ**:

4. **Ե** եւ է տառերը թողել ենք բնագրին համապատասխան. գրիչը կիրառել է **եթե** եւ **թե** ձեւերը. դրանք չենք ընդգծել: Առկայ են նաեւ օժանդակ բայերի անցեալի հոգնակի 3-րդ դեմքի, նաեւ անցեալ անկատար ժամանակաձեւի հոգնակի 3-րդ դեմքի **եին**, նաեւ նոյն ժամանակաձեւի հոգնակի 1-ին դեմքում՝ **-եաք** ձեւերը. այդ դէպքերն ընդգծել ենք:

5. Գրիչը **թեւեւ**, **այլեւ**, **նաեւ**, **ընդդէմ** բառերը գրել է նաեւ անջատ գրութեամբ՝ **թե եւ**, **այլ եւ**, **նա եւ**, **ընդ դէմ**: Բոլոր այդ ձեւերը միօրինակացրել ենք՝ գրելով միասին:

6. Գրչական սրբագրութիւնները եւ ուղղումները ծանօթագրել ենք միայն բառի իմաստային փոփոխութեան դէպքում միայն:

7. Աստուած, Հայր, Որդի, Սուրբ Հոգի անունները գրել ենք մեծատառերով:

8. Ուղղանկիւն փակագծերում [ ] վերականգնել ենք ենթադրուող չգրուած տառերը:

9. Բնագիրը կէտադրել ենք արդի կէտադրական կանոններին համապատասխան:

ՅԱՍՄԻԿ ԻՐԻՑԵԱՆ

8 Երկու ձեռագրերի գրիչների յիշատակարաններում էլ քայակայում էր գրչութեան ժամանակի բուականը, ուստի երկուսն էլ մօտաւոր բուագրուել են ԺԴ դարով:

## ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ԿԼԱՅԵՑԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒԴՈՒԿՈՍՒԻ] ԱՍԱՅԵԱԼ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ<sup>1</sup>

1 Մերձեցաւ ժամանակն, յորում լինելոց է ի կատարածի աշխարհի՝ եւ քննութիւն, եւ հատուցումն իւրաքանչիւր գործոց: 2 Եւ արժան է հոգալ ամենայն ումեք, զի պարեսցուք ի բարկութենէն, որ գալոցն է ի վերայ որդւոցն անհաւանութեան: 3 Քանզի յոյժ ողբոց եւ արտասուաց արժանաւոր վարկանիմք զայնպիսի անձինք, որ յայնքան անպատում պարգեւացն յաղագս փոքր վայելից կենացս եւ քարչել ի մեղաց հեշտութեան վրիպիցի յայնպիսի բարեաց պարգեւացն խոստացելոցն: 4 Կարծեմ թե՛ ոչ բան ամենայն բանականաց կարիցէ յանդիման կացուցանել ըզրկումն յայնպիսի երանութեանցն:

5 Եւ զի՞նչ ասեմք, եթե բանականք, ո՞ւր թե եւ ամենայն իսկ անբան կենդանիք եւ անշունչք արարածք իմաստս բանի ընդունելին եւ ի ձայն աղիողորմ աշխարհաց ողբային յաղագս միանձին մեղաւորի, որ հանդերձեալ է զրկիլ յայնպիսի անճառ բարեացն, չէ՛ բաւական: 6 Զի զի՞նչ կարէ ոք բանիւ նշանակել զայնր կենաց, զի. «Որ ակն ո՛չ ետես, եւ ունկն ո՛չ լուաւ»<sup>2</sup>: 7 Զի թեեւ հրոյ գեհենին՝ ակն ոչ ունեաք, եւ տանջանք յաւիտենից ընդ սատանայի ոչ էր սպառնացեալ բաւական առ ի տանջումն զրկեալն ի դասակցութենէ սրբոցն եւ անկանիլն յերեսաց Աստուծոյ, թող թե՛ եւ ի վերայ բարեացն զրկելոյ զչարչարանս ընդունել, եւ ընդ լուսոյն հեռանալոյ՝ զխաւարն շաւշափելի եւ զանլոյս հրոյն կիզումն: 8 Եւ փոխանակ ընդ հրեշտակս պարակից լինելոյ՝ ընդ գեւսն,

եւ ի նոցուց՝ ղիւացն չարչարելոյ: 9 Եւ փոխանակ ընդ Քրիստոսի յերկինս վերանալոյ՝ ի ստորինս անդրնդոց ընդ սատանայի ի խորս դժոխոցն դատապարտելով յաւիտեան:

10 Զոր թե ոք զստուեր կենացս այսորիկ պարուրեսցէ ի մտաց տեսութենէ եւ բացցէ զաչս հոգւոյն եւ հայեցի ուղիղ մտաւք յաւրն յայն մեծ եւ երեւելի եւ որ ինչ ի նմա հանդերձեալ են՝ աստուածային գործք հրաշից լինել, կարծեմ թե ոչ դադարէր ողբաւք եւ արտասուաւք զամենայն աւուրս ի տուէ եւ ի գիշերի լինել, եւ մերկանալ յամենայն կենաց աշխարհիս եւ քարամք կոծել զկուրծս հանապաղ, եւ սովալլուկ յամենայն փափկութեանց կենցաղոյս միայն, զի այնմ եւեթ արժանի լինիցի կենացն եւ մի զրկիցի ի խոստացեալ բարութեանց սիրելեացն Աստուծոյ:

11 Զի ոչ ոք կարիցէ յանդիման կացուցանել զաւուրն այնորիկ զտիպ եւ զնմանութիւն, զի մեծ է աւրն այն եւ սոսկալի, յորժամ վարագուրն անջրպետութեան, որ ընդ երկին եւ ընդ երկիր հաստատութիւնս այս ի բաց բարձցի սպասաւորացն արքունի՝ գալարելով իբրեւ զմակաղաթ: 12 Եւ հին աւուրցն Հայրն ամենայնի եւ Արարիչն եւ Բանն անքննին, մարմնացեալ Որդին նորա միածին, եւ Հոգին ամենագաւր եւ մշտնջենաւոր ամենասուրբ Երրորդութիւնն իջանէ անհաս եւ անճառելի փառաւք եւ երեւեալ վայելչութեամբ ի վերուստ: 13 Հոսին ընդ նմա եւ դասք հրեղինացն, գունդք զինուորութեանց թագաւորին երկնաւորի, եւ այնքան, մինչ զի թափուր ի հոգեղինաց մնալով երկնից: 14 Քանզի սերովբէքն սլանան սաւառնացեալ թեւաւք զերիս սրբասացութիւն միոյ

1 Աղբիւր. Սանկտ Պետրբուրգ, ՊՍԽ Ե 11, քերթ 154ա-175բ:

2 Ը Կորնթ. Ի 9

Տերութեանն նուագելով, խմբին առ միմեանս քերովբէքն, չորեքկերպեան կենդանիքն կառս յարմարելով, յորում հանգչի Աստուածութիւնն<sup>15</sup>: «Աթոռք դնին, եւ հինաւուրցն նստի»՝ ըստ Դանիէլի, եւ «Որդի մարդոյ ընդ ամպս երկնից եկեալ՝ բազմի Հաւր ընդ աջմէ՝ ընդ որս եւ Հոգին անձնաւորութեամբ»<sup>16</sup>: 16 Եւ յայնմ մեծի աւուրն ամենասուրբ Երրորդութիւնն, զոր ոչ եին երբեք արարածքս տեսեալ՝ տեսանեն յայտնապէս ամենիքեան:

17 Յայնժամ դասակարգին ըստ իւրաքանչիւր աստիճանի բարձրութեան զաւրքն երկնայինք՝ հրեշտակք, հրեշտակապետք, իշխանութիւնք, պետութիւնք, զաւրութիւնք, տերութիւնք: 18 Ըստ կարգին ընթանան յառաջագոյն հրեշտակաց բազմութիւնքն ընդ չորս անգիւնս աշխարհի փողով մեծաւ՝ առաջի թագաւորին անմահի, եւ ձայն աւետեաց հնչեցուցանեն ամենայն տիեզերաց, մանաւանդ՝ արդարոցն դասուց, որք սպասեցին յուսով զայլըստեան նորա եւ ասեն. «Ահա՛, գա փեսայն երկնաւոր, որում ցանկայիք ի մանկութենէ եւ մաքուր եւ սուրբ պահեցիք զանձինս վասն սիրոյ նորա: 19 Արի՛ք, սիրելիք, ահա՛, եկն թագաւորն փառաց պարգեւել ամենեցուն՝ փոխանակ ճգնութեանց՝ հանգիստ, եւ ընդ աշխատութեանցն՝ ուրախութիւն ի կեանս անմահականս: 20 Արի՛ք, տեսէք, մանկունք առագաստի եւ հարսունք մաքուրք, զանմահ փեսայն Քրիստոս, որում ցանկայիք տեսլեան նորա, եւ եղիք պանտուխտք եւ աւտարք ի վերայ երկրի: 21 Արի՛ք, տեսէք զգեղվայելութեան նորա եւ զփառս Աստուածութեանն, որում բաղձայիք տեսանել զնա: 22 Եկայք, այսուհետեւ ժառանգեցէ՛ք ըզթագ արքայութեան նորա, զոր

իւրաքանչիւր հիւսեաց ինքեան՝ իւրով ճգնութեամբ եւ չարչարանաւք»<sup>17</sup>:

23 Յայնժամ յական թաւթափելոյ յառնեն ի մեռելոց ամենայն մարդկային բնութիւնք եւ ժողովին ի հրեշտակաց առ միմեանս եւ սուրբքն ընտրեալք՝ ի միջոյ մեղաւորաց, եւ սլանան որպէս զարծուիս լուսեղէն ամպաւք յաւըս՝ ընդառաջ Քրիստոսի, եւ միանան ընդ փեսային զրկախառ համբուրիւ, որում ցանկային որպէս քաջ սիրելիք՝ երկար ժամանակաւք բաժանեալք եւ ի հանդիպումն գոլով միմեանց, ընդունին այնուհետեւ զփառս եւ զպատիւ առնուն ի նմանէ՝ ըստ իւրաքանչիւր վաստակոց եւ ճգնութեանց:

24 Իսկ ամպարշտաց դասքն եւ մեղաւորացն՝ իբրեւ ազոաւք սեւացեալ առանց թեւոց կամ որպէս մարախ թեւակոտորք՝ կուտեալք ի վերայ միմեանց, այնպէս ծանրութեամբ մեղացն, թրխացեալ գունով ըստ ծանրութեան կապարոյ ի վերայ երկրի անկեալ դնին: 25 Նոյնպէս եւ անհաւատիցն բազմութիւնքն, յորժամ տեսանեն զճառագայթս քրիստոսեան նշանին՝ զխաչն, լուսափայլեալ յարեւելից ըստ ձեւոյ նմանութիւն քառա[ն]կիւն աշխարհի եւ յերկրէ մինչեւ ի հարաւ լայնատարած գոլով՝ ի չորս անկիւնս տիեզերաց, լան եւ կոծին զանձինս իւրեանց եւ արտասուս անժամս եւ անաւզուտս հեղուն, զի ոչ հաւատացին գալստեան Որդւոյն Աստուծոյ եւ ոչ երկրպագեցին փրկական խաչի նորա ի կեանս յայսմիկ, այլ մանաւանդ հայհոյեցին զնշան տերունական եւ զանճառ տնաւրէնութիւն բանին Աստուծոյ, որոց ա[յ]նպիսեանցն բերանքն անիծիւք եւ դառնութեամբ լցեալ կարկին, եւ վայ, եւ եղուկ կարգան անձանց իւրեանց:

26 Յայնժամ ատեան զատաստանին ուղղին, եւ հրաշիցն ասացեալ դպրու-

<sup>15</sup> Տէ՛ս Յայթ. Գ. 6-10  
<sup>16</sup> Հմմտ. Գ. 1-13

<sup>17</sup> Հմմտ. Մատթ. ԻԿ: 34

թիւնքն բանին եւ որդւոյ տա զդատաստան, որպէս ասաց Տէրն. «Եթե հայր ոչ զոք դատի, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրոյ»<sup>2</sup>, եւ գան առաջի նորա բաւանդակ ամենայն մարդկային ազգ յառաջնաստեղծ մարդոյն Ադամայ՝ մինչեւ ի վերջին ծնեալն: 27 Եւ բաժանէ զարդարս եւ զմեղաւորսն հատանող բանիւ ի միմեանց: 28 «Կացուցանէ զարդարոցն դասն, իբրեւ զաւղիս ընդ աջմէ, եւ զմեղաւորսն յաջծեաց նմանութիւն՝ ընդ ահեկէ»<sup>3</sup>: 29 Եւ սատանայ զիււաւքն իւրովք, այսինքն՝ ապստամբ վիշապն ածի ի հրեշտակաց կապեալ առաջի նորա:

30 Յայնժամ անաչառ դատաստան առնէ համառաւտ վճռաւ ամենայն մարդկային բնութեանս, եւ ամենայն ոք, զմեզս զոր եւ գործեալ իցէ եւ ոչ խոստովանութեամբ եւ զղջմամբ ապաշխարեալ իցէ աստ, իբրեւ գրեալ ի մագաղաթի, այնպէս յայտն ի առաջի աչաց իւրոց տեսանէ: 31 Եթե խորհրդով իցէ մեղուցեալ եւ եթե բանիւ եւ գործով՝ ընդ նմին եւ վճիռ դատաստանի իւրոյ, եթե զինչ պատիժս վասն այսինչ յանցանաց կրեսցէ, եւ կամ յորում տեղւոջ դատապարտեալ երթիցէ, ամենայն որպէս գրով հաստատեալ լինի ի յիշատակարան սրտի նորա:

32 Զի այլ են տանջանք եւ տեղի պատուհասի անհաւատիցն, որ ոչ ծանեան ընաւ զՔրիստոս, եւ այնոցիկ, որ լուան եւ ոչ հաւատացին, եւ այլ այնոցիկ, որ հաւատացին Քրիստոս, բայց գործաւք իրեանց ուրացեալք եղեն, եւ մեղաւք եւ անաւրէնութեամբ անցուցին զկեանս իրեանց: 33 Այլեւ մեղաւորացն յոյժ է զանազանութիւն եւ տեղի տանջանաց, զի այլ է պատիժ սպանողացն զորքս եւ զաղբատս, զի պահանջէ ի նոցանէ զրկանսն,

իբրեւ ոչ ունիցին հատուցանել, եթե լինիցի ինչ մասն բարեաց գործոց ի նոսա, առեալ զայն՝ տացեն զայն զրկելոցն, եւ եթե այնու ոչ վճարեսցի՝ ի հաւատոցն եւ ի մկրտութեան շնորհացն մերկ եւ կողուպուտ կացուցանիցեն զայնպիսիսն:

34 Ապա այլով արինակաւ՝ տանջին շնացողք եւ պոռնիկք, որք զտաճար Աստուծոյ ապականեցին, եւ այլ են տանջանք չարագործացն եւ պղծոցն, եւ կախարդաց, եւ աղանդաւորաց, եւ որք ի պէս պէս իսկ եւ յայլընդակ գործս սատանայական չարեաց անկեալք են, եւ այլ է փափկացելոցն, եւ արբեցողացն, եւ որովայնամուղիցն տեղի, եւ այլ՝ ստոցն եւ սուտ երդմանցն, եւ սուտ վկայիցն, եւ բամբասողացն, եւ տրտնջողացն պատիժն, եւ այլ՝ ծուլացելոցն եւ հեղգացելոցն յաղաւթից եւ պահոց, եւ յայլ՝ բարեգործութեանց: 35 Եւ ի վերայ ամենայնի նոր արինակ իմն եւ անհնարին տանջանք, քան զամենայն մեղաւորաց՝ այնոցիկ է պատրաստեալ, որք անարժանութեամբ մատուցանեն զսուրբ պատարագն քահանայքն, եւ կամ որ հաղորդին անարժանութեամբ ժողովրդականք: 36 Այնպիսիքն ընդ խաչա//<sup>4</sup>: 37 //տակոց իւրեանց:

38 Զի որպէս մեղաւորացն այլանմանն տանջանքն ի միմեանց, այսպէս եւ արդարոցն՝ պէս պէս են եւ հատուցմունքն բարեաց՝ ըստ գործոց եւ քրտացն, զի այլ է պատիւ եւ փառք առաքելոցն, եւ այլ՝ մարգարեիցն սրբոց, եւ այլ՝ հայրապետացն ուղղափառաց, եւ այլ՝ մարտիրոսացն դասուց, եւ այլ՝ կուսանացն մաքրեցելոցն, եւ այլ՝ արինաւոր ամուսնացելոցն ողջախոհից, եւ այլ՝ այնոցիկ, որք արինաւքն արդարացան յառաջ, քան

<sup>1</sup> Յովհ. Ի 22

<sup>2</sup> Հմմտ. Մատթ. Ի 15 33

<sup>1</sup> արինակով ուղղ. արինակաւ

<sup>2</sup> Թերթեր 159-ի եւ 160-ի միջեւ 1 բերր ընկած. բովանդակութիւնը բերի:

ըզմարմնանայն եւ զգալուստն Քրիստոսի եւ այլք, որ յետ գալստեան նորա աւագանին սրբութեամբ եղեն շնորհաւք որդիք Աստուծոյ:

39 Բայց նախ եւ առաջին՝ զկուսանսն զարդարէ գեղեցկազան պատմուճանաւ եւ բազմագունեան պսակաւն ի ձեւ ի զարդ հարսնութեան երկնաւոր փեսային, որք ընդ կուսին Մարիամու Աստուածածնին պսակեցին՝ զասակցելով նմին յերկնային խորանսն: 40 Բայց այժմ գերագոյն դասու եւ փառաց ոչ վայրապար կուսանքն պատահեցին, այլ որք բոլորովին զհոգի եւ զմիտս եւ զմարմին անարատ պահեցին ոչ յախտաւոր ցանկութեանց միայն, յորմէ յիմար կուսանքն՝ եին մաքուր, այլ ամենայն վատթար խորհրդոց եւ ի հայեցուածոց աչաց, եւ ի բանից եւ ի գործոց միշտ յաւրէնս Աստուծոյ խորհելով ի տուէ եւ ի դիշերի:

41 Իսկ մարտիրոսացն պսակք կարմրագոյն լուսով փայլեն, զգոյնս արեանց հեղլոյ՝ ի գլուխս իւրեանց բարձելով, զի յայտնի լիցին երկնաւորաց եւ երկրաւորաց, թե սոքա են, որ ետուն զանձինս իւրեանց ի մահ եւ ի հեղումն արեան վասն իւրեանց եւ Արարչին:

42 Իսկ վասն առաքելոցն զի՞նչ պարտ է ասել, որ նման նմայ լինելոց են ըստ Յովհաննու ձայնին, եւ կամ վասն մարգարէիցն, որ են դասակիցք նոցունց, եւ վասն ճշմարիտ հայրապետացն եւ քահանայիցն, որք իւրաքանչիւր ոք զառ յինքենէ ուղղել ասէ համարձակութեամբ. «Ահա ասիկ, ես եւ մանկունք իմ, զորս ետուր ինձ Աստուած<sup>1</sup>»<sup>բ</sup>, որ եւ «ընդունին զանթառամ պսակն ի ձեռանէ Տեառն»<sup>գ</sup>:

43 Իսկ հովիւք ծոյլք ոչ ունին համարձակութիւն ասելոյ զայս, քանզի ոչ զմոլորեալսն<sup>2</sup> դարձուցին եւ ոչ զթիւրեալսն ուղղեցին, այլ ազահութեամբ եւ արծաթսիրութեամբ վարեցան այնու, այլ այնպիսիքն ծառայք չարք եւ վատ անուանել ի Տե[ա]ռնէ, ընդ մէջն կտրին եւ ընդ անհաւատսն դատապարտեցին<sup>3</sup>: 44 Քանզի յոյժ սոսկալի եւ քստմնելի այս է, զի ամենայն ոք ի սրբոցն, ըզբանսն, զոր խաւսեցան յաշխարհի եւ գրով աւանդեցին մարդկան՝ յառաջ բերեալ յատենի անդ յանդիման կացուցանելն ընդգէմ մեր:

45 Նախ եւ առաջին՝ Տէրն մեր, զոր խաւսեցաւ յԱւետարանին, եւ առաքեալքն եւ մարգարէքն եւ վարդապետք եկեղեցոյ եւ զոր գտանին ի մարդկանէ, որք պահեցին անարատ զգրեալսն ի նոցանէ այնպիսեացն եւ զխոստումն անսուտ պարգեւէ, զոր խոստացաւ յառաջագոյն գրովք սրբովք սիրելեաց իւրոց:

46 Իսկ որք արհամարհեցին զպատուիրանս նորա, որ ի գիրս սուրբս գրեալ է, նոքաւք իսկ բանիւք նոցա դատապարտէ զնոսա: 47 Որպէս եւ Տէրն ասաց. «Ես ոչ զոք դատեմ, այլ բանն, զոր խաւսեցայ՝ նա դատէ զնոսա յաւուրն յետնումն»<sup>է</sup>, եւ ոչ միայն բանքն, այլեւ հրեշտակք, որ պահապանք եղեն մարդկեղէն բնութեանս, ամբաստանեն զմեղաւորաց առաջի Աստուծոյ, քանզի իւրաքանչիւր անձին մարդոյ հրեշտակք կարդեալ է պահապան յԱրարչէն ի ծնընդենէ մինչ ի ցվախճան:

48 Եւ յորժամ մեռանի մարդն, նոյն պահապան հրեշտակն առնէ զհոգի նորա, եթե արդար իցէ եւ սուրբ՝ խնդութեամբ մեծաւ, եւ եթե մեղաւոր՝ տրտմութեամբ եւ զայրացմամբ աւանդել, եւ պահէ զնա ի տեղ-

ա՝ Տէ՛ս Մատթ. ԻԿ 1-13  
1 Բնագրում՝ ածի, ուղղել եմք ըստ Աստուածաշնչի բնագրի:  
բ՝ Հմմտ. Լեո. Ը 18. Կ: Էբ. Ի 13  
գ՝ Հմմտ. Ը Պէբբ. Կ 4

2 Բնագրում՝ զմոլորեալսն:  
բ՝ Տէ՛ս Մատթ. ԻԿ 47-51  
է՝ Գնչ. ԺԻ 48

ւոջ, ուր կամք են Աստուծոյ մինչեւ ի գալստեան եւ յարութեան աւրն: 49 Նոյն հրեշտակն՝ հանդերձ պահպանեալ հոգւովն, սլանա ի վերուստ եւ գա միացուցանէ զհոգին հրամանաւն Աստուծոյ ընդ յարուցեալ մարմնոյն, եւ ածէ վաղվաղակի առաջի ատենին Քրիստոսի: 50 Եթե արդար հանդիպեսցի՝ մեծաւ գոհութեամբ գոհութիւն մատուցանէ առաջի Տեառն, եթե այս հոգի ուրախ արար զիս ի կեանս իւրում եւ յիշեցուցանէ նմա գամենայն արդարութիւնս իւր, զոր գործեալ իցէ նորա, ե՛ւ զտեղիսն, ե՛ւ զժամանակսն: 51 Եթե աղաւթս մատոյց ջերմեռանդն սրտիւ եւ արտասուաւք, եւ եթե պահս պնդութեան ի կերակրոց եւ յրմպելեաց, եւ եթե ողորմածութիւնս առ աղքատս կարատեալսն, եւ թե այլ ինչ մասունս բարեգործութեանց, զի գամենայն ինչ, զոր գործ գործեմք՝ մերձաւոր տեսող եւ բարի հրեշտակն է:

52 Իսկ եթե մեղաւոր եւ ամպարիշտ լինիցի՝ յոյժ գարովին, եւ ամբաստանութեան բանս գնմանէ խաւսեսցի հրեշտակն, թե այս անձն մեղաւք եւ անաւրէնութեամբ վարեաց զկեանս իւր, եւ տրտմութեամբ միշտ լցեալ լինեի առ սմա կալով: 53 Դնէ առաջի աչաց նորա զգործսն չարաչար եւ զբանս պղծալից, զոր խաւսեցաւ, եթե յորո՞ւմ տեղւոջ կամ յորո՞ւմ ժամանակի արարեալ իցէ, զի մի ուր աստ կայցէ, թե ո՛չ գիտեմ: 54 Այլ եւ զբեր նախախնամութիւն<sup>1</sup> Աստուծոյ, զոր ցուցեալ է առ նա, եւ նա ապերախտ գտաւ յամենայնի, եւ այս ամենայն լինի, զի յամենայնի արդար գտանին դատաստանքն Աստուծոյ, եւ մի՛ կարասցէ հակառակորդն ասել, եթե աչառանաւք ինչ եղեւ, այլ ի վերայ այսոցիկ յոյժ զարհուրելի եւ երկիւղ ահագին կա ե՛ւ լալոյ, ե՛ւ արտասուաց արժանաւոր: 55 Քան-

զի իբրեւ դատապարտին մեղաւորքն եւ դիւաց գունդն խաւսին, քանզի բազում լինին նոքա, որք ընդ սատանայի են, քան զարդարոցն դասքն, որ ընդ Քրիստոսի:

56 Ապա՝ յայնժամ համարձակութիւն տա Քրիստոս սատանայի վասն յանդիմանութեան իւրոյ՝ ասելով ընդդէմ Տեառն. «Եթե դու արարեր զսոսա ի սկզբանէ, եւ չարչարեցար վասն սոցա եւ խաչեցար, եւ թաղեցար, եւ եղբայրս անուանեցեր, եւ ժառանգորդ խոստացար լինել արքայութեան քում, զհետ քո՝ ո՛չ եկին, եւ ո՛չ լուան պատուիրանաց քոց, բայց ի սակաւուդ, որ են ընդ քեզ, իսկ ես ոչ խոստացա սոցա, այլ եւ բեր չարիս գտեալ են սոքա յինէն, քանզի անմահ եին ի դրախտին անդ, եւ մահկանացու արարի զսոսա խաբէութեամբ, ի լուսոյ՝ զխաւարն փոխանակեցի լինել սոցա, եւ յանապականութենէ՝ ապականացուս, եւ իմ՝ ո՛չ խաչեալ վասն սոցա եւ ո՛չ թաղեալ, եւ ոչ բարիս ինչ խոստացեալ, եւ զչարչարեալն ընդ իս, եւ զտանջանսն յաւիտենից, եւ, ահաւասիկ, զհետ իմ բազումք եկին, քան ընդ քո»:<sup>2</sup> 57 Եւ այսպիսի մեծաբանութեամբ բարբառի չարն՝ ընդդիմաբանելով ընդ Տեառն յաղագս չարեաց մերոց:

58 Ավա՛ղ, թշնամանացս՝ մանաւանդ քան զգեհնին տանջելն եւ առաւել են այս տանջանքս մեզ՝ թշնամւոյն Քրիստոսի նիւթ լինել ծուլութեամբ մերով, հայհոյել զԱրարիչն եւ զՏէրն վասն մեր: 59 Եւ իբրեւ նա այսպիսի իմն մեծաբանելով բարբառի ընդդէմ Աստուծոյ, նոյն ժամայն յառաջ մատուցեալ սրբոցն դասքն եւ ճգնաւորացն՝ խնդրեն վասն բազմադիմի չարչարանացն եւ նեղութեանցն, զոր կրեցին ի նմանէ յաշխարհի իրաւունս՝ յարդար դատաւորէն վասն նորա:

1 Գախախնամոցն ուղղ. Գախախնամութիւն

2 Լճճ. 33-բ՝ 6-11

60 Յայնժամ մինչ կան երկաքանչիւր կողմանքն առաջի նորա գողութեամբ՝ վճիռ ահագին սոսկալի հնչէ յաստուածային բերանոյ անտի՝ ասելով ընդդէմ ձախակողմեան դասուն. «Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից, զոր պատրաստեալ եմ սատանայի եւ հրեշտակաց նորա, զի ես ձեզ զկեանսն յաւիտենից պատրաստեցի եւ ընդ իս լինել յաւիտեան, եւ դուք զիս արհամարհեցիք եւ զպատուիրանս իմ, եւ զհետ սպանողին ձերոյ ընթացայք եւ զնորին կամսն կատարեցիք: 61 Արդ, որովհետեւ զնա սիրեցիք առաւել քան զիս, եւ յինէն փախեաք եւ զհետ նորա չոգայք, ընդ նմին՝ ընդ սիրելոյն ձեր երթայք ժառանգեցէք զնոցայ տանջանս, զոր պատրաստեալ եմ»:

62 Ապա եւ նոյն ժամայն ընդ աստուածային բարբառոյն գետ հրոյ յորդեալ ելանէ յաթոռոյ փառաց Աստուածութեանն, եւ իրրու զխու գաղծեալ առաջի յորդութեան ջուրց, այնպէս առաւել տանի գանհաւատսն եւ զամպարիշտն, եւ զմեղաւորսն ընդ սատանայի ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց եւ կրճել ատամանցն:

63 Այդ եւ հրեշտակք եւս մղեն, արկանեն զնոսա ի Հրատն մթին բորբոքեալ բոցոյն:

64 Քանզի եւ հրեշտակք, որ մարդասէրք են, այժմ ի բարկութիւն շարժին, յայնժամ եւ զի՞նչ է պատճառ ի բարկութիւն շարժելոյ զնոսա, այն, զի Տէրն իւրեանց բարկացեալ սրտամտութեամբ ի վերայ որդոցն անհաւանութեան: 65 Նոյնպէս եւ սուրբքն, որ աստ ողորմած են եւ բարեխաւսք, անդ՝ եւ ոչ բնաւ, քանզի փակի դուռն ողորմութեան ընդդէմ մեղաւորաց:

66 Այդ եւ ուրախանան արդարքն եւ ոտնահար լինին ի վերայ կորստեան սատանայի եւ կամարարաց նորա՝ ըստ մար-

գարեին, որ ասէ, թե. «Ուրախ եղիցի արդարն, յորժամ տեսցէ զհատուցումն իւր եւ զձեռս իւր լուսացէ յարեան մեղաւորաց»<sup>4</sup>:

67 Այդ անդ՝ է ողբումն եւ լալումն, եւ աշխարումն յոյժ ի միջի մեղաւորաց, եւ կոծումն անաւգուտ, եւ կրճումն ատամանց:

68 Յայնժամ կատարի տերունական հրամանն առ նոսա, որ վա՛յ տա այնոցիկ, որ աստէն փափկութեամբ եւ արբեցութեամբ եւ մարմնոյ ուրախութեամբ անցուցին զկեանս իւրեանց՝ ասելով. «Վա՛յ ձեզ մեծատանց, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: 69 Վա՛յ ձեզ, որ յագեալդ էք, զի քաղցիցիք յաստուածային կերակրոյ անտի արդարոցն: 70 Վա՛յ ձեզ, որ ծիծաղիքդ եւ ուրախանայք, զի լացլիք եւ ողբաալիք յաւիտեան»<sup>5</sup>, եւ այն իսկ են կարի աղէտք մեղաւորացն, զի անմխիթար ունին զսուքն իւրեանց: 71 Քանզի ոչ է որպէս այժմս, որ յորժամ ոք ի նեղութիւն անկանի, եւ ի ցաւս չարչարանաց՝ միւս ընդերն՝ եկեալ մերձ մխիթարէ զնա եւ սփոփէ, այլ՝ տանջանք, ոչ այսպէս, այլ անդ իւրաքանչիւր ոք զինքն միայն գիտէ ի տանջանսն, զի խաւարն շաւշափելի ծածկէ զտեսութիւն աչացն թեեւ ունիցի, այլ յաղագս սաստկութեան տանջանացն ամենայն ոք զիւր ցաւոցն կըսկիծ միայն հոգա, եւ ոչ՝ զընկերին:

72 Այլ ոչ ամենեքեան ի միում վայրի մեղաւորացն դասք եւ ոչ միով աւրինակաւ տանջին, այլ զանազան եւ պէս պէս, եւ յայլ եւ յայլ տեղիս, որպէս վերագոյն ասացաք, զի որպէս ի տանջաւր երկնաւորի աւթեւանք լուսոյ բազումք են, նոյնպէս եւ սատանայի ի դժոխս տանջանաւորնք խաւարի անթիւք են, զի յոյժ մերձաւորագոյնքն սատանայի եւ արբա-

<sup>4</sup> Հմմտ. Մատթ. ԻԵ 41-46  
<sup>5</sup> Հմմտ. Մատթ. Ը 12

<sup>4</sup> Սաղմ. ԵԷԼ 11  
<sup>5</sup> Պատմ. Գ 24-25  
 1 ընկերն ուղղ. ընկերն

նեակք նորա կռապաշտիցն դասքն են, մանաւանդ՝ թագաւորք նոցա եւ իշխանք, որ զսուրբան չարչարեցին, ընդ նմին ընդ սատանայի ի բուն ստորին յատակս դժոխոց դատապարտեսցին՝ Հանդերձ գիււաւք եւ կախարդաւք եւ նոցին նմանաւք:

73 Ապա եւս առաւել եւ նոքա, որ ժպրհեցան եւ զանզուգական անունն Աստուծոյ ի վերայ անձանց եղին եւ մոլորեցուցին զմարդիկք յերկրպագութիւն իւրեանց, ընդ նոսին եւ անհաւատիցն դասք:

74 Իսկ այնոքիկ, որք մեղաւք միայն ելին ի յաշխարհէս եւ զհաւատոյն դաւանութիւնն ունիցին յանձինս, նոքա ըստ ծանրութեան թեթեւութեան մեղացն կրեացեն եւ զտանջանսն: 75 Ոմանք հրով տանջեսցին անշիջանելեալ՝ որպէս մեծատունն այն, զի եւ նայ աստուածապաշտ էր, եւ զործս աստուածապաշտի ոչ ունէր: 76 Եւ ոմանք լոկ խաւար առանց հրոյ, կէսք՝ յարտաքին խաւարն, եւ ոմանք՝ ի ներքին: 77 Եւ այլք ի տարտարոսքն անկեալք, եւ կէսքն՝ ի գուրն խաւարին: 78 Ոմանք թաղեալք թանձրամած խաւարաւ բոլոր անձամբն իբրեւ կպրով, եւ այլք՝ ի նոյն խաւարն, բայց ծանծաղագոյն, քան զընդերն: 79 Ոմանք անբուն որդանցն մատնել իբրեւ աւձից, որք սնանին ի մէջ հրոյն՝ որպէս ձուկն ի ջուրն, եւ ուտեն զմարմին մեղաւորաց անծախապէս՝ որպէս չար գագանք, եւ կէսք՝ բանտից եւ կապանաց միայն մատնին:

80 Իսկ որ լեզուով մեղանչեն Աստուծոյ ստութեամբ կամ սուտ վկայութեամբ, կամ զրպարտութեամբ զընդերս, կամ երդմնահարութեամբ, կամ անասնախառ յիշոցիւք, կամ գուսանական երգով, կամ խեղկատակութեամբ, կամ այլով բանիւք բերանոյ, որով բարկանա Աստուած, այն-

պիսիքն ընդ այնմ լեզուոյ, որով մեղաւ կախի ի մէջ հրոյ բորբոքելոյ եւ տանջի յաւիտենական, եւ հանդիպի ոմանց՝ դարձեալ ոչ ի փառս լինել եւ ոչ ի տանջանս, վասն զի ոչ արարին մեղս եւ ոչ գործեցին զարդարութիւն, այլ որպէս միջոցն իմն եղեալ տանջանացն եւ փառացն, եւ այս յոլովագոյն անհաւատիցն պատահեսցին:

81 Անմեղ ծնեալ մանկունքն, որքան ինչ վախճանեսցին, եւ եթե բարի գործ ի նոսին գտցի՝ ոչ տանջին, վասն զի ոչ մեղան եւ ոչ փառս ընդունին, քանզի ոչ զգեցան ըզլոյս աւազանին, զի դատաստանն Աստուծոյ արդար են եւ ուղիղ: 82 Բայց ի վերայ այսր ամենայնի՝ յոյժ եւ ցաւագին կիրք տանջանաց այս են մեղաւորացն, զի զսատանայ եւ զգեւսն բնակակից ունին ընդ ինքեանս միշտ, յորմէ սոսկան եւ զարհուրին եւ զողան ի նոցա չար տեսութենէն, եւ յիրաւի իսկ: 83 Զի թե այժմ աստուածային նշանն եւ սուրբք ամենայն ի միջի մերում են եւ գիտեմք, զի առանց նորա հրամանացն ոչ կարէ մտանել յոք, մի ոմն ի մէջ բազմութեան մարդկան ըմբռնէ եւ լըլկէ եւ փրփրեցուցանէ եւ այլայլէ զկերպարանսն, զիտեմք, եթե ո՞րքան երկեւղ եւ զարհուրումն կրեն մերձակա տեսաւղք, ապա ո՞րչափ եւս յայնժամ ունին կրել թշուառականքն եւ ահ եւ զողումն եւ պակուցումն ի նորին դժնեա եւ չար տեսութենէն, մինչ Աստուծոյ ի ձեռաց թողեալ եւ սրբոց աւգնականութիւն բարձեալ եւ յիշատակ սուրբ ի մտաց մոռացեալ, ըստ այնմ, որ ասէ մարգարէն. «Մի՞թե ի դժոխս խոստովան առնիցեն ասքեզ, կամ ճանաչիցի ի խաւարի զսքանչելիս քո»<sup>բ</sup>:

84 Եւ արդ՝ այսքան բազմադիմի եւ բերբ, քան զսոյն տանջանք, քանի՞ արդեաւք ժամանակաց շրջագայութեամբ

<sup>ա</sup> ՏԵՆՈՐԱԼԻ Ժ 17-22

<sup>բ</sup> ՀԵՆՐԻԿ ԵՄԻՆ 18



չափիցի՝ հարիւր ամաւք, կամ հազար, կամ բեր, կամ հարիւր եւս հազար, եւ ո՛չ երբեք:

85 Այլ թեեւ յառաջին աւրէ անտի արարչութեան մինչ ի վերջին աւր կատարածին թուէր ոք, եւ որքան ի միջոցի անդ է. հազար ամացս, հոսեալ են ի վերուստ յերկնից շիտք անձրեւաց եւ տաղտարափ ձեան, եւ ոլոռունք կարկտի, եւ ըստ իւրաքանչիւր համարոյ սոցա՝ մի մի ամ տանջին մեղաւորքն ի գեհենի, եւ յետ այնորիկ ազատեին ի տանջանացն՝ երանելիք եին:

86 Քանզի սոցա կատարած գոյ, որ թեպէտ եւ անթվելիք կարծին, բայց այնմ ոչ եւս:

87 Քանզի յաւիտենական անուամբն երարձ Արարիչն զամենայն թիւ եւ զհամար ի յաւիտենիցն՝ ասելով. «Երթա՛յք ի հուրն», որ լուծանէ, այս անուն զորքանութիւն եւ զչափ թվոցն, եւ յայտ առնէ, թե որպէս Աստուած անվաղձան է, զի յաւիտենական է: 88 Այսպէս եւ նոքա ընդ նմին յերկրաձգին ընդ Աստուծոյ անմահութեամբն, եւ անապական եւ անմահ մարմնով եւ հոգևով՝ ի մահն յաւիտենական մնալով:

89 Եւ իբրեւ զայս ամենայն, զոր կարճառաւտիւ ասացաք, եւ այլ բերս, քան զսոյնս, հանդիպին հատուցմունք չարեաց, եւ խորխորատ կորստեան ձախակողմեան դասուն, եւ մաքրի երկիր ամենայն ի ձեռն յորդահոսան եւ հրեղէն գետոյն, որ տանի զմեղաւորսն եւ զգեւսն ի յանդունդս եւ սրբի երկիր ի պղծութենէ մեղաց եւ ի հնութենէ ապականութեան իւրոյ՝ ըստ պաւղոսեան բանին, որ ասէ. «Եթե եւ նոյնիսկ անշունչ արարածք հեծեն եւ երկնն մինչեւ ցայժմ՝ անկնկալեալք, զի ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան փառաց որդւոյն Աստուծոյ»<sup>7</sup>:

90 Յայնժամ լցցի մարգարէութիւնն Դաւթի, այն՝ զի ասէ. «Պակասեցին մեղաւորք յերկրէ եւ ամպարիչտք մի եւս գտցի ի սմայ»<sup>8</sup>, եւ թե. «Ուրախ եղիցի Տէրդ յարարածս իւր»<sup>9</sup>, զի այլ ոչ եւս տրտմեսցի վասն չարեաց մարդկան, որպէս երբեմն զի ասէր, եթե. «Զի զըղջացայ, զի ես արարի զմարդն»<sup>10</sup>: 91 Եւ դարձեալ, եթե. «Աղաղակ սողովմացւոց եւ գոմորացւոց ել յերկինս, եւ դարձեալ բարկացուցին զիս ի գործս իւրեանց»<sup>11</sup>: 92 Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր ի վերայ ժողովրդեան իւր:

93 Քանզի ո՛չ այլ աւձ պատրիչ, ո՛չ կին խարաւղ եւ ո՛չ սատանայ զաւրացեալ ի նոսա, այլ արդարութիւն եւ սրբութիւն եւ ուրախութիւն ի Հոգին Սուրբ եւ հարթայատակ դաշտածեւ փոփոխի երկիր: 94 Զուարթանա երկիր նորոգելով՝ իբրեւ ըզդրախտ Աստուծոյ զանազան գեղեցկութեամբ, եւ բառնին անէծք, որ վասն նախահաւրն Աղամայ փուշ եւ տատասկ հրամայեցաւ բուսանել, եւ փոխանակ փշոյն ծաղիկս վայելուչս եւ ծառս լուսասաղարթս բուսուցանէ անմահական եւ անապականաբար ունելով զպտուղս, ոչ աւղոց դառնութիւն եւ տարերց շրջագայութիւն, որ ի ձեռն լուսաւորացդ բերմանց, զի դադարումն իւրաքանչիւր ոք առցէ յիւրոցն սպասաւորութենէ:

95 Քանզի ոչ ոք կարաւտանայ այսոցիկ լուսաւորութեանց, որք եւ խաւարանան իսկ յայնժամ ոչ յիւրեանց լուսոյ, որք եւ առաւել լուսաւորին, զի նորոգիլ ասէ եւ նոցա: 96 Այլեւ վասն առաւելութեան լուսոցն եղելոցն, զի թե միոյ փոքու արդարոյ լոյս է՝ պատիկ, քան զարեգակն գեղեցիկ, ապա քանի՞ բիւր բելրոց ծագեն

<sup>7</sup> Հմմտ. Մատթ. ԻԵ 41  
<sup>8</sup> Հմմտ. Հւոմ. Բ՝ 22

<sup>9</sup> Տէ՛. Ստղ. ՃԳ 35  
<sup>10</sup> Տէ՛. Ստղ. ՃԳ 31  
<sup>11</sup> Հմմտ. Իսնդ. 9 6  
<sup>12</sup> Հմմտ. Իսնդ. ԺԲ 20

արեգակունք յայնժամ եւ զարդարոցն է ասել, կամ զանմարմնոցն հրեշտակացն լուսոյ, կամ զհրեղէն երկնիցն վերնոյ, որ աստանաւր փայլեն ճառագայթիւք՝ ի բառնալ ջրայարկ կամարացն հաստատութիւնն, ուր Երրորդութեանն առաջնոյ լուսոյ ճառագայթք հեղեալ ի ստորեւ, զի զամենեսեան զլուսաւորսն նսեմացուցանէ ըզկարծեցեալ ճաճանչս ճառագայթից եւ զարդարոցն բազմապատիկ լոյսն յինքեան միացուցանէ յիսկապէս լուսաւորութիւնն, եւ լինի նոքաւք մի՝ իբրեւ գլուխ միաւորելով զանգամս եկեղեցւոյ մարմնոյ իւրոյ ընդ ինքեանս:

97 Եւ յերիս բաժանի մասունս տեղի կայանից սրբոց Աստուծոյ ի միմեանց ըստ չափոյ եւ մաքրութեան իւրաքանչիւր ումեք, որպէս առակաւոր բան եցոյց Տէրն ի սերմանեացն առակի, զի. «Երեսնաւոր ասաց լինել զայսմն աշխարհի զվայելումն փոքոյ արդարոցն, եւ վաթսնաւոր՝ ըզդրախտին վայելչութիւնն, ուստի անկաւ նախահայրն»<sup>7</sup>: 98 Իսկ հարեւրաւ, որ զեւս վեհագոյն նոր երկնից ասի արքայութիւն, այնուհետեւ համբառնայ նովին փառաւքն, ուստի էջ դասիւք հրեշտակաց եւ կոչէ աստուածային բարբառովն ըզդասս հոգեղինացն վերանալ ընդ ինքեան՝ ասելով. «Եկայք, աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ ի սկզբանէ աշխարհի զարքայութիւն»<sup>8</sup> ըստ անսուտ խոստման իւրոյ, զոր ասաց, եթե. «Դարձեալ զամ եւ առնում զձեզ առ իս»<sup>9</sup>:

99 Յայնժամ ընտրեալքն եւ գերապայծառքն, որք հարիւրաւոր գործեցին յանձինս զսերմանել արդարութիւն, մանաւանդ՝ իմաստուն անուանե[ա]լ կուսանք<sup>10</sup>, այսինքն՝ սուրբ եւ մաքուր հարսունքն ընդ

նմա վերանան լուսափայլ ամպաւք եւ անցանեն գերագոյն հաստատութեանս, եւ ջրեղէն խորանացն, եւ իննեայ զասեան հրեշտակացն, անմարմնական կայենիցն, եւ մտանեն ընդ փեսային յառագաստ «ի վերինն Երուսաղէմ՝ ի վեր, քան զհրեղէն երկինն վերին, ի լեառն Սիովն, ի քաղաքն Աստուծոյ կենդանոյ, ի մայրն»<sup>11</sup> ասացեալ Պաւղոսի<sup>12</sup>, եւ նմանեաց նորա, որ են ոգիք կատարեալք անդրանկաց գրելոցն յերկինս, յայն քաղաքն, զոր ետես Յոհաննէս աւետարանիչն: 100 Ոչ որպէս են տեսանել ուրուք, կամ բանիւ նշանակեալ զանճառելին զայն վայր, այլ որպէս կարողութիւն է մարդոյ տեսանել եւ իմանալ, եւ ի դէմս ածել լսաւղաց մարմնական եւ թանճր ձեւով: 101 Զի պատմէ զայնմ քաղաքէն. «Ունել զրունս երկայն, որք են առաքելոցն դասք, եւ իւրաքանչիւր դուռն ի միոյ մարգարտի յարդարել՝ ցուցանելով զկարծութիւն հոգւոց եւ զմաքրութիւն նոցա: 102 Եւ հիմունք քաղաքին յերկոտասան ականց, ըստ վակասին Ահարովնի<sup>13</sup>, ընդելուզել ըստ երկոտասան ցեղիցն Իսրայիլի, եւ որ ի նմա ընտրեալք եւ մարգարէք, եւ պարիսպ եւ պատուար ի յոսկոյ սրբոյ, որ են ոգիք մաքուր յամենայն ազգաց ընտրելոցն Աստուծոյ: 103 Իսկ յախճապակի սառնակերպի նմանութեան ական բեր պլլաւրեղի, որ է յատուկ անմեղացն եւ պարզագունիցն, եւ տղայացելոցն ի Քրիստոս անձինք, եւ բնակիչ քաղաքին ամենայն սուրբք՝ ի նմանութիւն արեւու առաւառտուն ծագելոյ: 104 Իսկ կերակուր նոցա ոչ այլ ինչ, այլ գառն երկնաւոր, որ եբարձ զմեզս աշխարհի, որ է անապական եւ աստուածային բանին հաղորդութիւնն»<sup>14</sup>: 105 Վարդապետելով միշտ եւ ուսուցանելով իւրոց սիրե-

<sup>7</sup> Հմմտ. Մատթ. ԺԳ՝ 8

<sup>8</sup> Մատթ. ԻԵ՝ 34

<sup>9</sup> Յովհ. ԺԳ՝ 3

<sup>10</sup> Տէր. Մատթ. ԻԵ՝ 1-13

<sup>11</sup> Հմմտ. Եբր. ԺԲ՝ 22

<sup>12</sup> Տէր. Եբր. ԻԲ՝ 1-12

<sup>13</sup> Հմմտ. Յայտ. ԻԷ՝ 10-27, ԻԲ՝ 1-2

լիաց զանճառ հուծիւն ամենասուրբ Երրորդութիւնն, զոր աստ յայսմ աշխարհի ոչ կարացին մահկանացու մարմնով իմանալ, նաեւ Հաւր իսկ անճառելի եւ անհաս տեսութեանն արժանաւորին այնմ, զոր վկայէ աւետարանիչն. «զԱստուած ոչ ոք երբեք ետես, բայց Միածին Որդին, որ է ի ծոց Հաւր՝ նա պատմեաց մեզ»<sup>106</sup> Յայտ է, թե ոչ անմարմնական հուծիւնքն, որ յերկինս են, եւ ոչ այլ արարածական բնութիւն, այլ Որդի ի Հաւրէ, եւ Հայր յՈրդոյ միայն ճանաչի, որպէս ասաց Տէրն. «Եւ Հոգին է, որ քննէ զխորս Աստուծոյ»<sup>107</sup>:

107 Իսկ յայնժամ իւրոց ընտրելոցն՝ արդարեւ իսկ երջանկացն եւ մաքրագունիցն անճանց, ինքն՝ Որդին միջնորդեալ եւ դուռն ցուցանէ զՀայրն, ըստ որում ասաց. «Ոչ ոք գայ առ Հայր, եթե ոչ ինեւ, եւ ես եմ դուռն եւ ճանապարհ առ Հայրն, դայն տեսութիւն, որում ցանկայիք, գոնեա ընդ աղաւտ հրեշտակ տեսանել, թող թե ստորին ազգ մարդկան եւ լնուս յայնմն տեսութեանէն անասելի եւ անպատում գիտութեամբ»<sup>108</sup>:

108 Ըստ որում աւետեաց յառաջագոյն Տեառն առաքելոցն՝ ասելով, թե. «Յայնմ աւուր զիս ոչ հարցանիցէք, այլ ընդ Հայր յայտնապէս, զի ինքն իսկ Հայր՝ սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցիք»<sup>109</sup>, եւ թե դարձեալ. «Տեսանիցէք զիս, եւ ուրախ լիցին սիրտք ձեր, եւ զուրախութիւնն զայն ոչ ոք հանիցէ ի ձէնջ»<sup>110</sup>: 109 Եւ դարձեալ՝ եթե. «Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւնն, եւ ես ձեզ ասեմ եւ ուխտեմ, զի ուտիցէք եւ ըմպիցէք ընդ իս յարքայութեան իմում»<sup>111</sup>:

106 Յովհ. Է՛ 18

107 Հովհ. Է՛ Կ՝ 27

1 Քառի վերելում՝ ց-մ կրկնուած՝ մախորդի անկանոն գծագրութեան պատճառով:

108 Հովհ. Յովհ. Ժ՛ 6

109 Հովհ. Յովհ. Ժ՛ 9 23

110 Յովհ. Ժ՛ 9 22

111 Գ՛ 1-4 ԻԻ՛ 29-30

110 Եւ աղաւթելով առ Հայր փասն առաքելոցն՝ ասէր. «Հայր, կամիմ, զի ուր եսն իցեմ, եւ սոքա ընդ իս լինիցին, զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ունէի յառաջ, քան զլինելն աշխարհի առ ի քէն»<sup>111</sup>: 111 Այլ զի մի անյոյս լիցին եւ այլք ի մարդկանէ, որպէս թե անհնար է բաց յառաքելոցն այնմ տեղոյ արժանաւորիլ, երարձ զայս տարակուսութիւն յամենեցունց՝ ասելով, թե. «Ոչ վասն սոցա միայն աղաչեմ, այլեւ վասն ամենայն հաւատացելոց բանիւ նոցա յիս, զի լինիցին ամենեքեան մի, որպէս եւ մեք մի եմք՝ դու Հայր յիս, եւ ես՝ ի նոսա, զի եղիցին կատարեալք ի մի»<sup>112</sup>:

112 Եւ արդ, այսմ աւետարեր եւ ուրախարար խոստումս գերազանց է, քան զամենայն միտս եւ զխորհուրդս զհրեշտակաց եւ զմարդկան: 113 Եւ զի՞նչ ոք կարացէ զանդանաւր ուրախութեանցն ասել զկերպարան եւ հնչումն տաւնողացն հոգեւորական ընդ հրեշտակացն դասուցն դասակցութիւն եւ զուարճացելոցն՝ զանդադար գեղապարութիւն: 114 Քանզի յայնժամ եւ անմարմնոցն դասքն արժանաւորին ընդ մարմնաւորաց ազգի, այնմ դասու եւ կայանի, որպէս եւ ի տնաւրէնութիւնն Քրիստոսի եկեղեցեաւս ասի՝ իմանալ նոցա զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ:

115 Նոյն եւ յայնմ աւուր եւ ոչ միայն այս, այլ զառաւելութիւն փառացն ընդունին ի Տեառնէ հրեշտակք՝ իրրեւ փոխարէն սպասաւորութեամբն ընտրելոցն Աստուծոյ, եւ մանաւանդ զի յերկեղէ կարծեացն ազատանան, յորմէ զարհուրին միշտ, մի գուցէ նմանապէս անկելոցն յանցաւորութեամբ ինչ անկցի ի փառաց անտի: 116 Քանզի այնուհետեւ բառնի այսպիսի կարծիս երկեղի յամենեցունց, զի որում իրիք պատահիցի ոք՝ ի նմին է անփոփոխելի մին-

112 Յովհ. Ժ՛ 1: 24

113 Յովհ. Ժ՛ 1: 20-23

չեւ յաւիտեան, ըստ աստուծայնոյ բնութեանն մշտնջենաւորութեամբ՝ եթե ի փառս եւ եթե ի տանջանս:

117 Եւ արդ, զայս ամենայն գիտելով, հաւատացեալք Քրիստոսի, փութացար՝ Էք ամենեքեան՝ սուրբ պահել զանձինս յամենայն աղտեղութենէ մեղաց կամ վասն ահի տանջանացն գեհնին եւ կամ սիրոյ արքայութեանն: 118 Եւ եթե գլորեալ ոք իցէ ի մեղս, վաղվաղակի կանգնեսցի խոստովանութեամբ եւ ջերմեռանդ ապաշխարութեամբ, զի ի բաց է դուռն ողորմութեանն Աստուծոյ, որ ելանեմք ի մարմնոյ, իսկ յայն կեանսն երթալ՝ փակի ամենեւին ընդդէմ մեղաւորացն, որք աստ ոչ բացին մեծաւ զրդմամբ եւ արտասուաւք: 119 Վասն որոյ եւ մեք աղաղակեմք առ ամենեսեան՝ զզջանալ եւ դառնալ ի չար ճանապարհէն իւրաքանչիւր ումեք, եւ որ ոք դարձցի արժանապէս եւ ապաշխարիցէ ըստ Աստուածաշունչ զրոց՝ վկայեմք այնպիսոյն եւ երաշխաւոր առաջի Աստուծոյ եւ ընտրելոց հրեշտակաց նորա: 120 Զի եթե բեր ինչ մեղուցեալ իցէ Աստուծոյ, թողցի նմա յանցանք իւր եւ արժանի լիցի արդարոցն դասու յաջակողմեան ընտրելոցն:

121 Իսկ որք արհամարհեցին զպատուիրանս Աստուծոյ եւ կամաւ տան զանձինս ի կորուստ եւ ոչ լինին ունկնդիր հրամանաց մերոց բանիցս խրատու, զոր գրեցաք, եւ ոչ դառնան եւ ապաշխարեն, զի աղատեսցին ի պէս պէս գործոցն չարեաց, այլ յամառեալք կան ի նմին անդարձութեամբ՝ եթե յեկեղեցական դասուց իցեն եւ եթե ի ժողովրդականաց, մեք անպարտ եմք յատենին Քրիստոսի ի յարենէ այնպիսեացն վկայութեամբն Աստուծոյ եւ ամենայն սրբոց նորա, այլ «արիւն նորա ի գլուխ նորին եղիցի», զի մեք, զոր պարտն է առնել՝ արարաք: 122 Քանզի ոչինչ ծածկեցաք ի կա-

մացն Աստուծոյ եւ ի հանդերձեալ բարկութեանցն, որ գալոցն է ի վերայ մեղաւորաց, զոր ոչ եղաք գրով յիշատակաւ առաջի ձեր եւ ի մէնջ՝ յաղագս ձեր յառաջնորդացս եկեղեցւոյ, զասելն միայն պահանջէ Արարիչն եւ զյայտնապէս քարոզելն զպատուիրանս նորա, զոր եւ արարաք իսկ:

123 Իսկ առ ի ձէնջ խնդրէ զունկնդրութիւն եւ զհնազանդութիւնն եւ ըզկատարումն գործովն մերոց փոքու եւ զոյգն ասացելոց բանիցս, որ ի հրամանէ նորա գրեցաւ: 124 Քանզի դուք եք տեարք առնելոյն եւ ոչ առնելոյն, բարի գործելոյն եւ բարութեանցն հասանելոյ եւ ի չարեացն դառնալոյ, եւ տանջանացն փրկելոյ:

125 Այլ նոյն ինքն Աստուած Բանն՝ Հանդերձ Հարբ եւ ամենասուրբ Հոգւոյն, որ կամի զամենայն մարդկան զկեալն եւ ի գիտութիւն ճշմարտութեան նորա հասանելն, որ լոյս տա յինքենէ ամենայն մարդոյ, որ եկեալ է եւ գալոց է յաշխարհս, բացցէ զկափուցեալ աչս սրտից ձերոց եւ հալածեսցէ զխաւար տգիտութեան մեղաց յոգւոց ձերոց, եւ լուսաւորեսցէ աստուածային լուսովն զմիտս ձեր եւ զխորհուրդս, եւ լցուցէ Հոգւով իմաստութեամբ եւ գիտութեամբ զբովանդակ անձինս հաւատացելոցդ Աստուծոյ, եւ տացէ ոչ միայն զլսելն մերոյ ասացելոց բանիցս, որ ի խրատ ձեր սերմանեցաք, այլ եւ ի խորութիւն սրտից ձերոց արմատացուցանել եւ գործովք արդարութեան պտղաբերել ի փառս Քրիստոսի եւ ի պարծանս ինձ յաւուրն յետնում, որպէս զի եւ ինձ եղեցի համարձակութիւն ասել յաղագս ձեր յայնժամ. «Ահաւասիկ, ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած»<sup>բ</sup>, որոց լիցի ամենեցուն՝ Հովուաց եւ հաւտիցց լսել զերանաւետ ձայնն, եթե. «Եկա՛յք աւրհ-

ա Եղե. 1, 9, 4

բ Հմբ. Եղ. 18, Եբ. Ի 13

նեալք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատ-  
րաստեալն ձեզ զարքայութիւնն ի Քրիս-  
տոս Յիսուս՝ ի Տէր մեր»<sup>1</sup>»։ *նմա փառք եւ*

*զաւրութիւն, յերկնաւորաց եւ յերկրաւո-  
րացս ընդ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

### ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՀԱՆՂԵՐՁԵԱԼ ԳԱԼՈՒՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ<sup>1</sup>

(Տարբերակ)

1 Մերձեցաւ ժամանակն, յորում լինելոց  
է կատարած աշխարհի՝ եւ քննութիւն, եւ  
հատուցումն իւրաքանչիւր գործոց, եւ ար-  
ժան է հոգալ ամենայն ումեք, զի սպրեւ-  
ցուք ի բարկութենէն, որ գալոցն է ի վերայ  
որդւոցն անհաւանութեան: 2 Քանզի՝ յոյժ  
ողբոց եւ արտասուաց արժանաւոր վարկա-  
նիմք զայնպիսի անձն, որ յայնքան անպա-  
տում պարգեւացն՝ յաղագս փոքր վայելից  
կենացս եւ գարշելի մեղացն հեշտութեան՝  
վրիպիցի ի յայնպիսի բարեաց պարգեւացն  
խոստացելոց: 3 Կարծեմ թէ՛ եւ ոչ բան ամե-  
նայն բանականաց կարիցէ յանդիման կա-  
ցուցանել զրկումն յայնպիսի երանութեան:

4 Եւ զի՞նչ ասեմք, եթէ բանականք, ո՞ւր

թէ եւ ամենայն իսկ անբան կենդանիք եւ  
շունչ արարածք իմաստս բանի ընդու-  
նէին: 5 Եւ ի ձայն աղիողորմ աշխարանաց  
ողբային յաղագս միանձին մեղաւորի, որ  
հանդերձեալ է՝ զըրկիլ յայնպիսի անճառ  
բարեացն, զի չէ բաւական, զի՝ զի՞նչ կարէ  
ոք բանիւ նշանակել զայնր կենաց: 6 Զի  
«զոր ակն ո՛չ ետես, եւ ունկն ո՛չ լւաւ»<sup>2</sup>,  
եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զայն է  
պատրաստել Աստուած արդարոցն: 7 Զի  
թէ հրոյ գեհենին ակն ոչ ունէաք, եւ  
տանջեալն յաւիտենից ընդ սատանայի ոչ  
էր սպառնացեալ, բաւական էր առ ի տան-  
ջումն՝ զըրկեալն ի դասակցութենէ սրբոցն  
եւ անկանել յերեսացն Աստուծոյ:

– Ո՞րք. ԻԵ՝ 34

1 Աղբիւր. ՄՄ, 3839, 14ար:

2 Տէ՛ւ Ը՝ Ո՞րք. Ի՝ 9



**ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱՆՈՒ ԽՄԲԱԳՐԱԾ**

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**ՎԱՐՔ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ**

**ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ**

**ՃԳՆԱԶԳԵԱՅ ՎԿԱԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

**ՍՐԲՈՅՆ ՊԱՐՍԱՄՈՒ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ,**

**ՈՐ ԵՂԵՒ Ի ՄԻԶԱԳԵՏՍ ԱՍՈՐԻՈՅ**

**ՅԱՄՆ ԱՄՊԱՐԻՀՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ**

**ՄԱՐԿԻԱՆՈՍԻ**





## ՍՈՒՐԲ ԲԱՐՍԱՈՒՄԱՅ ՄԻԱՅՆԱԿԵԱՅԻ ՎԱՐՔԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ՝ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ասորերէնով պահպանուած մատենագրական յուշարձանների շարքում առանձնաշատուկ տեղ են գրաւում վարքերը, սրբախօսութիւնները, վկայաբանութիւնները, որոնցից մի քանիսը թարգմանուել են Հայերէն եւ լայն տարածում են գտել Հայ մատենագրական գրականութեան մէջ: Նման վկայաբանութիւններից է Ն. դարի ասորի յակոբիկ վանական Բարսաումայի վարքը<sup>1</sup>: Վարքում նկարագրուած է Բարսաումայի եւ նրա աշակերտների կեանքն ու գործունէութիւնը: Իրադարձութիւնները ծաւալուած են Քաղկեդոնի ժողովի (451 թ.) եւ դրան նախորդող շուրջ երկու տասնամեակների ընթացքում՝ Թէոդոսիոս Փոքր (408-450 թթ.) եւ Մարկիանոս (450-457 թթ.) կայսրերի օրօք<sup>2</sup>: Երկը պահպանուել է ինչպէս ասորերէն, այնպէս էլ Հայերէն, արաբերէն եւ գեեզով թարգմանութիւններով:

Բարսաուման վերին Եփրատի ափին գտնուող Սամոսատ քաղաքից էր: Մննդեան յստակ թուականն անյայտ է: Նրա կեանքի վերաբերեալ մեզ յայտնի իրադարձութիւնները թոյլ են տալիս ենթադրել, որ ծնուել է մօտ 384 թուականին: Մահացել է 458 թուականի փետրուարի 1-ին Մալաթիայի Հարաւ-արեւելքում գտնուող իր հիմնած վանքում: Աշակերտների ուղեկցութեամբ Բարսաուման ճանապարհորդել է աշխարհով մէկ՝ եղել է Կիպրոսում, Պետրայում, Կոստանդնուպոլիսում, մի քանի անգամ Երուսաղէմում՝ պայքար մղելով ոչ քրիստոնեաների՝ հրեաների, հեթանոսների, հերետիկոսների դէմ՝ դաւանափոխ անելով նրանց: Վարքում պատկերանում են Բարսաումայի առանձնակի դաժանութիւնները Հակառակորդների, այլադաւանների նկատմամբ: Ակնյայտ է դառնում, որ նա մեծ ազդեցութիւն է ունեցել ինչպէս Հասարակ բնակչութեան, այնպէս էլ ժամանակի հեղինակաւոր անձանց շրջանում:

Մասնակցելով Եփեսոսի տիեզերաժողովին (431 թ.), ապա նաեւ Քաղկեդոնի ժողովին՝ կտրականապէս դէմ է հանդէս եկել դրանց կայացրած որոշումներին: Այս կտրուկ դիրքորոշումը պատճառ է դարձել նրա նկատմամբ յարուցուած Հալաժանքների, որ շարունակուել են մինչեւ նրա կեանքի վերջը<sup>3</sup>:

Բարսաուման եղել եւ մնում է խիստ Հակասական եւ ուշագրաւ պատմական կերպար: Մինչ քաղկեդոնականները նրան համարել են հերետիկոս, բիրտ եւ դաժան գործիչ, ով նաեւ մասնակից էր Կոստանդնուպոլսի պատրիարք Փլաբիանոսի (446-449 թթ.) սպանութեանը, Հակաքաղկեդոնականները նրան մեծարել են որպէս սրբի:

1 Բարսաուման յայտնի է Հիւսիսարեւել, Սամոսատցի, Մելիտիենցի կամ Անտիոքացի անուններով: Ասորերէնից տառադարձած անունը հայերէն ձեռագրերում հանդիպում է Պարսամ, Պարսումայ, Պարսամայ, Բարսումա, Պարսամաւ, Բարսամոյ, Բարսամայ, Բարսամաւ, Պարսամոյ եւ այլ ձևերով: Այս յոդուածում օգտագործելու ենք առաւել տարածուած Բարսաումա ձևը, որը նաեւ ամենից մօտն է նախօրինակին: **ܒܪܫܘܡܝܐ** ասորերէնից բարգմանարար նշանակում է «պահի որդի»: Ինչպէս կտեսնենք հետագայում, նրան այս անունը տուել են սակաւապետ եւ համեստ կենցաղի, պահիւրի եւ ծոմապահութեան համար:

2 Lucas Van Rompay, «Barsawmo», in Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage: Electronic Edition, edited by Sebastian P. Brock, Aaron M. Butts, George A. Kiraz and Lucas Van Rompay (Gorgias Press, 2011; online ed. Beth Mardutho, 2018), <https://gedsh.bethmardutho.org/Barsawmo>.

3 Եփեսոսի եւ Քաղկեդոնի եկեղեցական ժողովներին Բարսաումայի մասնակցութեան, հակասութիւնների եւ դաւանաբանական խնդիրների մասին տե՛ս Assemanus, «Bibliotheca Orientalis», vol. 2: 295-6, նաեւ՝ Acerbi, Silvia, «Il potere dei monaci nei concili orientali del V secolo: il costantinopolitano Eutiche e il siro Bar Sauma», Studia historica / Historia antiqua 24 (2006): 291-313.

Վարքի պատմական ճշմարտացիութեանը պէտք է զգուշաւոր մօտենալ: Հեղինակը ներկայացրել է Բարսաուժայի իգելականացուած կերպարը՝ երբեմն խոտորելով պատմական իրողութիւններն անշեղօրէն փոխանցելուց: Բարսաուժան ներկայացուած է որպէս մենակեաց վանականի մտատիպար, որն օժտուած էր հրաշքներ գործելու կարողութեամբ, սակայն հարկ եղած դէպքում նաեւ խստագոյնս եւ դաժանաբար պատժուած էր, եւ այդ պատիժները հիմնականում կատարուած էին աստուածային համաձայնութեամբ, երբեմն էլ՝ միջամտութեամբ եւ կամքով՝ այսպիսով օրինակարգութիւն (լեզիտիմութիւն) տալով սրբի գործողութիւններին:

Բարսաուժայի վարքը հայերէն գրչագրերում ընդօրինակուել է մի քանի խմբագրութիւններով: Յիշատակարաններից յայտնի է դառնում, որ թարգմանելուց յետոյ այն փոփոխուել եւ խմբագրուել է ըստ հայոց լեզուի կանոնների ԺԲ. դարի հայ եկեղեցական գործիչ, աստուածաբան, 1166 թուականից Ամենայն հայոց կաթողիկոս Ներսէս Դ Կլայեցու (Ներսէս Ծնորհալի) կողմից: Պահպանելով բովանդակային եւ կառուցուածքային հիմնական առանձնայատկութիւնները՝ Ծնորհալին հաւանաբար խմբագրել է թարգմանութեան ասորաբանութիւնները թէ՛ բառապաշարում, թէ՛ շարահիւսական եւ ձեւաբանական կառոյցներում:

Ներսէս Ծնորհալի կաթողիկոսի խմբագրութեամբ շտկուած Բարսաուժայի վարքի հայերէն թարգմանութիւնը մեզ է հասել վեց ձեւագիր ընդօրինակութեամբ: Այդ խմբագրութեան հիման վրայ է կազմուած վարքի սոյն համեմատական բնագիրը:

Կառուցուածքային առումով վարքն ամբողջական է: Բովանդակութիւնը տրոհուած է առանձին դրուագների: Ներածական մուտքից յետոյ վարքում պատմուած է Բարսաուժայի մանկութեան մասին, երբ մահանում է նրա հայրը, իսկ մայրը կրկին ամուսնանում է: Բարսաուժան առաջին հրաշքները գործում է հէնց մանուկ հասակում:

Մնալով առանց հօր՝ Բարսաուժան որոշում է նուիրուել Աստուծոյ ծառայելու գործին: Ուխտագնացութիւն է կատարում Երուսաղէմ, որտեղից էլ գնում է Մեծ Հայք, Արարիա, Փիւնիկիա: Վերադառնալով՝ հեռանում է մարդկանցից եւ բնակուած մի քարանձաւում՝ վարելով ժուժկալ կեանք եւ յաճախ տանջելով իր մարմինը: Աստիճանաբար նրան են միանում այլ հաւատացեալներ, պատմուած է տեսիլքների եւ հրաշագործութիւնների, բժշկութեան, ծոմապահութեան եւ Երուսաղէմ այցելութիւնների մասին: Հրաշքների մէջ յատկապէս վառ են մի քանիսը, թէ ինչպէս են Բարսաուժայի բազմաթիւ աշակերտները, ունենալով միայն մէկ նկանակ, հրաշքով կերակրուած օրեր շարունակ, կամ՝ ինչպէս է լեզուի նմանութեամբ լոյս իջնում Բարսաուժայի բերանին եւ կամ արեգակը մայր մտնելու փոխարէն սպասում է, մինչեւ նա աշակերտների հետ շարունակի ճանապարհը եւ այլն:

Վարքագրութեան մէջ ընդգծուած է Բարսաուժայի բացասական վերաբերմունքը ոսկու, թանկարժէք իրերի եւ աշխարհիկ յարմարութիւնների, հաճոյքների նկատմամբ. նա բաւարարուած էր ամենահասարակ կերակուրով եւ հանդերձանքով՝ մերժելով ճոխութիւնը, հարստութիւնը եւ նուէրները:

Աստիճանաբար Բարսաուժան մեծ համբաւ եւ հեղինակութիւն է ձեռք բերում եւ շարունակ ճամփորդում է իր հետեւորդների հետ: Բոլոր թշնամիները, որ կանգնում են Բարսաուժայի ճանապարհին, ի վերջոյ ենթարկուած են Աստուծոյ դատաստանին եւ կրում դաժան պատիժներ:

Յայտնի է, որ նա նաեւ եկեղեցի է հիմնել, հաւանաբար Մալաթիայի շրջակայքում: Վարքում յատկապէս մանրամասն է նկարագրուած Բարսաուժայի եւ նրա հետեւորդների պայքարը հրեաների դէմ, որի արդիւնքում Երուսաղէմը մնում է քրիստոնէական քաղաք: Յիշատակուում է նաեւ Սիմէոն Սիւնակեացը, որը, ըստ վարքի, Բարսաուժային համարել է ժամանակի ամենաարդար մարդկանցից մէկը: Բարսաուժայն այնքան ազդեցիկ էր, որ կայսր Թէոդոսիոս Բ Փոքրը նրան առաջարկում է մեծ հարստութիւն, իսկ ապա՝ դառնալ Անտիոքի պատրիարք: Սակայն Բարսաուժայն մերժում է՝ ընդունելով միայն կայսեր մատանին: Վերջինիս հովանաւորչութեամբ Բարսաուժայն մասնակցում է Եփեսոսի տիեզերաժողովին: Թէոդոսիոսի մահից յետոյ Քաղկեդոնի ժողովը Բարսաուժային յայտարարում է հերետիկոս, եւ քաղկեդոնականները հետապնդումներ ու ոտնձգութիւններ են սանձագերծում նրա նկատմամբ: Վարքը շարունակուում է մինչեւ Բարսաուժայի մահը: Բարսաուժայն մահանում է Աստուծոյ նախախնամութեամբ հիւանդութեան պատճառով:

Ասորերէնից կատարուած վարքի հայերէն թարգմանութիւնը բնագրի բառացի պատճենումը է: Ասորերէն բնագրում հրաշքների նկարագրութիւնները եւ դրուագների թիւն աւելի մեծ է: Պատմութիւններից շատերը հայերէն թարգմանութեան մէջ բացակայում են, պահպանուել են դրանցից առաւել զարմանալիներն ու ազդեցիկները: Հայերէն թարգմանութեան մէջ սակայն կան մանրամասներ եւ յաւելումներ՝ սուրբգրային մէջբերումներով, աշխարհագրական տեղանունների մասնաւորեցումներ եւ յիշատակութիւններ, որոնք բացակայում են սկզբնաղբիւրում: Հայերէն թարգմանութեանը բնորոշ է նաեւ սաստկական բնութագրումների ներմուծումը Բարսաուժայի հակառակորդների մասին խօսելիս: Այսպէս՝ սկզբնաղբիւրում պատմուում է ինչ-որ կանանց մասին, որոնք եկել էին ծաղրելու Բարսաուժային: Հայերէնի խմբագիրը յստակ արտայայտում է իր դիրքորոշումը նրանց նկատմամբ եւ ընթերցողի մօտ բացասական վերաբերմունք բորբոքելու նպատակով՝ յաւելում. «Կանայք ոմանք լիտի եւ անզգամք, լրբենի կերպարանաւք»:

Հայերէն խմբագրութիւնում Բարսաուժայն պատկերանում է որպէս առաւել ներողամիտ գործիչ, մինչդեռ ասորականում նրա անյանդուրժողականութիւնը անհաւատների, այլադաւանների, նոյնիսկ կասկածողների նկատմամբ երբեմն հասնում է դաժանութեան: Այսպէս, երբ Բարսաուժայն անիծում է իր մօտ եկած մագիստրոսին, հայերէնում բաց է թողնուած ասորերէնում առկայ վերջաբանը, ըստ որի երանելին չի ներում մագիստրոսին եւ չի ազատում մահից նոյնիսկ վերջինիս կնոջ բազմաթիւ թախանձանքներից յետոյ:

Հրաշքները չեն դադարում անգամ Բարսաուժայի մահից յետոյ: Ասորերէնում յիշատակուում է երկնքից իջնող լոյսի մասին, որ գալիս է Բարսաուժայի վրայ, իսկ աւելի ուշ մէջբերում են Մարկիանոսի մահուան եւ սուրբ Յովհաննու տեսիլքը, այլ հրաշքներ: Հայերէն բնագիրը աւարտուում է լոյսի սքանչելիքի նկարագրութեամբ:

### Հայերէնով պահպանուած բնագրեր

Վարքագրութիւնը վկայուած է տասնեակ հայերէն ձեռագրերում: Ընդօրինակութիւնների առատութիւնը վկայում է, որ բնագիրը լայն տարածում է ունեցել: Հայերէնով մեզ

են հասել վարքի համառօտ եւ ընդարձակ մի քանի խմբագրութիւններ<sup>4</sup>: Դրանք պայմանականորէն կարել է բաժանել Զ. խմբի՝ հիմնուելով բովանդակութեան եւ շարադրանքի վրայ: Դրանցից ամենածաւալունը Շնորհալու խմբագրութեամբ մեզ հասած թարգմանութիւնն է (Ա խումբ), որն ընդօրինակուել է մեծամասամբ ճառընտիրներում եւ ոսկեփորիկներում՝ «Վարք եւ քաղաքավարութիւն երիցս երանեալ ճգնազգեաց վկային Քրիստոսի սրբոյն Պարսամու միայնակեցի, որ եղև ի Միջագետս Ասորոց յամս ամպարիշտ թագաւորին Մարկիանոսի» խորագրով: Ա խմբի բոլոր ձեռագրերն ամբողջական են, դրանք են.

1. Մաշտոցեան Մատենադարան, թիւ 1522, 465բ-482բ<sup>5</sup>: Ճառընտիր: Վայր՝ Յովհաննավանք: Ժամանակ՝ ԺԲ. դար:

2. Վեներտիկի Մխիթարեան Մատենադարան, թիւ 200 (հին թիւ՝ 17), 79ա-92բ<sup>6</sup>: Ճառընտիր: Վայր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանք կամ անապատ: Ժամանակ՝ 1224 թ.:

3. Մաշտոցեան Մատենադարան, թիւ 6196, 105բ-120ա<sup>7</sup>: Ճառընտիր: Վայր՝ Խլաթ, Խարձի անապատ: Ժամանակ՝ 1227 թ.:

4. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանք, թիւ 3152, 223բ-257ա<sup>8</sup>: Ճառընտիր: Վայր՝ Կաֆա, Ղրիմ: Ժամանակ՝ 1384 թ.:

5. Վեներտիկի Մխիթարեան Մատենադարան, թիւ 99 (հին թիւ՝ չկայ), 19բ-48բ<sup>9</sup>: Հաւաքածոյ: Վայր՝ Կ. Պոլիս: Ժամանակ՝ ԺԹ. դար:

6. Վեներտիկի Մխիթարեան Մատենադարան, թիւ 276 (հին թիւ՝ 1638), 25բ-53ա<sup>10</sup>: Ոսկեփորիկ: Վայր՝ Կ. Պոլիս: Ժամանակ՝ 1871:

Բնագրի այս ընդարձակ խմբագրութիւնը պարունակող ամենավաղ ձեռագիրն է ՄՄ, 1522-ը, որ թուագրւում է ԺԲ. դարով: Ձեռագրում պահպանուել է թարգմանութեան յիշատակարանը, ըստ որի վարքը ասորերէնից թարգմանուել է ԺԲ դարի առաջին կէսին Մալաթիայում Գրիգոր քահանայի ձեռքով, ապա՝ սրբագրուել եւ խմբագրուել Ներսէս Շնորհալու կողմից: Յիշատակարանը արտագրուել է նաեւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի թիւ 3152 ձեռագրում: Պէտք է յիշատակել նաեւ Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2680 ձեռագրի յիշատակարանը: Բոլոր երեք յիշատակարանները զետեղել ենք բնագրի վերջում:

Վարքի այս ընդարձակ խմբագրութիւնը պայմանականորէն բաժանել ենք հետեւեալ բովանդակային դրուագների.

4 Ձլփոթել Բարսումա եղեսացու վարքի հետ, որում ներկայացուած է Բարսումայի, Սարբիւրս (Շարբի) Բրմի եւ նրա Բոյր Բաւէասի պատմութիւնը Տրայիանոս կայսեր օրով (տե՛ս «Յայսմաւորեմ», Կ. Պոլիս, 1834, Մասն Բ, էջ 280-282 կամ «Լիակատար վարք եւ վկայարանութիւն Սրբոց», Վեներտիկ, Կ. Ս., էջ 371-385):

5 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», Կ. Երեւան, 2009, էջ 239-256:

6 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վեներտիկ», Կ. Բ., Վեներտիկ, 1924, էջ 1-36:

7 Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», Կ. Բ., Երեւան, 1970, էջ 276-278:

8 Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Կ. Թ., Երուսաղէմ, 1979, էջ 383-399:

9 Տե՛ս «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վեներտիկ», Վեներտիկ, 1895, էջ 368-370: Ձեռագրացուցակում ձեռագրի նկարագրութեան բաժնում կազմող Յակոբոս Տաշեանը կատարել է հետեւեալ նկատառումը. «Ընդարձակ այս Վարքն այլեւայլ հրաշքներու կոյտ մըն է, որ կը համաձայնին անոնց հետ՝ որ կը գտնուին Պարսումայի ասորական Վարուց մէջ: Վերջինս կը յիշէ Բար-Ներթոս (Խմմտ. նաեւ *Assemani*, *Bibl. Or.* II. 296) եւ Պարսումայի Սամուէլ աշակերտին կ'ընծայէ, եւ որուն համար կ'ըսէ թէ «ատաֆեցաւ ի Հայս ի վարդապետէն իւրմէ, որպէս պատմէ ինքն իսկ ի Ղե.րորդ սփանչելիս»: Մերինն այսչափ ընդարձակ չէ, եւ սակայն կրնայ նոյն ասորականէն համառօտուած ըլլալ»:

10 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վեներտիկ», Կ. Բ., Վեներտիկ, 1924, էջ 925-932:

1. Նախաբան
2. Յովսէփի մարգարէութիւնը
3. Բարսաուձայի մանկութիւնը, որբացում
4. Վայրի գազանների հարձակումը, առաջին հրաշքը
5. Փախուստ եւ հանդիպում Աբրահամի հետ
6. Առաջին ուխտագնացութիւնը Երուսաղէմ
7. Ճգնաւորի կեանք քարանձաւում
8. Մի փոքր նկանակ, որ յագեցնում է բոլորին 7 օր շարունակ
9. Լեզուի նմանութեամբ լոյսը, որ մտնում է Բարսաուձայի բերանը
10. Ձեռնադրութիւն
11. Արեւը մայր չի մտնում, մինչեւ կաւարտեն ճանապարհը
12. Հրեշտակի պատգամը, վէճի տակ մնացած տղայի փրկութիւնը
13. Երկրորդ ուղեւորութիւնը Երուսաղէմ
14. Միւնեակեացի տեսիլը Բարսաուձայի մասին
15. Անձրեւի հրաշքը, քաղաքի բնակիչները կրօնափոխ են լինում
16. Գիւղը, որտեղ Բարսաուձային ընդունում են հիւրասիրութեամբ, գինու լրման հրաշքը
17. Մի հրէական քաղաքի տաճարը եւ գողութիւն տաճարից
18. Ուղեւորութիւն Աֆամեա, հանդիպում Միւնակեացի հետ
19. Ամբարները հրաշքով լցւում են եւ կերակուրը բաւականացնում է եղբայրութեանը
20. Այգու պտուղները օրհնելու հրաշքը
21. Անզգամ կանայք, որ ծաղրում են երանելիին
22. Հիւանդը, որին Բարսաուձան բժշկում է օրհնեալ Հացով
23. Մալաթիայի եպիսկոպոս Ակակիոսի նամակը եւ հերթական հրաշքը
24. Ամուկ կինը, որ Բարսաուձայի օրհնութեամբ բժշկւում է
25. Յուրտ ձմեռը, տարածուած հիւանդութիւնը եւ Բարսաուձայի գործած հրաշքը
26. Հրաշք, որ երեւում է աշակերտներից մէկին
27. Եւտոկիան տեսնում է Բարսաուձայի հետ
28. Տղան, որ գուշակութիւններ էր անում
29. Ուղեւորութիւն Երուսաղէմ, հանդիպում Յակոբ անունով մի այրի հետ
30. Սամոսատի եպիսկոպոս Զաքարիան, հանդիպում Թէոդոսիոս Փոքրի հետ
31. Բարսաուձան հրաժարւում է դառնալ Անտիոքի պատրիարք
32. Կայսեր նամակը
33. Եփեսոսի տիեզերական ժողով
34. Թէոդոս Փոքրին փոխարինում է ամբարիշտ Մարկիանոսը
35. Քաղկեդոնի ժողովը
36. Մեռի(ս) եպիսկոպոսը
37. Մարկիանոսի սանձագերծած Հալածանքները
38. Բարսաուձան անիծում է մի մագիստրոսի
39. Մարկիանոսի սուրհանդակները, Բարսաուձան հեռանում է քաղաքից
40. Հրդեհ քաղաքում, բարեպաշտ կնոջ խնդրանքը եւ հրաշքը

41. Բարսաուաման նիկոմիդա քաղաքում, Մարկիանոսի հրամանը
42. Բարսաուաման անիծում է թագուհուն
43. Վերադարձ վանք, նոր բժշկութիւններ
44. Իշխանի բժշկուած որդու պատմութիւնը
45. Քաճանաների եւ եպիսկոպոսների ժողով
46. Կոշտացած ոտքերով եւ ձեռքերով մարդու պատմութիւնը
47. Կապաղովկիայից եկած մարդու բժշկումը
48. Բարսաուամային խորամանկօրէն սպանելու մտադրութիւնը
49. Բարսաուամայի քարկոծումը
50. Սպանութեան եւս մէկ փորձ եւ ձախողում
51. Կուրիս քաղաքի եպիսկոպոսի վախճանը
52. Բարսաուաման անիծում է Մարկիանոսին, վերադարձ վանք
53. Բարսաուամայի տեսիլը, հիւանդանալը եւ պատգամը աշակերտին
54. Հրեշտակի երեւումը եւ Բարսաուամայի մահը
55. Վերջին հրաչքը՝ լոյս սրբի գերեզմանին:

Էնդրիւ Պալմէրն առանձնացնում է ասորերէն վարքի 166 գլուխներ իրենց վերնագրերով, որոնք կարելի է դիտարկել վերոնշեալ շարքի հետ համեմատութեան մէջ<sup>11</sup>:

Հայերէնով պահպանուել են Բարսաուամայի վարքի ընդարձակ եւ համառօտ խմբագրութիւնների բազմաթիւ ընդօրինակութիւններ: Ստորեւ փորձել ենք միաւորել դրանք ըստ բովանդակութեան եւ կառուցուածքի:

Բ խմբի ձեռագրեր՝ ՄՄ, 84 (182բ-5ա), ՄՄ, 1511 (313ա-4բ), ՄՄ, 1661 (199բ-203ա), ՄՄ, 2711 (449բ-52ա):

Գ խմբի ձեռագրեր՝ ՄՄ, 2695 (24բ-5բ), ՄՄ, 7433 (219աբ):

Դ խմբի ձեռագրեր՝ ՄՄ, 993 (146ա-51ա), ՄՄ, 1523 (158բ-67ա), ՄՄ, 1524 (180բ-90ա), ՄՄ, 2680 (109ա-20բ), Վենետիկի Մխիթարեան Մատենադարան, 282 (հին թիւ՝ 916, 58ա-107բ), ՄՄ, 3787 (57բ-68ա):

Ե խմբի ձեռագրեր՝ ՄՄ, 992 (255ա-8բ):

Զ խմբի ձեռագրեր՝ ՄՄ, 1952 (163ա-72ա), ՄՄ, 4822 (144ա-52բ):

Վարքագրութիւնը տեղ է գտել նաեւ յայսմաւուրքներում, որտեղ պատմութիւններն ու հրաչքները թուարկուել են համառօտակի (տե՛ս օր. ՄՄ, 3658):

### Ասորերէնով պահպանուած բնագրեր

Բարսաուամայի ասորերէն վարքը կազմուած է առանձին բովանդակային գլուխներից, որոնցից իւրաքանչիւրում պատմուել է նրա գործողութիւնների, կատարած հրաչքների, ճամփորդութիւնների մասին: Գլուխները առանձնանում են « ԲՃԲ » (նշան, հրաչք) կամ որոշ ձեռագրերում՝ « ԲՃԲԳ » (բաժանում) բառերով եւ հերթական թուի ուղեկցութեամբ՝ « ԲՃԲ ԵԻԿԱ » (չորրորդ հրաչք): Որոշ ձեռագրերում տրուել է նաեւ գլխի վերնագիրը կարմի-

11 A. Palmer, «The Life of the Syrian Saint Barsauma», էջ 11-18.

րով (օր.՝ Aleppo SOAA 112Q եւ Church of the Forty Martyrs 256 *ձեռագրերում*), մինչդեռ միւսներում այն բացակայում է (օր.՝ Aleppo SOAA 61M):

Բարսաուժայի վարքն առանձնանում է ասորական վարքագրութիւնների շարքում. ի տարբերութիւն միւսների այն զգալիորէն ծաւալուն է եւ հանգամանալից, իսկ շարագրանքում առկայ են հրաշագործութեան տարրեր: Անսովոր մանրակրկիտ բովանդակային ընդգրկմանն անդրադարձ կայ հէնց աշխատանքի յիշատակարանում, որում նշում է, որ թէեւ վարքը շատ ծաւալուն ստացուեց, այնուամենայնիւ, բազում հրաշքներ մնացին չյիշատակուած<sup>12</sup>: Հետազոտողներ Պալմէրը եւ Մենցէն հնարաւոր են համարում, որ ասորերէն տեքստում տեղ գտած որոշ պատմութիւններ աւելացուել են հետագայ ընդօրինակողների կողմից<sup>13</sup>:

Ասորերէն վարքը պարունակող ձեռագրերն են.

1. London, BL Add. 14, 734 (f. 1v-173), 1085 թ., թերի
2. London, BL Add. 12, 174 (f. 1-18), 1197 թ., թերի
3. London, BL Add. 14, 732 (168v-214v), ԺԳ. դ., թերի
4. Aleppo, SOAA 112Q, ԺԳ.-ԺԴ. դդ., թերի
5. Aleppo, SOAA 61M (1v-97v), ԺԷ. դ., ամբողջական
6. Damascus, SO Patr. 12/17 (f. 89v-119v)<sup>14</sup>, ԺԲ. դ., ամբողջական
7. Church of the Forty Martyrs 256 (378-477), ԺԷ. դ., ամբողջական
8. Church of the Forty Martyrs 273 (25v-139v), Ի. դ., ամբողջական
9. Cambridge, Harvard Houghton Library, Syr. 36 (1-10, 83-118), ԺԶ.-ԺԷ. դդ., թերի
10. Birmingham, Selly Oak College Library, Coll. Mingana, Syr. 23015, ԺԹ. դ.?, պակասաւոր սկզբից եւ վերջից
11. Beyoğlu, Tarlabası (Istanbul) Ms 49/46 (*հնում՝* Diyarbakır, Tuma Başaranlar 27/26)<sup>10</sup>, 1599 թ., ամբողջական

Սրանց պէտք է գումարել նաեւ արաբերէն գարշունիով (ասորատառ արաբերէն) գրուած մեզ յայտնի միակ ձեռագիրը<sup>17</sup>: Այն թարգմանուել է Դամասկոսի պատրիարքարանի թիւ 12/17-12/18 ձեռագրից վանական Բիշարայի (Bishāra) կողմից:

Համաձայն ասորերէնով պահպանուած յիշատակարանի՝ վարքը հեղինակել է Բարսաուժայի աշակերտներից Սամուէլը, հետեւաբար ենթադրելի է, որ դրա ստեղծումը պէտք է թուագրել Ե. դարով: Սամուէլի (Շմուէլ) անունը պահպանուել է նաեւ ՄՄ, 2680 ձեռագրի յիշատակարանում<sup>18</sup>: Այս՝ առաջին հայեացքից ճշմարտանման պնդմանը իրաւացիորէն հակադրուել է էստոնացի նշանաւոր աստուածաբան, արեւելագէտ Արթուր

12 «The Wandering Holy Man», ed. by Johannes Hahn and Volker Menze, էջ 139.

13 «The Wandering Holy Man», ed. by Johannes Hahn and Volker Menze, էջ 9-10.

14 Դամասկոսի պատրիարքարանի թիւ 12/17 եւ 12/18 ձեռագրերը մի ամբողջական ձեռագրի երկու մասեր են:

15 Jeanne-Nicole Mellon Saint-Laurent et al., «Barsauma the Syrian (text) – ܒܪܫܘܡܐ ܨܘܪܝܐ» in Bibliotheca Hagiographica Syriaca Electronica last modified November 5, 2015, <http://syriaca.org/work/1073>. Mingana A., «Catalogue of the Syriac and Garshuni Manuscripts of the Mingana Collection», vol. I of Catalogue of the Mingana Collection of manuscripts (Cambridge, 1933).

16 Տե՛ս Andrew Palmer, «Editing a Syriac Hagiography: The Life of Barsawmo the Northerner», էջ 91.

17 Saint Mark's Monastery, Jerusalem MS 199A, fol. 224a-262b.

18 Տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԳ դդ.», կազմ. Ա. Ս. Մարտինյան, Երևան, 1988, էջ 156.

Վուբուսը: Նա հնարաւոր է համարում, որ վարքը գրուել է 550 թուականից յետոյ միայն<sup>19</sup>:

### Բնագրի կազմութեան սկզբունքները

Առաջին անգամ կազմելով Բարսաուժայի վարքագրութեան համեմատական բնագիրը՝ հիմք ենք ընդունել մեզ հասած ամենահին ընդօրինակութիւնը՝ ՄՄ, 1522 (ժԲ. դար): Որոշ բնագրային ընթերցումներ պարզելու, լրացումներ կատարելու համար դիմել ենք այլ ձեռագրերի օգնութեանը: Համեմատութեան համար նկատի են առնուել հետեւեալ ձեռագրերը.

A = Մաշտոցեան Մատենադարան, թիւ 1522

B = Վենետիկի Մխիթարեան Մատենադարան, թիւ 200 (հին թիւ 17<sup>20</sup>)

C = Մաշտոցեան Մատենադարան, թիւ 6196

D = Վիեննայի Մխիթարեան Մատենադարան, թիւ 99

E = Վենետիկի Մխիթարեան Մատենադարան, թիւ 276 (հին թիւ 1638<sup>21</sup>)

Ձեռագրերում հանդիպող կէտադրումն անբաւարար է: Օգտագործուած հիմնական տրոհիչներն են կէտը եւ վերջակէտը A ձեռագրում, ստորակէտը եւ վերջակէտը B եւ C ձեռագրերում: D եւ E ձեռագրերի կէտադրումն աւելի յագեցած է եւ մօտ ժամանակակից կէտադրման կանոններին:

Բնագիրը կազմելիս առաջնորդուել ենք հետեւեալ սկզբունքներով՝

ա) Հիմք ձեռագրում գրիչը չի տարբերակում «է» եւ «ե» տառերը: Բնագիրը կազմելիս վերականգնել ենք դրանց գրութիւնը համաձայն է-ե ձայնաւորների ուղղագրական կանոնների՝ տողատակում տալով տարբերակները:

բ) Բնագիրը կէտադրուել է ըստ ժամանակակից հայոց լեզուում ընդունուած կանոնների:

գ) Նկատի են առնուած A, B եւ C ձեռագրերում հանդիպող հետագայ ուղղումները եւ սրբագրումները:

դ) Կազմողը հիմք ձեռագրում կատարած լրացումները առել է ուղղանկիւն [ ] փակագծերի մէջ:

ե) Ձեռագրերում բաց թողնուած բառերը կամ տառերը փոխարինուել են երեք թեքագծերով ///: Այսպիսիք հանդիպում են B ձեռագրում:

զ) BC եւ առանձին DE ձեռագրերի տարբերակները յաճախ համընկում են, ինչը թոյլ է տալիս ճշտումներ կատարել զժուարընթեռնելի կամ վնասուած հատուածներում:

19 Տե՛ս Arthur Vööbus, «History of asceticism in the Syrian Orient», Vol. 2, CSCO 197, Subsidia Tomus 17, (Louvain, 1960), էջ 197-198.

20 Վենետիկի Մխիթարեան Մատենադարանի այս ձեռագիրը ֆայֆայուած եւ վնասուած է: Վնասուած հատուածները նորոգուած են նոր թղթով՝ ֆայֆայուած բնագրի ընթեռնելի գրութիւնների արտագրութեամբ:

21 Ծնորհակալութիւն եմ յայտնում հայր Վահան Յովակիմեանի եւ Վահան վարդապետ Օհանեանի եւ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնների վերոնշեալ ձեռագրերի համապատասխան էջերի բուային պատճենները տրամադրելու համար: Ծնորհակալ եմ նաեւ Մատենադարանի աշխատակից Յակոբ Քեոսեանի եւ աշակցութեան համար: Երոստաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագիրը, ցառօ՛, չեմ կարողացել ձեռք բերել եւ այն ներառուած չէ հետազոտութեան մէջ:



**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

**Բնագրերի հրատարակություններ և թարգմանություններ**

*Շնորհալու խմբագրություններ Բարսաուժայի վարքը առայսօր տպագրուած չէ: Յայտաւուրքներու մտիկ է գտել Բ խմբի ձեռագրերում հանդիպող բնագիրը.*

1. «Յայտաւուրք», Կ. Պոլիս, 1706-1708թ. էջ 493-495:
2. «Յայտաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ դճխթ-դճծա:
3. «Յայտաւուրք», Կ. Պոլիս, 1706, էջ դճկ-դճկբ:

*Հայերէնով վարքի մի համառօտում ֆրանսերէն թարգմանութեամբ տպագրուել է Տէր Իսրայէլի յայտաւուրքում.*

4. G. BAYAN, «Le Synaxaire arménien de Ter Israël», Patrologia Orientalis, Vol. 6 (1925), էջ 128-129:

*François Nau-ը հրատարակել է ամփոփ վերլուծութեամբ վարքի ասորերէն որոշ հատուածներ՝ ֆրանսերէն թարգմանութեամբ՝ հիմնուելով Բրիտանական թանգարանի 3 ձեռագրերի վրայ.*

5. F. Nau, «Résumé de monographies syriaques» Revue de l’Orient chrétien II, 8 [18] (1913): 270-276, 379-389; 19 (1914): 113-134, 278-289, 414-440.

*Հետազօտող էնդրիւ Պալմէրը նշում է, որ գոյութիւն է ունեցել վարքի ֆրանսերէն մի թարգմանութիւն, որը, սակայն, եղել է սխալներով, վրիպակներով<sup>22</sup>: Պալմէրի աշխատասիրութեամբ երկու անգամ տպագրուել է Բարսաուժայի ամբողջական վարքի անգլերէն թարգմանութիւնը՝ հիմնուած Դամասկոսի պատրիարքարանի թիւ 12/17 ձեռագրի վրայ.*

6. «The Wandering Holy Man: The Life of Barsauma, Christian Asceticism, and Religious Conflict in Late Antique Palestine», ed. by Johannes Hahn and Volker Menze, Transformation of the Classical Heritage vol. 60, (University of California Press, 2020), pp. 187-271.

7. «The Life of the Syrian Saint Barsauma: Eulogy of a Hero of the Resistance to the Council of Chalcedon», translated by Andrew N. Palmer, Transformation of the Classical Heritage vol. 61 (University of California Press, 2020).

*1900-ականների սկզբներին Եթովպիայում լոյս է տեսնում գեեզով գրուած և ֆրանսերէն թարգմանութեամբ ուղեկցուող վարքի մի տարբերակ, որ բաւականին հեռացուած է ե՛լ ասորերէնից, ե՛լ հայերէնից.*

8. Grébaud, Sylvain, «Vie de Barsoma le Syrien», Revue de l’Orient chrétien 13 (1908): 337-345; 15 (1909), 135-142, 264-275, 401-414.

*1721 թ. տպագրուել է վարքի արաբերէն համառօտումը լատիներէն թարգմանութեամբ, որն օգտագործում էին դպտիները ծիսակատարութիւնների ժամանակ.*

9. Joseph Simonius Assemanus, «Bibliotheca Orientalis Clementino-Vaticana», vol. 2, De scriptoribus Syris monophysitis (Rome, 1721), 1–8.

**Գրականութեան ցանկ**

1. **Անասեան Թ. Ա.**, «Հայկական Մատենագիտութիւն Ե-ԺԸ դդ.», Կ. Բ, Երեւան, 1976, էջ 1437–1441:

22 Palmer, «Editing a Syriac Hagiography. The life of Barsawmo the Northerner», էջ 89.

2. «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.», կազմ.՝ Մաթեոսեան Ա. Ա., Երևան, 1988), էջ 156:
3. «The Wandering Holy Man: The Life of Barsauma, Christian Asceticism, and Religious Conflict in Late Antique Palestine», ed. by Johannes Hahn and Volker Menze, *Transformation of the Classical Heritage*, vol. 60 (University of California Press, 2020).
«բազմատեանջ» (*Ընդարձակում՝ չիք*), *Հմմտ.* ὧ πολυπόθητα τέκνα (*Crysost. In Ioannem*, PG 59, 61.44),

«անփոխադրելի բարուցն» (*Ընդարձակում կայ*), *Հմմտ.* τὴν τῆς ψυχῆς αὐτοῦ ἀμετάθετον γνῶμην (*Crysost. In Zacchaeum publicanum [Sp.]*, PG 61, 768.65),

«հրեշտակաց պարակցութեանն» (*Ընդարձակում կայ*), *Հմմտ.* ἀγγέλων εἶ συγχορευτῆς (*Chrysost. In Matthaеum*, Vol 57, 277.37), ἄγγελοι συγχορεύουσιν ἀνθρώποις (*Chrysost. Eclogae [Sp.]*, PG 63, 821.56),

«անյուսալի» (*Ընդարձակում կայ*), *Հմմտ.* ἀνέλπιστα γὰρ ἦν πάντα (*Chrysost. In Acta apostolorum*, PG 60, 371.54),

«զսկզբնաչարն Բելիար» (*Ընդարձակում կայ*), *Հմմտ.* ὁ ἀρχέκακος δαίμων (*Chrysost. Ad eos qui scandalizati sunt Chapter 13, section 18.5*),

«մարմնագգեստ» (*Ընդարձակում չիք*), *Հմմտ.* σαρκοφορήσας (*Chrysos., In illud: Homo quidam descendebat [Sp.]* PG 61, 756.62),

«տարածածանջ» (*Ընդարձակում չիք*), *Հմմտ.* τὸ διαυγές πῦρ (*Chrysost. Expositiones in Psalmos* PG 55, 243.62),

«նախամարգեալ» (*Ընդարձակում չիք*), *Հմմտ.* τὸ... προγυμναζόμενον (*Chrysost. In natale sancti Joannis prophetae [Sp.]* PG 61, 759.60),

«Քրիստոսի ժառանգակից» (*Ընդարձակում կայ*), *Հմմտ.* συγκληρονόμους Χριστοῦ (*Chrysost. In ascensionem [Sp.]* PG 52, 794.60),

«Ենովս հաճոյ եղեալ Աստուծոյ՝ փոխեցաւ, իսկ դու զհոգւոյդ տաղաւար ի բարձունս ի խոնարհէ աստի փոխադրեցեր յերկինս» (*Ընդարձակում սա վերագրուած է Ենովբին*), *Հմմտ.* Καὶ εὐηρέστησεν Ἐνὼχ τῷ Θεῷ, καὶ οὐχ εὕρισκετο, διότι μετέθηκεν αὐτὸν ὁ Θεός (*Chrysost. In Genesim*, PG 53, 179.62)

14. "Jean Chrysostome, Homélie sur Ozias", Ed. J. Dumortier, Paris: Cerf, 1981; *Sources chrétiennes* 277, Homily 1, section 1.34.

«անյիշաչարութեամբ» (Ընդարձակում կայ), Հմմտ. ἀμνησικακία (Chrysost. In Acta apostolorum PG 60, 262.34),

«աստուածատես Հայր» (Ընդարձակում կայ), Հմմտ. ὁ θεόπτης Μωϋσῆς (Chrysost. In Genesim (sermo 3) [Sp.] PG 56, 528.60):

Իսկ «զաստուածագիծ տախտակս ընկալար» (Հմմտ. Ընդարձակում՝ «զաստուածագիծ աւրինացն ընկալար գտախտակս») զուգահեռ է գտնում Գրիգոր Նազիանզացու մօտ՝ Πρὸς νόμον Θεοῦ παρατάσσει, πρὸς Πρὸς νόμον Θεοῦ παρατάσσει, πρὸς πλάκας θεοχαράκτους (Greg. Naz. In Machab. (orat. 15), PG 35, 921.9): Հմմտ. Նազ. Ի մակար. «Ընդ օրէնս աստուծոյ մատչիս, ընդ տախտակս աստուածագիծս» (տե՛ս ՆԲՀԼ, «աստուածագիծ» բառա-յօդուածը):

Սուրբգրային մէջբերումները հիմնականում համապատասխանում են Աստուածաշնչի Հայերէն ընկալեալ բնագրին, բացառութեամբ մէկ օրինակի, որում մէջբերումը՝ «Յո՛յց ինձ, ասէ, զերեսս քո, լսելի արա ինձ զձայն քո, զի ձայն քո քաղցր է, եւ տեսութիւն քո զեղեցիկ», տարբերում է Երգ երգոցի համապատասխան հատուածից. «Երեւեցո՛ ինձ զերեսս քո եւ լսելի արա ինձ զբարբառ քո, զի բարբառ քո քաղցր է, եւ տեսիլ քո զեղեցիկ» (Բ՝ 14): Իմաստը նոյնն է, եւ հատուածները թւում են նոյն սկզբնագրի երկու անկախ թարգմանութիւն:

Ներբողի՝ Ներսէս Ծնորհալու խմբագրած բնագիրը հրատարակելիս համեմատել ենք հետեւեալ ձեռագրերն ու տպագրերը՝

A = ՄՄ 993, 1456 թ., 379բ-388բ,

B = ՄՄ 2909, 1687 թ., 122ա-129բ,

C = ՄՄ 1324, 1281 թ., 339աբ՝ խիստ թերի,

D = Տպ. 1734 – Ներբողեանք ասացեալ այրն Աստուծոյ Ոհան օսկերբան Ապաշխարութեան Վարդապետն, ի վերայ Արքոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ..., Կ. Պոլիս, ՌՃԶԳ (1734),

E = Տպ. 1878 – Յովհաննու Ոսկերբանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց եւ նահատակութեան Արքոյն Գրիգոր Հայոց Մեծաց Հայրապետի, Վենետիկ, 1878:

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ<sup>1</sup> ՅՈՎՅԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԼԻՍԻ  
 ԵՊԻՍԿՈՊՈՍԻ<sup>2</sup> ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԱՐՍ ԵՒ Ի  
 ՆԱՅԱՏԱԿՈՒԹԻՒՆ<sup>3</sup> ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՅԱՅՈՑ ՄԵԾԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ  
 ԼՈՒՍԱԲՈՐԶԻ<sup>4</sup> Ի ԿՈԿԻՍՈՆ ՅԱՅՈՑ ՄԻՆՉ ՅԱՔՍՈՐՍՆ<sup>5</sup> ԵՐ<sup>6</sup> Ի ԽՆԴՐՈՅ  
 ՀԱՅԱԶԻՆ<sup>7</sup> ՈՒՐՈՒՄՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՄԱԶԳԻ<sup>8</sup> ՆՈՐԻՆ  
 ԴԵՈՍԿՈՐՈՍ ԱՆՈՒՆ ԿՈՉԵՑԵԱԼ<sup>9</sup> ԵՒ ԱՅԼ ԵՒՍ ՅՈԳՆԱԽՈՒՄԲ  
 ԲԱԶՄՈՒԹԵԱՆՆ<sup>10</sup>, ՈՐՔ ԺՈՂՈՎԵԱԼ ԷԻՆ ՅԱԲՈՒՐ<sup>11</sup> ՅԻՇԱՏԱԿԻ  
 ՄԵԾԱՅՈՉԱԿ ՏԱԲԻ<sup>12</sup> ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԲՈՐԶԻՆ ԱՐԵԲԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ<sup>13</sup>

1 Հրաշալի է մեզ տաւնս այսաւր եւ պայծառագոյն քան զսովորականն<sup>14</sup> շարադրութիւնս: 2 Եւ զի՞նչ իցէ պատճառ, կամ ո՞ր<sup>15</sup> արդեւք կոչնատէր բազմահոյլ հանդիսիս: 3 Ո՞ր այլ ոք քան եթէ յոգնեւրանեան<sup>16</sup> հայրն մեր եւ մեծ խոստովանողն, զորոյ այսաւր կատարեմք գլխատակս<sup>17</sup>: 4 Որով<sup>18</sup> առ նորայն արիական քաջութեանցն պատմութիւն<sup>19</sup> զմիտս եւ զխորհուրդս հանդերձ ամենայն զգայաւրանաւք մաքրեսցուք, թերեւս արժանի լինիցիմք՝ ընդունելով<sup>20</sup> ի Հոգւոյն բան իմաստութեան, մասնաւորաբար՝ զերանել-

ւոյն<sup>21</sup> պատմել զառաքինութիւն: 5 Ոչ նորա կարաւտ գոյով մարդկայինս բարեբանութեան յառաւելութիւն ինչ<sup>22</sup> պատուոյ եւ փառաց, այլ մեք մանաւանդ կարաւտիմք առ ի նմանէն բարեխաւսութեան, որքան<sup>23</sup> տակաւին եւս տաղաւարիմք ի մարմնի: 6 Որոյ<sup>24</sup> առիթ մխիթարութեան է եւ բարեբանելն միայն<sup>25</sup> զբազմավիշտ նահատակն<sup>26</sup>, այլ<sup>27</sup> նախանձաւոր եւս լինել կարեւոր է հրեշտականման վարուց նորին եւ<sup>28</sup> առաքինութեան, թէպէտ եւ անկարելի գոյով ըստ համեմատութեան:

7 Զի ո՞վ ոք ի հողեղինաց այնչափ անհանդուրժելի կրից չարչարանաց տեւել կարացէ. զոր ոչ եւ ի հարցն առաջնոց եւ<sup>29</sup> նահապետացն, եւ կամ<sup>30</sup> որք զկնի տնաւրինական<sup>31</sup> չարչարանաց<sup>32</sup> նորա հետեւեցին ճգնաւորք եւ վկայք, զայն<sup>33</sup> կրեաց ոք<sup>34</sup>:

1 D + սրբոյն  
 2 E Յովհաննու... Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի  
 3 EDB յաղագս վարուց եւ նահատակութեան  
 4 ED չի՞ր  
 5 BE յախորանս  
 6 A չի՞ր ի կոկիսոն հայոց մինչ յախորան էր  
 7 B հարազատի  
 8 D համազգոյ փ/ս եւ վարդապետի համազգի  
 9 ED կոչեցողոյ  
 10 B բազմութիւն բազմութեան  
 11 D յաւուր տ նի  
 12 E որումն... համազգիոյ... դիտակորոս... կոչեցելոյ... յօգնախումբ բազմութեան... տօնի նորին B տօնի նորին D նորին փ/ս տաւնի  
 13 C չի՞ր վերնագիր  
 14 DCB գտովորական  
 15 DE ո՞վ  
 16 DE յոնեւրանեան  
 17 DE գլխատակ  
 18 DE որ  
 19 D պատմութեանցն քաջութիւն  
 20 D ընդունիլ

21 E գերանելոյ հօրն D գերանելոյն հօրն B գերանելի հօրն  
 22 A չի՞ր  
 23 D որք  
 24 D որոց  
 25 D չի՞ր  
 26 A նահատակին  
 27 ED + եւ  
 28 ED չի՞ր  
 29 E չի՞ր B + ի  
 30 B սրբոց փ/ս եւ կամ  
 31 DE տնօրէնութեան փրկչին  
 32 B չարչարանաց տնօրէնութեանն  
 33 B չի՞ր  
 34 D չի՞ր գայն եւ կրեաց ոք E չի՞ր



8 Սակայն մեք<sup>1</sup> ըստ կարողութեան մերում<sup>2</sup> յաւժարական սիրով<sup>3</sup> գովասանական<sup>4</sup> հաւրն կցորդութիւն բերելով՝ մատիցուք ի բանս: 9 Ըստ ասելոյ<sup>5</sup> ումեմն իմաստնոյ, եթէ «Յիշատակ արդարոյն Հանդերձ գովութեամբ»<sup>6</sup>: եւ ի գովութիւնս արդարոց ցնծան ժողովուրդք՝ ոչ ի փառս ինչ առաւելու<sup>6</sup> նոցա, այլ բարբաւնողացս մեզ<sup>7</sup> բազումս ընծեուել մեզ<sup>8</sup> շահս:

10 Եւ արդ, քանզի այսաւր աստուածազգեաց հայրն մեր՝ հոգեւոր հովիւ եւ վկայն, յեղծանելի կենաց աստի յերջանիկն արդարեւ փոխադրեցաւ ի կեանս, ուր անպատում ուրախութիւն է եւ անհպելի լոյսն, ուր բիւրք հրեշտակացն են եւ անդրանկացն բանակք, ուր առաքելոցն աթոռքն են եւ մագարէիցն տեսարանք<sup>9</sup>, ուր գաւազանք նահապետացն են եւ պսակք մարտիրոսացն, ուր վերինն Երուսաղէմ է եւ անսպառ խաղաղութիւնն<sup>10</sup>, ուր ժողովարան<sup>11</sup> սրբոցն է եւ արդարոցն բնակութիւնք<sup>12</sup>:

11 Արդ<sup>13</sup>, զի՞նչ արասցուք<sup>14</sup> թշուառելի<sup>15</sup> վշտաւք շրջապատեալքս<sup>16</sup>: 12 Քանզի ոչ գտանեմք բան<sup>17</sup> արժանաւոր, որով զարժանին գովութեան բարեբանեացուք:

13 Եւ զի՞նչ, ապաքէն լուսոցո՞ւք: 14 Եւ է՞ր վասն հաղիսացաք յայսմ վայրի: 15 Այլ ասեմք, եթէ վասն զի ոչ կարացաք բանիւ<sup>18</sup> հաւասարել զմեծութիւն գործոյն, եւ նորին աղագաւ առաւել եւս պարտ եւ արժանի էր խաւսել:

16 Քանզի եւ այս ի մեծագունից գովութեանց է՝ ոչ կարել զառաւելութիւն իրին՝ ցուցանել բանիւ<sup>19</sup> զուզական, զի յորժամ ի վեր քան զբնութիւնս իրին ուղղութիւնքն, քաջայայտ իսկ է, թէ եւ<sup>20</sup> անդր քան զմարդկային մտածութիւնս գերամբառնան<sup>21</sup> գովասանութիւնքն: 17 Բայց ոչ առնէ անտես երանելիս զմեաւք եւ ոչ ի բաց մերժէ զաղքատիմաց մերս բան, այլ ըստ նմանութեան Փրկչին հասարակաց գսակաւագոյն<sup>22</sup> ընծայս, որ ի մէնջ, մեծ իմն<sup>23</sup> համարի, եւ բիւրապատիկ փոխաբէնս ընդ փոքունցն հատուցանէ:

18 Քանզի ոչ յառաւելութիւն<sup>24</sup> իրացն, այլ յառատութիւն<sup>25</sup> մտացն եւեթ հայի վասն որոյ թէպէտ եւ յոյժ նուազագոյնք են մերքս, սակայն յորոց ճոխանամքս, առատագոյնս<sup>26</sup> մատուցանեմք: 19 Զի եւ Աստուծոյ սիրելիքն ըստ կարողութեան պահանջեն: 20 Նա եւ այսու առաւել եւս ճանաչի հանդէս մեծախոհութեան նորա<sup>27</sup>, ոչ ի բաց մերժել զզուզնաքեայ ընծայաբերութիւնս<sup>28</sup> ի տկար մարմնոյ եւ<sup>29</sup> բազմազիմի վշտաւք պաշարեալ անձնէ, այլ ընկալեալ ի մէնջ զգովասանութիւնս բա-

1 E միայն փխ սակայն մեք  
2 E + եւ DB մերոյ  
3 D սիրոյ  
4 E + եւ DB գովասանութեան  
5 DE չի՞ր  
6 Ըստ վճիռ  
6 E առավելով  
7 B չի՞ր  
8 DE բազում այսու ընծեուել (D ընծեուել) փխ բազումս ընծեուել մեզ  
9 E տեսարանք  
10 E ուրախութիւն  
11 E ժողով D ժողով  
12 E բնակութիւն A չի՞ր ուր ժողովարան սրբոցն է եւ արդարոցն բնակութիւն  
13 B եւ արդ մեք DE բայց մեք  
14 BDE + այսման  
15 B բշտաւագեայ DE բշտաւագեայ  
16 DE շրջապատեալ  
17 DB գտանեմք E գտանիմք

18 E բանի B յայսմ բանի  
19 DE բանի ցուցանել  
20 DE չի՞ր  
21 DE վերամբառնան  
22 B գսակաւ  
23 B մեծարիմն  
24 E առ առաւելութիւն B առաւելութիւն  
25 E առ առատութիւն B առատութիւն D յառաւելութիւն  
26 DE առատ  
27 D սորա  
28 D + եւ  
29 B + ի

նիւ<sup>1</sup>, որում ոչ երբէք կարաւ տանայ, հատուցանէ<sup>2</sup> փոխարէնս գործովք, որոց յոյժ մանաւանդ կարաւ տիմք եւ պիտոյանամք:

21 Բեր այսուհետեւ զխոստմանն հատուցուք տոկոսիս՝ սկիզբն առնելով առաջակայ բանիս<sup>3</sup>, բայց ոչ գիտեմ, եթէ զորս յուղղութեանց առն<sup>4</sup> յիշատակեցից՝ զարիակա՞ն մրցմունսն<sup>5</sup> յասպարիզին, թէ՞ զարեան<sup>6</sup> չափ ժուժկալութիւնն զանազան տանջանաւք, զընթացս նահատակութեանն, թէ՞ զբազմամեայ համբերութիւնն անբերելի նեղութեանցն ի խոր վիրապին, զառաքելակա՞ն քարոզութիւնն, թէ՞ զշնորհս մարգարէութեանն, զհովուակա՞ն վերակացութիւնն, թէ՞ զանմարմնապէս յանապատի ճգնութիւնսն<sup>7</sup>: 22 Քանզի յամենայնի՞ մեծախորհուրդ էր<sup>9</sup> այրն, յամենայնի քաջահաճոյ, յամենայնի առաքինի, յամենայնի ընտիր, յամենայնի համբերող, իբրեւ արձան անխախտելի, իբրեւ աշտարակ անպարտելի ընդդէմ հնարից սատանայի:

23 Սակայն ի սկզբանց<sup>10</sup> անտի պարտ եւ արժան է բուռն հարկանել բանիս. յորո՞ց արդեւք՝ յայտ իսկ է, եթէ ի կոչմանէ Հոգւոյն շնորհաց՝ առաջնորդելով նմա<sup>11</sup> ի մանկական տիոց անտի ի հաւատոցն<sup>12</sup> ճշմարտութիւն:

24 Քանզի նմանապէս յայսմիկ լինել ինձ թուի երջանիկ հայրս մեր՝ մեծին նահապետին եւ աստուածահաւրն Աբրահամու: 25 Զի որպէս առ նա հրաման հասեալ

յԱստուծոյ՝ ելանել յաշխարհէն<sup>13</sup> եւ յանհաւատութեան ազգէն, սոյն աւերինակ<sup>14</sup> եւ երանելիս այս իբր կոչմամբ Աստուծոյ, ելանելով ի խաւարէ<sup>15</sup> կռապաշտութեան, յաշխարհն<sup>16</sup> մտանէր յարգարեւ<sup>17</sup> յերկիր<sup>18</sup> աւետեաց, ուր մեծագոյն պատուիրանացն Քրիստոսի<sup>19</sup> հնչէին ձայնք, ուր յայտնապէս փրկականն քարոզէր Աւետարան, յորում տեղւոջ վարժեալ<sup>20</sup> լինէր ի դաստիարակութիւն տնաւրինական խորհրդոցն<sup>21</sup> Քրիստոսի՝ վերահասու լինելով ի դոյզն ժամանակի: 26 Յետ այսր դարձեալ տնտեսութեան<sup>22</sup> խորհուրդ եւ դարձեալ վերստին անդրէն կոչումն, ուր հանդերձեալ էր զընթացսն կատարել եւ զհաւատսն պահել, եւ լինել հայր ազգաց բազմաց՝ ըստ խոստացելումն, ազգի ազգի չարչարանաւք եւ ճգնութեամբ: 27 Զի՞ «Ոչ քաղաք թաքչի, որ ի վերայ լերինն, եւ ոչ<sup>23</sup> լուցեալ ճրագ դնեն<sup>24</sup> ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի, զի լոյս տացէ<sup>25</sup> ամենեցուն»<sup>26</sup>. սոյնպես եւ սորայս՝ ե՛ւ<sup>26</sup> իր<sup>27</sup>, ե՛ւ անուն պայծառագոյն, քան զարեգակն, յորմէ ոչինչ արգելու գմեզ:

28 Նախ<sup>28</sup> յայտնել զանուանակոչութիւն երանելւոյս, զի ի կոչմանէ անտի ծանիրցուք զերկնային քաղաքավարու-

1 DE գգովասամուրեանս բան B բանի

2 B հատուցանել

3 DEB առաջակայիս առնելով բանի (B բանիս)

4 E առնն D + նախ

5 DE մրցումն

6 DA գարեամբ

7 BDE նզուրբիւնն

8 B ամենայնի

9 E է

10 B յիսկզբանց

11 D չիբ

12 BDE հաւատոյն

13 DE + հայրեմի

14 B սոյնպէս

15 E խաւարէն

16 DE յաշխարհիւն

17 B արդարն

18 DE երկիրն

19 D + աստուծոյ

20 BDE + իսկ

21 D խորհրդոյն

22 A անտեսութեան

23 B չիբ

24 DE դնի

25 E տայցէ

26 Մատթ. Է 14-15

27 B չիբ

28 BDE իրբ

29 D + առաջին

թիւն<sup>1</sup> սորա, եւ առաքինասէր վարուք անմարմնոցն գոլով<sup>2</sup> համեմատ:

29 Գրիգորիոս հսկողն առաքինութեան<sup>3</sup>, արդարութեան աւրինակ, Քրիստոսի արժանաւոր սպասաւորն<sup>4</sup>, յասպարիզի ճգնութեան հռչակաւոր<sup>5</sup>, մեծ խոստովանող նորին եւ վկայ, գեղեցիկ գործարան հոգւոյն Սրբոյ<sup>6</sup>, քահանայից դաղափար, հայրապետաց<sup>7</sup> նկարագիր, երկնային դաւրացն<sup>8</sup> քաղաքակից, մարտիրոսացն<sup>9</sup> պարծանք, առաքելոց լրումն, յերկրի մարմնաւոր հրեշտակ<sup>10</sup>:

30 Գրիգորիոս, որ գեղեցկապէս գոտս մտացն ի վերայ անշարժ վիմի<sup>11</sup> հաւատոցն<sup>12</sup> հաստատելով<sup>13</sup>, փութայր յերկինս բարձրանալ, զի անմիջոց դանդաճաւոր լուսաւորութիւնն տեսանիցէ պայծառագոյն աշաւք, զոր եւ տեսանէր իսկ<sup>14</sup> հանապազ մաքուր մտաւք ըստ<sup>15</sup> Դաւթայ՝ զՏէրն<sup>16</sup> փառաց ընդ աջմէ իւրմէ<sup>17</sup>, որով յերկրիմի վշտացն հեղեղատէ ոչ զարհուրէր<sup>17</sup>, ի բռնագունիցն<sup>18</sup> ասեմ ի դիւաց եւ ի մարդկանէ<sup>19</sup>:

31 Գրիգորիոս, որ ի մէջ<sup>20</sup> աստուածային շնորհացն<sup>21</sup> մտանէր, իբրեւ զՄովսէսն այն ի լերինն, ուստի ոչ ձեռամբ, այլ յայտնութեամբ տեսանն ի սրտին գործարանի հոգւոյն մատամբ զտախտակսն գծագրեալ<sup>22</sup> ընդունէր, եւ զժողովուրդ իւր սեպհական՝ հրաշիցն գործովք աւրինադրէր. եւ ի խաւարէ բազմաստուած կոպաշտութեան արտաքս հանելով<sup>23</sup> ոչ յերկիր ժառանգութեան որպէս Յեսու Նաւեայ, այլ յերկինս առաջնորդեալ ածէր յաջողակի:

32 Գրիգորիոս, որ զբարեպաշտութիւն հաւատոյն ճշմարտի<sup>24</sup> առաջի բռնաւոր արքային քարոզէր համարձակութեամբ, եւ ոչ գանգիտեալ զարհուրէր ի նմանէ<sup>25</sup>:

33 Գրիգորիոս, որ զվայելչութիւն աշխարհիս այսորիկ եւ գկենցադական հեշտութիւնս կղկղանս համարելով առ ոտն հարկանէր, եւ զերկրայինս թողլով զգինուորութիւնս<sup>26</sup> լաւագունիցն<sup>27</sup> բուռն հարեալ Քրիստոսի հետեւէր:

34 Գրիգորիոս, որ նախատեսութեան շնորհի արժանացեալ, մարգարէական հոգւոյ<sup>28</sup> ակամբ<sup>29</sup> գուշակէր զհանդերձեալսն, եւ առաքելական աստիճանի վիճակեալ, անթիւ բազմութիւն անձանց ընտրելոց ընծայէր Աստուծոյ: 35 Ուստի աղբեր շնորհաց հոգւոյն Սրբոյն յայտնեցաւ անդանաւր բղխեալ առ ի նմանէ:

36 Գրիգորիոս, որ զաւծումն քահանայապետութեանն ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի վերին տեսչութենէն

1 BDE երկնային գնաղաճաւարութիւն  
 2 E գոլ  
 3 DE հսկող առաքինութեամբ / Հմմտ. ՂԳ «Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչիւն». «Գրիգորիոս, առաքինի երկնային» (ՄԷ. ԻԼ, էջ 846.1)  
 4 BDE պսակաւոր  
 5 A չի՞ր յասպարիզի նգնութեան հոշակաւոր B հոշակաւորն  
 6 DE աստուծոյ  
 7 BDE հովուապետաց  
 8 E գաւրաց  
 9 BDE մարտիրոսաց  
 10 DE յերկրի մարմնաւոր երեշտակ յերկրի  
 11 DE վիմի  
 12 BDE հաւատոյ  
 13 B հաստատելով հաւատոյ  
 14 B չի՞ր  
 15 E ընդ  
 16 E գտէր  
 \* Մ = Մ. ՃԻ 5  
 17 DE շարժէր  
 18 DE բռնաւորագունիցն  
 19 B դիւաց եւ մարդկան DE մարդկան եւ դիւաց

20 ABDE մէջ  
 21 BDE + հպեալ  
 22 DB գծեալ E գործեալ  
 23 E հանել  
 24 DE ճշմարիտ հաւատոյն B հաւատոյն ճշմարիտ  
 25 B առ ի նմանէ DE առ ի նմանէն  
 26 E գինաւորութիւն BDE գինուորութիւնս  
 27 EB լաւագունացն  
 28 B հոգւովն E հոգւոյն  
 29 B չի՞ր



գեացուք, անթառամ պսակին<sup>1</sup>, անվախճան ուրախութեան<sup>2</sup>, հրեշտակացն պարակցութեան, Երրորդութեանն բնակցութեան<sup>3</sup>:

51 Գիտելով, զի ոչ ունի անցաւոր կեանս այս<sup>4</sup> բնաւորական<sup>5</sup> բարութիւնս յինքեան<sup>6</sup>, բայց միայն արտասուս, տառապանս, թշուառութիւնս, վիշտս, ցաւս, աշխատութիւնս<sup>7</sup>, նեղութիւնս, անձկութիւնս<sup>8</sup>, հիւանդութիւնս, ծերութիւնս, մեղս ազգի ազգիս եւ մահ ի կատարածի:

52 Այսքան եւ աւելի քան զսոյն<sup>9</sup> դիւրավատնելի ծանուցեալ զկենցաղս զայս հրանելի հայրս մեր, վասն որոյ նուիրեաց զանձն իւր պատարագ Աստուծոյ եւ<sup>10</sup> զհետ ընթացաւ չարչարանաւք խաչին Քրիստոսի: 53 Գիտէ՞ր արդեւք ըստ մեծին Պաղոսի, թէ. «Ոչ են արժանի չարչարանք յայժմեան ժամանակիս՝ Հանդերձելոց փառացն, որ յայտնելոց են ի մեզ»<sup>11</sup>:

54 Այլ<sup>12</sup> գիտեմ, ո՛վ սիրելիք, զի ցանկայ իւրաքանչիւր ոք ի ձէնջ կցորդ լինել չարչարանաց նորին<sup>13</sup>, զի եւ պատրասեալ պսակացն նորա հաղորդ գտանիցի ի Տեառնէ<sup>14</sup>: 55 Բայց զի չեւ է ժամանակ մարտիրոսութեան, եւ ոչ են այժմ ընթացք յասպարիզի նահատակութեան, վհատիցի՞ք արդեւք: 56 Սակայն մի՛ յաղագս այսորիկ տրտմանջիք անյուսութեամբ. զի թէպէտ եւ նոցայն<sup>14</sup> անձեռնարկելի է

յայժմու<sup>15</sup>, այլ կրթեցէք զանձինս<sup>16</sup> ըստ ժամանակիս նահատակութեան:

57 Արհամարհեաց նա զբովանդակ կեանս, արհամարհեցէ՛ք եւ դուք զոնէ մասնաւորաբար զխրախութիւն սորա: 58 Մատնեաց նա զանձն հրոյ<sup>17</sup>, շիջուցէ՛ք եւ դուք յանձանց<sup>18</sup> զհուր ցանկութեան: 59 Եհեղ նա զարիւն, եւ դուք<sup>19</sup> զարտասուս առաջի Տեառն, ընդ նմին եւ զաւելորդս գոյից<sup>20</sup> ի ձեռս աղքատացն<sup>21</sup>: 60 Կոխեաց նա զկայծակունս բոցոյն, շիջուցէ՛ք եւ դուք առ ի ձէնջ զբոց բարկութեան: 61 Համբեր նա յետ բազում նեղութեանց մահաշունչ դազանացն կենակցութեան<sup>22</sup> ի խոր վիրապին<sup>23</sup>, համբերեցէ՛ք եւ դուք փորձանաց աշխարհածուփ կենցաղոյս<sup>24</sup> առանց<sup>25</sup> կարճատութեան: 62 «Մի՛ լքանիր<sup>26</sup> ի խրատու Տեառն»<sup>27</sup>, ուսուցանէ իմաստունն<sup>27</sup>: 63 Եւ Դաւիթ երանէ զմարդ խրատեալ ի Տեառնէ: 64 Ընդ<sup>28</sup> այսոսիկ եւ առաքելական բանն երանի տայ ոյք համբերենն փորձանաց. «Զի թէ ընտիր եւս գտանիցի, ասէ, առցէ զպսակն կենաց ի Տեառնէ»<sup>29</sup>:

65 Յիշեցէ՛ք եւ զհամբերութիւնն սորին<sup>29</sup> յանդնդային վիրապի<sup>30</sup> անդ, ո՞րքան

1 B պսակացն  
2 DE արխայութեան B ուրախութեանցն  
3 B պարակցեանցն ... բնակցութեանց  
4 DE աղցաւոր կեանս այսորիկ  
5 D բանաւորական  
6 DE յինքեան բարութիւնս B յինքեան բարութիւն  
7 D տրտմութիւնս E անտոճատութիւնս  
8 D չի՛ր Ե նեղութիւն, անձկութիւն  
9 DE սոյնպիսի B սոյն փիս աւելի բան զսոյն  
10 BDE չի՛ր  
11 Լուս. Բ 18  
12 B արդ  
13 B նորա  
14 DEB որ ի տեառնէ: հաղորդ գտանիցի փիս նորա հաղորդ գտանիցի ի տեառնէ  
14 D նորայն

15 D պոժմուս BE յայժմուս  
16 B զանձն  
17 B հրոյն  
18 B անձանց  
19 B + հեղցուփ  
20 BDE գոյիցն  
21 B չի՛ր ընդ նմին ... աղքատացն  
22 D կենակցութեանց  
23 DEB վիրապի անդ  
24 DE կենացս  
25 B այսորիկ  
26 D լքանիր  
27 Լուս. Բ 11  
27 B չի՛ր ուսուցանէ իմաստունն  
28 B ըստ  
29 Գ. Բ. Լ 12  
29 B սորա  
30 D վարի / Հմմտ. Ծարականներ. Այս շարաք արս Գրիգորի Լուսաւորչի. «ի վիրապին անդրնդային» Փոխ (ՄԸ ԻԱ, էջ 1021.10)

դառնարեր վշտացեալ<sup>1</sup> էր: 66 Բայց որովհետեւ զվտանդաւոր զայն տեղի յիշեցաք<sup>2</sup>, պարտ է մեզ սակաւ<sup>3</sup> ինչ բանիւք ղեզերել անդանաւր, եթէ հաճոյ թուեսցի<sup>4</sup>, եւ քննել մտաւք, թէ որպիսի՛ արդեւք լինէին<sup>5</sup> կեանք սրբոյն<sup>6</sup> ի մէջ այնչափ մահաբեր զաղանացն բնակելով, ո՛րքան խորհուրդ բարեաց, եւ զինչ գործ: 67 Երթիցուք այսուհետեւ յառեսցուք<sup>7</sup> հոգւոյ ակամբ առ երանելին, թերեւս կարացուք շահել ինչ առ<sup>8</sup> ի նմանէն եւ իմանալ փոքր ի շատէ զժուժկալութիւն նորա<sup>9</sup> եւ զանմարմնական վարսն եւ<sup>10</sup> զանտանելի առաքիւնութիւնսն<sup>11</sup>, զանդադար<sup>12</sup> աղաւթսն, զանհանգիստ տքնութիւնն, զանվախճան հսկումնն, զանխախտելի հաւատսն, զանխղելի յոյսն, զարտասուագոչ պաղատանսն, զանախտական մաղթանսն, զանկերակրելի անմարմնոց նմանեալ կեանսն:

68 Քանզի արդարեւ անմարմնոց<sup>13</sup> էր<sup>14</sup> քաղաքավարութիւն արդարոյն, անվաստակ<sup>15</sup> սեղանն, առանց երկոց<sup>16</sup> կերակուրն յոյժ ախորժական թուէր<sup>17</sup> նմա<sup>18</sup> եւ անպատական<sup>19</sup> լուծիւնն, որպէս փափագէր պարապել<sup>20</sup> միշտ երկնային տեսու-

թեանցն, ստանալ թեւս իբրեւ<sup>21</sup> զաղաւնւոյ եւ հեռանալ զաղարել յանապատի: 69 Տրտմութիւն ոչ էր նորա<sup>22</sup> այլ ինչ, քան եթէ անկատար մնալ յասպարիզի անդ նահատակութեան: 70 Սակայն բովանդակ նորայն կեանք հանդէս էր վկայութեան, հանապազաւր պատերազմելով ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս<sup>23</sup> աշխարհակալի<sup>24</sup> խաւարիս, նմա արդարեւ աշխարհս<sup>25</sup> ի խաչ ելեալ էր, եւ նա աշխարհի<sup>26</sup> ըստ առաքելոյ, ի ջանս եւ ի վաստակս, ի քաղց եւ ի ծարաւ, ի պահս եւ ի տքնութիւն, ի ցուրտ եւ ի մերկութիւն:

71 Արդ ո՞վ ոք<sup>26</sup> բաւական է<sup>27</sup> բանիւ պատմել զանտանելի ճգնութիւն երանելւոյն, կամ ակրինակաւ ցուցանել զանհանգուրժելի նեղութիւն նորա<sup>28</sup>. որ ի մէջ իժից եւ քարբից ունէր զբնակութիւնն, որ<sup>29</sup> ոչ խաւսակից ոք մերձ, ոչ վշտակից, ոչ բարեկամ, ոչ աւգնական, ոչ սփոփիչ, ոչ սպասաւոր: 72 Այլ տեւէր մեծաւ ժուժկալութեամբ, իբրեւ կենդանւոյն եղեալ ի գերեզմանի՛ անյարկ, անծածկոյթ, զայնչափ ժամանակս ի զիշերի եւ ի տունջեան, ի տաւթոյ<sup>30</sup> ամարանւոյ եւ սառամանեաց<sup>31</sup> ձմերանւոյն:

73 Քանզի աստուածամուխ էր այրն, ամենիմաստ զիտութեամբ Հոգւոյն<sup>32</sup> առլցեալ, մտացն աչաւք պայծառագոյն<sup>33</sup>, հոգւովն մաքրեալ, յաշխարհական զբաւ-

1 DE վշտաւ՝ առլցեալ

2 E յիշեցէ՛ք

3 D սակաւիկ

4 DE բուիցի

5 B լինիցին

6 E սրբոյն կեանք

7 B վառեսցուք

8 E չի՛ր

9 B սրբոյն

10 DE չի՛ր

11 DEB առաքիւնութիւնն

12 D ծնրադրութիւնն

13 DE անմարմնոյ արդարեւ B անմարմնոց արդարեւ

14 DE երեւէր

15 BDE անվաստակելի

16 B երկու անալոյ

17 DE եւս էր

18 B չի՛ր

19 D անապատկան A անապական

20 AB պարապէր փափախել

21 B որպէս

22 D նմա

23 BDE ընդ պետութիւնս եւ ընդ իշխանութիւնս

24 B աշխարհակալ

25 DE աշխարհ

- Հմմտ. Գ. ա. Պ. 14

26 BDE այլ ո՞վ

27 E իցէ

28 B նգնութիւն նորա նեղութեանն

29 E ուր

30 DE տապոյ

31 BDE սառնամանեաց

32 DE + շնորհաց

33 D պայծառացեալ

ասանաց<sup>1</sup> հեռացեալ<sup>1</sup> զհանդերձեալսն միայն նկատէր, զապագայսն առաջի աչաց տեսանէր, խրախուսէր տէրունական խրատովն<sup>2</sup>, զաւրանայր աստուածեղէն բանիւն. «Յաշխարհի աստ<sup>3</sup> նեղութիւն ունիցիք<sup>4</sup>, այլ քաջալերեցարուք, զի ես յալթեցի աշխարհի»<sup>5</sup>:

74 Յիշէր ուրեմն եւ զառաքելականն բան, զի՝ «Թէպէտ<sup>6</sup> եւ արտաքին մարդս մեր ապականի, ասէ, այլ ներքինն նորոգի աւր ըստ աւրէ: 75 Զի այժմու յաճախութիւնն նեղութեան՝ զյաւիտենական մեծութիւն փառացն<sup>6</sup> գործէ ի մեզ<sup>7</sup>»<sup>7</sup>: 76 Սաղմոսէր եւ ընդ Դաւթայ. «Համբերելով համբերի Տեառն, եւ լուաւ աղաւթից իմոց: 77 Հան<sup>8</sup> զիս ի գբոյ տառապանաց, ի կաւոյ եւ ի տղմոյ»<sup>8</sup>. Եւ թէ. «Ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ»<sup>9</sup>, «քանզի խանդաղակաթ<sup>9</sup> սիրով եմ ես»<sup>8</sup>. «Յո՛յց ինձ, ասէ, զերեսս քո, եւ լսելի արա ինձ զձայն քո, զի ձայն քո քաղցր է, եւ տեսութիւն քո զեղեցիկ»<sup>10</sup>, «Զհետ<sup>10</sup> իւղոց<sup>11</sup> քոց ընթացայց»<sup>8</sup>:

78 Այսպիսի ուրեմն բարբառէր հանապազ, այսպիսի աղաւթիւք պաղատէր երանելին ի գբի անդ<sup>12</sup>, յայսպիսի մաղթանս խոնարհեցուցանէր զամենողորմ Աստ-

ուած<sup>13</sup>, մինչեւ յայցել հովիւն քաջ մողորեալ հաւտի իւրոյ, այն, որ կամի զամենայն մարդ<sup>14</sup>, զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեցցեն ամենեքեան<sup>15</sup>: 79 Եւ այցելութեանն աւրինակ է այս<sup>16</sup>:

80 Կոյս ոմն գեղեցկութեամբ<sup>17</sup> հռչակեալ Հռիփսիմէ անուն, յարեւմտից արեգակն ծագեալ<sup>18</sup> արեւելեան աշխարհին հանդերձ լուսափայլ աստեղաւքն, որ ընդ նմա:

81 Կուսանաց վայելչութիւնն<sup>19</sup>, մարտիրոսաց պարծանքն, հրեշտակաց զուարճացուցիչն, դիւաց ահարկուն, երկնաւոր փեսային հարսնացեալն, Աստուծոյ ինքնանուէր ընծայն, սրբութեան սիրողն, ամենամաքուր խորհուրդն, առաքինասէր հոգին, արիական պատերազմողն, հակառակամարտիցն յաղթողն, պայծառագոյն շառաւիղն<sup>20</sup>, քաջատոհմիկ<sup>21</sup> ոստն, պտղաբեր ձիթենին, քաղցրապտուղ արմաւենին<sup>22</sup>, նախանձաւոր<sup>23</sup> վարքն, պարկեշտութեան աւրինակն, արեւմտից նորարոյս ծաղիկն<sup>24</sup>, արեւելից զարդարիչն, վայելչագեղ տիպն, աստուածատեսակագոյն<sup>25</sup> միտքն, անզամանդեայ<sup>26</sup> պնդութիւնն, որ զանբաւ զաւրութիւն սկայագուն<sup>27</sup> բռնա-

1 DE զրազանաց  
2 DE խրատուն  
3 DE ասէ  
4 A + ասէ  
5 Թ՝ Գ՝ Ժ՝ Ժ՝ 33  
6 E քան  
7 B + մեծութիւն  
8 Բ՝ Գ՝ Ժ՝ 16-17  
9 D եհան  
10 Թ՝ Գ՝ Ժ՝ 2-3  
11 Թ՝ Գ՝ Ժ՝ 3  
12 BDE խանդակաթ  
13 Է՝ Դ՝ Ժ՝ 5  
14 Է՝ Դ՝ Ժ՝ 14  
15 E + հոտոյ  
16 B ուղղոց  
17 Է՝ Դ՝ Ժ՝ 3  
18 E գրիգոր փ/ս ի գբի անդ

13 D զամենողորմութիւնն աստուծոյ E զամենողորմ գբութիւնն աստուծոյ  
14 DE մարդիկ  
15 B չի՞ք  
16 DE Էր այսպիսի B այսպէս փ/ս է այս  
17 A + գարդու  
18 Հմմտ. «Զկոյսն յարեւմտից յարոյց աղաւթի հրակողին» («Գ՛ Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչիմ», Փոխ, ՄՂ, ԻԲ, էջ 848.9)  
19 D կուսանացն վայելչութիւն  
20 B շաւիղն E շառաւիղն  
21 B քաջատոհմից  
22 E չի՞ք քաջապտուղ արմաւենին  
23 DEB նախանձակի  
24 B ծաղիկն նորարոյս  
25 D աստուածատեսակագոյն  
26 E աղամանդեայ  
27 B հսկայագուն E սկայագին D հսկայագին

ւորին ի պարտութիւն մատնեաց<sup>1</sup> իբրեւ զտղայ:

82 Վասն որոյ երգէ աստուածայինն Դաւիթ. «Ամենայն փառք դստեր թագաւորի ի ներքուստ<sup>2</sup> ի<sup>3</sup> վերջաւորս յոսկեհոռոս զարդարեալ եւ պաճուճեալ<sup>4</sup>»: 83 Զի՞նչ<sup>5</sup> եւ վասն իմաստնախոհ<sup>6</sup> նորուն դայեկի Գայիանէ<sup>7</sup> ասացից՝ ողջախոհութեանց մաւրն, աստուածահաճոյ գաստիարակին, ամենիմաստ ուսուցչին, պնդագոյն հոգւոյն, անփոխադրելի խրատատուն<sup>8</sup>, որ ոչ յաղթէր ի փաղաքշանս<sup>9</sup> պատրանաց բռնաւորին, այլ շուրջ փարէր, պաղատէր բանիւք, մարգէր առ ի յաղթութիւն, զաւրանալ քաջալիբէր. «Ո՞վ<sup>10</sup> գեղեցիկդ» ինձ ասելով<sup>11</sup>, «սնտի է կենցաղս, ստուերք են խոստացեալքդ, ունայնութիւն են պատրանքդ<sup>12</sup>, ժուժկալեաց<sup>13</sup> փոքր միւս եւս<sup>14</sup>, զաւրացիր ի սէրն Աստուծոյ: 84 Բարիոք է անմահ փեսային հարսնանալ, լաւագոյն<sup>15</sup> ընդ իմաստուն կուսանսն մտանել յառազաստն երկնային»<sup>16</sup>:

85 Այսպիսի խանդաղատական բանիւք յորդորէ<sup>17</sup> զկոյսն՝ անխոնարհելի ունել<sup>18</sup> զմտացն դիտաւորութիւն<sup>19</sup> առ Աստուած մինչեւ ցկատարումն, որովք արիաբար

ճգնութեամբ եւ վկայական հանդիսիւ կատարէին ամենեքեան ի Քրիստոս:

86 Եւ զի՞նչ ապա<sup>20</sup> հետ այսորիկ: 87 Պատուհասեալ լինէր բռնաւորն հանդերձ զաւրաւքն դժնդակագոյն հարուածովք: 88 Քանզի փոփոխեալ լինէր<sup>21</sup> ի մարդկային բնութենէն ի կերպարանս խոզի, որպէս<sup>22</sup> երբեմն արքայն Ասորեստանի<sup>23</sup> ի ճեռն Դանիէլի, ոչ աւրինակաւ՝ այլ արդեամբք, ոչ առասպելով<sup>24</sup> այլ ճշմարտութեամբ, զազրալի տեսեամբ, ողորմելի կերպարանաւ, յանդուզն, ժպիրհ, դիւական մոլեկանաց<sup>25</sup> նմանեալ, իբրեւ զկինճ վայրենի յանտառի բնակելով եւ<sup>26</sup>, որպէս զնոսա ի մէջ նոցին. արդարեւ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, այլ հաւասարեաց զանձն<sup>27</sup> անասնոց անմտից: 89 Այսպէս պատուհասէ Աստուած՝ որք հակառակ նմին յանդգնին, այսպիսի հարուածովք խայտառակէ զանհնազանդան պատուիրանաց իւրոց<sup>28</sup>:

90 Այժմ ո՞ւր է թագաւորական քո<sup>29</sup> բարձրայաւնութիւն, ո՞ւր հպարտութիւն, ո՞ւր խրոխտալի ամբարհաւաճութիւնն, ո՞ւր գերապատիւ աթոռն, ո՞ւր թագն արքայական<sup>30</sup>, ո՞ւր ոսկեհոռոն բազմականքն, ո՞ւր սքանչելի զաւրութիւնն, ո՞ւր անյաղթելի քաջութիւնն, ո՞ւր զաւրավարքն հզարք, ո՞ւր պետքն բռնաւորք, ո՞ւր ատենական նախարարքն, ո՞ւր փաղաքշտոքն<sup>31</sup> եւ կատակերգուքն<sup>32</sup>, ո՞ւր

1 ED դարձուցանէր  
2 B ներքոյ  
3 E եւ  
4 E որկեախոտն պաճուճեալ  
= II ԳՄ. Խ՛Ի. 14-15  
5 E զի ոչ  
6 E իմաստախոհ  
7 D գայեանեայ B սորին դայեկին գայիանեայ  
8 DEB խրատուն  
9 DE փաղախակն B փաղախանաց եւ ի  
10 B քաջալիբելով  
11 B ասէր  
12 E պատրանքն  
13 BDE ժուժկալեա  
14 B + եւ  
15 B + է  
16 Հմմտ. Ագար. ԺԵ 20-22  
17 D յորդորէր  
18 DE չի՞ր  
19 DE + ունելով

20 E չի՞ր  
21 DE լինելով  
22 D + որպէս  
23 BDE ասորեստանեայց  
24 A առասպելով B առասպելով  
25 B դիւականաց  
26 DE չի՞ր  
27 E չի՞ր  
28 B չի՞ր  
29 E քաղաւորական  
30 B արիւնական  
31 DE փաղախուղն  
32 DE կատակերգով



դատողական բեմն, ո՞ւր տանջողական ա-տեանն, ո՞ւր դահիճքն փութացեալք, ո՞ւր չարահնար մեքենայքն. ո՞ւր են եւ դիքն ձեր, յոր յուսացեալ էիք դուք ի նոսա. յարիցեն արդարեւ<sup>1</sup> եղիցին ձեզ թիկունք:

91 Ընդէ՞ր, ո՞վ յիմարեալքդ, ոչ լուայք մարգարէին, զոր ասաց ի դիմացն Աստուծոյ. «Տեսէք, տեսէք, զի<sup>2</sup> ես եմ, եւ ոչ գոյ<sup>3</sup> անլ Աստուած, բայց յինէն, որ սպանանեմ եւ կեցուցանեմ, հարկանեմ եւ բռնեմ»<sup>4</sup>. Եթէ ոչ խրատեցայք յառաջագոյն բանիւ, խրատեսցիք այժմ ի ձեռն հարուածոցդ պատուհասիդ<sup>5</sup>:

92 Բայց զի՞նչ առաւել քան զայս ներգործիւր առ արքային Նաբուգոդոնոսորայ: 93 Ո՞չ ապաքէն եւ զնա իսկ խրատէր մարգարէն Դանիէլ եւ պատուիրէր յառաջագոյն, սակայն «եւ նա<sup>6</sup> իբրեւ իժի եւ քարի խցեալ զականջս իւր ոչ լսել<sup>7</sup> զձայն թովջի ճարտարի»<sup>8</sup>, եւ ոչ ընդունել<sup>9</sup> զդեղ ի դեղատուէն իմաստնոյ<sup>10</sup>, մինչեւ արդեամբք իսկ ընկալաւ զքանն նախասացեալ պատուհասին: 94 Նմանապէս եւ աստանաւր պատահեցին առ սորա<sup>11</sup> ի ձեռն մեծի<sup>12</sup> վկային Աստուծոյ, զի որք ոչ տեսին զարեւ ի խրատուէ լուսոյ<sup>13</sup> աստուածային<sup>14</sup> բանից նորա, «անարգ եղեն, որպէս ջուր, զի հեղու, եւ ի լարել աղեղան հզաւրին տկարացան»<sup>15</sup>, վասն որոյ ուրախ լինէր արդարն ի տեսանելն զհատուցումն:

95 Եւ նորա այնուհետեւ զղջացեալ խնդրէին զՏէրն, յորժամ սպանանէր զնոսա, դառնային եւ<sup>16</sup> առաւառ առնէին առ Աստուած, զի ծանեան աստուածասաստ գոլ զպատուհասն, անբռնելի զհարհուածսն, անյուսալի՝ զախտն<sup>17</sup>, որով ընկղմեալ<sup>18</sup> ի խորս տարակուսութեան, յայնժամ յիշէին զԱստուած եւ զքաջ նահատակ զսուրբն<sup>19</sup> զԳրիգորիոս: 96 Զո՞ւր արդեւք: 97 Զկալանաւորն, զբանդեալն, զաղքատն, զանագգին, զանյարկն, զբազմավիշտն, զմահապարտեալն, զկենդանուոյն թաղեալն: 98 Զնա խնդրէին հաւատով, ի ձեռն նորա յուսային բուծել<sup>20</sup> յանբռնական ախտիցն. եւ ի<sup>21</sup> խնդիր ելանելով սրբոյն, ոչ մարդկային ինչ յուսով<sup>22</sup>, այլ յայտնութեամբ տեսեանն, որ երեւեցաւ քեռ թագաւորին: 99 Եւ յիրաւի ուրեմն, քանզի զիա՞րդ<sup>23</sup> յուսային յետ այնչափ ժամանակաց կեալ նմա յայնպիսի անհանդուժական վայրին: 100 Անակնկալի էին իրքն, անյուսալի զարմանք, սակայն Աստուծոյ ամենայն ինչ կարելի է: 101 Զի որ զՅովնան ի փոր կիտին պահեաց կենդանի, եւ զՊաւղոս ի խորոցն անդնդային<sup>24</sup> փրկեաց<sup>25</sup>, նա եւ զմեծն Գրիգորիոս պահեաց անարատ ի խոր վիրապի անդ:

102 Որ եւ նախ քան զհետեւել խնդրողացն յայտնէր նմա Տէր<sup>26</sup> զհանդերձեալն, ոչ ի մրրկէ եւ յամպոյ<sup>27</sup>, այլ յանդիման տեսեամբ երեւէր այն, որ ընդ նմա գոյով

1 D արդ DB արդ եւ

2 E րէ

3 E ոչ է D չէ

4 Ի Ռ Ե Զ Լ Բ 39

4 BDE պատուհասի հարուածոցդ

5 BDE չի՞ր եւ նա

6 BDE լսէր

7 Ի Գ Զ Ե Ը Լ 5-6

7 BDE ընդունէր

8 Ի Գ Զ Ե Ը Լ 5-6

8 BDE սոսա

9 D մեծ

10 DE չի՞ր

11 D աստուածեղէմ

12 Ի Գ Զ Ե Ը Լ 8

12 A չի՞ր

13 D զաղտն

14 BE ընկալեալ

15 BDE նորա

16 BE բուծիլ

17 D չի՞ր

18 B յուսով ինչ

19 D արդ

20 A ի յանդնդային խորոցն

21 B պահեաց կենդանի

22 A չի՞ր

23 B յամպոց

հանապազ՝ եւ ոչ երբէք մեկնէր առ ի նմանէ, ըստ իւրուամն բանի, թէ. «Որ սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ, եւ ես եւ Հայր եկեսցուք<sup>1</sup> եւ աւթեվանս առ նմա արացուք»<sup>2</sup>, եւ եթէ. «Յո՞հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս, եւ որ<sup>2</sup> դողան ի բանից իմոց»<sup>3</sup>: 103 Վասն որոյ<sup>3</sup> բարեգութն եւ մարդասէրն ձայնէր առ նահատակն իւր ասելով. «Արի՛, որ ննջեսզ եւ կանգնեսց ի մեռելոց, եւ լուսատու<sup>4</sup> եղեսքեզ<sup>5</sup>»<sup>3</sup>, արի՛ քաջ նահատակդ իմ, որ զհակառակորդ<sup>6</sup> բանսարկուն մեծաւ ժուժկալութեամբ ընթաղեալ կործանեցեր: 104 Արի՛, որ յասպարիսի ընթացիցն արիաբար նահատակեցար ընդդէմ թշնամւոյն: 105 Արի՛, որ զսկզբնաչարն զԲելիար<sup>7</sup> զգետնեալ ընդ ոտիւք մեռուցեր<sup>8</sup>: 106 Արի՛, հաստատեալ սիւնդ եկեղեցւոյ իմոյ<sup>9</sup> եւ պարծանք տիեզերաց: 107 Արի՛, ուսուցիչդ ուղղափառութեան եւ գեղեցկութիւնդ աշխարհի: 108 Արի՛, քարոզդ հաւատոյ եւ առաջնորդ մարդկան ի ճանապարհս արդարութեան<sup>10</sup>:

109 Արի՛ եւ զաւրացիր, արի՛ եւ պնդեա արիաբար զմէջ քո, որ<sup>11</sup> ոչ ընկղմեցար բազմահոս ալեաւքն: 110 Զարթի՛ր եւ սթափեա՛ց, զի ահա նորոգեսցի իբրեւ զարծուի<sup>12</sup> մանկութիւն քո<sup>7</sup>: 111 Արի՛ եւ քարոզեա զաւետարանն իմ, յաղագս որոյ

1 D + առ նա  
 2 B + վ. ժ. Գ. 23  
 2 DE ոյ՛  
 3 I: +. Կ. 9. 2  
 3 D + եւ  
 4 E + եւս  
 5 BDE եղիցի Բեզ Բրիստոս  
 6 I: 4: 14  
 6 D հակառակորդ  
 7 DE Բելիար  
 8 D չի՛ ընդ ոտիւք մեռուցեր  
 9 D չի՛  
 10 DE արեայութեան  
 11 E չի՛  
 12 E գարծուոյ  
 7 II: 2: 5

համբերեցեր կրից չարչարանաց բազմաց<sup>13</sup>: 112 Արի՛ եւ զուարճացիր, զի արարից զքեզ յազգ մեծ՝ որպէս կանխաւ զԱրահամ: 113 Արի՛ եւ ընկալ զպտուղ վաստակոցն քոց:

114 Վասն այսորիկ<sup>14</sup> երկարեցի զվիշտս<sup>15</sup> յոքնագան տանջանաց<sup>16</sup> քոց, զի Հայր ազգաց բազմաց արարից զքեզ, զի<sup>17</sup> բազմացուցից զգաւակ քո իբրեւ զաստեղս երկնից՝ եւ իբրեւ<sup>18</sup> զաւազ ծովու<sup>7</sup>: 115 Մի՛ համարիցիս<sup>19</sup> այլազգ արարեալ առ քեզ յայտնութիւն, բայց զի արդար երեւեսցիս, զի փառաւորեսցիս, զի երեւելի հրեշտակացն եւ մարդկան լինիցիս<sup>20</sup>: 116 Գոյր հնար միայն պսակել զքեզ<sup>21</sup> յընթացս ասպարիսին, սակայն վնաս բազմաց վտանգից<sup>22</sup> իրքն լինէին<sup>23</sup>: 117 Յաղագս այսորիկ<sup>24</sup> երկայնամտեցի<sup>25</sup> նեղութեանցն քոց, զի բարձրագոյն փառաց արժանացուցից զքեզ, զի յեւս առաւելութիւն<sup>26</sup> պատուոյ եւ աշտիճանի<sup>27</sup> առաւել պատիւ եւ յաստիճան<sup>28</sup> բարձրացուցից:

118 Ընկալար զպսակ նահատակութեան, ընկալցիս եւ այժմ զաթոռ քահանայապետութեան<sup>29</sup>: 119 Բարձրացար կա-

13 BDE բազում համբերեցեր կրից չարչարանաց  
 14 BE այնորիկ  
 15 E զվիշտն  
 16 B գանազան վաստակոց  
 17 A եւ  
 7 I: Ե. Թ. 23  
 18 B որպէս  
 7 I: Ե. Թ. 22  
 19 D համարիս B համարեսցիս  
 20 D չի՛ զի երեւելի հրեշտակացն եւ մարդկան լինիցիս E եղիցիս  
 21 DE պսակել զքեզ միայն  
 22 DE բազմաց վտանգումն B վնաս բազում վտանգումն փիս վնաս բազմաց վտանգից  
 23 E լինէր  
 24 D այնորիկ  
 25 DE + ի  
 26 B առաւել  
 27 A եւ  
 28 B չի՛ առաւել պատիւ եւ յաստիճան  
 29 E հայրապետութեան

ուաք առաքինութեան<sup>1</sup> ընդ եղիայի<sup>2</sup>, ընկալ  
 եւ այժմ զչնորհս<sup>3</sup> նախատեսութեան նորա:  
 120 Ճգնեցար ըստ<sup>3</sup> Յովհաննու ի զժնդակա-  
 գոյն անապատին<sup>4</sup>, զոչեա եւ դու ընդ նմա  
 ձայն բարբառոյ<sup>5</sup> յանապատի: 121 Տարժա-  
 նեցար ի բանդի կապանաց ընդ Պաւղոսի<sup>6</sup>,  
 ընկալ ընդ նմա եւ զանարգել շնորհս քա-  
 րողութեան<sup>6</sup> բանի իմոյ ընդ տիեզերս:

122 Էառ Պետրոս գփականս արքայու-  
 թեան<sup>7</sup> յինէն, ա՛ռ եւ դու զնոյն իշխանու-  
 թիւն կապել եւ արձակել ի յերկինս եւ ի  
 յերկրի: 123 Առաքեալքն իմ երկոտասանք<sup>8</sup>  
 ի վերայ ինքեանց բարժանեցին վիճակաւ  
 զընդհանուր աշխարհս, իսկ դու միայն ընդ  
 համասփրևոս<sup>9</sup> քարոզեսցես զաւետարանն  
 իմ<sup>10</sup>: 124 Վասն որոյ ընկալեալ զանուն  
 մարդեղութեան իմոյ՝ արեգակն արդարու-  
 թեան<sup>7</sup> կոչեսցիր տիեզերաց:

125 Յայնժամ վաղեսցէ<sup>11</sup> կաղն իբրեւ  
 զեղջերու, եւ պարզ լինէր լեզու ծանրա-  
 խաւսից<sup>12</sup>: 126 Ոչ յապողէր, ոչ յերկուա-  
 նայր, այլ վաղվաղակի ընթանայր<sup>13</sup> ի կո-  
 չումն տէրունական, քանզի գիտէր զգաւ-  
 րութիւն կոչողին յառաջագոյն<sup>14</sup>, հաւա-  
 տայր Աստուծոյ եւ համարէր նմա արդա-  
 րութիւն, զուարճանայր ցնծութեամբ,

խնդայր ուրախութեամբ<sup>15</sup>, հրճուէր հոգե-  
 ւորապէս, կաքաւէր խորհրդաբար, աղա-  
 դակէր ի ձայն ցնծութեան առ Աստուած<sup>16</sup>  
 ասելով. «Այսաւր է, զոր արար Տէր, ե-  
 կայք ցնծասցուք եւ ուրախասցուք ի  
 սմա»<sup>7</sup>:

127 Յայնժամ եւ բռնաւորն ելեալ ի մի-  
 ջոյ գազանացն ընդ առաջ ընթանայր նմա.  
 որ երբեմն թագաւոր, այժմ խոզ անտառի՝  
 գարշելի տեսեամբ, զազրագոյն կերպարա-  
 նաւք, կատաղի մոլութեամբ, հանդերձ այ-  
 սամտեալ բազմութեամբն, փրփրելով եւ  
 զանձն<sup>17</sup> ցտելով, առ ոտս սրբոյն անկա-  
 նէր<sup>18</sup>, շուրջ փարէր զնովաւ, աղերսէր կեր-  
 պարանաւ զողորմութիւն<sup>19</sup>, ձեւացուցանէր  
 զհայցուածն, մինչեւ զայն տեսել<sup>20</sup> նա-  
 հատակին<sup>21</sup> Քրիստոսի անկանէր<sup>22</sup> ի վերայ  
 երեսաց իւրոց, երկիր պագանէր<sup>23</sup> տեսոն  
 Աստուծոյ, եւ աղբերս<sup>24</sup> արտասուաց հեղ-  
 լով յաչաց՝ գոհանալով<sup>25</sup> զՏեսառնէ, բերկ-  
 րեալ սրտիւ ասելով. «Ըստ բազում ցաւոց  
 սրտի իմոյ<sup>26</sup> մխիթարութիւն քո ուրախ առ-  
 նէր<sup>27</sup> զանձն իմ»<sup>7</sup>: 128 Եւ՝ «Ո՛րվ<sup>28</sup> խաւսես-  
 ցի զգաւրութիւն քո, Տէր»<sup>7</sup>, որ «դարձու-  
 ցեր զվէմն ի վտակս ջուրց եւ զապառածն  
 յաղբերակունս»<sup>7</sup>:

1 DE առաքինութեամբ  
 ~ Տէ՛ռ Պ. Թ. Գ. Բ. 11  
 2 BE զչնորի  
 3 BDE ընդ  
 4 DE զժնդակագոյն յանապատի  
 5 DE զձայն բարբառոյ B զձայն բարբառոյն  
 6 Բ. Գ. Բ. 23  
 7 Տէ՛ռ Պ. Թ. Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ.  
 8 DE Բարոզութիւն փիլ զչնորիս Բարոզութեան  
 9 DE պետրոս գփականս արքայութեան էսո  
 10 BDE երկոտասան  
 11 Է + վիճակաւ  
 12 B չի՛ր  
 13 ~ Գ. Բ. Բ. Բ. 2  
 14 DE վաղէր  
 15 BDE ծանրախաւսին  
 16 Է. Բ. Բ. Բ. 6  
 17 A ընթանայ  
 18 B չի՛ր Բանգի գիտէր զգաւրութիւն կոչողին յառա-  
 ջագոյն

15 Է չի՛ր խնդայր ուրախութեամբ  
 16 B ցնծութեան DE ի ձայն ցնծութեան առ Աստուած  
 փիլ առ Աստուած ի ձայն մեծութեան  
 17 Ս. Գ. Բ. Բ. 24  
 18 DE զանձինս  
 19 A արկանէր  
 20 DE զողորմութիւն կերպարանաւ  
 21 DE անկեալ փիլ զայն տեսել  
 22 Է նահատակն  
 23 DE չի՛ր  
 24 D երկրպագանէր  
 25 B զաղբիւր  
 26 D գոհանայր A հեղոյր... եւ գոհանայր  
 27 D սրտի իմոյ ցաւոց  
 28 DE արար  
 29 Է. Գ. Բ. Բ. 17  
 30 A ո  
 31 Է. Գ. Բ. Բ. 2  
 32 Է. Գ. Բ. Բ. 8

129 *Ձի ահա եւ այժմ զկարծրութիւնս սրտից ժողովրդեանս այսորիկ կակղացուցեր հրով բարկութեան<sup>1</sup> քով իբրեւ զմոմ, եւ ի սանձս եւ ի դանդանաւանդս ճմլեալ<sup>2</sup> զկզակս նոցա<sup>3</sup> դարձուցեր առ քեզ, Տէր:*  
 130 *Կարող ես եւ ի քարանց<sup>4</sup> յարուցանել որդիս Աբրահամու<sup>5</sup>:* 131 *Վասն որոյ աղաչեմ զանբաւ մարդասիրութիւն քո, տէր իմ Յիսուս Քրիստոս, միաժին որդի եւ բան մշտնջենաւորիդ Հաւր, արարիչ ամենայնի եւ Տէր բոլորից, որ բարձրանալով քո ի խաչին՝ կապեցեր զհզաւրն, եւ մեզ կապելոցս ազատութիւն յաւիտենական շնորհեցեր:* 132 *Գթա եւ այժմ ի ստեղծուածս ձեռաց քոց, եւ առաքեա զզաւրութիւն բազկի քո, եւ ազատեա զժողովուրդս զայս ի ծառայութենէ բանսարկուին, ցուցանելով յայտնապէս, թէ դու միայն ես Աստուած կենդանի եւ մշտնջենաւոր, եւ թագաւոր հզաւր, անմահ<sup>6</sup> եւ յաւիտենական:* 133 *Արդ, բժշկեա զսոսա, Տէր, ի բարկութենէ հարուածոց քոց, նայեցեալ ի խոնարհութիւն ծառայիս քո. եւ ինձ շնորհեա բան իմաստութեան, զի քոյով<sup>6</sup> զաւրութեամբդ կարացից մեկնել զսոսա ի ծառայութենէ դիւաց, եւ ընծայել տեսոն Աստուծոյդ մերոյ քեզ<sup>7</sup> ժողովուրդ սեպհական:*

134 *Եւ նայեցեալ Տէր յաղաչանս նորա<sup>8</sup>, շնորհեաց ամենեցուն առժամայն զբուժումն ի դիւական ախտիցն, եւ զմարդկապէսն մտաւորութիւն եւ զխաւսս թագաւորին:* 135 *Եւ եկեալ վաղվաղակի նոքաւք հանդերձ, խնդրէր տեսանել զնշխարս*

*սրբոց<sup>9</sup> վկայիցն Աստուծոյ: 136 Եւ տեսեալ հաւաքէր խնդութեամբ, եւ մեծաւ պատուով ամփոփէր<sup>10</sup> զգանձսն պատուական<sup>11</sup> ի հնձանայարկս նոցունց, որ<sup>12</sup> եւ ինքեան վանս կալեալ, բազմամբոխ ժողովրդեամբն եւ թագաւորաւն, եւ սկսանի<sup>13</sup> ուսուցանել զնոսա յիսկզբան<sup>14</sup> արարչութեանց անտի մինչեւ ցկատարած<sup>15</sup> յաւիտենիս:*

137 *Ձոր ոչ է մեզ կարելի ասել մի ըստ միողէ, քանզի յոյժ իմաստուն էր այրն հոգեւորական գիտութեամբ եւ<sup>16</sup> լի շնորհաւքն<sup>17</sup> աստուածային<sup>18</sup>, ծանուցանէր զանեղութիւնն Աստուծոյ եւ զարարածոց ամենայնի<sup>19</sup> զեղելութիւն, զգոյացութիւն մարդոյն, զշնորհին պարգեւ, զանձնիշխանական<sup>20</sup> կամքն<sup>21</sup>, զփափկութիւն դրախտին<sup>22</sup>, զթագաւորելն ամենայնի, որ ի ներքոյ երկնից, զբանսարկուին նախանձն<sup>23</sup>, զդաւաճանութիւն կնոջն, զյանցանելն զպատուիրանաւ, զարտասահմանելն ի ցանկալի վայելչութենէ<sup>24</sup> հայրենեացն, զմահուամբ զատապարտութիւնն, զյաճախութիւնն յետ այնր ի մեղս, զաւտարանալն յԱստուծոյ<sup>25</sup>, զնուազել աստուածապաշտութեանն, զջրհեղեղաւն զկործանումն<sup>26</sup>, զընտիրն<sup>27</sup> միայն գտանել<sup>28</sup> Նոյի,*

1 BE բարկութեամբ  
 2 B նմլեցեր  
 3 B + եւ  
 4 D + յայսցանէ  
 5 H<sup>1</sup> արբ. Գ. 9  
 6 BDE անմահ, հզաւր  
 7 DE քով  
 8 BDE քեզ տեսոն աստուծոյ  
 9 BDE սրբոյն

9 DE չի՞  
 10 A ամփոփեալ  
 11 DE պատուականս  
 12 DE ուր  
 13 B եւ սկսանէր DE սկսանէր  
 14 BDE ի սկզբանց  
 15 BDE ցկատարումն  
 16 E չի՞  
 17 BDE շնորհաւք  
 18 DE + բայց բերես  
 19 BDE ամենայն  
 20 DE զանձնիշխան  
 21 E կամքն  
 22 A չի՞ զփափկութիւն դրախտին  
 23 BDE նախանձ  
 24 D վայելչութեան  
 25 D աստուծոյ  
 26 DE կործանումն  
 27 DE զընտիր  
 28 E գտանելն

զաշտարակին զշինութիւն եւ կործանումն<sup>1</sup>, զբազմաստուածութիւնն զիւաց, զյաճախել կռապաշտութեանն ընդ տիեզերս, զհաւատալն Աբրահամու, զծառայութիւնն Իսրայելի<sup>2</sup>, զհարուածսն Եգիպտոսի, զխստանալն Փարաւոզնի, զբաժանումն ծովուն, զանցանել ժողովրդեանն, զընկզմելն<sup>3</sup> Փարաւոզնի եւ զաւրացն, զանապատին սքանչելիսն<sup>4</sup>, զմովսիսական<sup>5</sup> քարոզն, զգրաւորական աւրէնսն<sup>6</sup>, զառ ի յերկիր<sup>7</sup> աւետեաց փոփոխումն<sup>8</sup>, զմարգարէիցն զգուշակութիւն, զգալուստն Քրիստոսի, զտնաւրինական խորհուրդն, զխաչիլն<sup>9</sup>, որ վասն մեր, զմեռանելն ստուգապէս, զթաղելն ի գերեզմանի, զյառնելն յերրորդ աւուր, զփրկելն զմեզ ի սատանայէ, զյաղթելն մահու զաւրութեանն<sup>10</sup>, զվերանալն առ Հայր յերկինս, զիջանելն<sup>11</sup> Հոգւոյն Սրբոյ ի վերնատունն, զաճումն<sup>12</sup> աստուածապաշտութեան<sup>13</sup>, զառաքելական քարոզութիւնն, զմիւսանգամ զալուստն Հայրենի փառաւք, զյարութիւնն ամենայն տիեզերաց եւ զհամառաւտ վճիռ դատաստանին յաւիտենից:

138 Այսոքիւք ամենեքումք յաճախագոյն գիտութեամբ եւ առատ վարգապետութեամբ, ըստ ժամանակին պիտոյիցն, վկայութեամբ եւ աւրինաւք<sup>14</sup> յաստուածաշունչ գրոց՝ Հաստատէր զնոսա:

139 Յետ այսորիկ<sup>15</sup> զարձեալ աղաւանք<sup>16</sup> մաղթանաց հարուածելոցն առ<sup>17</sup> երանելին, եւ նորուն պաղատանք փարելիք առ Տէր յաղագս<sup>18</sup> բժշկութեան նոցա, որով ոչ յապաղմամբ ընկալան զհայցելին: 140 Քանզի բառնան<sup>19</sup> վաղվաղակի ի ձեռն աղաւթից նորա հարուածք պատուհասին յամենեցունց, եւ կնքեալ<sup>20</sup> զթագաւորն այրն Աստուծոյ նշանաւ խաչին, թաւթափէր նոյնժամայն զգետն<sup>21</sup> խաւարային, մերկանայր եւ զկերպարանն<sup>22</sup> անասնեղէն<sup>23</sup>, զոր զգեցաւ յաղագս մեղացն դատապարտեալ, եւ զգեհոյր զառաջին կերպարանացն զվայելչութիւն, նա եւ<sup>24</sup> եւս զարմանագոյն եւ հրաշափառագոյն<sup>25</sup>:

141 Ո՛վ մեծագունի իրին, ո՛վ անտանելի հրաշիցն. արդարեւ ո՞վ խաւսեսցի զգաւրութիւն<sup>26</sup> քո՞, կամ ո՞վ<sup>27</sup> ընդ թուով համարեսցէ<sup>29</sup> զսքանչելիս քո: 142 Զի ո՞վ ոք ետես կամ լուաւ զայնքան զմնդակագոյն հարուածք<sup>30</sup> ի միում վայրկենի ժամու բժշկելով: 143 Ըշմարտապէս զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր եւ աղաւթից նոցա լսէ:

144 Բայց երանելին ոչ անձին, այլ Աստուծոյ ընծայէր փառաւորութիւն<sup>31</sup> ասելով:

1 A գաշտարակաշինութիւնն եւ գկործանումն  
2 A իսրայելի  
3 D զընկզմիլն  
4 DE զյանապատին գսհանչելիք  
5 BD զմովսիսական  
6 BDE աւրէնսն  
7 BDE յերկիրն  
8 B փոխումն  
9 DE զխաչելն  
10 B գորութեամբ  
11 D զիջումն  
12 D զբանախումն  
13 BDE աստուածապաշտութեանն  
14 DE վկայութեամբ եւ աւրինակաւք

15 BDE այսր  
16 B աղաւանք  
17 B առնէր  
18 E վասն  
19 BDE բառնայր  
20 BDE կնքելով  
21 DE զգետն  
22 DE զկերպարանս B կերպարանն  
23 B անասնային / շմնո. «Որ գարբունական պատիւն որպէս մարդ շճանեաւ, / Այժմ անասնեղէն» («ԳԻ Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», Փոխ, ՄՀ, ԻԱ, էջ 849.27-28)  
24 BDE չիք  
25 BD հրաշափառագոյն եւ զարմանալի E հրաշալի  
26 D գսհանչելիս  
27 BDE + տէր  
28 DE չիք  
29 DE համարիցի B համարեսցի  
30 B գայսհան զշմնդակագոյն հարուածս  
31 B զփառարանութիւնն

«Այս<sup>1</sup> փոփոխումն աջոյն բարձրելոյ»<sup>2</sup>, եւ թէ. «Աջ տեառն արար զաւրութիւն»<sup>3</sup>:

145 Յայնժամ ապա եւ թագաւորն Տրդատիոս<sup>2</sup>, քանզի այս էր անուն արքային, ջերմեռանդն հաւատով եւ մեծագոյ ձայնիւ խոստովանէր զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ Աստուած ճշմարիտ եւ բան հաւր, արարիչ բոլորից արարածոց երեւելեաց եւ աներեւութից: 146 Աստուած քարոզէր զխաչ ելեալն եւ երկրպագէր<sup>3</sup> կենդանարար աստուածընկալ<sup>4</sup> խաչին, հրածարէր յայտնապէս ի դիւապաշտ<sup>5</sup> ամբարշտութենէն: 147 Զաւրաւիգն մեծ եւ աւգնական եւ վրէժխնդիր ուղղափառութեանցն<sup>6</sup> այնուհետեւ լինէր հաւատոյ<sup>7</sup>, որպէս եւ Պաւղոս յետ երեւմանն Քրիստոսի եւ կուրութեան աչացն ի ճանապարհին Դամասկոսի<sup>8</sup>: 148 Այլ եւ գործովք զասացեալսն ի Պաւղոսէ ցուցանէր յանձին<sup>9</sup>, թէ. «Ուր առաւել եղեն մեղքն, եւս առաւելան շնորհք բարեպաշտութեան ի Քրիստոս Յիսուս»<sup>7</sup>: 149 Նա եւ բազմութիւն զաւրացն եւ<sup>10</sup> ժողովրդեանն<sup>11</sup> ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ շարժեալք, միաբարբառք եղեալ<sup>12</sup> ընդ արքային գոչէին մեծաձայնապէս. «Մեծ ես դու, Տէր, եւ հզաւր, եւ սքանչելի են գործք քո, վասն որոյ հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն<sup>13</sup> եւ մի աս-

տուածութիւն<sup>14</sup>, որպէս լուաք եւ ուսաք ի մերոյ Լուսաւորչիս վարդապետութեանց, յորմէ ընկալաք եւ զբժշկութիւն Հոգւոց եւ մարմնոց<sup>15</sup>, զերծեալք ի բազմաստուածութեանն մոլորութեանց<sup>16</sup>»:

150 <sup>17</sup>Յետ այսորիկ զինեալ արքային հանդերձ սրբոյ նահատակաւն եւ հաւատացեալ զաւրաւքն<sup>18</sup> հակառակ զարշիլի կոոցն, եւ խորտակեալ զամենեսեան զոսկիակուռ դիսն բաշխէին աղքատաց. եւ զդիւաբնակ<sup>19</sup> մեհեանս նոցա ի հիմանց տապալեալ<sup>20</sup> նշանաւ խաչին Քրիստոսի<sup>21</sup> յերկիր կործանէին, եւ ի տեղիս նոցա տաճարս հրաշալիս Աստուծոյ յաւրինէին, նաեւ<sup>22</sup> սրբոց մարտիրոսացն, սրբոց<sup>23</sup> կուսին Հոփսիմէի<sup>24</sup> եւ մեծ վկայուհւոյն Գայիանէ<sup>25</sup> եւ ընկերացն վկայարանս բազմապատիկս յարդարեալ<sup>26</sup> շինէին, ըստ տեսեան ցուցելոյ նմա<sup>27</sup> յԱստուծոյ<sup>28</sup>: 151 Սրբեալ լինէր այնուհետեւ աշխարհն յայսոց պղծոց, եւ<sup>29</sup> յայտնապէս աղաղակէին դեւք մեծաբարբառ վայիւք զհալածումն<sup>30</sup> իւրեանց ի կապանաւորէն Գրիգորէ:

152 Արդ, պէտք էին, յետ այնորիկ<sup>31</sup> կատարման, որո՞ւմ արդեւք: 153 Վերստին նորոգման<sup>32</sup> միւսանգամ ծննդեանն,

1 D + է  
= II-27. 29 11  
2 B տրդատուս  
3 D երկրպագաներ  
4 DE + սուրբ  
5 B յատնապաշտ փխ յայտնապէս ի դիւապաշտ  
6 BDE ուղղափառութեան  
7 BDE հաւատոյս  
8 BDE դամասկեայ  
9 St' 9-7-24 10-1-9  
9 DE յանձն B անձին  
10 2-10. 1-20  
10 DE զաւրաց  
11 D ժողովրդոցն  
12 DE միաբարբառ եղեալ B միաբարբառ եղեալ  
13 BDE երրորդութիւն

14 A չի՞ք եւ մի աստուածութիւն B աստուածութիւնդ  
15 DE հոգւոյ եւ մարմնոյ  
16 DE մոլորութեան. B բազմաստուած մոլորութեանց  
17 B + եւ  
18 D + կայր  
19 D դիւաբնակ  
20 B տապալեալ  
21 B խաչիւն  
22 BDE + ի  
23 B տեղիս նահատակութեան DE տեղի նահատակութեան գեղեցիկ  
24 BDE հոփսիմեայ  
25 BDE գայիանեայ  
26 D յորինեալ A չի՞ք  
27 BDE + տեսն  
28 E աստուծոյ  
29 BDE չի՞ք  
30 E զհալածումն  
31 B այսորիկ D այսմիկ E այսոցիկ  
32 BE նորոգման

զի «Որ ոք<sup>1</sup> ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, առաց Փրկիչն, ոչ մտցէ<sup>2</sup> յարքայութիւն Աստուծոյ<sup>3</sup>»<sup>4</sup>: 154 Իսկ արդ<sup>4</sup>, զի<sup>5</sup> յապաղես, այրդ Աստուծոյ: 155 Յառաջ մատիր, եւ ի կատարումն ի Քրիստոսէ զհաւատացեալդ քեզ հաւտ ածցես<sup>5</sup>, տո՛ւր դոցա զփրկական կնիք<sup>6</sup>, դրոջմեա զժողովուրդդ<sup>7</sup> Տեառն ի նշանն<sup>8</sup> տէրունի, զգեցո՛ւր դոցա զՔրիստոս ի ձեռն մկրտութեան, պատրաստեա՛ զդոսա ժողովուրդ Տեառն<sup>9</sup> սեպհական: 156 Զի ահա աւետարանական քարոզն աւանդեցաւ, ճշմարտութիւն հաստատեցաւ<sup>10</sup>, Աստուած փառաւորեցաւ, բանարկուն յամալթ<sup>11</sup> եղեւ, սատանայ կործանեցաւ, Բելիար պարտեցաւ, ժողովուրդն<sup>12</sup> ի դիւական պատուհասիցն բժշկեցաւ, ամենեքեան զհետ Քրիստոսի աւրինացն<sup>13</sup> ընթացան: 157 Արդ, զի<sup>5</sup> եւս յապաղես, ընդէ՛ր տակաւին յերկուանաս, հի՛մ արդեւք դանդաղես<sup>14</sup>. մկրտեա՛ դամենեսեան, լուսաւորեա՛ լուսով գիտութեան, նորոգեա՛ վերստին ծննդեամբ:

158 Այսպիսի<sup>15</sup> ուրեմն աղաչէր թագաւորն, առ ոսս<sup>16</sup> անկանէր սրբոյն եւ յոգնահոսան արտասուաւք<sup>17</sup> պաղատանս մա-

տուցանէր հանդերձ նախարարաւքն իւր<sup>18</sup>: 159 Իսկ երանելին ոչ ախորժէր, ոչ հաւանէր փարիլ ի մաղթանսն<sup>19</sup>. «Ոչ համարձակիլ<sup>20</sup>, ասէ, յանդգնել յաշտիճան<sup>21</sup> որ առաւել է, քան զիս. ոչ եմ<sup>22</sup> բաւական բառնայ զլուծ<sup>23</sup> տէրունական, ոչ կարացից յաղագս<sup>24</sup> բանաւոր հատից<sup>25</sup> համարս տայ հաւտապետին Քրիստոսի, վասն որոյ յերկնից<sup>26</sup> խոնարհեցաւ<sup>27</sup> մեռաւ եւ թաղեցաւ եւ արեամբ իւրով ազատեաց զմեզ<sup>28</sup> ի ծառայութենէ մեղաց. գիտեմ զսէր<sup>29</sup> նորա ի վերայ ոչխարաց իւրոց, գիտեմ եւ զպատուէր նորա<sup>30</sup> առ Պետրոս յետ յարութեանն նորա<sup>31</sup>, որպէս ասէր Պետրոս<sup>32</sup>, արածեա զոչխարս իմ»<sup>3</sup>: 160 Քանզի մեծագոյն է պատիւն, բայց դժուարակիր է բեռն<sup>33</sup>. գիտեմ եւ զհրաժարելն<sup>34</sup> Մովսեսի ի կոչմանէ անտի, վասն որոյ չեմ արժանի այդմ աստիճանի եւ ոչ եղէց վերակացու հաւտից, որոց զարիւնսն<sup>35</sup> ի հանդերձեալ յաւիտենին պահանջիցիմ: 161 Զայսոսիկ ասելով երանելւոյն<sup>36</sup> ի բաց հրաժարէր:

162 Զի՛նչ գործես, ո՛վ քաջդ, զիա՛րդ վեհերոս ի բարձրագունից պատուոյ: 163 Նե-

1 BE չի՞  
 2 BDE մտանէ  
 3 B երկնից  
 4 Յ՝ԳԸ՝Գ՝5  
 4 DE արդեաւք  
 5 A չի՞ եւ ի կատարումն ի քրիստոսէ զհաւատացեալդ քեզ հաւտ ածցես B գիտատացեալդ քեզ ի քրիստոսէ հոտ՛ արածեսցես  
 6 B կնիք E դոցա զփրկականն կնիքն  
 7 D ժողովուրդ  
 8 BE նշան  
 9 BD տեառն ժողովուրդ  
 10 B չի՞ ճշմարտութիւն հաստատեցաւ  
 11 D ամօթ  
 12 BDE ժողովուրդ  
 13 BDE աւրինացն քրիստոսի  
 14 BDE դանդաղիս  
 15 DE այսպիսիս  
 16 D ասոսս  
 17 BDE չի՞ եւ յոգնահոսան արտասուաւք

18 BDE չի՞ հանդերձ նախարարաւքն իւր  
 19 BDE փարիլ ի մաղթանացն  
 20 DE չհամարձակիմ  
 21 B + Բահանայութեան  
 22 BDE չեմ  
 23 BDE զլուծն  
 24 A տէրունական  
 25 B + տեառն  
 26 DE + յերկիր  
 27 BDE + սակս որոյ  
 28 DE զամենեսեան  
 29 D զսէրն  
 30 B զպատուէրն որ  
 31 BDE չի՞! գիտեմ զսէր նորա ի վերայ ոչխարաց իւրոց տեղափոխուած է այստեղ  
 32 BDE եթէ սիրես զիս, ասէ, պետրէ փիս որպէս ասէր առ պետրոս  
 3 Յ՝ԳԸ՝Ի՞ 16  
 33 E բեռն  
 34 B զհրաժարումն  
 35 BDE զարիւն  
 36 D երանելին





քո՞»<sup>1</sup>: 178 *Զի՞նչ այտուհետեւ ասես<sup>2</sup>, ո՞վ երանելիդ:* 179 *Գո՞յ այլ ինչ իրաւարանութեան պատասխանի:* 180 *Եթէ հաւանեսցիս<sup>3</sup> ասացելոցդ, նայեա արդեւք<sup>4</sup> ի մեծութիւն կոչողին:* 181 *Ընդէ՞ր արդեւք յապագես:* 182 *Աստուած է, որ արդարացուցանէ, իսկ արդ<sup>5</sup>, ո՞վ է, որ դատապարտ առնիցէ:* 183 *Ոչ<sup>6</sup> ունիմ<sup>7</sup> այլ ինչ<sup>8</sup> հակառակող<sup>9</sup>. «Միանգամ խաւսեցայ, յերկրորդումն ոչ յաւելից»<sup>10</sup>:* 184 *Ահաւասիկ կամ հնազանդեալ տէրունական հրամանին, վստահացեալ<sup>11</sup> ի գաւրութիւն նորա:* 185 *Ես տկար, սակայն<sup>12</sup> նա հզաւր:* 186 *Ես հեղգացեալ, բայց նա արագ ի յաւգնել:* 187 *Գիտեմ, զի պատրաստ է<sup>13</sup> բառնալ զտկարութիւնս<sup>13</sup> իմ, գիտեմ, զի լնու զթերութիւն պակասութեան իմոյ:*

188 *Զայնպիսի ես գովեմ<sup>14</sup> հովիւ<sup>15</sup>, զնորայն ողջունեմ զտկարութիւն, զնորայն ընդունիմ հեղգութիւն:* 189 *Զի ոչ գնայր<sup>16</sup> զհետ պատուոյն, այլ պատիւն զհետ նորա<sup>17</sup> ընթանայր:* 190 *Զի ոչ խնդրէր զփառսն, այլ խնդրեալ լինէր ի փառացն:* 191 *«Այսպիսի<sup>18</sup> վայելէ մեզ<sup>19</sup> քահանայապետ», ըստ Պաւղոսի, «սուրբ,*

*անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց եւ բարձրացեալ քան զերկինս»<sup>20</sup>:* 192 *Զի որ այնպիսի<sup>20</sup> ոչ լինիցի, ոչ ուրեմն հովիւ<sup>21</sup> կոչի, այլ գող եւ աւագակ եւ դայլ ապականիչ, աւցտող<sup>22</sup> զհաւտն Քրիստոսի:*

193 *Ըստ որում եւ<sup>23</sup> առ մեզ իսկ երեւեցան հակառակողք ճշմարտութեանն<sup>24</sup> ոչ միայն գայլք, այլ եւ ժանտք եւ ամբարիշտք, թշնամիք եւ դաւաճանողք, հայհոյիչք եւ կեղծաւորք, պիղծք եւ սուտ վարդապետք<sup>25</sup>, կոյրք եւ մոլորեցուցիչք, նեռինք եւ հոգեմարտք, որք թշնամանեն զՀոգին շնորհաց, որ<sup>26</sup> ոչ թողցի ոչ յայժմու յաւիտենիս<sup>27</sup> եւ ոչ ի հանդերձեալսն<sup>28</sup>, յորոց միշտ հայհոյի ճանապարհն ճշմարտութեան:* 194 *Վասն որոյ եթէ հաճոյ թուեսցի, պարտ եւ արժան<sup>29</sup> է նախ եւ առաջին անցանել առ այնպիսիսն բանիւ, եւ ապա զերանելի հաւրս<sup>30</sup> մերոյ աւարտել զներբողական ճառս:*

195 *Հովուապետի է ատեանս<sup>31</sup>, քահանայապետի է<sup>32</sup> տաւնախմբութիւնս, պարտ է զատել<sup>33</sup> զգայլսն ի հովուացն<sup>34</sup>, եւ առ նորա փառացն պատիւս<sup>35</sup> սակաւ<sup>36</sup> ինչ եւ զմերս յիշատակել զվիշտ<sup>37</sup>:* 196 *Քանզի կատարած յաւիտենիս արդէն իսկ հասեալ է:* 197 *Անաւրէնութիւն բազմացաւ, սէր*

1 B չի՞ր առաջի ին  
= Է:Է: ԻՊ. 20  
2 BE ասացես  
3 BD հաւանիս  
4 DE չի՞ր  
5 E գարդար  
6 DE + ասէ  
7 B + ասէ  
8 D այլ ինչ ունիմ  
9 BDE հակառակել  
Է Է:Է: ԻՊ. 35  
10 D + եմ  
11 E եւ ունայն  
12 B + առ ի  
13 BDE գտկարութիւն  
14 BDE գովեմ ես  
15 DE + գայնպիսին վերակացու  
16 B գնաց DE նա  
17 DE գիտեմ նորա պատիւն  
18 DE այնպիսին  
19 E չի՞ր

4 Է:Է: ԻՊ. 26  
20 D այսպիսի  
21 DE հովիւ ուրեմն  
22 DE ատելով B օցտող  
23 B չի՞ր  
24 D ճշմարտութեան E ճշմարտութեանս  
25 BDE + առաջնորդի  
26 BDE որոց  
27 DE յայժմուս յաւիտենի  
28 D հանդերձելն E հանդերձելումն  
29 DE արժանի  
30 D հօրն  
31 B եւ փիւ է ատեանս  
32 BDE չի՞ր  
33 E զատանել  
34 DE հովուաց  
35 DE պատիւ  
36 D քսկսաւ  
37 DB զվիշտս

ցամաքեցաւ<sup>1</sup>, մոլորեցուցիչք բազումք, եւ<sup>2</sup> մոլորեալք եւս առաւելք<sup>3</sup>:

198 Բե՛ր աստանաւր բացցուք զատուածային զգիրս<sup>4</sup>, յորս գտանեմք զճանապարհն ճշմարտութեան<sup>5</sup>: 199 Քանզի տեղի տան<sup>6</sup> երանելի հաւրս մերոյ<sup>7</sup>, ի խորս բանից արկանէ զմեզ: 200 Ընթացուք այսուհետեւ ի սուրբ լերինսն<sup>8</sup>, ի մարգարէսն ասեմ եւ յառաքեալսն, եւ զգուշացուք, զի մի՛ մոլորեալ<sup>9</sup> բերիցիմք<sup>10</sup> յամենայն հողմոց<sup>11</sup> վարդապետութեանց<sup>12</sup>, մի՛ մնասցուք ի ստորինս, այլ ելցուք ի լեռուն<sup>13</sup> զկնի աշակերտաց Բանին, եւ զի՞նչ<sup>14</sup> լուրցուք՝ զինչ բարբառի քաջ հովուապետն մեր Քրիստոս. «Զգոյ՛ լերուք, ասէ, մի՛ ոք զձեզ խաբեսցէ<sup>15</sup>»<sup>15</sup>: 201 Ասէ եւ<sup>16</sup> Պաւղոս. «Զգոյ՛ լերուք ի շանց<sup>17</sup> անտի, զգոյ՛ լերուք ի չար մշակաց անտի<sup>18</sup>»<sup>18</sup>: Եւ թէ. «Տես ջիբ ո՛րպէս գնայք»<sup>19</sup>. «Զգուշացարուք ոչ միայն անձանց, այլեւ ամենայն հաւտիդ»<sup>20</sup>:

202 Եւ արդ, ես փոքր ինչ յաւելում ի բանս տէրունականս<sup>20</sup> եւ յառաքելոցն եւ<sup>21</sup> մարգարէիցն: 203 Եւ սկսանիմ ուստի<sup>22</sup>, քան թէ յայնմանէ<sup>22</sup>, որ ասէ. «Ես եմ սկիզբն եւ ես<sup>23</sup> կատարած»<sup>23</sup>:

204 Այլ այժմ<sup>24</sup> պատրաստեցէք ինձ իւրաքանչիւր ոք զմիտս՝ ի բաց դնելով զամենայն հոգս կենցաղականս: 205 Ասաց աստուածեղէն բերանովն<sup>25</sup> Տէր մեր. «Զգո՛յ՛ լերուք, զի մի՛ խաբիցիք, զի բազումք եկեսցեն յանուն իմ եւ ասացեն, թէ ես եմ Քրիստոսն, եւ զբազումս մոլորեցուցանիցեն»<sup>26</sup>: 206 Եւ դարձեալ<sup>26</sup>. «Զգուշացարուք ի սուտ մարգարէիցն, որ<sup>27</sup> գան առ ձեզ մորթիւք<sup>28</sup> ոչխարաց, եւ ի ներքոյ են գայլք յափշտակողք: 207 Ի պտղոյ նոցա ծանիջիք գնոսս»<sup>29</sup>, այսինքն՝ ի սուտ մարգարէութենէն, ի կեղծաւորութենէն, ի գաւազաբաղութենէն եւ ի հայհոյութենէն:

208 Արդ, մի՛ ոք երկմտիցէ ի ձէնդ<sup>29</sup> կամ վարկպարագի զբանս<sup>30</sup> լուրիցէ, քանզի Աստուած է, որ խաւսի<sup>31</sup>: 209 Վասն որոյ լուարուք, հովիւք, հովուապետի ձայնին, լուարուք եւ զգուշացարուք հաւտիդ<sup>32</sup>. «Զի որ ոչ մտանէ ընդ դուռն<sup>33</sup> ի գաւիթ ոչխարաց, նա գող է եւ աւազակ»<sup>33</sup>: 210 Եւ<sup>34</sup> «Որ ոչ է ընդ իս, հա-

1 Հմմտ. «Զի ցամաքեցաւ սէրն ըստ տէրունական բանիմ» («Թուղթ ընդհանրական») 2 B չիբ 3 BDE մոլորեալքն եւս առաւել 4 BDE գիրս 5 DE զճշմարտութեանն նախապարհ 6 BDE տայն 7 B մերում 8 B ի վերինսն 9 DE մոլորք 10 BE բերիցեմք 11 DE հողմոյ 12 E վարդապետութեանն BDE + եւ 13 BDE լեռունն 14 DE չիբ 15 BDE խաբեսցէ զձեզ - Մ-դք. ԻԿ 4 16 D չիբ ասէ E չիբ ասէ եւ 17 E քանից 18 AB չիբ զգոյ՛ լերուք ի չար մշակաց անտի 19 Փ՛ւ՛ւ. Կ. 2 20 Ե-՛ւ. Ե. 15 21 B չիբ դարձեալ ասէ 22 Գ-՛ր. 28 Ի 28

20 BE տէրունական 21 B + ի 22 BE յայսմանն 23 B չիբ 24 Ի-՛ւ. Կ. 13 25 B առ այժմ DE չիբ 26 B քերականով 27 Մ-՛դք. ԻԿ 4-5. հմմտ. Մատի. Մ-՛ր. ԺԿ 5-6 28 B չիբ 29 D որք 30 DE մորթաւք 31 Մ-՛դք. Լ. 15-16 32 BDE ի ձեռնք երկմտիցի 33 B գրանն 34 DE խաւսին 35 DE հաւտիցի 36 DE դուռնն 37 Ի-՛ւ. Կ. 1 38 DE + դարձեալ

կառակ իմ է»<sup>7</sup>, եւ<sup>1</sup> «Դուք ոչ էք յոչխարաց անտի իմոյ»<sup>2</sup>»<sup>5</sup>:

211 Ծանեայք իսկ եւ գիտէք<sup>3</sup>, զիա՛րդ ամենայն ուրեք արձանացուցանէ զխրատականսն, զի մեք մի՛ մոլորիցիմք: 212 Ո՛վ անճառելի մարդասիրութեանն, ո՛վ անտանելի խոնարհութեանն. զի՞նչ տացուք տրիտուր Տեառն ըստ<sup>4</sup> ամենայնի եւ կամ զի՞նչ արասցուք պատասխանի Հովուպետին մերոյ Քրիստոսի<sup>5</sup>: 213 Ո՛վ Հովիւք եւ Հովուակիցք, քանի՞ցս անգամ պատուիրեմ՞ ձեզ զգուշանալ ի<sup>7</sup> գողոց եւ յաւազակաց, ոչ միայն աւետարանաւն, այլեւ մարգարէիւքն եւ աստուածաբան աշակերտաւքն: 214 Նմանապէս բարբառի, յամենեսեան<sup>8</sup> խաւսի, որպէս եւ կամի, եւ վկայէ ինձ Պաւղոս՝ ասելով, եթէ. «Զփո՞րձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խաւսի»<sup>9</sup>: 215 Եւ արդ, այսուհետեւ ի մէջ բերից ձեզ զաստուածարանիցն բանս<sup>9</sup>. «Լուիցուք ի նոցանէն, եթէ զի՞նչ արդեւք պատուիրեն մեզ»:

216 Ասա՛, ո՛վ երանելիդ Պետրէ, ասա՛ պատուականագոյն գլուխ, զոր երանեաց<sup>10</sup> Տէր մեր Յիսուս Քրիստոս, ասա՛ մեզ՝ յազազս որոց Հանդերձեալ են պատրել զՀաւան Քրիստոսի, զորս<sup>11</sup> աւանդեաց մեզ<sup>12</sup> Հովուպետն եւ տեսուչն<sup>13</sup> անձանց

մերոց եւ շնորհեաց Հոգին<sup>14</sup> Սուրբ: 217 Ասէ Պետրոս. «Զայս գիտաալիք, զի ի վախճան աւուրցս այսոցիկ եկեսցեն այլաւնողք՝ ըստ իւրեանց ցանկութեանցն երթալով<sup>15</sup>»<sup>7</sup>. եւ եթէ. «Ի ձէնջ լինելոց են սուտ վարդապետք, որք մուծանեն Հերձուածս կորստեան, եւ բազումք Հետեւին պղծութեան նոցա, որոց դատաստանն ոչ դատարկանայ եւ կորուստն ոչ ննջէ»<sup>8</sup>: 218 «Մանկունք անիծից, թողեալ զուզորդ<sup>16</sup> ճանապարհն, մոլորեցան»<sup>7</sup>: 219 Զայս երանելին<sup>17</sup> Պետրոս բարբառի<sup>18</sup>, ճշմարտապէս<sup>19</sup> Հաւատոյ Հաստատութիւնն, յորոյ վերայ Քրիստոս շինեաց<sup>20</sup> զեկեղեցի իւր, Պետրոս, որ զփականս արքայութեանն<sup>21</sup> ընկալաւ, որ մեծաւ զաւրութեամբ զՍիմոն<sup>22</sup> գայն յերկիր կործանեալ հերքէր<sup>23</sup>, գլուխն եւ վերակացուն ամենայն Հաւատացելոց ի Քրիստոս:

220 Իսկ զի՞նչ եւ Յովհաննէս՝ սիրելին<sup>24</sup> Տեառն. «Բազում մոլորեցուցիչք<sup>25</sup> եկեալ են յաշխարհ»<sup>5</sup>, «մի՛ամենայն Հոգւոյ Հաւատայք»<sup>5</sup>, եւ դարձեալ, թէ<sup>26</sup>. «Ամենայն, որ ոչ մնայ ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ»<sup>5</sup>: 221 Զայսոսիկ Յովհաննէս՝ Որդին որոտման, որ քան զամենայն սուրբս սիրեցեալն էր, որ ի ծագաց

• Մ•ԳԳ•ԺԻ 30

1 DE + այլուր

2 B անդի իմոց DE իմոց անտի

3 Յ՝ՎԸ•Ժ 26

4 DE տեսանես փիս ծանեայք իսկ եւ գիտեմ

5 B ըստ այնր DE յողագս այսր

6 BDE չի՛ր

7 BDE պատուիրե

8 DB մեզ զգուշանալ ի E մեզ զգուշանալ փիս մեզ զգուշանալ ի

9 DE յամենայնսն

10 Ի՛ Կ՝Գ՝ՆՉ•ԺԳ•3

11 DE գրանս

12 BE ընտրեաց

13 E գոր

14 BDE թեզ

15 DE տեսուչ

14 BE զհոգին

15 B երթալով չարութեան

16 Ի՛ Գ՝ԵՊ•Գ 3

17 Ի՛ Գ՝ԵՊ•Ի՛ 1-3

18 BE զուզորդ

19 Ի՛ Գ՝ԵՊ•Ի՛ 14-15

20 BDE չի՛ր

21 B երանելին բարբառի DE + երանելի

22 BDE ճշմարիտ վեմն

23 E շինեաց քրիստոս

24 DE երկնից

25 DE զսիմովնն B զսիմոնն

26 B հերձուք DE հերձեր

27 E սիրելի

28 DB + ասէ

29 Ի՛ Յ՝ՎԸ•7

30 Ե՛ Յ՝ՎԸ•Գ 1

31 DE չի՛ր

32 Ի՛ Յ՝ՎԸ•9

մինչ ի ծագս աշխարհի Հնչեաց զբարբառ աւետարանին: 222 Ընդ նմին եւ Յակոբոս առաքեալ ասէ. «Որ կամիցի բարեկամ նոցա լինել, թչնամի առնէ զանձն իւր Աստուծոյ»<sup>1</sup>. եւ Յուդաս<sup>1</sup>. «Ի վախճան ժամանակիս<sup>2</sup> եկեսցեն այսանողք զհետ ցանկութեան իւրեանց երթալով»<sup>3</sup>, «Ամպք անջրդիք, հողմակոծեալք, աստեղք մոլարք, որոց խաւարն պահի յաւիտեան»<sup>4</sup>: 223 Զայս եւ առաւել քան զսոյն Յուդայ<sup>3</sup> պատուիրէ:

224 Ե՛կ այսուհետեւ, ո՛վ անաւթ ընտրութեան<sup>5</sup>, ասա եւ դու մեզ<sup>4</sup> յաղագս չար յաւիտենիս այսորիկ: 225 Ասէ Պաւղոս<sup>5</sup>. «Գիտեմ ես, զի յետ իմոյ ելանելոյ<sup>6</sup> եկեսցեն առ ձեզ զայլք յափշտակողք<sup>7</sup>, որ<sup>8</sup> ոչ խնայեսցեն ի հաւտդ»<sup>5</sup>: 226 Տեսանե՞ս առաքեալ միանգամայն<sup>9</sup> եւ մարգարէ, տե՛ս<sup>10</sup> ամենայն ուրեք զաստուածաբանիցն զպանս<sup>11</sup> միաբանեալ ընդ վարդապետին: 227 Քանզի ասէ դարձեալ. «Զգոյշ լերուք, զի աւուրքս չարութեան են»<sup>5</sup>. եւ թէ՛. «Մարդք չարք<sup>12</sup> եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր, մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն<sup>13</sup>»<sup>5</sup>. «Որոց Աստուած՝ որովայնքն նոցա<sup>14</sup>, ասէ<sup>15</sup>, եւ փառք՝ ա-

մաւթն»<sup>5</sup>: 228 Զայսոսիկ Պաւղոս պատուիրէ<sup>16</sup>, Պաւղոս՝ երգարանն եկեղեցւոյ, աստուածաբարբառ<sup>17</sup> նուագարանն, քարոզն Քրիստոսի, փողն աստուածային բանին, ճարտասանն ճշմարտութեան, որսորդն հեթանոսաց: 229 Արդ, հաւանեցուցանե՞մ<sup>18</sup> զձեզ այսոքիւք, եթէ ընդունա՞յն վաստակիմք<sup>19</sup>, այլ թէ՛պէտ եւ ոչ զամենեսեան, սակայն վասն փութացելոցն ի բարիսն՝ ոչ կամեցուցանեմ<sup>20</sup> զբանն<sup>21</sup>: 230 Քանզի եւ մարգարէքն սուրբք յառաջ<sup>22</sup> գուշակեցին վասն<sup>23</sup> սուտ վարդապետաց եւ աւտարատեսուչ հովուաց, վասն որոյ ասէ Դաւիթ. «Ոչ գոյ ի բերանս նոցա ճշմարտութիւն, եւ սիրտք նոցա ստութեամբք<sup>24</sup> լի»<sup>5</sup>. եւ<sup>25</sup> «Մեղաւորին ասէ Աստուած. Ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ<sup>26</sup>»<sup>5</sup>. եւ թէ՛ «Ընդ գողս ընթանայիր եւ ընդ շունսն դնէիր զբաժին քո՞»<sup>27</sup>»<sup>5</sup>:

231 Արդ, յաղագս ո՞յր արդեւք զայսոսիկ խաւսի<sup>28</sup> մարգարէն. ո՞չ ապաքէն<sup>29</sup> ընդ հովիւս եւ<sup>30</sup> վերակացուս, զի զպատգամսն<sup>31</sup> Աստուծոյ մեք իսկ խաւսիմք, որ<sup>32</sup>

• Թե՛. Գ. 4  
 1 B յուդայ ասէ  
 2 DE ժամանակի ասէ  
 3 Թե՛-դե՛ 18  
 4 Թե՛-դե՛ 12-13  
 5 DE յուդաս  
 6 Տե՛՛ Գ. րձէ թ. 15  
 7 BE մեզ եւ դու  
 8 E պաւղոս ասէր  
 9 D յաշխարհիս  
 7 DE ծանունք  
 8 B որք  
 5 Գ. րձէ թ. 29  
 9 E միանգամայն առաքեալ  
 10 DE տեսանես  
 11 D բարս E բանս  
 2 Ե՛՛՛ Ե. 16  
 12 D մարդիք չարք E չիք  
 13 BE մոլորեցուցանեն DE + եւ քէ  
 5 Ի՛ Տե՛՛. Գ. 13  
 14 D որովայնք իւրեանց

15 DE ե՛ն B չիք  
 2 Փե՛՛. Գ. 19  
 16 DE պատուիրէր  
 17 D աստուածաբառ  
 18 DE հաւանեցուցանեմք  
 19 DE վաստակիմք  
 20 E կասեցուցանեմք  
 21 BDE զբանս  
 22 DE յառաջագոյն  
 23 BDE յաղագս  
 24 D ստուրբեամք E իւրեանց նանրուրբեամք փ/ս նոցա ստուրբեամք  
 5 Ո՞-չ. Ե. 10  
 25 DE + եւ  
 26 DE + կամ առնուս գուրտ իմ ի բերան (E բերանս) քո  
 5 Ո՞-չ. Ե. 16  
 27 D չիք եւ քէ ընդ գողս ... զբաժին քո BE չիք  
 5 Ո՞-չ. Ե. 18  
 28 B գայս խոսի DE խաւսի զայսոսիկ  
 29 E + քո  
 30 B + ընդ  
 31 DE զպատգամս  
 32 DE որք

զաշտիճան քահանայութեան ունիմք. եւ զիա՞րդ ոչ իցէ շուն յայտնապէս այն, որ հակառակ իրաւանցն Աստուծոյ շարժեաց զլեզու իւր եւ շնացաւ ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ, քանզի կենդանութեամբ իմով զաթոռն<sup>1</sup> իմ յափշտակեաց:

232 Բայց մեք յառաջիկայսն<sup>2</sup> երթիցուք: 233 Ասէ զայնցանէ<sup>3</sup> Դաւիթ զարձեալ<sup>4</sup>. «Նոտեսցին այնոքիկ<sup>5</sup>, որ<sup>6</sup> ընտրեալ են արծաթով»<sup>7</sup>: 234 Եւ Սողոմոն խրատ տայ եւ ասէ. «Որդեակ, մի՛ խաբեսցեն զքեզ արք ամբարիշտք<sup>7</sup> կցորդ լինել<sup>8</sup> արեան արդարոյ<sup>9</sup>»<sup>5</sup>: 235 Եւ Եսայիաս<sup>10</sup>, մանաւանդ թէ<sup>11</sup> Աստուած ի ձեռն Եսայիայ, զերկին եւ զերկիր ի վկայութիւն<sup>12</sup> դատաստանաւ ընդ Իսրայելի, թէ. «Լուր երկին, եւ ունկն դիր երկիր, զի Տէր խաւսեցաւ»<sup>7</sup>. Եւ ըստ կարգի մի ըստ միոջէ ասելով զյամատութիւն սրտից նոցա՝ ասէ ի կատարածին բարկութեան<sup>13</sup>. «Ամենայն գլուխ ի ցաւս եւ ամենայն սիրտ ի տրտմութիւն: 236 Յոտից մինչեւ ի գլուխ չիք ի նմա<sup>14</sup> առողջութիւն՝ ոչ վէրք եւ ոչ այտումն<sup>15</sup>, եւ ոչ հարուածք խղիւսայթեալք»<sup>7</sup>: 237 Ընդէ՞ր. քանզի վէր յայնժամ կոչի, յորժամ այլ մարմինն առողջ լինիցի, եւ միով մասամբ յաղագս

վիրին անզգայի: 238 Իսկ եթէ<sup>16</sup> բոլորովին անզամովքն վիրաւորիցի<sup>17</sup>, չեն<sup>18</sup> այնուհետեւ աւգուտ ինչ<sup>19</sup> ոչ ձէթ եւ ոչ պատանս եւ ոչ սպեղանիս ի վերայ դնել:

239 Եւ արդ<sup>20</sup>, լուարուք, հովիւք, եւ երկերուք, մի՛ լուէք ի բանէն, այլ քարոզեցէք համարձակութեամբ. մի՛ տայք տեղի սատանայի<sup>21</sup>: 240 Նմանողք եղերուք<sup>22</sup> Պետրոսի, զիա՞րդ սաստեաց մեծաւ բարկութեամբ զարչելոյն Սիմովնի, յորժամ զշնորհան Աստուծոյ խնդրէր արծաթով ստանալ, զոր նզովեալ հանդերձ կաշառովն՝ ի կորուստ մատնեաց<sup>5</sup>: 241 Ընկալարո՛ւք<sup>23</sup> զխրատ աստուածայնոյն Պաւղոսի՝ զգրեալսն առ Տիմոթէոս. «Զնոս<sup>24</sup> վաղվաղակի<sup>25</sup> յուրուք վերայ մի՛ դնիցես, զի մի՛ կցորդ լինիցիս մեղաց աւտարաց»<sup>7</sup>:

242 Լուարուք եւ զտէրունականն ասացեալ բան<sup>26</sup>. «Մի՛ տայք զսրբութիւն շանց եւ մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խողից<sup>27</sup>»<sup>5</sup>, որ է բանին Աստուծոյ մաքրութիւն:

243 Դարձեալ՝ նմանողք եղերուք քաջ հովուացն առաքիներեացն<sup>28</sup>, արիական պատերազմողացն եւ առաջին վերակացուացն եկեղեցւոյ: 244 Թէպէտ եւ բազում

1 DE գաթոռ  
2 BDE յառաջիկայն  
3 E գայնցանէն  
4 DE դարձեալ դաւիթ  
5 D այնք  
6 DE ոյք  
7 II-դ. ԿԷ 31  
7 DE ամբարիշտ  
8 D լինիլ DE + բնոց նոսին  
9 A արդարոց  
5 I-դ. Ը 10-11  
10 B մարգարէն Եսայի ասէ.  
11 B չիք  
12 DB + կոչէ.  
4 I-դ. Ը 2  
13 B ի կատարածի բարկութեան ասէ.  
14 D չիք ի նմա  
15 B եւ որ այլն փխ յոտից մինչեւ ի գլուխ չիք ի նմա առողջութիւն ոչ վէրք եւ ոչ այտումն  
7 I-դ. Ը 5-6

16 B յորժամ  
17 D անզգայիցի  
18 D + ինչ B չէ ինչ  
19 BD չիք  
20 A չիք եւ Եսայիաս, մանաւանդ ... անզամովքն ի վերայ դնել եւ արդ  
21 D + մի գանգիտեալ գարիուրիցիք ի գայլոց անտի B + մի գարիուրեալ գանգիտիցիք ի գայլոց անտի A չիք երկերուք, մի՛ լուէք ի բանէն, այլ բարոզեցէք համարձակութեամբ. մի՛ տայք տեղի սատանայի  
22 D + սրբոյն E + մեծից  
5 S-դ. Գ-դ. Ը 8-25  
23 E + եւ  
24 B ձեռն  
25 E + ասէ.  
7 I-դ. Կ 22  
26 E ասացեալն  
27 DE խողաց  
5 II-դ. Ը 6  
28 DE եւ առաքիներեաց

ընտրութիւն<sup>1</sup> տեսանեմ երանելի արանցն այնոցիկ եւ այսր ժամանակի անուանեալ<sup>2</sup> Հովուաց եւ վերակացուաց: 245 Նոքա քաջամարտիկ պատերազմողք, իսկ սոքա փախստականք ի Հոգեւոր պատերազմաց: 246 Նոքա ժուժկալք, եւ<sup>3</sup> սոքա փափկասէրք, նոքա աստուածասէր<sup>4</sup> գրոց ընթերցման<sup>5</sup> եւ գիտութեան եւ<sup>6</sup> կրանից նախանձաւորք, եւ սոքա սիրողք<sup>7</sup> Հանդերձից եւ արծաթասէրք<sup>8</sup>, եւ յայնոսիկ միայն ճեպեալք առաւելուլ քան զընկերս<sup>9</sup>: 247 Նոքա զանձինս իւրեանց եղին ի վերայ ոչխարաց՝ նմանեալ քաջ Հովուապետին եւ Փրկչին, այլ<sup>10</sup> սոքա իրրեւ զվարձկանս<sup>11</sup> թողեալ զոչխարսն<sup>12</sup> փախեան:

246 Ո՛վ երանելի<sup>13</sup> աստուածայնոց<sup>14</sup> արանցն այնոցիկ, որոց յիշատակն ի դպրութիւն<sup>15</sup> կենաց գրեալ է:

247 Ողբայր երբեմն Դաւիթ յուշ առնելով զգթութիւնն Աստուծոյ. «Ո՛ւր են<sup>16</sup> ողորմութիւնք քո առաջինք, Տէր»<sup>17</sup>: 248 Ողբացից եւ ես նմանապէս նման<sup>17</sup> Դաւթայ, եւ ասացից արտասուաւք՝ ո՛ւր են բազմութիւնք երանելի եպիստոկոպոսացն<sup>18</sup> եւ վարդապետացն<sup>19</sup>, որք ծագեցան<sup>20</sup> իրրեւ զփայ-

լակն յաշխարհի, բանս կենդանականս ունելով յինքեանս: 249 Յորոց մի է<sup>21</sup> եւ մեր պսակաւոր եւ վկայ, մանաւանդ թէ<sup>22</sup> առաջին քան զբազումս, որոց<sup>23</sup> առաջի կայ մեզ պատմութիւն<sup>24</sup> տաւնախմբութեանս:

250 Նոքա էին Հովիւք ճշմարիտք<sup>25</sup>, իսկ սոքա գայլք ապականիչք. նոքա զաւրաւորք ի գործ եւ ի բանս աստուածայինս, եւ սոքա ընկղմեալք յինչս եւ ի ստացուածս մարմնականս: 251 Քանզի յաղագս արծաթոյ եւ Հանդերձից խննչութեան, երիւվարաց եւ ջորւոց եւ արաւրածիգ եղանց եւ հաւտից եւ խաշանց բազմանալոյ եւ պէսպէս զաւշաքաղութեանց<sup>26</sup> բազում ջանս եւ խաւսս ի մէջ նոցա<sup>27</sup> Հանապազաւր տեսանի: 252 Իսկ վասն բանաւոր Հաւտի զփրկութիւն եւ զբարութիւնն<sup>28</sup> նախանձու, եւ ոչ մի ինչ բան կամ Հոգաբարձութիւն<sup>29</sup>:

253 Ո՛վ անմտութեանն<sup>30</sup>, ո՛վ չար արմատոյ<sup>31</sup> արծաթասիրութեանն: 254 Զիա՞րդ կարեն<sup>32</sup> սոքա ուսուցանել<sup>33</sup> զգեղեցիկ աղքատութիւնն Քրիստոսի, որ վասն մեր աղքատացաւ, եւ աշակերտաց իւրոց պատուիրէր ոչ ունել<sup>34</sup> պղինձ ի գաւտիս՞: 255 Արգարե՛ւ մոլորեալ են, զի ոչ իմանան զգիրս եւ ոչ զգաւրութիւն աստուածայնոց բանից:

256 Արդ, լուարուք, Հովիւք, եւ մի՛ գանձէք ձեզ զանձս յերկրի: 257 Արծաթ ձեր բազմացաւ, եւ բանն նուազեցաւ:

1 B ընտրութիւնս  
 2 A ամուսն  
 3 DE իսկ  
 4 B աստուածային DE աստուածեղէն  
 5 D ընթերցումն  
 6 A չի՞ր եւ ... եւ  
 7 BDE պննողք  
 8 E հանդերձիւք եւ արծաթասէր  
 9 D զընկերսն  
 10 D չի՞ր  
 11 DE վարձկանս  
 12 D + եւ  
 13 BDE + եւ  
 14 B աստուածայնոց  
 15 DE դպրութեան  
 16 DE + ասէ  
 \* II-րդ. ԶԸ 50  
 17 DE ընդ  
 18 DE + առաջնոցն B + առաջնոց  
 19 D վարդապետաց  
 20 DE ծագեցին

21 D չի՞ր  
 22 E + եւ  
 23 DE որոյ  
 24 D + ի  
 25 E ճշմարտութեան  
 26 A + եւ  
 27 DE սոցա  
 28 DE հաւտից փրկութեան եւ բարութեան  
 29 B հոգւոյ բարձրութիւն  
 30 A չի՞ր ով անմտութեան  
 31 DA արմատ  
 32 DE կարացեցն  
 33 D չի՞ր  
 34 B ունելով  
 \* S-ի. II-րդ. Ժ. Գ. II-րդ. Զ. 8

զոյք ձեր անեցին, եւ համարձակութիւնն լռեաց. անբանիցն հոյլք բազմացան, եւ բանաւոր ձեր հաւտքն գիշատեցան, յաղագս որոյ համարս<sup>1</sup> տալոց էք հովուպետին Քրիստոսի. ոչ անգիտանայք ուրեմն, զի<sup>2</sup> իւրաբանչիւր ոք ընդ անձին իւրում<sup>3</sup> միայն համարս<sup>4</sup> տալոց է Քրիստոսի<sup>5</sup> Աստուծոյ: 258 Իսկ դուք՝ քահանայպետք եւ քահանայք եւ սարկաւագունք, ընդ անձանց եւ ընդ ժողովրդեանն, որ հաւատացաւ ձեզ ի Տեառնէ, տեսէ՛ք՝ մի՛ արդեւք զանխլասցի<sup>6</sup> տաղանդացն առակ. զզոյշ լերուք անձանց եւ ամենայն<sup>7</sup> հաւտիդ, զի<sup>8</sup> մի՛ կորիցէ եւ մի՛ ոք յոչխարաց ձերոց, զի զարիւն նոցա<sup>9</sup> ի ձեռաց ձերոց<sup>10</sup> պահանջէ դատաւորն: 259 Արթուն լերուք այսուհետեւ եւ քարոզեցէք զբանն կենաց, ի բաց ընկեցէք զամենայն հոգս կենցաղականս, եւ պատրաստ եղերուք տէրունական գալստեանն<sup>11</sup>: 260 Զի յորժամ գայցէ, տոկոսիւք<sup>12</sup> պահանջիցէ զհաւատացեալն ձեզ տաղանդ արծաթոյն:

261 Զայս ամենայն զմտաւ անելով, սիրելիք, մի՛ ազահուրթեան աղազաւ յանդգնաբար ժպիրհ<sup>13</sup> յաթոռ վերակացութեան: 262 Աւրինակ ձեզ կալջիք<sup>14</sup> գերանելի հայրս մեր, յորում այսաւր<sup>15</sup> հաւաքեալ<sup>16</sup> կատարեմք զխիշատակս<sup>17</sup>, թէ

զիւրդ այնքան բազմամեայ կրից տանջանաց տեւէր քաջութեամբ եւ կամ ո՛րպէս ի կատարման գործոյն<sup>18</sup> հրաժարէր ի տեսչութենէն՝ գիտելով, զի դժուարակիր է տէրունական լուծն<sup>19</sup>: 263 Նոյնպէս եւ<sup>20</sup> դուք, որք պատահեցայք աստիճանի հովուութեան, հովուեցէք իմաստութեամբ, որք<sup>21</sup> ընդ ձեաւք հաւտդ է Աստուծոյ, որպէս առաքեալ ասէ<sup>22</sup>. «Մի՛ ի հարկէ, այլ կամաւ, մի՛ զաւչաքաղութեամբ<sup>23</sup>, այլ յաւժարութեամբ, մի՛ իբրեւ տիրելով վիճակին<sup>24</sup>, այլ լինել<sup>25</sup> աւրինակ հաւտին, զի յերեւել հովուպետին<sup>26</sup>, ընդունիցիք գանթառամ փառաց պսակն»<sup>27</sup>:

264 Զսոյն<sup>27</sup> գրէ ասէ եւ Պաւղոս<sup>28</sup>. «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, իբրեւ<sup>29</sup> Աստուծոյ տնտեսի. մի՛ յանդուզն, մի՛ բամբասող, մի՛ թշնամանող<sup>30</sup>, այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ, վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեան»<sup>31</sup>, զի կարող իցէ միսթարել զհաւատացեալս եւ զհակառակորդսն կշտամբել<sup>31</sup>: 265 Տեսանն<sup>32</sup> ս, որպիսի՛ փոյթ յանձին կալեալ աստուածայինն առաքեալ՝ զգուշացուցանէ զեպիսկոպոսս<sup>32</sup> բարեաց գործոց լինել նախանձա-

1 D պատասխանի  
 2 E բէ  
 3 D չի՛ E իւրոյ  
 4 BDE պատասխանի  
 5 BDE չի՛  
 6 DE + ի ձեւք B գանխլասցի արդեոք  
 7 E ամենայնի  
 8 BDE չի՛  
 9 DE նորա  
 10 DE ձեր  
 11 B հրամանին  
 12 DE տոկոսեալ  
 13 DE ժպրիի՛  
 14 B կալջի՛ ձեզ  
 15 BDE զորոյ աստանաւր  
 16 B չի՛  
 17 BDE գլխատակ

18 BDE + ի բաց  
 19 E տէրունականն լուծ B տէրունեան լուծն  
 20 E չի՛  
 21 DE որ  
 22 DE ասէ առաքեալն B եւ առաքեալ ասէ  
 23 D գործադրութեան  
 24 DE ժառանգութեանն B չի՛ այլ յաւժարութեամբ, մի իբրեւ տիրելով վիճակին  
 25 D լինել B լեր  
 26 BDE + քրիստոսի  
 = Ը՛ Պէք. Լ. 2-4  
 27 D գայն B ի սոյն  
 28 DE եւ պաւղոս գրէ ասելով  
 29 E որպէս  
 30 DE + մի հարկամող  
 = Ը՛ Պէք. Լ. Տ. Գ. 2-4  
 31 B չի՛ եւ զհակառակորդսն կշտամբել  
 32 B զեպիսկոպոսն

ւոր<sup>1</sup>, զի յետ աւրինակն լինելոյ, կարող է<sup>2</sup> եւ զայլս ուսուցանել<sup>3</sup>:

266 Դարձեալ ոչ միայն զքահանայս զգուշացուցանեն<sup>4</sup> աստուածային աւրէնք եւ<sup>5</sup> ի բարիս թեւակոխել<sup>6</sup> միշտ, այլ եւ զամենայն հասակ մարդկութեանս<sup>7</sup> ըստ իւրաքանչիւր կարգի, զմեծամեծս եւ զփոքունս, զթագաւորս եւ զդատաւորս, զիշխանս<sup>8</sup> եւ որք ընդ իշխանութեամբ<sup>9</sup>, զմեծատունս եւ զաղքատս, զերիտասարդս եւ զկուսանս, զարս եւ զկանայս, զծերս եւ զտղայս, որք միանգամ ի Քրիստոս մկրտեալ են եւ յանուն Քրիստոսի քրիստովնեայք անուանեալք. որոց պարտ է յիշել ամենայն հաւատացելոցդ Քրիստոսի<sup>10</sup> զուխան աստուածեղէն, զոր առաջի բեմին Քրիստոսի հաստատեցէք եւ բանիւ խոստովանեցէք զնա Տէր եւ Աստուած<sup>11</sup>, եւ հրաժարեցէք<sup>12</sup> ի սատանայէ եւ յամենայն դորձոց նորա:

267 Տեսէ՛ք, ո՞ւմ արդեւք ուխտեցէք զանձինս<sup>13</sup>. ո՛չ հրեշտակի եւ ո՛չ երկրաւոր ուրուք<sup>14</sup> թագաւորի, այլ թագաւորին թագաւորաց<sup>15</sup> եւ տեառն տերանց. նմա դաւանեցեայք, զնա խոստովանեցէք<sup>16</sup> առաջի բազում վկայից. որում եւ ակնկալչիք յայսմ հետէ գալստեան նորա յերկնից: 268 Զի եկեալ բերցէ զձեռագիր

ուխտադրութեան խոստովանութեանն<sup>17</sup> ձերոյ, եւ ընթերցցի առաջի հրեշտակաց եւ մարդկան:

269 Արդ, ի բաց կացէք այսուհետեւ ի հեթանոսական գործոց: 270 Լուարուք<sup>18</sup> առաքելոյ, զի ասէ<sup>19</sup>. «Ջայս ասեմ եւ ուխտեմ ի Տէր, մի՛ եւս ձեզ գնալ, որպէս եւ այլ հեթանոսք զնան ունայնութեամբ մտաց իւրեանց խաւարեալք հոգևով»<sup>20</sup>: 271 Վասն որոյ, սիրելիք<sup>21</sup>, որպէս ընկալարուք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի սրբոց աշակերտաց նորա զպատուիրանս, ի նմին կացչիք պնդութեամբ<sup>22</sup>: 272 Ըշմարիտ առաջնորդաց ձերոց հնազանդ լերուք<sup>23</sup> եւ ի պղծոցն զգուշացարուք<sup>24</sup>, զի աւուրք<sup>24</sup> չարութեան են, եւ փոխանակ հովուաց գայլք մտանեն հաւտապետք, որք զկերպարանս<sup>25</sup> ցուցանեն արտաքուստ<sup>26</sup> հրեշտակի եւ ի ներքոյ տեղի են<sup>27</sup> սատանայի. բանիւ ձեւանան բարեպաշտք եւ գործովք իւրեանց<sup>28</sup> ուրացեալք: 273 Բայց մի՛ խարիք<sup>29</sup> ի նոցանէն, այլ որպէս ընկալայք զՏէր մեր Յիսուս Քրիստոս, ի նոյն<sup>30</sup> գնասչիք մինչեւ ի վախ-

1 DE նախանձաւորս  
2 DE իցէ  
3 E աւգտեցուցանել  
4 D զգուշացուցանել  
5 B օրինօքն  
6 B թեւակոխել  
7 D հասարակաց մարդկութիւնս B մարդկութեան  
8 B զիշխանս եւ զդատաւորս  
9 B + են  
10 B ի քրիստոս  
11 B չի՛ր եւ բանիւ խոստովանեցէ՛ք զնա տէր եւ աստուած  
12 B հրաժարեցայ՛ք  
13 B + ձեր  
14 B չի՛ր  
15 B տիեզերաց  
16 B խոստովանեցայ՛ք

17 B խոստովանութեան ուխտադրութեան  
18 B + դարձեալ  
19 B ասելոյն փիս զի ասէ  
- Էփէ. Գ- 17-18  
20 B սիրելի  
21 A արդ սիրելի՛ք փիս դարձեալ ոչ միայն զբահանայս զգուշացուցանեն աստուածային աւրէնք եւ ի բարիս թեւակոխել միշտ ... ի սրբոց աշակերտաց նորա զպատուիրանս, ի նմին կացչի՛ք պնդութեամբ D բան սրբոյն յովհաննու ոսկեքերանին արտահանեալ ի ներքողեան նառէն սրբոյ գրիգորի յուսաւորչին, ըզմ հովուաց ժամանակին իւրոց ցուցանելով, թէ  
22 D մերոց պարտիմք հնազանդել  
23 D զգուշացուք  
24 DE աւուրքս B աւուրքն  
25 B զկերպարանսն  
26 D չի՛ր  
27 D են տեղի  
28 B չի՛ր  
29 DE խարիցի՛ք  
30 A չի՛ր ի նոյն ի յուս. այնպէս



ճան, զի եւ ընդ նմին թագաւորեալ<sup>1</sup> վայելիցէք զյաւիտենական կեանսն, ամէն<sup>2</sup>:

274 Եւ արդ, յաղագս այսորիկ աստանաւր աւարտեսցուք<sup>3</sup> զբանս, եւ զերջանիկ հաւրն մերոյ եւ նահատակին մեծի ներբողական<sup>4</sup> ճառիս<sup>5</sup> բունն հարցուք վերստին:

275 Քանզի ծայրագոյն խոնարհութիւն նորա յորդորեաց զմեզ յայսքան ձգիլ<sup>6</sup> երկարութիւն բանից, որպէս զի պարտ է, որք յայսմ<sup>7</sup> աստիճանի բաղձան եւ ախորժեն բանաւոր հաւտից վերակացու լինել, աւրինակ առնուլ<sup>8</sup> զերանելիս:

276 Մաքրել նախ<sup>9</sup> զանձինս<sup>10</sup> յամենայն արատոյ ըստ նմանութեան սորա, եւ ապա յաստուածայինս յայս մերձենալ սրբութիւն, ըստ տէրունական հրամանին, եթէ. «Ծագեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, զի զգործս ձեր բարիս տեսեալ փառաւորեսցեն զՀայրն երկնաւոր»<sup>11</sup>: 277 Նա թէ եւ<sup>12</sup> մարմնական ինչ փորձութեանց<sup>13</sup> հանդիպեսցիք<sup>14</sup>, մի՛ անժուժկալութեամբ<sup>14</sup> վհատիցիք, այլ համբերեցէք մեծաւ յուսով: 278 Տեսէ՛ք զաստուածագեաց հարսն մեր, որ<sup>15</sup> յառաջագոյն, եթէ զիս<sup>16</sup> ըզայնքան նեղութեանց եւ չարչարանաց ժուժկալեցին յաղագս հաւտին<sup>16</sup>, համբերութեամբ բազմաւ ի նեղութիւնս<sup>17</sup> ի

վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանտս<sup>18</sup>, ի խռովութիւնս, յաշխատութիւնս<sup>19</sup>, ի հսկմունս, ի պահս<sup>20</sup>, ի սէր սրբութեան, ի բանս ճշմարտութեան, ի զաւրութիւն Աստուծոյ, փառաւք եւ անարգութեամբ, գովութեամբ<sup>21</sup> եւ պարսաւանաւք, իբրեւ մահկանացուք եւ ճշմարտապէս կենդանիք, իբրեւ տրտմեալք եւ հանապազ ուրախք, իբրեւ տնանկք եւ զբազումս մեծացուցին: 279 Այս ամենայն զրեցաւ վասն նոցա յաւրինակ<sup>22</sup> մեզ, զի եւ մեք զհետ շաւղաց նոցա երթիցուք:

280 Այլ եւ մարգարէքն սուրբք եւ նահապետացն դասք պէսպէս փորձութեամբ անցուցին<sup>23</sup> զկեանս իւրեանց: 281 Լուր իսկ Դաւթայ, յորժամ զվշտաց իւրոց զբազմութիւն ի թիւ արկանէր<sup>24</sup>. «Տէր Աստուած իմ<sup>25</sup>, ի քեզ յուսացայ, փրկեա՛ զիս, եւ ի հալածչաց իմոց<sup>26</sup> ապրեցո՛ զիս»<sup>27</sup>, եւ՝ «Մինչեւ յե՞րբ, Տէր, մոռանաս զիս ի սպառ»<sup>28</sup>, եւ թէ. «Ես ի տանջանս պատրաստ եմ»<sup>29</sup>, եւ՝ «Ի՛ բաց արա յինէն զտանջանս իմ<sup>27</sup>»<sup>28</sup>, եւ թէ. «Կոխեցին զիս թշնամիք իմ զաւրհանապաղ»<sup>29</sup>, եւ՝ «Լղմոխիր որպէս հաց կերայ»<sup>28</sup>, եւ՝ «Պանդուխտ եմ ես եւ նշգեհ, որպէս<sup>28</sup> ամենայն հարս<sup>29</sup> իմ»<sup>28</sup>:

1 E բագաւորեալ  
 2 BDE չի՛բ  
 3 BE այսոցիկ աւարտեսցուք աստանաւր  
 4 D զներբողական E զներբողականս  
 5 BDE ճառից  
 6 D ցգել  
 7 BE այսմ  
 8 D առնել  
 9 BDE + եւ առաջին  
 10 B + մեղաց եւ ի  
 - Մ-դ-Լ- 16  
 11 E եւ բէ փիս բէ եւ  
 12 D փորձութեան  
 13 B համբերեսցիք  
 14 E անժուժկեամբ  
 15 DE զաստուածագեացս հարսն  
 16 DE + քիստոսի  
 17 DE չի՛բ ի նեղութիւնս B բագում նեղութիւն փիս համբերութեամբ բազմաւ ի նեղութիւնս

18 BE բանդս  
 19 E չի՛բ  
 20 D ի ճերարդութիւնս  
 21 B գոհութեամբ  
 22 BD օրինակ  
 23 D փորձութեան բան ցուցին  
 24 DE ի թիւ արկանէ գրագմութիւն B ի թիւ արկանէր գրագմութիւն  
 25 BE չի՛բ  
 26 DE յիմոց հալածչացն  
 27 Ք Մ-դ-Լ- 2  
 28 Մ-դ-Լ- 2  
 29 Մ-դ-Լ- 18  
 27 DE չի՛բ իմ  
 28 Ք Մ-դ-Լ- 11  
 29 Ք Մ-դ-Լ- 3  
 28 E + եւ  
 29 E հարս B հարսն  
 28 Ք Մ-դ-Լ- 13

282 Տեսանե՞ս, զի ոչ միայն զիւրան<sup>1</sup> յայտ առնէ զնեղութիւն<sup>2</sup>, այլ եւ զնախնեացն, եւ ոչ պարզարար զմիոյ կամ զերկուց, այլ զամենեցուն, որպէս ամենայն Հարքն իմ, ասէ, ցուցանելով եւ յայտնելով<sup>3</sup>, եթէ ոչ ոք ի նոցանէ յաշխարհիս յայսմիկ Հանգստեան պատահեցաւ:

283 Երթիցուք, եթէ ախորժիցէք, առ<sup>4</sup> բազմավիշտ<sup>5</sup> նահատակն<sup>6</sup> Յովբ եւ լուիցուք չափով որպէս<sup>7</sup> առ ի նմանէ զիւրոցն<sup>8</sup> պատմելով զչարհարանաց, որպէս զի կարասցուք<sup>9</sup> թերեւս առ նորայն նախանձու եւ զմերս թեթեւ նեղութիւնս<sup>10</sup> Համբերութեամբ տանել. «Ո՞չ ապաքէն իբրեւ զփորձութիւն են, ասէ, վարք մարդոյ<sup>11</sup> ի վերայ երկրի, եւ կամ իբրեւ զառաւրեայ վարձս վարձկանի<sup>12</sup> կեանք նորա», եւ եթէ<sup>13</sup>. «Գիշերք ցաւագինք տուեալ են ինձ»<sup>14</sup>, եւ եթէ<sup>14</sup>. «Լի՛ ցաւաւք լինիմ, յերեկորեայ մինչեւ յառաւուտ»<sup>15</sup>, եւ՝ «Արդարք ծաղր լինին, զի մատնին ի ձեռն<sup>15</sup> ամբարշտաց»<sup>16</sup>: 284 Իսկ առ Աստուած ասէ. «Զարհուրեցուցանես զիս տեսլեամբ գիշերուոյ»<sup>17</sup>, «մատնեցեր զիս ի ձեռն<sup>16</sup> անաւրինի»<sup>18</sup>:

«եղիւր զիս բամբասանս ազգաց, եղէ նոցա ծաղր<sup>17</sup>, պաշարեալ եմ յամենեցունց»<sup>18</sup>:

285 Տեսանե՞ս ցաւագին պատմութիւն, տեսանե՞ս բռնաւորական վիշտք<sup>18</sup>: 286 Նման սմին եւ Երեմիաս ասէ<sup>19</sup>. «Ո՛հ, մայր իմ, ընդէ՞ր ծնար զիս՝ այլ<sup>20</sup> դատեալ եւ<sup>21</sup> դատապարտեալ, տեսանել զթշուառութիւնս մարդկան»<sup>22</sup>:

287 Այսպէս եւ<sup>22</sup> ամենայն արդարոցն դասքն ի ցաւս եւ ի չարհարանս անցուցին զկեանս<sup>23</sup> իւրեանց: 288 Վասն որոյ աղաչեմ եւ փոխանակեմ<sup>24</sup>, մի՛ Հանապաղ զանդորր եւ զընդարձակն խորհիք<sup>25</sup> ճանապարհի Հետեւումն. քանզի եւ զինուոր թէ<sup>26</sup> պատաղիցի ընդ<sup>27</sup> կեանս աշխարհիս եւ ոչ ըստ աւրինին<sup>28</sup> մարտիցէ, ոչ պսակիցի<sup>29</sup> առ ի զաւրավարէն<sup>30</sup>: 289 Նմանապէս եւ դուք, մի՛ վատք եւ վեհերոտք յասպարիզի նահատակութեանն գտանիցիք, այլ նմանեալք երանելի արանցն<sup>31</sup>, Համբերեցէք Հասելոց նեղութեանցն<sup>32</sup>, որ վասն բարեպաշտութեանն. «Գիտէք իսկ՝ զի նեղութիւնք զՀամբերութիւն զործեն»՝ ըստ Պաւղոսի, «Համբերութիւն զՀանդէս, Հանդէսն<sup>33</sup> զյոյս<sup>34</sup>, յոյս<sup>35</sup> ոչ երբէք յամալթ

1 D զիւրն միայն BE միայն զիւրն

2 BDE զնեղութիւնս

3 DE յայտ առնելով

4 BDE ախորժէք

5 DE ի բազմավիշտն

6 BDE + յերանելին ասեմ

7 DE չափաւորապէս

8 B զիւրոցն

9 B չի՞ որպէս զի կարասցուք

10 DE նեղութիւն

11 D մարդկան

12 B վարկանի

13 DE դարձեալ

14 DE չի՞ եւ եթէ

15 DE ձեռն

16 BDE ձեռն

17 DE զիւրն միայն BE միայն զիւրն

18 BDE զնեղութիւնս

19 DE չափով որպէս

20 DE նոցանէ

21 DE զիւրոցն

22 DE զիւրոցն

23 DE զիւրոցն

24 DE զիւրոցն

25 DE զիւրոցն

26 DE զիւրոցն

27 DE զիւրոցն

28 DE զիւրոցն

29 DE զիւրոցն

30 DE զիւրոցն

31 DE զիւրոցն

17 BDE չի՞ եղէ նոցա ծաղր

18 DE զիւրոցն

19 DE բարբառի B սէ եւ բարբառի

20 DE այլ

21 D չի՞ դատեալ եւ

22 DE զիւրոցն

23 D զիւրոցն

24 DE փոխանակեմ

25 DE խորհիք

26 D եր E որ

27 BDE ի

28 DE աւրինաց զաւրավարին

29 D պակիցի E պսակեցի B պսակիցի

30 DE նմանէ

31 B + համբերութեան

32 DE հասելոց նեղութեանց

33 D համբերութիւն

34 BDE + բարեպաշտ

35 DE յոյսն

առնէ»<sup>7</sup> զհաւատացեալսն<sup>1</sup> նովաւ: 290 Եւ արդ, մի՛ ի նեղութիւնս միայն հայիցիք<sup>2</sup>, այլ եւ ի պսակն. մի՛ յախտն<sup>3</sup> եւեթ հայիցիք<sup>4</sup>, այլ եւ<sup>5</sup> ի փոխարէն հատուցմանցն<sup>6</sup>: 291 Քանզի եւ այս մեծագոյն իմն երեւի յուսոյ լրումն, յազազս հանդերձեալ բարեացն անտես առնել զներկայիս չարչարանս:

292 Այլ այժմ բաւական վարկանիմ որ<sup>7</sup> յազազս այսոցիկ ասացեալքս<sup>8</sup>:

293 Բե՛ր այսուհետեւ յառաջիկայսն երթիցուք մտանել<sup>9</sup> ի բանն, ուստի ելաք:

294 Քանզի եւ<sup>10</sup> երանելի հայրն մեր եւ մեծ խոստովանողն Քրիստոսի<sup>11</sup> Գրիգորիոս յետ պայծառագոյն յայտնութեանն, որ ի վերուստ, հաւանեալ<sup>12</sup> լինէր տէրունական հրամանին. երթայր այնուհետեւ ընդունել զձեռնադրութիւն քահանայապետութեանն, որ եւ անդանաւր նշան մեծագոյն, եթէ ո՛րք էր Գրիգորիոս, ցուցանէր Աստուած, որպէս զի Հոգին Սուրբ աղանակերպ տեսեամբ յայտնէր ի վերայ նորա հանգչելով. եւ այնքան մեծավայելուչ պատուով դառնայր սքանչելի քահանայպետն Աստուծոյ յայցելութիւն<sup>13</sup> ժողովրդեան իւրոյ: 295 Ընդ առաջ ընթանայր այնուհետեւ<sup>14</sup> ի պատիւ նմա մեծ արքայն Տրդատիոս<sup>15</sup> հանդերձ ամենայն

զաւրաւքն: 296 Եւ պատահեալ միմեանց առ գետովն Եփրատայ՝ լի առնէր զամենեսեան խնդութեամբ բազմաւ<sup>16</sup>, քանզի եւ<sup>17</sup> մկրտէր զնոսա յանուն սուրբ Երրորդութեան: 297 Յորում եւ լոյս<sup>18</sup> անճառելի ծագէր ի յերկնից ի հրաշս<sup>19</sup> սքանչելեաց տեսողացն<sup>20</sup>: 298 Շինէր<sup>21</sup> եւ տաճարս Աստուծոյ բազմապատիկս եւ հրաշալիս յաշխարհին Հայաստանեայց, կացուցանէր եպիսկոպոսունս եւ<sup>22</sup> երիցունս եւ<sup>23</sup> սարկաւազունս եւ<sup>24</sup> դասս կղերիկոսաց եւ վանականաց, ուսուցանէր զնոսա զեղեցիկ եւ առատ վարդապետութեամբ ի զաւրութեանց աստուածայնոց տառից, ամրացուցանէր ի հաւատս, հաստատէր ի վերայ Հիման առաքելական դաւանութեանցն<sup>25</sup>. եւ այնքան՝ զի մինչեւ ցայժմ իսկ աւր ըստ աւրէ<sup>26</sup> ի լաւագոյնսն յառաջանան ընտրեալ նորայն ժողովուրդ եւ վիճակ<sup>27</sup>:

299 Իսկ երանելին յետ սուղ ինչ ժամանակի հրաժարէր ի վերակացութենէ անտի, ի ցանկալին<sup>28</sup> իւր երթեալ համբուրէր լուութեամբ<sup>29</sup>, զհրշտակական դարձեալ դառնայր զքաղաքավարութիւն<sup>30</sup>: 300 Քանզի

\* Հմմտ. Հովհ. Է 3-5

1 BDE զհաստացեալսն  
2 BE հայիք  
3 E յախտսն B ախտն  
4 DE չիք  
5 E չիք  
6 BDE հատուցմունսն DE + մի ի տանջանսն, այլ յարեայութեանն խոստումն  
7 DE վարկանիմ որ B համարիմ  
8 DE այսոցիկ ասացեալք  
9 BDE մտանելով  
10 BDE չիք  
11 BDE չիք  
12 B հովանի  
13 BDE + նորատունկ  
14 B ընթանալով փի ընթանայր պնուհետեւ  
15 B նմա մեծ արքայն Տրդատիոս ի պատիւ

16 Ագաթ. ՃԺՁ 7. «Ընդ առաջ ելանէր մմա քաղաւորն ամենայն զաւրաւն հանդերձ, առ ակն եփրատ գետոյն, որ եւ ընդ պատահելն իսկ լի առնէր զամենեսեան ողջունիւ Աւետարանին Քրիստոսի, եւ քաղում ցնծութեամբ եւ ուրախութեամբ յաւանն դառնային»:

17 BDE չիք  
18 D լոյսն  
19 BDE հրաշ  
20 DE + եւ յայնմիտէ պատրաստը տեսան ժողովորդ սեպիական  
21 B սխանչելի տեսողացն լինէր  
22 BDE չիք  
23 D չիք  
24 BDE չիք  
25 BDE աւանդութեանցն  
26 B + իսկ  
27 Հմմտ. Ագաթ. ՃԺ  
28 DE զցանկային  
29 DE լուսիւն B յանապատ համբերել լուսութեամբ  
30 B ստանայր քաղաքավարութեամբ DE չիք գիրտակականն դարձեալ դառնայր զքաղաքավարութիւն

յոյժ սիրելի էր նմա ընդ մեծին եղիայի եւ ընդ Յովհաննու Մկրտչին<sup>1</sup> առ բնակելն<sup>2</sup> յանապատի<sup>3</sup>, վասն որոյ եւ ախորժէր իսկ թագուցանէլ զանձնն ի<sup>4</sup> մարդկան<sup>5</sup> տեսութենէ, զի մաքրապէս անդանաւր եւ աննիւթաբար անհիւթականին<sup>6</sup> հանդիպեսցի տեսութեանցն<sup>7</sup> Աստուծոյ:

301 Այսոքիկ են սրբազանի հաւրն մերոյ<sup>8</sup> ուղղութիւնք, եւ այս նորա<sup>9</sup> քաջութեանն պատմութիւնք: 302 Այսպիսի լաւագոյն առաքինութեամբ քաղաքավարեցաւ<sup>10</sup> յաշխարհի, ոչ ի հեշտութիւնս ինչ կենցաղականս, այլ ի գանս եւ ի տանջանս, ի քաղց եւ ի ծարաւ, ի ցուրտ եւ ի մերկութիւն, ի բանտս<sup>11</sup> եւ ի կապանս, ի լերինս եւ յանապատս<sup>12</sup>: 303 Սիրեաց զԱստուած եւ սիրեցաւ<sup>13</sup> ի նմանէ, փառաւորեաց եւ փառաւորեցաւ. «Զփառաւորիչս իմ, ասէ, փառաւորեցից<sup>14</sup>»:

304 Գրիգորիոս Երրորդութեանն քարոզողն<sup>15</sup>, ուղղափառութեանն հաստատիչն, Քրիստոսի հաւտին վերադիտողն, իմաստութեան Հոգւոյն տաճարն, երկնային կառավարն, աւղախաղաց թռչունն, տիեզերաց անշիջանելի լոյսն, պայծառագոյն արուսեակն, մոլորելոց առաջնորդն, ընտրութեան անաւթն, սրբութեան տաղաւարն, աստուածական նուէրն, Հոգւոյն Սրբոյ ընդունողն, միասնական Երրորդու-

թեանն բնակարանն, առաքինութեանն աւրինակն, պատուիրանացն<sup>16</sup> Աստուծոյ գործարանն, հայրապետաց գեղեցկութիւնն, միայնաւորաց պայծառութիւնն<sup>17</sup>, սրբութեան ուղեւորիչն, հաւատոց<sup>18</sup> հաստատութիւնն<sup>19</sup>, ամբութեան պարիսպն<sup>20</sup>:

305 Գրիգորիոս՝ քրիստոսական աւրինացն վարդապետն, աւանդութեանց նորին ուսուցիչն, դիւաց հալածիչն<sup>21</sup>, հեղութեան<sup>22</sup> աւրինակն, հանդարտութեան եղանակն<sup>23</sup>, խոնարհութեան գաղափարն, ճգնաւորաց նկարագիրն, անապատական տատրակն, լուսափայլ արեգակնն, աղբերահոս<sup>24</sup> միտքն, աննիրհելի ակնն, ապաշխարութեան ուսուցիչն, դարձելոց միջնորդն, մոլորելոց<sup>25</sup> առաջնորդն, հիւանդաց բժիշկն, ախտից սատակիչն, արիական հովիւն, անքուն պահապանն, համբերութեան արմատն, անճառելեաց տեսանողն<sup>26</sup>, ստորայնոց<sup>27</sup> արհամարհողն, երկնաթռիչ արծուին<sup>28</sup>, հրեշտակաց պարակիցն, առաքելոցն հաղորդակիցն, մարտիրոսաց չարչարակիցն, արքայութեանն բնակակիցն<sup>29</sup>, Աստուծոյ Հաւր ժառանգաւորն, Քրիստոսի ժառանգակիցն, Հոգւոյ Սրբոյ ճեմարանն<sup>30</sup>, որ միշտ<sup>31</sup> առաջի Երրորդութեանն ընդ

1 DE մկրտչին յովհաննու  
 2 BDE բնակելն  
 3 Հմմտ. Ազար. ձԻԳ 2  
 4 B գանձն իւր  
 5 DE մարդկայինս  
 6 DE աննիւթականին  
 7 E տեսութեանն  
 8 B մեր  
 9 DE նորայն  
 10 BDE բաղաճավարեաց  
 11 E բանդ  
 12 BDE յանապատի  
 13 DE + առ  
 14 DE փառաւոր արարից  
 \* Ը՛ թ՝ ա՛գ՝ Ի՛ 30  
 15 BDE Բարոզն

16 DE պատուիրանաց  
 17 A չի՛ր միայնաւորաց պայծառութիւնն  
 18 BDE հաւատոյ  
 19 D + եւ  
 20 B չի՛ր ամբութեան պարիսպն DE եկեղեցւոյ ամբութիւնն  
 21 A չի՛ր աւանդութեանց նորին ուսուցիչն, դիւաց հալածիչն B չի՛ր դիւաց հալածիչն  
 22 D հեղութեան E նեղութեանց  
 23 DE յեղանակն  
 24 B աղբիրահոս DE արագահաս  
 25 D չի՛ր  
 26 B տեսողն  
 27 DB ստորնայնոցս  
 28 A արծիւն  
 29 DB բնակիչն E բնակիցն  
 30 BDE չի՛ր հոգւոյ սրբոյ ճեմարանն  
 31 E չի՛ր միշտ

հրեշտակա բարեխաւսէ՛ 1 վասն ամենայն աշխարհի:

306 Այլ դու, ս'վ՛ 2 աստուածային եւ պատուական գլուխ, որ զամենեցուն զգլուխն Քրիստոս՝ 3 յանձին բերելով լոյս երեւեցար տիեզերաց: 307 Ո՛վ աստուածազգեաց՝ 4 եւ երջանիկ հայր, որ գեղեցկապէս քաղաքավարելով ի՛ 5 յերկրի, զընթացսն կատարեցեր եւ՝ 6 զհաւատսն պահեցեր, պակազիր կէտին՝ 7 ժամանեալ հասեր, եւ առաջնորդական մտացդ մաքրութեամբ, որքան կարելի է մարդկան, աստուածատես եղեալ եւ վերամբարձեալ յանհասանելի բարձրութիւնսն՝ 8:

308 Դու զչարչարանացն բառնալով ի վերայ ուսոյդ՝ 9 զխաչն եւ՝ 10 միամտաբար զհետ Քրիստոսի ընթացար, որով գանկապտելին գանձեցեր զգանձն՝ 11 պահեալ քեզ յամենատ[եան]էն յերկինս:

309 Դու զկենցաղս՝ 12 ամենայն վաճառեցեր, եւ գանգինն՝ 13 ստացար մարգարիտ՝ 14 զՔրիստոս:

310 Դու ոչ ի վերայ աւազոյ հեղգաբար շինեցեր գտունն, այլ ի վերայ ամրացեալ վիմին առ ի Քրիստոս հաւատոցն հաստատեցեր զհիմնն, ուստի եւ ի շնչմանէ աւզային այսոցն դառնաբեր հոգմոց՝ 15 եւ յարուցեալ կռապաշտութեանն ախտից՝ 16 մնացեր անսասանելի:

1 E + միշտ  
2 E չի՛  
3 E գլուխն զքրիստոս  
4 BDE աստուածազգեստ  
5 B Բաղաբաւարեալ  
6 BDE չի՛  
7 BD կիտին  
8 BDE վերամբարձար յանհասանելի բարձրութիւն  
9 D ուսոցդ  
10 DE զխաչ B զխաչն  
11 DE զգանձ B գտեր զգանձն  
12 BDE զկենցաղականս  
13 DE + փոխանակ  
14 D մարգարիտն  
15 B հոգմոցն  
16 BDE կռապաշտութեանց ուղիսից

311 Դու զծանրութիւն տունջեան բոլոր կենցաղոյս եւ գտապն՝ 17 բոցակէզ միջաւրեայ բարձեր ամենայնիւ, որով զվարձուցն ընկալար ի Տեառնէ զվաշխ եւ՝ 18 զփոխարէնսն:

312 Դու գտուեալն քեզ շնորհացն տաղանդ առ յԱստուծոյ, առատապէս բաշխելով բազմացուցեր, որով զերանաւէտն լուար ձայն: 313 Բարի ծառայ եւ հաւատարիմ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո:

314 Դու զլապտեր հոգւոյդ ողորմածութեանն իւղովն անշիջանելի պահեցեր՝ պատրաստ գտանելով մտանել ընդ Քրիստոսի յերկնայինն առագաստն՝ 19:

315 Դու ընդ նեղ եւ ընդ՝ 20 անձուկ շաւիղ արքայութեանն ճանապարհորդելով՝ 21 վայելես այժմ ի վերին գերաշխարհիկ կեանսդ՝ 22:

316 Դու զկեանս քո խոկմամբ մահու վարելով՝ զախտս մարմնականս յեղանակաւ աստուածսիրութեամբ՝ 23 հոգւոյդ հնազանդեցուցեր:

317 Դու յամատոյց զղեակ անախտութեանն ժամանելով՝ 24 գերակատար առաքինութեամբ՝ 25 հաւատոյ, լուսոյ եւ սիրոյ՝ 26 բարձրացար յիմանալիսն, կառավարելով ըստ եղիայի յերկինս, ամենայնիւ յԱստուած միացեալ աստուածատեսակ մաքրութեամբ:

318 Եւ զի համառատագոյն ասացից, դու եւ զյաւիտենական զսրբոցն ամենեցուն զառաքինութիւնսն՝ 27 հաւաքելով ա-

17 BDE գտապ  
18 BDE վաշխիւ  
19 DE առագաստ  
20 DE չի՛  
21 E նանապարհորդելով շաւիղ արքայութեանն  
22 BDE կայեանսդ  
23 DE աստուածսիրութեան  
24 DE հասանելով  
25 B առաքինութեան  
26 DE սիրոյ եւ լուսոյ  
27 DE սրբոցն ամենեցունց գառաքինութիւնս

առաքինաբար<sup>1</sup> ըստ աւրինակի մեղուաց՝  
զբազմատեսակ վարս<sup>2</sup> ընտրելով զիւրա-  
քանչիւրոցն ի քոյղ բերես նմանութիւն,  
զորոց եւ<sup>3</sup> բերցուք առաջի մի ըստ միոջէ  
զանուանս ընտրելոցն յիշատակաւ:

319 Աբել արդար, անարատ պատարա-  
գաւն այն<sup>4</sup> գովեցաւ: 320 Իսկ դու, բազ-  
մերջանիկ Հայր, ընծայ բանաւոր բոլորո-  
վին զանձն քո մատուցեր Աստուծոյ՝ Հա-  
նապազորդ<sup>5</sup> մաղթանաւք առ նոյն  
Հպեալ<sup>6</sup>:

321 Ենովս անտեսանելի յուսով յուսա-  
ցաւ ի Տէր<sup>7</sup>, իսկ դու գառաջիկայ յուսոյն  
աւրինակ արդէն ցուցանես տակաւին:

322 Ենովք Հաճոյ եղեալ Աստուծոյ  
փոխադրեցաւ յստորայնոց<sup>8</sup>, իսկ դու  
զհոգւոյդ տեսութիւն բոլորովին յերկրէ  
յերկինս փոխադրեցեր:

323 Նոյ արդար գոյով եւ ի վերայ պա-  
տարագացն Հաճոյ գտեալ, փայտեղէն տա-  
պանաւն զկենդանեացս<sup>9</sup> ազգ ապրեցուցա-  
նէր ի ջրհեղեղէն կործանմանէ<sup>9a</sup>: 324 Բայց  
դու նոր իմն տապան Հաստատեցեր՝ զեկե-  
ղեցի Քրիստոսի, եւ ի ջրհեղեղէ կռապաշ-  
տութեանն զբազմութիւն մարդկան ապրե-  
ցուցեր<sup>10</sup>:

325 Աբրահամ աստուածսիրութեամբն  
եւ Հիւրասիրութեամբն սքանչելի եղեալ<sup>7</sup>,  
միանգամայն եւ պատարագ ընդունելի ա-

ռանց զենման զորդին, որ յաւետեացն էր,  
մատուցանէր Աստուծոյ<sup>7</sup>: 326 Իսկ<sup>11</sup> դու ոչ  
միանգամ, այլ Հանապազաւր զՔրիստոս  
ընկալար Հիւրասիրութեամբ ի գբին տա-  
ռապանաց, եւ զեներ՝ ոչ ոչխար<sup>12</sup> փոխա-  
նակ Իսահակայ մատուցեալ, այլ զքեզ  
ինքնին բոյորապտուղ ողջակէզ բանաւոր  
ընծայելով կենդանւոյն Աստուծոյ:

327 Իսահակ արդարութեամբն եւ աւ-  
րինակ լինելովն փառաւորի, իսկ դու իբ-  
րեւ զքանոն<sup>13</sup> արդարութեան, զամենայն  
տեսակս առաքինութեան եւ<sup>14</sup> զաւրինակ  
բարեաց ի քեզ բերելով մաքրապէս:

328 Յակովբ պարզմտութեամբ Հոգւոյն  
եւ բազմորդութեամբն սքանչելի եղեւ, որով  
եւ զսանդուղսն<sup>15</sup> տեսանէր<sup>16</sup> յերկրէ յերկինս  
Հաստատեալ<sup>17</sup>, մեծագոյն իմն խորհրդոյ  
աւրինակ մեզ ցուցեալ<sup>7</sup>: 329 Բայց դու  
ծնար Հովիւս եւ Հովուապետս եւ Հաւաս  
բազումս՝ Հաւտապետին<sup>18</sup> Քրիստոսի. եւ  
ելս ի մտի դնելով քո, իբրեւ աստիճանաց  
ելիւք ըստ իմանալի սանդղոց՝ փառաց ի  
փառս փոփոխելով<sup>19</sup>, յերկրէ յերկինս<sup>20</sup> վե-  
րակոչեցար. վասն որոյ ոչ նշանաւոր խա-  
չինս, այլ նշանաւ Հոգւոյն շնորհաց՝ բա-  
զում որդիս լուսոյ ածեր ի փառս:

330 Յովբ յազագս անարատութեանն  
եւ Համբերատար ժուժկալութեանն երեւե-  
լագոյն<sup>21</sup> եղեւ, բայց ոչ նուազագոյն, քան  
զնորայն երեւեցաւ<sup>22</sup> եւ քոյին չարչարա-

1 DE իմաստասիրաբար  
2 B վարդս  
3 DE չի՛ր  
4 DE չի՛ր  
5 DE համաբազար  
6 BDE հպելով  
7 Կ՝ն՛նք. Ի՛ 26  
8 AB չի՛ր իսկ դու գառաջիկայ ... փոխադրեցաւ  
յստորայնոցս  
9 Կ՝ն՛նք. Ի՛ 24  
10 D զկենդանեաց E զկենդանեացն  
11 DE ջրհեղեղին կործանմանէն B ջրհեղեղին կոր-  
ծանմանէ  
12 Կ՝ն՛նք. Գ 9-Ի՛ 19  
13 D ապրեցուցաներ  
14 Կ՝ն՛նք. Ժ՛ 1-8

է Կ՝ն՛նք. Ի՛ 3-10  
11 E բայց  
12 B ոչխարս  
13 D իբրեւ բանոն E իբր բանուն B իբրեւ բանոն  
14 B չի՛ր զամենայն տեսակս առաքինութեան եւ  
15 D զսանդուղսսն A զսանդուղսն B զսանդուղսն  
16 D + իբրեւ  
17 DE հաստանելով  
18 Կ՝ն՛նք. Ի՛ 12  
19 B հովուապետին  
20 DE փոխելով  
21 D ի յերկրէ ի յերկինս  
22 B + եւս  
23 E երեւեցար

նացն նահատակութիւն. զի ոչ արտաքոյ քաղաքին յաղբիս<sup>1</sup>, այլ ի բազմավիշտ խորխորատին եւ ի<sup>2</sup> դժոխայինն<sup>3</sup> անապատի, եւ փոխանակ որդանցն՝ դաժանատեսակ թունաւորացն<sup>4</sup> իժիցն եւ քարբիցն<sup>5</sup> համբերելով:

331 Յովսէփ ողջախոհութեամբն եւ անոխակալութեամբն հռչակեցաւ<sup>6</sup>, իսկ դու աւրինակ բարեպաշտութեան<sup>6</sup> յամենայնի երեւեցար, եւ յիմանալի եգիպտուհոյն՝ ի բնաւորական<sup>7</sup> ախտից՝ զմիտսդ<sup>8</sup> մաքրելով, զպատմուճան մեղացն մերկացեալ՝ փախեար յամաւթոյ. որ եւ անյիշաչարութեամբն<sup>9</sup> զեղբայրադաւ բռնաւորսն ի սովոյ աստուածային բանիցն<sup>10</sup> առատապէս կերակրեցեր գիտութեամբ ճշմարտութեան հոգեւորական հացիւն<sup>11</sup> իջելոյ յերկնից:

332 Մովսէս հեղութեամբն<sup>12</sup> եւ աւրէնսդրութեամբն<sup>13</sup> նկարագրեցաւ կոչիլ Աստուած փարաւովնի եւ առաջնորդ ժողովրդեանն Իսրայելի: 333 Սակայն եւ դու, ո՛վ աստուածընկալ հայր, հեղութեամբ<sup>14</sup> առ ամենեսեան, մանաւանդ առ բռնաւորագունիցն երեւեցար տանջանս, եւ ի մէզ նահատակութեան մտանելով զաստուածագիծ աւրինացն<sup>15</sup> ընկալար զտախտակս, յորում զհոգեւորական պատուիրանսն ոչ Իսրայելի միայն աւանդե-

ցեր, այլ<sup>16</sup> ամենայն տիեզերաց<sup>17</sup>. եւ զմեհեանս դիւաճոյլ պատկերացն իրրեւ զկառս փարաւովնի ի խորս՝ քոյին քաջութեամբդ ընկղմեցեր:

334 Սամուէլ նախ քան զյղանալն յորովայնի՝ Աստուծոյ նուիրեցաւ, որ եւ շնորհս ընկալեալ մարգարէութեան զուշակէր զհանդերձեալսն: 335 Իսկ դու նախ<sup>18</sup> քան զգոյանալն ընծայեցար ի Հոգւոյն նախագուշակութեանց նուէր Աստուծոյ, եւ անճառելի տեսեամբ մարգարէական աշաւք տեսեր<sup>19</sup> զապագայիցն լինելութիւն:

336 Քաջն Դաւիթ զամբարտաւանն Գողիաթ զինու հոգւոյն պատերազմեալ<sup>20</sup> պարսաքարաւ<sup>21</sup> կործանէր: 337 Իսկ դու զիմանալին Գողիաթ, այսինքն՝ զպետութիւնս եւ զիշխանութիւնս աշխարհակալի<sup>22</sup> խաւարիս, զաւրութեամբ սուրբ<sup>23</sup> խաչին Քրիստոսի ընկճեալ՝ յերկիր կործանեցեր, եւ զբանաւոր գառինս ազատելով ի բերանոյ առիւծուն եւ<sup>24</sup> գերեցեր զամենայն միտս ի հնազանդութիւնն Քրիստոսի:

338 Եղիա գովելի եղեւ նախանձաւորն<sup>25</sup> Աստուծոյ, զի զամաւթոյ մարգարէան համարձակապէս սատակեալ կորուսանէր: 339 Իսկ դու զբռնաւոր արքայն եւ<sup>26</sup> զսպասաւորն ամաւթալից ախտից՝ ի կերպարանս փոխարկեցեր<sup>27</sup> զազրատեսակ

1 A յաղբես  
2 BDE չի՛ր եւ ի  
3 B դժոխակամն  
4 B դաժանատեսակ  
5 DE Բարբից  
« Կ՝նշ. Լ. Թ. 7-12  
6 DE պարկեշտութեան  
7 D բանաւորական  
8 BDE գմիտս  
9 BDE անյիշաչարութեամբ  
10 BDE բանիցն  
11 BDE հացիցն  
12 D հեղութեամբ  
13 E արիմադրութեամբ  
14 BDE հեզ  
15 DE զաստուածագիծն արիմաց

16 B + եւ  
17 BDE այլ ամենայն տիեզերաց աւանդեցեր  
18 DE եւ յառաջ  
19 D տեսանէր  
20 B պատերազմէր  
21 DE պարսաքարիւն B պարսաքարիւ  
22 B իշխանակալ  
23 DE չի՛ր  
24 BDE չի՛ր  
25 DE նախանձուն  
26 BDE չի՛ր  
27 B փոխեցեր / Հմմտ. «Զարբայն կրկին ի մարդ դարձեալ փոխարկէր» («ՂԳ Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչիմ», Փոխ ՄՀ, ԻԱ, էջ 850.36)

կենդանւոյ<sup>1</sup>, ոչ ի սատակումն մատնելով<sup>2</sup>, այլ ի կեանս վերստին առաջնորդեցեր<sup>3</sup>:

340 Յովհաննէս՝ մեծ ի ծնունդս կանանց բարերանեցաւ յարարչէն, ձայն բարբառոյ յանապատի, կարապետ եւ մկրտիչ Քրիստոսի: 341 Եւ դու ոչ նուազագոյն քան զնա<sup>4</sup> երեւեցար<sup>5</sup>, որպէս թուի ինձ: 342 Քանզի ի դասս Հայրապետաց նախամեծարեցար, ընդ վկայսն նաՀատակեցար, ի մարտ ասպարիսին<sup>6</sup> ընթացար, յանապատին<sup>7</sup> ճգնեցար, ի<sup>8</sup> ձայն բարբառոյ ընդ նմին գոչեցեր<sup>9</sup>, Բանին Աստուծոյ կարապետեցեր, անթիւ բազմութիւն բանաւոր Հատից Քրիստոսի մկրտեցեր, լոյս պայծառագոյն յետ արեգականն արդարութեան ծագեցեր<sup>10</sup>:

343 Այսպէս ի ձեռն գործոյս<sup>11</sup> առաքինութեան զամենայն արդարութիւն<sup>12</sup>, տակաւին եւ զմարգարէիցն ի քեզ բերես աւրինակ<sup>13</sup>՝ զոմանց զնախանձն, զկիսոց զՀամբերութիւնն, զոմանց զհեղութիւնն<sup>14</sup>, զայլոց<sup>15</sup> զմտացն<sup>16</sup> զբարձրութիւնն: 344 Եւ ոչ այսչափ<sup>17</sup> միայն, այլ եւ Քրիստոսի աշակերտացն, զորս շնորհաւ<sup>18</sup> Հոգւոյն ի ստուերական աւրինացն որոչեալ, զպաշտաւն ճշմարտութեանն Հաստատագոյն՝ մեզ զխորհուրդն Աստուծոյ ցուցանէր:

345 Պետրոս եւ Պաւղոս, եղբարք գոլով Համաշունչք ըստ Հոգւոյ, ամուք Քրիստոսի, ընտրեալք եւ առաքելոցն առաջինք, որք զՀամասփիւռ տիեզերս ընկալան վիճակեալք, եւ գերահռչակ քաղաքին Հոռոմայեցոց քարոզչին զաւետարանն Տեառն, որք եւ զանաւթն սատանայի՝ զկախարզն Սիմոն, զբարձրացեալն Հպարտութեամբ<sup>19</sup> նշանաւն Քրիստոսի յերկիր կործանեալ Հերձուին<sup>20</sup>: 346 Իսկ դու, ո՛վ աստուածաբաւ Հայր, ոչ ի միում մասին կամ յանկեան ուրեք, այլ յարեւելից մինչեւ յարեւմուտս, ի ծագաց երկրէ մինչեւ ի ծագս նորին<sup>21</sup> լցեր զաւետարանն Քրիստոսի, որ ի նոյն իսկ ի<sup>22</sup> մայրաքաղաքն ընթացեալ Հռոմայ, միաբանելով ընդ առաքելաշնորհ Հայրապետին եւ աստուածասէր արքային, ընկալեալք<sup>23</sup> առաքելական<sup>24</sup> սիրով զմիմեանս. ոմն արեւելեան<sup>25</sup> աշխարհի ծագող<sup>26</sup> զլոյս ճշմարիտ աստուածգիտութեան, եւ<sup>27</sup> միւսն՝ ուստի ծագէ արեգակն՝ լուսաւորիչ: 347 Նմանապէս որ եւ երկաքանչիւրոցդ<sup>28</sup> բարբառ ծաւալեալ լցին զտիեզերս ամենայն<sup>29</sup>:

348 Ընդ մարգարէսն մարգարէացար Հոգւովն, ընդ առաքեալսն քարոզեցեր զՔրիստոս, ընդ աւետարանիչս<sup>30</sup> աւետարանեցեր զՈրդին Աստուծոյ, ընդ Հայրապետսն վարդապետեցեր զբանն կենաց, ընդ անապատականսն ճգնեցար, ընդ մարտիրոսսն նաՀատակեցար, ընդ Հո-

1 DE ամասնոյ

2 D նմանելով

3 BDE առաջնորդեցեր

4 B չի՞ Բան զնա

5 B + Բան զնոյն

6 DE ի մարտ յասպարիզի մարտին

7 BDE յանապատի

8 A եւ

9 D գոչեցար

10 DE ծագեցար

11 Հմմտ. Մատթ. Գ. 2

12 BDE գործոց

13 DE արդարոցն B արդարութիւնս

14 DE գարինակ

15 E զմեղութիւնն

16 BDE զպլոցն

17 B մտաց

18 DE սոցա

19 DE շնորհի

19 DE ի բարձրացեալն հպարտութեմ

20 D հեղձուին B հերձուին

21 D նոցին

22 BDE չի՞

23 DE ընկալալ B չի՞ առաջնորդեցեր հայրապետին եւ աստուածասէր արքային ընկալեալ

24 DE առաքելաբար

25 BDE արեւմտից

26 BE ծագեալ

27 B գիտութեան իսկ

28 DE երկաքանչիւրոցն

29 E համարեմ

30 BDE աւետարանիչսն



վիւսն հովուեցեր զհաւտ քո բանաւոր<sup>1</sup>, ի բանսարկու թշնամւոյն փրկեցեր<sup>2</sup>, ընդ Քրիստոսի յաղթեցեր:

349 Զի՞նչ այսուհետեւ կոչեցից<sup>3</sup> զքեզ. երկրագո՞րծ, արդարեւ ճշմարիտ, քանզի զբանաւոր երկիր արեւելեան աշխարհին՝ կակղեցուցեր երկրագործութեամբ<sup>4</sup>. յորմէ զփուշ անհաւատութեան<sup>5</sup> արմատաքի խլեալ, զբան<sup>6</sup> բարեպաշտութեան սերմանեցեր փոխանակ, եւ զնորատունկ հոգեւորական<sup>7</sup> հատանելով<sup>8</sup>, բազմապտուղ զնա<sup>9</sup> գործեցեր, յորոց զարմտիս<sup>10</sup> երկրագործութեամբ<sup>11</sup> ամփոփեցեր իբր ի հոգեւորական<sup>12</sup> շտեմարանի:

350 Ծարտարապե՞տ արդեւք կոչեցից<sup>13</sup> զքեզ. եւ յիրաւի ուրեմն: 351 Քանզի զմեհեանս զիււաճոյլ պատկերացն քոյով արիւրբար մեծութեամբ<sup>14</sup> տապալեալ՝ յերկիր<sup>15</sup> կործանեցեր, եւ փոխանակ սատանայական բնակութեանց, տաճարս գեղեցիկս եւ հրաշալիս յանուն<sup>16</sup> Քրիստոսի յամենայն<sup>17</sup> աշխարհս հաստատեցեր. եւ<sup>18</sup> իբրեւ իմաստուն ճարտարապետ զնորակերտ եկեղեցիս<sup>19</sup> հաւատացելոց ի վերայ<sup>20</sup>

առաքելական վիմին հաստատեցեր եւ<sup>21</sup> իմաստութեամբ Հոգւոյն<sup>22</sup>:

352 Այլ զի՞նչ եւս անուանեսցուք զքեզ՝ զինուո՞ր: 353 Այո, քանզի որպէս քաջ զաւրական սպառազինեալ հակառակ աներեւոյթ թշնամւոյն, մարտեար ըստ<sup>23</sup> աւրինացն եւ յաղթեցեր բազմատեսակ վիրաւք մարմնոյդ, եւ վահանաւն փրկութեան զգլուխն հաւատոց<sup>24</sup> ամբացուցեալ՝ ամբողջ<sup>25</sup> պահեցեր իբրեւ զվէմ<sup>26</sup> անզրդուելի եւ անշարժ, ի բերմանց բազմապատիկ ուղխից<sup>27</sup> պատերազմաց. եւ յուսով ընդդիմահարեալ՝ հակառակամարտն<sup>28</sup>, քաջապէս պատերազմաւ ընկճեալ՝ դարձուցեր ամաւթով<sup>29</sup> հալածելով ի փարախէ նորասնունդ<sup>30</sup> քո բանաւոր<sup>31</sup> ուղխիցն<sup>32</sup>:

354 Հրեշտա՞կ ուրեմն կոչեցից<sup>33</sup> զքեզ. քանզի ոչ եւ ի հրեշտակաց անկարաւտ բնութենէ<sup>34</sup> գոլով քո հեռի, անմարմնապէս արդէն ի մարմնի կենցաղափարելով եւ իբրեւ երկնային ոմն մարդ եւ յերեւելեացս գերաշխարհիկ, հրեշտականման վարուց ցուցանիս աւրինակ:

355 Եւ զի՞նչ ինչ<sup>35</sup> առաւելագոյն գործիւր երբեմն ի ձեռն հրեշտակին: 356 Յառաջագոյն՝ յափշտակեալ զԱմբակում ի Սիրովնէ եւ հասուցանել ի Բաբելովն, զի<sup>36</sup> եւ ի զբի առիւծուցն Դանիելի զճաշն մա-

1 B գրանաւորս  
2 DE փորձեցար  
3 B կոչեսցուք  
4 BDE աշխարհի կակղեցեր յերկրագործութիւն  
5 B չի՞ր  
6 BDE գրանն  
7 BDE + այգիս  
8 A յատանելով  
9 BDE զնոյն  
10 DE արմտիս  
11 BDE երկրագործութեան  
12 D հոգեւորապետ BE իբրեւ հոգեւորապետ  
13 BDE կոչեսցուք  
14 DE քաջութեամբ  
15 D չի՞ր  
16 D յանունն  
17 BDE ընդ ամենայն  
18 DE նա  
19 Հմմտ. «Մեծ ճարտարապետն սուրբ տաճար յարիւնէր» («ՂԳ Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», Փոխ, ՄԸ, ԻԱ, էջ 850.41)  
20 DE + երկրան

21 DE չի՞ր հաստատեցեր եւ  
22 BDE + վերականգնեցեր  
23 E ընդ  
24 BDE հաւատով  
25 B առողջ  
26 B իսկ զվէմ  
27 DE ախտից  
28 D հակառակամարտն E զհակառակամարտն  
29 DE ամաւթայի  
30 B զսնունդ  
31 DE չի՞ր  
32 DE ոչխարաց  
33 BDE կոչեսցուք  
34 DE բնութենէն  
35 DE զի զինչ  
36 DE չի՞ր

տուցանէր<sup>1</sup>. քանզի դու՝ եւս հրաշափառագոյն, որպէս թուի ինձ հաւաստապէս, ի ձեռն հրեշտակի անմարմնապէս<sup>2</sup> կերակրիւր<sup>3</sup> ի բանդին:

357 Նաւուզի<sup>6</sup> ղ արդեւք առձայնեսցուք<sup>4</sup> զքեզ. եւ յիրաւի ուրեմն: 358 Քանզի զորս ընդ մեծ եւ<sup>5</sup> արձակ աշխարհիս այսորիկ ղիւական անհաւատութեան ծովու<sup>6</sup> նաւակոծեալ ծփէին, քոյով սրբազանաբար առ Աստուած հայցուածովքդ<sup>7</sup> զամբոխումն մոլորութեան մրրկին ի հանգարտագոյն դարձուցանելով, սիք<sup>8</sup> մեծաւ զգուշութեամբ զպլեկոծեալսն<sup>9</sup> ուղղելով նաւս, ճշմարիտ խաղաղութեամբ հասուցեր ի նաւահանգիստն<sup>10</sup>:

359 Արդ, ո՛վ երանելի հայր<sup>11</sup> եւ առջնորդ փրկութեան ամենայն հաւատացելոց, որպէս<sup>12</sup> ոչ պակասեցար ի քոց<sup>13</sup> սիրելեաց փոխադրելով յաշխարհէ: 360 Այլ զի թէպէտ եւ զհասարակաց պարտն<sup>14</sup> հատուցեր զընութեանս աւրինաց, սակայն յիշատակ<sup>15</sup> քաջութեան քո մնայ<sup>16</sup> յաւիտեան:

361 Նոյնպէս եւ յայսմ հետէ աղաչեմ ոչ եւս մեկուսանալ հոգեւորական այցելութեամբ առ ի մէնջ. այլ յիշել զմեզ անմտաց՝ խնդրելով ի հասարակաց յուսոյ

փրկութեան մերոյ, զի եւ մեք զպատերազմն<sup>17</sup> սակաւագոյն վշտացս համբրութեամբ կատարեսցուք<sup>18</sup>, ըստ ասացելոյ<sup>19</sup> առաքելոյ<sup>20</sup> «Որ զփորձ առեալ է՝ կարող է փորձանաւորաց<sup>21</sup> աւզնական լինել»<sup>21</sup>: 362 Եւ զգուշաքեայս ներողական բան առ ի մէնջ<sup>22</sup> ընկալցիս բարեմտաբար, զի թէպէտեւ անհանգէտ<sup>23</sup> զոլով քուժդ արժանաւորութեան, սակայն ջերմագոյն հաւատովք<sup>24</sup> կատարեալ մատուցաք սիրով, եւ քոյին վշտամբեր<sup>25</sup> նեղութեանցս յիշատակաւ ի մերումս մխիթարեալ սփոփեցաք:

222 Ո՛վ աւազակ, ահա յափշտակեցեր զարքաութիւն<sup>53</sup> երկնից<sup>54</sup> եւ ընդ իմաստութիւնս<sup>55</sup> քո հիացան երկինք եւ երկիր։ 223 Անտ<sup>56</sup> աւազակ, եւ աստ թագակից<sup>57</sup> որդոյն<sup>58</sup> Աստուծոյ, անդ՝ սպանող, եւ աստ՝ ի կեանս ուրախանաս։ 224 Արդ, մո՛ւտ յուրախութիւն<sup>59</sup> Տեառն քո<sup>60</sup>, եւ զայս<sup>61</sup> աղա-

« ՀԵՏԴ. Ո՛ՐԴԸ. ԻԼԻ 40

- 1 B աւազակացն C աւազակիցն D աւազակակիցն
- 2 BCD ձայնակցէր փխ ձայնակից էր
- 3 C ժողովրդեան
- 4 BCD նախատանաց
- Է ՀԵՏԴ. Ո՛ՐԴԸ. ԻԼԻ 44
- 5 CD ի միածնէն գիս փխ գիս ի միածնէն
- 6 C չի՛ր
- 7 D բաժանեցին փխ կարացին բաժանել
- 8 CD յայսպիսի
- 9 D ժամու
- 10 B չի՛ր այսպիսի յարուցմունք ... ժամ անարգանաց
- 11 BD ահա C եւ ահա
- 12 BD + գրախոսն C ժառանգելոյ + գրախոսն
- 13 BCD թագաւորէն
- 14 B ձերմէ + եւ այժմ CD ձերմէ.
- 15 BCD անմահից
- 16 B հրեղէն + ֆերովրէ
- 17 B գնդնդ C գսա
- 18 C չի՛ր
- 19 C ձեռագիր
- 20 C արկաւ D որակաւ եւ փխ որ անկաւ
- 21 BCD կատարումն
- 22 B ապա տարածեալ
- 23 B քերովրէին D քերովրէն
- 24 B թեւսն + եւ CD թեւսն
- 25 B առեալ D էառ
- 26 BC իւրո
- 27 B ծայրս C + նորա որին
- 28 B նորա D ծայր նորին փխ ծայրն որին
- 29 B արեան + որդոյն աստուծոյ C արեան

- 30 B գտրամադրութիւն C տրամադրութիւն D տրամադրութիւն
- 31 C ի
- 32 B չի՛ր
- 33 B դարձուցեալ
- 34 BD յաւազակն C աւազակն
- 35 B չի՛ր
- 36 B գձայնս D գղէմս
- 37 C չի՛ր
- 38 C խաղաղութեամբ
- 39 D + եւ
- 40 C աղին
- 41 BD հողեղէն C հրեղեն
- 42 C խոստովանելն
- 43 BCD թ.ն
- 44 BCD թագաւորն
- 45 D յերկիրս
- 46 B կենդանեաց
- 47 BD յորմէ
- 48 B գրկեցաւ C չի՛ր ցնձա եւ ուրախ ... աղամ մերժեցաւ
- 49 D խառնեաց
- 50 BCD ձայնակից
- 51 B սերովրէից CD սերորեիցն
- 52 CD կարգաց
- 53 B զարնայութիւն C զարնայութիւնս D զարնայութիւնս
- 54 B + բանականութեամբ C յերկնից D + բոնութեամբ
- 55 BCD իմաստութիւն
- 56 BCD անդ
- 57 B թագաւորակից
- 58 D որդոյն
- 59 BC ուրախութիւն
- 60 D քոյ
- 61 C + աղէ



չեմ<sup>1</sup> պատմեա<sup>2</sup> ինձ, թե<sup>3</sup> երբ տեսցուք եկեալ յերկինս<sup>4</sup> զաւետարանեալն ի քե՛ն<sup>5</sup> թագաւոր: 225 Զի՞նչ<sup>6</sup> կամ ո՞րպիսի պատճառ խափանեաց<sup>7</sup> զնա ի գալոյ<sup>8</sup>: 226 Զի մեղք<sup>9</sup> լուծաւ խաչիւն եւ Աղամ<sup>10</sup> կենդանացաւ<sup>11</sup> նորա մահուամբն<sup>12</sup>: 227 Եւ զի<sup>13</sup> գործ նորայ յաղթութիւն<sup>14</sup> ի գլուխ<sup>15</sup> ել<sup>16</sup>, զիա՞րդ ոչ եկն ի փառս<sup>17</sup> իւր առնուլ զպաշտան<sup>18</sup> աւրհնութեան<sup>19</sup> ի դասուց երկնայնոց<sup>20</sup>»:

228 Ասե<sup>21</sup> աւագակն. «Լո՛ւր ինձ<sup>22</sup>, եւ ասեմ քեզ<sup>23</sup>, ո՞վ<sup>24</sup> քերորե՞<sup>25</sup>, եւ բազմապատիկ<sup>26</sup> իմաստութեան<sup>27</sup> խորս պատմեմ<sup>28</sup> քեզ: 229 Ճանապարհ թագաւորին<sup>29</sup> ի՞ գերեզմանս<sup>31</sup> եհաս<sup>32</sup> եւ գործ մեծ<sup>33</sup> ունի գործել ի մեղ<sup>34</sup> մեռելոց<sup>35</sup>, զնաց նիւթել<sup>36</sup>

Հանդերձ անապական այնոցիկ, զորս<sup>37</sup> ապականեաց մահ եւ<sup>38</sup> ձայնեալ<sup>39</sup> խաղաղութիւն նոցայ<sup>40</sup>, որ<sup>41</sup> խոռվեալ եին<sup>42</sup> ի սանդարամետս<sup>43</sup>: 230 Ահաւասիկ ի քաղաք<sup>44</sup> մահու եմուտ վանել<sup>45</sup> զամենայն յափշտակութիւնս<sup>46</sup>, զոր ած<sup>47</sup> ի շտեմարանս<sup>48</sup> իւր չար<sup>49</sup> վիշապն: 231 Սգեստ<sup>50</sup> կենաց գործեաց Աղամս<sup>51</sup> ի մկրտութիւն<sup>52</sup> եւ այժմ<sup>53</sup> եմուտ ծածկեալ<sup>54</sup> զմերկութիւն նորա, եւ Հանել ի խաւարաին<sup>55</sup> բանդե՛ն<sup>56</sup>, զհանդերձն<sup>57</sup> փառաց, զոր<sup>58</sup> պատառեաց պեղծն<sup>59</sup> բռնութեամբ<sup>60</sup>, զնաց<sup>61</sup> ողջացուցանել զաւրութեամբ աստուածութեանն զտուն մարմնոյն, զոր քակեաց մահ<sup>62</sup> զապականութեամբ<sup>63</sup>, շաղախեալ<sup>64</sup> բնութեամբ<sup>65</sup> աստուածութեամբն<sup>66</sup> վերաստեղծեաց<sup>67</sup> յանապականութիւն<sup>68</sup>: 232 Ի գաւիթս

1 B աղէ C չիբ  
2 C պատմէ  
3 BD քէ C քէ + արդ  
4 C երկինս  
5 BCD Ռ.Ճ  
6 BCD + գործ  
7 B խափանէ  
8 C գալո  
9 BCD մեղքն  
10 B աղամն  
11 B ազատեցաւ + եւ նորոգեցաւ  
12 D մահուամբն  
13 C չիբ  
14 B յաղթութեան նորա փխ նորա յաղթութիւն CD յաղթութեան  
15 C գլուխ  
16 C + եւ  
17 B յաշխարհս փխ ի փառս  
18 B զպաշտօնս  
19 D չիբ  
20 B երկնայնոցաց  
21 BCD ասէ  
22 B չիբ  
23 B + նշմարիտն  
24 C չիբ  
25 BD լերովքէ C լերովքէ  
26 D զբազմապատիկ  
27 D իմաստութեանն  
28 CD մեկնեմ  
29 C թագաւորի  
30 C չիբ  
31 B գերեզման  
32 CD էհաս  
33 D մի  
34 CD մէջ  
35 B մեռելոցն  
36 A նիւթեալ

37 BCD գոր  
38 C + ի  
39 D ձայնել  
40 C այնոցիկ  
41 BD որք  
42 BC էին D են  
43 B սանդարամետս  
44 D քաղաքս  
45 BCD հանել  
46 B ափշտակութիւնս D յափշտակութիւն  
47 BD էած  
48 B շտեմարանս փխ ի շտեմարանս  
49 BCD չիբ  
50 D սգեստ  
51 D աղամայ  
52 B մերկութիւն D մերկութեանն  
53 C այժմ  
54 BCD ծածկել  
55 BD խաւարային  
56 B բանդէն + էարկ նովաւ C բանդէն D բանտէն  
57 B զհանդերձս D զհանդերձ  
58 B գորս  
59 D պիղծն  
60 B պոռնկութեամբ  
61 D զբնաց  
62 BD մահն  
63 B զապականութեան D ապականութեամբ  
64 B շաղախեալն  
65 B բռնութեամբ D չիբ շաղախեալն բռնութեամբ  
66 A չիբ զտուն մարմն ... բռնութեամբ աստուածութեանն B աստուածութեանն C + իւրո  
67 C վերստեղծեաց  
68 A յանապականութեան B յանապականութեամբ

ննջեցելոցն<sup>1</sup> եմուտ թագաւորն՝ տեսանել զգերութիւն մեռելոցն<sup>2</sup>, զոր<sup>3</sup> յափշտակեալ եր<sup>4</sup> մահ<sup>5</sup>, եւ աւետարանեաց կապելոցն<sup>6</sup>, թե<sup>7</sup> ելէք, եւ որոց ի խաւարին<sup>8</sup>, թե<sup>9</sup> յատնեցարուք: 233 Ամենայն<sup>10</sup> ընթացք<sup>11</sup> նորա<sup>12</sup> լրումն<sup>13</sup> ետո<sup>14</sup> ի խաչին եւ մի աւթեւանս<sup>15</sup> ե<sup>16</sup> մնացել<sup>17</sup> ի դժոխս: 234 Յորժամ<sup>18</sup> եմուտ ցաւղել զչնորհս արեան<sup>19</sup> իւրո<sup>20</sup>, զի ըմբեալ<sup>21</sup> ի նմանե<sup>22</sup> եւ կենդանացեալ տունն Ադամայ<sup>23</sup>, դարձցին<sup>24</sup> յայս<sup>25</sup> դրախտ<sup>26</sup>:

235 Եկա՛յք, զուարթունք<sup>27</sup>, երկնից<sup>28</sup> իջեալ սպասաւորեսցուք<sup>29</sup> ի գաւառն մահու<sup>30</sup> կենդանոյն<sup>31</sup> յաւիտենից<sup>32</sup> եւ տեսցե<sup>33</sup> մահ

զվայելջութիւն<sup>34</sup> գեղեցկութեանդ<sup>35</sup> ձերո<sup>36</sup> եւ եղծցի:

236 Է՛ջ, Գաբրիել<sup>37</sup>, աւետաւոր բերկրելոյն<sup>38</sup>, եւ սպասաւորեայ<sup>39</sup> թագաւորին երկնաւորին<sup>40</sup>, որ ելն<sup>41</sup> ի բարձունս գերեաց<sup>42</sup> զգերեալսն եւ առ<sup>43</sup> աւար<sup>44</sup> զդժոխս:

237 Է՛ջ<sup>45</sup>, գլուխ<sup>46</sup> նաշապետութեանց<sup>47</sup> երկնից<sup>48</sup> Միքաել<sup>49</sup>, եւ<sup>50</sup> պատառեալ<sup>51</sup> զվիհն<sup>52</sup> խորին եւ ուղղեա<sup>53</sup> ճանապարհ<sup>54</sup> որպես ընդ ծովն<sup>55</sup> իսրայելեան<sup>56</sup> բանակին, բարձրացոյ<sup>57</sup> զբարբառքո ի վերա սեմոց<sup>58</sup> դժոխոցն<sup>59</sup> եւ կործանեայ<sup>60</sup> իբրեւ<sup>61</sup> զպարիսպն<sup>62</sup> Երեքովի<sup>63</sup> առաջի երրայեցոցն<sup>64</sup>:

- 1 D նընջելոց
- 2 BCD մեռելոց
- 3 D գորս
- 4 C յափշտակել, փիս յափշտակեալ եր D էր
- 5 C չարն
- 6 D կապելոց
- 7 B եւ ասել եթէ փիս գոր յափշտակեալ եր ... կապելոցն, բե CD բէ
- 8 B խաւարի նստելին փիս խաւարին CD խաւարի
- 9 BCD բէ
- 10 D գամենայն
- 11 D ընթացս
- 12 B չի՞ր CD իւր
- 13 D չի՞ր
- 14 BCD էտո
- 15 B յօքեւանս C աթեվանս D օթեվանս
- 16 C չի՞ր D է
- 17 BD մնացեալ
- 18 BC յորում՞ D յոր
- 19 B ողորմութեան
- 20 BD իւրոյ
- 21 BD ըմպեալ
- 22 B նըմանէ CD նմանէ
- 23 B յադամա C ադամա
- 24 BC + վերստին D դարձցի + վերստին
- 25 B յայս՞ C այս
- 26 B դրախտին + փափկութեան CD + փափկութեան
- 27 B գաւրթունք D զլարթունք
- 28 BCD չի՞ր
- 29 BD սպասաւորեցէ՞ր C սպասաւորեցէ՞ր
- 30 B + անմահ
- 31 C կենդանուն D կենդանոյն
- 32 BCD չի՞ր
- 33 BCD տեսցէ

- 34 C զվայելութիւն D զվայելութիւն
- 35 B գայծառութիւն վայելութեան փիս զվայելութիւն գեղեցկութեանդ CD գայծառութեան
- 36 D ձերոյ
- 37 BD գաբրիել C գաբրել
- 38 C բարձրելոյն
- 39 B սպասաւորեալ C սպասաւորեալ
- 40 BCD չի՞ր
- 41 BCD ել
- 42 BD գերել
- 43 D էտո
- 44 B աւերել փիս առ աւար
- 45 B գաբրիել
- 46 C գլուխ D զլուխ
- 47 C նախապետութեանց
- 48 C յերկնից
- 49 B չի՞ր C միայն D միայնէլ
- 50 C չի՞ր
- 51 A պատառեաց CD պատառեալ
- 52 C վեհն
- 53 B ուղղել
- 54 B գնանապարիս + կապելոցն C գնանապարիս + կապելոցն D + կապելոցն
- 55 A ժողովն
- 56 BD իսրայելեան C իսրայելեան
- 57 CD բարձրացո
- 58 B + դրանց
- 59 D զժոխոց
- 60 BC կործանի D կործանեսցի
- 61 B որպէս
- 62 B պարիսպն
- 63 BCD երեքովի
- 64 C երրայեցոցն D երրայեցոցն

238 Իջցեն ընդ ձեզ<sup>1</sup> դասք երկնաինք<sup>2</sup> եւ լեզեոնք<sup>3</sup> անմարմինք<sup>4</sup>, գովեալ<sup>5</sup> քաղցր<sup>6</sup> երգով<sup>7</sup> զարգար թագաւորին<sup>8</sup> զյաղթութիւն<sup>9</sup>:

239 Սերորեք<sup>10</sup>, թեւս սքողեալ<sup>11</sup> թռուցեալ ցաւղեցեք<sup>12</sup> զսրբասացութիւն<sup>13</sup> ձեր<sup>14</sup> շուրջ զթագաւորաւն ի հրապարակս դժոխոց<sup>15</sup>: 240 Եւ<sup>16</sup> դուք, քերորեք<sup>17</sup>, սլացեալ աղաղակեցեք<sup>18</sup> առաջի նորա<sup>19</sup>. «Աւրհնեալ են փառք Տեառն<sup>20</sup> ի տեղոջե<sup>21</sup> իւրձե<sup>22</sup>»: 241 Ոչ ե<sup>23</sup> վայելուչ<sup>24</sup> թագաւորին միայնակ լինել, ինքն միայն յաղթեաց, այլ դուք փութացեք<sup>25</sup> պատուեալ<sup>26</sup> ի մեջ<sup>27</sup> մեռելոցն<sup>28</sup>, ի խաչին չարչարանս վասն մարգարեութեանց<sup>29</sup> լրման<sup>30</sup>, ոչ կոչեաց զձեզ ի սպաս պաշտման<sup>31</sup>, այլ ի

դաւառն<sup>32</sup> մահու<sup>33</sup> ոչ է պարտ նուաստութեամբ<sup>34</sup> երթալ<sup>35</sup>: 242 Սլացեալ առ նա՝ պաշտեցէք յաղթութեամբ<sup>36</sup> եւ զխորտակեալ վիշապն, զոր մերկացոյց<sup>37</sup> յիշխանութենէ<sup>38</sup>, կապեալ կոխան արարէք<sup>39</sup> ոտից գերելոցն<sup>40</sup>: 243 Շողացուցէք<sup>41</sup> փայլատակունս<sup>42</sup>: 244 Կաթեցուցէք հուր, հնչեցուցէք որոտումն, եւ<sup>43</sup> շիջանի<sup>44</sup> մահ ի բարբառոյն<sup>45</sup> ձերմէ<sup>46</sup>»:

245 Ասէ քերովբէն<sup>46</sup>. «Ո՛վ<sup>47</sup> աւազակ, հանդարտեա<sup>48</sup> ի<sup>49</sup> խաւսիցդ<sup>50</sup>, զի զզաւրութիւն նորա ոչ կարեն պարփակել պարխապ<sup>51</sup> դժոխոցն<sup>52</sup>: 246 Ոչ արգելուն գնա դրունք մահու, եւ զապականութիւն որպէս տրուպ հարկանէ<sup>53</sup>: 247 Յորոգայթ<sup>54</sup> փակեալք<sup>55</sup> զկորիւն առիւծուն<sup>56</sup> ո՞րպէս ըմբռնել կարէ<sup>57</sup> եւ կամ<sup>58</sup> վարուժան սատակեալ՝ արծիւ<sup>59</sup>

1 B Բեզ  
2 BD երկնայինք  
3 B լեզեոնք C լեզեոնք D լեզեոնք  
4 C երկնայինք  
5 BCD գովել  
6 B բարձր  
7 C չի՛ր քաղցր երգով  
8 B թագաւորն  
9 B չի՛ր C յաղթութիւն D յաղթութիւն  
10 BD սերովբէք C սերորեք  
11 B թեւս սքողեալ փ/ս թեւս սքողեալ C թեւս սքողեալ փ/ս թեւս սքողեալ D թեւս սքողեալ  
12 B ցողեցէք CD ցաղեցէք  
13 B սրբասացութիւն  
14 B չի՛ր  
15 B դժոխոցն  
16 B չի՛ր  
17 BD քերորեք C քերորեք  
18 BCD աղաղակեցէք  
19 B + բէ  
20 B նորա  
21 BC տեղոջէ D տեղոջէ  
22 BCD իւրմէ  
- Էջ 12  
23 BCD է  
24 C վայելուչ  
25 BD փութացէք C փութացիք  
26 BC պատուել + գնա D պատուելոյ  
27 BCD մէջ  
28 C մեռելոց  
29 B մարգարեութեանց CD մարգարեութեանց  
30 B լրմանց  
31 B պաշտմանն

32 CD գաւառ  
33 C մահ  
34 D նուաստութեամբ + իւր միայն  
35 C իւր միայնակ լինել փ/ս երթալ D երեւիլ  
36 C յաղթութեան D յաղթութեանն  
37 C մերկացուց  
38 C իշխանութենէ D յիշխանութենէ  
39 D արկէք  
40 C կապելոց փ/ս ոտից գերելոցն D մեռելոցն ոտից փ/ս ոտից գերելոցն  
41 C դողացուցէք  
42 C զփայլատակունս  
43 D զի  
44 D շիջանիցի  
45 C բարբառոյ D բարբառոյ  
46 C քերովբէն  
47 CD ո  
48 C հանդարտեալ  
49 D չի՛ր  
50 D խոսից  
51 C զարուստիւն D պարխապ  
52 D դժոխոց  
53 CD ոչ տեսանէ զապականութիւն որպէս գորուպս փ/ս զապականութիւն որպէս տրուպ հարկանէ  
54 CD որոգայթ  
55 C փակեալ D ակնատեալ  
56 C առիւծոյն  
57 C զիարդ կարէ ըմբռնել փ/ս որպէս ըմբռնել կարէ D կարէ ըմբռնել փ/ս ըմբռնել կարէ  
58 CD չի՛ր  
59 C գարծիւ D գարծիւն

Հրգաւր<sup>1</sup> որաւ: 248 Ինքն միայն կարող է դժոխոց<sup>2</sup> եւ<sup>3</sup> ահա աւերէ զնա<sup>4</sup>, ուժեղ է զաւրութեամբ, եւ ահա<sup>5</sup> խորտակէ զնիգս<sup>6</sup> նորա: 249 Ոչ էին ընդ նմա դասք հրեղինացն<sup>7</sup> ի փայտի<sup>8</sup> եւ խաւարեցոյց<sup>9</sup> գերկինքն<sup>10</sup> ի մէջաւրէի: 250 Ոչ էր ընդ<sup>11</sup> նմա<sup>12</sup> Գաբրիէլ<sup>13</sup>, եւ յարոյց<sup>14</sup> զմեռելն<sup>15</sup> չորեսուրեա<sup>16</sup> եւ ի դասս<sup>17</sup> անմարմնոց գոլով Միքայէլ<sup>18</sup> եւ<sup>19</sup> նա ծնփէր գաչս կուրացն ի մէջ երկրի<sup>20</sup> եւ լուսաւորէր<sup>21</sup>: 251 Ոչ էին ընդ նմա<sup>22</sup> հրեշտակք եւ սաստեաց ի նաւին<sup>23</sup> ալեացն եւ<sup>24</sup> հողմոյն<sup>25</sup> եւ լուսինն<sup>26</sup>: 252 Եւ իջեալ ի քերովքէիցն<sup>26</sup> բազմեցաւ ի հարսանին<sup>27</sup> եւ փոխեաց զջուրն ի գինի<sup>28</sup>: 253 Ոչ սերովքէքն<sup>29</sup> զնա տեսանէին<sup>30</sup>, վաստակեալ<sup>31</sup>

նստաւ առ ջրհորին<sup>32</sup> եւ բղխեաց զջուր<sup>33</sup> կենդանի եւ հեռի գոլով ի<sup>34</sup> յերկնայնոցն<sup>35</sup> յագեցոյց զհազարսն<sup>36</sup> յանապատին: 254 Նա, որ մատոյց<sup>37</sup> զկողն<sup>38</sup> ընդդէմ գեղարդեանն եւ լուաց<sup>39</sup> զմեղս կողածնին<sup>40</sup>, ինքն փշրե<sup>41</sup> զգրունս պղնձիս<sup>42</sup> եւ խորտակե<sup>43</sup> զնիգս<sup>44</sup> երկաթիս:

255 Անդրանիկն Աղամա<sup>45</sup>, որ երարծ<sup>46</sup> զմեղս նորա, նա առնու զձեռանե<sup>47</sup> անարգին<sup>48</sup> եւ առաջնորդե<sup>49</sup> ի գաւառն<sup>50</sup> առաջինքն<sup>51</sup>:

256 Եւ այժմ<sup>52</sup> դարձի՛ր, աւազակ, եւ պատմեա՛ նմայ<sup>53</sup>, թե<sup>54</sup> ուրախութիւն<sup>55</sup> մեծ եղեւ յերկինս, յորժամ աւետարանեցի նոցա զփրկութիւն Աղամայ<sup>56</sup>: 257 Ասա՛, թե<sup>57</sup> խորտակեաց քերթեն<sup>58</sup> զհրեղեն<sup>59</sup> սուրն եւ երաց<sup>60</sup> զդուռն<sup>61</sup> Աղինայ<sup>62</sup> առնուլ զԱղամ

1 C հգաւր + գիարդ կարէ D հգօր + որպէս կարէ  
 2 CD դժոխոցն  
 3 CD չի՛ր  
 4 CD + եւ  
 5 D չի՛ր  
 6 C գնիկս  
 7 CD հրեղինաց  
 8 CD փայտին  
 9 C խաւարեցոյց  
 10 CD գարեգակն  
 11 D առ  
 12 C առ նա փիւ ընդ նմա  
 13 C գաբրել  
 14 C յարոյց  
 15 CD գմեռեալն  
 16 C չորէհարեա D չորեօրեայ  
 = Տէ՛ւ Յ՝Վ՛. Ժ՛Լ՛  
 17 CD տեղի  
 18 C միքայէլ  
 19 CD չի՛ր  
 20 CD ի մէջ երկրի գաչս կուրաց փիւ գաչս կուրացն ի մէջ երկրի  
 21 C լուսաւորէր  
 22 Ք Տէ՛ւ Մ՝ադ՛. Թ՛ 27-31  
 23 CD չի՛ր ընդ նմա  
 24 CD ի նաւին սաստեաց փիւ սաստեաց ի նաւին  
 25 CD հողմոցն  
 26 Ք Տէ՛ւ Մ՝ադ՛. Լ՛ 23-26  
 27 C Քերթէից D Քրթէից  
 28 CD հարսանիսն  
 29 Ք Տէ՛ւ Յ՝Վ՛. Լ՛ 1-9  
 30 D որ ոչ  
 31 C սերովքէր  
 32 C տանէին + այլ D տանէին  
 31 A վաստակել

32 CD ջրհորն  
 33 C ջուրն D ջուր  
 34 CD չի՛ր  
 35 C երկնայնոցն D յերկնայնոց  
 36 D հազարս  
 37 A արմատացոյց C մատոյց  
 38 CD գկողս  
 39 D լուաց  
 40 A չի՛ր այլ ի գաւառն մահու ... լուաց զմեղս կողածնին  
 41 BCD փշրէ  
 42 CD պղնձիս  
 43 BCD խորտակէ  
 44 C գնիկս  
 45 B աղամայ + այն D աղամայ  
 46 C էրարծ  
 47 BCD գձեռանէ  
 48 BD տնանկին C տնանգին  
 49 BCD առաջնորդէ  
 50 B չի՛ր ի գաւառն. գրիչը տեղ է. թողել՝ լրացնելու համար:  
 51 BCD առաջին  
 52 C այժմ  
 53 BD նմա  
 54 BCD թէ  
 55 C ուրախութիւնն  
 56 BC աղամայ  
 57 BCD թէ  
 58 BD Քերթէից C Քերթէն  
 59 BD գիւրդէն  
 60 C էրաց  
 61 B + դրախտին  
 62 BC աղնաւ

ի ժառանգութիւն իւր, ծանո՛յ<sup>1</sup>, թե՛<sup>2</sup> ամե-  
նայն դասք հրեղինաց<sup>3</sup> երկրպագեցին<sup>4</sup>  
թագաւորին<sup>5</sup> եւ ընկալան զաւետաւորգ<sup>6</sup>  
ողջունիւ<sup>7</sup>: 258 Եւ տարածեալ<sup>8</sup> զթեւս ող-  
ջագուրեցին գքեզ<sup>9</sup> համբուրիւ: 259 Գնա<sup>10</sup>,  
ո՛վ<sup>11</sup> աւագակ<sup>12</sup>, ասա՛ թագաւորին, թե՛<sup>13</sup> ա-  
ռեալ իմ զկտակն<sup>14</sup> քերոբեն<sup>15</sup>, ընթերցաւ<sup>16</sup>  
ի լուր անմարմնոցն եւ աղաղակեցին  
հրեշտակք<sup>17</sup>. «Փառք ի բարձունս Աստու-  
ծոյ, որ արար<sup>18</sup> խաղաղութիւն<sup>19</sup> եւ ի՞  
մարդիկ<sup>21</sup> հաշտութիւն<sup>22</sup>»:

260 Ասե՛<sup>23</sup> աւագակն<sup>24</sup>. «Ես ի դժոխս ոչ  
<իջ>անեմ<sup>25</sup>, զի Տէրն իմ եւ Աստուածն<sup>26</sup>  
ուրախանալ զիս ի դրախտն առաքեաց<sup>27</sup>:

261 Հաւատա ճշմարտապես<sup>28</sup>, այլ դու,

զի՞<sup>29</sup> խափանեցար խաչիւն<sup>30</sup> ի պահելոյ<sup>31</sup>  
զճանապարհս<sup>32</sup> դրախտիս<sup>33</sup>: 262 Ե՛լ<sup>34</sup>, դնա՛  
ի ժառանգութենես<sup>35</sup> մերմե՛<sup>36</sup> ի կառսն քա-  
ռադիմի<sup>37</sup>, թերեւս հանգի՞ստ եղեւ քեզ ե-  
լանելն<sup>38</sup> Ադամա՞<sup>39</sup> ի դրախտես<sup>40</sup>, զի զեր-  
ծաւ պարանոց քո ի բառնալոյ<sup>41</sup> զաթոռն  
հրեղեն<sup>42</sup>, եւ վասն այնորիկ մարտնչիս<sup>43</sup>:

263 Այլ ծանիր, զի մեր<sup>44</sup> ժառանգու-  
թիւն տնգեաց<sup>45</sup> Աստուած<sup>46</sup> զդրախտս<sup>47</sup>,  
եւ դուք<sup>48</sup> ոչ վաելեալ<sup>49</sup>, այլ պահեալ<sup>50</sup>  
կարգեցայք ժամանակաւ<sup>51</sup>:

264 Արդ, լրումն եառ<sup>52</sup> ժամանակն, եւ  
Ադամ ձգեաց զձեռն իւր<sup>53</sup> ի ծառն կենաց եւ  
կենդանացաւ: 265 Դարձի՛ր դու ի կառսն<sup>54</sup>,  
զի՞<sup>55</sup> դարձաք մեք<sup>56</sup> ի գաւառս<sup>57</sup> մեր<sup>58</sup> Ա-  
դին<sup>59</sup>:

1 CD ծանն  
2 BCD թէ  
3 C հրըշտակաց  
4 C երկիրպագեցին  
5 B չի՛ր D թագաւորիդ  
6 BC + սիրո  
7 C ողջոյնիւ  
8 A տարածեաց  
9 D չի՛ր  
10 B + դու  
11 CD ո  
12 D + եւ  
13 BCD թէ  
14 BD զկտակ իմ փիս իմ զկտակն C կտակ իմ փիս իմ զկտակն  
15 B քերոբէն + եւ C քերոբէն D քերոբէն  
16 C ընթերցաւ  
17 CD հրեշտակքն  
18 D + յերկիր  
19 B + յերկինս եւ յերկրի C + յերկիր  
20 BCD ընդ  
21 C մարդիկ  
22 A հաւնութիւն  
23 BCD ասէ  
24 BCD + ով քերոբէ (C քերոբէ)  
25 B իջանեմ C իջանեմ + հաւատա նշմարտապէս  
26 C չի՛ր տէրն իմ եւ աստուած  
27 C ուրախանալ ի դրախտն այսար առաքեաց զիս քա-  
գաւորն փիս ուրախանալ զիս ի դրախտն առաքեաց  
28 B հաւատայ նշմարտապէս, զի ուրախանալ այսօր ի  
դրախտս առաքեաց թագաւորն փիս զի տէրն իմ եւ  
աստուածն ուրախանալ զիս ի դրախտն առաքեաց:  
Հաւատա նշմարտապէս C չի՛ր հաւատա նշմարտա-  
պէս D հաւատա նշմարտապէս, զի ուրախանալ ի  
դրախտին այսօր առաքեաց զիս թագաւորն փիս զի

տէրն իմ եւ աստուածն ուրախանալ զիս ի դրախտն  
առաքեաց: Հաւատա նշմարտապէս  
29 CD Բանգի  
30 B չի՛ր զի խափանեցար խաչիւն (զրիչը տեղ է բո-  
ղիլ՝ լրացնելու համար):  
31 C պահելո  
32 C գնանապարս  
33 D դրախտին  
34 BD + եւ  
35 B ժառանգութենէս C ժառանգութենէս  
36 BCD մերմէ:  
37 B + զի  
38 C ելանել  
39 B ադամ D ադամայ  
40 B դրախտէս CD դրախտն  
41 C բառնալո  
42 BD հրեղէն  
43 C մարտիչիս  
44 BCD մեզ  
45 BCD տնկեաց  
46 C չի՛ր  
47 B դրախտն C ի դրախտս D զդրախտն  
48 B ձեզ  
49 BD վայելել C վաելել  
50 BCD պահել + գաս  
51 BCD ժամանակաւ կարգեցայք (D կարգեցայք) փիս -  
կարգեցայք ժամանակաւ  
52 B լցաւ փիս լրումն եառ CD Էառ  
53 B չի՛ր  
54 B + Էո վասն  
55 B + մեմ CD Բանգի  
56 CD մեմ դարձաք փիս դարձաք մեմ  
57 C ի ժառանգութիւնս փիս ի գաւառս  
58 D + ի  
59 BCD յադին

266 Ե՛րթ՝ ընդ դասակիցս՝ քո պարեա՛,  
 զի ի մեջ՝ ծառոց դրախտիս եհաս՝ ուրախա-  
 նալ՝ որդոց՝ Աղամայ՝: 267 Ընթերցի՛ր՝ ի  
 կտակ՝ հարցն մեր՝ եւ ուսցիս՝, զի ոչ քե-  
 ըրբե՛, այլ զԱղամ եառ՝ Աստուած՝ ի  
 դրախտն՝ փափկութեան՝ գործել զնա՛  
 եւ պահել, այլ զի պատուիրանազանցու-  
 թիւն՝ հալածեաց զազգս՝ մեր յայս՝ զա-  
 ւառես՝: 268 Լրումն արդարութեան՝ մեր  
 Յիսուս՝ ժառանգեցոյց՝ մեզ՝ զհայրե-  
 նիս՝ անսուտ հրամանաւն՝, էանց՝ բար-  
 կութիւն, եւ թագաւորեաց՝ խաղաղու-  
 թիւն՝ միաձնին Աստուծոյ յայտնու-  
 թեամբն՝: 269 Ինքն եղև միջնորդ եւ հաշ-  
 տեցոյց՝ զՀայր՝ որպէս եւ՝ կամեր՝:

- 1 D \* եւ
- 2 B դասակիցսմ
- 3 BC մէջ
- 4 BD + ժամ CD էհաս
- 5 D ուրախանալոյ
- 6 D որդւոց
- 7 B մարդկան C ժամ ուրախանու աղամա փխ ուրա-  
խանալ որդոց աղամայ
- 8 B ընթերցիր C յընթերցիր
- 9 B կտակս
- 10 BC մերոց
- 11 B ուսիր
- 12 B գրեւրովքս C գրեւրով D գրեւրովք
- 13 BD եղ C ետ
- 14 C չի՛ր
- 15 BD դրախտին C դրախտին
- 16 C չի՛ր
- 17 C չի՛ր
- 18 B պատուիրագանցութիւնն D պատուիրագանցու-  
թիւնն
- 19 CD գագգն
- 20 B յայսմ C ի այս
- 21 B գաւառէ C գաւառէս D ի գաւառէս փխ յայս գա-  
ւառես
- 22 CD + փրկիչն
- 23 B փրկչին մերոյ փխ մեր յիսուս
- 24 C ժառանգեցուց
- 25 CD չի՛ր
- 26 B զհայրենիս մեզ փխ մեզ զհայրենիս C զհայրենիս
- 27 B հրամանաւ
- 28 C վանց
- 29 C թագաւորեաց
- 30 B խաղաղութիւնն C զխաղաղութիւն
- 31 C այտնութեամբ
- 32 C հաշտեցուց
- 33 B չի՛ր
- 34 CD չի՛ր

270 Գեղարդամբն՝, որով՝ խոցեցաւ անդ-  
 րանիկն Հաւր՝, հրեղեն՝ սուր՝ քո՝ տկա-  
 րացաւ, եւ կողիւն, որ՝ պատառեցաւ, միջ-  
 նորմն ցանկոյն՝ քակեցաւ: 271 Եւ՝ որ-  
 պես՝ Աղամաւ՝ ամենեքեան՝ մեռաք՝,  
 նոյնպես՝ եւ Քրիստոսիւ ամենեքեան՝  
 կենդանացաք՝:

272 Քրիստոս՝, որդի Աստուծոյ՝, որ  
 արարեր խաչիւ քո՝ խաղաղութիւնն՝ եւ  
 սպաներ զթշնամին ի քոյդ մարմին՝, շնոր-  
 հեա՛ զխաղաղութիւնն՝ եկեղեցո՝ քո՝

- 35 BC կամեցաւ
- 36 C գեղարդեամբն
- 37 BC որ
- 38 BCD չի՛ր
- 39 BD հրեղէն
- 40 D սուրն
- 41 D չի՛ր
- 42 B որով
- 43 C ցանկոյն D ցանգոյն
- 44 B չի՛ր
- 45 D որպէս
- 46 BCD աղամաւն
- 47 C ամէնեքեան
- 48 B մեռան
- 49 B նոյնպէս
- 50 C ամէնեքեան
- 51 B կենդանացուի + որոց լիցի մեզ ամենեցուն հասա-  
նել խոստացելոց բարեացն եւ ժառանգել զպատրաս-  
տեալ գանձառ ուրախութիւնսն ի Քրիստոս Յիսուս  
ի Տէր մեր, յորում վայել է փառք, իշխանութիւն եւ  
պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ա-  
մէն: + յիշատակարան – «Զմեղօք գառածնապս եւ յոբ-  
նակի գրադմամբ պաշարեալս՝ զԱբրահամ լոկ ա-  
նուն պիտակս յիշել աղայեմ գրեցաւ թվին հայոց  
ՌՃԿԶ, ի Սիլիստրէ քաղաք, ընդ հովանեաւ Սուրբ  
Աստուածամայ եկեղեցւոյ, ի ժամանակս, որում ու-  
նելին մեծ պատերազմ իսմայիլացիք ընդ արիակա-  
նաց, քանզի թուրքաց առաջի ամին յաղթվեցան եւ  
կրկին այսմ ամի գորածողով եղեալ գնացին ի վերա  
նէմցին՝ յունիսի ժԳ, օրն քօք»:
- 52 C + աստուած
- 53 CD չի՛ր որդի աստուծոյ
- 54 CD չի՛ր խաչիւ քո
- 55 CD խաղաղութիւն
- 56 C չի՛ր եւ սպաներ գրշնամին ի քոյդ մարմին D  
մարմին
- 57 C խաղաղութիւն շնորհեա փխ շնորհեա զխաղա-  
ղութիւնն D խաղաղութիւն տուր փխ շնորհեա  
զխաղաղութիւն
- 58 C եկեղեցոյ D եկեղեցւոյ
- 59 D չի՛ր

ընդ Դ.<sup>1</sup> կողմանս աշխարհի<sup>2</sup>, որ եղեր<sup>3</sup> միջնորդ հաշտութեան երկնի եւ երկրի<sup>4</sup>:  
273 Հաշտեաց<sup>5</sup> ընդ ամենայն<sup>6</sup>, որք հաղորդեցան<sup>7</sup> չարչարանաց քոց ի սոսկալի մեծի ուրբաթիս:

274 Այսաւր<sup>8</sup> առ քեզ աղաղակե<sup>9</sup> եկեղեցի ընդ աւագակին խոստովանութեան<sup>10</sup>:  
275 Յիշեա, Տէր, յարքաութեան<sup>11</sup> քո զգինս<sup>12</sup> պատուական քո արեանդ<sup>13</sup> եւ զի

խաչակից գտաւ սա քեզ, ինքնայաւժարկամաց<sup>14</sup>: 276 Ընդ նոսին շնորհեա եւ ամենայն հաւատացելոց սիրտ սուրբ եւ հոգի մաքուր գալ զհետ կոչողիդ: 277 Զի յամենայն սբաղմանց աշխարհիս, զիւրաւ <ու>ղեւորեացին զկնի աւագակին, մտանել ի դրախտն փափկութեան եւ ինն մեղաւորիս Սիմեոնիս ի գրչաց ողորմեա, Տէր, եւ<sup>15</sup> քեզ փառք յաւիտեանս. ամեն<sup>16</sup>:

1 C չորս  
2 C աշխարհիս  
3 C եղել  
4 C երկիրի  
5 C հաշտեա  
6 C ամենեսայն  
7 C հաղորդին  
8 C չի՛ր  
9 C աղաղակեն  
10 C չի՛ր  
11 C արխաութեան  
12 C գի գինս  
13 C արեան

14 C + տրամութեամբ եւ քեզ փառք երկնաորաց եւ երկրաւորաց ընդ հոր եւ սուրբ հոգոյդ յայժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն  
15 D չի՛ր որ եղեր միջնորդ ... ողորմեա, տեր, եւ  
16 A - յիշատակարան. «Քրիստոս Աստուած, որ բացեր զդրախտն աւագակին, բաց գրի արխաութեանդ ստացողած գրոցս Մարկոս Բահանայի եւ Յովհաննես իրիցոյ եւ պապին եւ աւա՛ր տիկնայ եւ ելթ: Ընդ սոցա եւ ինձ մեղաւորիս՝ Սիմեոնիս, գրոցս գրողին, բաց գրուոն ողորմութեան եւ յիշողացս, լսողացն հասարակ, ողորմեա, Քրիստոս Աստուած, ամէն»: B չի՛ր Քրիստոս, որդի աստուծոյ ... փառք յաւիտեանս. ամէն  
C - յիշատակարան. «Հրամանաւ տեանն իմոյ Գրիգորիս կաթողիկոսի թարմանեցաւ նաոս ասորոց ի հայս, թվիս վեցհարուր: Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին ողորմեա տառապեալ հոգոյս Արախամ եղկելի գրիչս. եւ առաւել ճնողաց իմոց եւ զաւակաց իմոց թողութիւն հայցեցէ՛ք մեզ ի Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ Աստուած առհասարակ ամենեցուն ձեզ ողորմեսցի, լսողաց եւ կարողացողաց եւ նմա փառք յաւիտեան. ամէն»: D ամէն





**ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ**  
**ՍՐԲՈՅ ՎԿԱՅԻՅՆ ՏԱՐԱԳՈՍԻ,**  
**ՊՐՈԲՈՍԻ ԵՒ ԱՆՏՐՈՆԻԿՈՍԻ**



**ՍՐԲՈՑ ՎԿԱՅԻՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝  
ՏԱՐԱԳՈՍԻ, ՊՐՈՒԲՈՍԻ ԵՒ ԱՆՏՐՈՆԻԿՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ  
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒՈՒԹԻՒՆԸ**

Ղեկոնդ Ալիշանը ներսես Շնորհալու մասին գրում է. «ձեռամբ իր եղբորը (Գրիգորիս փոքր Վկայասէր) շատ վկայաբանութիւններ եւ ճառեր թարգմանել եւ սրբագրել տուած է... յունարենէ... Սրբոց Տարագոսեանց վկայաբանութիւնը Կոստանդին անուամբ Յոյն քահանայի մը օգնութեամբ թարգմանեալ, յամի 1157»։ Ապա նա հատուծաբար մէջբերում է անում մի յիշատակարանից, որը հիմք ծառայել իր այդ հետեւութեան համար<sup>1</sup>։

Նոյն յիշատակարանը ծանօթ էր նաեւ Գարեգին Զարբհանալեանին, ըստ որի. «Իրեն ընծայուած են դարձեալ Տարագոսի եւ Պրոբոսի վարք»։ նա նոյնպէս մէջբերում է այն դարձեալ հատուծաբար եւ մի փոքր այլ կերպ<sup>2</sup>։

Յիշատակարանի բովանդակային մասը վերարտադրուած է Գարեգին կաթողիկոսի ցուցակում. «Վկայաբանութիւն սրբոց վկայիցս ի թուականիս վեցհարիւր եւ վեցն (1157) ի ձեռն ներսիսի Հայոց կաթողիկոսի յարմարութեամբ բանի եւ դրութեամբ բառի։ Իսկ յունականէն ի ձեռն Կոստանդեայ քահանայի ի մերս փոխադրելով, որոց ողորմեսցի ի Քրիստոս Աստուած ամէն»։ նա նշում է նաեւ աղբիւրը՝ Երուսաղէմի 1.Գ ձեռագիրը, որ ձառընտիր է, 1419 թ. (էջ 393բ-407բ), եւ աւելացրնում, որ այն «Տօնացոյցի մէջ մտած 1273-ից առաջ»։ նկատի ունի եղմ. 1288 ձեռագիրը<sup>3</sup>։

Երուսաղէմի հաւաքածուի հին եւ նոր ձեռագրացուցակներում յիշատակարանն արտացոլուած է<sup>4</sup>։ Արտաշէս Մաթեոսեանն աւելի ճշգրիտ է այն վերարտադրել. «Թարգմանեցաւ ճառս սրբոց վկայիցս, ի թուականիս վեց հարիւր եւ վեցն (1157), ի ձեռն ներսիսի Հայոց կաթողիկոսի, յարմարութեամբ բանի եւ դրութեամբ բառի։ Իսկ յունականէն ի ձեռն Կոստանդեայ քահանայի ի մերս փոխադրելով, որոց ողորմեսցի ի Քրիստոս Աստուած ամէն»<sup>5</sup>։ Յիշատակարանը ղետեղուած է 1.Գ ձեռագրի 407բ էջի երկրորդ սիւնակում եւ ունի շարունակութիւն. «Երիցս երանեալ սուրբ վկայիցս բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեա՛ ստացողի սորա Տէր Պաւղոս կաթողիկոսի եւ ծնողաց իւրոց, նա եւ Աստուածատուր միակեցին եւ ծնողաց իւրոց, այլ եւ սպասաւորաց թամբարանիս Սուրբ Յակոբա եւ Մատթէոս արեղին, որն է ձեռնաու եւ սպասաւոր մեզ, եւ ինձ՝ մեղսամած Մանուէլ զծողիս եւ ծնողաց իմոց եւ բազմերախտ հոգեւոր մօրն իմոյ եւ Խաչատրին, որ աշխատեցաւ ի կոկել թխթիս, այլ եւ կարդացողացդ եւ լսողացդ, նա՛ որ առատն է ի տուր բարեաց առ հասարակ ամենեցուն ողորմեսցի»։ Այսինքն՝ ձեռագիրն ընդօրինակուել է 1419 թ. Պողոս Բ Գառնեցի կաթողիկոսի (1418-1430) օրօք։

1 Ղ. Ալիշան, Շնորհայի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 269։

2 Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական բարգմանութեանց նախնեաց (ղար Դ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 725։

3 Գարեգին Ա կաթողիկոս (Յովսեփեան), Յիշատակարանմ ձեռագրաց, Ա. հատոր, Ամբիլիաս, 1951, սիւն 367-368, հմբ. 178։

4 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1966, էջ 30, ՄԶԲ։ Այդ էջում յիշատակարանը մէջբերուած չէ, այլ նկարագրուած է վկայաբանութեան բովանդակութիւնը։ Նոյնը նաեւ հիմ ձեռագրացուցակում. Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի, առաջին հատոր, 1948, էջ 38, հմբ. 248։

5 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԳ՝ ղԳ, աշխատասիրութեամբ Ա. Ա. Մաքեոսեանի, Երևան, 1988, հմբ. 203։

Փաստորէն Ներսէս Ծնորհալին Կոստանդին քահանային թարգմանել է տուել վկայաբանութիւնը յունարէնից եւ խմբագրել այն: Ի տարբերութիւն Գրիգոր Լուսաւորչի ներբողի, որը եւս թարգմանել է տուել, ապա զգալի խմբագրման է ենթարկել Ծնորհալին, այս երկը բաւական համահունչ է յունարէն սկզբնագրին, եւ խմբագրական փոփոխութիւնները չնչին են: Այնուամենայնիւ, ապաւինելով վերը բերուած յիշատակարանի Հաւաստութեանը, հրատարակում ենք բնագիրը՝ որպէս Ներսէս Ծնորհալու գրական ժառանգութեան մաս:

Վկայաբանութիւնը թարգմանուած է յունարէնից, որի տարբերակներից աւելի մօտ է *Acta martyrum* ժողովածուում հրատարակուածին<sup>6</sup>: Նրանից սակայն բացակայում է մեր բնագրի վերջում կցուած՝ Իկոնիոնի տասնինը եղբայրներին յղուած նամակը, որը յայտնի էր միայն յատիններէն տարբերակով, իսկ յունարէնն աւելի ուշ է գտնուել այլ ձեռագրերում՝ վերնագրուած «Տասնմէկ եղբայրների նամակը» (մնացած ութի անուններն էլ կան, բայց դրանք հասցէատէրերն են)<sup>7</sup>: Յունարէն նամակի որոշ տեղեկութիւններ հայերէնում տեղափոխուած են բուն վկայաբանութեան վերջ:

Պրորոսի, Տարագոսի (Տարաքոսի) եւ Անդրոնիկոսի կամ «Տարագոսեանց» նահատակութիւնը տեղի է ունեցել Դիոկղետիանոս կայսեր օրօք 304 թ. հոկտեմբերի 11-ին Կիլիկիայում: Նրանց ձերբակալում են, եւ գաւառի կառավարիչ Մաքսիմոսը հարցապնդում ու զանազան տանջանքների է մատնում Տարսոնում, ապա Անաղարբայում, որից յետոյ՝ Մամեստիայում (Մոփսուեստիայում), իսկ հայերէնում՝ նախ Մամեստիայում, յետոյ Անարզարայում (միայն քաղաքների անուններն են տեղափոխուած, իսկ բովանդակութիւնը համահունչ է յունարէնին): Ի վերջոյ այլ մահապարտների հետ սրբերին նետում են թատրոնում գազանների առաջ, բայց ո՛չ արջը, ո՛չ էլ առիւծը նրանց չեն վնասում, ապա սրախողխող են անում: Վերջում պատումն առաջին դէմքով է. հաւատացեալ Մարկիոնը՝ պատմողն ինքը, Փիլիքսը (հռոմէական Ֆելիքս անունն է) եւ Բարաբասը գտնում են սրբերի նշխարները եւ ծածուկ տեղում թաղում՝ ակնկալելով, որ իրենք էլ մահից յետոյ կարժանանան այդտեղ թաղուելուն:

Վկայաբանութիւնը խիստ համառօտուած ներմուծուել է Յայսմաւուրքի մէջ. նրանից հանուել են վկաների հարցաքննման բոլոր երկարաշունչ երկխօսութիւնները, մնացած իրադարձութիւններն էլ աւելի սեղմ են շարագրուած: Կայ նաեւ «Շարական սրբոց Տարագոսի, Պրովոսի եւ Անդրոնիկոսի», օրինակ՝ հետեւեալ ձեռագրերում՝ ՄՄ, 1591 (1487 թ.), թ. 256բ-257ա, ՄՄ, 1593 (Ժէ դ.), թ. 224ա, ՄՄ, 1596 (Ժէ դ.), թ. 339ա-բ, ՄՄ, 1597 (1658-1659), թ. 318բ-319բ, ՄՄ, 2092 (ԺԴ դ.), 198բ-199ա, ՄՄ, 2565 (ԺԶ դ.), թ. 204ա-բ եւ այլն<sup>8</sup>: «Գանձարան» ժողովածուն պարունակում է «Ղէ. Կանոն սրբոց վկայիցն Տարագոսի, Պրորոսի եւ Անդրոնիկոսի»<sup>9</sup>:

6 *Acta martyrum*, p. Theodorici Ruinart, Ratisbonae, 1859, pp. 452-476: Յունական Յայսմաւուրքի՝ Մենոլոգիոնի՝ Սիմէոն Մեսափրաստէսի (10-րդ դար) տարբերակը նախնականի վերապատումն է, տե՛ս *Patrologia Graeca*, t. 115, col. 1067-1080:

7 *Inédits Byzantins d'Ochrida, Candie et Moscou*, publiés par François Halkin, bollandiste (Subsidia hagiographica 38), Bruxelles, 1963, pp. 21-22՝ նամակը, pp. 213-252՝ վկայաբանութիւնը:

8 Նաեւ հրատարակուած է՝ «Շարական Ս. Տարագոսի, Պրովոսի եւ Անդրոնիկոսի», Մատենագիրք Հայոց, Ը հատոր, Շարական, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 594-599:

9 *Մատենագիրք հայոց*, ԺԴ հատոր, *Գանձարան երկու գրքով*, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1323-1332:

«Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց» բազմաՀատորեակի 7-րդ Հատորում գետեղուած «Վկայաբանութիւն սրբոց վկայիցն՝ Տարագոսի, Պրորոսի եւ Անդրոնիկոսի»<sup>10</sup>, ինչպես նշուած է 1-ին ծանօթագրութեան մէջ<sup>11</sup>, մի Համահաւաք բնագիր է: Այն «միօրինակ գտանի ի Հ. (Յայսմաւուրք Հայոց) եւ ի Ծ. (Ճառընտիրք եւ ներբողեանք Հարց), Դ. (Բողանդեանք ի Դ. Հատոր)<sup>12</sup>, որպէս եւ ի Յ. (Յայսմաւուրք Յունաց) եւ Լ. (Յայսմաւուրք Լատինացոց) դոյզն տարբերութեամբ, իսկ ընդարձակն գտանի առ Սուրիոսի յանուն Մետափրաստէսի, յորմէ առաք առաւել գատենախօսութիւնս, իսկ գտանջանս վկայից եւ զայլ պարագայս պատմութեան պահեցաք յաւեա ըստ Հ. եւ Յ., որք առաւել միաբան ընթանան»:

Վկայաբանութիւնը հրատարակում ենք Երուսաղէմի 1Գ. (1419 թ.) ձեռագրից՝ այն յունարէն բնագրի հետեւութեամբ բաժանելով տասնմէկ Հատուածի: Այն պարունակում է նաեւ Փրգ. 118 ձեռագիրը՝ 1307 թ., թթ. 48-58<sup>13</sup>: Այլ ձեռագրերում ընդարձակ բնագրի գոյութեան մասին տեղեկութիւն չունենք:

Երուսաղէմի 1Գ. ձեռագրի ուղղագրական առանձնայատկութիւններն են՝ բառավերջում եւ ձայնաւորից առաջ ա-ից եւ ո-ից յետոյ անհրաժեշտ յ-ն մեծ մասամբ բաց է թողնուած, եւ ընդհակառակը՝ երբեմն յ է գրւում ա-ով աւարտուող բայի հրամայականի վերջում: Գերակշռում է աւ գրութիւնը, չհաշուած օ-ով հատուկէնտ դէպքերը, որոնք ուղղել ենք աւ-ի, ինչպէս նաեւ յ-ի գրութիւնը. եւ գրութիւնը Համատարած է:

Յայսմաւուրքային տարբերակը եւս ճիշտ համարեցինք հրատարակել, քանի որ այն պարունակում է որոշ՝ հիմնական բնագրից բացակայող եւ յունարէնի հետ առնչուող տարրեր: Այսպէս, ականատեսների ձեռքով պատմութիւնը գրուելուց յետոյ երկու հարիւր դահեկանով սրբերի մարմինները գնելու մասին տեղեկութիւնն արձագանքն է յունարէն նամակի հետեւեալ հատուածի. «Քանի որ կարիք ունէինք նրանց խոստովանութիւնները գրուած ունենալու, մօտենալով դահիճներից մէկին՝ ոմն Սեբաստոսի, երկու հարիւր գենարի դիմաց դրանք գրի առանք»:

Այն հրատարակում ենք մի քանի ձեռագրի եւ տպագրի համեմատութեամբ:

Դրանք են՝

A – ՄՄ 1338 (ԺԶ դ.), թթ. 67ա-68ա,

B – ՄՄ 1339 (ԺԶ դ.), թթ. 62ա-63ա,

C – ՄՄ 1511 (1471 թ.), թթ. 97ա-98ա,

D – ՄՄ 2695 (ԺԴ դ.), թթ. 276բ-277ա,

E – ՄՄ 4873 (1427), թթ. 272ա-բ,

F – Յայսմաւուրք Տէր Իսրայէլի, Կոստանդնուպօլիս, 1834, էջ 185-186:

ԳՈՂԱՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

10 Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. է, Վեներտիկ, 1813, էջ 271-280:

11 Անդ, էջ 279-280:

12 Խօսքը հետեւեալ՝ 68 հատորից բաղկացած հրատարակութեան մասին է. *Acta sanctorum*, Parisiis et Romae, 1643-1794.

13 Փրգ. 116-118 ձեռագրերը միատրուած են մէկ՝ «Տօնական-Վկայաբանք» խորագրի տակ եւ պարունակում են միւրերի շարունակական համարակալում:

## ՇԱՐԱԹ ԱՒՈՒՐ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՎԿԱՅԻՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՏԱՐԱԳՈՍԻ,  
ՊՐՈՒՐՈՍԻ ԵՒ ԱՆՏՐՈՆԻԿՈՍԻ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ  
ԿԻԼԿԵՑՈՑ ՅԱՆԱՐՁԱԲԱՅ ՅԱՍՍԵԱՆՆ ՅՈԿՏԵՄԲԵՐԻ ԺՔ

1. 1 Ընդ ժամանակս թագաւորութեանն Դիոկղետիանոսի եւ ի դատաւորութեանն Փղարիոսի եւ Գայիոսի եւ Նոմերիտոյի եւ Մաքսիմոսի ի Կիլիկիացոց նահանգին, յառաջ քան զութ կաղանդացն ապրելի, սոյն այս Մաքսիմոս նստելով ի բեմի ի Տարսոն քաղաքի, Դեմետրիոս Հարիւրապետ ասէ. «Զբերեալսն առաջի տեառն իմոյ Պաւլոսի՝<sup>1</sup> եւ յետալմիոսէ՝<sup>2</sup> եւ ի Պալատիոսէ՝<sup>3</sup> վերակացուաց քաղաքին, ոչք են յամբարշտութեան կրաւնս քրիստոնէից, ոչ հաւանեալ ինքնակալացն հրամանաց, կան ահաւասիկ առաջի մաքուր քո բեմիդ»:

2 Մաքսիմիանոս դատաւոր ասէ նախ ցտուրբն Տարագոս. «Զի՞նչ կոչի անուն քո, քանզի պարտ է քեզ՝ ըստ կարգի զանցեալ ժամանակաց, քաղաքավարութիւն կենաց քոց տալ քեզ պատասխանի»:<sup>3</sup> Տարագոս ասէ. «Քրիստոնեայ եմ»:<sup>4</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Խափանե՛լ զքեզ յամբարիշտ յայդց բանից. զի՞նչ է անուն քո, պատմեա՛»:<sup>5</sup> Տարագոս ասէ. «Դարձեալ քրիստոնեայ եմ»:<sup>6</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հարէք զբերան դորա եւ ասացէք մի՛ այլաբանել»:<sup>7</sup> Տարագոս ասէ. «Զոր ունէի անուն պատուական, ասացի: 8 Ապա եթէ զբնութեան իմոյ խնդրես զանուն, Տարագոս ի ծնողաց իմոց կոչեցեալ եմ»:<sup>9</sup> Մաքսիմիոս դատաւոր ասէ. «Որո՞յ բախտի ես»:<sup>10</sup> Տարագոս ասէ. «Զինուորական, այլ եւ հռոմայեցի գոլով ազգաւ, ծնեալ ի Կղաւզուպալիս ի Սաբրայ եւ յաղագս քրիստոնէութեան թողեալ զամենայն, գտարբերա-

կան նժդեհութեամբ շրջել ի վերայ երկրի ընտրեցի»:<sup>11</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ էր պարտ կարգել զքեզ ի զինուորութիւն՝ յամբարշտութեան եղեալ: 12 Բայց ո՞վ արդեաւք թողացոյց զքեզ լքանել ի դատուէ անտի»:<sup>13</sup> Տարագոս ասէ. «գփուպիանոս՝<sup>4</sup> զաւրագլուխ աղաչեցեալ, արձակեաց զիս»:<sup>14</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ես յալիս քո խնայեցեալ, խորհիմ պատուոյ առնել զքեզ արժանի ի հաւանել քո ինձ եւ լինել սիրելի ինքնակալացն: 15 Արդ, յառաջամատեա՛ եւ զոհեա՛ աստուածոցն, որպէս ինքնին ինքնակալքն եւ ամենայն տիեզերք»:<sup>16</sup> Տարագոս ասէ. «Սխալեալ եւ նոքա ի բազում մոլորութիւնս խաբին ի սատանայէ»:<sup>17</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Խորտակեցէք զկղակա դորա, զի ասէ սխալեալ զինքնակալսն»:<sup>18</sup> Տարագոս ասէ. «Ասացի եւ դարձեալ ասեմ, եթէ խաբին իբրեւ զմարդիկ»:<sup>19</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Զոհեա՛, ո՞վ դու, հայրենի աստուածոցն եւ դադարեա՛ ի կամակոր խորհրդոցդ»:<sup>20</sup> Տարագոս ասէ. «Ես զիմն միայն պաշտեմ զհայրենի Աստուածն, ոչ արեամբ զոհից, այլ մաքուր սրտիւ, զի չէ ինչ պիտոյ այդպիսի զոհ Աստուծոյ»:<sup>21</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կերպարանք հասակիդ պատկառելի, եւ աւրինակ ձերութեանդ զթալի ներել տայ քեզ, զի թերես ի բաց կացեալ ի մոլորութենէդ քումմէ, առ ի պատիւ ինքնակալացն, պատկառելով եւ ի մէնջ, ձգեսցես ի քեզ զհայրենի աւրէնս, որով բարեպաշտիս»:<sup>22</sup> Տարագոս ասէ. «Ես զհայրենի աւրէնս ի բաց ոչ

1 Պոմպեյոպոլիս (Սոմպեյոպոլեա)

2 յետալմիոս (Ետոլմիոս)

3 Պալլադիոս (Սալլադիոս)

4 գփուքիանոս (Փուլքիանոս)

ընդեցի»։<sup>23</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եթէ ոչ արդեաւք՝ մատի՛ր եւ զոհեա՛ն»։<sup>24</sup> Տարագոս ասէ. «Ամբարշտել ոչ կարեմ, այլ զիմ հայրենի աւրէնս պատուել»։<sup>25</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եւ այս զինչ այլ իցէ, ա՛յ չարագլուխ, քան զաւրէնս պատուել»։<sup>26</sup> Տարագոս ասէ. «Այո՛, այլ է՛, յորում զուք ամբարշտիք՝ քարանց եւ փայտից, ի մարդկանէ արարելոց երկիր պագանելով»։

<sup>27</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հարէ՛ք զպարանոցդ զորա եւ ասացէք՝ մի՛ մորոսանայ»։<sup>28</sup> Տարագոս ասէ. «Ես յայսմ մորոսութենէ ի բաց ոչ կարեմ կալ»։<sup>29</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ես խափանեմ զքեզ յայդմ մորոսութենէդ եւ իմաստուն արարից»։<sup>30</sup> Տարագոս ասէ. «Արա՛ եւ զոր ինչ կամիս, զի իշխանութիւն ունիս մարմնոյս»։<sup>31</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մերկացեալ զհանդերձս զորա հարէ՛ք գաւազանաւք»։<sup>32</sup> Տարագոս ասէ. «Իմաստուն արարեր զիս հարուածովքս առաւել եւս հնազանդել Աստուծոյ եւ աւծելոյ՝ նորա»։<sup>33</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Անսո՛ւրբ եւ երիցս անիծեա՛լ, զիս՞րդ եւ զու երկուս խոստովանելով աստուածս, եւ զմերս հայհոյես կրաւնս իբրեւ ի բազմաստուածութեան եղեալ»։<sup>34</sup> Տարագոս ասէ. «Ես Աստուած խոստովանիմ զայն, որ էն եւ միշտ է, եւ ոչ զոչ էսդ եւ զառժամանակեայսդ»։<sup>35</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Իսկ զՔրիստոս զի՞ ասես աստուած»։<sup>36</sup> Տարագոս ասէ. «Քանզի եւ է իսկ Քրիստոս Որդի Աստուծոյ՝ յոյսն քրիստոնէից, վասն որոյ չարչարեալ փրկիմք նովաւ»։<sup>37</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Խափանեալ զքեզ ի շողակրատս բարբառելոյ, յառաջ մատուցեալ՝ զոհեա՛ն»։<sup>38</sup> Տարագոս ասէ. «Ոչ շողակրատիմ, այլ ճշմարտեմ, վասն զի վաթսունամեայ իմ յայդոսիկ

վարժելով, ի ճշմարտութենէն ի բաց ոչ կացի»։

<sup>39</sup> Դեմետրիոս հարիւրապետ ասէ. «Այր դու, խնայեա՛ ի քեզ եւ զոհեա՛, խրատ տամ քեզ»։<sup>40</sup> Տարագոս ասէ. «Ե՛րթ, խրատ տուր զայդպիսիդ քեզ, սպասաւո՛ր սատանայի»։<sup>41</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Պնդեալ ի ծանրագոյն երկաթս՝ արկէք զզա ի բանդ, եւ յառաջ բերցի զկնի հասակի առաջնոյդ եւ երկրորդն»։

<sup>2.</sup> <sup>42</sup> Դեմետրիոս հարիւրապետն ասէ. «Ահաւասիկ կան առաջի տեառն իմոյ, ազաչեմ զքեզ»։<sup>43</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ձունայնաբանութիւն ամենայն ի բաց թողեալ ի քէն, ասա՛ զի՞նչ անուն է քո»։<sup>44</sup> Պրոբոս ասէ. «Նախ եւ առաջին քրիստոնեայ, իսկ երկրորդն առ ի մարդկանէ Պրոբոս»։<sup>45</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Որո՞յ բախտի ես»։<sup>46</sup> Պրոբոս ասէ. «Ըստ հայրենեացի Թրակիս է եւ ծնեալ ի Պանփիլիայ՝ չրջիմ տարաշխարհիկ վասն քրիստոնէութեանս»։<sup>47</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ ինչ աւգտեսցիս յայդմ անուանէդ, այլ հաւանեալ զոհեա՛ աստուածոցն, զի մեր սիրելի եղեալ եւ ի սեբաստացն պատիւ ընդալեալ»։<sup>48</sup> Պրոբոս ասաց. «Ոչ պատիւ սեբաստաց պիտոյ են ինձ եւ ոչ սիրոյ քո խնամ տանիմ, քանզի եւ ես ոչ սակաւ ինչս արհամարհեցի, զի զկենդանին շահեցայց Աստուած ի ձեռն Քրիստոսին իմոյ»։<sup>49</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մերկացուցեալ զզա տարածեցէ՛ք եւ զայլար արջառաջլաւք հարէ՛ք»։<sup>50</sup> Դեմետրիոս հարիւրապետն ասէ. «Խնայեա՛ ի քեզ, ո՛վ մարդ, ո՞չ տեսանես ահաւասիկ զարիւն քո հեղեալ ի վերայ երկրի»։<sup>51</sup> Պրոբոս ասէ. «Մարմին իմ առաջի ձեր, եւ տանջանքդ այդ առ յաւածումն իւզոյ է ինձ»։<sup>52</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ո՞չ դադարես ի մոգութենէ այսուհետեւ, զի այդքան յամառիս յիմարութեամբ, թշուառակա՛ն»։<sup>53</sup> Պրոբոս

1 Գուճարեմու՛մ Քրիստոսիճ

ասէ. «Ես ոչ յիմարիմ, այլ քան զձեզ իմաստնագոյն եմ, զի դիւաց ոչ զոհեմ»:

54 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Դարձուցեալ զդա յորսայս եւ զորովայն դորա հարէ՛ք»: 55 Պրոբոս ասէ. «Տէր, աւգնեա՛ ծառայիս քո»: 56 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հարեալ զդա խստագոյն եւ ասացէ՛ք՝ ո՞ւր է աւգնականն քո»: 57 Պրոբոս ասէ. «Աւգնեաց եւ աւգնէ եւս, որ դայսքան չարչարանս արհամարհելով, ոչ հնազանդեցայ քեզ»: 58 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հայեա՛ց ի մարմինդ, ամենաթշուա՛ն, զի արեամբ լցաւ երկիր»: 59 Պրոբոս ասաց. «Որքան մարմինս իմ չարչարի վասն Քրիստոսի, այնքան ոգիս իմ առողջանայ»: 60 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Արկէ՛ք զդա յերկաթս քառակուսի պրկմամբ եւ, եղեալ ի բանդի, մի՛ տայք թոյլ ումեք դարմանել զդա: 61 Եւ զմիւս եւս ընգերն առընթեր մերումս ածէ՛ք բեմի»:

3. 62 Դեմետրիոս հարիւրապետն ասէ. «Կա՛յ աւասիկ առաջի իմոյ, աղաչեմ զքեզ»: 63 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Զի՞նչ անուն է քո»: 64 Անդրոնիկոս ասէ. «Քրիստոնեայ եմ: 65 Յամենայնի զայդ առ ի յինէն կամիս լսել, զոր եւ դարձեալ ասեմ, թէ քրիստոնեայ եմ»: 66 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Որք նախ քան զքեզ էին, ոչ ինչ աւգտեցան յանուանէդ յայդմանէ, վասն որոյ հարցանեմ ասա՛ ինձ վաղվազակի զանուն քո»: 67 Անդրոնիկոս ասէ. «Եթէ զհասարակաց անուն, որ ի մարդկանէ հարցանես, Անդրոնիկոս կոչիմ»: 68 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Որո՞յ ազգի ես»: 69 Անդրոնիկոս ասէ. «Բարետոհմիկ իմ գոլով ազգաւ եւ նախնական զլիսաւորաց եփեսացոց որդի»: 70 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Աւգտեցեր յամենայն պատասխանութեանց բանից զանձնդ, զայդ ասելով, որովք պատշաճ է հարցն քոց նմանելով հաւանել ինձ եւ զոհել, քանզի եւ որ յառաջ քան զքեզ յիմարեցան, ոչ ինչ աւգտեցան: 71 Այլ քո

զինքնակալսն պատուելով եւ հայրենի աստուածոցն երկիր պագանելով, բարեգործիս»: 72 Անդրոնիկոս ասէ. «Թէպէտ եւ մանուկ թուիմ քեզ տիրովքս, այլ հոգով կատարեալ եմ յամենայնի»: 73 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Շատխաւսութիւնդ քո դադարեցո՛յ եւ զոհեա՛, զի զերծանիցիս ի տանջանաց»: 74 Անդրոնիկոս ասէ. «Կարծես այնքան յիմար զիս եւ անժոյժ, զի յառաջին պատասխանատ[ու]ութենէ իմմէ կասեցայց տանջանաւք, այլ պատրաստ եմ քեզ առ ամենայնս»:

75 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մերկացուցեալ զդա բարձրացուցե՛ք ի կախադանիդ»: 76 Դեմետրիոս հարիւրապետ ասէ. «Նախ քան զլինել մարմնոյ քո անյայտ, հաւանեա՛, ամենեղկելի՛»: 77 Անդրոնիկոս ասէ. «Բարի է մարմնոյ իմոյ կորնչել, եւ ոչ հոգոյս: 78 Արարէ՛ք, որպէս ախորժէք»: 79 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հաւանեա՛ց եւ զոհեա՛ նախ քան մերձեալ քեզ տանջանաւք»: 80 Անդրոնիկոս ասէ. «Ի մանգութենէ իմմէ ո՛չ երբէք զոհեցի դիւաց եւ ոչ այժ զոհեցիցից»: 81 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մերձեցուցէ՛ք չարչարանս յանգամս դորա»:

82 Աթանասիոս կուռնիկուլաոիոս՝ ասէ. «Հայր քո եմ ամաւք եւ խորհրդակից լինիմ քեզ. հաւանեա՛ց հրամանացդ»: 83 Անդրոնիկոս ասէ. «Ե՛րթ, ո՛վ եղկելի, զայդ խրատդ տո՛ւր անձին քում թշուառականի, որ ծեր ես եւ անմիտ եւ փութաս հաւանեցուցանել զիս քարանց եւ փայտից զոհել»: 84 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եթէ մերձեցեալ էին ի քեզ տանջանքդ, թերեւս ողորմէի՞ր անձին քում, ամենաթշուա՛ն, եւ փոխէի՞ր ի յիմարութենէ այդի, յորմէ ոչ ինչ աւգտիս»: 85 Անդրոնիկոս ասէ. «Մերս յիմարութիւն կենաց է առիթ յու-

1 κορνικουλάριος (յատիմերէմ cornicularius-ից՝ պաշտօնեայի Բարտողար)



սացելոց առ Աստուած, եւ ձեր առժամեայ իմաստութիւնդ, գյաւիտենական մահն որք ընդունին, զնա պատրաստէ»։ 86 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ո՞վ ուսոյց գլխմարութիւնդ զայդ քեզ»։ 87 Անդրոնիկոս ասէ. «Բան Փրկչին կենդանարար, որ ծանեաք յերկինս գԱստուած եւ ունիմք գյոյս յարութեան մերոյ»։ 88 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ազատեա՛ գքեզ յիմարութենէդ յայդմանէ, նախ քան առաւել հեղուլ ի վերայ քո տանջանաց եւ անյայտ լինել յերկրէ»։ 89 Անդրոնիկոս ասէ. «Մարմին իմ առաջի քո է, եւ իշխանութիւն ունիս, արա՛, որպէս եւ կամիս»։

90 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Խղեցէ՛ք ներքոյ անթից կողս դորա»։ 91 Անդրոնիկոս ասէ. «Տեսցէ Աստուած եւ դատեսցէ գքեզ փութով, զի ոչ ինչ անիրաւեալ է իմ, եւ տանջես զիս որպէս սպանող»։ 92 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ամպարշտեալ քո հակառակ աստուածոցն եւ ինքնակալացն եւ գատենական բեմս իմ արհամարհեալ, եւ ասես ոչ անիրաւիլ»։ 93 Անդրոնիկոս ասէ. «Ես յաղագս բարեպաշտութեան մրցիմ եւ վասն ճշմարտին Աստուծոյ»։ 94 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եթէ էիր արդեաւք բարեպաշտաւն, պատուէիր գաստուածսն, զոր ինքնակալքն պաշտեն»։ 95 Անդրոնիկոս ասէ. «Ամպարշտութիւն է այդ եւ ոչ բարեպաշտութիւն, զի թողեալ գԱստուած կենդանի, քարանց եւ փայտից երկիր պագանէք»։ 96 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ամբարի՛շտ են ինքնակալքն, երի՛ցս անիծեալ»։ 97 Անդրոնիկոս ասէ. «Ամբարիշտ են, որպէս ինձ թուի, եւ եթէ ախորժէիր ուղիղ խորհրդոց լինել խորհրդակից, ճանաչէիր, եթէ ամպարիշտ են, քանզի դիւաց գոհեն»։ 98 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Շրջեցէ՛ք զգա եւ զմիւս կող դորա պատուեցէ՛ք»։ 99 Անդրոնիկոս ասէ. «Առաջի քո եմ, որպէս կամիս, տանջեա՛ զմարմինս

իմ»։ 100 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մատուցե՛ք աղ եւ քացախ եւ խեցի եւ զվէրս կողից նորա շփեցէ՛ք»։ 101 Անդրոնիկոս ասէ. «Առաւել եւս հաստատագոյն արարեր զմարմինս հարուածովք քո»։ 102 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Փոքր միւս եւս եւ անյայտ արարից գքեզ, ամենեղկելի՛»։ 103 Անդրոնիկոս ասէ. «Ոչ երկնչիմ ի սպառնալեաց քոց, քանզի խորհուրդք իմ բարձրագոյն են, քան զչար մտածութիւնս, որով եւ արհամարհեմ գտանջանս քո»։ 104 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կպեցէ՛ք զոտս եւ զպարանոց դորա եւ պահեցէ՛ք ի բանդի»։

Ի ՄԱՄՍՈՒԵՍՏԻԱՅ  
ՔԱՂԱՔ ԿԻԼԻԿԵՑԻՈՑ

4. 105 Եւ ելեալ ի Տարսոն քաղաքէ եկն ի Մամսուեստիայ քաղաք, հրամայեաց եւ զսուրբսն զկնի բերել։ 106 Եւ նստեալ յատենի Մաքսիմոս եւ Փղարիոս եւ Գայիոս եւ Նոմերիոս, ասէ Մաքսիմոս դատաւոր ցապասաւորսն. «Կոչեսցին յառաջ, որք ի կրաւնս քրիստոնէից»։ 107 Դեմետրիոս հարիւրապետն ասէ. «Կան աւասիկ առաջի քո, աղաչեմ գքեզ»։ 108 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եթէ ոչ արդեաւք, ո՞վ Տարագոս, ծերութիւն քո պատուական, որ եւ բազմամեայ ի մարդկանէ կարծեմ թէ իցես, խորհրդակից լինիմ քեզ այժմ՝ ոչ կամելով գառաջին խորհուրդն քո ի կիր արկանելով, այլ գոհեա՛ աստուածոցն եւ գովելի յաղագս բարեպաշտութեանն երեւեսցիս»։ 109 Տարագոս ասէ. «Ես քրիստոնեայ եմ եւ զգովելի երեւելդ, որ ասես, աղաւթս առնեմ վասն քո եւ ինքնակալացն քոց ի բաց լինել ի հեռաւոր կուրութենէն եւ հաստատել ի խորհուրդս լաւագոյնս եւ ընդունել զ՛առ ի ճշմարտէն Աստուծոյ կենդանանալն»։ 110 Մաքսիմոս դատաւոր ասէ.

«Նորտակեցէ՛ք զբերան դորա եւ ասացէ՛ք՝ փոխեա՛ց ի մոլորութենէ՛դ»։ 111 Տարագոս ասէ. «Եթէ ոչ էի փոխեալ, նման ձեր էի յիմար»։ 112 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ահա ատամու՛նք քո խորտակեցան, ողորմեա՛ց անձին քում, եղկելի՛»։ 113 Տարագոս ասէ. «Ոչ տրտմեցուցանես զիս եւ ոչ իւրք, եթէ եւ զամենայն աւղուածս իմ ծայրակտուր առնես, այլ կացից ընդդէմ քո հաստատուն, որով զաւրացոյցն զիս Քրիստոս»։ 114 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հաւանեա՛ց ինձ, զի ներեմ քեզ, եւ մատի՛ր, զոհեա՛»։ 115 Տարագոս ասէ. «Եթէ չզիտէի արդեաւք, զի բարի է ինձ, ոչ այնքան չարչարէի»։ 116 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հարէ՛ք զբերան դորա, մինչեւ աղաղակեսցէ»։ 117 Տարագոս ասէ. «Վասն զի ատամու՛նք իմ անգան եւ կզակք իմ խորտակեցան, աղաղակել ոչ կարեմ»։ 118 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եւ տակաւին ո՞չ հաւանիս, անմի՛տ, յառաջ մատիր եւ զոհեա՛ աստուածոց»։ 119 Տարագոս ասէ. «Զձայն իմ ահա լոկեցուցեր յաղաղակելոյ, բայց զխորհուրդս իմ ոչ ինչ վնասեցեր, այլ մեծագոյն ի բարի ոլորումն յարմարեցեր զիս չարչարանաւքդ»։ 120 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ես զոլորումն քո քակեցից, անսո՛ւրբ»։ 121 Տարագոս ասէ. «Ամենայն չարչարանաց քոց ազգի ազգեաց յաղթող գտայց անուամբն, որ զաւրացոյց զիս Աստուած»։

122 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Արկէ՛ք ի վերայ դորա հուր, զձեռսն տարածելով»։ 123 Տարագոս ասէ. «Ի հրոյ քո ոչ երկնչիմ, զի առժամայ է, այլ զարհուրիմ, մի՛ գուցէ քեզ հաւանելով, յաւիտենական հրոյն եղէց ժառանգաւոր ընդ քեզ եւ ոյք իբրեւ զքեզդ իցեն»։ 124 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ահաւասիկ ձեռք քո ծախեցան ի հրոյդ»։ 125 Ի բա՛ց լեր ի մոլորութենէ՛դ եւ զոհեա՛, ո՛վ անմիտ»։ 126 Տարագոս ասէ. «Այնպէս խորհիս վասն իմ, որ-

պէս զանգիտելոյ ի տանջանաց, այլ ես հաստատուն եմ յամենայն, զոր ինչ ածես ի վերայ իմ»։ 127 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կապեալ զդա ոտիւք վերամբարձէ՛ք ի կախաղանս՝ ծուխ արկանելով ի ներքոյ երեսացն»։ 128 Տարագոս ասէ. «Հուրն քո արհամարհեցի, արդ ի ծխո՞յ աստի զարհուրեցայց»։ 129 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Նոստացի՛ր զոհել, մինչ կաս ի կախաղանիդ»։ 130 Տարագոս ասէ. «Դո՛ւ զոհեա զիւաց, որպէս սովոր ես, խաբեբա»։ 131 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Սառնեալ քացախ խստագոյն ընդ աղի արկէք ընդ ոնգունս դորա»։ 132 Տարագոս ասէ. «Քաղախոք քո քաղցր է, եւ աղդ քո անհամ եղեւ առ իս»։ 133 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մանանիս զանգեալ ընդ քացախ արկէ՛ք եւս դարձեալ ընդ ոնգունս դորա»։ 134 Տարագոս ասէ. «Սաբեն զքեզ, ո՛վ Մաքսիմէ՛, սպասաւորք քո՝ մեղր փոխանակ մանանիսի արկանելով»։ 135 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Նորհիմ այլ եւս տանջանս վասն քո նորագոյնս, զի կասեցից զյամառութիւն սրտի քո»։ 136 Տարագոս ասէ. «Պատրաստ եմ յամենայն տեսակս տանջանաց, զոր սպառնաս ածել ի վերայ իմ»։ 137 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Իջուցէ՛ք զդա, կապեցէ՛ք եւ տո՛ւք ի բանտապահսն եւ զմիւս եւս ընկեր ածէ՛ք այսր»։

5. 138 Դեմետրիոս Հարիւրապետն ասէ. «Կայ աւասիկ առաջի տեառն իմոյ»։ 139 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ասա՛ ինձ, ո՛վ Պրոբէ, զգաստացա՞ր գերձանել ի տանջանաց, եթէ՞ զեռ եւս ոչ ի բաց կաս ի քումմէ յիմարութենէս»։ 140 Վասն որոյ յառաջ մատուցեալ զոհեա՛ աստուածոցն, որպէս եւ ինքնակալքն առնեն յաղագս հասարակաց մարդկան փրկութեան»։ 141 Պրոբոս ասէ. «Առաւել եւս այսաւր պատրաստ եմ առաջի քո ի քննութիւն խորհրդոց քան զառաջինն»։ 142 Վասն որոյ ոչ ի քէն եւ ոչ



մի՛ կորայց եւ ես ընդ այնոսիկ, որ պաշտեն զնոսա»։ 170 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մի՞ թէ ոչ ամենեքեան, երիցս անիծեալ՛, որ կան առաջի իմոյս բեմի բարեպաշտին առ աստուածսն, պատուեալք են յինքնակալացն, եւ դուք միայն, որ դժուարահամբոյրս տեսանիք առ աստուածսն, տանջիք»։ 171 Պրորոս ասէ. «Հաւատա՛ ինձ, Մաքսիմէ, զի կորնչելոց էք, եթէ ոչ ապաշխարէք, զոր գործէք, եւ ի միտս եկեալ ծառայէք Աստուծոյ կենդանւոյ»։ 172 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Նորտակեցէ՛ք զդէմս երեսաց դորա եւ սասցէ՛ք՝ մի՛ ասեր Աստուած, այլ աստուածս»։ 173 Պրորոս ասէ. «Զի զճշմարիտն ասացի, հարկանե՞լ զիս հրամայես, ո՛վ անաւրէն»։ 174 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ միայն հարկանել, այլ եւ զլեզուքո՛ հայհոյող հատանել հրամայեմ, զի խափանել քո ի շողակրատս բարբառելոյ այտի, յառաջ մատուցեալ զոհեսցես աստուածոցն»։ 175 Պրորոս ասէ. «Թէպէտ եւ զբանից իմոց որդենոնս՝ հատանես, ունիմ այլ եւս ներքնագոյն լեզու, որով պատասխանի տաց քեզ»։ 176 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Առ այժմ ամբարձեալ զդա ի բանդ, եւ զմիւսն եւս ընդերն ածէ՛ք այսր»։

6. 177 Դեմետրիոս հարիւրապետ ասէ. «Կայ աւասիկ առաջի քո, աղաչեմ զքեզ»։ 178 Մաքսիմոս դատաւոր ասէ առ սուրբն Անդրոնիկոս. «Որք նախ քան զքեզ քննեցան, յոքունց համբերեալ կտտանաց, ոչ ինչ աւգտեցան երիցս թշուառականքն, այլ յետ բիւր այնքանեաց տանջանացն հազիւ ուրեմն հաւանեցան բարեպաշտիլ, որք եւ ոչ սակաւս յինքնակալացն հանդերձեալ են առնուլ պարգեւս։ 179 Ուստի եւ դու յառաջ քան զտանջանսն շահել

կամեացեալ զանձն՝ զոհեա՛ աստուածոցն։ 180 Զի թէ բարեպաշտիս առ նոսին, հնազանդելով ինքնակալացն, պատիւս ի նոցունց առցես, որպէս եւ վայել է, եւ փառս։ 181 Ապա թէ ոչ՝ երդուեալ իմ յաստուածսն եւ ի յաղթութիւն թագաւորացն, ոչ փոքունս առնելով ի վերայ քո զտանջանս»։ 182 Անդրոնիկոս ասէ. «Մի՞ թէ քան յառաջին պատասխանատութեանն անարի այժմուս զիս կարծիցես եւ կամ զանազան խորհրդոց փոփոխմամբ պատրել կարիցես զմիտս իմ հաւանել քեզ։ 183 Սակայն ես ոչ թողից զհայրենատուր ավրէնս ճշմարտութեանն եւ հաւանեցայց քում մոլորութեանդ եւ ոչ զյոյսն իմ, որ առ Աստուած է, աղաւաղեցից, այլ կացից ընդդէմ քո սպառազինեալ համբերութեամբ, հաւատով, որ առ Աստուած փրկիչն իմ, զաստուածս քո ոչ ճանաչեմ եւ ի բեմէ քումմէ ոչ երկնչիմ։ 184 Բայց դու սպառնալիս քո պատրաստեա՛ եւ զչարչարանս քո ա՛ճ ի վերայ իմ եւ յամենայն ավրինակս ձեռնարկեա՛ զձառայս Աստուծոյ առ ի նեղել»։ 185 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Տարածեալ զդա ի վերայ երկրի եւ դալար արջառաջլաւք հարէ՛ք յերկարս»։ 186 Անդրոնիկոս ասէ. «Ա՛յս են սպառանիքն քո, զոր խոստացար ածել ի վերայ իմ, երդուեալ յաստուածսն քո եւ յինքնակալսն»։

187 Աթանասիոս կուռնիկուլարիոս ասէ. «Բովանդակ մարմին քո վիրաւորեալ, եւ ոչ ինչ վարկանիս, ամենաթշուա՛ն»։ 188 Անդրոնիկոս ասէ. «Որ զկենդանին սիրեն զԱստուած, զայս ոչ ինչ համարին»։ 189 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Աղիւ չփեցէ՛ք զհարուածս վիրաց դորա»։ 190 Անդրոնիկոս ասէ. «Սաստի՛կս հրամայեա չփել, զի անփուտ մնացեալ կարացից հաստատուն կալ ընդդէմ չարեաց քոց»։ 191 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Դարձուցեալ զզա յորսայս՝ կարծրագոյնս հարէ՛ք, զի յառաջին հարուածքն նորոգեսցին եւ մինչեւ յուղիղն

1 Զ. գլխով որ

2 ὀργανον («գործիք»)

թափանցիկ լիցին»։<sup>192</sup> Անդրոնիկոս ասէ. «Յառաջին հարուածոցն, որով վիրաւորեցան մարմինքս իմ, բժշկեցայ, որպէս եւ կամ աւասիկ առաջի քո առողջացեալ։<sup>193</sup> Եւ նոյն, որ յայնժամ բժշկեաց զիս, եւ այժմ բժշկէ զիս»։<sup>194</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ո՛հ եւ ձեզ, ո՛վ չար զինուորք, ասացի, ոչ եւ միոյ իրիք հանդիպիլ զմա բժշկութեան, այլ մնալ անդարման, զի ի վերայ մօրմոքեալ հարուածոցն հաւանեսցի մեզ»։<sup>195</sup> Պիղարիոս կոմենտարիոս<sup>1</sup> ասէ. «Երգուեալ ի ձեր մեծութիւնդ, ոչ եւ մի ոք ի զոցանէ դարմանոյ հանդիպեցաւ, մտեալ եւ ոչ ուրուք առ դոսա, զի ի ներքսագոյն բանդի անտ գոլով ի պահեստի։<sup>196</sup> Եւ թէ սուտ յոյսոսիկ գտանիցիմ, գլխոյ իմոյ կալ՝ ջիք իշխանութիւն»։<sup>197</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ապա զիա՞րդ հարուածք նոցա անյայտ եղեն»։<sup>198</sup> Պրիգոսիոս կոմենտարիոս ասէ. «Ոչ զիտեմ, զիարդ բժշկեցան, ի մեծ առաքինութիւն ձեր երգուեալ»։

<sup>199</sup> Անդրոնիկոս ասէ. «Մեր բժիշկն եւ փրկիչն մեծ է եւ կարող յամենայնի, ո՛վ դու անմաքուր, եւ զորս բարեպաշտին առ Աստուած, ոչ դեղով բժշկէ, այլ բանիւ միայն գյուսացեալսն ի նա, որ բնակեալն է յերկինս եւ է միշտ ընդ մեզ, զոր դուք ոչ գիտէք, անմիտ գոլով»։<sup>200</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յայդմ յիմարախաւս բանիցդ ոչ ինչ աւգտեսցիս, այլ յառա՛ջ մատիր, ասեմ, եւ զոհեա՛ս աստուածոցն, զի մի՛ չարչարեցից զքեզ»։<sup>201</sup> Անդրոնիկոս ասէ. «Միանգամ եւ երկիցս ասացեալն յինէն առ քեզ նոյն է եւ մի եւ ոչ փոփոխի, եւ ոչ իրբեւ զմանուկ փաղաքշելով, կարիցես խաբել զիս»։<sup>202</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ եւ դուք արհամարհելով զիս եւ զբեմս իմ կարիցէք յաղթել ինձ»։<sup>203</sup> Անդրոնիկոս ասէ. «Այլ եւ ոչ մեք յաղթիցիմք բանիւք եւ

եթ սպառնալեաց տանջանաց քոց, քանզի գտեր զմեզ ոչ անարի, այլ արիարար վկայս Աստուծոյ, որ զաւրացոյց զմեզ ի ձեռն Քրիստոսի Փրկչին մերոյ, զոր յոմանս ինչ զաւրութիւն եւ դու ծանեար խաբողդ՝ տեսանելով, զի ոչ զարհուրեցաք ի տանջանաց քոց»։<sup>204</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Պատրա՛ստ արարէք ինձ զանազան գործիս տանջանաց ի միւսանգամ, որ յաղագս դոցա քննութեան, եւ զսա զգուշութեամբ երգեալ երկաթս պահեցաք ի բանտի եւ մի եւս ումեքէ տեսեալ իցէ յարգելանի անդ»։

ՆԵՐՍԷՍԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՅԱՆԱՐՋԱՐԱՅ Ի ՓԱՌԱՒՈՐԵԱԼ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ

7. <sup>205</sup> Փղաբիոս, Գայիոս, Նոմերիոս եւ Մաքսիմոս ելեալ ի Մամուեստիայ, եկին յԱնարգարայ։<sup>206</sup> Եւ նստեալ յատենի, Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կոչեցէ՛ք յառաջ զամպարիշտն կրաւնից քրիստոնէից խորհրդածուս»։<sup>207</sup> Դեմետրիոս հարիւրպետ ասէ. «Կան աւասիկ առաջի տեսուն իմոյ, աղաչեմ զքեզ»։<sup>208</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Արդ, այժմ ի բազում հարուածոցդ պարտ է քեզ հաւանել, ո՛վ Տարագոս, ի բաց կալով յանամաւթ խոստովանութենէդ, եւ յառաջ մատուցեալ զոհեա՛ս աստուածոցն, որով ամենայնք ուղղին»։<sup>209</sup> Տարագոս ասէ. «Ոչ ձեր ինչ ի բարեաց ունակացեալ մասին եւ ոչ նոցին, եւ զիա՞րդ նոքաւք ուղղի աշխարհս, որոց պատրաստեալ է հուրն յաւիտենից եւ տանջանքն, ոչ միայն ձեզ, այլ եւ կամակարաց նոցին»։<sup>210</sup> Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ո՛հ դադարես, գարշելի, ի հայհոյելոյ, կարծես այդմ հայհոյութեամբդ շարժե՞լ զմեզ ի ցատումն, որպէս զի առեալ զգլուխ քո ի քէն, արագ վճարեսցիս ի կենացս»։<sup>211</sup> Տարագոս ասէ. «Ինձ առ ի քէն մեռանելն արագ չեն ինչ մրցականք, զոր եւ կամիս,

1 Πηγάσιος κομენტαρίσιος < commentariensis («խորտուղար»)»

յաճախեա՛ ի թիւս տանջանաց, որպես զի զարգացումն ճգնութեան մերոյ առաւելապէս աճեսցէ»։ 212 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Որով դուք պանծայք ի տանջանսդ ժողովակելով, զգոյն կրեն չարչարանք եւ այնոքիկ, որք ի բանդի ըստ աւրինաց դատապարտեալք մեռանին»։ 213 Տարագոս ասէ. «Եւ այդ եւս քոյին անգիտութեան է եւ բազում կո[ւ]լութեան, ոչ գիտելով է, թէ զործաւնեայքն անիրաւութեան զայն յիրաւի կրեն, իսկ որ վասն Քրիստոսի չարչարին կամաւորապէս, վարձս մեծագոյնս առցեն եւ պսակս ի նմանէ»։ 214 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Անսո՛ւրբ եւ աղտեղի՛, զի՞նչ ընգալցին վարձս, որք չարչարեալք ելանեն ի կենցաղոյս»։ 215 Տարագոս ասէ. «Ոչ ես արժանի ի հարցանելոյ եւ ոչ մեզ ուսուցանել զառաջիկայ վարձուցն մերոց զհատուցումն, ընդ որոց կրեմք զսպառնալիս քո բարկութեանդ»։ 216 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Այդպիսի՞ խաւսիս ընդ իս, անսո՛ւրբ, իբրեւ համապատիւ գոլով քո»։ 217 Տարագոս ասէ. «Մի՛ երբէք լիցի ինձ համապատիւ լինել քեզ, եւ ոչ եղէց յաւիտեան, այլ համարձակապէս խաւսելդ ոչ ոք արգելու յինէն Աստուծով, որ զաւրացոյցն զիս ի ձեռն Տեառն»։ 218 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ես համարձակութիւնդ քո լուծանեմ, աղտեղի՛»։ 219 Տարագոս ասէ. «Ոչ ոք զհամարձակութիւնս իմ առցէ յինէն՝ ոչ դու եւ ոչ ինքնակալ քո, եւ ոչ հայրն ձեր սատանայ, եւ ոչ դեւքն, զորս պաշտէք մոլորեալք»։ 220 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Խաւսե՛լս իմ ընդ քեզ այդպէս արդեաւք յանդգնագոյնս արար զքեզ, չարապա՛շտ»։ 221 Տարագոս ասէ. «Ծանի՛ր զքեզ, զարշիլի՛, զի որպէս վկայէ ինձ Աստուածն իմ, զոր պաշտեմ, եւ զերեսս քո պիղծ համարիմ տեսանել, թո՛ղ թէ արժանի վարկանիմ տալ քեզ պատասխանի»։ 222 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Զմտաւ ածեալ՝ այսուհետեւ մի՛ առաւելուր ի չարչարանս քո, եղկելի՛, այլ

յառա՛ջ մատիր եւ զոհեա՛»։ 223 Տարագոս ասէ. «Ես յառաջնումն պատասխանատուութեանն իմում, որ ի Տարսոն, եւ յերկրորդումն, որ ի Մամեստիայ, խոստովան եղէ քրիստոնեայ լինել եւ այժմ աստանաւր նոյն ինքն եմ եւ ոչ փոփոխեալ։ 224 Վասն որոյ հաւանեա՛ ինձ եւ ուսի՛ր, զի ճշմարիտ եմ, եւ ոչ ապստամբեալ ի ճշմարտութենէն»։ 225 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յորժամ չարչարեալ զքեզ կորուսից, զի՞նչ աւգտիցիս, ամենեղկելի՛, ի զղջանալոյ անտի»։ 226 Տարագոս ասէ. «Թէ յառաջին հարցուածոց անտի զղջացեալ էի, եւ յայժմուս իսկ զարհուրեալ առնէի զկամս քո, բայց հաստատեալ եմ Տերամբ ոչ ինչ համարել զքեզ։ 227 Արա՛, զոր կամիս, անամա՛ւթ»։ 228 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յաճախեցից յանամաւթութիւն քո, որով առաւել եւս տանջիս»։ 229 Տարագոս ասէ. «Ասացի եւ դարձեալ ասեմ. իշխանութիւն ունիս մարմնոյ իմոյ, արա՛, որպէս եւ կամիս»։ 230 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կապեալ զդա տարածեցէք ի վերայ երկրի, զի մի այլ եւս յիմարս խաւսեցի»։ 231 Տարագոս ասէ. «Եթէ նման քո էի յիմար, պաշտէի արդեաւք, զոր դու պաշտես»։ 232 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հաւանեա՛ ինձ, իբրու կաս տարածեալ նախ քան սկսանել ի տանջանս վայելչական քեզ»։ 233 Տարագոս ասէ. «Թէպէտ եւ զմարմին իմ զինուորական չէր պարտ քեզ այնքան տանջել, սակայն ես ոչ ի սպառնալեաց քոց խուսափեմ։ 234 Արա՛, զոր կամիս»։ 235 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Զինուոր բարեպաշտան, որ զաստուածս պատուէ, յինքնակալացն պարզեաց եւ ի մէնջ արժանաւորի, իսկ քո ամպարիշտ գոլով եւ թողութեան անարժան, սաստկագունից, որոց արժան է քեզ մատնիս տանջանաց»<sup>1</sup>։

1 Արամից յետոյ կարմիրով ենթավերնագիր է՝ Զմնացեալ ճառիս վաղիւն կարդայ, եւ ապա ստորին լուսանցիի շարք Տարագոսեանց գրութիւնը փոխում է՝ կիրակի կարդա զմնացեալ ճառիս Տարագոսեանց։

226 Տարագոս ասէ. «Քաղում անգամ լուար յինէն, թէ արա՛, զոր կամիս: 227 Արդ, ընդէ՛ր յապաղես»: 228 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մի՛ կարծեր այնպէս ածել ի վերայ քո դտանջանս, որպէս նախ ասացի՝ փութով գերծանել քեզ ի կենացս, այլ ընդ սաստիկ տանջանաւք արկեալ, յետոյ դազանաց զմարմինդ քո մատնեցից»: 229 Տարագոս ասէ. «Զոր ինչ առնելոց ես, արա՛ վաղվաղակի, մի՛ բանիւ միայն, այլ եւ գործովք»: 230 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մի՞թէ կարծիցես, ո՛վ աղտեղի, զի մարմին քո յետ մահու ի կանանց աւժանիցի եւղով, այլ Հանդերձեալ եմ եւ յետ այնորիկ անյայտ առնել զդա»: 231 Տարագոս ասէ. «Եւ արդ տանջեա՛, սպա՛ն, արա՛, զոր ինչ եւ կամիս, ընդ մարմին իմ»: 232 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յառաջ մատուցեալ զոհեա, ասեմ, աստուածոցն»: 233 Տարագոս ասէ. «Ասացի բաղում անգամ ընդ անպատկառդ, եւ ոչ լուար, եթէ աստուածոց քոց ես ոչ զոհեմ եւ գարշելեաց քոց երկիր ոչ պագանեմ»: 234 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մերձեցուցեալ ի դա սուր, պատառեցէ՛ք զպատասխանող շրթունս դորա»: 235 Տարագոս ասէ. «Թէպէտ եւ զղէմս երեսաց մարմնոյ իմոյ ապականեցեր, այլ զհոգիս իմ նորոգեցեր ի Հնութենէ»: 236 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Նեղես եւ այլ եւս ածել ի վերայ քո տանջանս, ո՛վ թշուառական»: 237 Տարագոս ասէ. «Մի՛ զիս բանիւ համարիր զարհուրեցուցանել, զի ես պատրաստ եմ յամենայնի կալ ընդդէմ քո, ունելով զվահանն Աստուծոյ»: 238 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Վահան զոր արդեաւք կրես, երիցս անիծեալ, իբրու մերկ գոլով քո եւ ի Հարուածովք»: 239 Տարագոս ասէ. «Անդիտանաս դու զայն եւ ոչ կարես զսպառազինութիւնն իմ տեսանել կոյր գոլով քո, զի ես, շրջապատեալ Աստուծոյ իմոյ զինուք, զամենայն նետս հրացեալ հաւրն քո սատանայի շիջուցանեմ»: 240 Մաքսի-

մոս դատաւոր ասէ. «Համբերեցից մոգութեան՝ քո եւ ոչ վասն պատասխանատուութեան քո զայրացեալ արագ վճարեցից զքեզ ի կենացս»: 241 Տարագոս ասէ. «Զի՞նչ ասացի, չա՛ր, բայց միայն թէ զոր առ իսն է, դու ոչ տեսանես, քանզի չէ սիրտ քո մաքուր, այլ ամբարիշտ յԱստուծոյ եւ պատերազմող ընդդէմ ծառայից նորա»: 242 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ ուղիղ տեսանեմ զկեանս քո, այլ կախարդութեամբ լի, որպէս ոմանք»: 243 Տարագոս ասէ. «Ոչ եմ կախարդ եւ ոչ եղէց, քանզի ոչ զոհեմ դիւաց, որպէս դուք, այլ Աստուծոյ, որ տայ ինձ Համբերութիւն եւ արկանէ յիս բան, զի խաւսեցայց ընդ քեզ»: 244 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ ինչ աւգտիցիս յայդպիսեաց խորհրոց, զոհեա՛, զի ասրեսցիս ի տանջանաց»: 245 Տարագոս ասէ. «Կարծես այնքան յիմար գոլով զիս եւ անմիտ, մինչ զի ոչ Աստուծոյ իմոյ Հնազանդել եւ կեալ, այլ քեզ, զոր առժամեալ մարմին իմ աւգտեսցի եւ Հոգի իմ մեռանիցի յաւիտեան»: 246 Մաքսիմոս դատաւոր ասաց. «Շամփուրս երկաթիս հրացուցեալ դի՛ք ի վերայ կրծից դորա»: 247 Տարագոս ասէ. «Առաւել քան զսոյն առնիցես, ոչ հաւանեցուցանես զծառայս Աստուծոյ ուրուականաց դիւաց երկիր պագանել»: 248 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Առեալ սուր հատէ՛ք զունկն դորա եւ սափրեալ զգլուխն կայծակունս հրոյ արկէ՛ք ի վերայ»: 249 Տարագոս ասէ. «Զունկն իմ ահա բարձեր յինէն, այլ սիրտ իմ հաստատուն կայ եւ մնայ»: 250 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Սափրիչ սուսերաւ զչար գլխոյդ այգորիկ զմորթ քերեցէ՛ք եւ սաստկագոյնս հրով այրեցէ՛ք»: 251 Տարագոս ասէ. «Եթէ զբովանդակ զմարմինս իմ այրեսցես, ի հրամանացն Աստուծոյ ի

1 Հաւանարար եղել է մոլոթեան, հմմտ. μενίαις

բաց ոչ կացից, որ զաւրացոյցն զիս համբերութեամբ վահանիդ չարութեան»:  
252 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Առէ՛ք զհրացեալ շամփուրս եւ դի՛ք ի վերայ ուրովայնի դորա»:  
253 Տարագոս ասէ. «Տեսցէ Աստուածն իմ, որ դատեսցէ զքեզ այսաւր»:  
254 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Զո՞ր աստուած կարդաս, ո՛վ երիցս անիծեալ, ասա՛ ինձ»:  
255 Տարագոս ասէ. «Զոր դու ոչ ճանաչես եւ առ իս մերձ է եւ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց»:  
256 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ պարզաբար սպանանեմ զքեզ, որպէս յառաջագոյն ասացի, որպէս զի առեալ կանանց զմարմինդ քո, պատեսցին կտաւովք եւ իւղովք աւծեալ երկիր պագանիցեն, այլ յետ չարաչար մահուամբ վճարելոյ զքեզ այրել եւս հրամայեմ եւ զաճիւն ոսկերաց քոց հողմով՛ ցնդել»:  
257 Տարագոս ասէ. «Ասացի եւ դարձեալ ասեմ. արա՛ եւ զոր ինչ եւ կամիս, քանզի իշխանութիւն առեր յաշխարհի»:  
258 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ամբարձեալ զդա աստուստ պահեսջի՛ք ի բանտի, զի զկնի այսր ատենի գագանամարտիկ եղիցի, եւ զմիւս եւս ընդերն, որ յետ դորա, աճէ՛ք այսր»:

259 Տ. Դեմետրիոս հարիւրապետն ասէ. «Աւասիկ առաջի քո աղաչեմ զքեզ»:  
260 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Բարի ինչ խորհեցա՞ր անձին քո առ ի մխիթարութիւն, եթէ՞ ի նոյն կեաս, ո՛վ Պրորէ, ըստ որում որ յառաջ քան զքեզ վատաբախտքն»:  
261 Կարծեմ, թէ քո իմաստուն գոյով քան զնոսայն, անձին քում ողորմելով կամեսցիս զոհել, զի ի մէնջ պատիւ ընդալեալ բարեպաշտութեամբ աստուածոցն հանդիպելով:  
262 Արդ, յառաջ մատուցեալ արասցես ըստ ասացելումնս»:  
263 Պրորոս ասէ. «Խորհուրդ իմ մի է, ո՛վ խաբեբայ, քանզի Աստուծոյ ծառայ գոյով

ոչ այլ ինչ ունիս լսել յինէն, քան զոր լուարն նախ եւ ուսար, յորմէ ոչ կարացես խախտել զիս քոյին շողաւաշուրթն պատրանաւքդ եւ ոչ հաւանեցուցանել սպառնալեաւքդ եւ զաւրութիւն իմ ոչ կակղել, զոր շողակրատել խորհիս, այլ առաւել համարձակութեամբ կամ այսաւր առաջի՛ արհամարհելով զսպառնալիքս քո եւ զխորամանգութիւնդ քո անմիտ, յորում կաս միշտ եւ ոչ մերկանաս»:  
264 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Չայնակիցք եղեալ չարութեան՝ զաստուածսն արհամարհեցէք»:  
265 Պրորոս ասէ. «Չայնակիցք եմք մեք ի բարեպաշտութեանն խոստովանութիւն եւ ի չարչարանս վասն Տեառն մերոյ, որով հակառակիմք քոյին չարութեանդ»:  
266 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Նախ քան զսաստկագոյն տանջանս ազատեա՛ ի յիմարութենէդ եւ ողորմեա՛ց անձին քում, կամելով բարւոք բարեպաշտիլ առ աստուածսն»:  
267 Պրորոս ասէ. «Յամենայնի տեսանեմք զքեզ անհաւատ եւ խաբող, այլ հաւատա՛ ինձ, երդում քեզ, զի զ՛առ Աստուած խոստովանութիւն իմ բարի, ոչ դու եւ ոչ հայրն քո սատանայ կարէք ի վատթարակոյսն փոփոխել<sup>2</sup>»:

268 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կապեալ զդայ ընդ ծայրից ոտիցն՝ կախեցէ՛ք գլխիվայր»:  
269 Պրորոս ասէ. «Ո՞չ զաղաւրես ամբարշտել, անսուրբ բռնաւոր, յաղագս քոց նմանեաց զիւաց հանդիսանայ»:  
270 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Խնայեա՛ ի մարմին քո եւ հաւանեա՛ ինձ՝ նախ քան չարչարեալ զքեզ, տեսանելով, որ կան առաջի քո»:  
271 Պրորոս ասէ. «Ամենայն, որ ի քէն գան ի վերայ իմ, յաւ-

2 Յունարեւում՝ այլ կերպ է միտքն ձեւակերպուած. «չեն կարողանայ տապալել իմ հաւատն առ Աստուած եւ բարեմտութիւնը» (οὐτε... δυνήσονται ἀνατρέψαι ἡμῶν τὴν εἰς θεὸν πίστιν καὶ εὐνοίαν), որից թիւում է, որ փոփոխել-ը ներգործակամ ատուժով է կիրառուած, այսինքն՝ ինձ փոխել:



զուտ հոգոյ իմոյ է, վասն որոյ արա՛, զոր եւ կամիս»: 272 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ջեռուցէ՛ք զշամփուրսն եւ զի՛ք ի վերայ կողից դորա, զի մի՛ յիմարեսցի»: 273 Պրորոս ասէ. «Որքան քեզ յիմար կարծիմ, այնքան առաւելագոյն Աստուծոյ իմոյ իմաստնագոյն եմ»: 274 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Դարձեալ Ջեռուցէ՛ք զշամփուրսն երկաթիս եւ այրեցէ՛ք զթիկունս դորա»: 275 Պրորոս ասէ. «Ահաւասիկ մարմին իմ առաջի քո է, այլ տեսցէ Աստուած զխոնարհութիւն իմ եւ զհամբերութիւն եւ իրաւունս արասցէ ի մէջ իմ եւ քո»: 276 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ձոր կարդաս, ամենաթշուա՛ռ, նա թերեւս մատնեաց զքեզ ըստ արժանեաց քոց այդպէս չարչարել»: 277 Պրորոս ասէ. «Աստուածն իմ մարդասէր է եւ ոչ կամի զչար ումեք ի մարդկանէ, քանզի անձնիշխան եմք եւ տէր մերոց խորհրդոց»: 278 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ձհեղեալ արիւնն՝ ի բազինն եւ միս առեալ մատուցէ՛ք ի բերան դորա»: 279 Պրորոս ասէ. «Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ կենդանոյ, հայեաց ի բարձանց ի սրբութենէ քումմէ ի նեղութիւնս իմ եւ դատեա՛ զիրաւունս իմ»: 280 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յետ բազում ժուժկալութեան քո, ամենաթշուա՛ռ, ահա ի բազնէ անտի ճաշակեցեր. զի՞նչ այսուհետեւ ունիս առնել»: 281 Պրորոս ասէ. «Ոչ մեծ ինչ գործեցեր, ակամայ անմաքուր քոց զոհիցդ տալով ինձ, բայց զկամս սրտի իմոյ տեսանէ Աստուած»: 282 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Թէպէտ ակամայ, սակայն ճաշակեցեր եւ ըմբեցեր, անզգա՛յ: 283 Արդ, խոստացի՛ր առնել զայդ կամաւ, զի գերծանիցիս ի կապանացդ»: 284 Պրորոս ասէ. «Մի՛ երբէք բարի քեզ, ո՛վ անաւրէն, եթէ կարիցես յաղթել յառաջատութեանս իմում կամ

աղտեղեալ զհոգս իմ, կամ յանմաքուր բազին քո խառնել զիս, բայց զնեղութիւնս իմ ետես Տէր երկնից»: 285 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Շողացուցէ՛ք դարձեալ զշամփուրսն երկաթիս եւ, եղեալ ի վերայ որովայնի դորա, այրեցէ՛ք զդա»: 286 Պրորոս ասէ. «Ոչ խորհուրդ քո այրելի, եւ ոչ տանջանքդ քո մորմոքելի, եւ ոչ զոր բազում անգամ ասացի, հայրն քո սատանայ հաւանեցուցանել կարէ զճառայս Աստուծոյ ի բաց կալ ի ճշմարտին Աստուծոյ խոստովանութենէ»: 287 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մարմին ոչ ունելով այսուհետեւ առողջ, այլ վիրաւորեալ, եւ տակաւին ո՞չ առնուս ի միտ, թշուառակա՛ն»: 288 Պրորոս ասէ. «Ձմարմինս իմ մատնեցի ի քեզ, զի հոգի իմ կենդանի եղեալ մնացէ անապական»: 289 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Սայրասուր հեղուս հրացուցեալ՝ թափանցիկ հարէ՛ք ի ձեռս դորա»: 290 Պրորոս ասէ. «Փա՛ռք քեզ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի եւ ձեռս իմ արժանի արարեր ըստ նմանութեան քո չարչարանացն բեւեռիլ վասն անուանդ քո սրբոյ»:

291 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Բազում տանջանքդ, ո՛վ Պրորէ, յիմարագոյնս զքեզ արարին, զի զոր գործեսն, ոչ գիտես»: 292 Պրորոս ասէ. «Բազում ամբարտաւանութիւնդ քո եւ չարութիւնդ, ո՛վ Մաքսիմէ, ոչ միայն յիմար, այլ եւ կոյր զքեզ արարին, զի զոր գործեսն, ոչ իմանաս»: 293 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ա՛յ անսուրբ, յիմար եւ կո՞յր համարձակիս ասել, որ յաղագս բարեպաշտութեանն հաւատոյ, որ առ աստուածսն, հանդիսանամ»: 294 Պրորոս ասէ. «Լաւագոյն էր քեզ, եթէ կոյր էիր աչաւքդ, եւ ոչ սրտիւդ, զի զոր այժմ տեսանես, ի խաւարի հանդիպի»: 295 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Անփորձ է պատճառն, զի զաչսդ առ ի տեսանել թողի»: 296 Պրորոս ասէ. «Թէպէտ եւ

1 Յունարէնում՝ οἶνον («գինի»)»

աչք իմ ստուերանան կատաղութեամբ քո, սակայն սրտի իմոյ ստուերանալ յիմաստութենէ անհնար է»: 297 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հանեալ զաչս քո տանջեցից այնու զքեզ, ո՛վ անմիտ»: 298 Պրորոս ասէ. «Բանիւ միայն ասելով զայդ ոչ զարհուրեցուցանես զիս: 299 Նա թէ եւ գործով զայդ առնես, ոչ տրմեցուցանես զծառայս Աստուծոյ, զի [ան]տեսանելի<sup>1</sup> աչաց իմոց ոչ ինձ զաւրես առնել»: 300 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Նոցեցէ՛ք զաչս դորա սրով, զի ի դուզնաքեայ կեանս իւր զրկեսցի ի լուսոյն անտի»: 301 Պրորոս ասէ. «Զաչս մարմնոյ իմոյ ահա հաներ յինէն, այլ մի՛ լիցի քեզ բարի, կատաղի՛ բռնաւոր, եթէ զկենդանական աչս իմ կարես բարժանել յինէն»: 302 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ամենեւին ի խաւարի գոլով քո, եղկելի՛, եւ տակաւին եւս խասի՞ս»: 303 Պրորոս ասէ. «Եթէ տեսանէիր զխաւարն, որ ի քեզ, ամբարի՛շտ, երանէիր զիս յիմուճս արդեաւ»: 304 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մեռեալ գոլով մարմնով եւ ի դաւզանջելոյ ո՞չ դադարես, զբաբախա»: 305 Պրորոս ասէ. «Որքան իցէ յիս հոգի, ոչ դադարեցից ի խաւսելոյ, որ զաւրացոյցն զիս, Աստուծով»: 306 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յետ այդքան չարչարանաց ապրե՞լ եւս ակն ունիս: 307 Ո՞չ զիտես, եթէ ոչ թողից զքեզ պարզաբար մեռանել, այլ բազմագուճիւր տանջանաւք»: 308 Պրորոս ասէ. «Յայսմ ճգնիմ եւ հանդիսանամ, զի թերեւս բարի խոստովանութիւն իմ կատարեալ լիցի, քո սպանանելով զիս, անողո՛րմ եւ մարդախոշոշ»: 309 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Ոչ վաղվաղակի, այլ առ սակաւ սակաւ սպանանեմ զքեզ հարուածովք, ըստ որում արժանաւոր ես»: 310 Պրորոս ասէ. «Իշխանութիւն ունիս, ամբարտաւան բռնութեան

սպասաւոր»: 311 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Առեալ զդա կապեցէ՛ք ընդ երկաթս եւ պահեցէ՛ք ի բանդի, եւ մի՛ ոք ի համագգեաց դոցա մերձեսցի եւ երանեսցէ զդոսա, որք յամբարչտութեան մնացին, զորս եւ հանդերձեալ եմք յետ այտորիկ դազանաց մատնել: 312 Կոչեսցի այսուհետեւ անսուրբն Անդրոնիկոս»:

313 Թ. Դեմետրիոս հարիւրապետք ասէ. «Կայ աւասիկ առաջի տեսուն իմոյ, աղաչեմ զքեզ»: 314 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Արդ, այժմ մանգական հասակի քո ողորմեցա՞ր, Անդրոնիկէ, իմաստուն խորհրդով բարեպաշտիլ առ աստուածան, եթէ՞ զառաջին մոլորութիւնն տակաւ ի կիր արկանես, որ ոչ կարէ աւգնել քեզ: 315 Զի եթէ ոչ կամեսցիս հնազանդել ինձ եւ զոհել աստուածոցն եւ յինքնակալացն պատիւս ընդունել, ոչ կալցիս միսիթարութիւն եւ ոչ մի: 316 Վասն որոյ յառաջ մատուցեալ զոհեա՛, զի փրկեսցիս»: 317 Անդրոնիկոս ասէ. «Մի՛ երբէք լիցի քեզ բարի, զագա՛ն անամաւթ բռնաւոր, ատարացեալդ յամենայն ճշմարտութենէ: 318 Զտանջանսն ամենայն ի քէն կրեցի, եւ արդ հաւանութեան ա՞կն ունիս յինէն, որովք ամբարչտես զիս՝ զծառայս Աստուծոյ, չարչարեալ հրամայես ամբարչտե՞լ: 319 Բայց ոչ լուծանես զխոստովանութիւնս իմ, որ առ Աստուած: 320 Այլ կամ հանդիսացեալ Տերամբ հակառակ ամբարտաւանութեան քում ցուցանելով ի մանգական հասակի զբարի ուղորումն իմաստութեան<sup>2</sup> հոգոյս»: 321 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Կարծեմ, ո՛վ զարչելի, եթէ ի դիւաց ես տեղի»: 322 Անդրոնիկոս ասէ. «Եթէ դեւս ունէի, հաւանէի արդեաւք բնակարանիդ նոցունց: 323 Բայց զի ոչ ունիմ, նորին ազադաւ ո՛չ հնազանդեցայց քեզ, այլ [դ]եւ բոլորովին դու ես, զի զգործս դիւաց գործես»: 324 Մաքսիմոս

1 Յունարէնում՝ αόρατον

2 εὐτονον φρόνησις

դատաւոր ասէ. «Որ յառաջ քան զքեզ մտին յատեան, նախ քան զտանջանսն ասացին, զինչ եւ կամեցան, իսկ յետոյ, ի բազում հարուածոցն հաւանեալք, բարեպաշտաւն առ աստուածսն եւ բարեմիտ առ ինքնակալն ցուցան, որով եւ զանձինս փրկեցին»: 325 Անդրոնիկոս ասէ. «Ոչ արտաքոյ քոյին չար խորհրդակցի է, զոր խաւսիդ սուտ, քանզի զոր պաշտէքն, ոչ եկաց ի ճշմարտութեանն, որով սուտ ես դու, որպէս հայրն քո աստանայ: 326 Վասն որոյ դատելոց է զքեզ Աստուած վաղվադակի, սպասաւոր սատանայի եւ ամենայն չարեաց նորա ներգործող»: 327 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Եթէ ոչ բոլորովին աւծից զմարմինդ քո տանջանաւք, որպէս զամբարիչտն, եւ ոչ քակեցից զլորումն պնդութեան քո, ոչ ինչ աւգտեցայց»: 328 Անդրոնիկոս ասէ. «Ոչ բնաւ երկնչիմ ի սպառնալիս քոց անուամբ Աստուծոյ իմոյ»: 329 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Վառեցէ՛ք վաղվադակի հուր ի վերայ որովայնի դորա»: 330 Անդրոնիկոս ասէ. «Եթէ զբոլոր մարմին իմ այրեսցես, ոչ յաղթեսցես ինձ, երիցս անիծեալ, քանզի մերձ է առ իսոր զաւրացուցանէ զիս, Աստուածն իմ, զոր պաշտեմ»: 331 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մինչեւ ե՞րբ ոչ հաւանիս յիմարդ, այլ կամաւք քովք կամիս մեռանել»: 332 Անդրոնիկոս ասաց. «Որչափ կենդանի եմ, յաղթեմ քում չարութեանդ եւ փութամ ի քէն մեռանել, զի այն են պարծանք իմ առ Աստուած»: 333 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Յիմա՛ր, գայդ ո՞չ գիտես, զի զոր կարգասդ Աստուած, մարդ է ծնեալ չարագործ, ընդ դատաստանաւ անգեալ Պիղատոսի դատաւորի եւ սպանեալ ի վերայ խաչին, որ կայ եւս յիշատակարանն»: 334 Անդրոնիկոս ասէ. «Պապանձեսցի բերան քո, անիծեալ, որ չէ արժանի խաւսել վասն Տեառն իմոյ, նա եւ ոչ զանունն նորա յիշել ամբարիչտ հոգով քո, զի թէ էիր արժանաւոր բարոյ,

բայց ոչ հայհոյէիր զէիցս ամենայնի գոյացուցիչն եւ զձառայս նորա ստիպէիր ամբարչտելի նմանէ: 335 Բայց զի ի յուսոյ նորա աւտարացեալ քո ոչ միայն զանձն կորուսանես, այլ եւ զպաշտաւնեայս նորա նեղես անաւրինել»: 336 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Բացեալ զբերան դորա, արկէ՛ք միս եւ զինի ի բազնէն»: 337 Անդրոնիկոս ասէ. «Տէր Աստուած, նայեա՛ց եւ տե՛ս զնեղութիւնս իմ»:

338 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Մինչեւ յե՞րբ յիմարանաս, անմի՛տ, եւ շողակրատես, զոր ոչ է պարտ խաւսել»: 339 Անդրոնիկոս ասէ. «Այժմու տանջանացս ի քէն համբերեմ, զի ակն ունիմ յաւիտեանական բարութեանցն, զոր դու ոչ գիտես»: 340 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Հատանել զլեզու քո արժան է, զի մի՛ այդպէս զաւղանջեսցես, վասն զի անդուլ յիմար գիտեմ, զի ես արարի լինել քեզ»: 341 Անդրոնիկոս ասէ. «Իշխանութիւն ունիս հատման լեզուի իմոյ, որովք համարիս զձածկեալ գարշութիւն քո յայտնի առնել»: 342 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Զի՞նչ աւգտեցար, անմի՛տ, մինչեւ ցայժմ համբերելով այդպիսի տանջանաց, արա՛, զոր ասացի, ճաշակեցեր»: 343 Անդրոնիկոս ասէ. «Մի քեզ բարի, բռնաւոր աղտեղի, մի այնմ, որ զիշխանութիւնդ ետ քեզ, եթէ ես յամպարչտութեան զոհից քոց ճաշակեցի, դու իսկ գիտես, զինչ արարեր ընդ ձառայն Աստուծոյ»: 344 Մաքսիմոս դատաւոր ասէ. «Արկէ՛ք երկաթ ի բերան դորա եւ զանամաւթ եւ զհայհոյիչ լեզու դորա հատէ՛ք, զի ուսցի չհայհոյել զինքնակալսն եւ ընդ լեզուոյն եւ զատամունսն ի չար գլխոյ դորա առէ՛ք եւ այրեցեալ աճիւն ի յաւդս ցնդեսցի, զի մի՛ ի համազգեաց ամբարիչտ կանանց ուշ եղեալ առցեն ի պահեստի, որպէս պատուական եւ սուրբ, եւ զդա առեալ պահեցէք ի բանդի, զի ի միասին ընդ ամբարիչտ ըն-

զերս իւր խառնեալ յետ այսորիկ գաղա-  
նաց մատնեսցին»:

### ԵՐԻՑՆ Ի ՄԻԱՍԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

345 10. Անսուրբն Մաքսիմոս կոչեցեալ  
զՏերենտիանոս իշխանն Կիւլիկեցւոց եւ  
պատուասիրեալ զնա, Հրամայեաց եւ յետ  
այսորիկ ամենաժողով կատարեալ լինել ի  
տեսարանի յորսոյ քաղաքն Անարզաբայ:  
346 Եւ Տերենտիանոս վաղվաղակի պատ-  
րաստեալ յաւրինեաց, զորս մերձ էին ի  
գաղանացն, եւ ընդ լինել առաւաւտուն  
բազմութիւն քաղաքին, ամենեքումք  
Հանդերձ կանամբք եւ որդովք ելին ի  
ստազիոնն<sup>1</sup>: 347 Եւ տեղի ասպարիսին այն  
ունէր ընդարձակութիւն իբրեւ մղոն մի:  
348 Եւ յորժամ լցեալ եղեւ տեսարանն ժո-  
ղովովք, եկն անսուրբն Մաքսիմոս տեսա-  
նել եւ կատարել զմարտակո[ու]թիւն  
վկայիցն Աստուծոյ: 349 Եւ յորժամ լցաւ  
ժամանակ տեսարանին, եւ աւուրն չափ  
այնուհետեւ տեղի ետ գէշս անգեալ<sup>2</sup> լինել  
ի մարդկանէ բազմաց մահու պարտաւորե-  
լոց. ոմանք սպանեալք յապուրդարիոնէ<sup>3</sup>  
սրով, եւ կէսք ի գաղանաց պատառեալք:  
350 Եւ մեք յանքոյթ տեղի թաքուցեալք  
զիտէաք, թէ զինչ արդեաւք լինիցի կա-  
տարածն: 351 Եւ պղծոյն Մաքսիմոսի ա-  
ռեալ զինուորսն բերեալ զսուրբ վկայսն ի  
թեատրոնն մենամարտեալ ընդ գաղա-  
նացն: 352 Եւ իբրեւ ածին զնոսա, ոչ կա-  
րէին ընթանալ ի գանալից Հարուածոցն եւ  
յայրեցմանէ շանթիցն զայրացեալ մար-  
մինք նոցա: 353 Եւ մեք փոքր փոք[ր] յա-  
ռաջ մատուցեալ նստէաք Հանդէպ նոցին

ի բացեայ եւ աղաւթիւք եւ արտասուաւք  
լռելայն կայաք ի ներքոյ վիմի միոյ:  
354 Եւ իբրեւ մտին ի թեատրոնն վկայքն,  
ոչ սակաւ խռովութիւն եղեւ յամբոխն,  
քանզի ոմանք զչարէին յաղագս անիրաւ  
զատաստանին, ոմանք եւ զտեսութիւն ա-  
տէին. եւ վասն այսորիկ ոչ սակալ ժողո-  
վուրդք դառնային ի տեսարանէն, անար-  
գելով զՄաքսիմիանոս: 355 Եւ նա Հրա-  
մայեաց զանարգողսն նշանակել, զի յե-  
տոյ, ասէ, դատեսցին ի մէնջ: 356 Յայն-  
ժամ գազանս բազումս արձակեալ, եւ ոչ  
մերձենային ի մարմին սրբոցն: 357 Եւ  
Մաքսիմոս զայրացեալ յոյժ, կոչեաց զգա-  
զանարոյժն, գան հճար նմա, ասելով.  
«Ձորս ունիս գազանս եւս չարագոյնս,  
արձակեա՛ ի վերայ դատապարտելոցդ»:  
358 Եւ ի սպառն[ալ]եաց նորա եւ յերկիւ-  
ղէ լի եղեալ զողութեամբ, զայրասպանն  
արձակեաց ի վերայ նոցա զարջ, զորմէ ա-  
սէին՝ երիս արս յայնմ աւուր պատառեալ:  
359 Որք իբրեւ մերձ եղեն ի սուրբսն զայ-  
լովք զանց արարեալ, չոգաւ նստաւ առ  
ոտս Անդրոնիկոսի եւ, Հանեալ զլեզուն,  
սրբէր զթարախ վիրաց նորա, ըստ գրեցե-  
լումն, թէ «Գազանք վայրենիք խա-  
ղա[ղա]սցեն ընդ քեզ»<sup>4</sup>: 360 Իսկ սուրբն  
Անդրոնիկոս բուռն Հարեալ ձեռամբ  
զգլխոյ գազանին, նեղէր զնա, զի թերեւս  
զայրացեալ մերձեսցի ի մարմին նորա, եւ  
լուծցի<sup>4</sup> ի կենացս: 361 Եւ արջն այն Հե-  
զութեամբ Համբերեալ գանիցն առ ի  
սրբոյն, անգանէր Հանդարտութեամբ առ  
ոտս սրբոյն: 362 Եւ Մաքսիմոս լի եղեալ  
սրտմտութեամբ, Հրամայեաց սպանանել  
զգազանն: 363 Եւ սպանաւ ի նմին ժամու  
առաջի սրբոյ Անդրոնիկոսի: 364 Իբրեւ ե-  
տես զայն Տերենտիանոս, երկեաւ, զի մի՛  
գուցէ բարկացի Մաքսիմիոս եւ զինքն

1 στάδιον

2 Զ. անգեալ

3 Συνασημαρτοιδν է ὑπὸ τῶν δουλαρίων արտայա-  
տուրեան, որը ὑπὸ τῶν λουδαρίων ուղղելուց յետոյ  
նշանակում է «զաղաղատորների ձեռնով»:

4 Գ-բ Լ: 23

4 Զ. լուզցի

եւս դատապարտեսցէ, վասն որոյ առաքեաց ամել զմատակ առիւծն զառաքեալն նմա ի Հերովդէէ Անտիոքայ Ասորոց իշխանէն: 365 Եւ յորժամ բերեալ եղեւ եւ արձակեալ ի վերայ սրբոցն, ահ եւ երկիւղ եւ դողումն անգաւ ի վերայ տեսողացն՝ յաղագս սաստկապէս գոչելոյն եւ կրճտելոյն զատամուռնսն: 366 Իսկ առիւծուն մերձ եղեալ սրբոցն, եւ զի անգեալ կային մարմնով, անգաւ եւ նստաւ առ ոտս երանելոյն Տարագոսի: 367 Եւ սուրբն Տարագոս ձգեալ զձեռն բուռն հարկանէր զստեւոյ պարանոցի գազանին եւ գականջացն եւ ձգէր առ ինքն: 368 Եւ նորա հանդարտաբար որպէս ոչխար մերձենայր առ սուրբն եւ, առեալ զնա ձեռամբ եւ անցեալ առաջի Պրոբոսի եւ Անդրոնիկոսի, բերեալ մինչեւ ի դրունս զառագղի գազանացն բնակութեան: 369 Իսկ անիծանելոյն Մաքսիմոսի հրամայեալ ոչ բանալ զգառագիղան, այլ անդէն սատակել զգազանն:

370 11. Եւ այնուհետեւ ձանձրացեալ Մաքսիմոս ի յայնչափ հարցափորձութեանց սրբոցն, կոչեցեալ զՏերենտիանոս զիշխանն Կիլիկեցոց, հրամայեաց բերել զգազիճսն եւ սրով սպանանել զնոսա: 371 Եւ կատարեցան երանիքն սպանմամբ սրոյ, մինչդեռ տեսանէր Մաքսիմոս: 372 Եւ հրամայեաց զմարմին սրբոցն ձգել, ուր այլոցն էին գարշելի մարմինք մահապարտացն, եւ պահել տասն զինուորաց: 373 Եւ յորժամ հրամայեալքն կատարեցան եւ մարմինք սրբոցն խառնեցան ընդ անսուրբսն եւ ի զինուորաց անտի պահէին, եւ մեր սակաւ մի իջեալ ի լեռնէն, ծուր եղեալ կայաք յաղալթս առ բարձրեալն, զի իւրով բարի մարդասիրութեամբն արասցէ մեզ հնար առնուլ զվկայիցն իւրոց զնշխարս: 374 Եւ իբրեւ կատարեցաք զաղալթսն, փոքր մի եւս յառաջ մատուցեալք ի գիշերին, տեսաք զպարիսպսն, զի հուր լուցեալ նստէին շուրջանակի, ուտելով եւ ըմբելով

ուրախ լինէին: 375 Եւ զայն տեսեալ՝ յետս անդրէն դարձաք սակաւիկ մի եւ, երկրպագեալ Աստուծոյ եւ ամենայն նորա, համաձայնապէս աղաւթս մատուցանէաք, զի [ի] ձեռն առաջնորդական Հոգոյն Սրբոյն նայեսցի ի խնդրուածս մեր եւ տացէ մեզ աւգնականութիւն ի բարձանց, զի կարասցուք զատուցանել զմարմինս սրբոցն յանմաքուր մարմնոցն միաւորութենէ: 376 Եւ վազվաղակի եղեալ մեծի շարժման, եւ որոտումումն եւ փայլատակումն եւ խաւար սաստիկ եւ անձրեաց հոսումնք եւ անհնարին արհաւիրք եւ զղրղմունք [եղեն]: 377 Եւ յետ փոքր միոյ հանդարտելոյ դարձեալ աղաւթս արարեալ, չոգաք ի խնդիր եւ գտաք զլոյս խարուկին շիջեալ եւ զպահապանսն փախուցեալս: 378 Եւ տեսեալ զայն, բազում համարձակութեամբ մերձեցաք ի տեղին եւ ոչ կարէաք ի վերայ կալ մարմնոց սրբոցն հաւաստապէս: 379 Ապա զձեռս յերկինս համբառնալով խնդրեցաք յԱստուծոյ յայտնել մեզ զգանազանութիւն սրբոց վկայիցն:

380 Եւ ահա յանկարծակի ամենողորմ Աստուած իւրով անհրաժեշտ զթութեամբն աստեղս լուսաւորս առաքեալ յերկնից ի վերայ երանելեաց նշխարացն, եւ յայտնի արար մեզ զսուրբս իւր: 381 Եւ մեր ծանուցեալ գերապայծառ ճառագայթիւք լուսոյ զմարմինս սրբոցն եւ փութապէս յափշտակեալ լի ուրախութեամբ, տարաք զնոսա ի մերձաւոր լեռանն եւ զոհացաք զԱստուծոյ, զի հաճութեամբ կատարեաց զխնդրուածս մեր: 382 Եւ, անցեալք ընդ բազում լերինս, եղեալ զնշխարս սրբոցն ի տեղի ինչ, հանգաք սակաւ մի առ նոսին եւ, աղաւթս արարեալ առ Աստուած կատարել զգործս մեր, զոր սկսաք, տալով մեզ նշան, թէ ուր հաճեսցի զնել զմարմինս վկայից իւրոց: 383 Եւ լուաւ աղաւթից մերոց ամենողորմ Աստուած եւ սուրբ զաստղն զառաջին կացոյց առաջնորդել

մեզ: 384<sup>1</sup> Եւ մեր բարձեալ զնշխարս սրբոցն, գնացաք յայնկոյս լերինն եւ գտաք վէժ մի եւ ի նմա այր: 385 Եւ ապա անյայտ եղեւ ի մէնջ աստղն, եւ մեր զմտաւ ածե[ա]լ անդ Հաճոյ լինել Տեառն պահել զսուրբսն, քանզի[ի] երկնչէաք ի խնդիր առնել Մաքսիմոսի, վասն որոյ եւ մեծաւ զգուշութեամբ ամփոփեալ զնոսա անդ, եւ մեր իջեալ ի քաղաքն՝ տեսանել, թէ զինչ կամեցի լինել: 386 Եւ յետ երից աւուրց խնդիր արարեալ մարմնոց սրբոց երանելեաց եւ ոչ գտեալ, զպահապանսն ապա հրամայեաց տանջել Մաքսիմոս եւ ինքն ելեալ գնաց ի քաղաքէ անտի: 387 Եւ աւրհնեցաք զԱստուած ցնծութեամբ բազում յոյս ստացեալք ի Քրիստոս: 388 Ես՝ Մարկիոն, եւ Փիլիքս եւ Բարաբաս կացաք առ սրբոցն նշխարացն, զի գտեղին անյայտեալ ամրացուցուք, եւ դատեալք ի խորհուրդս մտաց, զի մինչեւ ի կատարումն կենաց մերոց անդանաւր դադարեսցուք, որպէս զի ի լուծանել մեր բնաւորական մահուամբ ընդ նշխարաց երանելեացն արժանասցին զնել ի յայրի անդ եւ մարմինք մեր: 389 Իսկ այլ եղբարցն, որ ընդ մեզ գոհացեալ զՏեառնէ, որ արար արժանի զմեզ մեծագունի շնորհացս այսոցիկ, առաքեցան ի մէնջ առ եղբարսն, որ յիկոնիոն:

ԹՈՒԽԹ ԱՌԻՆՆ ԵՒ ՏԱՍՆ ԵՂԲԱՐՄՆ  
ԳԼԽԱԿՈՐԱԳՈՅՆՍ, ՈՐ ՅԻԿՈՆԻՈՆ

390 Պանփիլոս եւ Մարկիոն եւ Լիւսիաս, Ագաթոկիս<sup>1</sup> եւ Պարմենոն, Դիոդոտոս<sup>2</sup> եւ Փիլիկս, Գեմելոս եւ Աթանաս<sup>3</sup>, Տարտիսիս<sup>4</sup> եւ Բարաբաս՝ Ակիլինոս եւ Նիկոնիս, Էատիքիկոս եւ Կիպրոս, Սատորնիլոս եւ Բասոս, Բերիլլոս եւ Տիմոթէոս եւ ամենայն եղբարց, որ յիկոնիոն Հաւատացեալ սուրբք եւ Համանձինք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: 391 Ուրախ լինել ձեզ աղաւթեմք միշտ:

392 Որ ինչ գործեցաւ ընդ ծառայս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զհետ ընթաց[եալք] մեք ամենայնի, եւ ի սկզբան կապանաց նոցա մինչեւ ցկատարումն ականատես եղաք ասացելոց եւ կատարելոցն: 393 Եւ արդ, անստուեր իւր տպաւորեալ գրով զխոստովանութիւն նոցա, որ եղեւ ի ձեռն մեր, ունին դոքա՝ է՛ դոր մերովք աչաւք եւ ականջաւք տեսեալ եւ լուեալ, եւ է՛ զի զանխլացեալսն ի մէնջ բարեպաշտ ոմն ի զինուորացն ի մերձագունից անտի պատմեաց մեզ: 394 Զորս բազում զգուշութեամբ գրեալ առաքեցաք առ ձեզ ի ձեռն եղբարց մերոց, որք եւ ընգալեալ լիցին ի ձէնջ մեծաւ երկիւղիւ եւ պատուով, իբրեւ արդար մշակք Աստուծոյ եւ Քրիստոսի նորա, որ յուսացաք եւ փառաւոր առնիցէք զԱստուած: 395 Հաճոյ թուեցաւ մեզ առաքել առ ձեզ, զի եւ դուք առ եղբարսն մեր, որ ի Պիսիդեայ եւ ի Պանփիլիեայ, զի եւ նոքա առցեն զփորձ գերանելեաց վկայիցն մրցանաց եւ աւրհնեսցեն զամենեցունց Աստուած Հայր եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, պատրաստ լինելով յամենայն ճգունս Հանդիսից, Հաս-

1 Ագաթոկիս (Άγαθοκλής)

2 Դիոդոտոս (Διοδότος)

3 Աթանաս (Άθηνάσ)

4 Տարտիսիս (Τάρκυστος)

տատեալք ի սպառագինութիւն հաւատոյ ի փառս եւ ի պատիւ Հոգւոյն Սրբոյ: 396 Զի ամենայն արինակաւ եռացեալք ի սէրն ճշմարտութեան, ընդդէմ կացցեն զաւրութեանց հակառակամարտին առաջնորդական գիտութեամբն Աստուծոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 397 Դրոշմեմք ի զիրս եւ զաւր նահատակութեան երանե-

լեաց վկայիցն Աստուծոյ Տարագոսի, Պրորոսի, Անգրոնիկոսի, որք կատարեցան ի հոկտեմբերի ի տասն եւ երկուքն եւ եզեն ի լերինն ի շիրիմ կայարանի իւրեանց, զոր եւ ծանուցեալ ձեր տաւնեսջիք զաւր յիշատակի նոցա՝ ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ երրորդութեանն, Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

**ՍԱՐՄԻ Գ. ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԺԲ.<sup>1</sup>**  
**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՎԿԱՅԻՑՆՆԵՐ<sup>2</sup> ՊՐՈՓՈՍԻՆՆԵՐ<sup>3</sup>, ՏԱՐԱԳՈՍԻ ԵՒ**  
**ԱՆԴՐՈՆԻԿՈՍԻ<sup>4</sup>**

1 Սոքա էին յամս<sup>5</sup> Դիոկղետրանոսի եւ<sup>6</sup> ի Տարսոն քաղաքին մատնեցան ի ձեռս ամբարիշտ<sup>7</sup> դատաւորին Մաքսիմոսի<sup>8</sup> վասն ի Քրիստոս հաւատոցն<sup>9</sup> եւ, կացեալ առաջի, խոստովանեցան զՔրիստոս<sup>10</sup> Աստուած եւ անարգեցին զկուռսն եւ զկուպաշտսն<sup>11</sup>: 2 Ընդ որ բարկացեալ դատաւորն սպառնայր կտտամահ առնել զնոսա, եւ նոքա ի բանից իւրեանց ոչ թուլացան: 3 Եւ սկսան չարաչար տանջել զնոսա, եւ<sup>12</sup> նախ զՏարագոսի զծնաւտսն ջարդեցին եւ ուժգին զթիկունսն հարին<sup>13</sup> եւ ի բանտ արկին<sup>14</sup>:

4 Եւ զՊրորոս կախեցին<sup>15</sup> զփայտէ եւ հարին<sup>16</sup> յոյժ եւ երկաթի կապանաւք եղին ի բանտի:

5 Եւ ածեալ<sup>17</sup> առաջի զԱնդրոնիկոս, հարցանէին<sup>18</sup>, եթէ ուստի<sup>19</sup> իցես դու<sup>19</sup>: 6 Եւ

նա ասէ. «յեփեսոս քաղաքէ<sup>20</sup>, որդի մեծատան իշխանի, եւ եմ քրիստոնեայ եւ Քրիստոսի ծառայ<sup>21</sup>: 7 Զկուռոս ձեր ոչ պաշտեմ եւ դիւաց ոչ զոհեմ<sup>22</sup>»: 8 Եւ հարին զնա ուժգին դալաքաւք<sup>23</sup> եւ հատին զջիւս ոտիցն<sup>24</sup> եւ քերեցին զկողսն եւ արկին աղ ի վերայ վիրացն եւ շփէին, զի սաստիկ ցաւեսցի: 9 Եւ այնպէս արկին զնա<sup>25</sup> ի բանտ:

10 Եւ յետոյ, հանեալ գտուրբսն ի բանտէն, հարցանէին եւ գտին զնոսա հաստատուն ի հաւատ Քրիստոսի եւ անվեհեր ի պատասխանիսն<sup>26</sup>:

11 Եւ ապա հրամայեաց Մաքսիմոս<sup>27</sup> կապանաւք տանել զտուրբսն<sup>28</sup> ի<sup>29</sup> Մամեստեա<sup>30</sup> եւ անդ<sup>31</sup> դարձեալ խոստովանեցան<sup>32</sup> զՔրիստոս<sup>33</sup>: 12 Հրամայեաց դատա-

1 B + եւ բշրին իւ.

2 DE սրբոցն փխ սրբոց վկայիցն.

3 AE պրոպոսի.

4 C յայսմ աւուր (սահմի բ) վկայաբանութիւն սրբոց տարագոսեանցն.

5 ABDEF սուրբ մարտիրոսնս պսոփիկ երեմեանս էին ի ժամանակս կոպաշտ (կոպապարիշտ) արփային փխ սոփա էին յամս.

6 E չի՞.

7 B ամպարիշտ C չի՞.

8 AD մահախիճանոսի.

9 ABDEF չի՞ վասն ի քրիստոս հաւատոցն.

10 ABDEF + եւ զմարիտ.

11 ABDEF զկուռսն անարգեցին եւ դիւս անուանեցին փխ անարգեցին զկուռսն եւ զկոպաշտսն.

12 ABDEF եւ հրամայեաց փխ ընդ որ բարկացեալ ... տանջել զնոսա, եւ.

13 ABDEF ջարդել ... հարկանել.

14 ABDEF արկանել D չի՞ եւ ի բանդ արկին.

15 A կախեալ.

16 ABDEF զանեցին.

17 ABDF կացուցեալ E կացեալ.

18 ABDEF հարցանէր 1730 եւ ասեմ.

19 ABDEF չի՞.

20 ADE + եւ B + իցեմ եւ եւ.

21 ABDEF ոչ ուրանամ զքրիստոս փխ եւ քրիստոսի ծառայ.

22 ABDF եւ ոչ զկուռոսոս քո պաշտեմ E եւ զկուռոս քո ոչ պաշտեմ փխ զկուռոս ձեր ոչ պաշտեմ եւ դիւաց ոչ զոհեմ.

23 ABDF յայնժամ հրամայեաց հարկանել զնա ուժգին փխ եւ հարին զնա ուժգին դալաքաւք.

24 ABDEF խազել զջիւսն փխ հատին զջիւս ոտիցն.

25 ABDEF աղիւ քերել (E քերել F շփել) զկողսն եւ արկանել փխ եւ քերեցին զկողսն եւ արկին աղ ի վերայ վիրացն եւ շփէին, զի սաստիկ ցաւեսցի: եւ այնպէս արկին զնա.

26 ABF չի՞ եւ յետոյ, հանեալ գտուրբսն ի բանտէն, հարցանէին եւ գտին զնոսա հաստատուն ի հաւատ քրիստոսի եւ անվեհեր ի պատասխանիսն.

27 A արեալ հրամայեաց մահախիճանոսի փխ ապա հրամայեաց մահախիճանոս.

28 C առեալ տանէին զնա փխ ապա հրամայեաց մահախիճանոս կապանաւք տանել զտուրբսն (F տանել զտուրբսն կապանաւք).

29 ABDEF + քաղաքն.

30 B մահախիճանոս F մահախիճանոս.

31 B + հասեալ.

32 AC ի խոստովանելն.

33 AD + եւ.



ւորն քարիւ ջախջախել<sup>1</sup> զբերանն Տարագոսի եւ այրել հրով զերկոսին ձեռնն եւ խիստ քացախ ընդ քիթսն արկանել<sup>2</sup>:

13 Եւ ապա զսուրբն Պրորոս ածին<sup>3</sup> առաջի եւ արկին ընդ բերանն շանթս հրացեալս եւ զթիկունս արջառաջլաւք հարին չարաչար, զերծին զգլուխն ածելեալ<sup>4</sup> եւ կայծախառն մոխրով<sup>5</sup> մածուցին, հատին եւ զլեզուն եւ այնպէս<sup>6</sup> արկին ի բանտ:

14 Եւ յետ այնորիկ կացուցին առաջի եւ<sup>7</sup> զսուրբն Անդրոնիկոս եւ այնչափ<sup>8</sup> հարին<sup>9</sup> զթիկունսն, մինչեւ պատառեցաւ մարմինն իւր<sup>10</sup>, եւ աղիւ հարին<sup>11</sup> զվէրսն. հարկանէին եւ զորովայնն:

15 Եւ անտի տարան զնոսա<sup>12</sup> ի քաղաքն Անարգաբայ եւ անդ եւս<sup>13</sup> կացուցին զսուրբն Տարագոս առաջի<sup>14</sup>, եւ նա համարձակ յանդիմանեաց զթագաւորն եւ զգատաւորն<sup>15</sup>: 16 Եւ սպասաւորքն հարին զբերանն սրբոյն<sup>16</sup> եւ հրացեալ<sup>17</sup> շամփրաւք խոցոտեցին զամենայն մարմինն<sup>18</sup> եւ

զերկու<sup>19</sup> զականջսն ի բաց հատին եւ զհերս գլխոյն ածելով<sup>20</sup> ածին<sup>21</sup> եւ կայծակմամբք հրոյ<sup>22</sup> մածուցին զգագաթն<sup>23</sup>:

17 Եւ յետ այնորիկ ածին առաջի<sup>24</sup> զսուրբն Պրորոս<sup>25</sup> եւ հրացեալ շամփրաւք խոցոտեցին զամենայն մարմինն<sup>26</sup> եւ լցին ի վերայ նորա<sup>27</sup> գինի<sup>28</sup> խառնեալ յարենէ զոհից կոոց: 18 Ծակեցին եւ զականջսն<sup>29</sup> հրացեալ շամփրաւք եւ փորեցին<sup>30</sup> զաչսն:

19 Եւ ապա կացուցին առաջի եւ զսուրբն Անդրոնիկոս եւ տեսին զնա անշարժ ի հաւատս Քրիստոսի: 20 Այրեցին հրով զսիրտն եւ զփորն եւ ի պիղծ զոհիցն միս եւ զինի ի բերանն եղին, եւ յոչ ուտելն զլեզուն հատին եւ զատամունսն քակեցին<sup>31</sup>:

21 Եւ յետ այսր ամենայնի արկին զնա կերակուր գագանաց, որ ոչ մերձեցան ի նա: 22 Բայց<sup>32</sup> արջ մի երթեալ լեզույր զթարախ

1 B ջախջախել քարիւ  
2 B արկեալ ընդ քիթսն C ընդ քիթսն արկին  
3 ABDEF մատուցին  
4 ABDEF եւ զերծեցին պծելեալ (BF ածելով) զգլուխն փխ զերծին զգլուխն ածելեալ  
5 ABDEF հնոցի (E հոնի) մոխրով (B ի հնոցի մոխիր) կայծախառն փխ կայծախառն մոխրով  
6 ABDE եւ զլեզուն հատին եւ փխ հատին եւ զլեզուն եւ այնպէս F չի՛ր այնպէս  
7 ABDEF ապա կացուցին փխ եւ յետ այնորիկ կացուցին առաջի եւ  
8 ABDEF չի՛ր  
9 B արկին  
10 DE չի՛ր  
11 ABDEF աղացեալ աղիւ (F աղով) լցին փխ աղիւ հարին  
12 ABDEF հրամայեաց դատաւորն, եւ տարան զսուրբն (E զսուրբն) փխ անտի տարան զնոսա  
13 ABDEF չի՛ր անդ եւս  
14 F առաջի զսուրբն տարագոս  
15 ABDEF համարձակ յանդիմանեաց զգատաւորն զփխստոս եւ կշտամբեաց (F + զգատաւորն) փխ նա համարձակ յանդիմանեաց զգատաւորն  
16 ABDEF հարկանէին զբերանն փխ հարին զբերանն սրբոյն  
17 ABDEF չի՛ր  
18 ABDEF խոցոտեցին զմարմինն փխ խոցոտեցին զամենայն մարմինն

19 ABDEF չի՛ր  
20 E չի՛ր  
21 C ածին եւ զհերս գլխոյն A ածելին  
22 ABDEF չի՛ր  
23 ABDE չի՛ր F այրեցին փխ մածուցին զգագաթն  
24 ABDEF չի՛ր յետ այնորիկ ածին առաջի  
25 ADF + կայծակն B + կայծակն E չի՛ր զսուրբն պրորոս  
26 ABDEF այրեցին զամբսն եւ զթիկունսն փխ խոցոտեցին զամենայն մարմինն  
27 ABDEF բռնուրեամբ արկին փխ լցին ի վերայ նորա  
28 B չի՛ր ABDEF + ի բերան նորա  
29 ADEF զքիւսն  
30 C զոհեցին, պորեցին եւ զր փխ զոհից կոոց: ձակեցին եւ զականջսն հրացեալ շամփրաւք եւ փորեցին  
31 ABDEF իսկ զսրբոյն անդրոնիկոսի զորովայնն հրով այրեցին եւ շամբեցուցին (BEF շամբեցին D շամպեցին) միս ի զոհիցն եւ զինի եւ հատին զլեզուն եւ զատամունսն (B + ի բաց) կորեցին փխ եւ ապա կացուցին առաջի եւ զսուրբն անդրոնիկոս ... քակեցին  
32 ABDEF ապա արկին զսուրբն (F զնոսա) զագանաց կերակուր, եւ (E + գագան) ոչ մերձեցան զագանն (E ի նոսա F խնամո՞ւն աստուծոյ զագանն մոռացան զգագանութիւն իրեանց եւ ոչ մերձեցան) փխ եւ յետ այսր ամենայնի արկին զնա կերակուր գագանաց, որ ոչ մերձեցան ի նա: եւ

վիրաց<sup>1</sup> սրբոյն Անդրոնիկոսի<sup>2</sup> եւ նստաւ առ  
նոսս նորա: 23 Ընդ որ բարկացեալ<sup>3</sup> դաճ-  
ճացն, սպանին զարջն: 24 Եւ առիւծ մի ա-  
հազին թողին ի վերայ սրբոյն Անդրոնիկո-  
սի<sup>4</sup>, եւ երթեալ գազանն երկիր եպագ<sup>5</sup>:

25 Եւ մոլեալ Մաքսիմոս դատաւորն<sup>6</sup>  
սրով ետ սպանանել<sup>7</sup> զսուրբսն: 26 Եւ ա-  
սաց դաճճացն<sup>8</sup> պաճել զմարմինս նոցա, զի  
մի գողացեան քրիստոնեայքն: 27 Յայնժամ<sup>9</sup>  
եղեւ որոտումն խիստ<sup>10</sup> եւ անձրեւ սաս-  
տիկ<sup>11</sup>, եւ փախեան պաճապանքն<sup>12</sup>, եւ ե-  
կին<sup>13</sup> հաւատացեալքն<sup>14</sup> ի գիշերի գողա-  
ցան զմարմինս<sup>15</sup> սրբոցն աստեղաց ցուց-

մամբ՝ զիւրաքանչիւր հատեալ անդամսն<sup>16</sup>,  
քանզի խառնեալ էին ընդ միմեանս<sup>17</sup>:

28 Եւ ոմանք յեղբարց, որք հետեողք  
էին եւ ականատեսք, որք զհետ<sup>18</sup> երթային  
սրբոցն<sup>19</sup>, գրեցին զպատմութիւն նոցա<sup>20</sup>  
եւ, տուեալ<sup>21</sup> երկերիւր դաճեկան եւ  
գնեալ<sup>22</sup> զմարմինսն<sup>23</sup> եւ յուղարկեցին յի-  
կոնիոն<sup>24</sup> քաղաքն եւ անդ եղին զնոսս ի  
տապանի պատուով, յորմէ բազում նշանք  
լինին ի փառս Քրիստոսի Աստուծոյ<sup>25</sup>:

29 Կատարեցան սուքա երեքեանս ի<sup>26</sup>  
հոքտեմբեր<sup>27</sup> ժԲ, եւ Քրիստոսի փառք յա-  
ւիտեանս<sup>28</sup>:

1 E չի՞ B գոտս փ/ս գբարախ վիրաց  
2 C չի՞՞ սրբոյն անդրոնիկոսի  
3 ABDE եւ տեսեալ փ/ս ընդ որ բարկացեալ  
4 ABDE արձակեցին ի սուրբն տարագոս փ/ս թողին  
ի վերայ սրբոյն անդրոնիկոսի  
5 F եւ արջ եւ առիւծ խնայեցին ի նոսս փ/ս արջ մի  
երբեալ լեզոյր գբարախ... գազանն երկիր եպագ  
6 ADEF չի՞՞  
7 BDE եսպան F սպան A սպանին  
8 ABDEF հրամայեաց գաւրականացն փ/ս ասաց  
դահեացն  
9 ABDEF եւ  
10 ABDEF յոյժ  
11 ABDEF չի՞՞  
12 B չի՞՞ եւ փախեան պաճապանքն  
13 ABDEF չի՞՞  
14 ABDEF + երբեալ  
15 ABDEF գնշխարս

16 B չի՞՞ աստեղաց ցուցմամբ՝ զիւրաքանչիւր հա-  
տեալ անդամն (ADEF մարմինս սրբոցն)  
17 ABDE ի միասին  
18 BF եւ գկնի DE գկնի փ/ս որք գեետ  
19 F + վկայեցն  
20 ADE չի՞՞ գրեցին զպատմութիւն նոցա (B զվկայու-  
թիւն սրբոցն F զնահատակութիւն սրբոցն)  
21 C առեալ  
22 F գնեցին փ/ս եւ գնեալ  
23 D զմարմինս սրբոցն E զմարմին սրբոցն  
24 B իկսնոյ D իկոնիոյ E ի կոնոյ  
25 ABDEF եղին պատուով մեծաւ (DEF մեծաւ պա-  
տուով F + ի մեծ պրն, որ է ի մեծ Բարն՝) ի պա-  
տուական տապանսն փ/ս անդ եղին զնոսս ի տա-  
պանի պատուով, յորմէ բազում նշանք լինին ի  
փառս Քրիստոսի աստուծոյ C + որոց աղաբիւն  
ողորմի Քրիստոս տէր Յովսէփ եզնաւորին եւ  
Յորդանան Մղղսոյն եւ Մկրտիչ արեղին, Գրիգոր-  
րին եւ կողակցին իւրոյ Աղասուրանին եւ դատե-  
րաց նորին  
26 DE + սահմի գ  
27 E եւ հոկտեմբերի  
28 B Կատարեցան սուրբ վկայն Քրիստոսի Տարա-  
գոս, Պրովբոս, Անդրոնիկոս սահմի Գ եւ հոկտեմ-  
բեր ժԲ եւ թշրին Իե ի փառս եւ ի պատիւ սուրբ  
երրորդութեան E + Տէր աստուած ողորմեալս ս-  
տացողի սուրբ գրոցս տէր Սարկսի եւ ծնաւդացն  
կարդացողաց եւ լսողացն ամեն ի Կատարեցան  
սուրբ վկայն Քրիստոսի Տարագոս, որ էր հոկտեմ-  
բրացի, Պրորոս, որ էր Պամփիլացի, Անդրոնիկոս  
եփեսացի հոկտեմբերի ժԲ

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ**  
**ԶԱԲՐԱՎԱՐԻ, ԹԷ ՈՒՐ ՎԿԱԵԱԼ**  
**ԿԱՄ ՈՐՊԷՍ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ**  
**ԲԵՐԱՒ Ի ՄԵԶ**

**Ա. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ**  
**ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳԻՍ ԶԱԲՐԱՎԱՐԻ,**  
**ՈՐ ՎԿԱՅԵԱՅ Ի ՔՐԻՍՏՈՍ**

**Բ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ**  
**ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶԱԲՐԱՎԱՐԻՆ**



## ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

12-րդ դարում Հայ առաքելական եւ յունադաւ եկեղեցիների միաւորման շուրջ ծաւալուած երկարատեւ բանակցութիւնները, որոնց բնագրային վկայութիւնները հետագայում Ներսէս Լամբրոնացին մէկտեղեց «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուում, թէ՛ բովանդակային եւ գաղափարական ընդհանուր հակասութիւնների ու անհարթութիւնների եւ թէ կանոնակարգային ու ծիսական մեծ ու փոքր խնդիրների քննարկման եւ դրանք համահարթելու անհրաժեշտութեամբ ու պահանջով հիմք դարձան զգալիորէն ծաւալուն բնագրերի ստեղծաբանութեան համար: Դրանք թէ՛ թղթեր են, թէ՛ վարքեր ու վարքագրութիւններ, թէ՛ սուրբգրային մեկնութիւններ, որոնցում զգալի է եկեղեցիների մարտավարութիւնը եւ սկզբունքային դիրքորոշումը հաւատի եւ աստուածաբանութեան իրենց դիրքերը պաշտպանելու եւ ամրապնդելու համար: Ըստ էութեան, դրանք արդիւնք չունեցան, եկեղեցիները չմիաւորուեցին: Հայ առաքելական եկեղեցին արդէն որերորդ անգամ մերժեց ու քննադատեց քաղկեդոնականներին, իսկ վերջիններս բանավէճի մէջ պարտուելով՝ սկսեցին առաքելական հաւատի ընդհանուր համատեքստից կտրել-առանձնացնել կարգեր ու ծէսեր՝ հաւատոյ յանգանակը տրոհելով եւ մեկնելով ըստ իրենց պատկերացումների: Այդ բանակցութիւնների համատեքստում այդ վերաբերմունքին արժանացաւ Հայ առաքելական եկեղեցու օրացուցային կարգերից մէկը՝ միայն Հայ եկեղեցուն յատուկ առաջաւորաց պահքը, որ ամեն տարի կատարուում էր յունուարի վերջին-փետրուարի սկզբին, Մեծ Պահքից երեք շաբաթ առաջ, տեւում էր հինգ օր եւ յաջորդ 6-րդ օրը նշուում էր Սուրբ Սարգիս զօրավարի յիշատակութեան օրը: Ահա այս կարգի շուրջ ծաւալուած «բանակուիւր» առիթ տուեց Գրիգորիս կաթողիկոսին եւ նրա եղբօրը՝ Ներսէս Շնորհալուն կանոնակարգել ու մշակել Հայկական աւանդոյթում արդէն իսկ առկայ Սուրբ Սարգսի վկայաբանութիւնը:

Խնդիրն այն է, որ յատկապէս առաջաւորաց պահքը եւ նրան անմիջականօրէն յաջորդող Սուրբ Սարգսի տօնը, որ Հայ եկեղեցու աւանդոյթի համաձայն հիմնել էր Գրիգոր Լուսաւորիչը Խոր Վիրապից ելնելուց յետոյ, յոյն եւ վրացի եկեղեցիները հայրերը բանակուիւնների ընթացքում սկսեցին ծաղրուծանակի ենթարկել՝ մտացածին պատմութիւններ ստեղծելով այդ պահքի առաջացման եւ Սուրբ Սարգսի մասին ընդհանրապէս:

Առաջաւորաց պահքի մասին այս ծաղրական պատմութիւնների յունական եւ վրացական տարբերակները ուսումնասիրել է Լ. Մելիքսեթ-Բեկը<sup>1</sup>, որը թարգմանաբար մէջբերել է երկու տարբերակների բնագրերը.

**Յունական տարբերակ** – «Ոմն Սարգիս, որ Հայկական հերետիկոսութեան ուսուցիչն էր, մի շուն ունէր Արցիվուրոմ (առաջաւոր) անունով, իսկ այդ բառը նշանակում է «ագղարար»: Սարգիսը դեւերից ներչնչուած յաճախ էր օգտագործում այդ ազգարարին եւ մունետիկին, երբ մտադիր էր լինում ուղեւորուել որեւէ աւան, զիւղ կամ առհասարակ որեւէ տեղանք, ուր բնակուում էին նրա սուտ վարդապետութեան աշակերտներն ու մասնակիցները: Տեսնելով շանը՝ նրանք բազմութեամբ մի քանի մղոն հեռաւորութիւնից յա-

1 Տե՛ս Меликсет-Бекоев Л., Грузинский извод сказания о поете «араджавор», Христианский Восток, том V, выпуск I, Издание Императорской Академии Наук, Петроград, 1916, с. 75-111.

Ջորդ օրը ընդառաջ էին գնում իրենց ուսուցչին: Եւ ահա մի անգամ, իր սովորական ծառայութեանը ուղարկուած լինելով, գայլերը յոշոտում են շանը, եւ յաջորդ օրը Սարգիսը նոյնպէս ուղեւորուում է այնտեղ, ուր շունն էր գնացել: Չտեսնելով ոչ մի դիմաւորողի՝ նա շատ է տխրում, եւ երբ գնում է նրանց մօտ եւ իմանում է, որ իր շուն-ազգարարը չի եկել, ուղարկում է նրան որոնելու: Գտնուած ոսկորներից հասկանալով, որ շանը գայլերը յոշոտել են՝ Սարգիսը, յուսահատուած եւ վշտացած, կարգադրութիւն է անում, որ բոլոր հայերը տարուայ որոշակի օրերի պահք պահեն յանուն նրա վախճանի եւ այդ պահքը անուանում է Արցիվուրոմի (առաջաւորաց) պահք»<sup>2</sup>:

**Վրացական 1-ին տարբերակ** - «[ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԻ ԵՒ ԱԼԱՋԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ] – [Կոստանդնուպոլսից] նա (Պետրոս Թափիչը) գնաց Հայոց (Սոմսեթի) երկիրն իր բազում համախոհներով եւ աշակերտներով հանդերձ, եւ սկսեց քարոզել հերձուածող կրօնն ու բամբասել յունաց (բերձէնների) կրօնը, որն ընդունել էին սուրբ եւ մեծ ժողովներն ու աստուածագրեստ հայերը: Եւ բոլորը հաւատում էին նրա խօսքերին, քանի որ աստուածանման հրեշտակ էին տեսնում նրա մէջ՝ ասելով. «Ահա այս մարդն արքայանիստ քաղաքի պատրիարքն է»:

Ապա Պետրոսը սատանայի ներշնչմամբ սկսեց կախարգութիւններ անել եւ պատմել ամեն տեսակ հերձուածողական գործերի մասին՝ ուսուցանելով ժողովրդին, թէ ինչպէս պահել կաթողիկէ պատեր... Եւ այսպիսով նա (Պետրոսը) անբիծ հայ ժողովրդին թեթեւացնում էր կրօնը եւ հերձուածք ուսուցանում ու իր միտումներին ենթարկում:

Պետրոսը հետն ունենում մի շուն Ալաջ<sup>3</sup> անունով, որին վարժեցրել էր գնալու՝ որտեղ հրամայէր: Մի անգամ Պետրոսն Ալաջին ուղարկում է մի քահանայի մօտ, որն իր աշակերտների ձեռքով սպանել է տալիս շանը: Պետրոսը գալիս է եւ հարցուփորձ է անում շան մասին: Քահանան չիմանալ է ձեւացնում: Պետրոսը կարգադրում է հինգ օր պահք պահել, որպէսզի Աստուած յայտնէ Ալաջի տեղը. ժողովուրդն սկսում է պահել եւ Ալաջը երեւում է Պետրոսին տեսիլքում՝ ասելով. «Ահա այս ձորումն եմ ընկած մահացած»:

Ապա Պետրոսը կանչեց ժողովրդին եւ ասաց. «Ահա հրաչք մի մեծ եւ զարհուրելի. այս սուհետեւ պաս պահեցէք Ալաջի համար այն օրերին, որ ես ձեզ համար սահմանեցի»:

Այսպիսին է առաքեալների կողմից նզոված եւ ժողովների կողմից մերժած Պետրոսի օրէնքը, եւ թող նզովեալ լինին Ալաջի ու սուրբ Սարգսի համար բոլոր պաս պահողները»<sup>4</sup>:

**Վրացական 2-րդ տարբերակ** – «Այնուհետեւ նա մի շան է հանդիպում, եւ այդ շան անունը Ալաջ էր: Եւ նա վարժեցնում է նրան որպէս իր ազգարարի: Եւ նա, կախարգութեամբ վարժեցուած լինելով, սատանայի օգնութեամբ ամեն տեսակի աճաբարարութիւններ էր անում: Եւ երբ Պետրոսն ասում էր Ալաջին՝ «Գնա այնտեղ», նա գնում էր, որպէս ազգարար, Պետրոսից առաջ:

Մի անգամ Ալաջին Պետրոսն ուղարկում է Կուրմուխ՝ մի քահանայի տուն: Իսկ այդ քահանան, հէնց իմանում է Ալաջի մօտենալը, ասում է իր աշակերտներին. «Ինչ էլ որ ձեզ ասեմ, զաւակներս, կատարէք»: Նրանք պատասխանում են. «Ինչ որ ցանկանաս՝ կանենք»: Քահանան ասում է. «Սպանէ՛ք Ալաջին»: Ի պատասխան՝ նրանք ասում են քահա-

2 Նոյն տեղում, էջ 80-81:

3 Հաւանական է, որ այս «Ալաջ»-ն առաջացած լինի «առաջաւոր» կամ «առաջաւորաց»-ի աղաւաղումից (ծան. Լ. Մելիքեան-Յեկի, էջ 114):

4 Լ. Մելիքեան-Յեկի, Վրաց աղբիւրների Հայաստանի եւ հայերի մասին, Կ. Ս., Երևան, 1934, էջ 113:

նային. «Իսկ եթէ այդ մասին Պետրոսն իմանայ, որտե՞ղ ենք մենք թաքնուելու»: Սակայն քահանան ասում է նրանց. «Թողէք դա ինձ վրայ, զաւակներս, իսկ դուք արէք»: Եւ նրանք, սպանելով Ալաջին, նետում են մի ձորակի մէջ եւ ծածկում ծանր քարերով:

Յայտնւում է Պետրոսը եւ, չգտնելով Ալաջին, ասում է այդ քահանային. «Որտե՞ղ է Ալաջը: Ես նրան այստեղ եմ ուղարկել»: Իսկ քահանան ասում է Պետրոսին. «Ես նրան չեմ տեսել»: Այդ ժամանակ Պետրոսն սկսում է որոնել Ալաջին եւ հետախոյզներ է ուղարկում մերձակայ տեղերն ու գիւղերը, եւ երբ վերջիններս չեն գտնում Ալաջին, Պետրոսը յուսահատութեան մէջ է ընկնում եւ ասում է իր ժողովրդին. «Ուրեմն բոլորս սկսենք պահք պահել եւ աղօթել, որ Աստուած մեզ ցոյց տայ, թէ Ալաջն ուր է կորել եւ ինչ է պատահել նրա հետ»: Այդ ժամ սկսում են բոլորը պահք պահել երկուշաբթիից մինչեւ շաբաթ: Եւ անմիջապէս, սատանայի ցուցումով, երեւում է Ալաջը Պետրոսին եւ նրա հետ եզոզներին եւ ասում. «Ահա այս ձորակում եմ ես՝ սպանուած եւ թաղուած»: Այդ ժամ Պետրոսը իր մօտ է կանչում ժողովրդին եւ ասում. «Սա մեծ եւ զարհուրելի նշան է: Այսուհետեւ պահք պահէք Ալաջի համար այն օրերին, որ ես ձեզ համար սահմանեցի»:

Այսպիսին է առաքեալների կողմից նշուած եւ ժողովների կողմից մերժած Պետրոսի օրէնքը, եւ թող նշովեալ լինեն Ալաջի ու սուրբ Սարգսի համար բոլոր պաս պահողները»<sup>5</sup>:

Իր խմբագրած բոլոր թարգմանութիւնների համար Շնորհալին կատարած աշխատանքի մասին տեղեկացնում է բնագրերի վերջում գետեղուած յակիրճ յիշատակարաններում, ուր նշուած է, որ թարգմանութիւնը կատարուած է եղբօր՝ Գրիգոր կաթողիկոսի պատուէրով, այս կամ այն յոյն կամ ասորի վանականի կողմից: Բոլոր այդ թարգմանութիւնները Շնորհալին խմբագրել է հայոց լեզուի կանոնների համաձայն, շտկել է թարգմանիչների ոչ հայեցի արտայայտութիւնները եւ շարոյթները («յղկեալ զդիրս բանիցն եւ զպատմողականն»): Սակայն Սուրբ Սարգսի վկայաբանութեան թարգմանութիւնը առանձնանում է նրանով, որ Շնորհալին, բացի կարճառօտ յիշատակարանից, առանձին թուղթ է կցում բնագրից առաջ՝ նկարագրելով թարգմանութեան հանգամանքները եւ մի շարք ուշագրաւ բացատրութիւններ է տալիս այդ բնագրի թարգմանութեան անհրաժեշտութեան մասին: Շնորհալին նշում է, որ ամբողջական եւ հաւաստի բնագիր ունենլուց գատ, վկայաբանութեան այս ճշմարիտ տարբերակը վերջնականապէս հերքելու է այն ստալոյ պատմութիւնները սուրբ Սարգսին մասին եւ փակելու է նրանց բերանները, որ «հակառակաբարն բերեն յոյնք եւ վիրք ընդ վկաիս Աստուծոյ եւ ընդ մեզ առասպելական իմն յաւղեալ բաջաղանս ի ստուգելն զիրին ճշմարտութիւն, թէ ով արդեաւք սա իցէ, զզջացին կամ ըմբերանեցին»: Այս վկայութիւնը ցոյց է տալիս, որ Սուրբ Սարգսի վկայաբանութեան թարգմանութիւնն անմիջականօրեն կապուած է հայ եւ յոյն եկեղեցիների միաբանութեան պատճառների շուրջ ծագած բանավէճի հետ՝ որպէս այդ դաւանաբանական վէճերի կարեւոր դրուագներից մէկը: Հաւանաբար առաջաւորաց պահքի եւ Սուրբ Սարգսի մասին յոյն եւ վրաց եկեղեցիների զաւեշտական պատմութիւնները սկսել էին տարածուել միաբանութեան պատճառների շուրջ բանակցութիւններից առաջ, քանի որ վկայաբանութեան թարգմանութիւնը կատարուել է 1158 թուականին<sup>6</sup>, իսկ Շնորհալու՝ Մանուէլ կայսերն

5 Меликсет-Бекон Л., Грузинский извод сказания о поете “араджавор”, Христианский Восток, том V, выпуск I, Издание Императорской Академии Наук, Петроград, 1916, с. 88-90.

6 Տե՛ս Գ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վեներտիկ, 1873, էջ 268-272:

ուղղուած թղթերը թուագրուում են 1165 թուականով: Կարծում ենք, հէնց այդ թուականին կամ դրանից յետոյ է Շնորհալին գրել եղբորը՝ Գրիգորիս կաթողիկոսին ուղղուած թուղթը, եւ, ամենայն հաւանականութեամբ, այդ թուղթը վկայաբանութեան բնագրի հետ ուղարկուել է Մանուէլ կայսերը՝ որպէս առաջաւորաց պահօրի եւ Սուրբ Սարգսի մասին սպառիչ բացատրութիւն՝ ի հերքումն յունական եւ վրացական գաւեշտական եւ անլուրջ տարբերակներին:

Այս խնդրի կարեւորութեան ապացոյցն է նաեւ այն փաստը, որ Շնորհալին «Գիր Հաւատոյ խոստովանութեան» թղթում (1165) եւս մէկ անգամ ներկայացնում է այն՝ գրելով.

«Ասացուք փոքր ինչ եւ վասն առաջաւորացն ի մէնջ անուանեալ պահոց, զոր Հայհոյէք տգիտաբար, Սարգսի ուրումն ասելով կախարդի էջ եւ սկունդ ունողի. ի յապտամբելոցն ի հաւատոյս մերոյ առասպելաբանելով ի զանազան իրս վասն սորին, եւ պատմելով ստայաւդ բանիւ առաջի ձեր: Բայց առ մեզ յիշատակ այսպիսում Սարգսի անգոյ է առաւել քան զեղջերուաքաղն անուանեալ. զի նա թէեւ գոյութիւն ոչ ունի, անուան պատահեցաւ, իսկ Սարգիսս այս ոչ գոյութիւն ունի յազգս մեր եւ ոչ անուն. զոր թէ է ոք ուրէք, թէպէտ եւ մեզ անյայտ է, նզովէ զնա կաթողիկէ եկեղեցի եւ զէջ նորա եւ զսկունդ եւ զգիտող նորա եւ զընդունող, զի զանուն նորա չէ ոք լուեալ յազգս մեր, բայց ի Հոռոմոց, զի ասեն զրպարտելով զմեզ: Այլ մեք վկայութեամբն Աստուծոյ յայտնապէս գրեսցուք զճշմարտութիւնն վասն սորին իրաց, զի մի ոք տգիտութեամբ Հայհոյեսցէ եւ վնաս գործեսցէ անձին իւրոյ:

Արդ՝ առաջաւորք ասի սա, վասն զի առաջին պահք է Հայաստանեայց. եւ պատճառն է այս ինչ: Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր յորժամ ել ի Վիրապէն, եւ ժողովեցան առաջի նորա թագաւորն Հայոց Տրդատիոս պատուհասեալ յԱստուծոյ ի կերպարանս վարագի եղեալ, եւ իշխանքն ամենայն եւ զաւրքն այսահարեալք, եղ ամենեցուն առ հասարակ պահս հինգաւրեայ անսուաղութեամբ, զի մի ինչ ճաշակեսցեն՝ որպէս նինուէացիքն, որով եղեւ բժշկութիւն նոցա ի ձեռն նորա. եւ զայս պահս, որ վասն այսր պատճառի յառաջագոյն եղաւ ի սրբոյն Գրիգորէ, նոյն ինքն Լուսաւորիչն աւանդեաց յեկեղեցիս Հայոց՝ զնոյն պահել յամենայն ամի շրջագայութեանն, որպէս զի մի մոռացին երախտիքն Աստուծոյ եղեալ առ նոսա: Եւ պատշաճ համարեցան խառնել զպահս զայս, որով Հայք ընկալան զփրկութիւն, ընդ պահոցն նինուէացւոց, որով նոքա ազատեցան ի սպառնալեաց մահուանէն. զոր եւ պահեն մինչեւ ցայժմ ազգ ասորւոց եւ եգիպտացւոց:

